Первый отдел содержал “Общее извлечение из нового собрания законов, относящихся к истории армянского народа”, второй – “Извлечение из узаконений, напечатанных в Сенатских Ведомостях, с присовокуплением высочайших рескриптов, повелений и постановлений, состоявшихся по разным предметам, относящимся к Армянскому народу”⁷⁶; третий – “Алфавитный указатель законов”; четвертый – “Хронологический указатель законов”; пятый – “Императорские грамоты и привилегии, дарованные армянскому народу”; шестой – “Общая опись Армянских дел” из Московского архива иностранных дел с 1626 по 1799, и с 1701 по 1809 гг.; седьмой – “Опись армянским делам новых лет с 1709 по 1809 год”⁷⁷.

Необходимость издания “Собрания актов” сопрягалось для Христофора Лазарева с проблемой защиты прав и привилегии армянских общин. России. 15 июля

⁷² РГАДА, ф. 1252, оп.1, д.4390, л. 28.

⁷³ Там же, д. 736, л. 474 об.

⁷⁴ Там же, л. 8.

⁷⁵ Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа. М., ч. I, 1833, с. II.

⁷⁶ Там же, с. 10 – 13.

⁷⁷ Оглавление. – Там же, с. I – II.

1833 г. им была подписана записка о значимости русско-армянских отношений: “В продолжение 150 лет Армянский народ обращал на себя особенное внимание Всероссийских монархов, императорским правительством многократно и непрестанно вызываем был на водворение в Империю. Армяне с благодарностью стекались из разных стран – Турции, Персии и самой Индии”⁷⁸. Поселенцы образовали города Кизляр, Моздок, Новый Нахичеван, Григориополь и другие селения, которым высочайшими грамотами даровались привилегии на вечные времена. Ввод новых актов изменил ситуацию: “Армяне находят себя совершенно стесненными – промышленность и заведения устроенные ими приходят в упадок, способы торговли должны ограничиваться. Они в недоумении, остаются в нерешительности и даже не знают, как продолжать свои обороты”⁷⁹.

Предлагалось сочетать “частную общественную пользу” с выгодами казны путем обеспечения, ранее созданного статуса для армянских общин: 1) сохранение силы высочайших грамот; 2) неизменность положения Азиатских судов, где использовался Армянский судебник для решения споров, и магистратур, осуществлявших делопроизводство на армянском языке; 3) увеличить местные повинности “соразмерно местным обстоятельствам и способам торговли”, которые стимулировали активность армянского населения, вместо ввода гильдейской системы, приведшей бы к упадку доходов казны.

Записка была представлена через графа Бенкендорфа на усмотрение монарха, который направил ее на заключение кн. А.И. Чернышева, который являлся председателем новосозданного Закавказского комитета⁸⁰.

Сам Глинка торжествующе направил признательное обращение Христофору Лазареву о судьбоности обращения к армянской истории: “Почтенный Христофор Якимович! Под покровом Провидения, я написал “Обозрение истории Армянского народа”⁸¹. В послании был приподнят покров сложности работы над “Собранием Актов”. Глинка указывал: “Признаюсь: надлежало употребить колоссальные усилия, чтобы сочетая прошедшие (книги) с настоящим дойти до 1829 г. Усердно все переделано; и я прибавил еще четыре листа. Но от чрезмерного напряжения духа, я заболел”.

Несмотря на это для писателя важным подспорьем представлялись слова Христофора Лазарева о значимости его деятельности: “Вы в предуведомлении к Актам, сказали, что “Армянский народ должен быть мне благодарен изданием полной Армянской истории”. В силу чего представлялось необходимость возвышения гонорара.

В письме от 10 октября 1833 г. отмечалось, что составлению “Обозрения” и первой части “Собрания актов” было посвящено около четыре лет жизни, от 1830 до конца 1833 г. За все это он получил вознаграждения в 2250 рублей. Предлагалось уделить большее внимание финансовой стороне вознаграждения: “Известно Вам, что теперь за романы берут десятки тысяч”⁸². Предлагалось выделить дополнительно 500 рублей. В процессе подготовки находилось 14 книг второй части⁸³.

⁷⁸ Матенадаран, ф. Архив Лазаревых, д. 36, п. 111, ед. хр.70, л. 1.

⁷⁹ Там же, л. 1 об.

⁸⁰ Там же, л. 1-2.

⁸¹ Там же, ф. 1252, оп.1, д. 7, л. 234.

⁸² ОПИ ГИМ, ф. 325, д. 7, л. 235.

⁸³ Там же, л. 234, 235.

На обороте письма сохранилась резолюция Христофора Лазарева Московской конторе: “Приобщить сие письмо к таковым же бумагам Глинки, рассмотреть и написать по существу”⁸⁴.

Издательская деятельность имела свои сложности. Проявляя бдительность, Московский цензурный комитет 7 октября 1833 г. запросил Главное управление цензуре о возможности их печатания, поскольку они включали документы из “нового собрания законов” (ПСЗРИ), московского архива Министерства иностранных дел, печати и подлинники высочайших грамот армянскому народу. При этом оговаривалось, что “Собрание актов” Христофор Лазарев цензурную экспертизу осуществил в Министерстве народного просвещения и во втором отделении канцелярии е.и.в., возглавляемого М.М. Сперанским, которые дали разрешение на издание⁸⁵.

Министр народного просвещения С. С. Уваров, не видя препятствий к её изданию, перестраховаясь запросил мнение Сперанского. Последний лишь 9 марта 1834 г. ответил министру, что дал поручение служащему рассмотреть первую часть “Собрания актов”⁸⁶. Бюрократическая казуистика задержала выход последующих частей. При этом запланированное содержание “Собрания актов” из трех актов состояло из одиннадцати отделов⁸⁷.

Детальное изучение содержания документов позволило Департаменту духовных дел иностранных исповедания составить заключение 10 июля 1837 г. ми-



нистру народного просвещения Уварову о наличии в первой части “Собрания актов” сведений, выходящих за рамки державного правопорядка: 1) лишь православное духовенство имело право крестить нехристиан, а армянскому оно разрешалось лишь в отдельных случаях с высочайшего соизволения; 2) представление архиепископа Нерсеса Аштаракецки от 5 июня 1831 г. о земле ар-

мянского монастыря Старого Крыма содержало критику деятельности местной администрации⁸⁸.

Лишь в 1838 г. были изданы вторая и третья часть “Собрания актов” на публикацию второй и третьей части Санкции на публикацию “Собрания актов” дал цензор Л. Цветаев 17 февраля 1835 г. и 16 октября 1836 г. Сомнения в дозволенности публикации актов данного цензора, отразившейся в известной деятельности Московского цензурного комитета, стали невольной причиной задержки издания, но последующая, очевидно, связана была с дополнениями и изложением документов. Вторая часть начиналась восьмым отделом “Краткое описание древнего Армянского царства”, содержало сведения о первоначальных сношениях армянского народа с Российской империей. О постепенном водворении оно, и проч.”⁸⁹.

Третья часть открывалась девятым отделом “Сведения об армянских учебных заведениях и типографиях, в Армении, России и других странах бывших и на-

⁸⁴ Там же, л. 235 об.

⁸⁵ **Саядов С.** Глинка С. Н., N 24, с. 198 -199.

⁸⁶ Там же, с.201, 202.

⁸⁷ Собрание актов..., ч. 1, с. IV –VII.

⁸⁸ Там же, с. 201, 202.

⁸⁹ Собрание актов..., ч. 2, с. I-III.

ходящихся»; десятый имел литературный характер – “Обозрение Армянской словесности вообще, сведения о писателях и разных предметах”, а заключительный одиннадцатый отдел – “Сношения Государственных мужей с первыми доверенными особами Армянской нации о разных предметах, относящихся до пользы Империи и до народа Армянского”⁹⁰. Очевидно, что раздел “Армянской словесности” и стал камнем преткновения для издания третьей части. При этом не состоялось издание церковной книги “Историческое, догматическое и таинственное изложение исповедания христианской веры православной кат(ф)олической восточной Армянской церкви”.

В целом, Христофором Лазаревым была проделана грандиозная работа по представлению истории Армянского народа, которая не имела аналога в среде российских армян. На новый культурно - научный уровень было поднято армяноведение в России. Создан золотой фонд документов, представляющий историю возникновения русско-армянских отношений, организации армянских общин в России и их борьбы за сохранение привилегий. Отражена роль фамилии Лазаревых в национальной жизни, церковном строительстве в России и деятельности глав Эчмиадзинского престола, представлены материалы опубликованные в русской прессе и изданные Лазаревским институтом восточных языков. Широкий диапазон охвата истории армянского народа знакомил русское общество с загадочными представителями Востока, с которым сливались бытовые и национальные интересы двух наций. Перед ошеломленной русской интеллигенцией возникла величественная историческая панорама жизнедеятельности армянского народа, утвердивший свою жизнестойкость крестом и пером, борьбой и просвещением.

Վալերի Թունյան – «Հայ հայրենասեր» Խ. Լազարյանի հրատարակչական գործունեությունը 19-րդ դ. 30-ական թթ. – Խ. Լազարյանը հանդիսացել է ոչ միայն հայ հայրենասեր գործիչ, այլև ծավալել է հրատարակչական գործունեություն: 19 – րդ դարի 20 – ական թթ. ռուս – պարսկական և ռուս – թուրքական պատերազմներից հետո նրա հրատարակած ուսումնասիրությունները վերաբերվել են հայ ժողովրդի ծագման, Հայաստանի պատմական աշխարհագրության, նրա առաջին պետական կազմավորումների ձևավորման գործընթացներին: Խ. Լազարյանը նաև հրատարակել է աշխատություններ, որոնք նպատակաուղղված են եղել ռուսահայերի կյանքի իրավական կազմակերպմանը, ինչպես նաև հայ – ռուսական հարաբերություններին: Հոդվածում վերլուծության է ենթարկված Խ. Լազարյանի հրատարակչական ողջ ժառանգությունը:

Valeri Tounyan – “Armenian patriot” Kh. Lasaryan’s publishing activity in the 1930s. – Kh. Lasaryan has not only been an Armenian patriot statesman but also has extended publishing activity. In the 1920s after Russian-Persian and Russian-Turkish wars his publishing studies refer to the processes of the origination of Armenian people, historical geography of Armenia and the formation of his first state formings. Kh. Lasaryan has also published works that were addressed to the legal organization of Russian Armenian lives and to Armenian-Russian relations as well. In the article Kh. Lasaryan’s publishing whole inheritance is analysed.

⁹⁰ Там же, ч. 3, с. I – IV.

**ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՄԵՐԺՈՒՄԸ ՄԻԱՅՑԱԼ
ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿՈՆԳՐԵՍՈՒՄ
(1919 Թ. ՓԵՏՐՎԱՐ-1920 Թ. ՄԱՐՏ)**

ԿԱՐԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

1919 թ. հունվարի 18-ին Փարիզում հավաքվեց Առաջին համաշխարհային պատերազմում հաղթող տերությունների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովը՝ պարտված պետությունների հետ կնքվելիք հաշտության պայմանագրերը մշակելու նպատակով⁹¹:

Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնը համաժողովին ներկայացել էր «Պատերազմի նպատակները և հաշտության պայմանները» ծրագրով: Այս ծրագիրը նա դեռևս 1918 թ. հունվարի 8-ին ներկայացրել էր Միացյալ Նահանգների կոնգրեսին: 14 կետերից բաղկացած այս «խաղաղության ծրագիրը» առավել հայտնի է «Վուդրո Վիլսոնի 14 կետեր» անվամբ⁹¹: Համաձայն սույն ծրագրի տասնչորսերորդ կետի. «Հատուկ համաձայնագրով պետք է ստեղծել ազգերի համընդհանուր ընկերակցություն, (Ազգերի լիգա-Կ.Գ.) ինչպես մեծ, այնպես էլ փոքր պետություններին քաղաքական անկախության և տարածքային ամբողջականության փոխադարձ երաշխիքներ տրամադրելու նպատակով»: Ազգերի լիգայի ստեղծման գաղափարը դարձավ Հանձնաժողովի քննարկման հիմնական թեմաներից մեկը: Հունվարի 22-ին, «Տասի խորհրդի» նիստի ժամանակ Լլոյդ Ջորջն ընթերցեց Ազգերի լիգայի կանոնադրության վերաբերյալ բանաձևը, որում ասվում էր.

«Համընդհանուր խաղաղության պահպանման համար, որի նպատակով այժմ հավաքվել են միավորված պետությունները, անհրաժեշտ է ստեղծել Ազգերի լիգա, որը կնպաստի միջազգային համագործակցությանը և կապահովի ընդունված միջազգային պարտավորությունների կատարումը և կստեղծի երաշ-

⁹¹ Քննարկումների ընթացքում հետպատերազմյան խաղաղության հաստատման վիճելի հիմնական հարցերը համաձայնեցնելու նպատակով կազմավորվեց «Տասի խորհուրդը»: Այն ներկայացնում էին. Մեծ Բրիտանիա՝ վարչապետ Դեյվիդ Լլոյդ Ջորջ և արտաքին գործերի նախարար Արթուր Ջեյմս Բալֆուր, Ֆրանսիա՝ վարչապետ Ժորժ Կլեմանսո և արտաքին գործերի նախարար Ստեֆան Պիշոն, Իտալիա՝ վարչապետ Վիտտորիո Օլանդո և արտաքին գործերի նախարար Միլոնե Սոննինո, Ճապոնիա՝ նախկին արտգործնախարար Մակիհիդո Նոբուաի և Լոնդոնում Ճապոնիայի դեսպան Սուտեմի Չինդա, Միացյալ Նահանգներ՝ նախագահ Վուդրո Վիլսոն և պետքարտուղար Ռոբերտ Լանսինգ: Այնուհետև խորհրդի կազմը կրճատվեց մինչև հինգ անդամների, իսկ Ճապոնիայի ներկայացուցիչ բացակայության պատճառով այն կոչվեց «Չորսի խորհուրդ» (Մեծ քաղաքի՝ Վուդրո Վիլսոն, Դեյվիդ Լլոյդ Ջորջ, Ժորժ Կլեմանսո, Վիտտորիո Օլանդո):

⁹¹ **W. Wilson**, In Our First Year of War, New York-London, "Harper & Brothers", 1918, p. 156-160. Տե՛ս նաև War Addresses of Woodrow Wilson, The Program of Peace, Address to Congress, January 8, 1918, cop. by **A. Leonard**, Boston-New York..., "Ginn & Company", 1918, p. 92-102. Տե՛ս նաև Address to Congress, Stating the War Aims and Peace Terms of the United States, Delivered in Joint Session, January 8, 1918, President Wilson's State Papers and Addresses, ed. by **A. Shaw**, New York, "George H. Dorn Company", 1917, p. 464-472.

խիբներ ընդդեմ պատերազմների... Լիգան պետք է դառնա Վերսալյան հաշտության բաղկացուցիչ մասը»⁹²:

Հունվարի 25-ին կայացավ հաշտության համաժողովի 2-րդ լիազումար նիստը, որի ընդացքում ձևավորվեց 19-ի հանձնաժողովը⁹³, որը պետք է զբաղվեր Լիգայի կանոնադրության մշակման աշխատանքներով⁹⁴: Հանձնաժողովը՝ Վուդրո Վիլսոնի ղեկավարությամբ փետրվարի 13-ին ավարտեց Լիգայի կանոնադրության՝ մշակումը: Հաշտության համաժողովի փետրվարի 14-ի հերթական լիազումար նիստի ժամանակ Վուդրո Վիլսոնը ներկայացրեց իր գլխավորած հանձնաժողովի աշխատանքի արդյունքները⁹⁴: Այսպիսով փետրվարի 14-ին լիազումար նիստում հաստատվեց այն փաստաթուղթը, որի հիման վրա պետք է կյանքի կոչվեր ապագա Ազգերի լիգան:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԵՐՔՈՐՈՇՄԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՄԵՆԱՏՈՒՄ

Ազգերի լիգայի կանոնադրության նախագծին հավանություն տալու հաջորդ օրը՝ փետրվարի 15-ին, Վուդրո Վիլսոնը մեկնեց Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ Սենատի արտաքին գործերով հանձնաժողովին փաստաթուղթը ներկայացնելու համար: Փետրվարի 26-ին Վուդրո Վիլսոնը հրավիրեց Սենատի և Ներկայացուցիչների պալատի արտաքին գործերով հանձնաժողովների անդամներին՝ ծանոթացնելու նրանց «Ազգերի համընդհանուր ասոցիացիայի» (Ազգերի լիգայի) գործունեության նախագծին⁹⁵:

Սակայն մինչ նախագահի ժամանումը Վաշինգտոնում ձևավորվել էր ընդդիմադիր խումբ՝ Սենատի արտաքին գործերով հանձնաժողովի նախագահ Հենրի Լոջի (Henry Lodge) գլխավորությամբ: Ընդդիմադիրները Լիգայի կանոնադրության մեջ տեսնում էին «Մոնրոյի դոկտրինայի»՝ ուղղակի ոսնահարում: Նրանք

⁹² St' u Архив полковника Хауза, т. 4, Москва, "Государственное издательство политической литературы", 1944, с. 233, St' u նաև Papers Relating to the Foreign Relations of the United States 1919. The Paris Peace Conference, vol. 3, Washington, "Government Printing Office", 1943, p. 178-181.

⁹³ Հանձնաժողովի կազմը հետևյալն էր. Ամերիկայի միացյալ նահանգներ՝ նախագահ Վուդրո Վիլսոն, որը ղեկավարում էր հանձնաժողովը, և նրա խորհրդական, գնդապետ Էդուարդ Հաուզ, Մեծ Բրիտանիա՝ արտաքին գործերի նախարարի օգնական Ռոբերտ Մեսիլ և գեներալ Յան Սմեթս, Ֆրանսիա՝ Լեոն Բուրժուա և Ֆերդինանդ Լարնոդ, Իտալիա՝ վարչապետ Վիտորիո Օռլանդո և սենատոր Վիտորիո Շալոյա, Ճապոնիա՝ նախկին արտգործնախարար Մակիկո Նոբուակի և Լոնդոնում Ճապոնիայի դեսպան Սուտեմի Չինդա, Բելգիա՝ արտաքին գործերի նախարար Փոլ Հիմանս, Բրազիլիա՝ սենատոր Էպիտասիու Պեսոա, Չինաստան՝ Վաշինգտոնում դեսպանորդ Վեյինգտոն Կու, Պորտուգալիա՝ Պետրոգրադում նախկին դեսպանորդ Բաթալա Ռեյս, Սերբիա՝ Փարիզում դեսպանորդ Միլենկո Վեսնիչ, Հունաստան՝ նախագահ Էլեֆտերիոս Վենիզելոս, Լեհաստան՝ Լեհաստանի ազգային կոմիտեի նախագահ Ռոման Դմովսկի, Ռումինիա՝ լիազոր ներկայացուցիչ Կոնստանտին Դիամանդի, Չեխոսլովակիա՝ Մինիստրների խորհրդի նախագահ Կարել Կրամարժ: St' u **D. Miller**, The Drafting of the Covenant, vol. 1, New York, "Loud, Putnam", 1928, p. 84, 142.

⁹⁴ **Д. Ллойд Джордж**, Правда о мирных договорах, т. 1, пер. с англ. А. Никонова, Москва, "Изд. Иностран. Лит.", 1957, с. 246.

⁹⁵ Կանոնադրության տեքստի ամբողջական տարբերակը տե՛ս **Д. Ллойд Джордж**, նշված աշխ., էջ 541-545. St' u նաև **D. Miller**, նշված աշխ., հ. 2, էջ 658-667.

⁹⁴ **D. Miller**, նշված աշխ., հ. 2, էջ 658-667.

⁹⁵ St' u **J. Tumulty**, Woodrow Wilson: As I Know Him, Garden City-New York, "Doubleday, Page & Company", 1921, p. 423-424.

⁹ «Մոնրոյի դոկտրինա». Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության արտաքին քաղաքական հայեցակարգի հիմնական դրույթները, որոնք հռչակվել են 1823թ. դեկտեմբերի 2-ին. 1817-1825 թթ. Միացյալ Նահանգների նախագահ Ջեյմս Մոնրոյի (1758-1831 թթ.) կողմից (այստեղից էլ անվանումը) կոնգրեսին հղած ուղերձում: Այն առաջ էր քաշում աշխարհի ամերիկյան և եվրոպական հա-

պահանջում էին պահպանել «Մոնրոյի դոկտրինայի» հիմնական դրույթները: Քննադատության առանցքը եղավ կանտոնադրության տասներորդ հոդվածը⁷: Վերջինիս կարծիքով, այդ հոդվածը նախատեսում էր, ըստ էության, Միացյալ Նահանգների ոստիկանական գործառույթների իրականացումը ողջ աշխարհում, այն օրինականացնում էր վերջինիս ռազմական միջամտության հնարավորությունը՝ ամերիկյան ամերիկացի հեռու գտնվող ռազմական հակամարտություններին: Այս հանգամանքը, ըստ նրա, չափազանց վտանգավոր էր Միացյալ Նահանգների համար, քանզի վերջինս կարող էր դրա արդյունքում ներքաշվել իր շահերին չառնչվող հակամարտությունների մեջ⁸:

Հենրի Լոջը և հանրապետական մեկ այլ սենատոր Ֆիլանդեր Նոքսը (Phila-lander Knox) սկսեցին գործուն աշխատանք տանել Սենատում Լիզայի կանտոնադրությունը պայմանագրից անջատելու համար: Ֆիլանդեր Նոքսը ներկայացրեց բանաձև, որը նախատեսում էր հետաձգել Լիզայի կազմավորման աշխատանքները, ինչպես նաև հստակեցնել ամերիկյան պարտավորությունների չափը հետպատերազմյան խաղաղության երաշխիքների տրամադրման հարցում: Նա նախատեսում էր ապագայում պաշտպանական ծրագրի ստեղծում, որին կմիանար նաև Միացյալ Նահանգները: Ինչպես նաև՝ ստեղծել միջազգային դատարան՝ ագրեսոր երկրներին դատելու համար⁹: Հանրապետական մյուս առաջնորդներն ընդհանուր առմամբ պաշտպանում էին Հենրի Լոջի և Ֆիլանդեր Նոքսի ռազմավարությունը¹⁰:

1919 թ. փետրվարի 28-ին ընդդիմադիրները հայտարարեցին, որ կպաշտպանեն պայմանագիրը միայն այն դեպքում, եթե կանտոնադրության տեքստում արվեն փոփոխություններ, որոնք կվերաբերվեն Լիզայի կազմից դուրս գալու պայմանների կոնկրետացմանը, «Մոնրոյի դոկտրինայից» բխող Միացյալ Նահանգների իրավունքների և շահերի պահպանմանը, Լիզայի անդամ-պետությունների ներքաղաքական հարցերին Լիզայի չմիջամտելուն և մի շարք այլ հարցերի¹¹: Այլապես, ըստ Հենրի Լոջի, նման կանտոնադրությամբ Լիզայի ստեղծման

մակարգերի բաժանելու և փոխադարձաբար միմյանց ներքին գործերին չմիջամտելու սկզբունքները: Հանուն արդարության պետք է նշել, որ Մոնրոն միայն կարդացել է այն, բոլոր դրույթները մշակել և ձևակերպել է այն ժամանակի պետքարտուղար Ջոն Քուինսի Ադամսը (1767-1848 թթ.), Միացյալ Նահանգների ապագա նախագահը (1825-1829 թթ), որն հաջորդեց Մոնրոյին: Մանրամասն տե՛ս Истoрия дипломатии, под ред. **В. Зорина** и др., том 1, Москва, “Гос. изд. Политической литературы”, 1959, 896 с. 521. Տե՛ս նաև **Н. Болховитинов**, Доктрина Монро (происхождение и характер), Москва, “ИМО”, 1959. Տե՛ս նաև **D. Perkins**, A History of the Monroe Doctrine, Boston, “Little Brown and Co.”, 1941.

⁷ Հոդված 10, ԱՐՏԱՔԻՆ ԱԳՐԵՍԻՎԱՅԻ ԴԵՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ- Լիզայի անդամները պարտավորվում են հարգել և պաշտպանել արտաքին ագրեսիայից Լիզայի անդամ երկրների տարածքային անձեռնմխելիությունը և գոյություն ունեցող քաղաքական անկախությունը: Նմանատիպ ագրեսիայի կամ ագրեսիայի հասունացած վտանգի դեպքում Խորհուրդը պետք է առաջարկի միջոցառումներ, որոնք թույլ կտան ի կատար ածելու վերոնշյալ պարտավորությունները: Տե՛ս Addresses of President Wilson on First Trip to Europ, An Address to the Third Plenary Session of the Conference, Feb. 14, 1919, p. 51. Տե՛ս նաև **Д. Ллойд Джордж**, նշված աշխ., էջ 543.

⁸ **А. Уткин**, Дипломатия Вудро Вилсона, Москва, “Международные отношения”, 1989, с. 65.

⁹ Congressional Records Containig the Proceedings and Debates of the Third Session of the Sixty-Fifth Congress of The United States of America, Washington, “Government Printing Office”, 1919, vol LVII, part 1, p. 603-608.

¹⁰ Նույն տեղում, part 1, p. 73, part 2, p. 1582-1584, p. 2730-2735, part 4, p. 3746, 4309-4310.

¹¹ **A. Cranston**, The killing of the Peace, New York, “Viking Press”, 1945, p. 45. Տե՛ս նաև **L. Ambrosius**, Woodrow Wilson and the American Diplomatic Traditions: The Treaty Fight in Perspective. Cambridge, “Cambridge University Press”, 1987, p. 93-94. Տե՛ս նաև Архив полковника Хауза, т. 4, с. 332.

պարագայում Միացյալ Նահանգները ստիպված կլինի զոհաբերել իր շահերը հանուն եվրոպական խաղաղության պահպանման¹⁰⁰:

Մարտի 3-ին, Վուդրո Վիլսոնի Ֆրանսիա մեկնելու նախորդ օրը, Հենրի Լո-ջը հրապարակեց 37 սենատորների (դա այն թիվն էր, որը կազմում էր այն ժամանակվա 96 սենատորների մեկ երրորդից ավելին, իսկ վավերացման համար անհրաժեշտ էր սենատորների թվի երկու երրորդի համաձայնությունը) կողմից ստորագրված բանաձևն այն մասին, որ նրանք չեն քվեարկելու Ազգերի լիգայի օգտին այն տեսքով, որով այն ներկայացվել է նախագահի կողմից և պահանջում են, որ Լիգայի հարցը վերանայվի առանձին հաշտության պայմանագրի ստորագրումից հետո¹⁰¹:

Վուդրո Վիլսոնը որոշեց շտկումներ կատարել Լիգայի կանոնադրության նախագծում, որոնք վերաբերում էին Լիգայի կազմից դուրս գալու իրավունքին, ինչպես նաև Միացյալ Նահանգների կողմից «Մոնրոյի դոկտրինայից» բխող իրավունքների և շահերի պահպանմանը¹⁰²: Նա Սենատի և Ներկայացուցիչների պալատի արտաքին գործերով հանձնաժողովների անդամներին խոստացավ Եվրոպա վերադառնալուն պես առաջարկվելիք փոփոխությունները ներկայացնել 19-ի հանձնաժողովի քննարկմանը¹⁰³:

Մարտի 14-ին Վուդրո Վիլսոնը վերադարձավ Փարիզ և, ինչպես խոստացել էր, խնդրեց 19-ի հանձնաժողովի քննարկմանը ներկայացրեց կանոնադրության մեջ մի շարք նոր հոդվածներ ընդգրկելու հարցը¹⁰⁴: Ապրիլի 28-ին կայացավ ևս մեկ լիագումար նիստ, որի հիմնական զեկուցողը Վուդրո Վիլսոնն էր: Նա ամփոփեց 19-ի հանձնաժողովի քննարկումների արդյունքները և ներկայացրեց արդեն փոփոխված կանոնադրության վերջնական տարբերակը: Համաժողովը հավանության արժանացրեց կանոնադրության այս տարբերակը, և արդյունքում բոլոր որշումներն ընդունվեցին¹⁰⁵: Կազմակերպության գլխավոր քարտուղար նշանակվեց բրիտանացի դիվանագետ Ջեյմս Դրամմոնդը (James Drummond), ինչպես նաև որոշվեցին Խորհրդի առաջին չորս ոչ մշտական անդամները՝ Բելգիան, Հունաստանը, Իսպանիան և Բրազիլիան¹⁰⁶:

1919թ. ապրիլի 28-ի դրությամբ Ազգերի լիգան այլևս իրողություն էր:

Վերսալյան պայմանագրի ստորագրման արարողությունը կատարվեց Մարանտյում տեղի ունեցած սպանության հինգերորդ տարեկիցի օրը՝ 1919 թ. հունիսի 28-ին¹⁰⁷:

2. ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ՁԱՖՈՂՈՒՄԸ ՍԵՆԱՏՈՒՄ

1919թ. հուլիսին նախագահ Վիլսոնը վերադառնում է Միացյալ Նահանգներ՝ իր ձեռքին ունենալով Ազգերի լիգայի հաստատված կանոնադրությունը:

¹⁰⁰ St' u **A. Cranston**, նշված աշխ., էջ 45. St' u նաև **L. Ambrosius**, նշված աշխ., էջ 93-94.

¹⁰¹ **H. Lodge**, The Senate and the League of Nations, New York, "Scribner", 1925, p. 117-121. St' u նաև **B. Лан**, США: от Первой до Второй мировой войны, Москва, "Наука", 1947, с. 65.

¹⁰² America and the League of Nations, Woodrow Wilson's Addresses in Europe, comp. by **L. Powell** and **F. Hodgins**, Chicago, "Rand McNally & Company", 1919, p. 181. St' u նաև **B. Лан**, նշված աշխ., էջ 65.

¹⁰³ St' u **Р. Бекер**, Вудро Вильсон: Мировая война, Версальский мир, Москва-Петербург, "Гос. Изд.", 1923, с. 344-346.

¹⁰⁴ St' u Архив полковника Хауза, т. 4, с. 332.

¹⁰⁵ Նույն տեղում, էջ 337.

¹⁰⁶ **Р. Илюхина**, Лига Наций, 1919-1934, Москва, "Наука", 1982, с. 75.

¹⁰⁷ Архив полковника Хауза, т. 4, с. 377. St' u նաև **А. Уткин**, նշված աշխ., էջ 297.

Հուլիսի 10-ին Վուդրո Վիլսոնը Միացյալ Նահանգների Սենատին ներկայացրեց Վերսալյան պայմանագրի տեքստը, որն իր մեջ ներառում էր նաև Ազգերի լիգայի կանոնադրությունը¹⁰⁸:

Սակայն Վուդրո Վիլսոնի Փարիզում գտնվելու ժամանակ Լիգայի հակառակորդների դիրքերն ուժեղացել էին: Հենրի Լոջի կողմնակիցները հակավիլսոնյան կամպանիա էին սկսել Վերսալյան պայմանագրի, հետևաբար նաև Ազգերի լիգայի կանոնադրության վավերացումը տապալելու նպատակով¹⁰⁹:

Պայմանագրի քննարկումը սկսվեց տեքստի ընթերցումով: Այն կարդաց հանձնաժողովի նախագահ Հենրի Լոջը: Ընթերցումը տևեց 2 շաբաթ և վերջացավ հուլիսի 29-ին: Հուլիսի 31-ին ակսվեց քննարկումը, որը տևեց մինչև սեպտեմբերի 12-ը: Այս քննարկման ժամանակ նույնպես առանձնակի քննադատության ենթարկվեց տասներորդ հոդվածը¹¹⁰: Սենատորները չէին կարող ընդունել պայմանագրի այդ տարբերակը, իսկ նախագահը ի վիճակիի չէր և չէր ուզում այն փոխել: Ստեղծվում էր փակուղային իրավիճակ:

Եվ ահա նման բարդ իրադրությունում Վուդրո Վիլսոնը որոշում ընդունեց շրջագայել երկրով մեկ: 1919թ. սեպտեմբերի 3-ին Վուդրո Վիլսոնը սկսեց իր ճամփորդությունը: 22 օրվա ընթացքում նա այցելեց 16 նահանգ, ունեցավ ավելի քան 30 ելույթ ի պաշտպանություն Վերսալյան պայմանագրի և Ազգերի լիգայի¹¹¹:

Այդ ընթացքում Սենատի հանձնաժողովը շարունակում էր իր աշխատանքը: 1919 թ. սեպտեմբերի 12-ի դրությամբ քննարկումը վերջացավ, և հանձնաժողովը Սենատին ներկայացրեց 3 զեկույց: 1-ինը հանրապետական Հենրի Լոջի զեկույցն էր, որն ուներ պայմանագրին վերաբերող 44 ուղղում և 4 վերապահում: 2-րդը՝ դեմոկրատ Գիլբերտ Հիչքոքի (Gilbert Hitchcock) զեկույցն էր, որը պահանջում էր հաստատել պայմանագիրն առանց վերապահումների: 3-ը՝ հանրապետական սենատոր Փորթեր Մաքքամբերի (Porter McCumber) զեկույցն էր, որտեղ խոսվում էր պայմանագիրը պաշտպանելու մասին, սակայն առաջարկվում էին որոշ ուղղումներ¹¹²:

Սենատն այնուամենայնիվ որոշում ընդունեց շտկումներ չանել, քանի որ Միացյալ Նահանգները միակողմանի չէր կարող փոփոխություններ մտցնել պայմանագրի տեքստի մեջ: Սակայն 4 վերապահումներին ավելացան ևս 10-ը¹¹³: Նոյեմբերի 6-ին Հենրի Լոջը դրանց մասին զեկույցեց Սենատին: Տասներորդ հոդվածին վերաբերող վերապահման իմաստը նրանում էր, որ Միացյալ Նահանգները չպետք է իր վրա վերցնի որևէ երկրի տարածքի ամբողջականությունը կամ ան-

¹⁰⁸ *J. Tumulty*, նշված աշխ., էջ 452.

¹⁰⁹ *J. Watson*, As I Knew Them: Memoirs of James R. Watson, Former United States Senator from Indiana. Indianapolis and New York, "Bobbs-Merrill Co.", 1936, p. 190. Տե՛ս նաև *D. Fleming*, The United States and the League of Nations, 1918-1920, New York, "Putman", 1932, p.211.

¹¹⁰ Версальский мирный договор, под ред. *Ю. Ключникова* и *А. Сабанина*, Москва, "Литиздат НКВД", 1925, с. 10. Տե՛ս նաև *Д.Ллойд Джордж*, նշված աշխ., էջ 543.

¹¹¹ Տե՛ս Addresses of President Wilson on His Western Tour, September 4 to September 25, 1919, Washington, "Government Printing Office", 1919. Տե՛ս նաև *L. Canfield*, The Presidency of Woodrow Wilson: Prelude to a World in Crisis, New Jersey, "Fairleigh Dickinson University Press", 1966, p. 226. Տե՛ս նաև *G. Smith*, When the Cheering Stopped: The Last Years of W.Wilson, New York, "Morrow and Co.", 1964, p. 69. Տե՛ս նաև *З. Гершов*, Вудро Вильсон, Москва, "Мысль", 1983, с. 263-264.

¹¹² Տե՛ս *L. Canfield*, նշված աշխ., էջ 241-243

¹¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 243.

կախությունը պահպանելու պարտավորվածություն՝ առանց Կոնգրեսի համաձայնության¹¹⁴:

1919 թ. նոյեմբերի 19-ին Սենատը կայացրեց իր որոշումը պայմանագրի վերաբերյալ: Վավերացմանը, առանց վերապահումների, կողմ քվեարկեց 38 սենատոր (հիմնականում դեմոկրատներ), դեմ՝ 53: Վերսալյան պայմանագիրը, նրա հետ մեկտեղ Ազգերի լիգայի կանոնադրությունը հավանության չարժանացան, բայց չնայած դրան՝ Սենատը վերջնական որոշում չկայացրեց, այլ ստեղծեց երկուսակցական հանձնաժողով՝ փոխզիջումային տարբերակ գտնելու համար¹¹⁵: Երկուսակցական հանձնաժողովը իր աշխատանքներն ավարտեց դեկտեմբերի 10-ին և վերապահումներով փոխզիջումային տարբերակը ներկայացվեց նախագահ Վիլսոնին: Վերջինս համաձայնեց այդ վերապահումները 5-ի հետ, որոնք վերաբերում էին Լիգայի կազմից դուրս գալուն և «Մոնրոյի դոկտրինային»: Բայց այլ զիջումների նա չգնաց, ավելին, 1919 թ. դեկտեմբերի 14-ին Սպիտակ տունը պաշտոնական հայտարարություն հրապարակեց: Տվյալ փաստաթղթում ընդգծվում էր, որ Վուդրո Վիլսոնը այլևս չի պատրաստվում գնալ փոխզիջման կամ էլ որևէ նշանակալի զիջման¹¹⁶:

1920թ. մարտի 19-ին Վերսալյան պայմանագրի վերապահումներով տարբերակը դրվեց քվեարկության: Պայմանագրին կողմ քվեարկեցին 49 սենատորներ, իսկ դեմ՝ 35: Վավերացման համար չբավականացրեց ընդամենը 7 ձայն¹¹⁷: Պայմանագիրը վերադարձվեց նախագահին նրա չվավերացման ծանուցմամբ: 1920 թ. մայիսի 15-ին Կոնգրեսը Գերմանիայի հետ պատերազմական իրավիճակը դադարեցնելու բանաձև ընդունեց, քանզի Վերսալյան պայմանագիրն այժմ չէր տարածվում Միացյալ Նահանգների վրա¹¹⁸:

Վուդրո Վիլսոնը, ի նշան բողոքի, այդ որոշման վրա վետո դրեց¹¹⁹: Հաջորդ նախագահ, հանրապետական Ուորեն Հարդինգի (Warren Harding) օրոք միայն բանաձևն ընդունվեց, իսկ 1921 թ. օգոստոսի 25-ին խաղաղության պայմանագիր կնքվեց Միացյալ Նահանգների և Գերմանիայի միջև¹²⁰:

* * *

Այսպիսով Միացյալ Նահանգների Կոնգրեսը մերժեց Վերսալյան պայմանագիրը և դրա մաս կազմող Ազգերի լիգային անդամակցումը, դրանով իսկ մերժելով հետապատերազմյան նոր աշխարհակարգում մաս կազմելու վիլսոնյան ձգտումները: Կասկած չի հարուցում այն, որ նախագահ Վիլսոնի՝ Ազգերի լիգա ստեղծելու առաջարկը հանդիսանում էր շատ կարևոր ներդրում նոր աշխարհակարգի ստեղծման գործում: Այն կոչված էր արմատապես փոխելու պետությունների փոխհարաբերությունները, ստեղծելու միանգամայն նոր մակարդակի և

¹¹⁴ Տե՛ս *J. Tumulty*, նշված աշխ., էջ 380. Տե՛ս նաև *L. Canfield*, նշված աշխ., էջ 241-243

¹¹⁵ *L. Ambrosius*, նշված աշխ., էջ 208

¹¹⁶ Տե՛ս *J. Daniels*, *The Wilson Era, Years of War and After, 1917-1923*, Chapel Hill, "The University of North Carolina Press", 1946, p. 473. Տե՛ս նաև *T. Bailey*, *Woodrow Wilson and the Great Betrayal*, New York, "Macmillan", 1945, p. 213. Տե՛ս նաև *R. Hofstadter*, *The American Political Tradition And the Men Who Made it*, New York, "Alfred A. Knopf", 1948, p. 277. Տե՛ս նաև *Յ. Դեբոս*, նշված աշխ., էջ 271.

¹¹⁷ *L. Canfield*, նշված աշխ., էջ 262. Տե՛ս նաև *R. Hofstadter*, նշված աշխ., էջ 277.

¹¹⁸ *L. Canfield*, նշված աշխ., էջ 269

¹¹⁹ Նույն տեղում, էջ 269-270

¹²⁰ *Ա. Մուկ*, նշված աշխ., էջ 307

արդեն իրավական հարթության վրա գործող միջպետական փոխհարաբերությունների կարգավորման համակարգ, ուր ազգերի հավասարությունը, որի առկայության դեպքում է միայն հնարավոր կառուցել կայուն խաղաղություն, պետք է արտահայտվի նրանց իրավահավասարության մեջ: Իրավունքը պետք է հենվի բոլոր ազգերի ընդհանուր հզորության վրա, ինչը կախված է ոչ թե մեկի գերակայությունից, այլ անվտանգության հանդեպ պատասխանատվության հավաքական գիտակցումից:

Նախագահ Վիլսոնը, արդեն Վերսալյան համակարգի շրջանակներում, առաջարկեց ճգնաժամից դուրս գալու և միջազգային հարաբերությունները կարգավորելու իր «դեղատոմսը» հավաքական անվտանգության միանգամայն նոր ձևաչափի՝ Ազգերի լիգայի շրջանակներում:

Նա ցանկանում էր ոչ թե արմատապես փոխել գոյություն ունեցող եվրոպական սկզբունքները, այլ փորձում էր ուժերի հավասարակշռության եվրոպական մեխանիզմները համադրել ուժերի միավորման սկզբունքին և, ի դեմս Ազգերի լիգայի, համընդհանուր խաղաղության պահպանումը մեկտեղել հավաքական անվտանգության հետ: Վուդրո Վիլսոնի հավատը հավաքական անվտանգության նկատմամբ ենթադրում էր փոխադարձ վստահության միջավայրի ստեղծում, որտեղ երկրները կմիավորվեին ընդդեմ ագրեսիայի և անարդարության: Եվ անկախ առանձին երկրների հզորությունից՝ պետությունների միջև իրավահավասարության հաստատումը կհանդիսանար հավաքական անվտանգության միջոցով խաղաղության ապահովման նախադրյալ: Սակայն ինչպես նշում է Վիլյամ Ուայթը (William White). «Վիլսոնը իրականում իր ժամանակակիցներից առաջ էր իր քաղաքական հայացքներով, և նա չկարողացավ նվաճել աշխարհը, քանի որ մարդկությունը դրան դեռևս պատրաստ չէր»¹²¹:

Համաձայնելով վերջինիս կարծիքին, նշենք, որ Վուդրո Վիլսոնի արտաքին քաղաքական ժառանգությունը մինչ օրս արդիական է: Դրա վառ ապացույցն է այն, որ ժամանակակից միջազգային կազմակերպությունների գործունեության սկզբունքներն իրենց հիմքում, կարելի է ասել, հենց վիլսոնյան են: Համաշխարհային քաղաքականության շատ խնդիրներ, որոնք փորձում էր համակարգել նախագահ Վիլսոնը, դեռևս անլուծելի են: Շատ պետությունների քաղաքական և հասարակական գործիչների մեծամասնությունը հստակ գիտակցում է, որ նոր դարաշրջանի ամենանվտանգավոր մարտահրավերները (այդ թվում նաև ահաբեկչությունը) չեն կարող հաղթահարվել՝ առանց համաշխարհային հանրության միասնական կամքի, որի անհրաժեշտության մասին էր միշտ խոսում Վուդրո Վիլսոնը:

Վուդրո Վիլսոնի ինտերնացիոնալիզմի կարիքը նորից զգացվեց Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Ճապոնական հարձակումը Պերլ-Հարբորի՝ վրա կարծես արթնացրեց ամերիկյան քաղաքական գործիչներին, նրանց համոզելով, որ անհրաժեշտ է վերականգնել իրենց երկրի առաջատարությունը խաղաղության հաստատման և ամրապնդման գործում. «Ներկա պահին

¹²¹ **W. White**, Woodrow Wilson: The Man, His Time and His Task, Boston-New York, "Mifflin", 1925, p. 436
* 1941 թ. դեկտեմբերի 7-ին Ճապոնական օդուժը հարձակվեց Հավայան կղզիներից Օահու կղզում տեղակայված Ամերիկայի ՄԲացյալ Նահանգների Պերլ-Հարբոր ռազմածովային բազայի վրա, ինչը առիթ հանդիսացավ, որ Միացյալ Նահանգները պատերազմ հայտարարի Ճապոնիային և, դրանով իսկ, մուտք գործի Երկրորդ համաշխարհային պատերազմ:

աշխարհի ազգերը ունեն երկրորդ հնարավորությունը ստեղծելու խաղաղության ամուր կառուցվածք,-հայտարարեց փոխնախագահ Հենրի Ուոլեսը (Henry Wallace),- այնպիսի կառուցվածք, որ առաջարկում էր Վիլսոնը, սակայն որը ձախողվեց այն պատճառով, որ աշխարհը պատրաստ չէր դրան»¹²²: Նախագահ Ֆրանկլին Ռուզվելտը (Franklin Roosevelt) և նրա հաջորդ Հարրի թրումենը (Harry Truman) շարունակեցին իրենց «քաղաքական նախորդի» քաղաքականությունը, համատեղելով իդեալիզմն ու պրագմատիզմը: Նրանք ընդունեցին Վուդրո Վիլսոնի ժառանգությունը, որպես ամերիկյան արտաքին քաղաքական վարդապետության գաղափարական հիմք, որը տվյալ պահին առավել անհրաժեշտ էր Միացյալ Նահանգներին: Ելույթ ունենալով 1945 թ. հունիսին Սան Ֆրանցիսկոյում կայացած Միավորված ազգերի կազմակերպության հիմնադիր համաժողովում, նախագահ Հարրի թրումենը ընդգծեց. «Դուք ստեղծեցիք խաղաղության և անվտանգության մեծագույն գործիք... Այդ հռչակագրով դուք կյանքի կոչեցիք մեծագույն պետական գործիչ Վուդրո Վիլսոնի երազանքը»¹²³:

Карен Гаспарян – Обсуждение устава лиги наций и его отклонение в Конгрессе Соединенных Штатов (февраль 1919-март 1920). – В Париже 18-ого января 1919 г. комитет представителей великих держав победителей Первой мировой войны собрался для разработки проектов мирных договоров для их подписания с проигравшими государствами. Президент Соединенных штатов Вудро Вильсон на обсуждение конференции представил свою известную программу мира из 14 пунктов. Согласно 14-му пункту создавалась Лига Наций с целью предоставления политической свободы и взаимных гарантий территориальной целостности как великих, так и малых государств.

Но 19-ого марта 1920 г. конгресс Соединенных штатов проголосовал против Версальского договора и устава Лига Наций, опровергая стремления Вильсона стать частью поствоенного мироустройства.

Karen Gasparyan – Drafting of the Covenant of The League of Nations and Its Voting Down in The United States Congress (February, 1919 – March, 1920). – On January 18, 1918, the representatives of the First World War victorious states assembled in Paris to draft the peace treaty with the defeated states: The United States president Woodrow Wilson submitted to conference for consideration his famous “14 points”. According to the fourteenth paragraph of this plan was formed The League of Nations for the purpose of affording mutual guarantees of political independence and territorial integrity to great and small states alike.

But on March 19, 1920 The United States Congress voted down The Treaty of Versailles and the Covenant of The League of Nations, thereby rejecting Wilson’s aspirations to participate in new post-war world order.

¹²² St’u **R. Divine**, Second chance; the triumph of internationalism in America during World War II. N.Y.: Atheneum, 1967, p. 84. St’u նաև **L. Ambrosius**, նշված աշխ., էջ p. 291-292

¹²³ Public Papers of the Presidents of The United States: Harry S. Truman, Containing the Public Messages, Speeches, and Statements of the President, April 12 to December 31, 1945, Washington, “Government Printing Office”, 1961, p. 138-144.

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

ՌՈՒԶԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Բարեգործությունը հայ իրականության մեջ շատ հին ակունքներ է ունեցել: Դրա մասին են վկայում պահպանված, և մեզ հասած գրավոր աղբյուրները: Աղքատներին, որբերին ու անկարողներին խնամելու մարդկային բարեսիրական ձգտումները երբեք էլ խորթ չեն եղել հայությանը: Հանրահայտ է, որ բարեսիրությունը մեզանում սկիզբ է առել, դեռևս հայկական թագավորությունների ժամանակաշրջանում: Ցավոք, նախաքրիստոնեական շրջանի վերաբերյալ գրավոր տեղեկություններն ու հիշատակությունները շատ ժլատ են և կցկտուր: Բայց փաստ է, որ հայր բարեպաշտությունն ու բարեսիրությունը ժառանգել է վաղնջական ժամանակներից: Այսպես, Մովսես Խորենացին հիշատակում է, որ Տիգրան Վերջինը պատվել է իր եղբոր՝ Մաժան քրմապետի գերեզմանը, և Բագրավանդում նրա գերեզմանի վրա բազին է կառուցել «որպեսզի այդտեղի զոհերից վայելեն բոլոր անցորդները, և հյուրեր ընդունվեն գիշերելու համար»¹²⁴: Այս վկայությունից պարզ է դառնում, որ հեթանոսական տաճարները, ինչպես ուրիշ ժողովուրդների մեջ, մեզանում էլ աղքատներին, կարոտյալներին օգնելու կոչում են ունեցել: Ճիշտ է, նախաքրիստոնեական շրջանի բարեսիրության վերաբերյալ պահպանված գրավոր աղբյուրները սակավ են, որն էլ իր հերթին, անհնարին է դարձնում ամբողջական պատկերացում կազմելու այդ շրջանում իրականացված բարեպաշտության մասին, բայց նույնիսկ այդ սակավ, կցկտուր տեղեկությունները, մեզ բավարար հիմքեր են տալիս կարծելու, որ բարեգործությունն, անկասկած, նախաքրիստոնեական արմատներ ունի: Բսկ քրիստոնեությունն իր հետևորդների համար, աղքատներին ու անկարողներին խնամելու գործն առաջնակարգ պարտավորություններից մեկն է համարել: Քրիստոնեության թելադրած բարեգործական ոգին, Հայաստանում մեծապես տարածում գտավ IV դարում, Գրիգոր Լուսավորչի շառավիղներից մեկի՝ Ներսես Մեծի ժամանակ: Նա սկսեց հիմնադրել բազմաթիվ բարեգործական հաստատություններ, որոնք պահվում էին եկեղեցու և պետական միջոցներով: Այդ բարեգործական հիմնարկությունները, շուտով տվեցին իրենց պտուղները: Երկրում սկսեց տիրապետել բարեկարգություն, մարդասիրություն և բարքերի մեղմացում: Ներսես Մեծի հիմնադրած բարեգործական հիմնարկություններն այնքան կյանք ունեցան, որքան ապրեց ինքը, այդ մեծ հայրապետը: Այնուհետև հայոց պատմության ընթացքում, այլևս չենք հանդիպում պետական բարեգործության այդպիսի ընդարձակ համակարգի: Բարեգործությունն այնուհետև անցնում է անհատներին, և մեր պատմությունը պահել է այդպիսի շատ անհատ բարեգործների անուններ: Բարեգործությունը համարվում էր գերազանցորեն հոգեշահ գործ, որի համար ըստ քրիստոնեական հավատքի, նվիրաբերողները վարձ պիտի ստանային, թե այս, և թե հանդերձյալ աշխարհում: ՌԻստի, այդ զգացմունքը հավատացյալների մեջ ամենայն եռանդով պահպանում էր կրոնը:

¹²⁴ *Մովսես Խորենացի*, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 243-244:

Բարեգործությունն ամենից առաջ, և ամենից շատ կրոնական աստվածահաճո կերպարանք ուներ: Այդ զգացմունքի արդյունք են Հայաստանի ամբողջ տարածքում կառուցված անթիվ եկեղեցիներն ու վանքերը, որոնցից շատերը հայկական ճարտարապետության ինքնատիպ նմուշներ են համարվում: Եկեղեցիների ու վանքերի արձանագրություններում բազմաթիվ վկայություններ են պահպանվել, թե դարերի ընթացքում ինչպիսի ջերմեռանդությամբ են հայ հասարակության ներկայացուցիչները նվիրաբերություններ կատարել, սկսած թագավորներից, իշխաններից, մինչև գեղջուկները: Իդեալ, բարեգործության ամենատարածված ձևերից էր՝ աղքատներին, կարոտյալներին, հիվանդներին և կյանքի զանազան պատահարներից թշվառացածներին օգնելը: Իրենց բարեսիրությամբ հայտնի էին գորավար՝ Մանվել Մամիկոնյանը (IV դար), Գրիգոր Պատրիկը (VII դար), իսկ X դարում Բագրատունի թագավորներից իր շեշտված գրասիրությամբ հայտնի էր Աշոտ III Ողորմածը: Անիի ազնվական տոհմից իր բարեգործությամբ հռչակվեց Պահլավունի իշխանական տունը՝ հատկապես Վահրամ Պահլավունին: Նրա անպարտելի քաջությանը, մաքուր հայրենասիրությանը միախառնված էր նաև, առատաձեռն բարեգործի առաքինի և զգայուն հոգին:

Հետզհետե, ժամանակի ընթացքում, կյանքը մշակեց բարեսիրության նոր ձևեր: Առաջացավ մեր պատմության ամենախոշոր երևույթներից մեկը՝ հայ վաճառականությունը: Վաճառական դասն աստիճանաբար զբաղեցրեց հին ազնվականության տեղը, կատարելով բարեգործության նրա դերը: Հայերի մեջ բարեգործության ասպարեզն այդ շրջանում նորից կենդանացավ, բայց բարեգործության նպատակը գլխավորապես միևնույնն էր մնում՝ կրոնական հաստատություններին օժանդակել, և նրանց միջոցով խնամել նաև աղքատներին, տնանկնեքին, հիվանդ և անդամալույծ մարդկանց:

Հանրաշահ բարեգործություններով հայ վաճառականության մեջ առաջին տեղն էին զբաղեցնում հատկապես նոր ջուղայեցիները: Նրանք հանդիսացան առաջավոր կրթա-մշակութային պահանջների ներկայացուցիչներ, և հետզհետե սկսեցին խոշոր գործեր ու մեծ ծրագրեր իրականացնել այդ ուղղությամբ: Այսպես նոր ջուղայեցի էին Մոսկվայում իրենց համբավավոր ճեմարանը հիմնադրած Լազարյանները, ինչպես նաև մեծամասամբ ջուղայեցիներ էին հնդկահայ համայնքի հիմնադիրները: Շեշտենք, որ հնդկահայ համայնքը շարունակ նպաստներ է հատկացրել բուն հայրենիքի մտավոր շահերին նվիրված հիմնարկություններին: Հավաքական ուժերով հանրաշահ գործեր կատարելու վեհ սկզբունքները, հանրային բարեկեցության և առաջադիմության համար, հզոր ազդակներ են հանդիսացել: Հետագայում, բարեգործությունն արդեն ավանդաբար սերնդից-սերունդ անցնելով, դարձավ ժողովրդի գոյատևումն ու մշակութային զարգացումն ապահովող, կարևորագույն միջոց: Հիշտ է, բարեսիրությունն իր դրսևորմամբ հասնում է պատմական հնագույն ժամանակները, բայց պետք է ասել, որ այդ շարժումը որպես ինքնուրույն ուղղություն, կազմակերպվեց ավելի ուշ շրջանում: Արդեն XVIII դարի վերջին, և XIX դարի սկզբներին, այդ շարժումը լայնորեն ընդարձակվեց, և մեկը մյուսի հետևից բացվեցին բարեգործական տարբեր բնույթի կազմակերպություններ, որոնց գործունեության տեղն արևմտահայության գլխավոր կենտրոններ՝ Կ. Պոլիսն ու Զմյուռնիան էին: Այսպես, 1840-ական թվականներին Կ. Պոլսում և Զմյուռնիայում բացվեցին մասնավոր ընկերություններ, որոնք իրենց համար տարբեր նպատակներ էին ընտրել: Դրանց մեջ հայտնի էր «Համագ-

գեաց» կոչվող ընկերությունը, որը հիմնադրել էին հայ կաթոլիկ երիտասարդները, և նրանց նպատակն էր, ընդհանուր ուժերով լուսավորության գործին ծառայել: Զմյուռնիայում հիմնվեցին «Սյունյաց» և «Արագածունյաց» ընկերությունները, առաջինը՝ դպրոցական, իսկ եկրորդը՝ հրատարակչական կազմակերպություններ էին¹²⁵: Արդեն 1850-ական թվականներին, երբ Կ.Պոլսում կյանքն ավելի կենդանացավ Արևելյան պատերազմի պատճառով, կրթական և այլ բարենպաստական ընկերությունների թիվը օրեցօր ավելացավ: Պոլսում բարեգործական շարժումն ավելի բազմաբնույթ և նպատակաալաց դարձավ: Բացվեցին «Ընթերցասիրաց», «Վերածնության Թանգարանը», «Եղբայրասիրական» և «Մեսրոպյան» ընկերությունները: Շուտով թուրքահայերը փորձ արեցին բարեգործական կազմակերպության միջոցով մի խոշոր գործ իրականացնել, և 1860 թվականին Կ.Պոլսում կազմակերպվեց «Բարեգործական ընկերություն Հայոց»-ը, որի նախաձեռնությունը պատկանում էր այն ժամանակվա թուրքահայ նշանավոր գրական, հասարակական գործիչներին: Այս ընկերության նպատակն էր՝ «Ազգին որք, անտեր և չքատր տղայքը երկրագործութեան և արուեստից զբաղեցնելու միջոցներն ի գործ դնել: Կազմվեց կանոնադրություն, ընտրվեցին վարչական մարմիններ, և ընկերությունը հրատարակեց մի հայտարարություն, որի մեջ ցույց էր տալիս, թե ինչ մեծ նշանակություն ունի երկրագործությունն ամեն մի ազգի, և մասնավորապես հայ ազգի համար, որը տգետ ու հետամնաց է, որովհետև աղքատ է»¹²⁶: Բայց Պոլսի հայ մտավորականության այդ ձեռնարկումները, որը ընդարձակ միջոցներ էր պահանջում այդպես էլ չհաջողվեց իրականություն դարձնել: Մի կողմ թողնելով, թե այդ ժամանակների, և թե դրանից հետո թուրքահայերի մեջ կազմված ընկերությունների լիակատար ցուցակը, կարելի է հետևյալ եզրահանգմանը գալ, որ այդ ընկերությունները փոքր էին և նվիրված էին մի սահմանափակ նպատակի: Այդ մանր կազմակերպությունները, երկարատև չէին: Նրանք ծնվում ու ապրում էին մի որոշ ժամանակ, և տեղի էին տալի այլանուն կազմակերպությունների: Նշենք, որ այդպիսի անջատ, մանր հավաքական ուժերով իհարկե, խոշոր երկարաժամկետ հանրային գործեր կատարել չէր հաջողվի: Եվ մենք այդ բազմաթիվ կազմակերպությունների առկայությունը պիտի համարենք լոկ իբրև գիտակցության նշան, թե ինչ եղանակով պետք է տանել ժողովրդի կրթակուլտուրական գործը: Արևելյան Հայաստանում բարեգործական շարժումն անհամեմատ ուշ զարգացում ապրեց: Բարենպաստական ընկերություններն այստեղ էլ, սկզբում մասնավոր նպատակներ, և փոքր կազմ են ունեցել: Արդեն ռուս-թուրքական 1877-1878թթ. պատերազմից հետո, երբ հազարավոր հայեր հարկադրված գաղթեցին Անդրկովկաս, հատկապես Թիֆլիս, հայ գաղթականությունը մահանում էր սովից և վարակիչ հիվանդություններից, նա կարոտ էր անմիջական օգնության: Գաղթականների այդ ծանր, անելանելի վիճակը, ցնցեց ողջ հայությանը: Մուր, աղաղակող կարիքը հանկարծակիի բերեց կովկասահայությանը, և ինքնըստինքյան հարց էր ծագում, ի՞նչ պետք է անել: Ժողովրդական այդ մեծ աղետը ծնեց ընդարձակ բարեգործական կազմակերպություն հիմնադրելու գաղափարը: Կովկասահայությունը, որպեսզի համընդհանուր ուժերով օգնության ձեռք մեկներ ծանր դրության մեջ գտնվող գաղթականությանը, պիտի միավորեր այդ ջանքերը մի կազմակեր-

¹²⁵ **Հ.Քոսյան**, Հայք ի Զմիռնիա և ի շրջակայս, Վիեննա, 1899, հ.Ա, էջ 177-179:

¹²⁶ «Կռունկ», Թիֆլիս, 1862, N2:

պության մեջ, որի շնորհիվ ավելի արդյունավետ ու նպանակային կլինեք ցուցաբերվող օգնությունը: Թշվառության այդ ծովի մեջ բժիշկ Բագրատ Նավասարդյանն այն առաջիններից մեկն էր, որ փորձում էր բժշկական օգնություն հասցնել գաղթականներին: Նավասարդյանը ճանաչված վիրաբույժ էր և հասարակական եռանդուն գործիչ: Նա փայլուն գնահատականներով ավարտել էր Ս.Պետերբուրգի բժշկավիրաբուժական ակադեմիան: Դեռևս ուսանողական տարիներից սկսած, նա որպես բժիշկ իր գրասիրտ ձեռքն էր մեկնել բազմաթիվ հայ գաղթականների: Թիֆլիսում նա կազմակերպել էր մասնավոր հիվանդանոց, որտեղ բուժվում էին բազմաթիվ հայ և այլագգի հիվանդներ, իսկ չքավորները ստանում էին անվճար բուժում: 1882 թվականին Բ.Նավասարդյանը, Ա.Թոխմախյանի հետ միասին ճամփորդել են Արևմտյան Հայաստան, եղել Կ.Պոլսում, հանդիպել պատրիարք Ներսես եպիսկոպոս Վարժապետյանին: Կ.Պոլսից նրանք մեկնել են Կարին, Վան: Բ.Նավասարդյանի նպատակն էր նաև մոտիկից ծանոթանալ Կարինի ազատագրական խմբակի գործիչներին և կենդանի կապ հաստատել Թիֆլիսի ազատախոհական տրամադրություններով համակված հասարակական խավերի հետ: Բ.Նավասարդյանը դառնում է «Պաշտպան հայրենյաց»-ի գործուն մասնակիցներից մեկը¹²⁷: Այդ կազմակերպության համար համարակալված տոմսեր ստեղծելու գաղափարը պատկանում է նրան: Ըստ Բաֆֆու, Բ.Նավասարդյանը կենդանի հերոս էր, և դարձել էր գրողի ստեղծագործական ներշնչանքի առարկան, նրա կերտած կերպարներից մեկի՝ «Խենթ»-ը վեպի բժշկի նախատիպը¹²⁸: Այդ օրհասական օրերին էր, որ Նավասարդյանը զգաց, թե որքան կարևոր է կազմակերպված օգնությունն այդպիսի աղետալի դեպքերում: Հայ գաղթականներին օգնելու նպատակով Բ.Նավասարդյանը 1880 թվականին «Մշակ»-ի էջերում բազմիցս հանդես եկավ հայոց բարեգործական ընկերություն հիմնադրելու առաջարկությամբ¹²⁹: Հայ առաջադեմ հասարակությունը գիտակցում էր գաղթականությանը շուտափույթ օգնության ձեռք մեկնելու անհրաժեշտությունը, և այդ իսկ պատճառով սկսվում է վճռական քայլեր ձեռնարկել այդ ուղղությամբ: Ինչնէ, Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը հանկարծակի չծնվեց, նախընթաց տարիներին այն ապրել, և զարգացել էր իբրև գաղափար: Եվ փաստորեն, ժամանակն ինքը ծնեց բարեգործական ընկերություն հիմնադրելու անհրաժեշտությունը, և ժամանակն էլ ցույց տվեց նրան բավարարություն տալու միջոցները: Շուտով, Բ.Նավասարդյանը քարոզից անցնում է գործի, կազմում է ապագա բարեգործական ընկերության ծրագիրը, և գրում նրա կանոնադրությունը: Կանոնադրությունն իրավաբանորեն ճիշտ խմբագրելու նպատակով, այն հանձնում է իրավաբան Ս.Արծրունուն: Այդ խմբագրված կանոնադրությունը նա քննության է ենթարկում մի խումբ անձանց հետ, որոնք հատուկ այդ նպատակով հրավիրվում են: Ի դեպ, այդ առաջին մասնավոր ժողովում տարաձայնություններ են ծագում, և չի հաջողվում դրականորեն լուծել ծագած խնդիրները: Բայց, դա անհաջողություն չէր, որովհետև այդ նույն ժողովին ներկա էր տաղանդավոր դրամատուրգ Գ.Սունդուկյանը, որը մեծ համակրանք է ցուցաբերում Բ.Նավասարդյանի կողմից

¹²⁷ **Ռ.Փ.Չովհաննիսյան**, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1965, էջ 298-299:

¹²⁸ **Գ.Մանդակունի**, Ոսկի բարեկամ հայ ընտանյաց, Թիֆլիս, 1912, էջ 594-595:

¹²⁹ «Մշակ», օրաթերթ, Թիֆլիս, 1880, N88:

առաջարկվող գաղափարներին: Այդ պահից սկսած, Գ.Սունդուկյանը դառնում է բարեգործական ընկերության ստեղծման գաղափարի ամենաեռանդուն գործիչներից մեկը: Որոշ ժամանակ անց Բ.Նավասարդյանը և Գ.Սունդուկյանը նորից սկսում են մշակել ընկերության կանոնադրությունը, և այդ նպատակով Գ.Սունդուկյանը հավաքում է ցարական Ռուսաստանի բոլոր հայտնի ընկերությունների կանոնադրությունները, մանրակրկիտ ուսումնասիրում դրանք: Նրանք շուտով հաջողությամբ խմբագրում են ընկերության կանոնադրությունը: 1880թ. վերջերին, երբ Թիֆլիսի հայոց առաջնորդարանում մի ժողով է հրավիրվում, որին մասնակցում էին 40 թիֆլիսաբնակ մտավորականներ և վաճառականներ, օգտվելով այդ հարմար առիթից Բ.Նավասարդյանը որոշում է ժողովականների քննությանը ենթարկել, բարեգործականի կանոնադրությունը: Ժողովը համակրելով բարեգործական ընկերության գաղափարը, ընտրում է 13 հոգուց բաղկացած մի խումբ, որոնց թվում էին՝ Բ.Նավասարդյանը, Ս.Արծրունին, Գ.Սունդուկյանը, Հ.Չիթախյանը, Ա.Մանթաշյանը, Վ.Մուրաֆյանը, Ս.Մելիք Մեհրաբյանը և ուրիշներ¹³⁰:

Ընդորում, Բ.Նավասարդյանը, Ս.Արծրունին և Գ.Սունդուկյանը կանոնադրությունը¹³¹ մշակողներն էին, իսկ մնացած 10-ը պետք է քննեին այդ կանոնադրությունը: Շեշտենք, որ ընկերության կանոնադրությունը քննարկման է ենթարկվել մի քանի ժողովներում, և արդեն 1881թ. մարտի 1-ի ժողովում ընտրվում է 5 հոգուց բաղկացած մի խումբ՝ Բ.Նավասարդյան, Մ. Շահ-Պարոնյան, Ն.Ամատունի, Գ.Սունդուկյան և Ս.Մելիք Մեհրաբյանը, որոնք ընտրվել էին ընկերության կանոնադրությունն իշխանության հաստատմանը ներկայացնելու համար: Ասենք, որ ընկերության նպատակը չափազանց ընդարձակ էր, այն է՝ «նպաստել լուսավորության տարածմանը հայերի մեջ Կովկասում և Անդրկովկասում, օգնել նրանց նաև նյութապես»: Այս առումով ընկերության գաղափարն ու նպատակները մեծ հավանություն, համակրանք գտան հայ հասարակության շրջանում: Անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների ավարտից հետո, 1881 թ. նոյեմբերի 15-ին Բ.Նավասարդյանի, Գ. Սունդուկյանի, Գ. Արծրունու և մի խումբ այլ մտավորականների կողմից Թիֆլիսում հիմնադրվեց Կովկասի Հայոց Բարեգործական ընկերությունը¹³²: Ընկերության խորհուրդը 1881թ. նոյեմբերի 15-ին հրավիրեց իր անդրանիկ նիստը՝ Արծրունիների թատրոնի դահլիճում: Ընկերության անդամների թիվը՝ 220 էր, իսկ ներկա էին 122 անձինք: Սա Կովկասի Հայոց բարեգործական ընկերության պաշտոնական բացումն էր, և այս առաջին ընդհանուր ժողովը պետք է ընտրեր, պաշտոնատար մարմիններ ընկերության գործունեությունը սկսելու համար: Թիֆլիսի հայ հասարակության կյանքում այդ իրադարձությունն աչքի ընկնող մի երևույթ էր, քանզի նկատվում էր մեծ համակրանք դեպի բարեսիրական այդ նոր գործը: Ժողովը բացում է Բ. Նավասարդյանը, որը ներկաներին ուրախությամբ հայտնում է, որ բարեգործական ընկերության կանոնադրությունը՝ «1881թ. հուլիսի 6-ին արժանացել է Կովկասի փոխարքայի պաշտոնակատար, գեներալ-ադյուտանտ իշխան Լ. Մելիքովի հաստատմանը»¹³³:

Այնուհետև Նավասարդյանը ներկաներին համառոտ ձևով ծանոթացնում է հիմնադրված ընկերության նպատակներին ու բացատրում, որ Թիֆլիսում և Կով-

¹³⁰ «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1881, N4:

¹³¹ ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ.296, թ.5:

¹³² ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ.2, թ.198:

¹³³ Նույնը, գ.6, թ.5:

կատում ընդհանրապես, բարեգործական ընկերություն հիմնելու գաղափարը, ոչ թե մի մարդու, կամ մի խումբ մարդկանց է պատկանում, այլ այդ գաղափարը մի կողմից ստեղծել է ժամանակի ոգին, իսկ մյուս կողմից՝ հայության աղքատ դասի նյութական միջոցների պակասությունը: Եվ ուղղակի սովատանջ ու հիվանդ թուրքահայերի գաղթը դեպի Անդրկովկաս, հանդիսացավ այն վճռական մղումը, որի արդյունքում մարմին ստացավ ու հիմնադրվեց Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը: Ընկերության կանոնադրության համաձայն Բ. Նավասարդյանն առաջարկում է ներկա տարեշրջանի ընդհանուր ժողովի համար նախագահ և քարտուղար ընտրել, ավելացնելով, որ այն հինգ անձինք (Գ.Սունդուկյանը, Բ.Նավասարդյանը, Մ.Մեհրաբյանը, Մ.Շահ-Պարոնյանը և Ն.Ամատունին), որոնք ընտրվել էին ընկերության կանոնադրությունն իշխանության հաստատմանը ներկայացնելու, արդեն իրենց հանձնարարությունը կատարած են համարվում: Ընդհանուր ժողովը միաձայն նախագահ է ընտրում՝ Մ. Շահ-Պարոնյանին, իսկ քարտուղար՝ Գ.Չմշկյանին¹³⁴:

Բարեգործական ընկերության խորհուրդը 1881թ. նոյեմբերի 18-ին կայացած նիստում կանոնադրության 23 և 24 հոդվածների համաձայն, որոշում է խորհրդի նախագահ, փոխնախագահ, քարտուղար և գանձապահ ընտրել: Ձայնների մեծամասնությամբ նախագահ է ընտրվում՝ Ա.Անանյանը, փոխնախագահ Դ.Տեր-Աստվածատրյանը և գանձապահ Հ.Չիթախյանը: Ժամանակավորապես քարտուղարի պաշտոնը ստանձնում է ընկերության անդամ՝ Ն.Խոսրովյանը: Այս նիստում ընթերցվում է նաև Թիֆլիսի նահանգապետից 1881թ. հոկտեմբերի 14-ին ստացված գրությունը, որով նահանգապետն ընկերությունից խնդրում էր յուրաքանչյուր տարի իշխանությանը ներկայացնել իր գործունեության հաշիվները: Խորհուրդն իր հերթին վճռում է այդ գրությունն ինկատի ունենալ գործունեության յուրաքանչյուր տարեվերջ¹³⁵: Ընկերության 1881թ. նոյեմբերի 20-ին կայացած ընդհանուր ժողովի նիստում խորհրդի քարտուղար է ընտրվում Պ.Եզեկյանը: Նիստում որոշվեց նաև Գ.Սունդուկյանին հանձնարարել ընկերության համար երկու կնիք և դրոշմ պատվիրել: Շեշտենք, որ այս ժողովում Սունդուկյանն ու Նավասարդյանը քննության ներկայացրեցին՝ Տեղական վարչություններին և Մասնաժողովներին վերաբերող հրահանգը: Իդեպ, խորհուրդը որոշեց հրահանգի օրինակները բազմացնել և բաժանել իր անդամներին, որպեսզի նրանք հանգամանորեն ծանոթանան դրան, և ապա հաջորդ ընդհանուր ժողովի նիստում քննարկեն այդ հրահանգը: Ժողովում որոշվեց նաև Վեհափառ կաթողիկոս Գևորգ Դ-ին և Ներսես պատրիարք Վարժապետյանին հայտնել բարեգործական ընկերության հիմնադրման մասին, և նրանից օրհնություն խնդրել¹³⁶: Կովկասի բարեգործականը 1881թ. դեկտեմբերի 5-ի գրությամբ տեղեկացնելով Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ին նորահաստատ ընկերության հիմնադրման մասին, խնդրում է նրա հայրապետական օրհնությունը¹³⁷: Խորհուրդն իր 1881թ. նոյեմբերի 27-ին կայացած նիստում քննարկելով մի շարք կարևոր հարցեր, այդ թվում աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ Թիֆլիսի գավառների մեծ մասի հայ բնակիչները հայերեն չգիտեն, և խոստում կարդում են միայն վրացերեն, որոշում է ընկե-

¹³⁴ ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ.2, թ.2:

¹³⁵ Նույնը, գ.1, թ.1:

¹³⁶ Նույնը, թ.2:

¹³⁷ Նույնը, գ.3, թ.1:

րության կանոնադրության 1200 օրինակ թարգմանել վրացերեն և տպագրության հանձնել, որպեսզի հայության այդ մասը նույնպես հնարավորություն ունենա ծանոթանալու ընկերության ծրագրերին ու նպատակներին: Հանձնարարվում է Գ.Սունդուկյանին հոգալ, թե՛ կանոնադրության թարգմանման, և թե՛ դրա տպագրության մասին¹³⁸: Ընկերության հիմնադրման փաստը մեծ ուրախությամբ է ընդունվում՝ Գևորգ Դ կաթողիկոսի կողմից, և 1881թ. դեկտեմբերի 18-ին նա հատուկ կոնդակով ընկերությանն է հղում իր օրհնությունը.«մաղթելով հաջողություններ, բարի և ազգօգուտ նպատակների իրականացման գործում»¹³⁹: Ընկերության 1881թ. դեկտեմբերի 20-ի ընդհանուր ժողովի նիստում քննարկման ենթարկվեցին Վեհափառ կաթողիկոսին և Ներսես պատրիարք Վարժապետյանին, ընկերության պատվավոր անդամի կոչում շնորհելու, և ընկերության 1882թ. նախահաշվի հարցերը: Ժողովը նախ քննարկեց առաջին հարցը, որի ժամանակ ժողովականներից մի քանիսը հարց բարձրացրեցին, թե արդյոք վայել է՝ Ամենայն Հայոց կաթողիկոսին ընկերության պատվավոր անդամի կոչում շնորհելը: Այս հարցը երկար քննարկելուց հետո, ժողովը ի վերջո որոշում է, որ ավելի ճիշտ է խնդրել Նորին Օծությանը, որպեսզի նա իբրև խնամակալ իր հովանավորության ներքո ընդունի Հայոց բարեգործական ընկերությանը, իսկ Ներսես պատրիարքին շնորհել ընկերության պատվավոր անդամի կոչում: Ինչ վերաբերվում է ընկերության 1882թ. նախահաշվին, ապա նախագահը ընթերցելով խորհրդի զեկուցումն այդ մասին, բացատրեց, որ մշտական անդամների թիվը հասել է 24-ի, և նրանց վճարած գումարը՝ 4900ռ., իսկ գործադիր անդամների թիվը՝ 441-ի, վճարված գումարը՝ 2205ռ.: Խորհուրդն այս տեղեկությունը տալով խնդրեց ընդհանուր ժողովի թույլատվությունը վերոհիշյալ 4900ռ. թողնել առաջին տարվա ընթացքում անձեռնմխելի իր տոկոսներով, իսկ առաջիկա տարվա անհրաժեշտ ծախսերի համար նշանակել 2500ռ.¹⁴⁰: Հիշատակենք, որ ընկերության խորհրդի անդամ Ա.Մանթաշյանը, դեռևս 1881թ. դեկտեմբերի 11-ի ընդհանուր ժողովի նիստում, պատրաստակամություն է հայտնում վճարել այն բոլոր ծախսերը, որ ընկերությունն արել էր իր հիմնադրման օրից, մինչև 1881թ. դեկտեմբերի 11-ը, ինչպես անդորրագրերի տպագրության, այնպես էլ այլ պիտույքների համար¹⁴¹: Այժմ փորձենք անդրադառնալ 1881թ. դեկտեմբերի 20-ին ընկերության ընդհանուր ժողովի կողմից խորհրդին ի գործադրություն հանձնված՝ 2500ռ. գումարին: Գործադրված գումարների հաշիվներն ուսումնասիրելով մենք անմիջական պատկերացում ենք կազմում, թե ի՞նչ նպատակներով են ծախսվել այդ գումարները, ընկերության գործունեությունն սկսելու օրից՝ այն է 1881թ. նոյեմբերի 18-ից մինչև 1883թ. հունվարի 1-ը ներառյալ: Ընկերությունը գործադրելի 2500ռ. գումարից, որպես օժանդակություն է տրամադրել ուսումնարաններին, չքավոր աշակերտներին, ուսուցչական ընդհանուր ժողովին, կարոտյալներին, ապաստարանական պատրաստության, պատի օրացույցի հրատարակման, դիվանի ծախսերի համար, և այսպիսով գործադրված գումարը՝ 2052ռ.44կ. էր, իսկ մնացորդային գումարը կազմում էր՝ 447ռ.56կ.¹⁴²:

¹³⁸ ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ.1, թ.3:

¹³⁹ Նույնը, գ.3, թ.3:

¹⁴⁰ ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ.2, թ.12:

¹⁴¹ Նույնը, գ.1, թ.6-7:

¹⁴² Նույնը, գ.3, թ.8:

Ընկերության խորհուրդն ամենից առաջ ծավալում էր, լայն կազմակերպչական գործունեություն: Նա էր, որ որոշակի կերպարանք տվեց ընկերությանը, և նրա գործունեությունն այդ ուղղությամբ հատկապես առաջին տարիներին, առավել եռանդուն էր: Խորհրդի առաջին հոգսն էր կյանքի կոչել, և իրագործել ընկերության կանոնադրության ամենակարևոր կետերից մեկը՝ 16-րդը, որն իրավունք էր տալիս ընկերությանը գավառական ճյուղեր բացելու¹⁴³: Եվ պատահական չէր, որ Գ.Սունդուկյանը և Բ.Նավասարդյանն արդեն մշակել, խորհրդի նիստերի քննությանն էին առաջարկել իրենց կազմած նախագիծը՝ «Տեղական վարչությունների և մասնաժողովների» հրահանգը, որը պիտի կանոնավորեր գավառական ճյուղերի ներքին կազմակերպությունն ու գործավարությունը: Այդ նախագիծը որոշակի փոփոխությունների ենթարկվելուց հետո, 1882թ. հունվարի 10-ի ընդհանուր ժողովի նիստում հաստատվում է¹⁴⁴: Այդ հրահանգը բաղկացած էր 20 հոդվածներից, որի առաջին 9-ը կետերով սահմանվում էր, թե ինչ սկզբունքով էին կազմվելու տեղական վարչություններն ու մասնաժողովները, որքա՞ն և ի՞նչ ժամկետներում էին ընտրվելու վարչության նախագահն ու անդամները, կառավարական, հասարակական հիմնարկությունների հետ, ինչպիսի՞ն էին լինելու նրանց հարաբերությունները, թե ինչպես էին կանոնակարգվելու անդամավճարների, նյութական նվիրատվությունների ընդունումը, և նմանատիպ մի շարք հարցեր: Եվ քանի որ, ընկերության 1881թ. հուլիսի 6-ի կանոնադրության 4-րդ կետը տրամադրում էր որ, «Ընկերությունն իր գործունեությունն ընդլայնելու համար վայելում է կառավարչական հաստատությունների և անձանց օրինավոր աջակցությունը¹⁴⁵»: Ուստի, խորհուրդն առանձին-առանձին պաշտոնական թղթերով դիմում է Կովկասի բոլոր նահանգապետերին և շրջանների կառավարիչներին՝ ուղարկելով յուրաքանչյուրին կանոնադրության 10-ական օրինակ, խնդրում նրանց օրինավոր աջակցությունը ընկերության գործունեությունը տարածելու համար: Հայոց բարեգործական ընկերության ծրագիրը՝ «պարունակում է ամեն տեսակ հոգսեր, հայերի կրթական և բարոյական առաջադիմության համար: Այդ ընկերության հիմնվելը համակրությամբ ընդունվեց բոլոր լուսավորված հայերի կողմից, և այդ համակրությունը նշանավոր գրավական կարող էր լինել, նոր ընկերության գործունեության համար»¹⁴⁶:

Պետք է նշել, որ նույնպիսի համակրության արժանացավ ընկերությունը և Կովկասի կառավարչության բարձր շրջաններում: Փոխարքա մեծ իշխան՝ Միխայիլ Նիկոլանիչը հաճություն տվեց, որ կանոնադրությունը հաստատվի այն պայմանով, եթե այն վերաբերվի փոխարքայության սահմաններում գտնվող տարածքներին: Հակառակ դեպքում, այսինքն՝ եթե ընկերության ծրագիրը պահպանվեր անփոփոխ, ապա պետք էր խնդրել բարձրագույն թույլատվություն: Այս պատճառով, որոշվեց ընկերության գործունեությունն անփոփել միայն Կովկասի սահմաններում: Հետևաբար, ընկերության անուն էլ փոխվեց այսպես՝ «Հայոց բարեգործական ընկերություն Կովկասում»: Եվ արդեն 1881թ. հուլիսի 6-ին փոխարքա մեծ իշխանի բացակայության պատճառով, նրա պաշտոնակատար, գեներալ-ադյուտանտ իշխան Մելիքովը հաստատեց ընկերության կանոնադրությունը, ո-

¹⁴³ Նույնը, գ.294, թ.81-82:

¹⁴⁴ ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ.2, թ.15-26:

¹⁴⁵ Նույնը, գ.294, թ.92:

¹⁴⁶ «Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, 1881, N 26:

րը և հրատարակվեց՝ «Կովկաս» լրագրի պաշտոնական բաժնում, հոկտեմբերի 16-ին¹⁴⁷:

Կովկասի բարեգործական ընկերությունն իր գործունեության ողջ ընթացքում ընդունել է երեք կանոնադրություն առաջինը՝ 1881թ. հուլիսի 6-ին, երկրորդը՝ 1899թ. հուլիսի 6-ին, և երրորդը՝ 1908թ. հունվարի 31-ին: Իսկ ի՞նչ կանոնադրություն էր դուրս եկել ժողովականների քննարկումների բովից: Պետք է ասել, որ ընկերության նպատակը չափազանց ընդարձակ էր: Այն է՝ նպաստել լուսավորություն տարածելուն հայոց մեջ՝ ռուսաց պետության սահմաններում և նյութապես օգնել նրանց, իդեպ նյութապես օժանդակություն ցուցաբերելուց բացի, լուսավորություն ևս տարածել նրանց մեջ: Ընկերության կանոնադրությունը բաղկացած էր 50 հոդվածներից, որոնցից յուրաքանչյուրը կանոնակարգելու էր ընկերության այս կամ այն գործունեության ոլորտը: Կանոնադրության առաջին երկու կետերը վերաբերվում էին ընկերության կողմից իրականացվող նպատակներին: Իսկ ընկերության նպատակն էր, ինչպես արդեն վերը հիշատակել ենք, նպաստել լուսավորության տարածմանը հայերի մեջ՝ Կովկասում և Անդրկովկասում, օգնել նրանց նյութապես: Այդ նպատակին հասնելու համար ընկերությունը, ըստ իր ուժերի զարգացման՝ պետք է պահպաներ արդեն գոյություն ունեցող հայոց ուսումնարանները, և նյութապես նպաստեր նորերի հիմնադրմանը: Ընկերությունը պետք է օժանդակեր ժողովրդի մեջ արհեստների տարածմանը, օգներ ուսանողներին իրենց ուսման ասպարեզում, լույս ընծայեր գրքեր և պարբերական հրատարակություններ, գրական այլ երկասիրություններ, ժողովրդի ընթերցանության համար: Հիմնադրվելու էին տպարաններ, վիմագրատներ, գրադարաններ, ընթերցարաններ, հիվանդանոցներ, և այլ բարեգործական հաստատություններ: Ընկերությունն օգնելու էր տառապյալներին ժողովրդական թշվառությունների ժամանակ, որպիսիք էին՝ սովը, տարափոխիկ ախտերը, հրդեհները և այլն: Այդպիսի դեպքերում, ըստ պահանջման կազմվելու էին առողջապահական մասնախմբեր, կամ ուղարկվելու էին հավատարմատարներ: Ընկերությունն իրավունք ուներ կարևոր դեպքերում նպաստել և այլ ազգօգուտ կազմակերպությունների: Կանոնադրությամբ սահմանված էր, թե ինչ ճանապարհով պիտի գոյանան ընկերության գործունեությունն ապահովող ֆինանսական միջոցները, ընկերության կազմը, իրավունքները, անդամների թիվը, անդամավճարները, ինչպես նաև խորհրդի, ընդհանուր ժողովների, տեղական վարչությունների, և մասնաժողովների գործունեությունը: Կանոնադրությամբ կարգավորվում էր նաև, ընկերության հնարավոր փական դեպքում իրականացվող կարգն ու ձեռնարկվող քայլերը: Կովկասի հայոց բարեգործական ընկերության առաջին կանոնադրությունը գործեց մինչև 1889 թվականը: Արդեն 1999 թվականին այն փոխարինվեց նոր կանոնադրությամբ: Կովկասի կառավարչապետ իշխան Գոլիցինը, ներքին գործերի նախարարի համաձայնությամբ ընկերության համար կազմելով նոր կանոնադրություն՝ 1899 թվականի մարտի 11-ին Թիֆլիսի ռուսիկանապետի հատուկ գրությամբ ուղարկում է ընկերության խորհրդին առաջարկելով օրիկանացնել այն¹⁴⁸: Խորհրդի 1899 թվականի ապրիլի 5-ը արձանագրության մեջ հանդիպում ենք հետևյալ տեղեկությանը, որ ապրիլի 1-ին դումայի դահլիճում կայացած կենտրոնական ընդհանուր ժողովում կայացվել է ներքոնշյալ որոշումը. «Անփո-

¹⁴⁷ «Կովկաս», Թիֆլիս, 1881, N227:

¹⁴⁸ ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ.59, թ.37-38:

փոխ ընդունել Կովկասի կառավարչապետի, ներքին գործերի նախարարի հետ համաձայնությամբ կազմած նոր կանոնադրության ծրագիրը, որով մինչև այժմ գոյություն ունեցող «Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը» վերակազմվում և դառնում է «Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերություն» և այդ որոշումը կայացավ միաձայն¹⁴⁹։ Նոր կանոնադրության ընդունման պահին ընկերությունն արդեն 19 տեղական ճյուղեր ուներ Կովկասի տարբեր վայրերում։ Ընկերությունը թոշակներ էր տալիս բարձրագույն դպրոցներում սովորողներին պահում էր էժանագին ճաշարաններ, գրադարան-ընթերցարաններ, աղքատների համար նյութական օգնություն էր հասցնում, կազմակերպում էր բժշկական, առողջապահական խմբեր։ Բայց արդեն նոր կանոնադրության հաստատումով ընկերությունը գրկվելու էր տեղական ճյուղեր ունենալու իրավունքից¹⁵⁰։ Ընկերության գործունեությունը դրվելու էր ամենանեղ շրջանակների մեջ և վերակազմված Թիֆլիսի հայոց բարեգործականը իրավունք ուներ միայն նյութական օգնություն հասցնելու, և այն էլ շատ սահմանափակ շրջանի մարդկանց, այն չքավորներին, որոնք բնակվում էին Թիֆլիս քաղաքում և պատկանում էին հայ-լուսավորչական դավանանքի։ Նոր կանոնադրության սահմանափակումների հետևանքով, ընկերության բազմաթիվ կրթական, հիմնարկություններ փակվեցին, իսկ շատ թոշակավոր աշակերտներ գրկվեցին իրենց կրթությունը շարունակելու հնարավորությունից։ Ընկերությանը հասցված այս հարվածը սրտի ցավով ընդունեց ողջ հայությունը, համարելով այն չարական ու անարդար գործողություն։ Բայց 1905 թվականին, երբ Կովկասում վերջ դրվեց կառավարչապետ իշխան Գուլիցինի կողմից հաստատված վարչական ռեժիմին, հայերի մոտ հույսեր առաջացան վերականգնելու ընկերության 1881 թվականի կանոնադրությունը։ Շուտով Կովկասում նոր փոխարքա է նշանակվում կոմս՝ Ի.Ի.Վորոնցով-Դաշկովը, որը «Կովկաս» լրագրում հրապարակում է իր պաշտոնական դիմումը։ Այդ դիմումում ներկայացված էր այն քաղաքականությունը, որ նա պատրաստվում էր իրականացնել Կովկասում։ Իդեալ, փոխարքայի այդ ծրագիրն իր բարյացակամ տրամադրություններով մեծ տպավորություն թողեց ազգաբնակչության վրա, և բոլորի համար պարզ դարձավ, որ Կովկասում նոր դարազուլիս է սկսվում։ Նկատի ունենալով այդ դրական փոփոխությունները Կովկասի տարբեր քաղաքներից հայերը սկսեցին դիմումներ ուղղել վարչությանը, պահանջելով նրանից միջնորդել Կովկասի բարձր իշխանությանը վերականգնելու բարեգործականի հին կանոնադրությունը։ Եվ արդեն 1906 թվականի նոյեմբերին Թիֆլիսի հայոց բարեգործականը հատուկ խնդրանքով դիմում է Կովկասի կառավարչապետին իր նախկին կանոնադրությունը վերականգնելու առաջարկությամբ։ Ընկերության վարչությունը 1907 թվականի մայիսին նորից զեկույց-գրությամբ դիմում է Վորոնցով-Դաշկովին, բայց այս անգամ գրության հետ միասին նրան է ուղարկվում նաև 1881 թվականի հին կանոնադրության մի օրինակ¹⁵¹։ Հին կանոնադրության վերականգնման հարցը քննարկման ենթարկվեց նաև ընկերության 1907 թվականի դեկտեմբերի 1-ին կայացած արտակարգ ժողովում։ Նախագահ Բ.Նավասարդյանը ժողովականներին բացատրեց, որ դեռ անցյալ տարվանից ընկերության ընդհանուր ժողովը ցանկություն էր հայտնել և հանձնարարել ընկերության վարչությանը, որ նա դի-

¹⁴⁹ Նույնը, թ. 41-42:

¹⁵⁰ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 59, թ. 71-72:

¹⁵¹ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 86, թ. 2-3:

մումներ ուղղեր ուր հարկն է, նորից վերականգնելու նախկին «Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը» իր սկզբնական ընդարձակ կանոնադրությամբ, և գավառներում ճյուղեր ունենալու իրավունքով: Նավասարդյանը բացատրեց, որ ընկերության ներկա վարչությունը այդ նպատակով դիմել է Ս.Պետերբուրգ, բայց մինիստրությունից պատասխան է ստացել, թե այժմ փոփոխված պետական կանոնների համաձայն, այլևս հարկ չկա այդպիսի դիմումները բարձրագույն իշխանությանն ուղղել, այլ դա կարելի է անել նահանգապետի թույլատվությամբ: Այս նախագահը հայտնեց, որ ընկերության վարչությունն արդեն կազմել է վերականգնվելիք Կովկասի հայոց բարեգործականի կանոնադրությունը, որն իր էական կետերով նույնն է, բացի մի քանի փոփոխությունների: Այդ նոր կանոնադրությունը քննության է ենթարկվել և արժանացել հավանության: Այնուհետև, նախագահը ժողովականների համար ընթերցում է կանոնադրության գլխավոր և էական կետերը: Ժողովականներից ոմանք, առաջնորդվելով այն հանգամանքով, որ նոր կանոնադրությամբ ընկերությունը կամենում է իր սեփական ուսումնարաններն ունենալու, ինչպես և այլ կուլտուրական գործեր կատարելու, ուստի առաջարկում է վերականգնվող ընկերությունն անվանել «Կովկասյան հայոց կրթական-բարեգործական ընկերություն», իսկ ոմանք էլ ուղղակի առաջարկում էին դուրս գցել բարեգործական բառը և անվանել այն միայն կրթական կամ կուլտուրական ընկերություն: Սակայն այդ առաջարկը ներկայացնողներին բացատրվում է, որ դա անկարելի է անել պարզապես այն պարզ պատճառով, որ ընկերության անունը հիմնովին փոխելը կնշանակեր վերջնականապես փակել հին բարեգործական ընկերությունը, և նրա տեղը մի նոր ընկերություն հիմնադրել, մի բան, որ ներկա ժողովը ոչ մի իրավունք չունի, քանի որ սա Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերության ժողովն է, հրավիրված այդ նույն ընկերության վարչության կողմից: Բացի դրանից ցանկալի չէ ընկերության անունը փոխել, որովհետև այդ անվան հետ երկար տարիների ավանդույթներ են կապված, և որ ամենագրելիավորն է, ընկերության անունը փոխելով, նա կարող է զրկվել այն բոլոր հաստատություններից, որ թողնված են նրան համաձայն մի շարք կտակների: Այս բացատրությունները լսելուց հետո, ժողովը միաձայն ընդունեց վարչության ներկայացրած կանոնադրությունը և հանձնեց այն ընկերության պատվավոր անդամներ՝ Բ.Նավասարդյանին և Ա.Մելիք-Ագարյանին, որ այն ներկայացնեն նահանգապետի հաստատմանը, և միևնույն ժամանակ լիազորություն տալով այդ պարոններին հարկավոր դեպքում, այս կամ այն փոփոխությունը մտցնել նախագծի մեջ¹⁵²: Այս բոլոր հանգամանքներն ի նկատի առնելով վերամշակված և վերջնական տարբերակի բերված կանոնադրությունն ուղարկվում է Թիֆլիսի նահանգապետին, որն էլ 1908 թվականի հունվարի 31-ին հաստատում է ընկերության նոր կանոնադրությունը: Այն բաղկացած էր 9-ը գլուխներից և պարունակում էր 71 հոդվածներ, որոնք էլ կանոնակարգելու էին ընկերության հետագա գործունեությունը¹⁵³:

Այսպիսով, իր հիմնադրման առաջին իսկ տարիներից Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը, մեծ ջանքեր է գործադրել բարեսիրական ազդեցիկ ծրագրեր իրականացնելու ուղղությամբ: Եվ երբ հանգամանորեն ծանոթանում ենք ընկերության գործունեության պատմությանը, միանգամայն պարզ է դառ-

¹⁵² ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ.86, թ. 60-61:

¹⁵³ Նույնը, թ.6-15:

նում, թե որքան հսկայածավալ աշխատանք է կատարել ընկերությունն այդ տարիների ընթացքում:

Рузанна Акопян – Основание Кавказского Армянского Благотворительного Общества. – Мысль основания Кавказского армянского благотворительного общества была порождена крайне бедственным положением турецких армян. После русско-турецкой войны 1877-1878 годов множество армян, с целью спасения, было вынуждено бежать в Закавказье. Беженцы страдали болезнями и умирали от голода. Они нуждались в скорейшей помощи. Именно это большое человеческое бедствие и породило мысль создания расширенного благотворительного общества. Для того, чтобы протянуть руку помощи беженцам, находящимся на грани вымирания, кавказские армяне должны были объединить все свои усилия в одно единое целое, помощь которого была бы боли существенной и целенаправленной. Таким образом, 15 ноября 1881 года в Тифлисе, усилиями Б.Навасардяна, Г.Сундукяна, Г. Арцруни и других было основано Кавказское армянское благотворительное общество, которое со дня своего основания развернуло плодотворную деятельность.

Ruzanna Hakobyan – Foundation of Caucasus Armenian Benevolent Union. – The disastrous situation of refugees from Turkey. Couased foundation of Armenia Benevolent Union in Caucasus.

After Russian – turkish war in 1877-1878 a lot of Armenians left for Caucasus to be save.

Refugees suffered of hunger and discases.

They needed immediate help. This situation gave birth the idea of foundation. Large benevolent aid. For this purpose Armenians in Caucasus united their efforts in one organization wich could make the help more effective and purposeful.

On November 15; in 1881 the Armenian Benevolent Union in Caucasus was founded in Tiflis by B.Sundukjan; G.Artzruny and other intellectuals.

From the very first day of its organization the Union spread large activities.

ՂՈՒԿԱՍ ԻՆՃԻՃՅԱՆԻ «ԱԶԳԱՍԵՐ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԿՈՒՀԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ականավոր պատմաբան, աշխարհագրագետ, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Ղուկաս վարդապետ Ինճիճյանի պատմագրական ժառանգության մեջ կարևորվում է նրա «Ազգասեր» տրակտատը: «Արշարունյաց ընկերության» խնդրանքով և առաջարկով լույս ընծայած ազգասիրության մասին այս երկում հեղինակը զարգացնում է այն տեսակետը, որ կրոնից ու ամեն ինչից վեր կանգնած են ազգության շահերը, նրա միասնության գաղափարը¹⁵⁴: Աշխատությունը լուս է տեսել 1815 թ., մի ժամանակ, երբ հայ հասարակությունը գաղթավայրերում և Մայր Հայրենիքում տարաբաժանված էր երկու հարանվանության՝ լուսավորչական և կաթոլիկական: Անգիջում պայթայրը երկու հատվածների միջև ավելի էր մասնատում հայ ժողովրդի՝ առանց այն էլ թույլ ու ջլատված ուժերը: Ուստի պատահական չէ, որ ժամանակի Կ. Պոլսի հայկական գաղթավայրի լուսավորչական ու կաթոլիկ որոշ հեռատես գործիչներ, դատապարտելով բոլոր նրանց, ովքեր հանդես էին գալիս երկու հայ հատվածների ազգային ու հասարակական-քաղաքական միասնության դեմ, կողմերին առաջարկում էին մի կողմ դնել կրոնական-դավանաբանական վեճերը և միավորվել մեկ ընդհանուր համայնքի մեջ: Այսպիսի գործիչներից էր Կ.Պոլսի Մխիթարյանների ամենակարկառուն դեմքերից մեկը՝ Ղուկաս վարդապետ Ինճիճյանը:

Միության գաղափարը պոլսահայերին և ընդհանրապես Թուրքիայի հայությանը հուզող ամենկնճռոտ հարցերից էր նաև հետևյալ պատճառով: Օսմանյան կայսրության մեջ գործող օրենքների համաձայն երկրում բնակվող բոլոր քրիստոնյաների մկրտությունը, ամուսնությունն ու թաղումը և նման գործողություններն ու դրանցից բխող տնտեսական խնդիրների լուծումը հանձնված էր պատրիարքություններին: Քանի որ օսմանյան կառավարությունը ճանաչում էր միայն երկու պատրիարքություն՝ հունական և հայկական, հետևաբար կայսրության տարածքում բնակվող բոլոր երկաբնակ դավանություն ունեցող ժողովուրդները գտնվում էին հունական պատրիարքարանի իրավասության ներքո, իսկ միաբնակ դավանություն ունեցող ժողովուրդները հպատակվում էին Կ. Պոլսի Հայոց պատրիարքությանը¹⁵⁵: Այս իրողությունը Թուրքիայում բնակվող հայ կաթոլիկների համար ստեղծել էր երկակի վիճակ. դավանանքի հարցում նրաք պետք է ենթարկվեին Կ. Պոլսի լատին եպիսկոպոսին, բայց նրա իրավասությունները ուժ ունեին միայն Հռոմի մոտ, իսկ պետական տեսակետից գոյության իրավունք չունեին, քանի որ կաթոլիկ եպիսկոպոսներն ու նրանց վիճակները կառավարության կողմից չէին ճանաչվում: Նույն թուրքական օրենքների համաձայն հայ կաթոլիկները դիտվում էին որպես Հայոց պատրիարքարանի հպատակներ և հայ պատրիարքին ենթակա անհատներ: Հայտնի է, որ հայ կաթոլիկները չունեին ո՛չ

¹⁵⁴ **Ա. Բ. Գաբրիելյան**, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, Կ. Բ, Երևան, 1960, էջ 74:

¹⁵⁵ **Ա. Ա. Ութուցյան**, Պոլսահայ համայնքների խնդիրը և Միքայել Չամչյանը, տե՛ս Բանբեր Երևանի Համալսարանի, 1978, № 3, էջ 201:

պաշտոնական եկեղեցիներ և ո՛չ էլ հատուկ պատրիարքություն, ուստի ազգային, կենցաղային, վիճակագրական ու առօրեական կրոնական բոլոր պետքերը նրանք ստիպված էին հոգավ միայն հայ առաքելական եկեղեցու միջոցով: Քանի որ հայոց պատրիարքին հանձնված էր նաև հայ ազգաբնակչության հաշվառումը, հարկերի ու տուրքերի գանձումը, հետևաբար ամեն մի հայ, որը խուսափում էր հայ ազգային եկեղեցու հետ հաղորդակցությունից, դուրս էր ընկնում հաշվառումից ու հարկատվությունից՝ ի վնաս պետության և հայ համայնքին: Այս առումով էլ հայ կաթոլիկները զգուշանում էին իրենց հուզող հարցերը լուծել Կ.Պոլսի լատին եպիսկոպոսի միջոցով, քանի որ դա կառավարության մոտ տեղիք կտար ոչ միայն կասկածների, այլև կրնային օտար հպատակության բնույթ: Նման պայմաններում հասկանալի է, որ Արևելքի քրիստոնյաների շրջանում կաթոլիկություն տարածող լատին քարոզիչները ջանք չէին խնայում կաթոլիկ հայերին հեռացնելու Հայոց պատրիարքարանի իրավասության ոլորտներից և միջոցների առջև կանգ չէին առնում՝ նրանց ավելի ամուր կապելու Հռոմի հետ: Կաթոլիկ քարոզիչները ապավինում էին ոչ միայն Հռոմի կղերապետության հեղինակությանն ու միջնորդությանը, այլև Օսմանյան Թուրքիայի հետ առևտրական, քաղաքական սերտ կապեր ունեցող արևմտյան տերությունների աջակցությանը: Դա պատահական չէր, քանի որ նրանք թե՛ պապական եկեղեցու և թե՛ եվրոպական տերությունների քաղաքական, առևտրական ու տնտեսական գործակալներն էին Արևելքում: Եվրոպական երկրները, հատկապես Ֆրանսիան, փորձում էր իր գերիշխանությունը հաստատել Թուրքիայում և իր այդ քաղաքականության ճանապարհին նպատակ ունեւր կաթոլիկացնել Արևելքի ժողովուրդներին, այդ թվում հայերին՝ հետագայի համար ունենալով տնտեսական և քաղաքական հենակետեր: Հետևաբար Ֆրանսիան և մյուս կաթոլիկ երկրները շահագրգռված էին, որ ստվարանար իրենց հովանավորյալների շրջանակը, և, ինչպես նշում է Հ. Միրունին, «քանի կաճեր կաթոլիկ դարձողներուն թիվը օսմանյան պետության սահմաններուն մեջ, այնքան Ֆրանսիա հող կունենար իր ոտքին տակ, ու կբազմանային Թուրքիո գործերով հետաքրքրվելու առիթները»¹⁵⁶:

Լատին քարոզիչներն իրենց նպատակին հասնելու համար արգելում էին հայ կաթոլիկներին այցելել ազգային եկեղեցիներ: Լուսավորչական եկեղեցու միջոցով մկրտության, ամուսնության ու թաղման ծեսերը նրանք համարում էին անվավեր և հռչակում ապօրինի:

Հռոմի հայատյաց գործողությունների դեմ ծավալված պայքարում հայ հասարակական-քաղաքական, մշակութային ու կրոնական գործիչներին օգնության ձեռք մեկնեցին Մխիթարյան միաբանության որոշ անդամներ: Միաբանության հիմնադիր Մխիթար Աբբան դեմ էր հայերի շրջանում կաթոլիկ միսիոներների ծավալած հավատափոխական գործունեությանը և արտահայտվում էր իր ժողովրդի ազգային, մշակութային, կրոնական ու կենցաղային ավանդույթները պահպանելու գործին: Մխիթարյանների ամբողջ գործունեությունը սկզբից մինչև XIX դարի առաջին երկու տասնամյակները ընթանում էր «ազգով հայ, կրոնով՝ կաթոլիկ» սկզբունքի ներքո, Մխիթար Մեքաստացին էր ավանդել իր աշակերտներին, որ կարելի է լինել կաթոլիկ, բայց մնալ հայ, լինել հայրենասեր, ազգային միասնության ջատագով, անկախ դավանանքից՝ հավատարիմ մնալ հայրենի հողին ու ջրին, նրա լեզվին ու ավանդույթներին: Միաբանության որոշ անդամ-

¹⁵⁶ Հ. Միրունի, Պոլիս և իր դերը, հ. Ա, Բեյրութ, 1965, էջ 412:

ներ իրենց կյանքի ընթացքում հետևեցին իրենց մեծ ուսուցչի այս պատգամին, նրանցից էր Ղուկաս Բնձիճյանը, որի գործունեությունը, «Ազգասեր» աշխատությունն ու նրա հետապնդած նպատակը ասվածի լավագույն ապացույցն են:

Ինչպես արդեն նշեցինք, «Ազգասեր»-ը լույս տեսավ 1815 թվականին: Սա մի գործ էր, որ մեծ հաջողության և գնահատանքի պիտի արժանանար: Այն քննադատվեց միայն աշխարհաբարով գրված լինելու պատճառով: Այդ կապակցությամբ Մահտեսի Կարապետը գրում է. «Ազգասեր անուանեալ գիրքն շատ հաճելի եղև հասարակաց, այլ տխրեցան տեսանելով աշխարհաբար լինելն, որ մեզ ծանր և անախորժ թուի. ուստի իսկ և իսկ թարգմանեցին ընտիր և պարզ ոճի ի հայկական բարբառ»¹⁵⁷: Գրաբարով ներկայացված էր միայն առաջաբանը, ուր հեղինակը ներկայացնում է ազգի պարտականությունները, ապա, մերկացնելով լատինամուլներին, փորձում է գտնել և բացատրել նրանց հակահայկական գործողությունների հիմնական դրդապատճառը: Հեղինակը գալիս է այն եզրակացության, որ դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ «նուազութիւն սիրոյ առ հայրենիսն և առ ազգ իւր, յորմէ յառաջագալեալ ծավալին ամենայն ախտիցն պղտորութիւնք»¹⁵⁸: Ղուկաս Բնձիճյանը Մխիթարյան մյուս հայրենասեր գործիչների նման հանդես էր գալիս այն վտանգավոր գաղափարի դեմ, որի համաձայն կաթոլիկությանը հետևող հայերը նոր ազգ են, որը ընդհանուր ոչինչ չունի «հերետիկոս» լուսավորչական հայերի հետ: Իր համալսոհների հետ կաթոլիկությունից չիրաժարվելով հանդերձ նա կոչ էր անում բոլոր հայերին ներքին հաշտեցման և ազգային համախմբման: Ղ. Բնձիճյանի երկի հիմնական նպատակն էր ազգասիրություն սերմանել յուրաքանչյուր հայի մեջ: Առաջաբանից հետո՝ գրքի հիմնական մասում, ներկայացվում է անհատի պարտականությունները ընկերության և համայնքի մեջ, ազգասիրության անհրաժեշտությունը, անմիաբանության հետևանքները, հայ ազգի թերությունները: Այնուհետև հեղինակը հայրենասիրության օրինակներ է բերում հույների և հռոմեացիների պատմություններից, ներկայացնում է Պետրոս Մեծի վարքն ու գործունեությունը, ու գիրքն ավարտում Վաղարշակ թագավորի և Ներսես Մեծի՝ իր համար երկու գերագույն հայրենասեր այրերի հայրենասիրության օրինակները ցույց տալով:

Ղ. Բնձիճյանը գրում է, որ ցանկացած մարդ, երբ ծնվում է, ծնվում է ընկերության մեջ և որպես բնական ու աստվածային օրենք պարտավորվում է սիրել իր ընկերներին: Բայց սերը կարգ ունի, մարդը նախ պետք է սիրի իր ծնողին, իր մոտիկին, հետո հեռուներին: Սրանից հետևություն, որ ամենից առաջ մարդ պետք է իր ազգը, իր հայրենիքը սիրի, քանի որ իր մեծ ծնողն իր ազգն է: Բնձիճյանը հիշեցնում է յուրաքանչյուր հայի նրա սրբազան պարտքը՝ «իր ազգը կամ իր հայրենիքը ամենեն առաջ և ամենեն ավելի սիրել... Ազգը ամենեն մենն ընկերություն է, ամենեն բնական ընկերություն է. անոր համար ով որ ան ազգեն է՝ պարտական է իր ազգը ամենեն ուրիշ ընկերությունեն առաջ սիրել»¹⁵⁹: Պետք է նկատել, որ Ղ. Բնձիճյանի զարգացրած այս տեսակետը իր սուր ծայրով ուղղված էր լատինամուլների առաջարկած «հայ մը, որ հայոց մեծագույն մասի կրոնը չունի, անոր ազգությունն ալ չունի» սկզբունքի դեմ: Բնձիճյանը համակարծիք է Ցիցերոնի հետ, ով նշում էր, որ չկա ավելի ճշմարիտ խոսք, քան Պլատոնի խոսքերը. «Մենք չենք ծնած միմակ մեզի համար, հապա ծնած ենք նաև մեր հայրենեացը և

¹⁵⁷ **Հ. Ն. Անդրիկյան**, Ղուկաս Բնձիճյան, տե'ս «Բազմավեպ», 1912, № 3, էջ 106:

¹⁵⁸ **Ղ. Բնձիճյան**, Ազգասեր, Վենետիկ, 1815, էջ 4:

¹⁵⁹ **Ղ. Բնձիճյան**, նշվ. աշխ., էջ 11-19:

մեր բարեկամացը համար»։ Ուստի մարդ պիտի գործի բնության օրենքները հաշվի առնելով։ Ինձիձյանը կարևորում է սրտացավությունը ու ուրիշի համար լավ գործ անելը՝ որպես մարդու ամենալավ հատկանիշներ։ Պատահական չէ Ինձիձյանը հիշատակում Աստծո պատվիրանը. «Միբեցեք միմյանց, ինչպես ես Ձեզ սիրեցի»¹⁶⁰։ Նա շատ է կարևորում սերը, քանի որ սիրո միջոցով կարելի է պահել ընկերությունը, սերն է ընկած շատ առաքինությունների հիմքում, եթե մարդիկ կարողանային պահել այդ սերը... Լինի հոգևոր թե քաղաքական ընկերություն, միննույն է, դրա գոյության համար սեր է անհրաժեշտ, անգամ ամենափոքր ընկերության համար սեր է անհրաժեշտ, որ այն կայանա, որ կարողանա գոյատևել, իսկ ազգը մի մեծ ընկերություն է։ Նա հիշեցնում է, թե ինչքան դրական բաներ են եղել միմյանց սիրող ազգերի մեջ, և ինչքան բացասական՝ չսիրողների մեջ։

Ինձիձյանը շեշտում է, որ «ազգասիրությունը» միշտ պետք է ղեկավար հրամայական դառնա հայերի համար. «Պետք է, որ ազգասիրությունը ամեն բանեն առաջ պիտի բռնենք»։ Ազգասիրության մեջ են բոլոր առաքինությունները, նկատում է Ինձիձյանը, ապա շարունակում է, - թե շատ լավ բան է խաղաղությունը, թե ճշմարիտ ազգասիրություն կա, այդ ազգը, այդ ժողովուրդը խաղաղ կմնա, շատ լավ բան է արդարությունը, այնտեղ ուր ազգասիրություն կա, արդարություն էլ կա, շատ լավ բան է սրտացավությունը, ազգասերը ամենքի վրա սրտացավ կլինի, շատ պատվական բան է աղքատասիրությունը, ազգասիրության մեջ է այն, շատ պատվական բան է մեծագործությունը, ազգասեր լինելով մեծ բան կանես ազգիդ համար, ահա սրանք են այն հատկանիշները, որ ընկերություն են շենացնում, և հայրենասեր ազգն է, որ առաջ է գնում։ Շարունակելով՝ Ինձիձյանը նշում է, թե ինչ լավ բան է ազգասիրությունը, որի մեջ է եղբայրասիրությունը, եղբայրասիրության մեջ է աստվածասիրությունը, աստվածասիրության մեջ է հավիտենական կյանքն ու արքայությունը, որն էլ մարդկության վերջին վախճանն է։ Քրիստոսն ասում է, թե կուգես արքայություն մտնել, Աստծուն սիրիր և ընկերոջդ սիրիր։

«Ազգասերի» մեջ Ինձիձյանը Ավետարանից մի առակ է ներկայացնում, երբ անցորդի վրա ավազակներ են հարձակվում, թալանում, կողոպատում և խոցելով կիսամահ թողնում հեռանում։ Մի քահանա և մի դևտացի, տեսնելով վիրավոր անցորդին, ոչնչով չօգնելով շարունակում են իրենց ճամփան, իսկ մի սամարացի մարդ, որ օտար էր, տեսնելով վիրավորին, իր ճամփան ընդհատեց, նրա վերքերը կապեց, իր ձիով տարավ մի տեղ և ծախսերն էլ ինքը հոգաց։ Քրիստոսն այս առակով շատ է հանդիմանում նրանց, ովքեր ազգասիրություն չունեն, դատապարտում է քահանային և դևտացուն, որ չողորմեցին իրենց ազգակցին, և շատ է գովաբանում սամարացուն, որ օտար էր, բայց ողորմած գտնվեց։

Ղ. Ինձիձյանի աշխատության մեջ նշանակալից տողեր են նվիրված ազգասերի պարտականությունների բնութագրմանը։ Նա շատ խիստ է դատապարտում հատկապես եսասեր մարդկանց. «...Պարապ տեղը ազգին անդամն ես եղեր, եկար պարապ, կմեռնիս պարապ, ետնեղ մեկը չիկա, որ՝ քենե աղեկություն մը տեսած ըլլալով քեզ հիշե, ազգդ ալ բնավ մեկ աղեկություն մը տեսած չըլլալով չունի մեկ առիթ քեզ հիշելու»։

Բնորոշ կարելի է համարել Ինձիձյանի դիրքը պետական զանազան ձևերի նկատմամբ։ Ծանրանալով հայրենասիրության և փառասիրության վրա, Ինձիձյանը նկատում է. «...Աս երկու կիրքս, թե միապետությանց մեջը կան և թե հասա-

¹⁶⁰ Նույն տեղում, էջ 16։

րակապետությանց մեջ...»: Շարունակելով՝ Ինճիճյանը վստահաբար նշում է, որ փառասիրությունը պատճառ կարող է լինել անկարգությունների, իսկ ազգասիրությունը՝ բարեկարգությունների ու շատ առաքինությունների: Ահա ինչ է գրում նա աթենացիների, լակեդեմոնացիների, հռոմեացիների մասին. «Քանի որ ազգասիրությունը շատ էր մեջերին՝ օրե օր առաջ եկան բարձրացան...»:

Ջանալով գրավել ընթերցողների ուշադրությունը, Ինճիճյանը կրոնի ու եկեղեցու պատգամներն աշխատում է հիմնավորել նոր ձևով: Իդեալականացրած գույներով է նա նկարագրում առաջին քրիստոնյաների հասարակական կյանքն ու սովորությունները: «...Աղեկություններ ըրին,- նկատում է նա և ապա առանց վարանելու ավելացնում է,- ունևորները իրենց ապրանքը չէին զատեր իրարմե...ուտելին ավ մեկտեղ ուտել...»: Ակնհայտ կերպով իդեալականացնելով նախնական քրիստոնեական համայնքի ունևորների եղբայրասիրությունը՝ նա դատապարտում է իր ժամանակակիցներին: Այդ նույն նպատակով նա կանգ է առնում հեռու անցյալի եղբայրական խնջույքների դաստիարակչական մեծ նշանակության վրա: Ինճիճյանը նշում է, որ երանավետ անցյալում եղել է հավասարություն. «հավասար կուտեին աշխատավորն ավ, հարուստն ավ մեկ տեղ...»: Սուլքատին էլ է նա հիշատակում, քանզի վերջինս մարդկանց կոչ է արել սիրել միմյանց. «...Ընկերության պես ուրախ աղել բան չկա. մեկ աղել եղբայրասեր ընկերմը ավելի կարժե, քան բոլոր աշխարհիս ձևահիրները...ուր է ազգասիրություն, հոն է ամեն առաքինություն...»:

Իր մտորումների պարզաբանության համար հեղինակը օրինակներ է բերում հեռավոր երկրներից: Նա անգ է առնում դալյան (իտալական) ազգի կամ «ըշքլավոն» (սլավոն) ազգի և «խրվատների» (խորվաթների) վրա: Խրվատները, գրում է նա, հուժկու մարդիկ են, մեծ մասամբ լեռնցիներ և քաջ: Բայց նրանք միացած չեն և այդ պատճառով թույլ են: Իտալացիները նիհար մարդիկ են, բայց ուժեղ են իրենց ազգասիրությամբ: Այն ինչ իրենց ազգի օգտին է դա կանեն: Իտալացի ազգը իր ազգի բարիքը իր անձնական բարիքից վեր է դասում, իսկ խորվաթները անմիաբան են, վրեժխնդրության ոգի կա նրանց մեջ, և ողջ ազգովի մեկը մյուսի հետ թշնամի են, ռիսակալությունն ու վրեժխնդրությունն այնքան մեծ է իրենց մոտ, որ ո՛չ դատավորների ահը և ո՛չ էլ քարոզիչների խոսքը իրենց չէր համախմբում: Նա ցույց է տալիս, թե ուր հասցրեց ազգատյացությունը խորվաթ ազգին, և ազգասիրությունը՝ դալյան ազգին:

Զգտելով ավելի պատկերավոր կերպով հաստատել իտալացիների միաբանության և ազգասիրության մեծագույն նշանակությունը՝ Ինճիճյանը կանգ է առնում իրական մի դեպքի վրա, դյուրամատչելի լեզվով նկարագրում է իտալական Լուկկա քաղաքի խիզախ քաղաքացիների հայրենասիրական կորովն ու քաջությունը:

Շարունակելով խոսել ազգատյացության վնասակար հետևանքների մասին՝ Ինճիճյանը ցավով է նշում, որ Հայաստանում էլ ազգատյացությունը իր գործն արեց, ի՛նչ մեծավոր մարդկանց գլուխ կերավ, քանի գորապետների սպանեց, քանի թագավորների կործանեց, ինչ խելացիների խավարեցրեց, քանի ներսեսներ, քանի վարդաններ տուժեցին, ինչ բարիքներ ու լավ երևույթներ խափանվեցին... թույլ տանք, ուրեմն, որ ողբա Խորենացին: Ինճիճյանը նշում է, որ դարեր անցան, հայերը տեղից տեղ փոխվեցին, բայց այդ կիրքը չփոխվեց, իրար ատելը չմոռացան, ազգն ատելով, եղբայրատյաց էլ եղան: Նա հատկապես արհամար-

հանքով է խոսում նրանց մասին, ովքեր, վարդապետություն անելով, ազգասիրություն են քարոզում, բայց իրականում այդ խրատ տվողը առաջին ազգաստացն է լինում: Շատ օտար ազգեր զարմանում են մեր ազգի վրա, քանի որ մեր ազգը այնքան չի սիրում իր ազգին, որքան որ ուրիշ ազգերի, օտար ազգին լավ ծառայում է և գովքի է արժանանում: Բայց սիրո հարցում պետք է, որ հակառակը լինի, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, սերը առաջին հերթին պետք է սեփական ազգին տալ, որը քո մեծ ծնողն է, հետո մոտիկներին, օտարներին:

Ազգաստացության պատճառների մեջ են նախանձն ու հպարտությունը: Ինձիճյանը համոզված է, «ուր հեռ ու նախանձ, այնտեղ անկարգություն ու չարիք»¹⁶¹: Նա նկատում է, որ «այս ախտը» բոլոր ազգերի մեջ էլ կա, հույների մեջ էլ կա, ֆրանկների մեջ էլ, և փորձում է հասկանալ, թե որն է պատճառը, որ նրանք միշտ ազգասեր են, ազգաստաց չեն: Ինձիճյանը գալիս է այն եզրակացության, որ մեր ազգի նախանձը տղայական նախանձ է, իսկ մյուսներինը՝ հասակավոր մարդու նախանձ: Ավելի լայն բացելով փակագծերը՝ նա ցույց է տալիս, որ մեր ազգը անգամ ամենափոքր բաների մեջ է նախանձում, և, ասածն ավելի պատկերավոր դարձնելու համար, օրինակ է բերում մի փոքրիկ տղայի, ով լալիս է, քանի որ հայրը մեկ ուրիշ երեխայի է սիրում, նա իրեն արհամարհած ու ցածրացած է զգում: Այսպիսին է և մեր ազգի նախանձն ու հպարտությունը, այն աստիճանի հասնող, որ սկսում է վնասել դիմացիներին՝ չհասկանալով, որ իրեն էլ է վնաս հասցնում: Բայց ուրիշ ազգերի նախանձի ու հպարտության մեջ ուրիշ բան ենք գտնում. այն տարիքով մարդու նախանձ է, գիտի մտածել. եթե որևէ բանի մեջ իր ընկերոջն են գովում, կասի փոքր բան է, կամ արժանի է, նրան վնաս հասցնելն ամոթ է, ուրիշ ազգի առաջ ցած չի ընկնի, ուրիշ ազգի ձեռքով վնաս չի պատճառի: Ինձիճյանը նկատում է նաև, որ շատ հայեր Հայաստանից դուրս են, չորս կողմ են ցրված, բայց ուր էլ չորս հայ լինեն, չեն փոխվի, այս բնությունն ունեն:

Միևնույն ժամանակ հեղինակը նշում է, որ շատ կցանկանար, որ մեր ազգը մի քիչ զվարթություն ունենար, իսկ «մաղձային» խառնվածքն էլ փոխվեր: Շարունակելով ներկայացնել ազգի թերությունները՝ Ինձիճյանը նշում է, որ մեր ազգի ամենավատ հատկանիշներից մեկն էլ բամբասանքն է, բամբասում են բոլորը ամենքից ու ամեն ինչից՝ իհարկե մի փոքր բանը մեծ բանի վերածելով: Բամբասանքը վերածվել էր մի հասարակ երևույթի, և չկա մի տուն, չկա մի հոգի, որ բամբասանքից տուժած չլինի, և զարմանալին այն է, ինչպես գրում է Ինձիճյանը, որ խոսել չիմացողի բերանը բամբասելուն պես բացվում է...այս չար լեզուները պատճառ կդառնան, որ մեր ազգը մասնատվի, բաժանվի, իրար ատի: Չարախոսությունն ու լեզվագարությունը մեր ազգին մեկ այլ թերություն են տալիս՝ բերանբացություն, հազարավոր մարդկանց մեջ չես կարող գտնել մի փակ բերան, համոզված է Ինձիճյանը: Այն է վատ, որ իրենց բերանբացության համար չեն մտածում. մեր միտքը չար չի, ասում են, տեսած-լսածներս ենք պատմում, մեր գրուցելը պատմել է, ու «միամտորեն» շարունակում են, թե պատմելուց ի՞նչ է լինում: Իրականում բերանբացությունը քանի-քանի մեծ մեղքերի պատճառ է դառնում: Ինձիճյանը համոզված է, որքան կո՛րծ կլինի մոտիկների, ազգականների մեջ, մեծ մասը բերանբացությունից է գալիս. «Լեզու փոքր ինչ անդամ է՝ և մեծամեծս բարբառի...լեզու հուր՝ զարդ անիրաւութեան, լեզու հաստատեալ՝ յանդամս

¹⁶¹ Ղ. Ինձիճյան, նշվ. աշխ., էջ 40:

մեր՝ որ զամենայն մարմինն ապականէ...Ամենայն բնութիւն գազանաց և թռչնոց և սողնոց՝ և որ ի ծովու են, հնազանդեալ է և հնազանդի մարդկեղեն բնութեան, բայց զլեզու մարդկան ոչ որ կարէ հնազանդել, զչարն և զանկարգ, և զլի թունօք մահաբերին»¹⁶²: Այսպիսի առակներով, աֆորիզմներով, բարոյախոսական-իմաստասիրական կողմերով լեցուն է Ինճիճյանի աշխատությունը: Ձգտելով ավելի պատկերավոր կերպով ցույց տալ իր պնդումները, Ինճիճյանը գրում է, որ թեպետ Ստամբուլը մեծ քաղաք է, և կրթվա թե այս մեծ քաղաքում մի դեպքի մասին իմանալու համար առնվազն երեք օր է անհրաժեշտ, սակայն գիշերվա կատարվածը առավոտյան ողջ քաղաքն է իմանում, մանավանդ, որ վատ եղելության մասին է խոսքը:

Բերանբացությունից էլ բխում է մեր ազգի մեկ այլ թերություն՝ հետաքրքրություն, համոզված է Ինճիճյանը, հետաքրքրասիրություն, որ բերանբացների համար նյութ է դառնում իրենց բերանբացության: Ձևավորվում է մի կծիկ, որի ծայրին հետաքրքրասիրությունն է, հետաքրքրությունից գալիս է բերանբացությունը, բերանբացությունից՝ բամբասանքը, բամբասանքից էլ գալիս է սառնություն կամ ատելություն մեկը մյուսի հանդեպ, ապա այդ սառնությունն ու ատելությունը փոխանցվում է ազգին, մասնավորից ընդհանուրին:

Ազգին բնորոշ թերություններից նշում է նաև երեսպաշտությունը: Շարունակելով հեղինակը կարծես փորձում է մեղմել իրավիճակը, ցանկանում է հասկանալ, թե այս թերությունները որտեղից են մտել մեր ազգի մեջ, մտածում է՝ գուցե՝ շատ գերության տակ մնալուց է: Խոր կսկիծով է իր ազգի թերությունները ներկայացնում, դիմում է Արարատյան, Բյուրակնի լեռներին՝ կարծես ցանկանալով նրանցից էլ հասկանալ, թե որո՞նք են մեր ազգի այս վիճակի պատճառները. «Ա՛խ լե՛րինք Արարատեան, լե՛րինք Բիւրակնեան, ձեր գլխէն մեկ անուշ հով մը կը փչէ՝ որ դրախտին հովերն են. ձեր վրայէն անանկ անուշ ջուրէր կը բխան՝ որ դրախտին ջուրերն են, ձեր բոլորտիքը նստան բնակեցան ան առջի մարդիկները՝ որ ուրիշ բան չիյտէին բայց եթէ անուշ կենակցութիւն, սէր, միաբանութիւն, մէկ-մէկու հասնիլ, մէկմէկու բարիք ընել. ան մարդիկները որ չիյտէին նախանձ, տարաձայնութիւն, ատելութիւն, մէկմէկու սիրտ կոտորել, հապա բոլորովին հանդարտութեան բոլորովին հանգստութեան խաղաղութեան մէջ կրվայէլէին: Հիմա ի՞նչ ժանտ հով փչեց ձեր վրայէն որ աս ամմէն աղէկութիւնը բոլորովին վերցուց տարաւ մեր մէջէն՝ որ անոնց հարազատ որդիքն ենք, մեր մէջէն՝ որ անոնց մօտիկ արին ենք: Ո՛ր ատեն, ո՛ր օտար մարդիկներ մեր մէջը խառնվելով աս ցած անկարգութիւնները մտուցին, մեր առջիններուն բնութեանը բոլորովին ներհակ բաներ խօթցին ու արմատացուցին, որոք չենք կրնար վերցընել ոչ քարոզաց բանէրով, և ոչ սուրբ գրոց խօսքերով...»¹⁶³:

Շարունակելով թվել մեր ազգին բնորոշ թերությունները խոսում է նաև անհնազանդության, մեծ ու փոքր չճանաչելու մասին, նշում է, որ ելնելով պատմությունից, կարող ենք ասել, որ այս անկարգությունը հատկապես բնորոշ է մեծերին, քանզի մեր ազգի մեջ «մեծ» եղողը, իշխանը ուզում է իր հպատակներին դատավորի պես իշխել, գերիի պես պահել, երբ պիտի հակառակը լիներ, երբ մեծը հայրական հոգատարությամբ պիտի վերաբերվեր փոքրին, այլ ոչ թե իշխեր ու հրամայեր, սրան էլ հետևում է այն, որ փոքրը հանդգնում է, նրան մեծի տեղ չի դնում, ու սկսվում է ազգի ավիրվելը: Պատահական չի ողբում Խորենացին...

¹⁶² Դ. Ինճիճյան, նշվ. աշխ., էջ 55-56:

¹⁶³ Դ. Ինճիճյան, նշվ. աշխ., էջ 63-64:

Ինճիճյանը հիասթափություն է ապրում, երբ հանգում է այն տեսակետին, որ մեր ազգը, չունենալով ազգասիրություն կամ հայրենասիրություն, զուրկ է այս առաքինություններից՝ խաղաղություն, արդարություն, հանգստություն, բարություն, հեզություն, խոնարհություն, եղբայրասիրություն, բարեկամություն, մեծագործություն և այլն: Միևնույն ժամանակ խորհուրդ է տալիս, որ յուրաքանչյուրն իր վրա վերցնի այս խրատները, փորձի իր մեջ շտկել ինչ որ բան, վերացնի իր փոքրոգիությունը, վեհանձնություն ունենա, ուրախանա ընկերոջ լավով, լեզվի վրա կապանք դնի ու քիչ բամբասի, հետո մեջբերում է կատարում Հակոբոս Առաքյալից. «Եթե ոք բանիւ (խօսքով) ոչ յանցանիցէ, նա է մարդ կատարեալ, որ կարօն է սանձահարել (բռնել, զսպել) զամ մարմին իւր»¹⁶⁴:

Շարունակելով բնութագրել ազգասերի պարտականությունները, Ինճիճյանը նշում է, որ պետք է լավություն շատ անես, օգնես ընկերոջդ ու ազգիդ, սեր տաս ու սեր ստանաս, ու վերջում կարծես օգնության խնդրանքով դիմում է ազգասերներին. «Ո՛վ Ազգասերներ ի՛նչ կեցերէք. ելէ՛ք, արթնցի՛ք, ձեր պատկերը ցըցուցէ՛ք ասանկներուն որ Ազգասեր ըլլան. Ձեր ըրածները ազգին վրա պատմեցէ՛ք ամմէնուն որ ՝ամչնան օրինակ առնեն: Ելի՛ք մեր նախնիներ, տեսէ՛ք քանի՛ որ դիքնիդ պառկերեն ազգատեցութեան սրով: Մէկ հոգիով աշխարհ տակնուվրայ եղերէ. Մէկ վասակով Հայաստան արեան մէջ թաթխըվերէ: Նայեցէ՛ք վերէն երկնքէն մեծն Ներսէս և սուրբ Սահակ, դուք վերցուցէ՛ք աս բանս, վասն զի մարդ մը չիկրնար շտկել: Մեր ազգին մէջ եղբայրասիրութիւն ու ազգասիրութիւն խօթել՝ միայն հրաշքով կըրնայ ըլլալ»¹⁶⁵:

Ինչպես արդեն նշել ենք, Ինճիճյանը ազգասիրության օրինակներ է բերում հռոմեացիների պատմությունից, հայրենասիրության մասին նետված ակնարկները, խիզախ գործիչների գովքը գրավում էր ընթերցողների ուշադրությունը: Սկսելով գրքի այս հատվածը, որ նվիրված է հռոմեացիներին՝ Ինճիճյանը նշում է, որ այս ազգի պատմությունը բոլորին ազգասիրություն է հիշեցնում, և հռոմեացիք կարող են ասել, որ այս աշխարհում ազգի կամ հայրենիքի սիրուց առավել բան չունեն: Ովրատիոս բանաստեղծի խոսքերը՝ «Քաղցր և գեղեցիկ է վասն հայրենեաց մեռանիլ» գիտես թե ամեն հռոմեացու սրտի մեջ փոքր հասակից մտած է. ազգի համար հռոմեացիները պատրաստ են ամեն նոր բանի ձեռք գցել, ամեն դժվարություն տանել, իրենց հանգստությունը, իրենց կյանքը, իրենց փառքը, իրենց զավակներին և ամենքին կարող են իրենց ազգի բարօրության համար զոհել: Ինճիճյանը հիշատակում է նաև Ցիցերոնին. «Պետք է մեզի հայրենեաց համար մեռնիլ, հայրենեաց համար մեզ բոլորովին տալ, հայրենեաց համար մեր ամմեն բանը դնել, ու իբր թե զոհել»: Նշանակալից տողեր է հատկացնում հռոմեացի կոնսուլների, դատավորների զինվորների ու խիզախ գործիչների հայրենասիրության ու ազգասիրության բնութագրմանը ու հռոմեացիներին նվիրված հատվածն ավարտում «Ո՛ր մեկը պատմեմ, ո՛ր մեկը օրինակ բերեմ, որովհետև աս հռոմայեցուց ազգին պատմութիւնը՝ բոլոր կրնայ ըսվիլ որ հայրենասիրութեան և ազգասիրութեան պատմութիւն մընէ»¹⁶⁶ խոսքերով:

Տարբեր իրավիճակներում ազգասիրության օրինակներ է բերում նաև հույն ժողովրդի պատմությունից, գովերգում է Միլթիադեսի, Թեմիստոկլեսի, Մո-

¹⁶⁴ Ղ. Ինճիճյան, նշվ. աշխ., էջ 73:

¹⁶⁵ Նույն տեղում, էջ 76-77:

¹⁶⁶ Նույն տեղում, էջ 98:

լոնի, Էբամինոնտասի, Արիսդիտեսի, Կոդրոսի, Փոկիոնի և այլոց ազգասիրութ-
յունը՝ ներկայացնելով առանձին-առանձին յուրաքանչյուրի սխարանքը, նշելով, որ
շատ դեպքերում իրենց արածի դիմաց ազգը, ապերախտ գտնվելով, իրենց դա-
տապարտել է, բայց վրեժխնդրության փոխարեն նորից մտածել են իրենց ազգի
լավի մասին, քանի որ նրանք չունեին ավելի թանկ բան քան իրենց հայրենիքը շե-
նացնելն էր, ազգի համար աշխատելն ու ազգի բարին տեսնելը, որն իրենց փառք
ու պարծանք էր բերում: Ինձիճյանը խորհում է, որ եթե Գագիկ Արծրունին կար-
դար այս տողերը, մեկից օրինակ վերցնել, թշնամիներին չէր կանչի, իր երկիրը
չէր ավիրի՝ ըստ Հովհաննես կաթողիկոսի, միայն նրա համար, որ վրեժ առնի
Մմբատ թագավորից՝ Նախճավան քաղաքն իրեն չտալու համար: Գագիկն էլ էր
կտրիճ, բայց որքա՞ն հեռու էր հույնի սիրտը հայի սրտից: Ցանկալի կլինեք, որ
այս հերոսների ազգասիրության օրինակները կարդային նաև Մերութանը, Վա-
սակը...¹⁶⁷:

Ղ. Ինձիճյանը մեծ հիացմունքով է խոսում Պետրոս Մեծի գործունեության
մասին, նշում է, որ նրա հիմնական նպատակն էր իր ազգը, իր հայրենիքը շենաց-
նելը, ազգի թերությունները վերացնելը կամ շտկելը: Նա համոզված է, որ Պետ-
րոս Մեծի գործունեությունը ազգասիրության լավագույն օրինակ է նոր ժամա-
նակներում, նրա ողջ վարքը եղավ գործողություն ազգասիրության: Մանրամասն
ներկայացնում է, թե ինչպես Պետրոս Մեծը, թողած իր թագավորական հանգըս-
տությունը, ճամփորդության է ընկնում դեպի օտար երկրներ՝ նպատակ ունենա-
լով ամեն ազգի լավը վերցնել և սեփական ազգի մեջ մտցնել: Ներկայացնում է
Պետրոս Մեծի դրական հատկանիշները, նրա ստացած գիտելիքները, ձգտումը՝
սովորելու ամեն ինչ, ցանկությունը՝ սեփական ժողովրդի միջից հանել բարբա-
րոսություն, ծուլություն, կոպտություն: Նշում է, որ այս մարդու ամենալավ կա-
տարելություններից մեկն էլ այն էր, որ պարապ մնալ չէր կարող, միշտ թշնամի
էր դատարկության, և իր ողջ կյանքը կարելի էր համարել հանապազորդական
ճամփորդություն: Խոսում է նաև Պետրոս Մեծի վարած պատերազմների մասին,
հերթով թվարկում նրա կենցաղօգուտ գործերը, թե ինչպես քաղաք կառուցեց,
ինչպիսի գորք ստեղծեց, ծովային ուժեր ստեղծեց, քանի բերդ ու ամրոց կառու-
ցեց, կարգ ու կանոն հաստատեց, եկեղեցական բարեկարգություններ կատարեց,
զարգացրեց արհեստներն ու արվեստները, խթանեց գիտության զարգացմանը,
դպրոցներ ու տպարաններ բացեց և այլն¹⁶⁸: Ավարտելով աշխատության այն
հատվածը, որ վերաբերվում է Պետրոս Մեծին՝ Ինձիճյանը գրում է. «Տեսար մի՞
հիմա ազգասիրութեան գործքերը. Աս գործքերես կիմացվի որ՝ պետրոսին պես
ոգելիր, աշխատաւոր, չիյոքնօղ, գործաղիր, ու ամմենէն աւելի հայրենասէր մարդ
քիչ ելելէ աշխարհիս վրայ: Աս մարդս ցըցուց ամմենուն որ, ի՞նչ կրնայ ընել մի-
նակ մէկ հոգի, որբոր իր սրտին մէջը ճշմարիտ ազգասիրութիւն ունենայ: Յըցուց
որ՝ քիչ ատենի մէջ շատ բարեկարգութիւն կրնայ ըլլալ չէթէ մինակ մէկ քանի հո-
գիի վրայ, հապա նաև բոլոր ազգի վրայ, երբոր մենծը դատաւորի պես չիշարժի՝
հօր պես շարժի, երբոր ժողովուրդնալ մենծին հնազանդ ըլլայ»¹⁶⁹:

Օտարների ազգասիրության օրինակները բերելուց հետո Ինձիճյանը ազ-
գասիրության օրինակներ է բերում նաև մեր պատմությունից: Աշխատության

¹⁶⁷ Ղ. Ինձիճյան, նշվ. աշխ., էջ 99-113:

¹⁶⁸ Նույն տեղում, 114-161:

¹⁶⁹ Ղ. Ինձիճյան, նշվ. աշխ., էջ 160-161:

այս հատվածում շատ են մեջբերումները Մովսես Խորենացուց: Ինձի՜ճյանը նշում է, որ մենք շատ երևելի թագավորներ ենք ունեցել, բայց իր համար որպես ամենաերևելի թագավոր առանձնացնում է Վաղարշակին, քանի որ ի տարբերություն մյուսների Վաղարշակ թագավորը երևելի է եղել մի քանի գործի մեջ և ցույց է տվել իր ազգասիրությունը: Ինձի՜ճյանն այն կարծիքին է, որ ցանկացած թագավոր երեք գլխավոր բան պիտի անի իր հայրենիքի, իր ժողովրդի համար. բարեկարգություն մտցնի ժողովրդի մեջ, ուժեղ բանակ ունենա, որ կարողանա պաշտպանվել թշնամիներից և դպրություն ու ուսում մտցնի ժողովրդի մեջ: Շարունակելով, գրում է, որ շատ թագավորներ ենք ունեցել Հայկազունիների, Արշակունիների, Բագրատունիների, Ռուբինյանների մեջ, բայց միայն Վաղարշակ թագավորն է այս երեք գլխավոր բաները արել իր ժողովրդի համար՝ տարբերվելով մյուսներից: Խորենացու՝ Վաղարշակին տված անուններից Ինձի՜ճյանը հատկապես առանձնացնում է Հանճարեղն ու Խոհեմը, ով պատերազմներ վարեց ոչ թե իր երկրի սահմաններն ընդարձակելու ու ուրիշների վրա իշխելու համար, այլ թշնամիներին զսպելու համար, ու տարածքներ գրավելուց ավելի կարևոր համարեց իր երկիրը շենացնելը: Ինձի՜ճյանը նշանակալից տողեր է հատկացնում Վաղարշակ թագավորի բարեկարգությունները ներկայացնելուն և գիրքը կարդացողների համար ազգասիրության լավ օրինակ է ցույց տալիս: Պատմում է, թե ինչպես թագավոր դառնալուց հետո Վաղարշակը ցանկացավ իմանալ, թե իրենից առաջ քանի՞ թագավոր է իշխել Հայաստանում, քա՛ջ են եղել նրանք, թե ոչ, հին ազգերից են արդյո՞ք հայերը, ու էլի շատ հարցերի պատասխաններ ցանկացավ ստանալ, բայց մեծ ցավ ապրեց, երբ չգտավ մի պատմություն. նրա համար, ով կրթություն էր ստացել Պարսկաստանում, որն այդ ժամանակ ծաղկում էր ապրում դպրության, այսպիսի բաները թագավորությունից ու հարստությունից ավելին էր համարվում: Վերջապես Վաղարշակը Մարաբաս անունով մի ասորու հանձնարարում է գտնել հայերի պատմությունը, ով երկար պրպտումներից հետո մի ընդհանուր պատմություն գտավ՝ գրված հունարենով, որտեղից առանձնացրեց մեր ազգի պատմությունը: Ինձպես Ինձի՜ճյանն է նշում, տեսնելով պատմությունը՝ Վաղարշակը շատ ուրախացավ և իր պալատի մեջ այն դողդողալով պահեց¹⁷⁰: Մեծ հիացմունքով Ինձի՜ճյանը շարունակում է. «Մեկ ուրիշ աղեկություն մընալ ըրաւ աս բանով Վաղարշակ, վասն զի պատմութիւնը մեր գտնել տալով, շինելու կարդալ տալով, մէկ կարդալու և հին բաներու ուսման սէր մը ձգել տըվալ հայու ազգին մէջ: Անոր համար որչափ գովենք վաղարշակ՝ մինակ աս բանիս համար արժան է գովել»:

Առանց շտապելու Ինձի՜ճյանը թվարկում է Վաղարշակ թագավորի բարեկարգությունները. ինչպես նա բարեկարգություն մտցրեց կողքի ազգերի մեջ, որ իր երկիրը խաղաղ լինի, ինչպես բարեկարգեց բանակը, այն բաժանեց չորս մասերի և նշանակեց չորս կողմերի կառավարիչներ՝ ավելի ապահով լինելու համար, բարեկարգություն մտցրեց արքունիքի մեջ՝ սահմանելով տարբեր պաշտոններ, ամբողջ երկրով մեկ հաստատեց նախարարություններ՝ պահանջելով բարեկարգել իրենց ենթակա տարածքները, հաստատեց դատավորներ քաղաքներում և ավաններում, մեծ շինություններ կատարեց, խթանեց մշակույթի զարգացմանը, զարկ տվեց արհեստների զարգացմանը, ու էլի շատ բարեկարգություններ կատարեց¹⁷¹:

¹⁷⁰ Նույն տեղում, էջ 175:

¹⁷¹ **Ղ. Ինձի՜ճյան**, նշվ. աշխ., էջ 170-211:

Ներկայացնելով հայ ազգասեր թագավորի բարեկարգությունները՝ Ինճիճյանը նշում է, որ ինքը նպատակ ունի հիմնավորել և պաշտպանել հայ հինօրյա հայրենասերների նվիրական, ազգային-մշակութային պատգամները: Այս առումով էլ, մեր կարծիքով, շատ բնորոշ է ու ոչ պատահական այն, որ անհայտ նկարիչը գրքում նկարել է վաղեմի հայկական մշակույթի հովանավոր համարվող Վաղարշակ թագավորին:

«Ազգասեր» աշխատությունը Ինճիճյանը ավարտում է Ներսես Մեծ կաթողիկոսի գործունեությունը փառաբանելով: Նշում է, որ հայ եկեղեցական պատմության մեջ իր աշխատասիրությամբ, իր ազգասիրությամբ, իր արդյունավետ գործելով, իր բարեկարգություններով Լուսավորչից հետո պետք է առանձնացնել Ներսես Մեծին: Շարունակելով գրում է, որ մյուս հայրապետների գործերն էլ իրավամբ կարելի է համարել հսկայական, հիշում է Սահակ Մեծին, Սուրբ Մեսրոպին, սուրբ Ղևոնդին, Ներսես Շնորհալուն, բայց նրանք մեկ-երկու բանի մեջ աչքի ընկան, իսկ Ներսես Մեծի գործունեության արդյունքը ամեն բանի վրա եղավ, ողջ Հայստանի վրա, մեծի, փոքրի, կրոնավորի, աշխարհականի վրա, թագավորից սկսած մինչև աղքատը նրա արդյունքը վայելեցին: Ապա թվարկում է Ներսես Մեծի կատարած գործերը, կարևորում է նրա հրավիրած եկեղեցական ժողովը, դրա ընդունած հոգևոր և աշխարհիկ կյանքին առնչվող կանոնները, որոշումները՝ կառուցել վանքեր, դպրոցներ, հիվանդանոցներ, իջևանատներ, աղքատանոցներ¹⁷²:

Ղ. Ինճիճյանը Ներսես Մեծին անվանում է Ազգասեր, Աշխարհաշեն, կատարյալ հովիվ, քաջ Հայրապետ, Առաքել, Վարդապետ հավատի և վարքի, Մքանչելագործ, Մարգարե, ով «...հեմ մինակ, հեմ ձախորդ ատեն, հեմ առանց մեկ շամաթայի մը՝ իր ազգը շտկեց, մարդ ըրա»: Անշուշտ, Ինճիճյանը փորձում է ցույց տալ, որ անկախ իրավիճակից ու պայմաններից մարդ պիտի լինի և կարող է լինել ազգասեր:

Ահա նշված խնդիրներն են, որ արծարծում է Ղուկաս Ինճիճյանի հրապարակախոսական «Ազգասեր» գիրքը: Մի գիրք, որ լույս տեսավ այն ժամանակ, երբ դրա անհրաժեշտությունը կար, երբ հայ հասարակությունը պառակտված էր ու անմիաբան, երբ կարիք կար խոսելու ազգասիրության մասին, ու ազգասիրության կոչ անելու:

Ղ. Ինճիճյանը փորձում էր հասկանալ, մի՞թե կրոնը և եկեղեցին չէին կարող նորից ամրանալ և նորից դառնալ ավելի հզոր ու ուժեղ: Որպես լուծում նա առաջարկում էր հայրենասիրական ոգին հաշտեցնել իդեալականացրած քրիստոնեության ուղեգծի հետ: Նա այն համոզումն ուներ, թե կկարողանա հաշտեցնել ներհակ հասարակական խավերի ներկայացուցիչներին, ամրացնել քրիստոնեության դիրքերը և գաղափարական սուր բախումների օրերին ստեղծել միաբանություն՝ կաթոլիկ և լուսավորչական համայնքների իդեալական միաբանություն: Բնարկե, նա գտնում էր, որ հեգեմոնը այդ միաբանության ժամանակ պետք է դառնա կաթոլիկ եկեղեցին և կաթոլիկ մտավորականությունը: Սակայն հասկանալի է նաև, որ տարբեր պատճառներով Վենետիկի Մխիթարյանների միաբանական բոլոր ճիգերն այս ուղղությամբ պիտի ապարդյուն անցնեին:

Մեծ է «Ազգասեր» աշխատության արժեքը, նրա հետապնդած նպատակները, նրա զարգացրած տեսակետները, միասնության ու ազգասիրության կոչերը,

¹⁷² Նույն տեղում, էջ 215-226:

որոնք մեր օրերում էլ արդիական են: Պատահական չէ, որ հեղինակի թողած ժառանգության մեջ «Ազգասեր»-ը իր պատվավոր տեղն է զբաղեցնում:

Անշուշտ, Ղուկաս Ինձիճյանը եղել է հայ հասարակական մտքի ինքնատիպ ներկայացուցիչներից մեկը: Նա այն մտածողներից էր, ով իր ողջ գործունեությամբ պայքարել է հայ ժողովրդի ինքնության պահպանման համար: Որպես մտածող մարդ՝ նա իր ժամանակի բոլոր կարևոր հարցերին մոտեցել է՝ նշանաբան ունենալով սեփական ժողովրդի բարօրության և լուսավորության շահը:

Айкуи Петросян – Гукас Инчичян, рукопись «Азгасер». – Выдающийся историк, член армяно- католической конгрегации мхитаристов на острове Св. Лазаря в Венеции. В историческом наследии Гукаса Инчичяна одно из главных мест занимает рукопись «Азгасер», изданная по предложению и просьбе «Общества Аршакунянов». В этой работе про патриотизм автор развивает мысль о том, что интересы нации, идея единства превыше и веры, и всего остального. Основная цель работы Гукаса Инчичяна зародить патриотизм в каждом армянине, независимо от его взглядов и убеждений. В основной части книги представляются обязанности личности в дружбе, необходимость патриотизма, последствия разрозненности, недостатки армян, а после автор приводит примеры патриотизма из греческой и римской историй, представляет жизнь и деятельность Петра Великого и заканчивает книгу примерами патриотизма двух великих для него патриотов – царя Вагаршака и Нерсеса Великого. Несомненно, значение «Азгасера» велико, преследуемые им цели его взгляды, призывы единства и патриотизма, которые актуальны и в наши дни. Не случайно, что в наследии оставленном автором «Азгасер» занимает свое почетное место.

Haykuhi Petrosyan – Ghukas Inchichyan's "Azgaser" work. – Ghukas Inchichyan was a prominent historian and a member of the Mechitarist Congregation. His "Azgaser" work plays an important role in the historical inheritance published by the request and offer of "Arshakunyac association". In this work he promotes the viewpoint that the interests of the people and the idea of their unity stand higher than the religion and everything else. The aim of this work was to sow patriotism in each Armenian regardless of their faith. The responsibilities of a person in a friendship, the necessity of patriotism, the consequences of not being unanimous and the flaws of Armenian nation are introduced in the main part of the book. Then the author brings examples of patriotism from the histories of the Greeks and Romans. He presents Petros Mec's behavior and functioning and ends the book by showing the examples of great patriot king Vagharshak and Nerses Mec's patriotism. Of course the "Azgaser" work is of great value. Its pursued goals, promoted ideas, calls for the unity and patriotism are actual today as well. It's not accidental that "Azgaser" takes up honorary place in the legacy left by the author.

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՆՈՒԹՅԱՆ ՉՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ԷԶԵՐԻՑ

ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆ-ՏԵՐՅԱՆ

Խորհրդային իշխանության տարիներին թեև Վահան Տերյանը ներկայացվում էր որպես հայ առաջին բոլշևիկներից մեկը, այդուհանդերձ անհասկանալի իրավիճակ էր ստեղծվել: Եթե չհաշվենք Երևանում Տերյան փողոցի անվանակոչությունը, ինչը պոետի կրտսեր բարեկամ Աշոտ Հովհաննիսյանի նախաձեռնությունն էր՝ նրա լուսավորության ժողովրդական կոմիսար լինելու տարիներին (թեև հետագայում փողոցի մի մասը վերանվանվեց գնդապետ Սիմոն Զաքյանի անվամբ), խորհրդային իշխանությունները ոչ պոետի գերեզմանը տեղափոխեցին Հայաստան, ոչ պոետի արձանը տեղադրեցին Երևանում, չնայած Նիկողայոս Նիկողոսյանի աշխատանքը պատրաստ էր, ոչ թանգարան ստեղծեցին և ավելին՝ Գանձայում գտնվող Տերյանի տուն-թանգարանի գլխին մշտապես կախվում էին քանդվելու, մասնատվելու և փոքրացվելու վտանգները: Եթե սրան հավելենք նաև այն, որ երեսունականների հայտնի «գործ տվողը» դարձել էր միակ տերյանագետը և իրավունք ուներ հալածելու պոետի դատերը, ապա պարզ է դառնում, որ չնայած արտաքին-քարոզչական կողմին՝ խորհրդային իշխանությունը, մեղմ ասած, այնքան էլ չէր «վստահում» Վ. Տերյանին:

Եթե մի կողմ թողնենք պոետի քաղաքական տեսական պատկերացումները, որոնց կանոնադաշտն էր ստորև և ըստ որոնց՝ Վ. Տերյանը իդեալիստ-սոցիալիստ էր՝ ազգայինի հանդեպ ընդգծված հակումով, առավել կարևոր ու առաջնային է Վ. Տերյանի պրակտիկ քաղաքական գործնականությունը, որը, իրավամբ, պետք է դեռևս առանձին ուսումնասիրության նյութ դառնա: Սակայն մինչ այդ փորձենք շատ համառոտ ներկայացնել այն պատճառները, որոնք կարող էին այն աստիճանի «կատաղեցնել» բոլշևիկյան ղեկավարությանը, որ Խորհրդային Միության գոյության ողջ ընթացքում արդեն մահացած Վահան Տերյանը ղեկավարության «լուռ համաձայնությամբ» համարվեր «անբարեհույս տարր»: Նշենք դրանցից մի քանիսը:

ա. Ստեփան Շահումյան – Վահան Տերյան – Իոսիֆ Ստալին

Տերյանագիտության մեջ առ այսօր հստակորեն չի մատնանշվում, թե երբ է Վ. Տերյանը դարձել բոլշևիկ: Թեև բազմաթիվ են այն շահարկումները, թե Վ. Տերյանը ռուսական առաջին հեղափոխության ձախողումից հետո հակվում է դեպի մարքսիզմը, այդուհանդերձ քանի որ ինքը՝ Տերյանն, իր նամակներում նշում է, որպես իդեալիստի՝ իրեն խորթ է մարքսիզմի մատերիալիզմը, յոթանասունականների երկրորդ կեսից սկսեց շրջանառվել այն տարբերակը, թե Տերյանը ՌՄԴԲԿ անդամ է դարձել Հոկտեմբերյան հեղափոխության նախօրեին: Սակայն մյուս տրամաբանական հարցը նույնիսկ չի էլ հնչեցվում, թե ինչպես է «նորելուկ» կուսակցականը անմիջապես նման բարձր դիրք գրավում հեղափոխականների շրջանում՝ դառնալով բոլշևիկյան պառլամենտի անդամ, փաստացի ղեկավարե-

լով Հայկական կոմիսարիատը, ունենալով Պետրոգրադում աշխատասենյակ՝ Հեղափոխության առաջնորդ Լենինի կաբինետի հարևանությամբ: Ակնհայտ է, որ Վ. Տերյանը ունեցել է որևէ հին բոլշևիկի շատ բարձր երաշխավորությունը:

Վ. Տերյանի գրած նամակից պարզ է դառնում, որ պոետը Հոկտեմբերյան հեղափոխության նախօրեին ինչ-որ մեկի հրավերով է վերադառնում Պետրոգրադ. 1917թ. հուլիսի երկրորդ կեսին Մ. Շահխաթունուն գրված նամակում կարդում ենք. «Ինձ անհրաժեշտ է շտապել Պիտեր – այդ են պահանջում գործերը: Ես դեռ բոլորովին չգիտեմ, թե որտեղ կլինեմ ձմեռը և առհասարակ ինչպես կտեղավորվեմ, թեև ինձ հաղորդում են, որ արդեն բնակարան վարձված է – ըստ երևույթի Պիտերում ապրելու հնարավորություն կա»¹⁷³:

Կոնկրետ առաջարկի մասին է վկայում նաև այն փաստը, որ ի տարբերություն Հոկտեմբերյան հեղափոխության՝ Փետրվարյան դեպքերի ժամանակ Վ.Տերյանը ոչինչ չի ձեռնարկում՝ ինչ-որ տեղ մեկնել, ինչ-որ բան նախաձեռնել և այլն:

Պետրոգրադյան առաջին օրերի վերաբերյալ, ցավոք, շատ քիչ տեղեկություններ են առ այսօր հրապարակվել, բայց երկու հիմնականները՝ իր՝ Վ. Տերյանի և Արտաշես Կարինյանի հուշերը, փաստում են, որ այդ ժամանակահատվածի ամենաառանցքային հանդիպումը եղել է Ստեփան Շահումյանի հետ, ում հետ քննարկվել են կոնկրետ գործողությունների ծրագրեր: Ասվածից դժվար չէ ենթադրել, որ Վ. Տերյանը Պետրոգրադ էր մեկնել հենց Ստեփան Շահումյանի հրավերով, և Տերյան-Շահումյան փոխկոստահությունն էր քաղաքական դիրքորոշումների և գործողությունների համար որոշիչ դերակատարություն ունեցել:

Ինքը՝ Տերյանը, Մտ. Շահումյանի զոհվելուց հետո գրում է, որ հանդիպել է Շահումյանի հետ երեք անգամ՝ 1898 կամ 1899թ. Թիֆլիսում, 1905թ. Ղարաքիլիսայում (Վանաձոր) և 1917թ. Պետրոգրադում.

«Նրան ծանոթանալու բախտին ես արժանացա միմիայն Հոկտեմբերյան հեղափոխության նախօրեին, երբ նա Պետրոգրադ էր եկել «Ղեմտկրատիկ համաժողովին» մասնակցելու, և երբ մենք հանդիպեցինք արդեն իբրև կուսակցական ընկերներ»¹⁷⁴:

Մտ. Շահումյանի՝ Պետրոգրադ գալը Արտաշես Կարինյանն իր հուշերում անսպասելի էր համարում. «Մեզ, կովկասցի բոլշևիկներիս համար միանգամայն անսպասելի էր Շահումյանի մայրաքաղաք գալու լուրը», ապա շարունակում.

«Շահումյանի մոտ ուղևորվեց մի ամբողջ պատվիրակություն՝ Լուկաշին-Սրապիոնյանի (ավելի ուշ՝ Սովետական Հայաստանի ղեկավարներից մեկը), Սմբատ Մարգարյանը (հետագայում Բաքվի կոմունայի տրանսպորտի ժողովրդական կոմիսարը), Վահան Տերյանը և ես»¹⁷⁵:

Գուցե նաև Ա. Կարինյանի համար այս «անսպասելիությամբ» է պետք բացատրել այն, որ հետագա տարիներին, ըստ ստորև բերվող փաստերի, Ա. Կարինյանը դառնում է Գուրգեն Հայկունու «դաշնակիցը»՝ Վահան Տերյանին պաշտոնազրկելու և անվանարկելու հարցում:

Այդուհանդերձ, իր հուշի մեջ Ա. Կարինյանը մի հետաքրքիր բացահայտում է անում, որը անուշաղբության է մատնվել հետագա ուսումնասիրողների կող-

¹⁷³ **Տերյան Վ.**, Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1979, էջ 319:

¹⁷⁴ **Տերյան Վ.**, Երկերի ժողովածու, հ. IV, Եր., 1925, էջ 341:

¹⁷⁵ Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում, Եր., 1964, էջ 358:

մից. ըստ Կարինյանի՝ առաջին հանդիպումը եղել է Ստ. Շահումյանի կացարանում, որը եղել է Դեմոկրատական խորհրդակցության պատվիրակների հանրակացարանը, սակայն հաջորդ հանդիպումները եղել են Վ. Տերյանի բնակարանում:

Սա երկու բան է ապացուցում. առաջին՝ ինչքան էր Ստ. Շահումյանը վստահում Վ. Տերյանին, երկրորդ՝ պոետի հուշը, թե իբր ինքը միայն երեք անգամ է տեսել Շահումյանին, մեղմ ասած, միֆականացված է, քանի որ պարզ է դառնում, որ մոտ երկու ամիս՝ մինչև Շահումյանի՝ Պետրոգրադից մեկնելը, այսինքն՝ 1917թ. հոկտեմբերը, եղել են գրեթե ամենօրյա հանդիպումներ, որից հայտնի է միայն այն, որ քննարկվել են «ազիտացիոն բրոշյուրներին» հրատարակության հարցերը, և Վ. Տերյանը գրել է «Ինչ է ասում Լենինը գյուղացիներին» ակնարկը, որը, ի դեպ, առաջին անգամ հրատարակում է հենց Ստ. Շահումյանը Բաքվում, 1918-ին:

Ասվածից պարզ է դառնում, որ Վ. Տերյանի՝ բարձր դիրք գրավելը բոլշևիկների շարքերում եղել է հենց Ստեփան Շահումյանի անմիջական միջնորդությամբ:

Ի դեպ, ուշագրավ է այն փաստը, որ Վ. Տերյանի «ուղղափառ բոլշևիկությունը» ապացուցող հեղինակը ևս կարևորել է պոետի երաշխավորության խնդիրը. Ս. Ալիխանյանի՝ բազմաթիվ կեղծիքներով աչքի ընկնող «Վահան Տերյանի պետական գործունեությունը» գրքում (օր՝. հեղինակը գրում է՝ իբր Տերյանը մասնակցել է 1917թ. հունիսի 18-ին տեղի ունեցած բանվորական 400,000-անոց ցույցին¹⁷⁶ կամ Լենինը Տերյանին մեկ գույգ կոշիկ է նվիրել), հանդիպում ենք այսպիսի հատվածի.

«1918 թվականին լրացրած անկետայի այն հարցին, թե ով է երաշխավորել նրան Ազգաժողովատուում աշխատելու համար, Վ. Տերյանը պատասխանում է՝ ընկեր Ստալինը»¹⁷⁷:

Իսկ իրականում հենց Ստեփան Շահումյանի երաշխավորությունից էլ սկսվում է առաջին բախումը Վ. Տերյանի և նրա հետագա ղեկավար Ի. Ստալինի միջև: Հայտնի է, որ Ստեփան Շահումյանը արհամարհական վերաբերմունք ուներ Ստալինի նկատմամբ, քանի որ նրան բացահայտորեն մեղադրում էր ցարական «օխրանկայի» լրտեսը լինելու մեջ և նույնիսկ այդ մասին նամակով պատմել էր Լենինին: Բանն այն է, որ 1907 թ. իր ձեռքակալության մեջ Շահումյանը մեղավոր էր համարում միայն «Կոբային» (Ստալինի նախահեղափոխական ծածկանուններից է), քանի որ իր գտնվելու վայրի մասին գիտեր միայն նա:

բ. «Թուրքահայաստանի մասին» դեկրետը և ռուսական զորքի դուրսբերման հարցը

Վահան Տերյանի քաղաքական առաջին լուրջ ձեռնարկը «Թուրքահայաստանի մասին» դեկրետի վերաբերյալ կառավարական զեկույցն էր և դեկրետի նախագիծը: Վ. Տերյանն ի սրտե հավատում էր, որ կարող է իր ունեցած բոլշևիկյան մանդատով վճռական նշանակություն ունենալ հայ ժողովրդի համար բախտորոշ խնդիրների լուծման ժամանակ¹⁷⁸, և դա էր պատճառը, որ պոետը, չհաս-

¹⁷⁶ *Ալիխանյան Ս.*, Վահան Տերյանի պետական գործունեությունը, Եր., 1956, էջ 50:

¹⁷⁷ Նույն տեղում, էջ 59:

¹⁷⁸ «Ինձ առաջարկում են պաշտոն Ազգային գործերի մինիստրության մեջ և Արտաքին գործերի մինիստրության մեջ: Դեռ չեմ որոշել: Երևի Ազգային գործերի մինիստրության մեջ կվերցնեմ պաշտոն

կանալով, որ իրականում բոլշևիկյան ղեկավարությունը փորձում էր մի կրակոցով մի քանի նապաստակ որսալ, հավատում էր, որ «Թուրքահայաստանի մասին» ղեկընտր կարող է հայանպաստ փաստաթուղթ դառնալ: Իրականում Լենինի կառավարությունը այլ նպատակներ էր հետապնդում:

ա. Հասկանալով, թե քաղաքական-տնտեսական ինչքան ծանր վիճակում է գտնվում բոլշևիկյան իշխանությունը, փորձում էր ավելորդ ռեսուրսներ չծախսել կայսրության սահմանները պահելու խնդրի համար, մանավանդ որ այդ շրջանում սպիտակգվարդիականները պատրաստվում էին գրավել նույնիսկ մայրաքաղաքը:

բ. Հողը գյուղացուն տալու միջոցով իր կողմը գրավել ավելի ու ավելի շատ մարդկանց: Այդ առումով Արևմտյան Հայաստանում գտնվող ռուսական զորքը կարող էր լուրջ նշանակություն ունենալ ուժերի հարաբերակցության խնդրում, եթե վերադառնար Ռուսաստան՝ «հող ստանալու»:

գ. Ցույց էր տալիս հայ և նախկին կայսրության բոլոր հպատակ ժողովուրդներին, որ նոր իշխանությունները չեն շարունակում ցարական քաղաքականությունը, այլ հավատարիմ են իրեն հռչակած ազգերի ինքնորոշման սկզբունքին:

Այս իրավիճակում Վ. Տերյանը ոչ միայն լրջորեն սկսում է զբաղվել Թուրքահայաստանի ապագայի խնդրով, այլև զորքերի դուրսբերման վերաբերյալ առաջին լուրջ բախումն է ունենում իր ղեկավարի՝ կոմիսար Ստալինի հետ:

Ահա թե ինչ է գրում Վ. Տերյանը «Թուրքահայաստանի մասին» ղեկընտիր քննարկման ժամանակաշրջանի մասին.

«Այսօր գրույց ունեցա այդ առիթով և ընկ. Լենինի հետ, որին բացատրեցի, թե ինչո՞ւ անհրաժեշտ է առայժմ զորքերը չհանել Հայաստանից և պայմանավորել Հայաստանի ինքնորոշումը արքայազնների և փախստականների վերադարձով և այլ զարանտիաներով:

Նա շատ լավ վերաբերվեց և պարզվեց, որ երբ ինքն ասում է զորքերը հանել Հայաստանից, սրանով ուզում է ասել, թե երբ *հայերը պահանջեն այդ*, որպեսզի նրանց վրա ճնշում չլինի Ռուսիայի կողմից և նրանք ստիպված չլինեն ռուսական օրինետացիա ընդունել: Իսկ հայերի ապահովության համար, եթե նրանք այդ կամենան, նա բնավ դեմ չէ, որ մնան հարկավոր եղած զորամասեր»¹⁷⁹:

Փաստորեն, Տերյանին թվում է, թե համոզեց Լենինին և Արևմտյան Հայաստանի անվտանգության ու ինքնորոշման հարցը մոտ է լուծվելուն: Հատկանշական է այն, որ հետագա բոլոր նամակներում (ավելի ճիշտ՝ նամակներից տպագրված հատվածներում) Վ. Տերյանն այլևս չի գրում Լենին, այլ Ղենին՝ այդպես ծաղրելով առաջնորդի լեզվական արատը:

Լենինի դիրքորոշումը «փոխելուց հետո» Տերյանը հանդիպում է Ստալինի հետ.

«Ստալինն ասաց՝ մենք իսկույն կեթ կկարգադրենք, որ զորքերը հեռանան և հայերին հնար տրվի ինքնորոշվելու: Ես վիճեցի: Դա իմ записка-ն տալու ժամանակ ասաց: Բայց այսօր, երբ արդեն կարդացել էր записка-ս, ուրիշ կերպ էր խոսում»¹⁸⁰:

հայկական մասում աշխատելու նպատակով», - գրում է Վ. Տերյանը 1917 թ. նոյեմբերին (Տերյան Վ., Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1979, էջ 323):

¹⁷⁹ Նույն տեղում, էջ 324:

¹⁸⁰ Նույն տեղում:

Ահա և Տերյանի ամբողջ «անբարեհուսությունը». բոլշևիկյան իշխանության երկու առաջնորդները հասկանում են, որ Վ. Տերյանը փորձում է «սեփական խաղը» խաղալ, և քանի որ իրենց իշխանությունը մազից է կախված, արտաքուստ զիջում են:

Փոխզիջումը երևում է հենց դեկրետի տեքստում, որի առաջին կետն ասում է, որ ռուսական զորքը պետք է դուրս գա Թուրքահայաստանից, սակայն դուրսբերման ժամկետների և միջոցների որոշումը հանձնարարվում է Ստեփան Շահումյանի կողմից ստեղծվելիք «խառը», այսինքն՝ բազմակուսակցական հանձնաժողովին:

1925 թ. հրատարակված գրքում Պողոս Մակինցյանն այն համոզմունքն է արտահայտում, որ Ստալինի՝ «Թուրքահայաստանի մասին» դեկրետի առիթով հայ ժողովրդին ուղղված կոչը, որը հրապարակվել է 1917թ. դեկտեմբերի 31-ին (հին տոմարով), գրել է հենց Վահան Տերյանը: Հետագայում, սակայն, ոչ մի գրականագետ կամ պատմաբան այլևս չի անդրադարձել այդ գրվածքին:

Հատկանշական է այն, որ Ստեփան Շահումյանը նույնպես դեմ է եղել ռուսական զորքերի դուրսբերմանը, և նույնիսկ Արամ Մանուկյանը փորձել է բանակցել Շահումյանի հետ, որպեսզի վերջինս միջնորդի զորքերի դուրսբերման որոշման դեմ, սակայն տեղի է ունենում այն, ինչ շատ բնական էր. ռուս զինվորները մասսայաբար սկսում են լքել իրենց դիրքերը, որպեսզի վերադառնան Ռուսաստան ու այնտեղ հող ստանան:

Ահա թե ինչ է գրում Սիմոն Վրացյանը.

«Ասենք, բանակը առանց այդ էլ չէր հետաքրքրում ռազմաճակատով: Նրա ուշքն ու միտքը Ռուսաստանն էր, ուր «հող էին բաժանում»: Ուստի առանց սպասելու վերին հրամանատարութեան սահմանած կարգին, մաս-մաս, հազարներով ու տասներեակ հազարներով լքում էին դիրքերը, թողնում բազմամիլիոն հարստություններ, ռազմամթերքի ու պարենի անհաշիւ պաշար, մթերքներով լի պահեստներ և հրացանը գրկած՝ նետում վագոնները, շտապում «դէպի տուն»՝ ճանապարհին, մորեխի պէս, աւերելով ու խժոժելով ամէն բան»¹⁸¹:

Ս. Շահումյանի և Վ. Տերյանի հեռակա հարաբերությունների մի օրինակ էլ առկա է Պ. Մակինցյանի չորսհատորյակի ծանոթագրություններում.

«Այս ամենից հետո Ալ. Խատիսովը որպես ականատես պնդում է, որ «Զավարյանը արդեն պատրաստած էր այդ հայտարարության նախագիծը, որուն Շահումյանը հավանություն տվավ իմ ներկայությամբ և հանձն առավ անմիջապես ուղարկել Փեթերսպուրկ իր անձնական բարեկամ Լենինին, հրատարակության համար: Եվ իրավ, այդ հայտարարությունը տեղի ունեցավ պաշտոնապես և նույնիսկ մտավ պոլշեիկներու հիմնական սահմանադրության մեջ»¹⁸²:

Իհարկե, Պ. Մակինցյանը սա համարում է կեղծիք, սակայն չի կարելի բացառել, որ «Թուրքահայաստանի մասին» դեկրետը Վ. Տերյանը հեռակա քննարկել է Ս. Շահումյանի հետ, մանավանդ որ ամենաառանցքային խնդրում՝ ռուսական զորքի դուրսբերմանը վերաբերող, Վ. Տերյանի և Ս. Շահումյանի հայացքները համընկնում էին:

¹⁸¹ Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 54:

¹⁸² Տերյան Վ., Երկերի ժողովածու, հ. IV, Եր., 1925, էջ 410:

գ. Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի բանակցությունների ու հարաբերությունների խնդիրը

Ռիչարդ Հովհաննիսյանը, իր «Հայաստանի Հանրապետություն» աշխատության առաջին հատորում անդրադառնալով արևմտյան պետությունների կողմից բոլշևիկյան իշխանության նկատմամբ կիրառվող ճնշումներին և Լենինի փորձերին՝ թուլացնելու այդ ճնշումները, գրում է, որ Մոսկվայի նոր իշխանությունները դաշնակից պետությունների հետ գաղտնի բանակցություններում խոստանում էին ոչինչ չձեռնարկել Ցարական Ռուսաստանի տարածքում ձևավորված նոր կառավարությունների դեմ՝ պայմանով, որ արևմտյան պետությունները կթուլացնեն ճնշումները իրենց դեմ՝ մասնավորապես չօգնելով այդ կառավարություններին: Սակայն Ստալինի դիրքորոշումը անգիջում էր՝ հակառակ Լենինի և Տրոցկու հայտարարություններում երբեմն հնչող հանդուրժողականությանը՝ նոր ձևավորված պետությունների և հատկապես Հայաստանի հանդեպ:

«Աջակցություն ստանալով մի քանի համախոհ հայ բոլշևիկներից՝ Ստալինը խափանում էր Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի Հանրապետության միջև *modus-vivendi*-ի ամեն մի առաջարկ»¹⁸³, - գրում է պատմաբանը:

Սրան հակառակ՝ Վահան Տերյանը մշտապես կապ է ունեցել դաշնակցական կառավարության ներկայացուցիչների հետ: Թեև այս մասին վկայող ուղղակի գրավոր փաստեր չկան, այդուհանդերձ, հայտնի է, որ Տերյանի այրին՝ Անահիտ Տերյանը, Օրենբուրգից Մոսկվա վերադառնալուց հետո Հայաստանի Հանրապետության ներկայացուցչին է հանձնել Վ. Տերյանի մոտ եղած ոսկե դրամները, որոնք, ըստ ընտանեկան հուշերի, Վ. Տերյանը ստացել էր Առաջին հանրապետության կառավարությունից:

Բացի դրանից, ըստ Ռիչարդ Հովհաննիսյանի, Վ. Տերյանը շատ ավելի համարձակ քայլ էր կատարել.

«Խորհրդային ռեակցիան բռնուտեց և բանտ նետեց Զավրիևին, Նազարյանցին և շատ ուրիշ հայ ազգայնականների: Արտաշես Զիլինգարյանը¹⁸⁴ այն մի բուռ մարդկանց մեջ էր, ով փրկվեցին շնորհիվ Վահան Ս. Տերյանի (Տեր-Գրիգորյան) ուղղակի միջամտության, մի տաղանդավոր բանաստեղծի, որը ծառայում էր Հայկական գործերի կոմիսարիատում, իբրև տեղակալ: Հայ բոլշևիկ որակյալ մտավորականների խիստ պակասի հետևանքով, Զիլինգարյանի նման դաշնակցական հակառակորդները գործի էին դրվել՝ թարգմանելու հայերեն լեզվով հենց այն գրականությունը, որը նրանք երկար ժամանակ հերքում և ծաղրում էին»¹⁸⁵:

Զիլինգարյանի հուշերում մանրամասն նկարագրվում է, թե ինչպես է Վ. Տերյանը կանխել բժիշկ Զավրիևի գնդակահարությունը, որը Չեկան փորձել է ի-

¹⁸³ **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն, հ. 1, Եր., 2005, էջ 432:

¹⁸⁴ Խոսքը հետագայում՝ 1920թ., Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար, «Հայրենիք» պարբերականի երկարամյա խմբագիր Ռուբեն Դարբինյանի մասին է, ով ծնունդով Ախալքալաքից էր: Հայրենիք վերադառնալուց հետո Ռուբեն Դարբինյանը գրում է. «Ռուսը, ինչ դրոշակով ու նշանաբանով էլ հանդես գա, աշխարհակալ է պատմականորեն. ամեն մի ժողովրդի իշխանության մեջ անխուսափելի կերպով պիտի երևան գան ժողովրդի ազգային ձգտումները, որոնք աշխարհակալական են անպայման: Ռուսական քաղաքականությունը միշտ եղել է նենգ ու երկդիմի՝ մանր ազգերի նկատմամբ: Նենգ ու երկդիմի է եղել նա միշտ և այսօր նաև՝ հայ ազգի վերաբերմամբ: Այս մասին է, որ այսուհետև չպետք է լինի այլևս և ոչ մի տարակույս» (Ռուբեն Դարբինյան, «Ռուսական վտանգը»):

¹⁸⁵ Նույն տեղում, էջ 434:

րականացնել՝ առանց համաձայնեցնելու քաղաքական պատասխանատուների հետ:

Ստացվում է, որ Վ. Տերյանը ոչ միայն բանտից ու գնդակահարությունից ազատել է դաշնակցական դիվանագետներին, այլև նրանցից ոմանց նույնիսկ աշխատանքի է ընդունել Հայկական գործերի կոմիսարիատում՝ մի հանգամանք, որ պետք է բոլշևիկյան «մատնիչներին» հրաշալի առիթ տար՝ Վ. Տերյանին վարկաբեկելու համար:

Ինքը՝ Զիլինգարյանը կամ հետագայում՝ Ռուբեն Դարբինյանը, իր հայերեն հուշերում գրում է Տերյանի խոսքը՝ ասված 1919թ. ապրիլի վերջերին. «Բայց պետք է գիտենաս, որ դու գոհ ես միայն իմ, Պողոսի (Մակինցյան) և Աշոտի (Հովհաննիսյան) դեմ մղվող կուսակցական ներքին պայքարին: Մեր հակառակորդները, որոնց գլուխն են կանգնած Հայկունին և Կարինյանը, ձգտում են բոլորովին չեզոքացնել մեզ՝ մեր դիրքերը գրավելու համար: Դրա համար էլ աշխատում են վարկաբեկել մեզ: Իսկ մեզ վարկաբեկելու լավագույն միջոցը դու ես: Նրանք ասում են, թե փոխանակ քեզ բանտարկել և գնդակահարել տալու, մենք քեզ հովանավորել ենք, քեզ համար գործ ենք ստեղծել և առատ վարձատրություն ենք արել»¹⁸⁶:

Սաքո Սուքիասյանի «Էջեր Վահան Տերյանի կյանքից» գրքում հանդիպում ենք մի դրվագի, որտեղ Վ. Տերյանի վաղեմի բարեկամ, ուսանողական տարիների ընկերը՝ Սուրեն Խաչատրյանը, ով, ի դեպ, ուղեկցել է Վ. Տերյանին Հյուսիսային Կովկաս կատարած ճամփորդության ընթացքում, խոսելով Վ. Տերյանի մասին հուշեր գրելու մտադրության և անգամ այդ հուշերի կառուցվածքի ու մոտավոր բովանդակության մասին, հիշում է մի անձնավորության, ով հետապնդում էր Վ. Տերյանին.

«Ս. Խաչատրյանը բացառիկ արիությամբ մասնավորապես կամենում էր մերկացնել մի ստոր անձնավորության պրովոկացիոն քայլերը հանդեպ Վահան Տերյանի այն շրջանում, երբ վերջինս նոր է վերադարձած լինում Բրեստ-Լիտովսկից: Թող անհայտության մութ ծալքերում կորչի այդ անձի անունը, որին Ս. Խաչատրյանը այլ կերպ չէր անվանում, քան եթե «Гробокапател Терьяна» («Տերյանի գերեզմանը փորող»): Արվեստագետի խիստ բնորոշումը այդ անձի նկատմամբ հաստատվեց նաև այլ աղբյուրներից»¹⁸⁷:

Ըստ երևույթին, խոսքը վերաբերում է հենց Գուրգեն Հայկունուն, սակայն չի կարելի մոռանալ նաև այն հանգամանքը, թե որ թվականներին է Ս. Սուքիասյանը գրել իր գիրքը, երբ Հայկունուն կուսակցության ղեկավարության հովանավորությունը հնարավոր չէր ավել կամ պակաս չափով մատնացույց անել:

դ. 6 միլիոն ռուբլու և Աստրախան այցելելու առեղծվածը

Տերյանագիտության մեջ դեռևս չուսումնասիրված է նաև Վահան Տերյանի այցելությունը Հյուսիսային Կովկաս: Հայտնի է, որ պոետը «Թուրքահայաստանի մասին» դեկրետից և Բրեստ-Լիտովսկից հետո, որոնք ակնհայտ պարտություն էին Վ. Տերյանի համար, պոետը Մոսկվա վերադառնալուց հետո զբաղվում է Հայկական գործերի կոմիսարիատի աշխատանքի կազմակերպմամբ, ապա հուլիսի

¹⁸⁶ *Տերյան Վ.*, Տերյանագիտություն, մատենագիտություն, Եր., 2011, էջ 123:

¹⁸⁷ *Սուքիասյան Ս.*, Էջեր Վահան Տերյանի կյանքից, Եր., 1959, էջ 126:

վերջին պետությունից ստանում է երկու միլիոն ռուբլի և ուղևորվում Հյուսիսային Կովկաս:

«Թշնամու կողմից ավելի քան 6 միլիոն ռուբլու զավթումը, որը ժողկոմատն ուղարկել էր Աստրախան և Պյատիգորսկ՝ թուրքահայ գաղթականների մեջ աշխատանք տանելու համար, դժվարությունների մասին վկայող սոսկ առանձին միջադեպ էր: Ժողկոմխորհը հետագայում վերահաստատեց դրամը, բայց համոզիչ վկայություն չկա, որ այն օգտագործվել էր իր նախնական նպատակով»¹⁸⁸, գրում է Ռիչարդ Հովհաննիսյանը:

Ս.Ալիխանյանն էլ գրում է, որ այդ գումարից մեկ ու կես միլիոնը Վ.Տերյանը տվել է Կոմիսարիատի Աստրախանի բաժանմունքին, իսկ մնացած կես միլիոն ռուբլին տվել է Պյատիգորսկի հայ գաղթականներին:

Հայտնի է, սակայն, որ 1919 թվականին Վ. Տերյանին «մերկացնող» Գուրգեն Հայկունու առանցքային մեղադրանքներից մեկն այն էր, որ Վ. Տերյանը իրեն հատկացված գումարը ոչ թե ծառայեցրել է հեղափոխության հաղթանակին, այլ իրեն դրսևորել է որպես «նացիոնալիստ» և բաժանել է հայերին: 1919-ին Վ. Տերյանը հանդես է եկել հրապարակային հաշվետվությամբ, որը, ցավոք, տեղյանագիտությունը ևս չի ուսումնասիրել:

Գումարի խնդիրն ավելի է «դժվարացնում» Դավիթ Անանունը, ով, Պյատիգորսկում հանդիպելով Վ. Տերյանի հետ, հետագայում այդ մասին գրում է.

«Վ. Տերյանը իր հետ բերած դրամի մի աննշան մասը միայն տվավ Պյատիգորսկի խորհրդային իշխանություններին: Նա տեսավ այդ իշխանությունների արարքներն ու բարոյականը և սկսեց անվստահությամբ նայել նրանց վրա: Դրամ տալ Հյուսիսային Կովկասի բոլշևիկներին Վահանի սրտով չէր: Նա իր մոտ պահեց կենտրոնից բերած դրամի մեծագույն մասը և այդ գաղտնիքի պատճառով մատնվեց խիստ մտահոգության: Եթե իմացվեր, որ նա մոտը դրամ ունի պահած, ապա պատահականությունների կմատնվեր նրա կյանքը: Պյատիգորսկում Վահանը իր իսկ պատասխանատվությամբ որոշ գումարներ բաժանեց հայ գրողներին ու արվեստագետներին»¹⁸⁹:

Հյուսիսային Կովկաս կատարած այցելության ժամանակ մեկ կարևոր դրվագ կա, որն անտեսվել է տեղյանագետների կողմից: Վ. Տերյանը երկու անգամ է եկել Աստրախան՝ 1918թ. օգոստոսի սկզբին, այստեղ ապրում է մի որոշ ժամանակ, ապա մեկնում է Պյատիգորսկ, այստեղից՝ Էսենտուկի. ահա ինչ է գրում Դ. Անանունը.

«Ինձ՝ «հակահեղափոխականիս», Հյուսիսային Կովկասում չգնդակահարեցին Ներսիսյան դպրոցից դուրս եկած «հեղափոխական» հայ բոլշևիկները, բայց ուրիշ մտավորականների հետ միասին ձերբակալեցին և բանտ առաջնորդեցին: Պատիվ նրանց հեղափոխականությանը: Վահանը կարմրում էր իր կուսակցական ընկերների արարքների համար: Նա երաշխավոր կանգնեց ինձ ու մի երկու ուրիշ ձերբակալվածների համար և մեզ ազատեց Էսենտուկիի բանտից: Մյուսների համար համառորեն պայքարեց և նրանց ազատությունը պահանջեց: Եթե Հանքային Ջրերում հալածանքի ենթարկված հայ մտավորականներս անփորձ մնացինք, ապա այդ պարտական ենք բացառապես Վ. Տերյանին»¹⁹⁰:

¹⁸⁸ **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն, հ. 1, Եր., 2005, էջ 432:

¹⁸⁹ **Խանջյան Ա.**, Մոռացված և անհայտ էջեր Վահան Տերյանի կյանքից, Եր., 2004, էջ 27:

¹⁹⁰ Նույն տեղում, էջ 28:

Վահան Տերյանը Էսենտուկիից սեպտեմբերի կեսին նորից վերադարձել է Աստրախան, որտեղից Մոսկվա է մեկնել հոկտեմբերի կեսին.

«Նույն այդ 18 թվին մեզ մի անգամ նորից վիճակվեց տեսնել Վահանին: Մեպտեմբերին նա վերստին երևաց Աստրախանում: Մեր դռան առաջ կանգնեց նրա ավտոմոբիլը և նրա միջից դուրս եկավ նույն անդադար ճանապարհորդը, սակայն՝ ավելի ուժասպառ, համարյա հիվանդ վիճակում»¹⁹¹, - գրում է Տերյանին հյուրընկալած Մանուշակ Վարագյանը:

Հայկական գործերի կոմիսարիատի և Բաքվի խորհրդային իշխանության միջև կապի մասին թեև առանձին ուսումնասիրություններ չկան, սակայն հայտնի է, որ օրինակ՝ «1918թ. մարտին կազմակերպվում է Հայկական գործերի կոմիսարիատի Բաքվի բաժանմունք, որը կոմունայի անկումից հետո դադարում է գործելուց»¹⁹²: Նույն հեղինակն ընդգծում է. «Աստրախանի միջոցով էր մեծ մասամբ 1918 թվականին օգնություն կազմակերպվում սովետական Բաքվին: Բաքվի համար ստեղծված այդ ծանր օրերին Աստրախանի բոլշևիկները ուժերի ներածին չափ օգնում էին Բաքվի կոմունայի պաշտպանությանը»¹⁹³:

Համադրելով Վ. Տերյանի՝ Աստրախան վերադառնալու ժամանակը Բաքվում տեղի ունեցող իրադարձություններին՝ տեսնում ենք մի կարևոր գուցադիպում. նույն ժամանակահատվածում՝ սեպտեմբերի կեսին, Ստեփան Շահումյանը լքում է Բաքուն՝ նպատակ ունենալով գալ Աստրախան, իսկ Վ. Տերյանը, արդեն ավարտած լինելով իր առաքելությունը Աստրախանում, Էսենտուկիից նորից վերադառնում է Աստրախան: Ապա հոկտեմբերին՝ Ստ. Շահումյանի գնդակահարությունից հետո, ընկճված և հիվանդ՝ ուղևորվում Մոսկվա:

Ե. Վ. Տերյանը և Հայաստանի անկախության ճանաչումը

Վահան Տերյանի քաղաքական իրական - ոչ կեղծված հայացքները հասկանալու համար անգնահատելի նշանակություն ունի Դավիթ Անանունի հուշը, որ կոչվում է «Հանդիպումներ Վ. Տերյանի հետ»:

Հուշը միակ ուղղակի ապացույցն է նրա, թե Հայաստանի ապագայի վերաբերյալ ինչպիսի տեսլական ուներ Վ. Տերյանը, և արդյո՞ք հոգևոր ինքնիշխանության՝ «Հոգևոր Հայաստանի» գաղափարը երկու-երեք տարվա ընթացքում կարող էր այնպիսի դեգրադացիա ապրել, որ պոետը հրաժարվեր նրանից:

Նկարագրելով Վ. Տերյանին Հանքային Ջրերում՝ Դավիթ Անանունը, ով, ի դեպ, Վահան Տերյանի նախկին կուսակիցն էր՝ որպես «սպեցիֆիկ», նկարագրում է պոետի քաղաքական հայացքները.

«Հայության ճակատագիրը խորապես հուզում և զբաղեցնում էր նրան: Նա Հայաստանի անկախության ջերմ կողմնակիցն էր, միայն պահանջում էր Խորհուրդների իշխանություն: Իմ առարկությանը, թե դարձյալ դաշնակցականները կլինեն այդ Խորհուրդների մեծամասնությունը - նա պատասխանում էր, որ դաշնակցականների տիրապետությանը կոմունիստները կպատասխանեն գնդացիներով: Առհասարակ սոցիալիզմի և ազգային խնդիրներում Վ. Տերյանը դատում էր իբրև իդեալիստ, որը ցանկալին համարում էր նաև իրագործելի: Պահանջելով սոցիալիզմի և Հայաստանի անկախության իրագործումը, սպառնալիքներ տեղա-

¹⁹¹ *Մուքիսյան Ս.*, Էջեր Վահան Տերյանի կյանքից, Եր., 1959, էջ 126:

¹⁹² *Ալիխանյան Ս.*, Հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը (1917-1921), Եր, 1958, էջ 42:

¹⁹³ Նույն տեղում, էջ 46:

լով բոլոր հակառակորդների հասցեին՝ նա մեկ էլ տեսար թախծում էր և սկսում մտորել մենության ու ստեղծագործական էքստազի մասին»¹⁹⁴։

Ապա Դավիթ Անանունը նկարագրում է Վ. Տերյանի քաղաքական առաջիկա ծրագիրը.

«1918թ. Բեռլինի լրացուցիչ պայմանագրով Խորհրդային Ռուսաստանը Գերմանիայի առաջ ճանաչում էր Վրաստանի անկախությունը։ Այդ լուրը ջղայնացրել էր բանաստեղծին։ Նա շտապում էր վերադառնալ Մոսկվա, որպեսզի դրդե բոլշևիկներին ճանաչելու նաև Հայաստանի անկախությունը»¹⁹⁵։

Ահա այս հուշը միանգամայն հասկանալի է դարձնում և՛ այն, թե ինչու էր Վ. Տերյանը մահվանից փրկում դաշնակցական կառավարության դիվանագետներին, և՛ ինչպիսի մտադրություններ ուներ, որ դարձել էր քաղաքական գործիչ, և վերջապես, ինչու Խորհրդային իշխանությունն այդպես էլ մինչև վերջ չներեց պոետին՝ նույնիսկ վերջինիս մահվանից հետո։

Геворг Эмин-Терян – Из неисследованных страниц политической деятельности Ваана Терьяна. – В советские времена терьяноведение пыталось представить Ваана Терьяна как «православного» большевика. Однако исследование фактов показывает, что у Терьяна были серьезные противоречия с высшим руководством коммунистической власти. Эти противоречия в основном имели политический, и в какой то степени также личный характер: а, самое главное, противоречия в конце настолько углубились, что даже после смерти поэта, власти в некоторых вопросах так и не простили Терьяну.

Gevorg Emin-Teryan – From the unexplored pages of Vahan Teryan's political activity. – In Soviet times teryanology has tried to present Vahan Teryan as an "orthodox" Bolshevik. However, research of the facts shows that Teryan has had serious contradictions with the top management of the Communist government. These contradictions had mainly political and in some cases also personal nature: and the most important is that in the end the contradictions deepened so much, that even after the poet's death, authorities in some questions have not forgiven Teryan.

¹⁹⁴ **Խանգյան Ա.**, Մոռացված և անհայտ էջեր Վահան Տերյանի կյանքից, Եր., 2004, էջ 27։

¹⁹⁵ Նույն տեղում, էջ 28։

**ՌՈՒՄԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐ
ԱԹՈՌ ԷԶՄԻԱՇՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1900-1914 թթ.**

ՍԱԹԵՆԻԿ ԱՎՈՑԱՆ

Գաղտնիք չէ, որ հայ առաքելական եկեղեցին, իր գոյության ողջ ընթացքում, հանդիսացել է ազգային լուսավորության գլխավոր օջախը, հայ ժողովրդի դիմագծի պահպանման միակ կառույցը: Հայ-լուսավորչական եկեղեցին աշխարհի բոլոր եկեղեցիներից ամենաազգայինն է: Այդ իսկ պատճառով եկեղեցին հայ ժողովրդի համար ոչ միայն կրոնական, այլ նաև քաղաքական կառույց էր, իսկ եկեղեցու առաջնորդ կաթողիկոսը ողջ ազգի իրական ներկայացուցիչն էր¹⁹⁶: Եկեղեցու այս դերի մասին լավ գիտեին ոչ միայն առաջադեմ մտածողները, այլ նաև որոշ մայրաքաղաքային պահպանողական բարձրաստիճանավորներ: Վերջիններս ձգտում էին «թաղել» հայոց եկեղեցու ինքնուրույնությունը կոշտ վարչական մեթոդներով: Բայց, եթե տասնամյակներ շարունակ դա արվում էր աստիճանաբար, ապա XX դ. սկզբում այդ քաղաքականությունը ստացավ ագրեսիվ բնույթ: Նշված շրջանում ռուսական իշխանությունների կանխակալ գործողություններն անմիջական վտանգ էին ստեղծում ոչ միայն հայ առաքելական եկեղեցու գործունեության, այլ նաև հետագա գոյության համար:

Ռուսաստանի կազմի մեջ ընդգրկվելուց հետո Արևելյան Հայաստանում, իբրև ազգային կառույց, ռուսական իշխանությունների հետ պաշտոնական կապ պահպանում էր միայն Հայ առաքելական եկեղեցին: Հենց այդ պատճառով էլ ցարական կառավարությունը տարբեր ճանապարհներով փորձում էր սահմանափակել եկեղեցու գործունեությունը, զրկել նրան կենսագործունեության աղբյուրներից: Այդ միտումներն էլ ավելի ակներև դարձան 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին:

Համարելով, որ հայերը չեն հրաժարվել անկախ պետականություն ունենալու իրենց վաղեմի երազանքից, Կովկասի կառավարչապետ Գ.Մ. Գոլիցինն (1896-1905) այդ ամենի համար մեղադրում էր հայ հոգևորականությանը, հայկական մամուլին այդ ամենի համար մեղադրում էր հայ հոգևորականությանը, հայկական մամուլին և հայ հեղափոխական կոմիտեներին: Կառավարչապետին մտահոգում էր նաև Հայոց Հայրիկի օրեցօր աճող հեղինակությունը, ինչը նրա համոզմամբ, կաթողիկոսի «ինքնագլուխ» գործունեության արդյունքն էր: Հայերի հեղափոխական նկրտումներին վերջ տալու համար Գ.Գոլիցինը առաջարկում էր մեծացնել կաթողիկոսի նկատմամբ ճնշումները:

Դեռ 1899թ. մարտի 13-ին Գ.Գոլիցինի գրասենյակը ներքին գործերի նախարար Ի.Լ. Գոբեմիլկինին (1895-1899թթ.) ներկայացրեց հայ եկեղեցու ողջ ունեցվածքը բռնագրավելու մասին զեկուցագիր, որին կցված էր նախագիծը: Նրանում խոսվում էր աշխարհիկ տարերի կողմից հայ եկեղեցու ունեցվածքի ղեկավարման մասին, որոնք այդ եկամուտները օգտագործում են ազիտացիոն նպատակ-

¹⁹⁶ *Станкевич В.*, Судьбы народов России, Берлин, 1921, с. 226.

ների, եկեղեցական ծառայողներին հեղափոխական շարժումների մեջ ներգրավելու համար: Իր հերթին Ի. Գորեմիկինը մի շարք նախարարների ներկայացրեց կառավարչապետի առաջարկություններն ու նախագիծը:

1900թ. փետրվարին պետական խեղհրդի անդամ Է.Վ. Ֆրիշի գլխավորությամբ ստեղծվեց հատուկ միջգերատեսչական կոմիտե: Կոմիտեի կազմի մեջ մտան մի շարք նախարարներ. Ֆինանսների՝ Ս. Յու. Վիտտեն, հողավգործության և պետական գույքի՝ Ա.Ս. Եոմոլովը, արտաքին գործերի՝ Ս. Ն. Մուռավյովը, Սուրբ Սինոդի օբեդ-դատախազ՝ Կ.Պ.Պաբեդանոսցևը, Կովկասի կառավարչապետ Գ. Գոլիցինը: Ուշադրության կենտրոնում էր հայկական եկեղեցու ունեցվածքի կառավարման կարգի մասին հարցը: 1900թ. մարտի 7-ին Մ.Մուրավյովը հարցի կապակցությամբ կոմիտեին ներկայացրեց իր կարծիքը: Հմուտ դիվանագետ Մուրավյովը դեմ էր եկեղեցու գույքի բռնագրավմանը: Նա գտնում էր, որ այն չի համապատասխանում ցարիզմի շահերին, քանի որ դա կկրճատի Էջմիածնի աթոռի նյութական միջոցները, կնպաստի նրա հեղինակության անկմանը, ինչն էլ մեծ վնաս կհասցնի Ռուսաստանի միջազգային հեղինակությանը և Ռուսաստանի հարավային շրջաններում կուժեղացնի հակապետական տրամադրությունները: Ի վերջո բռնագրավման իրականացումը, առանց լուրջ պատճառների, նշանակալի հարված կհասցնեի Ռուսաստանի հեղինակությանը արտասահմանյան հատկապես Օսմանյան Թուրքիայի հայության շրջանում: Իսկ դա կնշանակեր զրկվել հայերի օժանդակությունից հերթական ռուս-թուրքական պատերազմի ժամանակ:

Մարտի 28-ի նիստում Մ.Մուրավյովը քննարկվող հարցին անդրադարձավ նաև կրոնական տեսանկյունից՝ պնդելով, որ եկեղեցու գույքի բռնագրավումը Կովկասում ապրող քրիստոնյա հայ ազգաբնակչությանը շիա և սուննի մուսուլմանների հետ համեմատած կդնի շատ վատ վիճակում:

1900 թ. մայիսի 8-ին կայացավ միջգերատեսչական կոմիտեի նիստը ողջ կազմով: Նիստի ընթացքում առանձնացան երկու տեսակետներ՝ կողմ և դեմ: Առաջինը ներկայացնում էին Գոլիցինը և ներքին գործերի նախարար Դ.Ս. Միայակինը, իսկ երկրորդը՝ Մ.Մուրավյովը և Ս.Վիտտենը: Ֆինանսների նախարարը քաղաքական և էթիկական տեսանկյունից դեմ արտահայտվեց բռնագրավմանը: Քաղաքական հանգամանքը ուշադրություն էր դարձնում այն բանի վրա, որ «այդ միջոցը ոտքի կհաներ ողջ հայությանը ոչ միայն Ռուսաստանում, այլև ողջ աշխարհում»: Էթիկական հանգամանքը հաշվի էր առնում հայկական դավանանքը ուղղափառության նկատմամբ: Վերջին փաստարկը ստիպված էր հաշվի առնել Կ.Պաբեդանոսցևը, որը և հրաժարվեց Գոլիցինին աջակցելուց¹⁹⁷: Վիտտեի կարծիքը վճռորոշ դարձավ: Կոմիտեի բոլոր անդամները, բացառությամբ Գոլիցինի հանդես եկան բռնագրավման դեմ:

Սկզբունքորեն ռուսական իշղանությունները դեմ չէին եկեղեցու գույքի բռնագրավմանը, սակայն այն ժամանակավրեպ համարեցին: Անհրաժեշտ համարվեց իրական վերահսկողություն սահմանել հայկական եկեղեցու ինչպես եկամուտների և ծախսերի, այնպես էլ գործունեության վրա:

1901թ. հուլիսի 26-ին Նիկոլայ II հաստատեց հատուկ կոմիտի եզրակացությունը, որի համաձայն վերահսկողություն պետք է սահմանվեր Էջմիածնի, նրա ֆինանսական ելքերի և մուտքերի նկատմամբ: Պարտադիր էր համարվում նաև

¹⁹⁷ Туян В.Г., Эчмиадзинский вопрос в политике России 1873-1903гг., Ер., 2002, с.157

ռուսաց լեզվի գործածումը, առաջնային էր համարվում աշխարհիկ ղեկավարության համաձայնությամբ հոգևորականներ նշանակելու պրակտիկան: Գոլիցինը, որը շարունակում էր համոզված լինել իր համոզմունքների ճշմարիտ և հիմնավորված լինելուն, ուշի ուշով հետևում էր Էջմիածնի և հատկապես կաթողիկոսի յուրաքանչյուր քայլին: Վերջինիս գործունեության մասին Գոլիցինին պարբերաբար զեկուցում էր Էջմիածնի Սինոդի դատախազ Կ. Կանչելին:

Նրա կարծիքով Էջմիածնի աթոռում քաղաքական և անձնային ամբիցիաների մարմնավորողը կաթողիկոսն էր: Էջմիածնի Սինոդի դատախազը Գոլիցինին խորհուրդ էր տալիս համոզման քաղաքականությունը փոխարինել հարկադրման քաղաքականությամբ: «Պետք է ցույց տալ, որ այնտեղ, որտեղ ուժի մեջ է մտնում ռուսական օրենքը, այնտեղ վերանում են հոգևոր դասի բոլոր կամայականությունները»¹⁹⁸: Դատախազի կարծիքն էլ ավելի համոզեց Գոլիցինին, որ անհրաժեշտ է ուժեղացնել քաղաքական ճնշումները Էջմիածնի նկատմամբ:

Զգալով եկեղեցուն և լուսավորչական գործին սպառնացող վտանգը՝ 1902թ. մարտ-ապրիլ ամիսներին Մկրտիչ Խրիմյանը հրատարակեց նոր մշակված կանոնադրության նախագիծը, որի համաձայն եկեղեցու հոգևոր սպասավորները պետք է ընտրվեին ծխական համայնքների կողմից: Խրիմյանը իրականացնում էր ապակենտրոնացում՝ եկեղեցու ունեցվածքը տալով ծխական համայնքներին և դրանց փոխանցելով կենտրոնական մարմնի իրավասությունների մի մասը: Ծրխական ժողովին էր հանձնվում իր ենթակայության տակ գտնվող գույքի և տնտեսության կառավարումը: Այս քայլով Խրիմյանը փորձեց յուրաքանչյուր հայի զգացնել տալ եկեղեցու սեփականատեր լինելը, որպեսզի ընդհանուր վտանգի դեպքում եկեղեցին կարողանար ամուր հենարան ունենալ ի դեմս հայ ժողովրդի¹⁹⁹: Նախագծի հրատարակությունն արագացրեց իրադարձությունների ընթացքը: Գոլիցինն ահագանգեց մայրաքաղաք, հայտնելով, որ նախագիծը շրջանցում է բարձրագույն կանոնադրությունը: Ներքին գործերի նախարար Դ.Ս.Միայակինի սպանությունից հետո (1902թ.) նրա տեղը զբաղեցրած Վ. Կ. Պլեվեն (1902-1904) թիկունք կանգնեց կառավարչապետի առաջարկություններին:

Հայկական եկեղեցու ունեցվածքի բռնագրավման հարցը վերջնականապես քննարկվեց նախարարների խորհրդում: Բռնագրավման օգտին հանդես եկան հինգ նախարարներ, դեմ արտահայտվեցին տասներկուսը: Վերջիններս բռնագրավումը համարում էին հակապետական ակտ, որը կհեղափոխականացներ հայ հասարակությանը և որով կանտեսվեին Ռուսաստանի շահերը Մերձավոր Արևելքում: Բռնագրավման մոլեռանդ կողմնակիցներն էին Գ.Գոլիցինը և Վ. Կ. Պլեվեն, որոնք սեփական դիրքորոշումը ներկայացնում էին որպես «ստիպված միջոց», հայկական եկեղեցու գործունեության նկատմամբ «արդյունավետ վերահսկողության» ծրագրի ձախողման արդյունք: Նախատեսում էին եկեղեցական անշարժ գույքը հանձնել հողագործության և պետական գույքի նախարարությունը, իսկ կապիտալը՝ ներքին գործերի նախարարությանը: Ունեցվածքի և կապիտալի ընդհանուր ղեկավարումը հանձնվում էր օտար դավանությունների դեպարտամենտին:

¹⁹⁸ ՀԱԱ, ֆ. 113, ց.2, գ. 379, թ. 4:

¹⁹⁹ **Հ.Վ. Հովհաննիսյան**, Հայ Առաքելական եկեղեցու բարենորոգության հիմնահարցը 1901-1906թթ., Եր., 2008, էջ 40:

1903 հունիսի 12-ին Նիկոլայ II հաստատեց հինգ նախարարների կարծիքը: Միապետի կամքը միանգամից վերջ դրեց բոլոր քննարկումներին ու բանավեճերին: Հայկական եկեղեցին հունիսի 12-ի օրենքով, փաստորեն զրկվեց ինքնուրույն գոյատևման տնտեսական հիմքից: Այս օրենքը նախ և առաջ պատժամիջոց էր հայ ժողովրդի նկատմամբ, որի միակ պաշտոնական ներկայացուցիչը եկեղեցին էր: Հայկական եկեղեցին զրկվում էր իր հատուկ կարգավիճակից՝ վերածվելով ռուսական կայսրությունում հայերի տեղական հոգևոր կենտրոնի: Նիկոլայ II-ի որոշումը անսպասելի էր անգամ նախարարների մեծամասնության համար:

1903թ.հուլիսի 29-ին Մ. Խրիմյանը գտնվում էր Ալեքսանդրապոլում, երբ հայտնվեց հունիսի 12-ի օրենքի հրատարակումը: Վրդովված ժողովուրդը կաթողիկոսից պահանջում է չհանձնել հայ եկեղեցու ունեցվածքը: Խրիմյանը ստիպված էր բացատրելու ժողովրդին, որ օրենքը ընդունվել է առանց իր գիտության: Ապստամբներին հանդարտելու համար կաթողիկոսը դիվանագիտորեն հայտարարեց, որ ցարը, հավանաբար, մոլորեցվել է իր խորհրդողականների կողմից: Նա հայտնեց, որ պատրաստվում է մեկնել Պետերբուրգ՝ խնդիրը խաղաղ կարգավորելու համար:

Ցարական բարձրագույն հրամանը, կաթողիկոսի կարգադրությամբ, չիրապարակվեց հայ մամուլում: Միայն պաշտոնական «Кавказ»-ը տպեց բարձագույն հրամանը: Հայոց հայրապետը իր թերացումը բացատրեց ցարի հետ հանդիպելու և նրա հետ այդ հարցերը քննարկելու միտումով: Միայն այն բանից հետո, երբ Վ.Պլեվեն հեռագրով հայտնեց Մ. Խրիմյանին, որ հրամանի իրագործման հապաղումը ցարի կողմից կդիտվի իբրև անհնազանդություն, կաթողիկոսի պաշտոնական օրգան «Արարատը» հրապարակեց հունիսի 12-ի օրենքը հայերեն և ռուսերեն²⁰⁰: Օրենքը հանրությանը հայտնի դառնալուց հետո հայ հասարակության մեջ սկսվեց ընդվզումների ու հուզումների երկարատև ընթացք: Անգամ զինված բախումներ եղան հայ բնակչության, ռուսիկանության և զինված ուժերի միջև: Հայերի հակացարական գործողությունները ձեռք բերեցին համաժողովրդական պայքարի բնույթ: Իրենց բողոքի ձայնը բարձրացրին նաև աշխարհի բոլոր հայ համայնքները՝ իրենց գույքը այլ պետության կողմից բռնագրավելու կապակցությամբ:

Իր ողջ կյանքը ժողովրդի ու եկեղեցու ազատության համար մարտնչած կաթողիկոս Խրիմյանը՝ զգալով հազարավոր հայերի աջակցությունը, օգոստոսի 4-ին իր թիվ 958 կոնդակով Սինոդին հրամայում է չկատարել օրենքը: Օգոստոսի 5-ին Էջմիածինի Սինոդի նիստում Կանչելին Սինոդի անդամներից պահանջեց ընդունել եկեղեցու ունեցվածքի հանձման մասին արձանագրություն: Սակայն Սինոդի անդամները բարձրունքում գտնվեցին: Հունիսի 12-ի օրենքը անարդարացի համարելով, միաժամանակ չցանկանալով հանդես գալ իբրև անհնազանդ հոգևորականներ, նրանք հրաժարական տվեցին իրենց հոգևոր պաշտոններից:

Օգոստոսի 21-ին Խրիմյանը հատուկ կոնդակով հրահանգեց բոլոր թեմական առաջնորդներին՝ ոչինչ չհանձնել ցարական պաշտոնյաներին, իսկ բռնության դեպքում տեղեկացնել իրեն: Այս քայլով, փաստորեն, Խրիմյանը բացահայտորեն հակադրվեց ցարական իշխանություններին:

²⁰⁰ Է. Գոստանդյան, Մկրտիչ Խրիմյան: Հասարակական- քաղաքական գործունեությունը, Երևան, 2000, էջ 405-406:

Հայ հասարակության շրջանում ծագած հուզումները հանդարտելու համար ցարական կառավարությունը սկսեց ստահող տեղեկություններ տարածել, թե իբր իրենք մտահոգված են հայ եկեղեցու գույքի պահպանմամբ, այդ պատճառով էլ այն վերցնում են պետական հոգածության ներքո: Այդ «բարի» ցանկությամբ ոգեշնչված՝ Կովկասի կառավարչապետը Երևանի նահանգապետ Տիգեն-հաուզենին ցուցումներ է ուղարկում գույքի ընդունման աշխատանքները սկսելու մասին՝ առաջնակարգ համարելով Մայր Աթոռի գույքի բռնագրավումը: Գույքի ընդունման հանձնաժողովի նախագահ է նշանակվում փոխնահանգապետ Նակաշիձեն: Վերջինս փորձելով հանդարտացնել կրքերը, հայտարարում է, որ եկեղեցական կալվածքների սեփականության իրավունքը մնում է եկեղեցուն, փոխվում է միայն գույքի կառավարման ձևը, և որ իրենք չեն դիպչում ոչ կրոնին, ոչ էլ եկեղեցական սրբություններին²⁰¹:

Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ ոչ ժողովրդական լայն զանգվածները, ոչ կաթողիկոսի խնդրանք-բողոքները չկանգնեցրին հայատյաց կառավարչապետին, որի հրամանով սեպտեմբերի 1-ից սկսվեց եկեղեցական գույքի բռնագրավումը: Եկեղեցու և վանքերի ունեցվածքի ընդունումը ուղեկցվում էր բռնություններով:

Հոկտեմբերի 18-ին Վ. Պլեվեն ցարին տեղեկացնում է կաթողիկոսի՝ օգոստոսի 4-ի և օգոստոսի 21-ի կոնդակների մասին, որով վերջինս հրամայել էր չհանձնել ունեցվածքը և թաքցնել եկեղեցու գույքի մասին վկայող փաստաթղթերը: Պլեվեն այս քայլով, միանշանակ, ցանկանում էր ցարի առջև հիմնավորել Մ. Խրիմյանի հակացարական գործունեությունը, ցույց տալ կայսրությունում հայկական եկեղեցու բացառիկ դերը, կաթողիկոսի գործունեությունը ներկայացնել նրան վերապահված իրավասություններից դուրս:

Այս համատեքստում ոչ հայանպաստ որոշումների ընդունումը կանխարգելելու և Վ. Պլեվեյի ներկայացրած մեղադրանքները մեղմելու նպատակով՝ Խրիմյանը չդադարեց նամակներ ուղարկել ռուսական կառավարության տարբեր քաղաքական գործիչների, որոնք կարող էին որևէ կերպ ազդել ցարի կողմից ընդունված որոշման վրա: Խրիմյան Հայրիկը դեռ հույս ուներ, որ ցարը, այնուամենայնիվ, արդարացի կգտնվի՝ ցուցաբերելով խիստ վճռականություն, որով կփոխվեր իրադարձությունների ընթացքը:

1903թ. դեկտեմբերի 24-ին և դեկտեմբերի 27-ին համապատասխանաբար Խրիմյանը նամակներ ուղարկեց Նախարարների Խորհրդի նախագահ Ս. Վիտտեին և արտաքին գործերի նախարար Վ. Ն. Լամադորֆին (1900-1906): Կաթողիկոսը պնդում էր, որ հայ եկեղեցին երբեք հակապետական կառույց չի եղել և փորձել է արտահայտել պետության շահերը: Սակայն ռուսական բարձրաստիճան բյուրոկրատիային ուղղված կաթողիկոսի դիմումները անարդյունք մնացին: Հունիսի 12-ին ընդունված օրենքը հիմնականում իրագործվեց 1903թ. դեկտեմբերի վերջին, իսկ 1904թ. սկզբին ավարտվեց եկեղեցու ունեցվածքի բռնագրավումը: Ռուսաստանի հայկական թեմերում առգրավվեցին եկեղեցուն պատկանող շուրջ 145 հազար ակր հող, 1 միլիոն 775 հաձար ռուբլի արժողությամբ կապիտալ:

Էջմիածնի Սինոդի դատախազի պաշտոնում Կ. Կանչելիին փոխարինած Լ. Ա. Ֆոենկելը 1904թ. հունվարի 28-ին Կովկասի գրասենյակ զեկուցեց կաթողիկո-

²⁰¹ Հ. Վ. Հովհաննիսյան, Հայ Առաքելական եկեղեցու..., էջ 53:

սի առողջության թույլ լինելու, և այն մտահոգության մասին, որ կաթողիկոսի անկայուն վիճակը բերում է նրա մերձավոր շրջապատի դերի բարձրացմանը: Կաթողիկոսի գործունեության վրա, Ֆռենկելի կարծիքով, նաև ազդեցություն ունեին հակակառավարական միությունների ներկայացուցիչները՝ մասնավորապես «Դաշնակցությունը» և «Հնչակ»: Այդ պայմաններում կաթողիկոսի կոնդակները իրենցից հոգևոր - քաղաքական ահեղ միջոց էին ներկայացնում՝ ցարիզմին հակադրվելու համար:

Հեղափոխական շարժման զարգացման մասին խոսուն փաստով խիստ անհանգստացած Գոլիցինը 1904թ. մայիսի 13-ին դիմում է ներքին գործերի նախարարին և ներկայացնում կաթողիկոսի գլխավորությամբ հակակառավարական շարժումները: Հեղափոխական շարժումների էպիկենտրոն էր ներկայացվում Էջմիածինը, որը միավորել էր հոգևոր և աշխարհիկ հեղափոխականների ուժերը՝ ինքնակալության եկեղեցական քաղաքականության դեմ պայքարում: Գոլիցինը ստեղծված իրավիճակից դուրս գալու համար Պլեվեյին առաջարկում էր ռեպրեսիվ միջոցների կիրառմամբ հանգեցնել հեղափոխական շարժումները: Նա պնդում էր, որ Էջմիածնից հեղափոխական տարրերի հեռացումը պետք է դառնա կառավարության առաջնահերթ խնդիրներից մեկը²⁰²:

Մ. Խրիմյանի պայքարը ինքնակալության եկեղեցական քաղաքականության դեմ, առաջացրեց Կովկասի ղեկավարության բացասական արձագանքը: Կազմվեց «ցարիզմի դեմ Էջմիածնի դավադրության առասպելը»: Էջմիածնի աթոռի առաջնորդը մեղադրվում էր հակակառավարական ապստամբության նախապատրաստման մեջ: Ազգային շարժումների ճնշման համար մշակվեց միջոցառումների շարք. գաղտնի ժանդարմայի գործունեության ուժեղացում, Էջմիածնի Սինդի՝ որպես կառավարական մարմնի, ակտիվացումը:

Սակայն, Ռուս-ճապոնական պատերազմում կրած պարտությանը (1905թ.) հաջորդեց կայսրությունում թևակոխած հեղափոխական ալիքը, որը լրջորեն սպառնաց ցարական աթոռին: Կայսրությունում շիկացած մթնոլորտը ցարական բարձր աստիճանավորներին դարձրին առավել «գթասիրտ» և «հայասեր»: Սկսեցին միջոցառումներ մշակել. հայերին հեղափոխական շարժումներից հետ պահելու համար օգտագործել հայ եկեղեցու ազդեցությունը ժողովրդի վրա և նրան սիրաշահելու նպատակով բարձրացնել հայոց հայրապետի և եկեղեցու հեղինակությունը:

Իշխան Գ.Գոլիցինը, բնականաբար չէր համապատասխանում նոր ժամանակների ոգուն, ուստի նա 1905 թ. հունվարի 1-ին հեռացվեց: Ալեկոծված Կովկասը խաղաղեցնելու համար Նիկոլայ II Կովկասում վերականգնեց փոխարքայությունը: Տարածաշրջանում միապետի ներկայացուցիչը հնարավորություն էր ստանում իր իշխանությամբ լուծել բոլոր հարցերը՝ այդ մասին իրազեկելով համապատասխան գերատեսչությանը: Առաջին փոխարքա դարձավ ճարպիկ և փորձված դիվանագետ Կոմս Միխայիլ Իլյարիանովիչ Վորոնցով-Դաշկովը (1905-1916): Այդ լուրը ստանալուն պես Խրիմյան Հայրիկը 1905թ. փետրվարի 19-ին շնորհավորական հեռագիր է ուղարկում Պետերբուրգ Վորոնցով-Դաշկովին, որում վերջինիս շնորհավորելով բարձր պաշտոնում նշանակման կապակցությամբ հույս է հայտնում, որ նա կկարողանա լուծել տարածաշրջանում առկա բարդ խնդիրները²⁰³:

²⁰² ՀԱԱ, ֆ.113, ց. 2, գ. 437, թ.11:

²⁰³ ՀԱԱ, ֆ.56, ց. 14, գ.84, թ.213:

1905թ մարտի 1-ին տեղի ունեցավ Նախարարների խորհրդի համագումարը, որը քննարկում էր հայ-լուսավորչական եկեղեցու ունեցվածքի ղեկավարումը Ներքին գործերի նախարարությանը փոխանցելու հարցը: Նախարարների խորհրդի համագումարին չկարողացավ ներկա լինել Վորոնցով-Դաշկովը, սակայն նա ներկայացրել էր իր տեսակները, որը ընթերցեց Նախարարների խորհրդի նախագահ Վիտտեն: Կովկասի փոխարքան նպատակահարմար չէր գտնում կարծիք հայտնելու՝ առանց տեղում հարցի մանրակրկիտ ուսումնասիրման:

Էջմիածնի հարցի լուծման կապակցությամբ առաջարկված զիջումները իր արտացոլումը գտավ Նախարարների խորհրդի արձանագրությունում: Բռնագրավման օրենքը չեղյալ համարելու կաթողիկոսի խնդրանքը ուղարկվեց Կովկասի փոխարքային՝ եզրակացության համար:

1905թ. հուլիսի 18-ին Կովկասի փոխարքայի գրասենյակը Վորոնցով-Դաշկովին ներկայացրեց իր զեկույցը «Հայկական հարցի մասին», որտեղ մանրակրկիտ ներկայացվում էր հայկական եկեղեցու կարգավիճակը քրիստոնեության ընդունումից մինչև 1903թ. օրենքը և դրա հետևանքները: Գրասենյակի ղեկավար Եվանգուլովը իր զեկույցում՝ ինքնակալության և հայկական եկեղեցու փոխհարաբերությունների պատմությունը ներկայացնելուց լիբերալ մոտեցումներ արտահայտեց, ինչը պայմանավորված էր ժամանակի ոգով²⁰⁴:

Մանրակրկիտ ծանոթանալով Կովկասի փոխարքայի գրասենյակի կողմից ներկայացված «Հայկական հարցի մասին» զեկույցին՝ հուլիսի 19-ին Վորոնցով-Դաշկովը իր կարծիքը շարադրեց Նախարարների կոմիտեի գործերի կառավարիչ Բարոն Է. Էու. Նոլդեին, որում իր անհամաձայնությունն էր հայտնում Էջմիածնի նկատմամբ ցարական կառավարության վարած քաղաքականությանը:

1905թ. օգոստոսի 1-ին Բարոն Նոլդեն Կովկասի փոխարքայի կազմած «Հայկական հարցի մասին» զեկույցագրի և սպասվող բարեփոխումների մասին տվյալների հիման վրա, Նիկոլայ II ծրագիր ներկայացրեց Էջմիածնի գույքը հետ վերադարձնելու վերաբերյալ: Նույն օրը ցարը հաստատեց բարձրագույն հրամանը՝ ծխական դպրոցների և հայկական եկեղեցու ունեցվածքի վերադարձման մասին: 1905թ. օգոստոսի 1-ին Նիկոլայ II ստորագրած հրամանագրով հայկական եկեղեցուն էր վերադարձվելու բռնագրավված գույքը, միննույն ժամանակ թույլատրվում էր կրկին բացել հայկական ազգային դպրոցները, որոնք փակվել էին դեռևս 19-րդ դարի վերջին տասնամյակներին:

Այսպիսով, ինքնակալության ռեպրեսիվ քաղաքականությունը հայ եկեղեցու նկատմամբ, որը սկսվել էր դեռևս 19-րդ դարի վերջին, սակայն իր գագաթնակետին հասավ 1903թ. հունիսի 12-ի օրենքի ընդունումով, ցանկալի արդյունք չտվեց: Հունիսի 12-ի օրենքի դեմ երկու տարի շարունակվող համաժողովրդական պայքարը ցարական կառավարության արտաքին և ներքին այլ բարդ իրադրությունների շղթայի մեջ տվեց դրական արդյունք: Համաժողովրդական պայքարի ճնշման տակ, ռուս-ճապոնական պատերազմում կրած պարտության, Ռուսաստանում սկսված առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխության պայմաններում՝ ցարական կառավարությունը ստիպված էր նահանջել: Սակայն հայկական եկեղեցու ունեցվածքի բռնագավթումից հրաժարումը ամեննին էլ չէր նշանակում, որ ցարական կառավարության՝ հայկական եկեղեցու նկատմամբ ռեպ-

²⁰⁴ *Тунян В. Г.*, Последний период патриаршества Хримяна 1904 -1907гг., Ер., 2003, с. 95.

րեսիվ քաղաքականությունը, կփոխարինվի հանդուրժողական քաղաքականությամբ: Պարզապես հաշվի առնելով կայսրությունում, վերոհիշյալ, ծավալված իրադարձությունները, ցարական բարձրաստիճան չինովնիկները ստիպված էին հրաժարվել բացահայտ առճակատումից և գործել ավելի զգույշ և կշռադատված:

1906թ մայիսի 10 ին կաթողիկոսը կոնդակ է ստորագրում, որում խոսվում էր օգոստոսի 15-ին Կենտրոնական Ժողովի հրավիրման մասին, որը պետք է քննարկեր և կարգավորեր անհետաձգելի հարցեր՝ կապված ուսումնական հաստատությունների, եկեղեցական և վանքային կալվածքների և թեմական ժողովների հետ:

1906թ. Էջմիածնում հրավիրվող Կենտրոնական Ժողովը մեծ ոգևորություն էր առաջադրել ժողովրդի բոլոր շերտերում: Սակայն Կովկասի փոխարքայի կարծիքով Կենտրոնական Ժողովի հրավիրման մասին կոնդակի հրապարակումը կաթողիկոսը իրականացրել էր «Դաշնակցություն» կուսակցության ճմռման ներքո: Այդ նպատակով օգտագործվել էր Էջմիածնի Սինոդի որոշ անդամների ազդեցությունը²⁰⁵:

Չնայած այս ամենին, Կովկասում կեղծ ժողովրդավարություն հռչակած փոխարքան, հաշվի առնելով երկրում քաղաքական փոփոխությունները, մասնավորապես կրոնահանդուրժողականության և քաղաքացիների ազատության ակտը, ստիպված էր սպասողական դիրք ընդունել: Մանավանդ, որ կաթողիկոսի կողմից վերջինս տեղեկացվել էր Կենտրոնական ժողովի հրավիրումից տաս օր առաջ²⁰⁶: Դա փաստորեն նշանակում էր, որ Խրիմյանը ձգտում էր թույլ չտալ Վորոնցով-Դաշկովի միջամտությունը՝ Կենտրոնական Ժողովի հրավիրման մասին ընդունված որոշման գործնաչափ: Ստեղծված պայմաններում Կովկասի փոխարքան որոշեց հետևողական դիրք զբաղեցնել:

Կենտրոնական ժողովը իր աշխատանքները սկսեց 1906թ. օգոստոսի 15-ին: Բացման հանդիսավոր խոսքով հանդես եկավ Մկրտիչ Խրիմյանը, որը ընդգրծեց ժողովի իրավասության շրջանակները, այն է՝ լուծում տալ դպրոցական և եկեղեցական հաստատություններին առնչվող սկզբունքային մի շարք խնդիրների: Իր ձեռքը վերցնելով ժողովի ղեկավարությունը՝ Դաշնակցությունը ցանկացավ եկեղեցական և դպրոցական գործերը կարգավորելու համար հրավիրված ժողովին տալ նախապաշարման տեսք²⁰⁷: Դպրոցական հարցի քննարկման շրջանակներում արմատական գործիչների կարծիքով առաջին և ամենակարևոր քայլը եկեղեցին դպրոցից անջատելն էր: Օգոստոսի 20-ին պատգամավորները որոշում ընդունեցին. «Համագումարը՝ որպես օրինակ ընտրված ժողովրդական ներկայացուցչություն, գտնում է, որ պետք է դիտարկի և լուծի հասարակական կյանքի բոլոր հարցերը՝ կապված վարչական, դպրոցական, տնտեսական, սոցիալական բնագավառների հետ: Համագումարի պատվիրակները իրավունք են վերապահում իրենց արտահայտվելու ողջ Ռուսաստանին և հատկապես հարազատ Կովկասին այրող հարցերի շուրջ»²⁰⁸:

Էջմիածնում ընթացող իրադարձությունների մասին տեղեկությունները Վորոնցով-Դաշկովին թույլ տվեցին եզրակացնել, որ կաթողիկոսի հրավիրած

²⁰⁵ *Воронцов-Дашков И.*, Всеподданнейшая записка по управлению Кавказским краем, Тифлис, 1907, с.14.

²⁰⁶ Նույն տեղում:

²⁰⁷ *Է. Շուստերյան*, Մկրտիչ Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը..., էջ 429:

²⁰⁸ *Тунян*, Последний период..., с. 241.

համագումարը սոցիալ-հեղափոխականների ոչ մեծ խմբի ձեռքի գործն է, որոնք ամբողջովին տիրապետել են ծեր և հիվանդ կաթողիկոսին²⁰⁹։ Խուսափելով իրադարձությունների հետագա բարդությունից՝ Վորոնցով-Դաշկովը որոշեց փակել համագումարը։ 1906թ. օգոստոսի 28-ին հետևեց փոխարքայի հեռագիրը Երևանի նահանգապետին՝ վճռական միջոցներին ձեռնարկման մասին։ Օգոստոսի 30-ին նահանգապետի հրամանով ոստիկանությունը ցրեց այն։ Այսպես փակվեց Կենտրոնական ժողովը, իսկ բազմաթիվ խնդիրներ մնացին չքննարկված։

1907 թ. հուլիսի 10-ին և 17-ին Ռուսաստանի Նախարարների խորհուրդը լսեց Վորոնցով-Դաշկովի զեկույցը։ «Հեղափոխական շարժումներ» բաժնում խոսվում էր հայկական եկեղեցու ունեցվածքի բռնագավթման արդյունքում առաջացած հեղափոխական շարժման մասին (առանց դասակարգերի տարբերության)։ Խոսվում էր «Դաշնակցություն» կուսակցության քաղաքական ակտիվացման մասին, որի ազատագրական գաղափարներն՝ եկեղեցու ունեցվածքի բռնագավթումից հետո, պարարտ հող ստացան ռուսահայերի շրջանում տարածվելու համար։ Իր զեկույցում Վորոնցով-Դաշկովը լիովին բացառեց հայերի հեղափոխական լինելը. «Ցանկացած տեռորիստական ակտին հայերի մասնակցությունը բոլորի համար այնքան ակնհայտ էր, որ հուզումները Քութայիսի նահանգում, ուր հայեր ընդհանրապես չկան, վերագրում էին նրանց, էլ չխոսելով, վրացիների մասնակցությամբ առանձին քաղաքական սպանությունների մասին։ Հայերի հեղափոխական լինելու կեղծ տեղեկությունների ազդեցությունների ներքո հայկական զանգվածների շրջանում իրոք հեղափոխական տրամադրություններ ստեղծվեցին։ Սակայն տեղական իշխանությունը չէր ցանկանում տեսնել չարության հիմնական պատճառը և միայն զսպիչ միջոցներ էր կիրառում ձեռքալալությունների և երկրամասից այն հայերի աքսորի տեսքով, որոնք բացէիբաց արտահայտում էին իրենց անհամաձայնությունը եկեղեցու ունեցվածքի բռնագրավման ժամանակ։ Հայկական եկեղեցու բռնագրավված ունեցվածքի վերադարձը միանգամից ետ քաշեց հարկադրաբար հեղափոխության մեջ նետված հայ ժողովրդին՝ պարզ ցույց տալով, թե որտեղ է թաքնվում իրական չարիքը»²¹⁰։

Նախարարների խորհուրդը ճանաչեց Վորոնցով-Դաշկովի աշխատանքը և նրա առջև խնդիր դրեցին վերականգնել տարածաշրջանի արտադրական ուժը, ռուսական պետականության հիմքերի ամրապնդումը։

1907 թ. սեպտեմբերի սկզբին Մ. Խրիմյանի առողջական վիճակը կտրուկ վատթարացավ, իսկ հոկտեմբերի վերջին դարձավ ճգնաժամային։ Հոկտեմբերի 29-ի առավոտյան ութսունյոթ տարեկան հասակում Խրիմյան Հայրիկը կնքեց իր մահկանացուն։ Կաթողիկոսի մահից հետո ներքին գործերի նորանշանակ նախարար Պ. Ա. Ստոլիպինը (1906-1911), որը միառժամանակ Նախարարների Խորհրդի նախագահն էր, անհրաժեշտ գտավ պատրաստել հայկական եկեղեցու կառավարման կարգավիճակի փոփոխությունը։ Նրա կողմից ևս փորձ կատարվեց կաթողիկոսի իրավունքները կրճատելու և նրա ընտրության գործընթացում իշխանության միջամտությունը ընդլայնելու ուղղությամբ։ 1907 թ. դեկտեմբերի 16-ին Վորոնցով-Դաշկովին և արտաքին գործերի նախարար Ն.Վ. Իզվոլսկիին (1906-1910) ուղղված ուղերձում Ստոլիպինը բարձրացրեց նոր օրենսդրության ընդունման հարցը, որը կսահմաներ կաթողիկոսի իրավունքները։ Վերջինս

²⁰⁹ ՀԱԱ, ֆ.95, ց.1, գ.7, թ. 1715:

²¹⁰ *Воронцов-Дашков И.*, Вспомаданнейшая записка по управлению Кавказским краемъ, с. 8 -10.

պաշտպանում էր Կովկասի նախկին կառավարիչ Գ.Գոլիցինի տեսակետը՝ կաթողիկոսին նշանակելու որպես «սովորական հոգևոր ղեկավարի»: Կաթողիկոսի «Ամենայն» նշանակության չընդունումը կզրկեր նրան արտոնյալ դիրքից և կառավարությանը թույլ կտար նրան վերաբերվել որպես սովորական հպատակի²¹¹:

Պ.Ստոլիպինի մոտեցումը կաթողիկոսի կարգացիճակի հարցում հանդիպեց դիմադրության: Կաթողիկոսի ամենամեծ պաշտպանի դիրքում կրկին հանդես եկավ Վորոնցով-Դաշկովը: Նա պնդում էր, որ ընդվզումները ինքնակալության քաղաքականության նկատմամբ թուլացել են այն բանից հետո, երբ Էջմիածնին վերադարձվեց եկեղեցու ունեցվածքը և դպրոցը: Հայ հասարակության և մասնավորապես հայ հոգևորականության ազգային և կրոնական զգացմունքները նոր-նոր է սկսել հանդարտվել: Փոխարքայի կարծիքով ներկա պահին պետք է աշխատելին հայերին համոզել նրանում, որ նրանք նախ և առաջ հանդիսանում են Ռուսաստանի քաղաքացիներ, և ոչ թե նրանցից նորից ստեղծել ռուսական պետության թշնամիների: Ստոլիպինի մոտեցումը փոխարքան գնահատում էր որպես վերադարձ հին կուրսի:

Վորոնցով-Դաշկովի դիրքորոշումը ստիպեցին Ստոլիպինին հանել կաթողիկոսին «Ամենայն» նշանակության գրկման մասին պահանջը և անձեռնմխելի թողնել նրա անձնական իրավունքը: Սակայն, ներքին գործերի նախարարը պնդեց կաթողիկոսի ռուսաց լեզվի տիրապետման անհրաժեշտությունը, կաթողիկոսի ընտրության ժամանակ ռուսաստանյան և օտարերկրյա հայերի ձայների հավասարակշռության պահպանումը և կաթողիկոսի՝ որպես Էջմիածնի Սինոդի նախագահի, իրավունքների ավելի ճշգրիտ հրապարակումը:

Ներքին գործերի նախարարի առաջարկի քննարկման ժամանակ Կովկասի փոխարքան կրկին դեմ արտահայտվեց կաթողիկոսի իրավունքների փոփոխմանը: Կաթողիկոսից ռուս լեզվի իմացության պահանջին անդրադառնալով՝ Վորոնցով-Դաշկովը նշեց, որ դա կնշանակեր ընտրություններից օտարերկրյա հայ թեկնածուների մեկուսացում, որը կհարվածեր Ռուսաստանի արտաքին շահերին: Կաթողիկոսի անձը՝ թուրքահպատակ կամ ռուսահպատակ կարևոր չհամարվեց: Խրիմյանի ընդդիմությունը ցարիզմին չէր բացատրվում նրանով, որ նա արևմտահայության ներկայացուցիչ էր, այլ նրանով, որ հանդիսանում էր հայկական եկեղեցու ղեկավարը: «Եթե Խրիմյանը հակադրվել է կառավարության որոշ գործողություններին, ինչպես օրինակ եկեղեցու ունեցվածքի բռնագավթմանը, ապա վստահություն չկա, որ լինելով ռուսահպատակ, նա կգործեր այլ կերպ: Պատմությունը ցույց է տալիս, որ եկեղեցական ունեցվածքի բռնագավթման դեպքում կատաղի հակառակորդները եղել են ռուսահպատակները»²¹²: Կովկասի փոխարքայի պատասխանը բխում էր տարածաշրջանի կոնկրետ իրավիճակի, ինչպես նաև հայկական եկեղեցու դրության և հայ հասարակության վիճակի իմացությունից:

1908թ. մարտի 24-ին Ստոլիպինին իր եզրակացությունը ներկայացրեց նաև արտաքին գործերի նախարարի Իզվոլսկին: Վերջինս նույնպես հանդես եկավ ներքին գործերի նախարարի առջարկների դեմ: Իզվոլսկին հանդես եկավ բարեփոխումների անցկացման մեջ ծայրահեղ զգույշ լինելու օգտին, որոնք հայերի շրջանում կասկածներ չէին հարուցի, որ կառավարությունը նորից կգնա իրենց ե-

²¹¹ **Тунян В. Г.**, Правление католикоса М. Измирляна 1908-1910 гг, Ер., 2004, с. 3.

²¹² Там же, с. 7.

կեղեցուն հետապնդման ուղիով: Արտաքին գործերի նախարարի այս մետեցումը բացառապես պայմանավորված էր Ռուսաստանի արտաքին քաղաքականության շահերով: Ա. Իզվոլսկին ձգտում էր Բոսֆորի և Դարդանելի նեղուցների հարցը լուծել ի օգուտ Ռուսաստանի, և Պետերբուրգի համար հնարավորություն ստեղծել Մերձավոր Արևելքում վճռական գործողությունների համար: Մերձավոր Արևելքում ակտիվ քաղաքականություն վարելու Իզվոլսկու վճռականությունը իրական գործոն էր հանդիսանում կաթողիկոսին պաշտպանելու համար: Այսպես, հանդիպելով Վորոնցով-Դաշկովի և Իզվոլսկու սուր քննադատությանը՝ Ստոլիպինի բոլոր փորձերը ձախողվեցին:

1908թ. հոկտեմբերի 31-ին անցկացված կաթողիկոսական ընտրություններում փակ քվեարկությամբ կաթողիկոս ընտրվեց Մաթևոս Իզմիրյանը (1908-1910): Նկատի ունենալով օսմանյան հայերի համար՝ երիտթուրքերի հեղափոխության դեռևս ոչ պարզ նշանակությունը, Պետերբուրգը նպատակահարմար գտավ հաստատել այդ ընտրությունները: Սակայն, Ստոլիպինը այս անգամ պնդեց, որ Մաթևոսը միանգամից գա Պետերբուրգ՝ (Թիֆլիսի փոխարեն, որը սովորաբար արվում էր) կայսրի հետ անձամբ հանդիպելու համար, որի ժամանակ նրան կբացատրեին կայսերական օրենքներին հետևելու անհրաժեշտությունը, և ոչ թե միայն եկեղեցական կանոններին:

Կովկասի փոխարքայի միջոցով Իզմիրյանին հայտնեցին 1909թ. մայիսի կեսերին Պետերբուրգ այցելելու անհրաժեշտության մասին: 1909թ. մայիսի 27-ին Իզմիրյանն արդեն Պետերբուրգում էր: Մայիսի 28-ին կայացավ Մ. Իզմիրյանի հանդիպումը Ստոլիպինի հետ: Վերջինս հորդորեց Իզմիրյանին իրագործել կայսրության եկեղեցական կանոնադրությունը, հեռու մնալ քաղաքական կրքերից և լիովին տրվել հոգևորականության լուսավորությանն ու դպրոցներին²¹³: Հաջորդ օրը ցարական պալատում տեղի ունեցավ Իզմիրյանի ընդունելությունը: Նիկոլայ II Իզմիրյանին հավաստիացրեց պետության բոլոր հպատակների հանդեպ իր միանման վերաբերմունքի և հայ ժողովրդի նկատմամբ բարի տրամադրվածության մասին: Սակայն ընդգծեց, որ հայերը իրենց հերթին պետք է հետևեն օրենքին: Ցարը համոզմունք հայտնեց, որ դրա համար նոր կաթողիկոսը ջանքեր չի խնայի և իր հոտին կտանի խաղաղ բարեգործ կյանքի և բարձրագույն օրենքի հնազանդությանը²¹⁴:

1909թ. հունիսի 28-ին Մաթևոս II Էջմիածնի միաբանության առջև հանդես եկավ ծրագրային խոսքով: Քննադատելով միաբանության շրջանում կուսակցականության ոգին՝ Իզմիրյանը կոչ արեց հրաժարվել քաղաքական կրքերից, զբաղվել հոգևոր կյանքով և տնտեսական մասի կառավարմամբ, աջակցել կաթողիկոսին և ծառայել ժողովրդին: «Մեր նպատակը օրինականության և կարգապահության սահմաններում հայկական եկեղեցու և ժողովրդի շահերի պաշտպանությունն է, Ամենայն Հայոց կաթողիկոսի իրավունքների անփոփոխության պահպանումը»²¹⁵:

Պաշտոնապես հաստատվելով կաթողիկոսական աթոռին՝ Մաթևոս II իր առջև խնդիր դրեց ղեկավարման համար ստեղծել գործունյա թիմ: Խնդիրներ կային Մաթևոս II և Էջմիածնի Սինոդի անդամների փոխհարաբերություններում:

²¹³ *Тунян В. Г.*, Эчмиадзинский престол XIX-нач. XX вв., Ер., 2001, с.157.

²¹⁴ ՀԱՍ, Ֆ.151, ց.1, գ.404, թ. 3:

²¹⁵ Програмная речь.- Тифлиссский Листок, 1909, 21 июля.

Վերջիններս իրենց ամենակարող էին համարում: Չնայած դրան Իզմիրյանը ձգտում էր կենտրոնացնել հայկական եկեղեցու ղեկավարությունը և բարձրաստիճան հոգևորականությանը գրկել ինքնուրույնությունից: 1909թ. հոկտեմբերի 30-ին կաթողիկոսը երկու ներկայացում ուղարկեց Կովկասի փոխարքային՝ խնդրելով նրան միջնորդել կայսեր առաջ պաշտոնից ազատելու Էջմիածնի Սինոդի անդամներ, թեմական առաջնորդներ՝ Աշոտ եպիսկոպոսին (Ղարաբաղ) և Հովհաննես եպիսկոպոսին՝ (Շամախի) առողջական վիճակից ելնելով²¹⁶: 1910թ. հունվարի 3-ին Վորոնցով-Դաշկովը Իզմիրյանին տեղեկացրեց, որ կայսրը և Ներքին գործերի նախարարը տվել են իրենց համաձայնությունը Ղարաբաղի և Շամախիի թեմերի առաջնորդներին պաշտոնից ազատելու կապակցությամբ²¹⁷:

Հարմարվելով կաթողիկոսական աթոռին՝ Մաթևոս II աստիճանաբար սկսել էր ինքնուրույն գործունեություն ծավալել, որը չլրիպեց Ստոլիպինի ուշադրությունից: 1910թ. սեպտեմբերի 23-ին Ստոլիպինը Էջմիածնի Սինոդի դատախազին գրություն ուղղարկեց՝ կաթողիկոսի գործունեության անհամապատասխանության մասին: Համաձայն կայսերական օրենքների Սինոդի բոլոր ներկայացումները՝ ուղղված Ներքին գործերի նախարարությանը, փաստաթղթի ընդունման օրը պետք է հավաստիացված լինեին ներկա անդամների ստորագրություններով, կաթողիկոսի նախագահությամբ և ամրագրվեր քարտուղարի արձանագրությամբ: Սակայն իրականում բոլոր ներկայացված փաստաթղթերը պարունակում էին Սինոդի մեկ կամ մի քանի անդամների և քարտուղարի ստորագրությունը: Ներքին գործերի նախարարի պահանջը նշանակում էր կաթողիկոսի ներգրավումը կոլեգիալ գերատեսչության մեջ, որտեղ կաթողիկոսի ձայնը վճռորոշ էր միայն այն դեպքում, երբ ներկաների ձայները հավասար էին: Ավելին, կաթողիկոսի ստորագրության առկայությունը՝ որպես սինոդի նախագահի, ներքին գործերի նախարարությանը թույլ կտար նրանից պատասխանատվություն պահանջել՝ ընդունված այս կամ այն որոշման համար²¹⁸:

Կաթողիկոսը ծանր էր տանում կուտակված հարցերը, ինչի արդյունքում 1910թ. վերջին նրա վիճակը կտրուկ վատացավ: 1910թ. դեկտեմբերի 11-ի լուսադեմին Ամենայն հայոց կաթողիկոս Մաթևոս II Իզմիրյանը մահացավ սրտի կաթվածից: Նրա մահից հետո մամուլում ակտիվորեն սկսվեց քննարկվել Էջմիածնի աթոռի հավանական թեկնածուների ցանկը: Հիմնական թեկնածուների շարքում շեշտվում էր կաթողիկոսական աթոռի տեղակալ Գևորգ Մուրեյանցի անունը, որը ներկայացվում էր պահպանողական գործիչ, եկեղեցական կանոնների պահպանման կողմնակից²¹⁹, և Մաղաքիա Օրմանյանը: Վերջինս առաջավոր պատմաբան էր, եկեղեցու նվիրյալ, որը 1896-1908թթ. զբաղեցրել էր Կոստանդնուպոլսի պատրիարքի պաշտոնը և ստիպված թողել էր այն երիտթուրքական հեղաշրջումից հետո: Մ. Օրմանյանը ծայրահեղ թշնամաբար էր տրամադրված «Դաշնակցություն» կուսակցության նկատմամբ, ինչի համար «Դաշնակցությունը» ամեն կերպ փորձում էր խոչնդոտել՝ իր համար անցանկալի թեկնածուի առաջադրմանը:

²¹⁶ Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1873-1910թթ.), կազմող Ս.Ա. Բեհբուդեան, Եր., 2001, էջ 491-492:

²¹⁷ ՀԱԱ, ֆ.56, ց.2, գ.11075, թ. 1-2:

²¹⁸ ՀԱԱ, ֆ.56, ց.2, գ.11075, թ. 1-2:

²¹⁹ К вопросу о выборах католикоса. - Тифлиссский листок, 1911, 22 января.

Որպես «հարմար» թեկնածու՝ Վորոնցով-Դաշկովի տեսադաշտում էր գտնվում կաթողիկոսի տեղակալ (1907 թվականից) Գևորգ Սուրենյանցը, որը իր գործունեության մեջ զգուշավորություն էր ցուցաբերում կառավարական վարչակազմի հետ փոխհարաբերություններում, ինչն էլ առաջացրել էր հեղափոխականների դժգոհությունը, որոնք ձգտում էին իրենց ձեռքը վերցնել հայկական եկեղեցու ղեկավարումը՝ ինքնակալության դեմ պայքարի համար: Ընտրությունները դեռ չսկսած արդեն պարզ էր, որ այն անցնելու էր բազմաթիվ խախտումներով: Թուրքական թեմերի պատվիրակների զգալի մասը չէին ընտրվել բնակչության կողմից, այլ նշանակվել էին ցուցակներով՝ Էջմիածնի և Կ. Պոլսի պատրիարքների համաձայնությամբ: Կ. Պոլսի ազգային ժողովը, ոչ մի իրավունք չունենալով, 1911թ. նոյեմբերին որոշում էր կայացրել Մ. Օրմանյանի թեկնածությունը հանելու մասին:

1911թ. դեկտեմբերի 11-ին Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում Համազգային ժողովը սկսեց իր գործունեությունը: Համոզվելով, որ Մ. Օրմանյանը չի ներգրավվելու թեկնածուների ցանկի մեջ՝ նրա կողմնակիցներից 28 պատվիրակներ, առաջին նիստից առաջ, լքեցին ընտրական ժողովը: 1911թ. դեկտեմբերի 13-ին սկսվեց գաղտնի քվեարկությունը: Գ. Սուրենյանցը մեկ ձայնի տարբերությամբ առավելություն ստացավ դաշնակցականների թեկնածու Ե. Դուրյանի նկատմամբ:

Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությունների արդյունքը մեծ լարվածություն առաջացրեց ինքնակալության բարձրաստիճան էլիտայի շրջանում: Անհրաժեշտ էր լուծել գլուխկոտրուկը, թե բավական է արդյոք մեկ ձայնի առավելությունը ընտրությունների արդյունքները հաստատելու համար: Ներքին գործերի նախարարությունը առաջարկում էր ընտրությունների արդյունքը անօրինական համարել, մանավանդ, որ ընտրված կաթողիկոս Գևորգ Սուրենյանցը կասկածվում էր հայ հեղափոխական շարժումների հետ կապ ունենալու մեջ: Ներքին գործերի նախարարության նոր ղեկավար՝ Ա.Ա. Մակարովը (1911-1912), որը քաղաքական իրավախախտումների մասնագետ էր, կառչելով օրենքի տառից՝ գիտակցորեն գնում էր նոր հնչել սկանդալի: Մակայն հերթական անգամ պետական ձկուն դիրքորոշում ցուցաբերեց Վորոնցով-Դաշկովը: Նա չէր հասկանում ընտրությունների արդյունքը չճանաչելու պատճառը, քանի որ այն դրական էր Ռուսաստանի համար: «Ընտրվել է ռուսահպատակ արքեպիսկոպոս Գևորգ Սուրենյանցը, որը հուսալի մարդ է և մեզ լավ հայտնի: Ընդ որում նոր ընտրությունների նշանակման դեպքում թեկնածու կարող է ընտրվել արտերկրի հայերից անձանթ դեմք, ինչպես դա եղավ կաթողիկոսի նախորդ ընտրությունների՝ Իզմիրլյանի և Խրիմյանի դեպքում»²²⁰:

1912թ. հունվարի 12-ին Ա. Մակարովը արտաքին գործերի նախարար՝ Ս.Դ. Սազոնովին (1910-1916) ուղարկեց իր կազմած առարկությունը կաթողիկոսական ընտրությունները չեղյալ համարելու հարցի կապակցությամբ: Ս. Սազոնովը խորհրդակցեց Կոստանդնուպոլսում Ռուսաստանի դեսպան Ն.Վ. Չարիկովի հետ: Վերջինս, պաշտպանելով փոխարքայի տեսակետը, ընտրությունների արդյունքների մերժումը անցանկալի համարեց: Ն. Չարիկովը իր տեսակետը հիմնավորում էր, որ, օգլվելով առիթից, թուրքահայերը կարող են ցանկանալ կա-

²²⁰ *Тунян В. Г., Эчмиадзинский престол..., с.176.*

թողիկոսական աթոռին տեսնել Մ. Օրմանյանին: Իսկ Կոստանդնուպոլսի պատ-
րիարքության և Էջմիածնի աթոռի հարաբերությունների խզումը վտանգ կներկա-
յացներ պետության համար: Կոստանդնուպոլսում ռուսական դեսպանի բերած
փաստաթղթերը լիովին ըմբռնվեցին Մ. Սազոնովի կողմից: Ներքին գործերի նա-
խարար Ա. Մակարովը ստիպված էր հաշվի նստել Կովկասի փոխարքայի և ար-
տաքին գործերի նախարարի կարծիքների հետ և ցարի հաստատմանը ներկա-
յացնել ընտրությունների արդյունքները: Նիկոլայ II 1912թ. մարտի 13-ին հաստա-
տեց այն:

1912թ. հունիսի 4-ին Գ. Մուրենյանցը ժամանեց Պետերբուրգ: Նա հայտնեց
Ռուսաստանի հանդեպ իր հավատարմության և հայ ժողովրդի շրջանում հեղա-
փոխական տրամադրությունների քննադատության մասին: Այդ կերպ Գևորգ
Մուրենյանցը, փաստորեն, նպատակ էր դնում բարելավել հարաբերությունները
ինքնակալության հետ: Սրանով ավարտվում է հայկական եկեղեցու և ինքնա-
կալության հարաբերություններում առկա լարվածությունը և սկսում է հարաբե-
րությունների կարգավորման գործընթացը: Ռուսական կայսրության վերջին հայ
կաթողիկոսի քաղաքականությունը տարբերվում էր հավասարակշռությամբ և
Ռուսաստանի հանդեպ հավատարմությամբ, քանի որ չկային օբյեկտիվ պատ-
ճառներ ցարական ինքնակալության և Էջմիածնի միջև լարվածության համար:

Այսպես, հերթական անգամ, միջազգային ծայրահեղ դրությունը ազդե-
ցություն ունեցան ցարի վերջնական որոշման վրա: Վորոնցով-Դաշկովը և ար-
տաքին գործերինախարար Մ. Դ. Սազոնովը, ինչպես և առաջ, անհրաժեշտ գտան
նախ և առաջ հասնել՝ Ռուսաստանի հանդեպ հայ ժողովրդի համակրանքին,
մանավանդ որ հենց այս ժամանակ պատրաստվում էին կրկին բեմականացնել
հայկական հարցը միջազգային քաղաքական դաշտում: Նման կերպով հայկա-
կան հարցը արտաքին քաղաքականության մեջ օգտագործելու Ռուսաստանի
ցանկության ֆոնի վրա, ցարական իշխանությունը՝ հայկական եկեղեցուն վերա-
բերող հարցերում, դարձյալ վերադարձավ իր ավանդական դիրքորոշմանը:

1913թ. մայիսի 30-ին հաշտություն է կնքվում Թուրքիայի և Բալկանյան
երկրների միջև, որից հետո Ռուսաստանը ձեռնամուխ է լինում հայկական հար-
ցի «լուծմանը»: Արդեն 1914թ. հունվարի 26-ին կնքվում է ռուս-թուրքական համա-
ձայնագիրը Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացման հա-
մար: Սակայն սկսված առաջին համաշխարհային պատերազմը անհրազորեցի է
թողնում այն:

Պատերազմի սկիզբը Կովկասի առանձին ազգային խմբերի կողմից տար-
բեր կերպ ընդունվեց: Հայերն անմիջապես ցուցաբերեցին՝ Արևմտյան Հայաստա-
նում Ռուսաստանին ակտիվ քաղաքականության մեջ հրելու իրենց ձգտումները:
1914թ. օգոստոսի 5-ին կաթողիկոս Գևորգ V, Վորոնցով-Դաշկովի միջոցով, դիմեց
ռուսական իշխանություններին՝ Թուրքիայում հայկական հարցին ուշադրու-
թյուն դարձնելու և նրա վերջնական լուծման համար պատմական պահը օգտա-
գործելու խնդրանքով: Դրա հետ մեկտեղ կաթողիկոսը նշում էր հետևյալ միջոց-
ների անհրաժեշտությունը. «Քանի դեռ թուրքական Հայաստանը գտնվում է
Թուրքիայի սահմանում, ապա ողջ հայության համար այդ տանջալի հարցի վերջ-
նական լուծման համար իմ և ողջ հայ ազգի կարծիքը հանգում է հետևյալին՝ ա) Անատոլիայի հայկական պրովինցիաներից կազմել մեկ անբաժան շրջան, բ) այդ
շրջանի կառավարման համար պետք է նշանակվի քրիստոնյա ղեկավար, որը

անկախ կլինի Բ. Դեից և ընտրված Ռուսաստանի կողմից, գ) այդ շրջանում պետք է մտցվի ներքին լայն ինքնավարում՝ ընտրության սկզբունքով, քրիստոնյա և մուսուլման ներկայացուցիչների հավասար քանակով, դ) որպեսզի հայ հասարակությունը հավատա նոր կազմակերպության կենսունակությանը, ապա բոլոր բարեփոխումների իրականացման վերահսկողության իրավունքը պետք է տրվի բացարձակապես Ռուսաստանին»²²¹:

1914թ. սեպտեմբերի 2-ին Կովկասի փոխարքան գրությամբ տեղեկացնում է Ամենայն Հայոց կաթողիկոսին, որ վերջինիս նամակը բնօրինակով ներկայացրել է նախարարների խորհրդի նախագահ Ի.Լ. Գորեմիկինին, որը հավաստիացրել է, որ ռուսական կառավարությունը հայկական հարցում ոչ մի զիջումների չի գնա, այն իմաստով, որ Թուրքիայի հայկական շրջաններում իրականացվեն բարենորոգումներ՝ համաձայն ռուսական նախնական ծրագրի և բացառապես Ռուսաստանի հսկողությամբ: Բայց դրա հետ մեկտեղ փոխարքան նախագրուշացնում է, որ ողջ հայ ժողովուրդը պետք է համաձայնեցված լինի իր ցուցումների հետ, քանի որ Ռուսաստանի և Թուրքիայի միջև փոխհարաբերությունների ներկայիս լարվածության պայմաններում շատ կարևոր է, որ Թուրքիայի հետ պատերազմը սկսվի նրա կողմից, այլ ոչ թե մեր ինչ-որ գործողության հետևանքով: Ուստի ծայրահեղ անցանակալի է թուրքայրերի որևէ ապստամբությունը²²²:

1914թ. սեպտեմբերի 23-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V կոնդակ է հրապարակում ռուսական գորքին նյութապես և բարոյապես օգնելու մասին: 1914թ. սեպտեմբերի 28-ին հետևում է կաթողիկոսի նոր կոնդակը ուղղված բոլոր թեմերին՝ ռուսական գորքի հաղթանակի և վիրավոր զինվորների օգնության համար հանանակություն կազմակերպելու մասին: 1914թ. դեկտեմբերի 28-ին Գևորգ V Սուրբ-նյանցի կոնդակով և նրա անմիջական նախագահությամբ ստեղծվում է Եղբայրական օգնության կոմիտեն, որը զբաղվելու էր վիրավոր հայ կամավորներին և տասնյակ հազարավոր փախստական հայերի օգնություն ցուցաբերելու խնդիրներով²²³: Թեև պատերազմի սկիզբը Կովկասյան ռազմաճակատում անհաջող դասավորվեց ռուսների համար, այնուամենայնիվ, կովկասյան բանակի ժամանակավոր անհաջողությունները չթուլացրին հայերի հույսերը, և ողջ ազգը հավատում էր ցար Նիկոլայ II խոսքին, որը նա տվել էր 1914թ. Նոյեմբերին՝ Կովկաս այցելելու ժամանակ:

Այսպիսով, 1900-1914թթ., ինքնակալության և Մայր աթոռ Էջմիածնի փոխհարաբերություններում առկա լարվածության կարգավորումը գերազանցապես պայմանավորված էր ցարական կառավարության արտաքին և ներքին բարդ իրադրությունների շղթայով: Ռուս-ճապոնական պատերազմում կրած պարտությունը, Ռուսաստանում սկսված առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը, ներքին գործերի նախարարներ Պլեվեի և Ստոլիպինի սպանությունները ստիպեցին նորին կայսերական մեծությանը՝ ունկնդրելու արքունիքում՝ ցարական նախարարների շրջանում, հայտնված այլ կարծիքների: Այս ամենի արդյունքում, 1912 թ. սկսած, ինքնակալության փոխհարաբերությունները Մայր Աթոռի հետ միջազգային բարդ իրավիճակի ֆոնի վրա, կարծես թե, կարգավորվեցին:

²²¹ Станкевич В., Судьбы народов России..., с. 238.

²²² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 229, թ. 13:

²²³ Վավերագրեր հայ եկեղեցու պատմության: Գևորգ Ե Վշտալի Սուրենյանց Կաթողիկոս Ամենայն Հայոց (1847-1930), կազմող՝ Ս.Ա. Բեիբուդեան, Եր., Հայաստան, 2005, էջ 268 - 271:

Сатеник Авоян – *Взаимоотношения самодержавия России и Эчмиадзинского престола 1900-1914 гг.* – В начале XX в. взаимоотношения между армянской церковью и самодержавием России вступили в новый этап. Дело в том, что если до 90-х гг. XIX в. самодержавие в отношении Эчмиадзинского престола вело попечительную политику, то с этого времени стало осуществлять репрессивную политику, что получило свое воплощение в начале XX в. Это политика ярко выразилась в законе 12 июня 1903г., захватившим имущество и капитал Армянской церкви. Новый закон отрицательно приняли не только армянские священнослужители но и армянское общество. Имея в виду некоторые обстоятельства во внутренней и внешней политике, царизм вынужден был отказаться от секуляризации. Высочайшим указом 1 августа 1905 года все имущество и капитал Эчмиадзина царизм вернул законному владельцу. Но на этом не закончились, попытки лишить армянской церкви самостоятельности путем стеснительных мер. Активным сторонникам этой политики был премьер-министр П. А. Столыпин, которому противостояли сторонники гибкого подхода - наместник Кавказа Воронцов-Дашков и министр иностранных дел Извольский. Эта напряженность длилась до 1912г. когда Петербург утвердил католикосом Геворга V. С этого времени завершается противостояние и начинаются мирные отношения, что было обусловлено обострением международных отношений, когда Россия готовилась вновь сценарировать Армянский вопрос.

Satenik Avoyan – *Interrelations between Armenian apostolic Church and tsarist autocracy 1900-1914.* – At the beginning of XX century interrelations between Armenian apostolic Church and tsarist government entered a new period. The fact, that if 90s of XIX Russia carried out patronage policy towards Cathedral of Ejmiacin, then at the beginnings of 90s of XIX century it has changed by repressive policy, which got its active embodiment at the beginning of XIX century. That policy was brightly reflected into a law, which was adopted on June 12, 1903, wherewith estate and capital of Armenian Church were occupied by tsarist autocracy. The new law was negatively adopted not only by Armenian clergy, but also by Armenian society, but against the use of two years struggle was crowned with success. Taking into account a number of internal and external circumstances on August 1, 1905 by order of the highest, tsarism had to return the whole occupied estate and capital to their rightful owner. However, this wasn't the end, tsarism continued to deprive the independent of Armenian Church, tsarism tried to impose restrictive measures. P. A. Stolypin, who was the Minister of Internal Affairs, was the apologist of that policy, whose efforts, however, was connected with Russian's internal and external policy issues, and these issues came into collision with the Viceroy of Caucase Voroncov Dashkov's and Minister of Foreign Affairs A. Izvolvsky's resistance. This tension continued till 1912, when St. Petersburg seated in a Patriarchal chair George VI. Thus, the conflict was ended and peace talks began in the area, which was again conditioned by international complex conditions, especially as Russia was again going to stage the Armenian Questions.

ПАРТИЙНАЯ ЭТИКА В ВОПРОСАХ МОРАЛИ И СЕМЕЙНЫХ ОТНОШЕНИЙ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ В 1920-30-ЫХ ГОДАХ

ГАГИК ЖАМГАРЯН

Судя по фактическому материалу, относящемуся к партийной жизни 1920-30-ых годов, поведение коммуниста в семье и его отношение к семейным ценностям в целом являлись важнейшими характеристиками партийной этики, главными составляющими портрета партийца. Это объясняется тоталитарным характером коммунистической партии, подразумевавшей партийный контроль даже в семейных отношениях. Основной целью этого контроля было обеспечение в семье партийца атмосферы, соответствующей идеалам партийной преданности. Известная мысль Н.К. Крупской „в своей личной жизни коммунист должен всегда руководствоваться интересами коммунизма”²²⁴ представляла собой главный принцип для любой коммунистической семьи. Таким образом, партия внедряла в общественное сознание этакую модель „пролетарской семьи”, где главными критериями были принадлежность к классу пролетариата, сознательная преданность его идеалам. В своих мемуарах Х.Барсегян описал случай, когда молодой коммунист отказывается от своей жены, дочери одного из богатых жителей села. Обращаясь к жене, он говорит. „...Кулак и батрак враги друг другу, нам необходимо разойтись. Секретарь нашей парторганизации говорит: „Или партия, или дочь кулака!” Я выбрал партию...Я готов всем пожертвовать ради партии, ты понимаешь, всем?!”²²⁵. Во время чисток многие кандидаты на членство или члены партии вынуждены были отвечать на подобные вопросы: „Ваша жена дочь кулака. Какие материальные отношения связывали вас?”, или „какие взаимоотношения были у вас с вашим тестем-кулаком?” и т.д.²²⁶. В протоколе заседания контрольной комиссии парторганизации Эчмиадзинского райкома Компартии Армении от 2-ого января 1925 года о некоей Србуи Гарибджанян принято следующее решение: „Исключить из партии как пассивную, находящуюся под влиянием беспартийного мужа, оторванную от партии, впадавшую под влияние кулаков, после замужества погрязшую в интригах против партийных товарищей”²²⁷. Можно предположить, что партия не реагировала бы так остро, если бы муж этой женщины разделял ее политические взгляды. Еще один пример наглядно показывает, как партия внедряла свою теорию классовой борьбы в семейные отношения. В 1928г. двое братьев-коммунистов, работающие на станции Гамарлу (ныне в городе Арташат-Г.Ж) прилюдно отреклись от своего отца, чтобы остаться в партии. Приведем отрывок из протокола закрытого заседания ко-

²²⁴ Партийная этика (документы и материалы дискуссии 20-х годов), под ред. А.А Гусейнова и др., Москва, 1989г.,стр.11

²²⁵ **Барсегян Х.**, Так прожили, Ереван, «Айастан», стр. 56

²²⁶ НАА, ф.91, оп.2, д.275, стр. 27

²²⁷ НАА, ф.91, оп.1, д.50, стр. 1

мячейки станции Гамарлу по этому делу: „Зачитан материал о Санасаре и Самсоне Варданянах, из которых Санасар является членом ячейки станции и начальником станции. Выяснилось, что братья Самсон и Санасар, будучи сыновьями кулака, чтобы остаться членами партии, представили документ, по которому они якобы живут отдельно от отца, но на самом деле они всегда оказывали ему существенную хозяйственную помощь, что еще больше усилило эксплуатацию труда в семье”²²⁸. Из этой формулировки неясно, каким образом родной отец мог эксплуатировать собственных сыновей. В протоколе это объясняется тем, что отец-кулак, используя факт, что его сыновья члены партии, да еще и железнодорожники, периодически пользовался их проездными билетами. Но самой интересной частью протокола являются свидетельства сотрудников станции, которые доказывают, что братья на самом деле не отказывались от отца, а только делали вид. И в доказательство приводят тот факт, что, когда отец-кулак конфликтовал с работником станции по поводу его сына, ухажера его дочери, то Самсон Варданян был там и угрожал пистолетом этому человеку, чтобы отстоять честь сестры и отца²²⁹. Причем, заметим, что в протоколе акцент ставится не на это противозаконное деяние Самсона Варданяна, а именно на то, что он и его брат на самом деле не отказывались от отца-кулака.

По сути, партия прямо или косвенно ставила перед своими членами вопрос о пролетарской преданности делу партии на уровне семейных отношений. В итоге семья становилась до такой степени политизированной, что в ней зачастую споры возникали не по личным мотивам, а из-за идейно-политических разногласий. Например, в газете „Ашхатанк” („Работа”) был напечатан небольшой очерк под названием „Бытовая буря” о том, как председатель месткома одного из заводов противится желанию жены крестить детей в церкви: „Давай устроим крестины в рабочем клубе, с друзьями, забудь отсталую, гнилую церковь”, на что жена отвечает: „Нет, мои дети должны стать христианами!”. В подтексте этого очерка можно легко увидеть нетерпимость партии по отношению к религии, чем и эта ссора из бытовой становится идеологической.

Следует отметить, что церковный брак для партийца в Советской Армении тоже считался грубейшим нарушением партийных норм, за что коммунист мог быть исключен из рядов партии²³⁰.

Вышеизложенные факты не свидетельствуют о явном наличии требования отказа от семьи со стороны партии. Просто партийные идеологические установки, представления о классовой борьбе, о безоговорочной нетерпимости ко всем классово чуждым элементам создавали подобную атмосферу, когда жертвование семейными отношениями в угоду партийным интересам считалось значительным, ценным качеством коммуниста. В 1922 году один из членов партии, разведчик, с целью получения разрешения для поездки в Тифлис направил письмо в ЦК, в котором пишет: „...Партийная дисциплина заставляет меня забыть мать, сестру, сыновние и братские обязанности, но я не могу подвергнуть голоду и мучениям ста-

²²⁸ НАА, ф.91, оп.2, д.286, стр. 51

²²⁹ Там же

²³⁰ См. НАА, ф.91, оп.1, д.2(а), стр. 2

рую и беспомощную мать и сестру, поэтому прошу не отказать мне и отправить на работу в Тифлис”²³¹.

Особенно партийная нетерпимость к социально-классовым чуждым подходам в семейных отношениях усилилась в годы сталинских репрессий, которые в Армении начались с 1936-ого года. В то время общественно-политическая реальность настолько сильно влияла на семейные отношения, что распады семей зачастую были связаны с политическими мотивами, нежели с бытовыми или личными. Самая ужасная реальность того времени заключалась в том, что понятие „враг народа” стало разделяющей чертой для казалось бы неразделимых родственных уз. Люди отказывались от самых близких им людей, которые попадали под это определение, доносили на родных, чтобы отвести от себя подозрения, чтобы выжить в это поистине смутное время. Приведем пример: В стенгазете Армхозпрофкооп в 1936г. была приведена статья „Троцкиста исключили из партии”. В ней говорится о том, что муж Сатик Варданян Каро Шахбазян, являясь членом партии с 1921 по 1929 год, был исключен из партии как троцкист. Несмотря на это С. Варданян состояла с ним в переписке. А, услышав весть о контрреволюционном самоубийстве А. Ханджяна, она заплакала и сказала, что ей очень жаль²³². (Агаси Ханджян- первый секретарь ЦК КП(б) Армении в 1930—36 гг. был застрелен в кабинете Л.Берии по распространенной версии им же 9-ого июля 1936 года. Его убийство было использовано для преследования многих партийных и государственных деятелей Советской Армении-Г.Ж.).

После этой статьи начались преследования Сатик Варданян и она, защищаясь, отправила ответ на статью в газету „Заря Востока” под заголовком „Я не с ним”. Самым примечательным в этой статье является то, что, стараясь защитить себя и своего ребёнка, она оправдывается за поддержку связи с собственным мужем. Характеризуя письменную связь с ним „как чисто семейные отношения”, Сатик Варданян пишет, что её отец не разрешает ей разводиться с мужем, но она, будучи не в силах выносить „гнилую бытовую и идейную обстановку” в семье, окончательно решила порвать с мужем²³³. Здесь она приводит причину развода, которая выгодна партии – царящая в семье идейная троцкистская атмосфера. Из этой статьи невозможно составить представление об истинных взаимоотношениях Сатик Варданян и её мужа, но это один пример того, как напряженная обстановка 1930-ых непосредственно влияла на семейную жизнь членов партии. Таких примеров можно привести множество. Жена отказывалась от мужа, дети от родителей, брат от брата и т.д.

Общая нездоровая морально-психологическая атмосфера в обществе, сложившаяся в годы Большого Террора, делали также невозможным закрытость, так сказать интимность, семейных отношений, что, естественно, неприемлемо с точки зрения этических соображений, но что вполне было допустимо партийной идеологией, которая требовала искать „врагов народа” всюду, быть внимательным ко всем, и, естественно, этим семейные отношения во многом становились публичными. Например, житель Еревана Саркис Искандарян в 1936 г. в своем письме в

²³¹ НАА, ф.1, оп.2, д.36, стр. 117

²³² НАА, ф.91, оп.2, д.656, стр.34

²³³ Тамже, стр. 30

контрольную комиссию партии пишет о своих соседях. Он сообщает, что коммунист Арамаис Егиазарян не вмешивается в дела соседей по двору, чтобы никто на него не обижался. В доносе он сообщает также, что жена Арамаиса просит, чтобы он снял большой портрет Сталина со стены: „Арамаис джан, очень тебя прошу, уничтожь портрет этой собаки, порви, выбрось вон, куда ни пойду, эта собака следит за мной. Арамаис, дорогой, порви, выбрось, я очень боюсь его... И Арамаис, чтобы успокоить Маню, снял со стены портрет Сталина, порвал и выбросил...”, – написано в заявлении²³⁴. Подобные нетактичные действия по отношению к семейной жизни товарища по партии, соседа или просто знакомого в годы сталинских репрессий поощрялись партией, их всегда можно было объяснить преданностью партии и ее вождю. Идеологическая атмосфера, создаваемая коммунистической партией, способствовала обобществлению семейной жизни партийца – его поведение в семье, прошлое и настоящее членов семьи, родственников, их политические взгляды, их работа, даже разговоры в семейном кругу были темами, обсуждаемыми внутри партии, особенно в период культа личности.

В таких условиях, казалось, коммунисты, как и все люди, должны были стремиться сохранить в тайне подробности своей семейной жизни. Однако вызывает удивление та искренность, с которой коммунисты порой делятся подробностями своей семейной жизни с партийными органами. Это не было самоцелью, о чем свидетельствуют следующие примеры.

Политзаключенный Арменак Асесян, который работал в Беюк Веди учителем, в 1930 году из тюрьмы пишет заявление партийным органам. В заявлении он пытается обосновать свою невиновность, считая виновниками его ареста свою жену и ее любовника. В пространном заявлении Асесян подробно излагает историю соблазнения его жены председателем одной из комячеек местной партийной организации Веди Суреном Израеляном, пишет о том, как, войдя в преступный сговор с его женой, оклеветали его. Заявление Асесяна отличается искренностью и эмоциональностью в описании подробностей семейной жизни, что свойственно большинству подобных документов. Автор этого заявления пытается найти поддержку и защиту в лице партийных органов, способ восстановить справедливость и исправить допущенную в его деле ошибку²³⁵.

Своей искренностью отличается также заявление некоей Рипсима Мкртчян, адресованное Тбилисской контрольной комиссии, которое должно было быть отправлено в город Ереван. Здесь Р. Мкртчян подробно описывает и своих детей, и свое бесправное положение в семье свёкра, притеснение со стороны свёкра, свекрови и мужа, бедственное положение её и детей в то время, как муж „покупает золотые изделия для своей матери, и в настоящее время она владеет золотыми украшениями и жемчугом на сумму 2-3 тысячи рублей”²³⁶. Все это заявление проникнуто болью измученной притеснениями и унижительной жизнью женщины, которая, по сути, не предъявляет никаких конкретных требований, а просто, описывая свою несчастную жизнь, делится этим с партийными органами.

²³⁴ НАА, ф.91, оп.2, д.656, стр. 15

²³⁵ НАА, ф.91, оп.2, д.340, стр. 73-77

²³⁶ НАА, ф.91, оп.2, д.340, стр. 98-99

Подобное заявление представлено также жительницей села Мец Парни Джаваир Мугнеян, которое она адресовала ЦК компартии Армении. Описывая свою тяжелую жизнь, женщина просит вернуть домой мужа, который учится в Москве, который тайно от нее „женится на какой-то мешчанке”. У нее нет средств содержать всех четверых детей, и она хочет отдать их на воспитание мужа²³⁷. Эта искренность и откровенность перед партийными органами подчеркивала статус „родной коммунистической партии” в обществе, в сознании людей. Компартия старалась таким образом держать под контролем идеологическую атмосферу, царящую в семьях, и поэтому старалась реагировать на все анонимные заявления, письма, которые обсуждались и по которым выносились соответствующие решения. Таким образом, семья как социальный институт становилась одной из главных составляющих общественной жизни, и в силу установленной в Советской Армении партийного единовластия она также оказалась под контролем партийных органов. Поскольку атмосферу в семье компартия определённым образом связывала с политическими взглядами партийцев, с их преданностью делу партии, бытовые проблемы превращала в темы для обсуждения. В свою очередь, эти обсуждения, критика различных бытовых проблем частной жизни становились причиной обобществления семьи партийца в Советской Армении. Это явление можно считать достаточно распространенным особенно в 30-ых годах.

Идеологический аппарат партии держал под контролем не только атмосферу, царящую в семьях партийцев, но и их морально- нравственные ориентиры, считая, что они должны соответствовать нормам, установленным партией. О том, что такие нормы существовали и что их нарушение приводило к нежелательным для коммуниста последствиям, свидетельствует фактографический материал тех лет. Даже вышеизложенные письма жен партийцев свидетельствуют о том, что зачастую женщины прибегали к этой форме воздействия на своих мужей, поскольку были не в силах вернуть их в семью или заставить их выполнять свои обязанности отца и мужа. В этих письмах и заявлениях они стараются всеми силами представить моральный облик своих мужей в невыгодном свете. Следовательно, эти женщины знали, что партия придает большое значение вопросам нравственности и сознавали, что их заявления и письма не останутся без ответа. „...Муж изменил свое отношение ко мне. Он высмеивает меня и детей, бьет нас... Это его поведение привело меня к мысли, что он связан с другой женщиной”²³⁸. Это фрагмент письма жены партийца, и таких писем в адрес высших партийных органов было много. То, что подробности частной жизни и в особенности моральный облик коммуниста считались его определяющими характеристиками, подтверждается также тем обстоятельством, что в 1920-30-ые годы, когда компартия проводила чистку в своих рядах, коммунистов могли признать неблагонадежными и исключить из рядов партии не только по идеологическим или политическим соображениям, но также из-за грубого нарушения этических норм. Одного из таких коммунистов, например, выгнали из партии за моральное разложение, в связи с чем он проявил недовольство, изложив его в пространном письме к первому секретарю ЦК КП(б) Ар-

²³⁷ НАА, ф.91, оп.2, д.340, стр. 116

²³⁸ НАА, ф.91, оп.2, д.656, стр. 111

мении А. Костяню. Автор письма ввязывается в весьма любопытную дискуссию насчёт подходов партии к вопросам морали, давая им оценку как чрезвычайно суровые. В письме встречаются такие рассуждения: „...Обращает на себя внимание то, что комиссии (имеются в виду контрольные комиссии-Г.Ж) большое внимание уделяют решению „бытовых” проблем, не жалеют энергии и усилий для этого, а „половая” проблема занимает такое большое место, что, считаясь главной опасностью, подверглась артиллерийскому обстрелу, ею заняты военнопольные силы комиссии, и ряд коммунистов были приговорены к политической смерти как солдаты мощной крепости, как „половые извращенцы”. Интересно то, что это выражение взято в узком значении этого слова, и этот номенклатурный пункт используется даже в том случае, когда кто-то из коммунистов интересовался другим коммунистом, или что по взаимному соглашению были близки, а это стало причиной чистки коммуниста. Без сомнения, нет никаких аргументов, и более или менее умный коммунист не отрицает половое воздержание, говоря партийным языком-соблюдение партийной этики, вряд ли найдется товарищ, который будет сторонником такой точки зрения, что коммунисты не должны быть приличными и порядочными, что на эту задачу не надо обращать внимания и т.д. Однако это положение не отрицает и того, что, учитывая жестокие законы природы, не лишенный половых чувств коммунист может иметь в этой области некоторые упущения, тем не менее он может участвовать в борьбе партии, может быть способен присоединить свои силы к силам партии, он может исправиться, к нему можно применить сравнительно мягкие пункты наказания, не лишая его права принадлежать партии, особенно в тех случаях, когда этот товарищ не имел даже предупреждений со стороны партии. И я думаю, что подобный подход более справедливый, по моему мнению, более здоровый и объективный²³⁹.” Из письма следует, что идеологические подходы партии по вопросам морали были особенно строгими по отношению к коммунистам. Важнейшим, обязательным качеством образа истинного коммуниста считалось его ответственное отношение к семейным обязанностям, неприемлемость внебрачных связей и т.д. В одном из отчетов партчиков 1931 года, например, приведены фамилии коммунистов, исключенных из партии именно из-за несоответствия по этим качествам. Приведем пример из этих отчетов: „Член Ленинанканской партийной организации М. Ованесян, чья семья проживала в селе, не разведенный с женой, официально проживает в городе с другой женщиной, которая из потребкооп получает пособие его детей. Он отправил письмо в село, которое недостойно коммуниста. В этом письме он пишет, что убьёт себя и т. д.”²⁴⁰. В отчете указывается, что подобные болезненные явления были выявлены во всех проверенных сельских парторганизациях. Таким образом, становится ясно, что свобода нравов осуждалась партией, что партия защищала семью, как важнейший социальный институт, и не только защищала, но еще и контролировала, как важнейшее звено в установлении тотального контроля над общественным сознанием в целом. Однако и здесь заметны двойные стандарты. Нами уже отмечалось, что классовые подходы партии настолько сильно вторгались в семейную жизнь пар-

²³⁹ НАА, ф.1, оп.10, д.57, стр. 43-44

²⁴⁰ НАА, ф.91, оп.2, д.393, стр. 4

тийцев, что очень часто становились причиной разрушения семьи по причине так называемой „классовой несовместимости”. Однако ни в одном документе не находятся подтверждения тому, что партия осудила факты развода с сыном или дочерью кулака, отказа от родителей или родных, если они оказывались „социально чуждыми элементами”, „врагами народа” и т.д. Отсюда следует, что партийная идеология имела собственное, классовое понимание морали, что и сводилось к существенным корректировкам морального облика коммуниста. Короче говоря, если коммунист отказывался от жены коммунистки, это осуждалось, но если жена была дочерью кулака, или сама была непартийной, в таком случае этот поступок, наоборот, считался моральным. Этот подход отражает главный принцип, которым руководствовалась партия в морально-этических вопросах. Этот принцип характеризовал А.А. Солыц, говоря, что „для партии интересы борьбы, интересы революции являются, так сказать, мерилom, по которому мы оцениваем хорошо ли мы поступаем, или плохо”²⁴¹.

Заключение

Исходя из вышеизложенного, можно сделать несколько выводов. Коммунистическая партия в Советской Армении в 20-30-ых годах стремилась утвердить единоличную власть, и прежде всего эта власть должна была установиться над общественным сознанием. Для этого партийная идеологическая машина всеми средствами старалась внедрить в общественное сознание миф о „родной партии”, которая способна решить даже житейские проблемы, возвратить сбежавших мужей, воспитать их и т.д. Таким образом, партия обеспечивала своё присутствие даже в сфере частных отношений, выступая гарантом общественной морали. Однако взятые на вооружение идеи о классовой борьбе, о нетерпимости к классовому врагу придавали партийной морали специфический характер. Таким образом, под защиту партии попадали так сказать „пролетарские семьи”, которые соответствовали всем идеологическим нормам.

ЛИТЕРАТУРА

1. Барсегян Х., *Так прожили*, Ереван, „Айастан”, 1984г. 432с. (на армянском)

Опубликованные источники

2. *Партийная этика (документы и материалы дискуссии 20-х годов)*, под ред. А.А. Гусейнова и др., Москва, „Политиздат”, 1989г.-509с.

Архивные источники

3. Партколлегия комиссии партийного контроля по части Армении при ЦК ВК(б)П-ф.91, оп.1, д.2(а), 50, оп.2, д. 36, 275, 286, 340, 393, 656, оп.10, д.57

²⁴¹ Партийная этика (документы и материалы дискуссии 20-х годов), под ред. А.А. Гусейнова и др., Москва, 1989г., стр.11

Գագիկ Ժամհարյան – Կուսակցական էթիկան բարոյականությանը և ընտանիքին վերաբերվող հարցերում Խորհրդային Հայաստանում 1920-30-ական թթ.: – Հոդվածում քննարկվում են կուսակցական էթիկային և 1920-30-ական թթ. Խորհրդային Հայաստանի կոմունիստների ընտանեկան հարաբերությունների վրա դրանց նորմերի թողած ազդեցություններին վերաբերվող հարցեր: Ինչպես հայտնի է՝ Խորհրդային Միությունում կուսակցական մենատիրությունը հանգեցրեց ամբողջատիրական կառավարման համակարգին: Կուսակցական գաղափարախոսությունը հանդիսանում էր հանրային գիտակցությունը վերահսկելու միջոց: Այս պայմաններում վերահսկողության ենթարկվեցին նաև այն հարաբերությունները, որոնք նախկինում, որպես կանոն, չէին առնչվում քաղաքական իրողությունների հետ: Կուսակցական նորմերը, որոնց կատարումն առաջին հերթին պարտադիր էր կոմունիստների համար, նրանց ընտանեկան կյանքը դարձրեցին հրապարակային, քննարկվող և կախված այն չափանիշներից, որոնք սահմանված էին կուսակցական գաղափարախոսությամբ: Կուսակցության վերաբերմունքը ընտանեկան արժեքներին, ինչը հոդվածում ներկայացվում է արխիվային նյութի հիման վրա, ցույց է տալիս այդ վերաբերմունքի ձևավորման համար պրոլետարիատի դասակարգային պայքարի վերաբերյալ գաղափարների առաջնայնությունը, ինչը կործանարար ազդեցություն է ունենում ավանդական ընտանեկան հարաբերությունների վրա:

Gagik Zhamharyan – Communist party's ethics on the morality and family relations in Soviet Armenia in 1920-30's. – The article deals with question of impact of party's (political) ethics on relations in communist families in Soviet Armenia in 1920-30 's. As it is known, party's absolute rule led to the creation of a totalitarian regime in all Soviet Union. In same time communist ideology was an instrument of control over mass consciousness. In such circumstances, the control over society reached family relationships, what wasn't touched with these political realities before. However, party's rule and ethics first of all obligated to the member of Communist party, made their family life and relations public, discussed and dependent on the standards of ideology. Attitude of Communist party towards family values, how is considered mostly on basis of archive materials, shows harmful primacy of idea of struggle of classes over traditional family values.

1795թ. ՇՈՒՇԻԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 33 ՕՐԸ

ՖՐՈՒՆԶԵ ՄԱՅԻՆՅԱՆ

1795թ. գարնանը Ղազվին քաղաքի մոտակայքում կենտրոնացվեցին Աղա-Մահմեդ խանի զորքերը՝ բանակային 3 կորպուսից բաղկացած. ընդհանուր թիվը կազմում էր 60 հազար իրանցի սարքազ և իլյաթ /ցեղերի աշխարհագորայիններ/: Այնուհետև դրանք վերատեղաբաշխվեցին Արդեբիլ քաղաքի և Նախիջևանի մոտակայքում, որտեղ հարձակման համար ելակետային դիրքեր գրավեցին Արաքսի իրանական ափի երկայնքով:

Իրանական զորքերի հիմնական ուժերը կենտրոնացված էին Արդեբիլի մոտակայքում՝ Թալիշի խանությունից հարավ: Այստեղից իրանական երկու կորպուս պետք է գործողություններ ծավալեին մերձկասպյան և Ղարաբաղի ուղղություններով, իսկ երկրորդը՝ Երևանի ուղղությամբ: Առաջին երկու կորպուսների ընդհանուր հրամանատարությունը ստանձնեց Աղա Մահմեդ խանը: Ասլանդուզի գետանցի մոտ անցնելով Արաքսը, իրանական կորպուսն ամենակարճ ճանապարհով սլացավ դեպի Լեռնային Ղարաբաղ՝ Շուշի՝ նպատակ ունենալով տապալել Ղարաբաղի խան Իբրահիմին և ջախջախել Անդրկովկասի խանությունների խառը բնակչությամբ անհաստատ դաշնադրությունը, որի առաջնորդն էր Իբրահիմ խանը:

Աղա Մահմեդ խանի և նրա Ղարաբաղյան գործողությունների նախագիծը մշակել էին ֆրանսիացի ռազմական խորհրդատուները, ըստ որի գրավելու էին Շուշին, այնուհետև Գանձակով, Շամխորով և Աղստևով անցնելու Վրաստան: Կուր գետի ճյուղաբերանում նրանց պետք է միանար Ալի Ղուլի խանի /Աղա Մահմեդ խանի եղբայր/ կորպուսը, որը գործում էր Երևանի ուղղությամբ և սպասելու էր Սևանից հյուսիս-արևմուտք, որտեղից միացյալ ուժերը պետք է շարժվեին Թիֆլիս, գրավեին և հրդեհեին Վրաստանի մայրաքաղաքը: Դրանով Աղա Մահմեդ խանը կպատժեր Հերակլ 2-րդի դավաճանությանը՝ Ռուսաստանի հետ Գեորգևսկի պայմանագիրը կնքելը: Այսպիսով՝ Վրաստանում կվերականգնվեր Իրանական տիրապետությունը:

Սակայն Շուշիի երկարատև պաշարումը, որը տևեց 33 օր, Նախիջևանի և Երևանի պաշտպանների ու նրանց՝ Հերակլի կողմից օգնության ուղարկած վրաց աշխարհագորայինների համատ դիմադրողականությունն արգելակեցին ռազմական գործողությունների ընթացքը և որոշակի փոփոխություններ մտցրին Աղա Մահմեդ խանի Անդրկովկասի ծրագրերի մեջ:

Les points litigieux les plus importants de la théorie des parties du discours en français sont:

- la nécessité de la distinction des parties du discours
- les principes de leur distinction
- leur inventaire
- la hiérarchie de ces catégories

La nécessité de distinguer dans une langue les parties du discours est contestée par la grammaire formelle distributive d'une part et, de l'autre, par certaines théories négligeant les différences de structure entre les unités sémantiques de la langue. Pour distinguer les parties du discours, on avance différents critères:

- essentiellement sémantiques
- exclusivement formels
- sémantico-grammaticaux

Ces derniers sont les plus convaincants.

L'inventaire des parties du discours en français n'est pas établi de façon définitive. Selon les auteurs, leur nombre varie de 7 à 12. Tous les linguistes distinguent en traitant pareillement le nom et le verbe, alors que les autres parties du discours soulèvent des controverses qui portent surtout sur les problèmes suivants:

- nom de nombre (classe à part, adjectif ou déterminatif)
- déterminatif (classe à part, pronom ou adjectif pronominal)
- article (la partie du discours indépendante, variété de déterminatifs, élément morphologique du substantif)
- particule (classe à part ou adverbe)
- mots-phrases (classe à part ou adverbes)

Selon le classement de tous ces éléments, on voit varier sensiblement les limites de certaines autres parties du discours (adjectifs, pronoms et adverbes).

Les 3 critères qui sont à la base de la distinction des parties du discours sont intimement liés entre eux. C'est le sens catégoriel qui détermine les catégories morphologiques et les fonctions syntaxiques du mot. En fin de compte, les parties du discours se déterminent par leur valeur dénominate, c'est-à-dire par ce que les mots représentent et par la façon dont ils le représentent. Selon le mode de dénomination on distingue les parties du discours essentielles et subsidiaires. Les premières reflètent la réalité et nomment les choses d'une façon discontinue, indépendante et directe. Les parties du discours subsidiaires désignent la réalité globalement (interjections, mots-phrases), de façon non-indépendante ou indirecte. Selon le caractère des objets reflétés, on distingue, parmi les parties du discours essentielles, les verbes, les substantifs, les adjectifs, les adverbes et les numéraux, qui expriment respectivement les substances, les processus (actions, états), les caractéristiques des substances ou des processus et les nombres. On compte 4 classes de mots-outils en français: déterminatifs (article), prépositions, con-

jonctions, particules. Ainsi on trouve 12 parties du discours en français (5 – essentielles, 7 – subsidiaires).

Les mots-outils servent à constituer la forme syntaxique d'un mot autonome, à l'actualiser, à remplacer un terme de proposition, à lier les termes ou les propositions entières, à exprimer la modalité de la proposition en entier.

Quant à la hiérarchie des parties du discours essentielles, les linguistes divisent 3 théories:

- la théorie de l'égalité et de l'interdépendance du nom et du verbe;

Ces 2 espèces principales sont subordonnées respectivement à 2 espèces: adjectifs et adverbes

- la théorie nominocentrique qui part de la valeur dénomminative des mots et place au sommet de la hiérarchie le substantif, seul susceptible de nommer les choses de façon absolument autonome;

le verbe et l'adjectif se subordonnent au substantif, l'adverbe – à ces derniers

- la théorie verbocentrique qui prend pour base le rôle constituant du mot dans la phrase et voit le terme régissant absolu dans le verbe qui a sous sa dépendance le nom et l'adjectif

Chacune de ces théories met au premier plan l'un des traits existant dans la réalité linguistique.

Aucune des parties du discours n'est homogène. On peut y distinguer le noyau et la périphérie. Les mots du noyau possèdent toutes les catégories grammaticales essentielles de la partie du discours donnée et remplissent les fonctions syntaxiques qui sont les fonctions primaires de cette espèce de mots. Les mots périphériques ne possèdent pas toutes les catégories de sa partie du discours en remplissant souvent les fonctions qui sont celles d'une autre partie du discours.

L'instabilité des limites entre les parties du discours se trouve à la base de la transposition fonctionnelle, c'est-à-dire du passage d'un mot à une autre catégorie. On distingue 2 variétés ou étapes de la transposition:

- morphologique où le mot quitte définitivement sa partie du discours
- syntaxique où le mot sans sortir de sa catégorie ne fait que remplir la fonction d'une autre partie du discours

Les moyens de transposition sont la dérivation, la conversion, les constructions analytiques. La transposition fonctionnelle peut être accompagnée d'un rétrécissement de sens du terme transposé.

Prenant en considération tout ce qui était exposé dans ce travail, le français existant plusieurs siècles a beaucoup de problèmes linguistiques qu'on ne peut pas résoudre jusqu'à présent. Et maintenant toute la guilde des linguistes tâchent de le faire et tirer la seule conclusion.

BIBLIOGRAPHIE

1. E.A. Référovskaja, A.K. Vassiliéva, *Essai de grammaire française*. 1973, Léninegrad
2. V.F. de Saussure, *Cours de linguistique générale*, Paris, 1969
3. A.E. Михневич, *Проблема частей речи и типы словообразования*. Ленинград, 1993.

4. N. Steinberg, *Grammaire française*. Moscou, 1966, Léningrad.

Աիդա Մարդանյան, Մանե Աղբալյան – Խոսքի մասերի դասակարգման խնդիրները ֆրանսերենում: – Խոսքի մասերի ավանդական դասակարգումը գոյություն ունի շատ վաղ ժամանակներից: Որքան էլ որ այս խնդիրը համարվի ուսումնասիրված, գիտնականները այն համարում են ոչ կատարյալ: Բառերի տարասեռ բնույթը պայմանավորում է նրանց դասակարգման տարբեր սկզբունքները: Խոսքի մասերի դասակարգման հիմքում դրված են `

1. Բմաստային չափանիշը /Շ.Բալլի, 1932թ./
2. Բմաստային և կառուցվածքային չափանիշները միաժամանակ /Տեսնիեր, 1966թ./
3. Շարահյուսական ցուցանիշները /Սովաժո, 1962թ. /
4. Ձևաբանական, շարահյուսական, իմաստային ցուցանիշների ամբողջությունը /Գիրո, 1967թ./

Ֆրանսերենի խոսքի մասերից ոչ մեկը միասեռ չէ: Նրանց միջև եղած սահմանների անկայունության պատճառը փոխանությունն է:

Նկատի առնելով այն, ինչ շարադրված է այս հոդվածում, ֆրանսերենն ունի խոսքի մասերի դասակարգման հետ կապված լեզվաբանական խնդիրներ:

Այժմ լեզվաբանների մի մեծ խումբ փորձում է լուծել այդ խնդիրները և հանգել եզրակացության:

Aida Mardanyan, Mane Aghbalyan – *The principles of the classification of the Parts of speech in French.* – The traditional classification of the Parts of Speech has existed since the early times. However studied the question may be, the scientists consider it not be complete.

The different concepts of different words is just the basis of the principles of the classification.

The classification of the Parts of Speech is based on:

1. conceptual criteria (Ch.Bally, 1932)
2. conceptual and structural criteria at the same time (Tesniere, 1966)
3. syntactic indexes (Sauvageot, 1962)
4. morphological, syntactic and conceptual indexes (Guiraud, 1967)

Taking into consideration everything that is written in the article, there are linguistic problems connected of the Parts of Speech in French.

Nowdays a great group of linguists are trying to solve these problems and to come to a conclusion.

**ԳԵՐԻՇԽՈՂ ԲԱՐՈՅԱ-ԷԹԻԿԱԿԱՆ
ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ԱՆԳԼԵՐԵՆԻ ԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ-
ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

ՏԻԳՐԱՆ ԽԱՌԱՏՅԱՆ

Մշակույթի գերիշխող բարոյա-էթիկական հասկացությունների բացահայտման բարդությունը գործուն լեզվական կտրվածքում պայմանավորվում է փորձառական նյութի անսահմանափակությամբ՝ տեքստերի տարաբնույթ տիպերի ժամանակակից առատության դեպքում:

Դարձվածաբանական պաշարը, որպես լեզվական նյութ, կիրառելը թույլ է տալիս սահմանափակել հետազոտության սահմանները և, հետևաբար, ստանալ բավականաչափ հավաստի արդյունքներ:

Դարձվածաբանական միավորները, իրենց իմաստաբանության մեջ արտացոլելով ժողովրդի մշակույթի զարգացման երկարատև գործընթաց, ամրագրում և սերնդից սերունդ են փոխանցում մշակութային կանխորոշիչ դրույթներ ու կարծրատիպեր, չափանմուշներ և արքետիպեր: Դարձվածայնությունները (ֆրազեոլոգիզմները), ըստ Ֆ.Բ. Բուսլանի, ինքնատիպ միկրոաշխարհներ են, դրանք իրենց մեջ պարունակում են և՛ «բարոյական օրենք, և՛ առողջ բանականություն, որոնք արտահայտված են հակիրճ ասույթով, որ ավանդել են նախնիները՝ սերունդների դեկավարման համար» [5, էջ 34]: Լեզվի դարձվածաբանական պաշարում անկրկնելի ձևով հոչակվում է ազգի ոգին և ինքնատիպությունը:

Յուրաքանչյուր կոնկրետ լեզվում դարձվածայնությունները, ի տարբերություն լեզվի բառային կազմի, նշում են աշխարհի միայն առանձին, մարդու և նրա կենսագործունեության համար հրատապ դրվագներ: Դարձվածաբանական հասկացություններ ասելով՝ հասկանում ենք կարևոր սոցիալ-մշակութային իմաստների բառային արտահայտման գործընթացը՝ կայուն լեզվական պաշարի միջոցով: Դարձվածայնությունները մեծամասամբ գոյություն են ունեցել մի քանի հարյուրամյակ, դրանք պարունակում են գիտելիք, որ կարևոր է ժողովրդի համար, և արտացոլում են հոգեկերտվածքի գծերը, որոնք երկարատև ժամանակի ընթացքում բնորոշ են ժողովրդի համար: Դա թույլ է տալիս խոսել այն մասին, որ դարձվածայնությունները պատկերացում են տալիս մարդու առավել հաստատուն բարոյական արժեքների մասին՝ ամրագրելով նրա կյանքի էթիկական կողմի ազգային առանձնահատկությունը:

Աշխարհի դարձվածաբանական պատկեր ասելով (ԱԴՊ) մենք պետք է հասկանանք ճանաչողական մոդելը, որի կառուցվածքը պայմանավորվում է ճանաչողական գործընթացների հետ փոխգործակցող՝ լեզվական համագործակցության մշակութային, սոցիալական և աշխարհագրական կյանքի գործոնները:

Դարձվածաբանության մեջ այսօր առավել ակտիվ հետազոտվող ուղղություններից մեծ ուշադրություն է դարձվում ընդհանուր ճանաչողական-իմացաբանական բաղադրիչով միավորված դարձվածաբանական միավորներին [7]: Մեզ

համար կարևոր է, որ լեզվում ընդհանուր վերախմաստավորված պատկերավոր բովանդակությամբ մի շարք դարձվածայնությունների գոյությունը այն մասին, որ աշխարհում գոյություն ունի ինչ-որ նախատիպային իրավիճակ, որը տվյալ մշակույթներում առաջացնում է որոշակի գնահատողական վերաբերմունք: Այսպիսով դատելով հակառակից՝ կարելի է եզրակացնել, որ դարձվածաբանական միավորների քանակից, որոնք անվանում են այս կամ այն բարոյական սկզբունքը կամ զգացումը, կարելի է դատել տվյալ սկզբունքի կամ զգացումի կարևորության մասին՝ մշակույթի շրջանակներում:

Քանի որ մեր խնդիրն է՝ ընդհանուր ճանաչողական-իմացաբանական բաղադրիչով միավորված խմբերի բացահայտումը, անհրաժեշտ է կանգ առնել ներկայումս լեզվաբանության մեջ գոյություն ունեցող՝ դարձվածայնությունների նշանակության կառուցվածքի հանդեպ մոտեցումների վրա:

Ժամանակակից դարձվածաբանության շրջանակներում դարձվածաբանական նշանակության կառուցվածքի հանդեպ գոյություն ունեն մի շարք մոտեցումներ, որ մշակվել են տարբեր լեզուների նյութի վրա [3; 4; 10; 11; 9; 13; 17; 18; 19; 16; 15]:

Ինչպես հայտնի է «դարձվածաբանական նշանակություն» տերմինը լեզվաբանության մեջ ներմուծվել է 1964 թ.-ին երկու հեղինակների կողմից՝ իրարից անկախ [6; էջ 758]:

Դարձվածաբանական նշանակության առանձնացումը հատուկ իմաստաբանական կատեգորիայով իրականացվել է բառագիտական և դարձվածաբանական միավորների գործառնական-իմաստաբանական վերլուծության ընթացքում: Դարձվածաբանական նշանակությունը՝ որպես իմաստաբանական երևույթ դեռ գտնվում է գոյաբանական իմաստավորման փուլում, քանի որ երկար ժամանակ տվյալ տերմինով նշել են դարձվածայնության բովանդակության պլանը՝ առանց ամրագրելու լեզվաբանական հատուկ հասկացության: Դարձվածաբանության՝ որպես գիտության գոյության ժամանակաընթացքում ձևավորվել են երկու հիմնական մոտեցում՝ դարձվածաբանական նշանակության հետազոտության հանդեպ. անվանաբանական (onomasiology) և իմաստաբանական (semasiology):

Դարձվածաբանական անվանաբանության կայացման գործում հիմնավոր դեր են խաղացել Վ.Լ. Արխանգելսկու գաղափարները՝ դարձվածայնության նշանագիտական էության վերաբերյալ, որոնք դարձվածաբանական նշանակության հետազոտություններն ուղղորդում են դեպի անվանական իմաստաբանության հունը՝ իրոյթից մարդկային գիտակցության մեջ դրա արտացոլումից դեպի անուղղակի - ածանցյալ նշանիմաստ [տես՝ 4]: Այդպիսի մոտեցման մեթոդաբանական հիմք է ծառայում լեզվաիմացաբանական սկզբունքը՝ «դարձվածաբանությունը ժողովրդի ոգին է»:

Դարձվածաբանական իմաստաբանությունը օգտագործումը է դարձվածաբանական անվանաբանությանը հակառակ հետազոտման ռազմավարության դարձվածաձևից, նրա բովանդակության պլանից դեպի նշանակվող իրոյթ: Նրա ուսումնասիրման առարկա է հանդիսանում դարձվածաբանական միավորի իմաստաբանական կառուցվածքը, որ դիտարկվում է ուղղակի, անուղղակի և անուղղակի-աձանցյալ՝ տարբեր կառուցվածքային ու բովանդակային բնույթի դեմոտատիվ (նշանակվող) և կոնոտատիվ (համանշանակվող), ակտուալ (գործող) և պոտենցիալ, ինտեգրալ (ամբողջական) և դիֆերենցիալ (տարբերակող), պար-

տաղիր և ֆակուլտատիվ (լրացուցիչ), իմաստային միավորի և իմաստային միավորների հավաքականության տերմիններում: Դարձվածաբանական նշանակության կառուցվածքի հանդեպ իմաստաբանական հիմնադիրը կարելի համարել Ա.Վ. Կունինին, որն արտահայտել է այն միտքը, թե դարձվածաբանական նշանակության հետազոտությունը պետք է ուղղված լինի դարձվածաբանական միավորների իմաստաբանական կառուցվածքի իմաստային տարրերի ներքին դինամիկայի մեխանիզմների ուսումնասիրմանը՝ դարձվածային միավորների ձևավորման և դարձվածայնացման գործընթացներում [10]:

Շատ գիտնականներ այն կարծիքին են, որ դարձվածաբանական միավորի իմաստաբանական կառուցվածքն ավելի լայն է նրա նշանակությունից, քանի որ չի սպառվում միայն նշանակող, նշանակվող և համանշանակվող կողմերով, այլ սահմանվում է նաև ամբողջ կազմավորմամբ, նրա քերականական նշանակության տիպով, օրինակ՝ թվի կամ հոլովի, մենիմաստությամբ կամ բազիմաստությամբ, ինչպես նաև համակարգային խոսքային կամ լեզվական կապերով [7]:

Դարձվածայնությունների իմացաբանական կառուցվածքի բացահայտման բարդությունը, Ա.Վ. Կունինի կարծիքով, բացատրվում է դարձվածաբանական նշանակության վերաիմաստավորված բնույթով, այնտեղ ներհյուսված տարբեր ասպեկտներով, դարձվածայնությունների առանձին կազմավորմամբ և նրանց շարահյուսական կառուցվածքի բարդությամբ, որի ընդգրկումը շատ նշանակալի է և ներառում է միագագաթ դարձվածաբանական միավորներից մինչև բարդ նախադասությունների ընթացքը: Դրա հետևանքով՝ տարբեր աշխատանքներում դարձվածայնությունը կոչվում է բարդ նշան, մեզանշան կամ բառարանային նշանների համակցում, բաղադրիչ կամ բաղադրիչ վերլուծական նշան, առանձին նշան և այլն [7, էջ 135]:

Ա.Վ. Կունինի դարձվածաբանական նշանակության հայեցակարգը առավել շատ հայտնի հայեցակարգերից մեկն է հանդիսանում: Բոլիովի նշանակության կառույցում հեղինակն առանձնացնում է երեք կողմ՝ նշանակող (հասկացության բովանդակությունը, որն իրականացվում է այդ նշանակությամբ), նշանակվող (հասկացության ծավալը, որն իրականացվում է (դետտատի) նշանակվող օբյեկտի ընդհանրացնող հատկանիշների նվազագույն մասնատման հիմքի վրա, այսինքն՝ միատեսակ առարկաների բացառիկ օբյեկտների կամ վերացական նշանակությունների ամբողջ մի դասով և համանշանակվող. լեզվական և խոսքային միավորներում գտնվող տեղեկությունը՝ դրանց առարկայատրամաբանական բովանդակությունից զատ): Դարձվածայնության նշանակության կառուցվածքում հատուկ նշանակություն և հատուկ դեր է խաղում, Ա.Վ. Կունինի կարծիքով, համանշանակությունը, որն ունի բարձր տեսակարար կշիռ և իր մեջ ներառում է հետևյալ բաղադրատարրերը՝ հուզական, արտահայտչական, գնահատողական և ռճական: Համանշանակության բոլոր չորս տիպերը կարող են հանդես գալ միասին տարբեր կապակցություններում կամ բացակայել ընդհանրապես [7, էջ 175-187]:

Համանշանակության տարրերի փոխհարաբերությունը տարբեր դարձվածայնություններում կարող է չհամընկնել: Մակայն որքան էլ նշանակալից լինի համանշանակվող տարրը դարձվածայնությունների նշանակության մեջ, այն չի փոխում դրանց անվանողական գործառնությունը, ինչը համոզիչ կերպով ապացուցված է նրանով՝ համանշանակությունը չի կարող գոյություն ունենալ առանց ա-

ռարկայական բովանդակության հետ կապի: Դարձվածաբանական և բառագիտական նշանակության նմանությունը պայմանավորվում է նրանց համատեղ անվանողական գործառնությամբ, բայց և դարձվածաբանական միավորը հարաբերակցվում են իրականության միևնույն տարրերի հետ և կարող են ունենալ միևնույն նշանակությունը: Եվ այդնուհանդերձ բառի և դարձվածաբանական միավորի նշանակությունը ունեն անվիճելի նմանություն իրենց նշանակվող իմաստում՝ շնորհիվ անվանողական գործառնության և բառային-քերականական հարաբերակցվածության: Քանի որ դարձվածաբանական միավորների առարկայական բովանդակությանը, չնայած համանշանակվող բաղադրամասի կարևորությանը, նշանակության առաջատար բաղադրամասն է, մենք հնարավոր ենք համարում առաջիկայում դարձվածայնությունների նշանակության նշանակվող կամ նշանակող բաղադրամասի՝ ըստ Ա.Վ. Կունինի հետազոտության ժամանակ կիրառել նշանակության բաղադրամասային վերլուծության մեթոդը:

Ն.Ֆ. Ալեֆիբենկոն, հետազոտելով դարձվածաբանական նշանակության խնդիրը անվանաբանական մոտեցման շրջանակներում, նշում է, որ «ցանկացած լեզվի դարձվածայնությունների մեծ մասը որպես իր նշանակվող օբյեկտ ունի այն երևույթները, որոնք վերաբերում են սոցիալական հարաբերությունների ոլորտին, և անվանում են մարդկանց միջև ծագող բազմապիսի կապեր ու փոխգործակցությունների» [2, էջ 156]:

Հաղորդակցման իրավիճակները, որ կարգավորում են մշակույթում ընդունված էթիկական նորմերով, հիմք են հանդիսանում արտալեզվական իմաստների ձևավորման համար, որ բառային կերպ են ստանում իմաստային կառուցվածքում, որը հետագայում ծառայում է դարձվածաբանական նշանակության կազմավորման արտալեզվական աղբյուր: Այսպիսով, ազգային մշակույթի մասին տեղեկություն կարելի է ստանալ՝ ուսումնասիրելով դարձվածաբանական միավորման ներքին ձևը, քանզի այստեղ առկա են մշակույթի «հետքերը»՝ առասպելներ, արքեոտիպեր, ավանդույթներ, արտացոլվող պատմական իրադարձություններ ինչպես նաև դասակարգելով Դարձվածայնությունների կողմից առավել սերտորեն անվանվող արտալեզվական իմաստները:

Դարձվածայնությունների ներքին ձևի վերլուծությունը թույլ է տալիս ստանալ մերձենալու հնարավորություն էթնոսի նյութական մշակույթին, այն ժամանակ երբ՝ դասակարգելով լեզվի դարձվածաբանական պաշարի կողմից, առավել հաճախակի անվանվող արտալեզվական իմաստները, կարելի է հավաստի եզրահանգումներ անել մշակույթի գերիշխող միավորների արժեքավորության, բարոյա-էթիկական իմաստների մասին, որոնք կազմում են ժողովրդի հոգևոր մշակույթի հիմքը: Ժամանակակից անգլերենի բրիտանական տարբերակի դարձվածաբանական պաշարի հետազոտությունը դարձվածայնությունների համատարած ընտրություն-քաղվածք մեթոդով, որ ներկայացնում են մարդու հարաբերությունները հանրությամբ և նրա վերաբերմունքն ինքն իրեն՝ «Իդեալ-Ես» դիրքորոշումից և, համապատասխանաբար, նշանակվող նշանակությամբ պարունակում են «self-esteem» (ինքնահարգանք) և «attitude to society» (վերաբերմունք հանրության հանդեպ)՝ տրված դարձվածաբանական բառարանների հիման վրա (Oxford Dictionary of English Idioms, Longman Dictionary of English Idioms, Արդի հայերեն բացատրական բառարան Է.Բ. Աղայան, Հայերեն դարձվաքծների ընդարձակ բացատրական բառարան, Պետրոս Բեդիրյան, Большой англо-русский

фразеологический словарь А.В. Кунина և այլն), ցույց է տվել, որ բրիտանական մշակույթի համար առավել կարևորությամբ աչքի են ընկնում հետևյալ բարոյա-էթիկական իմաստազաղափարային հակադրությունները՝ «reserve/restraint - lack of reserve/restraint» (109 դարձվ. միավոր) - զսպվածություն - անզսպվածություն, «honour - dishonour» (69 դարձվ. միավոր) (պատիվ, արժանապատվություն-անպատիվ, անարժան), «honesty - dishonesty» (57 դարձվ. միավոր) (ազնվություն - անազնվություն), «justice - injustice» (43 դարձվ. միավոր) (արդարություն - անարդարություն), «independence - dependence» (38 դարձվ. միավոր) (անկախություն - կախվածություն), «modesty - pride» (34 դարձվ. միավոր) (համեստություն - հպարտություն), «responsibility - irresponsibility» (27 դարձվ. միավոր) (պատասխանատվություն - անպատասխանատվություն):

Հասկացության կառուցվածքի վերծրության ելման կետ կարելի է ընտրել «իմացաբանական չափումների» ամբողջ մի շարք՝ հասկացության անուն-ներկայացուցիչների բնորոշիչ-ստորոգիչ համադրության վերլուծությունը, նրա անդրադարձը լեզվի դարձվածաբանական պաշարում, կամ նրա բառային-իմաստաբանական դաշտի բացահայտումը:

Մենք հետազոտության ելման պահ ենք ընտրել թվարկված չափորոշիչներից վերջինը, քանի որ հասկացության ներկայացուցիչների բառային-իմաստաբանական դաշտի կառուցվածքի բացահայտումը ապահովում է անմիջական մուտք դեպի հասկացության զուգորդական բաղադրիչը. դրանց միջև գոյություն ունեն զուգահեռականության հարաբերություններ: Չնայած այն բանին որ հասկացության բովանդակությունը զգալիորեն ավելի լայն է բառի նշանակությունից, և հասկացությունը կարող է ներկայացվել ոչ միայն լեզվի միջոցով, այլ նաև ցանկացած այլ նշանային համակարգերով՝ շարժումների լեզվից մինչև երաժշտություն և կերպարվեստ, բնական լեզուների բառային համակարգերը հանդիսանում են լեզվամշակութային հասկացությունների իրականացման հիմնական միջոց: Հասկացության ներկայացուցիչ-անունների բնորոշիչ - ստորոգիչ զուգակցվողության վերլուծությունը խոսակցության պայմաններում և նրա դարձվածաբանական ու ասոցիաբանական ներկայացվածության պայմաններում թույլ է տալիս առանձնացնել փոխաբերությունները, որոնք կազմում են հասկացության պատկերային միջուկը, որոշել այս կամ այն հատկանիշի կարևորությունը նրա կառույցում և նկարագրել արժեքավոր կողմը [5; էջ 268]: Բառային միավորների ընտրության համար, որոնք իրացնում են հասկացությունը, նպատակահարմար է օգտագործել հոմանիշների բառարանները, բացատրական և հանրագիտարանային բառարանները: Հենց բառարանային բնորոշման մեջ է թաքնված բառի տրամաբանական - առարկայական բովանդակությունը, գիտակցությամբ արտացոլված պատկերը, իրական աշխարհում առարկաների փոխադարձ կապերը:

Բառային-իմաստաբանական դաշտերի վերլուծությունը, որոնք ներկայացնում են մեր կողմից առանձնացված՝ հասկացության ոլորտի արժեքավոր գերակայությունները թույլ է տվել եզրակացնել, որ բրիտանական բարոյա-էթիկական հասկացության ոլորտի միջուկային տարր է հանդիսանում «honour» (պատիվ) հասկացությունը: Տվյալ հասկացությունը հանդիսանում է մեր կողմից բացահայտված գերակա հասկացություններից միակը, որ որպես զուգորդական բաղադրիչ կոնստիտուտներ է ներառում մեր կողմից առանձնացված բոլոր արժեքային գերակայությունները: Այն փաստը, որ «honour»-ը դարձվածաբանա-

կան պաշարում ներկայացված է դարձվածաբանական միավորների ավելի քիչ քանակով, քան «reserve/restraint»-ը, բացատրվում է վերջինիս սահմանային (մարգինալ) բնույթով, նրա պատկանելությամբ բարոյա-էթիկական և հուզական ենթահասկացութաւորտների հատման գոտուն: «Reserve/restraint» հասկացությունը ներկայացնող դարձվածաբանական միավորների ճնշող մեծամասնությունը միաժամանակ հանդիսանում է հուզական հասկացությունների առարկայացման միջոց:

Անգլերենի բրիտանական տարբերակի հոմանիշների բառարանի և տեղեկատու բառարանի նյութի հիման վրա honour միջուկային բառիմաստի հոմանիշային և զուգորդական շարքերի վերլուծության միջոցով մեր կողմից բացահայտվել հետևյալ նախաօրինակային իմաստները, որ ձևավորում են հասկացության զուգորդումային բաղկացուցիչը.

1. հարգանք, պատվում (homage, deference, esteem, estimation, reputation, repute, respect, regard, reverence, respectability, reward, authority, admiration, adoration, worship, praise commendation, exaltation, veneration, tribute, honorableness, award),

2. փառք, հանրահայտություն (acknowledgement, celebrity, fame, globalization, glory, renown, recognition, prestige, eminence, illustriousness, laudation, notability),

3. հավակնոտություն, մեծամտություն (ambitious, loftiness, superiority, pride, pomp, formality, gravity, solemnity, ceremoniousness),

4. սեփական արժանապատվության զգացում (dignity, pride, self-respect, self-esteem),

5. մեծություն, կատարելություն (gradeur, greatness, importance, impressiveness, lordliness, magnificence, majesty, excellence, prowess worthiness, worth),

6. հավատարմություն, հուսալիություն (truthfulness, trustworthiness, reliability, faithfulness, fidelity, confidence, dependability loyalty),

7. քաղաքավարություն («good manners») (decency, civility, delicacy, courtliness, politeness, grace, etiquette, propriety),

8. ազնվություն, արդարություն (honesty, straightforwardness integrity, probity, rectitude, righteousness, fair play, justice, justness),

9. սոցիալական բարձր կարգավիճակ (standing, stature, status, stateliness, distinction, prominence, prosperity, privilege),

10. համեստություն, անարատություն (modesty, chastity, innocence, fairness, maidenhead, purity, virginity),

11. ազնվություն (high-mindedness, nobility, nobleness, noble-mindedness),

12. պարտքի զգացում, պատասխանատվություն (duty, conscience, conscientiousness),

13. զավաճություն (calmness, reserve, composure),

14. անկախություն (independence, detachment) [14;15]

Անգլերենի դարձվածաբանական պաշարի հետազոտությունը ցույց է տալիս, որ «honour» հասկացության զուգորդական բաղկացուցիչ կառուցվածքում առավել կարևոր են հանդիսանում «հարգանք, ակնածանք» և «սեփական արժանապատվության զգացում» բնորոշումները: Դարձվածաբանական բառարանները [9, 10] առաջարկում են դարձվածաբանական միավորների հետևյալ շարքը, որ իրենց

կառուցվածքում բովանդակում են «to have respect» իմաստային միավորը կամ «to show great respect to somebody» միավորն և ունեն բարելավման գնահատական. to hold smb in reverence (հարգել ինչ-որ մեկին, ակնածել մեկից), to stand one's dignity (մեծ արժանապատվությամբ իրեն պահել, պահանջել ին հանդեպ հարգանք), take off one's hat to smb. (մեկի հանդեպ հարգանք ցուցաբերել, խոնարհվել մեկի առջև, գլխարկը հանել), to do/pay homage to smb (մեկին հարգանք ցուցաբերել հարգել, պատվել մեկին), a clean sheet/slate (նոր էջ), a one's good name (բարի անուն, լավ վարկանիշ), pay a tribute to (արժանին մատուցել, հարգանքի տուրք մատուցել): Դարձվածայնությունների մի ամբողջ շարք միավորվում են «to lose respect/self-respect» կամ «to make smb lose respect/self respect» իմաստով. to stab one's reputation (վնասել ինչ-որ մեկի բարի անունը), a blot on one's reputation (ինչ-որ մեկի վարկանիշի վրա բիծ քաշել), loss of face (նվաստացում, բարի անվան, համբավի կորուստ), to lose credit with smb. (բիծ թողնել սեփական վարկանիշի վրա), to lower one's credit (արատավորել սեփական վարկանիշը), to drag smb through the mire/mud (ինչ-որ մեկին ցեխին հավասարեցնել), to kiss/lick the dust (հողին հավասարեցնել, նվաստանալ, սողալ), to feel cheap (նվաստացման, զգացում ունենալ), to cast an imputation (a reflection) on (ստվեր գցել ինչ-որ մեկի վարկանիշի վրա), to trample (tread) under foot (ինչ-որ մեկի արժանապատվությունը ոտհարել), to ride (trample or walk) roughshod over smb. (ինչ-որ մեկի մարդկային արժանապատվությունը ոտնահարել), to fling (sling or throw) mud at smb (ինչ-որ մեկի վրա ցեխ նետել), to dirty (soil) one's hands (on smb, with smth) (նվաստացնել իրեն, կեղտոտել ձեռքերը, կորցնել բարի անունը), lick smb's boots/shoes (նվաստանալ, ինչ-որ մեկի կրունկները լիզել), to make oneself cheap (կորցնել սեփական արժանապատվության զգացումը, կորցնել ինքնահարգանքը), one's name is mud (անունը, վարկանիշը ընկած է), to set at naught (քամահրանքով վերաբերվել ինչ-որ մեկին, բանի տեղ չդնել), to be dead/lost to shame (կորցնել ամոթը, արժանապատվությունը), to bring shame on oneself/on smb (ինքն իրեն, ինչ-որ մեկին ամոթով անել), beneath one's dignity (սեփական արժանապատվությունից ցածր), a blot on one's escutcheon/copybook (ամոթալի բիծ, արատավորված վարկանիշ պատիվ):

Վ.Ի. Կարասիկը «dignity» (արժանապատվություն) հասկացությունը դասում է սոցիալապես յուրահատուկ հասկացությունների շարքում և սահմանում է, որպես «սեփական արժանապատվության ազնվական այն մարդկանց մոտ, որ գիտակցում են իրենց սոցիալական բարձր կարգավիճակ» [4, էջ 32]: Ընդ որում հեղինակ նշում է, որ ազգային և սոցիալապես յուրահատուկ հասկացությունների միջև հստակ սահման չկա: Ըստ երևույթին, օրինաչափ չի լինի հստակ սահման անցկացնել «dignity» հասկացությունների միջև՝ դրանց տարբեր կարգավիճակ հաղորդելով ազգային հասկացության ոլորտում: «Honour» հասկացությունը ի սկզբանե ձևավորվել է որպես սոցիալապես յուրահատուկ հասկացություն (Վ.Ի. Կարասիկի տերմինաբանությամբ): Պատիվը հանդիսացել դասային առանձնաշնորհ, որ տարբերակել է ազնվականությանը մյուս բնակչությունից: Արևմտյան մշակույթում պատիվը կապված է եղել ինքնահաստատման հետ հանրային: Կուրտուազական ժամանակաշրջանում առանցքային բառիմաստ է հանդիսացել են ֆրանսերենից վերցված «honour» բառիմաստ, որ ներկայացրել է այդ հասկացությունը: Ավելի ուշ dignity բառիմաստը առավել հաճախ գործած-

վող է դարձել՝ որպես դասային առանձնաշնորհի անվանման ձև: Ժողովրդավարական ավանդույթների զարգացման հետ, որ կապված են հումանիստական գաղափարների տարածման և Անգլիայում բուրժուական հարաբերությունների զարգացման հետ (մոտավորապես XVIII դարից), honour բառիմաստը սկսում է կիրառվել ավելի լայն իմաստով: Ընդ որում ակնհայտ է, որ «սոցիալական կարգավիճակ» հատկանիշը շարունակում է պահպանել «honour» հասկացության կառուցվածքում, և honour բառիմաստը հաճախ ծառայում է որպես նրա արտահայտման միջոց: Հետևյալ օրինակներում, որ ներկայացնում են հասկացության խոսքային իրականացումը, հաստատվում է հետևյալ կերպ.

«If you give me your **word of honour as a nobleman and gentleman** that nobody but I have been drinking my whiskey, I'll accept your statement» [W.S. Maugham, «Of Human Bondage»].

Sir William Lukas had been formerly in trade in Meryton, where he had made a tolerable fortune and **risen to the honour of knighthood** by an address to the king during his magoralty [J. Austen, *Pride and Prejudice*].

These ladies were deferentially received by Miss Temple, as Mrs. and the Misses Brocklehurst and conducted to **seats of honour** at the top of the room [Charlotte Bronte, «Jane Eyre»].

Հասկացության կառուցվածքում, դատելով բացահայտված զուգորդնիչների քանակից, նշանակալից դերով առանձնանում են «մեծություն, կատարելություն» և «քաղաքավարություն» (good manners) հատկանիշները: Վերջինիս գերիշխող բնույթը բացատրվում է բրիտանական մշակույթում առկա միտումով՝ արտաքնապես ցուցադրել ներքին արժանիքները: «Մեծություն, կատարելություն» հատկանիշը մեր կողմից բացահայտվել միայն «honour» հասկացության կառուցվածքում, այն արտացոլում է հասկացության վառ գնահատողական ներուժը և հաստատում է այն փաստը, որ «honour» հասկացությունը հանդիսանում է հասկացության ռոբորտի միջուկը:

Հասկացության ռոբորտի կառուցվածքում առավել կարևորություն ունեն «restraint, reserve», «honesty», «justice», և «independence» հասկացությունները [8, էջ 314]: «Honesty» հասկացությունը բրիտանական ազգային գիտակցության կողմից չի առանձնացվում «justice» հասկացությունից, ինչը մեծ չափով ուժեղացնում է նրա հրատապությունը: «Honesty» հասկացությունը ներկայացնող ֆրագետոգիզմների ճնշող մի քանակ միաժամանակ ծառայում է որպես «justice» հասկացությանը առարկայացնող միջոց: Վերջին երեք դարում (XII դ-ից վերջից) բրիտանական բարոյաէթիկական հասկացությունների ռոբորտի կառուցվածքը նշանակալի կառուցվածքային փոփոխություններ չի կրել: «Independence» հասկացությունը հրատապություն է ձեռք բերել ժողովրդավարական ավանդների ուժեղացման և բրիտանական ազգի՝ առանձին անհատի արժեքների պաշտամունքի զարգացման ընթացքում: «Temperence» հասկացության նշանակության պահպանումը հաստատվում է «restraint/reserve» հասկացության գերիշխող բնույթով, որը հանդիսանում է նրա տեսականիշը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Алефиренко Н.Ф., *Фразеологическое значение и концепт* // Когнитивная семантика: Мат-ли 2-ой международной школы-семинара по когнитивной лингвистике. Ч.2 – Тамб.: Изд-во Тамб. ун-та, 2000. – с. 33-36
2. Алефиренко Н.Ф., Золотых Л.Г., *Проблемы фразеологического значения и смысла*: Изд-во АГПУ, 2000. – 220 с.
3. Амосова Н.Н., *Основы английского фразеологии*. – Л.: Изд-во Ленингр. Ун-та, 1963. – 203 с.
4. Карасик В.И., Прохвачева О.Г., Зубкова Я.В., Грабарова Э.В., *Иная ментальность*. – М.: Гнозис, 2005. – 352 с.:
5. Кононова И.В., *Структура и языковая репрезентация британской национальной морально-этической концептосферы (в синхронии и диахронии)*: дисс. На соиск. учен. степ. д-ра филол. наук: 10.02.04. – СПб.: СПбГУЭФ, 2010. – 361с.
6. Кунин А.В., *Основные понятия фразеологии как лингвистической дисциплины и создание англо-русского фразеологического словаря*: дис. д-ра филол. н. – М., 1964.
7. Кунин А.В., *Курс фразеологии современного английского языка*: 2-е изд., перераб. – М.: Высш.школа, 1996. – 380 с.
8. Маслова В.А., *Номо lingualis в культуре*. – М.: Гнозис, 2007. – 320с.
9. Никитина Т.Г., *Проблемы изучения этнокультурной специфики фразеологии*. – Псков: ПГПИ, 1998. – 205 с.
10. Смирницкий А.И., *Лексикология английского языка*. – М.: Омен, 1998. – 260 с.

Բառարաններ

11. Է.Բ. Աղայան, *Արդի հայերեն բազմադասական բառարան*, Երևան, 1976:
12. Պետրոս Բեդիրյան, *Հայերեն դարձվաբանների ընդարձակ բազմադասական բառարան*, Երևան, ԵՊՀ հրատ. 2011, 1408 էջ:
13. БАРФС – Кунин А.В. Большой англо-русский фразеологический словарь. – М.: Рус. Яз. Медиа, 2006. – 1210 с.
14. ССААЯ – Девлин Дж. Словарь синонимов и антонимов английского языка. – М.; Центрполиграф, 2005. – 559 с.
15. GES – Grabb's English synonyms: Arr. Alph. With complete cross ref. throughout/by George Grabb. – London: Routledge & Kegan Paul, 1982. – 716 p.
16. LDEI – Longman dictionary of English idioms. – 12th impr. – Harlow; London; Longman, 1989. – 387 p.
17. ODE – Oxford Dictionary of English. – 2nd ed. / ed. By Catherine Soanes, Angus Stevenson. – Oxford: Oxford univ. press, 2003. – 1345p.
18. ODEI – Oxford Dictionary of English Idioms/ A.P. Cowie, R. Mackin & I.R. McCaig. – Oxford; Oxford univ. press, cop. 1993. – 685 p.
19. ODTWG – Oxford Dictionary, thesaurus, and word power guide / ed. by Catherine Soanes. – Oxford; Oxford univ. press, 2001. – 1542 p.

20. OED – Oxford English Dictionary <http://www.oed.com>
21. OTE – Oxford Thesaurus of English. – 2nd ed. / ed. by Maurice Waite. – Oxford: Oxford univ. press, 2004. – 1060 p.
22. PDSA – The Pan dictionary of synonyms and antonyms/ ed. by Laurence Ur-dang & Martin Maner. – London; Sydney; Pan books, 1981 – 346p.

Тигран Харатян – *Картина доминантных морально-этических концепций в лексико-фразеологической системе современного английского языка.* – В статье автор представил и обсудил сложность раскрытия преобладающих морально-этических понятий культуры в продуктивном языковом отрезке, что связано с безграничностью экспериментального материала в случае современного изобилия текстов различных типов. Поэтому обращение к фразеологическому фонду как к языковому материалу позволяет ограничить границы исследования и, следовательно, получить довольно достоверные результаты. В структуре сферы понятия наибольшее значение имеют концепции “restraint, reserve”, “honesty”, “justice”, и “independence”.

Фразеологические единицы, отражая в своей семантике длительный процесс развития культуры народа, фиксируют и передают из поколения в поколение определяющие культурные положения и стереотипы, образцы измерения и закрепления.

Tigran Kharatyan – *Image of Dominant Moral-Ethical Notions in Modern English Lexico-Phraseological System.* – In the article the author has been representing and discussing the exposure difficulty of dominant moral-ethical notions of culture in functional language aspect, which is arranged by the limitation of empiric material in the case of modern amplitude of various types of texts. Thus, the phraseological word-stock as a language material makes the author limit the margins of the research and however, acquire quite reliable results. The notions such as “restraint, reserve”, “honesty”, “justice”, and “independence” are more important in the sphere of concept structure. Phraseological units set and transfer cultural preventive provisions and stereotypes, gauges and pinning from one generation into another with their meaning reflecting prolonged process of development of nation’s culture.

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

ԶԱՐՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Բառարաններում «Ժարգոն» բառը սահմանվում է՝ որպես «սոցիալական որևէ խմբին բնորոշ խոսք», ինչպես նաև «նույնականացման մի գործառույթ, որը հնարավորություն է տալիս տվյալ խմբի անդամներին փոխադարձաբար ճանաչել միմյանց, և իրենց տարանջատումը հասարակության մյուս խմբերից արտահայտել իրենց խոսելաձևի տարբերությամբ»:

Այս սահմանումը կարող է վերաբերել նաև «verlan»-ին՝ ժամանակակից երիտասարդության ժարգոնային լեզվին Ֆրանսիայում, քանի որ արտահայտում է որոշակի մշակութային տարբերություն և մարզինալ նմանություն, որը հատուկ է արվարձանների և ֆրանսիացի երիտասարդության մի հատվածին: Ուստի, կարելի է ասել, որ ժարգոնը միաժամանակ սոցիալ-լեզվաբանական և հասարակական երևույթ է Ֆրանսիայում:

Ցանկացած լեզու զարգանալու միտում ունի: Այն լեզուն, որով խոսում են ժամանակակից ֆրանսիացիները, շատ է տարբերվում իրենց նախնիների լեզվից: Ժամանակի և պատմության ընթացքում տեղի ունեցած էվոլյուցիայի արդյունքում երիտասարդների և մեծահասակների բանավոր խոսքում առաջացել են զգալի տարբերություններ: Լսելով, թե ինչպես են խոսում ժամանակակից ֆրանսիացի երիտասարդները, հանգում ենք այն եզրակացության, որ նրանց խոսակցական լեզուն առանձնանում է ֆրանսերենի գրական լեզվից ժարգոնի գործածությամբ:

Ինդիանայի համալսարանի պրոֆեսոր Ա. Վալդմանը, ժարգոնի մասին իր ուսումնասիրության մեջ, խոսում է ֆրանսերենի ժարգոնի մի շարք գործառույթների մասին:

1. Երիտասարդների կողմից ժարգոնի իմացությունը և գործածությունը **տեխնիկական** գործառույթ է: Իրականում, շատ ավելի հեշտ է խոսել կրճատված բառերով: Այսպես, «télévision» ասելու փոխարեն ավելի արագ կարելի է արտահայտվել՝ ասելով՝ «télé»: Շնորհիվ բառերի կրճատման, երիտասարդները խոսում են շատ արագ, հետևաբար խոսքը դառնում է էլ ավելի արդյունավետ:
2. Ըստ Վալդմանի, ժարգոնի երկրորդ գործառույթը **քողարկելու** գործառույթն է: Ժարգոնը հնարավորություն է տալիս խոսողներին թաքցնելու ինֆորմացիան իրենց խմբից դուրս գտնվող մարդկանցից: Նկարագրելով ամերիկյան ժարգոնը, Էքերթը հաստատում է գրեթե նույն տեսակետը: Նա ասում է, որ ժարգոնը առանձնացնում է երիտասարդներին, նրանց տալիս է անհատական խոսք, որով նրանք տարբերվում են ուրիշ խոսողներից: Որպես քողարկող գործառույթ, ժարգոնը բաժանում է այն հասկացողներին չհասկացողներից: Նրանք, ովքեր հասկանում են ժարգոնային խոսքը, կազմում են առանձին խումբ:

3. Վալդմանը, որպես ժարգոնի գոյության մի այլ պատճառ, նշում է նրա **արտահայտիչ** լինելու գործառնությունը: Դեռահասների համար ժարգոնը նաև **նույնականացման** գործառնությո է: Նրա գործածությունը պայմանավորված է երիտասարդների միմյանց հետ նույնականանալու ձգտմամբ: Նրանք միավորվում են նրանց հետ, ովքեր խոսում են նույն լեզվով, ովքեր նման են իրենց: Սակայն ժարգոնը նաև հեռացնում ու մեկուսացնում է երիտասարդներին իրենց շրջապատող աշխարհից: Ի դեպ, ասում են նաև, որ ժարգոնը «ընդունելի շեղում է նորմայից՝ ապացուցելու համար, որ նորաձև ես» (Լաբով):

Ակնհայտ է, որ ֆրանսիացի երիտասարդությունը ձգտում է լինել ինքնուրույն և միասնական՝ ընդդեմ այն դասակարգի, որն իրեն ճնշում է: Սոցիալական ճնշումների նկատմամբ ունեցած երիտասարդների բողոքն իր արտահայտությունն է գտել ժամանակակից ռեպ ժանրի ստեղծագործություններում:

Մենք ապրում ենք տեխնոլոգիաների զարգացման դարաշրջանում: Տեղեկատվությունը փոխանցվում է շատ արագ: Երիտասարդները տիրապետում են մեծ տարածությունների վրա իրենց մշակութային հայացքները տարածելու տեխնիկային: Համացանցում գերիշխում է անգլերենը, ուստի օրեցօր մենք ականատես ենք լինում այն իրողությանը, որ երկրագնդի տարբեր ծայրերում ապրող երիտասարդությունը փոխառում են այլ մշակույթներին բնորոշ հատկանիշներ: Ուստի, հենց այս արագընթաց դարաշրջանում է, որ բոլոր ժողովուրդները ձգտում են ունենալ արդյունավետ հաղորդակցության ձև:

Նկարագրելով ֆրանսիացի երիտասարդներին, Սուրդոն բացատրում է, որ գրելու նոր տեսակ է առաջացել՝ SMS: Մենք կորցնում ենք տառերը, որպեսզի հաղորդագրությունն ավելի կարճ լինի: Ըստ նրա, ֆրանսիացի երիտասարդների մոտ ժարգոնի գործածությունը SMS-ի մեջ ավելի ձեռնասու է: Ուստի, SMS-ի լեզուն հասկանալու համար, պետք է դիտարկել ժարգոնի կառուցվածքը: Ուսումնասիրելով ֆրանսիացի երիտասարդների խոսելաձևը, նկատում ենք, որ ամենից հաճախ հանդիպում է բառի կրճատում (truncation des mots): Ինչպես վերևում նշեցինք, այս երևույթը կիրառվում է խոսքն ավելի արդյունավետ դարձնելու համար: Ֆրանսերենում գոյություն ունեն բառի կրճատման մի քանի եղանակներ. օրինակ, կարելի է պարզապես կրճատել «télévision» բառը «télé»-ի, այսինքն կրճատել բառի վերջին մասը: Համանման երևույթ տեղի է ունենում նաև անգլերենում, բայց կրճատվում է բառի առաջին հատվածը՝ «phone», փոխանակ «telephone»: Հաճախ ֆրանսերենում բառի կրճատման ժամանակ վերջավորության վրա ավելացվում է «o», ինչպես օրինակ «resto»՝ փոխանակ «restaurant»: Նմանատիպ երևույթ անգլերենում բացակայում է:

Ֆրանսերենում ժարգոնները կառուցվում են նաև ենթաբարբառներից ածանցված նորաբանություններով, ինչպիսիք են՝ verlan-ը (բառի շրջված տարբերակը) և louchébem-ը (մսագործների ժարգոնը): «Beurr» բառը, որ նշանակում է «արաբ», հաստատուն կիրառություն ունի ֆրանսերենի գրական լեզվում, և խոսողները հիանալի հասկանում են նրա իմաստը: Քանի որ Ֆրանսիան գտնվում է Հյուսիսային Աֆրիկայից շատ մոտ հեռավորության վրա, ուստի արաբական լեզուները գործունե ազդեցություն են ունենում ֆրանսերենի վրա: Արաբական լեզուների ներգործությունը միայն երիտասարդների խոսակցականին չէ, որ առնչվում է: Մեծ է միտումը ֆրանսերեն խոսողների մոտ չտարբերակելու «é»-ն «è»-ից:

Զարմանալի չէ, որ արաբական լեզուները ևս չեն տարբերում այս երկու նշանները (Մուրդո):

Մի ուրիշ հատկանիշ ևս, որը վկայում է ֆրանսերենի վրա արաբերենի ներգործության մասին, դա «d» և «t» բաղաձայների պայթաշփական դառնալն է: Դա երևում է հատկապես ազդեցությամբ արաբ երիտասարդների և արվարձաններում ապրողների մոտ (Ժամեն):

Ի վերջո գոյություն ունի երիտասարդների խոսելաձևի մի ուրիշ բնորոշ գիծ՝ ձգտում միանալու քաղաքակենտրոնացմանը: Ըստ Վալդմանի, երիտասարդ ֆրանսիացիները փոխառում և կիրառում են խոսելաձևի մի տեսակ, որն արտացոլում է քաղաքն իր արվարձաններով: Ակնհայտ է, որ քաղաքային այդ գոտիները ունեն լեզվաբանական ուրույն հատկանիշներ, որոնք իրենց արտահայտությունն են գտնում երիտասարդների խոսակցական լեզվի մեջ: Դիտարկումները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր քաղաքային գոտի և բնակավայր Ֆրանսիայում զարգացնում է իր սեփական լեզուն՝ ածանցված գրական լեզվից: Ֆրանսերենում բաղաձայների պայթաշփականացումը (affrication) և «r»-ի երանգավորումը արտացոլում է աֆրիկացիների և արաբների գործուն ազդեցությունը, որոնք հիմնականում բնակվում են քաղաքի արվարձաններում:

Քաղաքային բարբառների ուսումնասիրությունները փաստում են, որ երիտասարդների խոսելաձևը արտացոլում է այնտեղ ապրող էթնիկ ազգաբնակչության լեզուն (Ժամեն): Եթե անգամ նման խոսելաձևն առաջացել է ֆրանսերենի գրական լեզվի հիմքի վրա, այնուամենայնիվ նրանում առկա է ներգաղթյալների լեզուների կնիքը: Վաթսունական թվականներին ձևավորվեց «*piet noir*» տերմինը, որն արտահայտում էր Հյուսիսային Աֆրիկայից Ֆրանսիա ներգաղթյալներին, հատկապես Ալժիրից հայրենադարձներին: Ութսունական թվականներին նրանց երեխաներին սկսեցին անվանել «*les beurs*»: Այս տերմինը ժարգոնի ստեղծման վառ օրինակ է, որի մասին խոսվեց վերևում: Ընդ որում բառը ստեղծվել է վերլանի եղանակով: Վերցրել են «*les arabes*» բառը, շրջել և ստեղծել մի նոր տերմին, որը հետագայում դարձել է մի առանձին խմբի անուն՝ «*les beurs*»:

Ամփոփելով ասվածը, կարելի է ասել, որ ինչպես գրական լեզուն, այնպես էլ երիտասարդների խոսակցական լեզուն անընդհատ զարգանում է, քանի որ շարունակում են զարգանալ նաև սոցիալական այն պայմանները, որոնք ձևավորում են այդ լեզուն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. A. Valdman, *La langue des faubourgs et des banlieues, de l'argot au français populaire*. French Review, Vol. 73, No. 6, May, 2000.
2. Jamin, Mikael Trimaille, Cyrus et Gasquet-Cyrus, Médéric, *De la convergence dans la divergence: le cas des quartiers puri-ethniques en France*. Journal of French Language Studies, 16.3, 2006.
3. Eckert Penelope, *Language and Adolescent Peer Groups*. The Journal of Language and Social Psychology, Vol. 22, No. 1, March, 2003.
4. Élisabeth Paul, *Étude des régularités morpho-syntaxiques du verlan contemporain*. 1985.

Заруи Аракелян – *Разговорный язык молодежи во Франции.* – В этой статье обсуждается жаргонная речь молодых людей во Франции. Это важная тема, т.к. дает возможность понять какие свойства жаргонной речи молодых выработаны ими, и какие – заимствованы из языка оригинала. Рассматриваются жаргонные функции – опираясь на исследованиях французских и зарубежных авторов. Далее рассматривается структура жаргонных слов, а также воздействие на них СМИ и технологий. Наконец, изучается социальная среда французских городов, где особенно заметно языковое влияние африканцев на французский язык. В конце статьи пришли к выводу – во Франции жаргонная речь молодых людей следствие социальных условий.

Zaruhi Arakelyan – *Youth spoken language in France.* – In this article the slang of the youth in France is discussed. This is an important issue for it gives an opportunity to comprehend which of the features of the youth's speech are formed by them and which ones are taken from the kernel of the language. The functions of the jargon are observed, being based on the investigations of French and foreign authors. Then the structure of jargon words as well as the influence of mass media and technologies on it are examined. Finally the social environment in French cities is studied where the linguistic influence of the Africans on French is highly noticeable. To conclude with, the slang of the youth in France is the result of social conditions.

ՀԱՃՈՅԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՆԿԵՂԾ
ԴՐԱԿԱՆ ԿԱՍ ԿԵՂԾ ԴՐԱԿԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

ՆԱԴԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հաճոյախոսության խոսողական ակտ ասելով հասկանում ենք վարվելակերպի խոսողական ակտ, որն իրենից ներկայացնում է «խրախուսական նշանակությամբ բարձր մակարդակի կառուցվածքային բանաձև, որը կարող է կիրառվել տարբեր իրավիճակներում» (Manes, Wolfson, 1981:123): Հաճոյախոսության հիմնական գործառնությունը գրուցակիցների միջև փոխհարաբերություններում համերաշխություն ստեղծելն ու պահպանելն է:

Պ. Բրաունի և Ս. Լևինսոնի քաղաքավարության տեսության մեջ հաճոյախոսությունը դիտվում է որպես դրական գնահատողական խոսողական ակտ (ԽԱ), որը նվազեցնում է սոցիալական հեռավորությունը հաղորդակիցների միջև (Brown P., Levinson, 1978):

Դրական գնահատողական կամ խրախուսական ասույթները համապատասխանում են դրական քաղաքավարության պահանջներին, քանի որ բխում են գրուցակցի շահերից: Խրախուսանք արտահայտելով՝ խոսողը ցույց է տալիս իր դրական վերաբերմունքը գրուցակցի նկատմամբ: «Հաճոյախոսությունը նպաստում է հաղորդակցվողների փոխհարաբերությունների զարգացմանը, ամրապնդում է միմյանց նկատմամբ համակրանքը» (Шиленко, 1986: 103): Այդ ակտի պերլոկուտիվ արդյունքն է հասցեատիրոջ կատարելության, գերակայության, հեղինակության ամրապնդումը, ինչը հանգեցնում է հասցեատիրոջ հուզական, հոգեբանական վիճակի փոփոխությանը դեպի լավը:

Ըստ իմաստային բովանդակության՝ հաճոյախոսությունները լինում են ուղղակի և անուղղակի: Ասույթն ուղղակի է այն դեպքում, երբ խոսողն ասում է այն, ինչ նա նկատի ունի: Ուղղակի հաճոյախոսության օբյեկտի բնութագիրը արտահայտված է անմիջականորեն, բացահայտ կերպով, հասցեագրողը տալիս է ուղղակի դրական գնահատական հաճոյախոսության հասցեատիրոջ արտաքին տեսքին, ներքին որակներին, արարքներին, անձնական իրերին և այլն: Օրինակ՝

“I think you’re incredible for a fifty-six-year-old woman.” (A. Maupin, Tales of the City)

Սակայն, ինչպես նշում է Ջ. Սերլը, միշտ չէ, որ նախադասության իմաստից կարելի է դատել, թե ինչ է ուզում ասել խոսողը: Ասույթն անուղղակի է այն դեպքում, երբ մի իլլոկուտիվ ակտը իրականացվում է մեկ այլ իլլոկուտիվ ակտի միջոցով (Серъ 1986: 196): Անուղղակի խոսողական ակտում առկա են նպատակի անուղղակի արտահայտման որոշակի կայուն ձևեր, այսինքն այնպիսի լեզվական արտահայտություններ, որոնք, պահպանելով իրենց առաջնային ուղղակի նշանակությունը, պարբերաբար կիրառվում են նաև մի երկրորդ նպատակ արտահայտելու համար: Որպես անուղղակի հա-

ճոյախոսությունների առանձնահատկություն անհրաժեշտ է նշել այն հանգամանքը, որ հասցեատերը ստիպված է ինքնուրույն բացահայտել ասույթի գաղտնի իմաստը՝ հիմնվելով օբյեկտիվ իրականության գիտելիքների և հաղորդակցական իրավիճակի վրա: Հաճոյախոսության վերծանման ժամանակ զգալի դեր է խաղում համատեքստը, ասույթի ուղղակի/բացահայտ բովանդակության հաշվի առնումը:

“Do you know you look exactly like Lola Falana?” (A. Maupin, Tales of the City)

Այս անուղղակի ասույթի ընկալումն իբրև հաճոյախոսություն հիմնված է հասցեատիրոջ կողմից ոչ համատեքստային իրականության, հաղորդակիցների կանխենթադրույթի իմացության վրա: Անհրաժեշտ է տիրապետել հետևյալ բնույթի տեղեկատվությանը. Լոլա Ֆալանան ԱՄՆ-ի ամենահայտնի սևամորթ դերասանուհիներից մեկն է, ով ստացել է «Ոսկե գլոբուս» մրցանակ 1971 թվականին: Ներկայացված օրինակում տեղեկատվության հեղինակը՝ հասցեագրողը, արտահայտելով իր մտքերը անուղղակիորեն, հաճոյախոսության հասցեատիրոջը տալիս է ինքն իր հետ երկխոսության հնարավորություն, որպեսզի վերծանի այս կամ այն ասույթը: Հասցեագրողը հույս ունի, որ վերջինս իր հենքային գիտելիքների շնորհիվ, ընդունակ է ըմբռնելու այն տեղեկատվությունը, որը չի արտահայտվել բացահայտ՝ արտակա կերպով: Այդ դեպքում, որքան ոչ սովորական է հաճոյախոսությունը, այնքան արտահայտչական և անկեղծ է այն հնչում՝ հասցեատիրոջ կողմից պահանջելով մեծ ջանքեր դրա վերծանման համար:

Հաճոյախոսության համատեքստի իմաստային բովանդակությունը, հատկապես երբ նրանում առկա է անուղղակի բաղադրիչ, միշտ կոնկրետ և անհատական է: Անուղղակի բովանդակությամբ հաճոյախոսությունը կարելի է դիտարկել իբրև մաթեմատիկական խնդիր և վերլուծել նրա իմաստը՝ հիմնվելով իմաստային նախադրույթների, նշանների, կանոնների վրա՝ հաջորդաբար կիրառելով հայտնի և անհայտի իմաստային եզրահանգման գործընթացը՝ շեղվելով ուղղակի իմաստային բովանդակության և ընդհանուր խոսքային իրավիճակի կանխենթադրույթից:

Այսպիսով, հաճոյախոսությունը, մյուս խրախուսական ակտերի նման, դիտվում է ներակա-պերֆորմատիվ, արտահայտչական, դրական գնահատողական խոսողական ակտ:

Անգլիական լեզվամշակույթում հաճոյախոսության հասցեագրողների հիմնական հույզերին մենք վերագրում ենք հիացմունքը, համակրանքը, հասցեատիրոջ հանդեպ բարեհաճությունը: Հաճոյախոսության ԽԱ հասցեագրողների հիմնական շարժառիթ-նպատակը ընդունենք որպես հասցեատերերի հուզական վիճակի (ՀՎ) բարելավում:

Փորձենք վերլուծել, թե ինչպիսի շարժառիթներով և մտադրություններով են առաջնորդվում հաճոյախոսությունների հասցեագրողները տվյալ խոսքային գործողության իրականացման ժամանակ: Հայտնի է, որ հաճոյախոսությունների հասցեագրողների մտադրությունները կարող են լինել ինչպես անկեղծ, այնպես էլ կեղծ: Ժամանակակից հետազոտություններում այս հարցը տարբեր տեսանկյուններով է ուսումնասիրվում:

Եթե ելնենք Ե. Ս. Պետելինայի տեսանկյունից, ով հաճոյախոսությունը վերագրում էր շողոքորթության իրականացման ակտ-միջոցների թվին (Pere-

лина, 1986), ապա կարելի է խոսել հասցեագրողների կեղծության մասին: Ուրոշ աշխատանքներում մատնանշվում է հաճոյախոսությունների հասցեագրողների անշահախնդրությունը՝ համապատասխանաբար, անկեղծությունը (Карасик, 1992: 125, Формановская, 2000): Ա.Վեժբիցկայայի աշխատանքում ևս շեշտադրվում է հաճոյախոսությունների հասցեագրողների անկեղծությունը, քանի որ հեղինակի կարծիքով նրանք ցանկանում են հասցեատերերին հաճույք պատճառել՝ նրանց մասին մտածելով ինչ-որ մի լավ բան (Wierzbicka, 1987: 202):

Մեր հետազոտության մեջ մենք համամիտ ենք Ե.Վ. Ջվերևայի տեսակետի հետ, որը ենթադրում է, որ միայն ԽԱ-ի համատեքստի, հաղորդակիցների փոխհարաբերությունների բնույթի, նրանց կարգավիճակների և դերերի ու հասցեատիրոջ արձագանքի վերլուծությունը կարող է օգնել հաճոյախոսությունների համապատասխան դասակարգման հարցում և դրանք վերագրել շողոքորթությանը կամ գովաբանությանը (Зверева 1995): Ավելացնենք, որ այս հարցում կարևորվում է նաև տվյալ ԽԱ-ի նպատակը:

Այն փաստը, որ հաճոյախոսությունների հասցեագրողները կարող են հավասարապես լինել անկեղծ և կեղծ, հաստատվում է տվյալ ԽԱ խոսքային վարքագծի բնույթով: Մի կողմից՝ դրա հասցեագրողը պետք է հետևի խոսքային վարքագծի հիմնական նպատակին, այսինքն՝ արտահայտի բարյացակամ վերաբերմունք գրուցակցի հանդեպ և հետագա շփման համար ստեղծի բարենպաստ մթնոլորտ (Формановская 2000), մյուս կողմից՝ բարյացակամ մթնոլորտի ստեղծման համար բնավ չի պահանջվում անկեղծություն: Հաճոյախոսության հասցեագրողը կարող է կիրառել կեղծ քաղաքավարություն, որի ներքո կարող է թաքնված լինել այլ վերաբերմունք (Зверева 1995, Формановская 2000): Ուսումնասիրենք հաղորդակցական համատեքստեր, որտեղ դրսևվորվում է անկեղծ քաղաքավարություն՝ անկեղծ դրական գնահատում գովեստի, հաճոյախոսության տեսքով.

“This essay is wonderful, Carrie. You are very talented, gifted ... Do you plan a career as a writer?”

“I haven’t thought about it...” (Stone K., Roommates)

Հաճոյախոսության հասցեագրողը ուսուցիչն է, հասցեատերը՝ ուսանողը: Հաճոյախոսությունը անկեղծ է, այն գովաբանություն է՝ ուղղված ուսանողին, բնականաբար, ուսուցիչը կեղծ քաղաքավարություն կիրառելու միտում չունի:

“Wherever you live, you make the most beautiful garden I ever saw.” (Michael J., Private Affairs)

Զրույցը տեղի է ունենում մոր և աղջկա միջև: Աղջիկը, այցելելով մորը և տեսնելով գեղեցիկ պարտեզը, հաճոյախոսում է նրան, գովաբանելով նրա հմտությունը, ճաշակը: Այս պարագայում հաճոյախոսությունը ևս անկեղծ է:

Ակնհայտ է, որ հաղորդակիցների կարգավիճակային հավասարությունը առավել բնորոշ է ամուսիններին ուղղված հաճոյախոսություններին.

He threw his arms round her and kissed her. “By God, what a performance you gave.”

“You weren’t so bad yourself, dear.” (Maugham W.S., Theatre)

Ասույթի թեմատիկան կապված է կին-հասցեատիրոջ անձնական որակների (ունակությունների) հետ. ամուսինը բարձր է գնահատում կնոջ դերասանական վարպետությունը:

Ակնհայտ է, որ տվյալ հաճոյախոսության ներակա մտավոր մոդուսը (Арутюнова, 1998) կարող է ներկայացվել որպես *I think (believe)*: Այսինքն՝ հաճոյախոսության հասցեագրողի մտավոր գործողությունը կարելի է ամբողջությամբ ներկայացնել որպես *«I think (believe) that you've given a very good performance»*: Ասույթի հասցեատիրոջ արձագանքը կարող է գնահատվել որպես հաճոյախոսության ներակա ընկալում, որն արտացոլում է հասցեատիրոջ համաձայնությունը անկեղծ իմաստային կանխենթադրույթով՝ *«you played wonderfully»* տվյալ ԽԱ հասցեագրողի մտքերը:

Պատասխան-արձագանքը վկայում է հաղորդակիցների գործաբանական կանխենթադրույթների համընկնման և հասցեատիրոջ ՀՎ բարելավման մասին՝ որպես ասույթի պերլոկուտիվ արդյունք: Հաճոյախոսության ամբողջական ընդունումը բացատրվում է, նախ և առաջ, «հասցեատերը վստահ է իմ խոսքերի անկեղծության մեջ» արտահայտության գործաբանական կանխենթադրույթով:

Մենք կարծում ենք, որ կարճ հաճոյախոսության իլլոկուտիվ նպատակը շատ ավելի բացահայտ է, քան բազմաբառ հաճոյախոսությանը, որը նույնացվում է շողորթրության հետ: Կարճ հաճոյախոսության իլլոկուտիվ նպատակն ավելի հեշտ է ճանաչել, քանի որ հասցեագրողի պարզ և քիչ բառերով է դրսևորվում անկեղծության պայմանը և տվյալ ԽԱ իրագործման էական պայմանը (Searle, 1979): Արտահայտելով իր դրական հույզերը պարզ համատեքստով՝ հասցեագրողն արտահայտում է ոչ թե ձևական, այլ անկեղծ լինելու իր մտադրությունը:

Լուսաբանենք սույն դրույթը՝ ուսումնասիրելով հետևյալ համատեքստերը.

1. *He looked directly into her eyes and smiled, “You look very pretty tonight.”*

“Do I?”

“Yes ... You look exotic. You have good cheekbones, like your mother.”

(Blume J., Smart Women)

2. *“Carrie. You are absolutely beautiful.” ... “You look terrific.”*

Carrie responded with a soft smile and a guttural laugh ... (Stone K., Roommates)

Հաճոյախոսությունների ընդունումը երկու դեպքերում էլ բացատրվում է նրանով, որ հասցեատերերի համար դժվար չէր նկատել հասցեագրողների շահադիտական նպատակների բացակայությունը, և որ հասցեագրողների շարժառիթները հեշտ կոառնելի են. առաջին դեպքում շարժառիթը հիացմունքի հույզերի արտահայտումն է, իսկ երկրորդ դեպքում գիտակցված շարժառիթը համընկնում է հասցեատիրոջ ՀՎ բարելավելու մտադրության հետ:

Հաղորդակիցների կարգավիճակային անհավասարության դեպքերում անգլիական լեզվամշակույթում, հիմնականում, հաճոյախոսությունների հասցեագրողներ են դառնում առավել բարձր կարգավիճակ ունեցող անձինք (Holmes 1988; Manes 1983; Wolfson 1983): Եթե խոսողական ակտի նպատակը

հաղորդակիցների կողմից համերաշխության ձեռքբերման մեջ է, ապա դրա մասին առաջին առաջարկությունը պետք է անխուսափելիորեն բխի այն անձից, ով իր կարգավիճակով գերազանցում է մյուսին (Herbert 1988):

Շատ հաճախ հաճոյախոսությունների բարձր կարգավիճակ ունեցող հասցեագրողների համար շարժանիք են հիացմունքի հույզերը, որոնք պայմանավորված են հասցեատերերի գործողություններով, վարպետությամբ, մտավոր ունակություններով: Նման դեպքում չի կարելի խոսել հաճոյախոսության ձևական լինելու մասին. այն անկեղծ է և մոտ գովեստին:

Ստորև ներկայացված հաղորդակցական համատեքստում հասցեատիրոջ՝ իր ստորադասի գիտելիքներից ցնցված հասցեագրողը՝ տնօրենը, նրան հաճոյախոսում է.

“You gave a great presentation today.”

“Thank you.” (Michael J., Private Affairs)

Հասցեագրողի անկեղծ հիացմունքի հույզերը արտահայտվում են հասցեատիրոջ գիտելիքների բարձր գնահատականով: Ենթադրում ենք, որ հասցեագրողի մտադրությունները հանգեցվում են սեփական ՀՎ արտահայտմանը և հասցեատիրոջ հանդեպ դրական ՀՎ արտահայտմանը: Բնորոշ *thank you* պատասխանը կարելի է գնահատել որպես հասցեատիրոջ կողմից հաճոյախոսության ամբողջական ընդունում:

Որոշ դեպքերում հաճոյախոսությունը կարող է չընդունվել հասցեատիրոջ կողմից՝ հաշվի առնելով համեստության մաքսիմը, հատկապես, երբ այն կատարվում է շատ մարդկանց ներկայությամբ: Հետևյալ օրինակում եղբայրը, ներկա գտնվելով քրոջ համերգին, հայտնում է իր հիացմունքը վեջինիս ելույթի առիթով.

1. ***“I’m the proudest brother in the world.” He held her while she tried to stop trembling. “Why didn’t you tell me you are a superstar?”***

“I’m not,” she managed to say.

“You are to me. You will be to everybody. You’re the greatest, most wonderful...do you know how you sounded?” (Michael J., Private Affairs)

Հաճոյախոսությունների հասցեատերերի կարգավիճակային գերազանցության իրավիճակներում, դրանց հասցեագրողները կարող են գործել հավասարապես՝ անշահախնդիր և շահախնդիր: Հաճոյախոսությունների բուն թեմատիկան կարող է օգնել որոշելու կարգավիճակից կախված հասցեագրողների մտադրությունների բնույթը:

Ըստ Ուոլֆսոնի՝ հասցեագրողը պետք է ունենա բարոյական իրավունք այլ անձի գործողությունները գնահատելու համար: Այդ պատճառով, համաձայն խոսքային վարքագծի նորմերի, նրա սոցիալական կարգավիճակը չի կարող զիջել հասցեատիրոջ կարգավիճակին (Wolfson, 1983: 91):

Ինչպես նշվում է նրա մի շարք աշխատանքներում (Wolfson 1981, 1983.), անգլիական լեզվամշակույթում առավել բարձր կարգավիճակ ունեցող հասցեագրողների համար հաճոյախոսությունների բնորոշ թեմաներ են համարվում հասցեատերերի գործողություններն ու վարպետությունը (նման իրավիճակներում հաճոյախոսությունը մեծամասամբ անկեղծ է լինում), իսկ առավել ցածր կարգավիճակ ունեցող հասցեագրողների համար՝ հասցեատերի արտաքին տեսքն ու անձնական իրերը (այս իրավիճակներում հաճոյա-

խոսությունը շատ հաճախ կեղծ է լինում): Նշենք, որ անգլիական լեզվամշակույթում հասցեատիրոջ նոր ձեռքբերումը կարող է համարվել հաճոյախոսության բնութագրական առարկա: Ուշադրություն դարձնելով որևէ նոր բանի վրա, որը կապված է հասցեատիրոջ հետ (նրա անձնական իրը, արտաքին տեսքի փոփոխությունները)՝ հասցեագրողն ընդգծում է, որ զրուցակիցն արժանի է ուշադրության: Այդ պատճառով, կարելի է ենթադրել, որ առավել ցածր կարգավիճակ ունեցող հասցեագրողների կողմից նորմատիվ թեմայի պահպանումը խոսում է նրանց կողմից սոցիալական հեռավորության պահպանման մասին, զրուցակիցների հանդեպ քաղաքավարության և հարգանքի դրսևորման մասին, հարաբերությունների ամրապնդման ձգտման մասին:

Ուսումնասիրենք համատեքստեր, որտեղ հաճոյախոսությունը դիտվում է որպես կեղծ դրական գնահատման՝ շոդոքորթության դրսևորում:

Norman: You look fabulous this morning.

Ruth: I look dreadful. I couldn't see my face. I haven't had a bath. I feel terrible.

Norman: I love that dress. It's great.

Ruth: It's the same one I had yesterday. (Ayckbourn A., Living Together)

Վերևում ներկայացված երկխոսական համատեքստը պատկերում է խոսողի փորձը՝ փարատել շոդոքորթության օբյեկտի բոլոր կասկածները բարձր դրական գնահատականի անկեղծության և համապատասխանության հանդեպ հաճոյախոսությունների ուժեղացման և կրկնության միջոցով: Վերջինների ակնհայտ անհամապատասխանությունը, չհիմնավորվածությունը բնորոշվում է պատասխանների հիման վրա (ակնհայտ է տեղեկատվության բաժանումը կեղծված (Նորմանի) և չկեղծված (Ռութի) պատասխանների), ինչպես նաև դիտարկվող իրավիճակի ընդհանուր կանխենթադրույթի հիման վրա: Նորմանը մեղավոր է կնոջ առջև և համարում է, որ հաճոյախոսությունը՝ նրա զգեստի վերաբերյալ հավանության արտահայտումը, առավել վառ և արդյունավետ միջոց է փոխհարաբերությունների հարթեցման համար:

Հաճոյախոսությունը փոխհարաբերությունների հարթեցման, հաշտեցման միջոց է նաև հաջորդ երկխոսական համատեքստում: Զրույցը տեղի է ունենում սիրահարների միջև (նախկին դերասանուհի և երիտասարդ մարդ), որտեղ տղամարդը հաճոյախոսում է կնոջը՝ որպես հաճոյախոսության առարկա ընտրելով նրա հագուստները:

Tom: I can't bear you being angry with me.

Florence: Can't you really? ... Come and sit here.

Tom: That's a lovely dress.

Florence: It is sweet, isn't it?

Tom: You always wear wonderful clothes.

Florence: Do I, Tom?

Tom: You know you do. (Coward N., The Vortex)

Այժմ վերլուծենք մեկ այլ հաճոյախոսության օրինակ՝ դարձյալ որպես կեղծ-քաղաքավարության՝ շոդոքորթության դրսևորում:

1. *"You are a talented actress..."*, smiled Mike. (Maugham W. S., Theatre)

2. *"What a lovely party"*, he said. (Maugham W. S., Theatre)

Ասույթի համատեքստը հետևյալն է. երիտասարդն ուղեկցում է դերասանուհուն տուն՝ նրա կողմից կազմակերպված տոնական երեկույթի ավարտից հետո: Հասցեատիրոջ ունակությունները բարձր են գնահատվում հասցեագրողի կողմից հաճոյախոսության միջոցով: Ակնհայտ է, որ հասցեագրողը ձգտում է բարելավել հասցեատիրոջ ՀՎ: Ասույթի որոշակի անուղղակիությունը (2-րդ օրինակում հասցեատիրոջ արժանիքները ընդգծվում են անուղղակիորեն), հաղորդակիցների ակնհայտ կարգավիճակային անհավասարությունը խոսում են հասցեագրողի հավանական կեղծության մասին: Բոլոր այս գործոնները թույլ են տալիս տվյալ հաճոյախոսությունը դիտարկել որպես խոսքի մեջ կեղծ քաղաքավարության, շոդոքորթության դրսևորում:

Անգլիական լեզվամշակույթում հաճոյախոսության ԽԱ հաջողության էական պայման է հասցեագրողի և հասցեատիրոջ գործաբանական կանխենթադրույթների նմանությունը (Серъ 1986): Միայն հաճոյախոսությունների մասին հաղորդակիցների նախնական գիտելիքների համընկնումը թույլ կտա հասցեագրողին իրագործել իր իլլուկուտիվ նպատակները և չի ստիպի հասցեատիրոջը կասկածել նրա անկեղծության վրա: Ինչ վերաբերում է հաճոյախոսության ԽԱ նախադրույթին, ապա նրա ամբողջական համապատասխանությունը իրականության հետ այդքան կարևոր չէ: Հասցեագրողը կարող է չափազանցնել հասցեատիրոջ իրական որակները, ինչը հանգեցնում է նախադրույթի և իրականության ոչ ամբողջական համընկնման:

Այսպես, օրինակ, հաջորդ երկխոսության մեջ կին-հասցեագրողը որպես հաճոյախոսության առարկա ընտրում է հասցեատիրոջ՝ իր սիրեցյալի արտաքինն ու բնավորության գծերը.

“You are the most handsome man in England” whispered Julia, “and nobody can prove me the opposite.” (Maugham W. S., Theatre)

Ասույթում արտահայտված մտքերի սուբյեկտիվությունը չի նշանակում, որ դրանք կեղծ են, չնայած կարելի է ենթադրել, որ կնոջ հույզերը թույլ չեն տալիս նրան լինել լիովին օբյեկտիվ:

Հասցեագրող-կնոջ՝ հասցեատեր-տղամարդուն շոդոքորթելու մտադրությունը խոսքի միակ շարժառիթն է: Միրող կինը ձգտում է բարելավել իր սիրեցյալի հարաբերությունները և հիացմունքի դրական հույզերն արտահայտում է *most handsome* հույզի միջոցով՝ արտահայտված ածականի գերադրական աստիճանով:

Ավելորդ բազմաբառությունը, որը մի շարք դեպքերում բնութագրական է անգլիական լեզվամշակույթում հաճոյախոսության հասցեագրողի համար, կարող է առաջացնել կասկածներ ինչպես հասցեատիրոջ, այնպես էլ նրա ունկնդիրների մոտ՝ կապված նրա անկեղծության հետ: Նման հաճոյախոսությունները վերագրվում են շոդոքորթությանը:

Ցածր կարգավիճակ ունեցող հասցեագրողի կողմից առավել բարձր կարգավիճակ ունեցող հասցեատիրոջ գործողությունների և վարպետության հանդեպ հետաքրքրության դրսևորումը կարելի է մեկնաբանել որպես շոդոքորթելու փորձ, որը ստիպում է հասցեագրողին խախտել խոսքային վարքագծի նորմերը.

“You are so smart, Frank.” (Mitchel M., Gone with the Wind)

Վերլուծվող իրավիճակում հասցեագրողը երիտասարդ աղջիկն է, իսկ հասցեատեր է Ֆրանկը: Հերոսուհին իրականում չի սիրում Ֆրանկին, սակայն

հաճոյախոսում է նրան՝ ցանկանալով ամուսնանալ նրա հետ հանուն փողի: Կարգավիճակից կախված՝ հասցեագրողը արտահայտում է հիացմունքի ՀՎ, որը պայմանավորված է հասցեատիրոջ գործողություններով և մասնագիտական վարպետությամբ՝ ձգտելով ստեղծել նրա մոտ բարենպաստ տպավորություն: Այստեղ մենք տեսնում ենք հասցեագրողի շահադիտական մտադրությունների ներակա դրսևորում:

Նշենք, որ հավասար կարգավիճակ ունեցող հասցեատիրոջը դիմելիս՝ հաճոյախոսության հասցեագրողը առավել հաճախ կիրառում է հաղորդակցման ընկերոջ անձնանունը կամ հուզական վոկատիվներ:

1. *“You’re much more beautiful than either of them and well you know it, my pet.”* (Maugham W. S., Theatre)

2. *“You did the right thing, kid. ... You’ll be great at the child Advocacy stuff.”* (Steel D., The House on Hope Street)

Ներկայացված համատեքստերում հասցեագրող-տղամարդիկ դիմում են երիտասարդ գրավիչ կանանց *my pet* և *kid* հուզական վոկատիվների օգնությամբ, որոնք առանձնանում են մեծ գործաբանական ուժով (Карачик 1992):

Վերլուծենք առաջին ասույթի գործաբանական համատեքստը, որտեղ գովաբանության առարկա է հասցեատեր-կնոջ գեղեցկությունը: Ասույթի բովանդակությունը ներակա մոդուսով համընկնում է նրա նախադրույթի հետ: Ասույթի ամբողջական եղանակավորող մոդուսը կարող է ներկայացվել որպես «ես իսկապես կարծում եմ, որ դու հրապուրիչ ես»: Բայց հասցեագրողի գլխավոր մտադրությունը անհրաժեշտ է համարել հասցեատիրոջ ՀՎ բարելավելու ցանկությունը, ինչը կարող է հանգեցնել հաղորդակիցների անձնական հարաբերությունների ամրապնդմանը՝ որպես հավանական պերլուկուտիվ արդյունք: Երկրորդ ասույթը արտահայտում է հասցեագրողի կեղծ հավանությունը հասցեատիրոջ գործողությունների նկատմամբ, որտեղ նույնպես խոսողի գլխավոր մտադրությունը խոսակցի ՀՎ բարելավելն է:

Վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ գնահատողական ակտերի բովանդակությունը ինչ-որ բանի կամ որևէ մեկի արժեքների, մակարդակի կամ նշանակության մասին սուբյեկտի կարծիքի արտահայտումն է: Դրանցում քաղաքավարության կարգի դրսևորման աստիճանը առավելապես կախված է գնահատման վեկտորից (դրական – բացասական), հաղորդակցության տեսակից (ուղղակի – անուղղակի), հաղորդակցվողների միջև գոյություն ունեցող հարաբերությունների տեսակից (կեղծ – անկեղծ):

Մեր կողմից անցկացված հաճոյախոսությունների երկխոսական համատեքստերի վերլուծությունը ցույց տվեց, որ անգլիական լեզվամշակույթում մեծամասն դեպքերում, երբ հասցեագրողները մտադիր են գովել կամ շողոքորթել հասցեատերերին, նկատվում է հաղորդակիցների կարգավիճակային հավասարություն, չնայած քիչ չեն նաև նրանց կարգավիճակային անհավասարության դեպքերը (հասցեագրողի կամ հասցեատիրոջ կարգավիճակի գերազանցում):

Այսպիսով, հաճոյախոսության խոսողական ակտը դիտվում է որպես վարքագծային, արտահայտչական դրական գնահատողական ակտ, որը գործում է որոշակի իրավիճակային պայմանների համատեքստում՝ արտահայտելով անկեղծ կամ կեղծ դրական գնահատական:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Brown P., Levinson S., *Universals in language usage: politeness phenomena* // Questions and Politeness / Ed. by E.N. Goody. Cambridge: Cambridge University Press, 1978, 56-310p.
2. Herbert R. K., *The Ethnography of English Compliments and Compliment Responses: A Contrastive Sketch* // Contrastive Pragmatics / Ed. by W. Oleksy, John Benjamins, Amsterdam, 1988, 3-35p.
3. Manes J. and Wolfson N., *The compliment formula*. In F. Coulmas (ed.) Conversational routine. The Hague: Mouton, 1981.
4. Manes J., *Compliments: A mirror of cultural values* // Sociolinguistics and Language Acquisition / Ed. by N. Wolfson and E. Judd. Rowley, Mass.: Newbury House, 1983, 96-102p.
5. Searle, J., *Expression and meaning: Studies in the theory of speech acts*. Cambridge, England: Cambridge University, 1979.
6. Wierzbicka A., *English Speech Act Verbs: A semantic dictionary*. Sydney: Academic Press, 1987.
7. Wolfson N., *An Empirically Based Analysis of Complimenting in American English* / N.Wolfson, E.Judd (Eds) // Sociolinguistics and Language Acquisition. - Rowley: Newbury, 1983, 82-95p.
8. Holmes J., *Paying compliments: a sex-preferential positive politeness strategy* // Journal of Pragmatics. Amsterdam, 1988, vol. 12, № 4, 445-465p.
9. Арутюнова Н.Д., *Типы языковых значений: Оценка. Событие. Факт*. М.: Наука, 1988.
10. Зверева Е.В., Коммуникативно-речевая ситуация "Комплимент" (на материале испанского языка): Автореф. дис. канд. филол. наук. М., 1995, 15 с.
11. Карасик В.И., *Язык социального статуса*. М.: Институт языкознания РАН, Волгоградский государственный педагогический институт, 1992.
12. Петелина Е.С., Прагматические особенности высказываний положительной оценки. Автореферат дис. канд. филол. наук. Пятигорск – 1986, 15 с.
13. Серль Дж. Р., *Косвенные речевые акты* / Дж.Р. Серль // Новое в зарубежной лингвистике. - Вып.17: Теория речевых актов. - М.: Прогресс, 1986. С. 195-222.
14. Формановская Н.И., *Размышление о единицах общения*. / Н.И. Формановская - Русский язык за рубежом. - 2000. - №1, С. 56-63.
15. Шиленко Р.В., *Прямые и косвенные экспрессивные высказывания в аспекте регулирования межличностных отношений* // Языковое общение и его единицы. Калинин: Калининск. гос. ун-т, 1986. С. 49-54.

Narine Gasparyan – Complimenting as sincere or insincere positive speech act. –

We intend to consider complimenting as a positive evaluative speech act and as a means of expressing encouragement. They are part of the negotiating strategy of the conversation. The fact that compliments are expected under certain circumstances, reveals that people need them as an expression of approval from others. While complimenting the

addressee or a third person for their actions, addressers highly explicit their own emotive state or the emotive attitude towards the facts of speech. The paper discusses compliments as direct or indirect speech acts. The term “indirect speech act” is used to name every utterance that conveys its illocutionary force in an implicit way. So indirect evaluative acts do not have clearly explicated communicative intention, the author assigns them some additional meaning or illocutionary force to fulfill his/her communicative intention. The main aim of the article is to investigate sincere and insincere compliments as expressions of praise (sincere compliment) and flattery (insincere compliment). The social status of speakers is also thoroughly considered in the paper.

Нарине Гаспарян – *Комплименты как искренние или неискренние положительные оценочные речевые акты.* – В статье рассматриваются речевые акты комплимента как искренние или неискренние, оценочные акты и как типы прямых или косвенных речевых актов одобрения. Косвенные оценочные акты не обладают четко обозначенной коммуникативной интенцией, автор придаёт им дополнительный смысл.

Речевой акт комплимента занимает определенное место в системе экспрессивных оценочных актов, направленных на собеседника и является имплицитно-перформативный, положительный оценочный акт, репрезентируя экспрессивную, положительную оценку и воспринимается как искренний или неискренний – как лесть или похвала. В статье имеются в виду и социальные статусы коммуникантов.

ԱՎԵՏԻՔ ԻՍՍՀԱԿՅԱՆԻ ԼԵԳԵՆԴՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ՀԱՍՄԻԿ ՎԱՆՅԱՆ

«Գրողը պիտի գրիչ վեր առնե՝ ոգևորված այն խորը մտքով, որ նա անդամահատում է տիեզերքը հավիտենականության համար - և ոչ թե մարդկանց զվարճության ու զբոսանքի: Պիտի գրել ողջ էությամբ, գրելու ժամանակ պիտի ապրել՝ ողջ տիեզերքի հետ...»²⁵², - ամեն ինչի մեջ նրա հոգին փնտրել, երևույթի էության խորքը երես հանել. Ավետիք Բսահակյան գրողի անխախտ հավատամքն է սա, որի լույսի տակ պիտի դիտել նրա ամբողջ ստեղծագործությունը ու հատկապես չափածո և արձակ լեզենդները:

Բսահակյանի լեզենդներում բովանդակության լիարժեք արտահայտմանը նպաստել է պատկերավորման և արտահայտչական միջոցների տեղին ու պատշաճ գործածությունը:

Պատկերավորման միջոցներից՝ Բսահակյանի լեզենդներում լայնորեն գործածվել են մակդիրը, համեմատությունը, փոխաբերությունը, անձնավորումը, չափազանցությունը, նվազաբանությունը:

Մակդիրն արտահայտում է առարկայի, երևույթի ոչ թե հիմնական, տարբերակիչ հատկանիշը, այլ նրա պատկերավոր, գեղագիտական բնութագիրը, հեղինակի հուզական վերաբերմունքն ու գնահատականը: Բսահակյանի չափածո և արձակ լեզենդներից ներկայացնենք մակդիրի երկուական օրինակ.

Հին ժամանակում, **ոսկի** դոյակում
Ապրում է **ջքնաղ** մի աղջիկ,
Այնպե՛ս գեղեցիկ, այնպե՛ս գեղեցիկ,
Ինչպես կարապը՝ թներն **արծաթյա**
Լճակի **փիրուզ** ջրերի վրա... (հ.2, էջ 172)

Ահա եկան նազանքով
Զքնաղ կանայք, բյուր բյուրերից ընտրանքով,
Հեքիաթական անհուն գեղով, մշկաբույր,
Լուսաստինք, հրապույրներով բյուրաբյուր,
Գիշերահեր, և ոսկեհեր, երկնաչվի,
Հայացքներով, ժպիտներով արևի... (հ.2, էջ 203)

«Նա ծերացել է: **Լեռները թունդ հանող** ոտները հագիվ են շարժվում, **ժողովուրդներ սասանող** ձայնը մարել է, **վագր ու առյուծ մեկտեղ սանձող** բազուկը՝ թուլացել» (հ.3, էջ 128):

²⁵² **Ավ. Բսահակյան**, Հիշատակարան, Եր., 1977, էջ 111:

* Պատկերավորման ու արտահայտչական միջոցների դասակարգման ժամանակ առաջնորդվել ենք գլխավորապես Պ. Պողոսյանի «Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները» (գիրք II) և Լ. Եզեկյանի «Հայոց լեզվի ոճագիտություն» աշխատություններով:

«Եվ հեռուն **երկնաձիգ** լեռներն էին սուզվել **կապույտ** լռության մեջ, **արծաթացուլ** ձյունապսակներով» (հ.3, էջ 195):

Համեմատությունը տարբեր առարկաների կամ երևույթների մեջ եղած ընդհանուր հատկանիշի հիման վրա մի առարկան կամ երևույթը տվյալ պահի ու հանգամանքների պահանջով մյուսին նմանեցնելու երևույթն է: Համեմատությունն արտահայտում է նկարագրվող առարկայի, երևույթի կամ անձի նկատմամբ հեղինակի զգացմունքային վերաբերմունքը: «Միմյանցից հեռու և անհամատեղելի առարկաների ու երևույթների մեջ ընդհանրություն գտնելը և դրանք զուգակշռելի դարձնելը,- գրում է Պ. Պողոսյանը,- ոչ միայն նուրբ ճաշակի, սրամտության և բանաստեղծական շնորհքի, այլև իմացության արտահայտություն է»²⁵³: Նման համեմատությունները Իսահակյանի չափածո և արձակ լեզենդներում ամենաշատ կիրառվող պատկերավորման միջոցներն են.

Նա մեռնում է, **ինչպես ցողը բողբոջում,**
Մանկիկն ինչպես սուրբ գրկի մեջ մայրական.
Եվ հրձծում է, **աղոթքի պես** շշնջում
Հեզ բամբիշի ականջն ի վար էլ-Սաման (հ.2, էջ 181):

Վաղուց ծարավ լեզվի նման
Պապակում էր սուրն արյունի,
Եվ **օձի պես** գալարվում էր
Կուռ ափի մեջ Աթթիլայի (հ.2, էջ 203):

«Եվ ուր սլանում էր հսկան նծույգի վրա սանձարձակ, թշնամին, **սարյակների երամի պես ահաբեկ**, փախչում էր նրանից, **ինչպես արծվից սևաթույր հավերժալուռ բարձունքների...**» (հ.3, էջ 116):

«**Դրախտի խնձորների պես**` անուշաբույր ստինքները թրթռում են լուսնկային ծոցերում, **ինչպես այն ծիրանի զինին բյուրեղյա սկահների մեջ...**

Ինչպես հազարան-բլուրները Չինմաչինի արքայական վարդարաններում, այնպես երգում են փերիները կարոտի և անուրջների երգերից... » (հ.3, էջ 129):

Նկատվել է, որ Ավ. Իսահակյանի քնարերգության մեջ և արձակում համեմատության կիրառությունը տարբեր է. «Եթե Իսահակյանի քնարերգության մեջ համեմատության գործածության ժամանակ բառը հիմնականում հանդես է գալիս զգացմունքային երանգով, ապա արձակում, որպես օրինաչափություն, հատկանշական է բառի առարկայական նշանակությամբ գործածությունը»²⁵⁴: Մինչդեռ Իսահակյանի չափածո և արձակ լեզենդների դեպքում, ինչպես երևում է բերված օրինակներից, այդպիսի տարբերակում չկա:

Փոխաբերությունը պատկերավորման այնպիսի միջոց է, որի դեպքում երկու տարբեր առարկաների կամ երևույթների նմանության հիման վրա նրանցից մեկի անունը կամ հատկանիշը փոխարինվում է մյուսով: Իսահակյանի լեզենդները հարուստ են փոխաբերություններով ստեղծված տպավորիչ ու տեսանելի պատկերներով:

²⁵³ **Պողոսյան Պ.**, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, գիրք II, Եր., 1991, էջ 10:

²⁵⁴ **Մելքոնյան Հ.**, Ավետիք Իսահակյանի գեղարվեստական արձակի լեզուն և ոճը, Եր., 1991, էջ 196-197:

Իրիցկինը շա՛տ սիրուն էր, թույլ մազերը՝ ծամավոր,
Վառ աչքերը՝ աստղոտ գիշեր, թշիկները՝ հուր խնձոր (հ.2, էջ 160):

Եվ նրանց դրկից կապրեր մի աղջիկ՝
Ոսկի մազերով սաքերի եղնիկ.
Ու նրանց սերը գարնան պես ծաղկած
Վառ-վառման ծաղիկ (հ.2, էջ 166):

**Եվ խաղողը վառ գինի է հավաքում՝
Իր ստինքում, և նռենին՝ ալ-արյուն** (հ.2, էջ 199):

Իսահակյանի արձակ լեզենդներում փոխաբերության միջոցով արտահայտվել են մարդկային բնավորության որոշակի գծեր, տարբեր գործողություններ ու իրավիճակներ.

«Ամպրոպի նման որոտաց Բողդիխանը, և բովանդակ ապարանքը դորդաց, և նրա դաժան աչքերի դեղին ծովերը փոթորկեցին մոլեգին» (հ.3, էջ 125):

«Թո՛ղ փշրվի կյանքի սափորը, որ լիքն էր աղի ջրով, որ ինչքան խմում էիր, այնքան ավելի ծարավում՝ այրվելով խմում վերստին և զգվում, բայց բնավ չհագնում» (հ.3, էջ 149):

«Ես սիրում եմ քո բերանը. **անսպառ և անհուն հրապույրների, անանուն վայելքների նեկտարն է քո բերանը, ոսկից ոսկի մեղուն ամենաքաղցր մեղրն է շինում**» (հ.3, էջ 199-200):

Փոխաբերության հիմքում հաճախ ընկած են պատկերավորման այլ միջոցներ, ինչպես, օրինակ, անձնավորումը²⁵⁵.

«Այդ միջոցին բարձրացավ հանկարծ մի սատանի-քամի, որ իր պոչի վրա **ցցված պտույտ-պտույտ գալով, խելագարի պես, այս ու այն կողմն էր վազվզում, ձեռն ընկածը քշում, ջարդում, կոտրում...**» (հ.3, էջ 163):

Անձնավորումը գեղարվեստական այնպիսի հնարանք է, որի դեպքում բնության երևույթները, իրերը շնչավորվում, ստանում են մարդկային հատկանիշներ: Ավ. Իսահակյանի լեզենդներում հաճախ ենք հանդիպում անձնավորման տեսակներից **բարառությանը**, երբ երևույթներին կամ առարկաներին վերագրվում են կենդանական կամ մարդկային հատկանիշներ, գործողություններ, բարքեր.

Աղբյուրներն ալմաստ ու անապական՝
Բլբուլի ձայնով օրոր ասացին,
Ծաղիկներն անբիծ ու անմահական
Ծածկեցին անգարդ քուն մտածներին (հ.2, էջ 168):

Շատրվաններն, այգիները ծաղկավետ
Քուն են մտել ծովի զգվող հովի հետ (հ.2, էջ 202):

«...Այս միտքը օձի պես անցավ նրա գլխով, թույնով խայթեց նրա սիրտը» (հ.3, էջ 131):

²⁵⁵ Տե՛ս **Եզեկյան Լ.**, Հայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2006, էջ 348:

«Խայամը ... ամսոսանքով նայում էր կենսաբաշխ կարմիր հեղուկին, որ ծարավ գետինը ծծեց մի վայրկյանում, թունդ հարբեցողի պես» (հ.3, էջ 163):

Անձնավորման մյուս տարածված տեսակը **բառաօճաթությունն** է, երբ իրերը, երևույթները կամ կենդանիները ձեռք են բերում խոսելու հատկություն.

-Ո՛վ խճե-Լեյլի,- ասավ հավքը երկնուց,
Ես կուգամ Սիփանա քարեն,
Իմ ճամփեն կանցնի Բինգյուլա սարեն... (հ.2, էջ 177):

Աղբյուրները հառաչելով ասացին.
-Գնացող ենք, ինչպե՞ս մնանք մենք քեզ հետ.
Եվ ժայռերը հառաչելով ասացին.
-Մնացող ենք, ինչպե՞ս գնանք մենք քեզ հետ (հ.2, էջ 225):

«Ես հեռվից չեմ եկել,- ասում է մահը,- ես միշտ քո մեջն էի, քեզնից անբաժան. երբ երիտասարդ էիր ու առույգ, դու էիր ինձ հաղթում, բայց ես մաքառելով ուժերդ մաշեցի...» (հ.3, էջ 133-134):

«Դատավո՛ր,- պատասխանեց անգղը,- քանի որ դու այդքա՛ն սիրում ես այդ աղավնուն,- փոխարենը տուր քո մարմնից այնքան միս, որքան կշռում է աղավնին» (հ.3, էջ 219):

Չափազանցությունը պատկերավորման միջոց է, որի դեպքում առարկայի կամ երևույթի չափերն ու հատկանիշները ներկայացվում են միտումնավոր մեծացված ու չափազանցված ձևով: Այն նպաստում է խոսքի ազդեցության մեծացմանը, տպավորության ուժեղացմանը.

Ես քու սպանվածն եմ առանց վերքի.
Քեզի փեշքեշ կանեմ Հնդությունը
Մինչի Չինմաչին (հ.2, էջ 176):

Եվ մըրրի՞կն են սանձել, թե՞ արծիվը ամպերի,
Նրանց ձիերը թռչում են պատնեշներով բերդերի... (հ.2, էջ 183)

«Չինգիզ-խանը» արձակ լեգենդում Իսահակյանը դիմել է այսպիսի ազդեցիկ չափազանցությունների.

«...Խրիսեցում է ու ծառանում նրա մրրկածին նժույգը, **որի հրեղեն կրծքով Չինու հազարամյա պարիսպներն է խորտակել և հզոր սմբակներով Էլբրուսի պողպատե կողերից ժայռեր է պոկել...** »:

«Հզոր է Չինգիզ-խանը. նա կարող է հրամայել **մի վայրկյանում խալիֆաների Բաղդադը Տիգրիսի փրփրաբաշ ալիքների տակ ծածկել, Արաբստանի անապատների ծովածածան ավազը մինչև արևի ակը բարձրացնել...** » (հ.3, էջ 132):

Ի հակադրություն չափազանցության՝ **նվազաբանությունը** առարկայի կամ երևույթի չափերը փոքրացնում, հասցնում է չնչինության: Գաղափարն ավելի ընդգծվում, ցայտուն է դառնում, երբ նվազաբանությունն ու չափազանցությունը հանդես են գալիս միասին: Իսահակյանի չափածո և արձակ լեգենդներում պատկերավորման այս միջոցներն են համատեղ կիրառվել անցողիկի և հավերժականի, մարդու և տիեզերքի փոխհարաբերությունը քննելիս.

Ժամանակը իր վախճանին կհասնի,
Եվ արևը մի բուռ մոխիր կդառնա,
Բայց իմ սերը վախճան չունի, հուն չունի,
Նա հավերժ է, նա անշեշտ է, նա անմահ... (հ.2, էջ 180)

-Հապա, ո՛վ հայր, դու ինչպե՞ս ես հանդգնում
Տիեզերքը՝ այնպես անեզր ու անբավ,
Զետեղելու այնքան փոքրիկ քո գանգում...
Մանուկն ասաց,- և տեսիլքը չքացավ (հ.2, էջ 212):

«Այն թռչող վայրկյանը, որ մարդիկ կյանք են անվանում, հավերժական է թվում այս խեղճերին... Իրենց խիտունջից տիեզերական օվկիանի խորհուրդներն են լուծում և օրենքներ սահմանում անհունին և անսահմանին... » (հ.3, էջ 121):

«...Մի՞թե մեր երկիրն էլ այդպիսի մի թռչնի բույն չէ Անսկիզբն Անմահի աստվածային անսահման ափի մեջ. և ես, որ մարդկային հյուլեական խղճովս ուղարկում եմ այս թռչնիկներին և, տեսնելով նրանց չարիքն ու եղեռնը, ներում եմ և խնամում, չէ՞ որ Անսկիզբն էլ իր մեծ գեր-տիեզերական սիրով և գլոբ խղճում է մարդկանց և արարածներին... » (հ.3, էջ 143):

Պատկերավորման նշված միջոցներից բացի՝ Ավ. Բասիակյանի արձակ լեզենդներում կիրառվել են նաև շրջասությունը, այլաբանությունը, խորհրդանշանը,

Շրջասությունը փոխաբերության այն տեսակն է, երբ որևէ առարկա կամ երևույթ ուղղակի անվանելու փոխարեն տրվում է նրա ավելի ծավալուն, նկարագրական բնութագրությունը: Այն կիրառվում է գաղափարին վեհություն, բանաստեղծականություն հատորդելու կամ հեզնելու համար:

Բասիակյանի արձակ լեզենդներում ու գրույցներում գործածվել են «անդուլ դարերի թափառականը» («Շիդիարը»), «Մեծ Մոնղոլը», «Գյուրջիստանի սարերում որսած վիթը» («Զինգիզ-խանը»), «Տիեզերական ո՛վ մեծ Բրուտ», «արյունագանգ և վավշա-գարշանքի ցեխե անոթը» («Բուդդիան») «ամենագեղեցիկը և կատարյալը քո արարածների մեջ», «պսակը քո հրաշագործ տիեզերքի» («Լիլիթ») և այլ շրջասություններ, որոնք նրա խոսքը դարձրել են ավելի վեհաշունչ ու բանաստեղծական:

«Պատմական իրականությունը Բասիակյանի լեզենդներում և գրույցներում գտնում է իր արտահայտությունը ոչ թե ռեալիստական կամ զուտ իրական ձևերով,- գրում է Ա. Բասիակյանը,- այլ խոհա-ալեգորիայի միջոցով, ուր հեղինակը առաջ է բերում իր մտորումներն ու իղձերը՝ այլաբանորեն կամ սիմվոլ-հերոսների օգնությամբ»²⁵⁶:

Այլաբանության հիման վրա են ստեղծվել Բասիակյանի գրույցներից մի քանիսը՝ «Հին ամրոցը», «Ձեր խնդրածը իմ ոտների տակն է», «Զինական մի հին գրույց» և այլն:

Այլաբանությունը (ալեգորիան) պատկերավորման միջոց է, որի հիմքը կազմում է մտքի համեմատողական գործառույթը, այսինքն՝ համեմատության մի եզրի միջոցով հարկ է գտնել մյուսը և տալ գնահատական: Այն հաճախ կապվում

²⁵⁶ **Բասիակյան Ա.**, Ավետիք Բասիակյանի արձակը, Եր., 1975, էջ 11:

է ամբողջ ստեղծագործության հետ: Այդպիսին է, օրինակ, «Չինական մի հին գրույց»-ն սկզբնող հետևյալ այլաբանությունը. «Վերևից նետած քարը ինչքան ավելի վար է ընկնում, այնքան ավելի սաստկանում է նրա թափը,- և ամենից ներքև գտնվողին ավելի ուժգին է հարվածում, քան ավելի վերև գտնվողին» (հ. 3, էջ 230): Նույն կերպ ամբողջ գրույցին են վերաբերում «Ճշմարիտը խոսի՛ր աներկյուղ այս աշխարհի հզորների առջև» և «Ձեր խնդրածը իմ ոտների տակն է» այլաբանությունները:

Հաճախ այլաբանության համար հիմք է դառնում *խորհրդանշանը* (սիմվոլը), երբ թանձրացական առարկայի պատկերով ու անվանումով արտահայտվում է վերացական գաղափար: Իսահակյանի արձակ լեզենդներն ու գրույցները լի են ոչ միայն խորհրդանիշներով (օրինակ՝ «հին ամրոցը»՝ բռնակալ իշխանության, «կշեռքը»՝ արդարադատության, «Չինգիզ-խանը»՝ լեզենդում «աղջիկները», «գինին», «նծույզը»՝ կյանքի, կենսունակության), այլև խորհրդանիշ-կերպարներով («Լեռների հսկան», «Արծվամանուկը»՝ ազատության, արդարության, հավասարության, «Ուշինարան»՝ արդարության, առաքինության և այլն):

Асмик Ванян – Изобразительные средства легенд Аветика Исаакяна. – В статье взяты на анализ поэтические особенности легенд Исаакяна, рассмотрены широко используемые в них эпитет, сравнение, перенос, олицетворение, гипербола, пораболла и тогда ли.

Hasmik Vanyan – The Expressive Devices of Avetik Isahakyan's Legends. – In the application the poetical peculiarities of Isahakyan's legends are being examined and here we observe the stylistic devices that are used widely by the author: epithet, comparison, metaphor, personification, exaggeration, gradation etc.

**ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ԱՌՈՒ-ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ»
ՊՈԵՄԻ ԿԵՆՍԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԱԼԻՄԱ ՀԱՍԱՆՅԱՆ

«Աբու-Լալա Մահարի» պոեմի «գրական ծագումնաբանությունը» որոշակի առնչություններ ունի ռումանտիզմի գաղափարական և կառուցվածքային հիմնահարցերի հետ: Իսահակյանի գրական նախասիրությունները կապված էին ոչ միայն հայ գրականության մեջ պոեմի ժանրի վարպետների՝ Ալիշանի, Պատկանյանի, Շահագիզի, Հովհաննիսյանի, Թումանյանի, այլ նաև մեծագույն ռումանտիկ բանաստեղծների՝ Բայրոնի, Շելլիի, Հայնեի, Միցկևիչի, Լերմոնտովի, Բարաթշվիլու գրական ավանդների հետ: Իր միջավայրով, կոլորիտով, արտաքին-թեմատիկ հատկանիշներով «Աբու-Լալա Մահարին» «արևելյան պոեմ» է, իր ներքին բովանդակությամբ ու արծարծված հարցերի հնչեղությամբ փիլիսոփայական-խորհրդանշական բնույթ ունի, իսկ արտահայտման ձևով գերազանցապես ռումանտիկական, քնարական պոեմ-մենախոսություն է: Ժանրային տարբեր գծերի միաձուլմամբ էլ պայմանավորվում է պոեմի անկրկնելի ինքնատիպությունը: Պոեմն առնչվում է Իսահակյանի նախընթաց շրջանի քնարական բանաստեղծությունների հետ: Հասարակության նկատմամբ խոր դժգոհության և հիասթափության, նրանից անդարձ հեռանալու մոտիվները, նույնիսկ անծայր անապատի, սլացող ձմռանի կամ աշխարհը լքող քարավանի պատկերները մի անգամ չէ, որ հանդես են գալիս բանաստեղծի վաղ շրջանի երգերում:

Բազում վտակներից է գոյացել «Աբու-Լալա Մահարու» ոգևորության, տրամադրությունների ու խոհերի հոսանքը: Այդ դարակազմիկ պոեմը մեծ կյանքի ծնունդ է, ուր խորն են քննվում աշխարհի ու մարդկանց գործերը: «Աբու-Լալա Մահարին» Իսահակյանի ստեղծագործության ուրույն ամփոփումն է, որ ստեղծվել է հարուստ կենսափորձի վրա, գրվել մի բռնկումով, սակայն նախորդ շրջանում նախապատրաստվել է պոեմի երկունքը: Գրական երկերի ստեղծման համար պետք է որոնել ինչ-որ հատուկ ազդակ, որը շիկացնում է խոհերն ու ապրումները, ձևավորում է հղացումը, բազմաթիվ ակունքներ խառնվում են իրար՝ առաջացնելով ոգևորության ստեղծարար հոսանք:

Պոեմը գրել է 1909թ. օգոստոս-սեպտեմբերին և 1910թ. մարտ-ապրիլին, մի քանի տուրահներ առաջին անգամ տպագրվել են 1909թ. «Գեղարվեստ» հանդեսում, իսկ ամբողջությամբ լույս է տեսել առանձին գրքով 1911թ. Կ. Պոլսում: Հետագայում նա մի քանի անգամ վերամշակել է պոեմը, որը համաշխարհային ճանաչում է ստացել՝ թարգմանվելով բազմաթիվ լեզուներով՝ ռուսերեն, ճապոներեն, արաբերեն, չեխերեն, վրացերեն, ֆրանսերեն, գերմաներեն, սերբերեն: Հետաքրքիր է պոեմի մտահղացման մասին հուշերը, որ Իսահակյանը պատմել է Ինձիկյանին. «Տիրող կարգերի և օրենքների դեմ բողոքը, դժգոհությունը իմ մեջ առաջ էլ կար: Արտահայտության ձև էի որոնում: 1909թ. սեպտեմբերն էր, վեցամյա բանտարկությունից հետո գրավականով ազատվեցի Մետեխի բանտից և

վերադարձա Ալեքսանդր Կանչեցին Երևան՝ հարցաքննության: Ալեքսանդրի գնացքով էի գալիս: Քանի գնացքն արագացնում էր ընթացքը, այնքան ավելի կրկնապատկվում էին իմ մեջ փախուստի տրամադրությունները: Եվ երբ գնացքը Սարգսյանի անապատը մտավ, կիսամթնում, հորիզոնի վրա ուրվագծվեց ուղիների մի երկար ու ձիգ քարավան: Գնացքով փախչելու մտածումներս իսկույն զուգորդվեցին քարավանի հետ և փոխանցվեցին քարավանով փախչելու ցանկության: Այնուհետև սկսեցի մտածումներս դրսևորելու համապատասխան ձև գտնել: «Աբու-Լալայի» պատկերը պատրաստ էր: Վերադարձիս մեր գյուղում՝ Ղազարապատում, երեք օրվա մեջ գրեցի: Պոեմիս լիրիկական հերոսը շատ ընդհանուր բաներ ունի ինձ հետ, դրանք իմ մտորումներն են և ոչ պատմական Աբու-Լալա Մահարու: Աբու-Լալա Մահարու մասին ես առաջին անգամ կարդացել եմ 1908թ., պոեմիս գրությունից մի տարի առաջ, Իռանից Շերմի «Համաշխարհային գրականության պատմություն» գրքում, ինչպես նաև դոկտոր Աբերլանդի «Արևելքի ժողովուրդների գլխավոր գրականությունները» աշխատությունում: Իսկ ակադեմիկոս Կրաչկովսկու աշխատության հետ ծանոթացել եմ պոեմը գրելուց հետո միայն»: Իր և արաբ բանաստեղծի հոգեհարազատության մասին Իսահակյանը հետաքրքիր դատողություններ ունի, որի մասին իմանում ենք Կարեն Միքայելյանին գրած նամակից. «Գրում ես, թե «Մահարին» չի համապատասխանում պատմական դեպքին: Դա, սիրելի՛ս, ես լավ գիտեմ, ինձ միայն անունն էր պետք, հնությունը՝ կոլորիտը և մասամբ էլ նրա պեսիմիստ-փիլիսոփա հոգին: Նրա գրվածքները կարդացել եմ և՛ գերմաներեն լեզվով, և՛ ֆրանսերեն, գիտեմ, որ նա կույր է եղել, Բադդադ չի եղել, բայց այդ չէ կարևորը, այնտեղ ես եմ, ուրիշ ոչ ոք, միայն դա ուրիշի վերաբերման տակ»: Բանաստեղծը գրականագետ Ղանալանյանին ասել է, որ Ալ Մահարու մասին առաջին անգամ իմացել է պոեմը գրելուց մեկ տարի առաջ՝ 1908թ.. «Արաբ նշանավոր բանաստեղծի գրությունների մի փոքր զիրք, գերմաներեն, ձեռքս անցավ, կարդացի և գտա հոգիս նրա հոգու նման... և նրա ապրած միջավայրը համաձայն գտնելով իմ ռոմանտիկ խառնըվածքին, - քարավան, անապատ, խորհրդավորություն, արևելք, - ընտրեցի նրան իմ հույզերս մարմնավորող: Արաբ բանաստեղծից միայն երկու տող եմ առել, և ուրիշ ոչ մի բառ, ոչ մի պատկեր, որ չլինի վերաբաղություն: Նույնիսկ նրա կյանքի հանգամանքներն եմ փոխել»: Այնուհետև Իսահակյանը խոսում է իր անձնական կյանքի դժբախտ հանգամանքների (հիվանդություն, աքսոր, վտարանդիություն) և հայկական «գարհուրելի ջարդերի» մասին, որոնք եղել են պոեմում արտահայտված «սև հոռետեսության» աղբյուրը: 1926թ. Վենետիկից Հովհաննես Ավագյանին գրած նամակում Իսահակյանն ասում էր, թե «Աբու-Լալա Մահարին» իր «հոգու զավակն է», որ իր համար «խորթ չէ այդ դժբախտ հոռետեսությունը»: Պոեմը ծայրեփծայր գրված է հեղինակի և քնարական հերոսի նույնացման սկզբունքով, համընկնում են նրանց գաղափարները, կյանքի պատկերացումներն ու գնահատականները, միաձուլվում են նրանց ձայները, բանաստեղծն ու նրա հերոսը մնում են միևնույն աշխարհագրության, վերաբերմունքի և ոճի շրջանակներում: Հեղինակը պոեմը գրելու ժամանակ իր հոգեվիճակը բնութագրել է շատ տարիներ անց (1941). «Հին Իրանի մարգարե Զրադաշտն ասում էր. «Իսկ ե՛րբ, հապա, մարդկության քարավանը կընթանա արդարության ուղիով»: Անսահման հուսահատության մեջ ես այն ժամանակ կրկնում էի. «Երբե՛ք, երբե՛ք»: Ուզում էի փախչել արյունով ներկված մոլորակից, հեռանալ ժամանակից, տա-

քաճությունից, տիեզերքից»: Ըստ էության՝ պոեմի հերոսն ինքը՝ Բսահակյանն է, իսկ Բանաստեղծական կրքոտ տողերը նրա ներաշխարհի և իդեալների բացահայտումներն են:

Կարևոր նշանակություն է ունեցել նաև 10-11-րդ դարերի արաբ Բանաստեղծի՝ Աբու Ալա Ալ Մահարու (973-1057) մի ստեղծագործությունը, որն Բսահակյանը թարգմանել է 1908թ.: Աբու Ալ Ալա Մահարին, հիասթափված արատավոր մարդկանցից, շվայտ թագավորներից, երկրի մեջ որոնում էր մի արդար անկյուն: Ակնառու են թեմաների ու գաղափարների այն սաղմերը, որոնք դարձել են Բսահակյանի պոեմի հենքը:

Պոեմը, որ բաղկացած է 383 տողից, բաժանվում է ութ սուրահի: «Սուրահ» բառն արաբերեն է, այդպես են կոչվում իսլամական դավանանքի սուրբ գրքի՝ Ղուրանի մասերը: Պոեմի նախերգանքը տեղեկատվական բնույթ ունի: Սուրահների 364 տողից հերոսի մտորումները կազմում են 233 տող, իսկ հեղինակային պատմությունը՝ 131 տող: Հեղինակային պատմության մասերը ծայրից ծայր ենթարկված են պոեմի ընդհանուր քնարական մթնոլորտին: Դրանք ներդաշնակություն են ստեղծում հերոսի հոգեվիճակի և շրջապատող բնության միջև, բացահայտում են բնության անսահմանության, գեղեցկության, վեհության հակադրությունը մարդկային կրքերի ու արարքների մանրությանը, ստորությանը: Բսահակյանը պոեմի սկզբնական տարբերակում Աբու-Լալա Մահարուն մտքի երևակայական թռիչքով է հեռացրել քաղաքից, բայց Տեյրյանի խորհրդով փոխել էր պյուժետային ընթացքը՝ հերոսի փախուստին տալով իրական գործողության ձև: «Աբու-Լալա Մահարին» չունի պյուժե, չկա դեպքերի շարք, իսկ քարավանի ընթացքը միայն պայմանական միջոց է, արտաքին շրջանակ՝ հերոսի քնարական խորհրդածությունների համար: Անհատի և հասարակության կոնֆլիկտը հանդես է գալիս հերոսի հոգու խորքում ծավալվող քնարական բուռն ապրումների ձևով:

20-րդ դարի սկզբին հայ կյանքը հակասական ընթացքի մեջ էր: Արևելյան Հայաստանում բորբոքվում էին հակացարական տրամադրություններ, ծնվում էին հավասարության և ազատության հույսեր: Մակայն արյամբ է խեղդվում ազատագրական շարժումը: Բսահակյանը զգում է վայրէջքի դառնությունները, ազատ մտքի և հոգու հալածանքների սարսափները: Նրա վիշտն ավելի էր խորանում Արևմտյան Հայաստանի ճակատագրի պատճառով:

Պոեմի պատմականության խնդիրը վերլուծելիս կարևորվում է, թե որքանով է այն պատմագեղարվեստական երկ, արաբ Բանաստեղծի կյանքի և մտորումների օբյեկտիվ և հարազատ վերարտադրություն: Բսահակյանի երկը պատմական պոեմ անվանելու և գրական հերոսի ու իրական անձնավորության նույնացման ոչ մի հիմք չկա, իսկ Մահարու անվան ընտրությունն Բսահակյանին պետք էր խոսքին կոլորիտ հաղորդելու, միաժամանակ իրենից 900 տարի առաջ ապրած Բանաստեղծի տրամադրությունների և ընդհանուր աշխարհգացողության հետ համադրելու համար: Պոեմի առաջին քիչ թե շատ ծավալուն գնահատականի հեղինակ Պողոս Մակինցյանը բացահայտել է Բսահակյանի երկը պատմագեղարվեստական ստեղծագործության չափանիշներով գնահատելու սխալը՝ ցույց տալով այն բազմաթիվ անհամապատասխանությունները, նույնիսկ հակադրությունները, որ կան միջնադարի Բանաստեղծի և պոեմի հերոսի միջև: Արաբ Բանաստեղծը մանուկ հասակում զրկվել է աչքի լույսից, գրեթե ամբողջ կյանքը՝ մինչև խոր ծերություն, անց է կացրել Սիրիայի Մահարա փոքրիկ քա-

դաքում և երբեք էլ չի հեռացել անապատ, նա Բաղդադում ապրել է ոչ թե «երեք տասնյակ տարի», այլ ընդամենը 18 ամիս: Իսահակյանը պոեմն իր սեփական տրամադրություններից է հյուսել: Այն Շիրակի բանաստեղծի ապրումների պատմությունն է: Տեղյակ չլինելով հայ գրականագիտության մեջ հայտնված կարծիքներին՝ Իսահակյանի պոեմին պատմագեղարվեստական երկի սկզբունքներով և փաստական հավաստիության դիրքերից բացասական գնահատական է տվել արաբական բանասիրության հայտնի մասնագետ Կրաչկովսկին: Կարդալով պոեմի ռուսերեն թարգմանությունը և այնտեղ չտեսնելով արաբ բանաստեղծի կյանքի ու մտորումների ճիշտ պատկերը՝ գիտնականը Բյուսովին գրած նամակներում իր ցավն ու վրդովմունքն էր հայտնում և պնդում, որ հեղինակը ճիշտ չի օգտվել քասիդի և սուրահի ձևերից: Բյուսովն ընդգծում է պոեմի գեղարվեստական այլևայլ հատկանիշները՝ այն համարելով «ինքնին գեղեցիկ», ամեննին չկարևորելով պատմականությունը կամ իրական անձնավորությանը անհամապատասխան դիմանկար կերտելը: Իսահակյանը տեղյակ է եղել Կրաչկովսկու կարծիքին և այդ մասին գրել է Կարեն Միքայելյանին²⁵⁷:

Շփման բազմաթիվ եզրեր կան «Աբու-Լալա Մահարի» պոեմի և Իսահակյանի չափածո ու արձակ ուրիշ ստեղծագործությունների միջև: Նախորդ շրջանի երգերում արդեն իսկ այս կամ այն չափով երևան էին գալիս դառնություն ու վիշտ, անսիրտ կյանքն ու քար աշխարհը դատապարտելու, աշխարհից հեռանալու, անապատին ապավինելու տրամադրություններ, քարավանի, անապատի պատկերներ, աշխարհի կարգերի, հասարակության դեմ բողոքի, ըմբոստացման տրամադրություններ: Պոեմի նախապատրաստություն կարելի է համարել նաև բանաստեղծի աստանդական կյանքում «օտար, ամայի ճամփեքի վրա» հյուսված բազմաթիվ բանաստեղծությունները, որոնց մեջ նա քննում է մարդու և աշխարհի հարաբերության խնդիրները («Հեռու ավերում միտքս թափառեց», «Դարդը հետս է, հետս կուգա»): Ընդհանրապես, անապատ, ծով, ժայռ և այլ մեկուսի վայրեր տենչալը հատուկ է եղել Իսահակյանի բանաստեղծական ռոմանտիկ խառնվածքին: 1901թ. Վենետիկից Ջավահիր Ներսիսյանին գրած նամակում կարդում ենք. «Միքում եմ մոռալ ժայռերը՝ իրենց թունավոր օձերով, ձյունապատ լեռները՝ իրենց կուսական մաքրությամբ, ծովերը՝ իրենց մրրիկներով, անապատները՝ վայրի փշերով ու ծակող ծաղիկներով և կղզիները՝ իրենց լռությամբ»: Պոեմին համանուն տրամադրություններ՝ թափառումներ, դողանջող քարավանի և անձայր անապատի պատկերներ, գրվել են 1901թ.՝ «Ե՛վ անապատում, և հավերժական», 1903թ.՝ «Օտա՛ր, ամայի ճամփեքի վրա»: 1905թ. գրած «Բաղդեր վայրի թռան շվարած» տողով սկսվող՝ համեմատաբար քիչ ծանոթ բանաստեղծությունն իր մեջ խտացնում է ապագա պոեմի տրամադրություններն ու պատկերային համակարգը: Ճիշտ է, քարավանի փոխարեն այստեղ հանդես է գալիս «մրրիկի նման նժույգին նստած» և դեպի անհայտ հեռուները սլացող ձիավորի պատկերը, բայց մնացած ամեն ինչում այն թվում է պոեմի նախնական էսքիզ: 1906թ. Իսահակյանը գրել է «Իմ քարավանը» խորագրով ստեղծագործությունը, որը հրատարակվել է հետմահու: «Իմ քարավանը» և «Աբու-Լալա Մահարի» պոեմների միջև կան որոշակի նմանություններ՝ ուղտերի քարավանով հեռացող և խորհրդածող հերոսի կերպարը, պոեմի քնարական ձևը, բառացի համընկնող մի քանի տողեր:

²⁵⁷ Տե՛ս **Էդ. Ջրբաշյան**, Չորս գագաթ, Ե., 1982, էջ 158:

«Իմ քարավանը» պոեմում չկային արաբ բանաստեղծի անունն ու կերպարը, հերոսի խորհրդածություններն ուրիշ բնույթ ունեին, պտտվում էին մարդու և տիեզերքի, կյանքի և մահվան ընդհանուր հարցերի, մասամբ էլ հայ ազգի պատմության շուրջ: Պոեմի հերոսը խորհրդածում էր Բսահակյանի հայտնի բանաստեղծությունների ոգով ու ոճով: Հերոսն այստեղ միայնակ չէ, այլ մի խումբ ընկերների հետ, և նրանց ուղին ձգվում է ոչ թե անապատում, այլ Շիրակում, Արփաչայի փին և Անիի ավերակներում: Չնայած էական տարբերություններին՝ այն ևս կարելի է համարել «Աբու-Լալա Մահարի» նախնական տարբերակը: Նմանաձև տրամադրությունները կրկնվում են նաև «Ես կուզեի արևավառ անապատը ամայի», «Ո՛չ իշխանություն, ո՛չ կռիվ, ո՛չ կին», «Անտես, անձայն մի քարավան» գործերում: Պոեմի հիմքում ընկած իրադրությունը՝ կյանքի անարդարություններից դառնացած և հասարակությունից հեռացող հերոսի պատմությունը, ստորուկ աշխարհի, բռնադատված մարդու և անապատի թեման, աշխարհամերժության ու աշխարհաթողության գաղափարը, կարծես անցնում է Բսահակյանի ողջ ստեղծագործության միջով («Մասմա Մհեր», «Գարիբալդիականը», «Համբերանքի չիբուխը», խորենացիական ոճավորմամբ գրված «Ողբում եմ» խորհրդածությունը)՝ դառնալով նրա առանցքային մոտիվներից մեկը:

Դեռևս 1909թ. Լեոն Բսահակյանի ստեղծագործության համար առանձնացնում է երկու հոսանք. մեկը պայմանավորված է բնաշխարհիկ ժողովրդով, մյուսը՝ դրսով, մեկում նա «ավելի լացող է, քան ժպտացող», քանի որ այդպիսին է մայր երկիրը, մյուսում՝ «մոայլ հոռետես, որ փրկություն է որոնում «գերմարդկության գրկում»: Առաջինում նա ինքնուրույն է, երկրորդում՝ ավելի հետևորդ, քան ինքնուրույն²⁵⁸:

«Աբու-Լալա Մահարի» պոեմի ստեղծագործական պատմության հետ կապված՝ կարևորվում է նաև մի հետաքրքիր փաստ: Բսահակյանը 20-ական թվականների կեսերին փորձել է պատկերել հասարակությունից հեռացած անհատապաշտ հերոսի վերադարձը: Բանաստեղծի և քնարական հերոսի նույնացումն ակնառու է դառնում, երբ ինքն էլ հասարակական-քաղաքական տրամադրությունների անկում էր ապրում, պատրաստվում էր այցելելու Խորհրդային Հայաստան: Այդ առումով 1926թ. արտասահմանից Պողոս Մակինցյանին գրում է. «Անցյալ օրերը մտովս անցավ գրել «Աբու-Լալայի վերադարձը» և փորձի համար այս տողերը շարեցի... Այս փորձ է, շարունակությունը Հայաստանում, իրական հողի վրա, իրականությամբ ներշնչվելով»: 1926թ. աշնանը՝ իր վերադարձի օրերին, «Խորհրդային Հայաստան» թերթում տպագրվում է «Աբու-Լալայի վերադարձը» վերնագրով բանաստեղծությունը, որը վկայում է բանաստեղծի և հերոսի հոգու ու ճակատագրի նույնության մասին:

Պոեմի վերջում հանդես եկող ու նրա գաղափարական-հուզական բովանդակության մեջ կարևորագույն դեր խաղացող արևի պատկերը կարելի է գուգահեռել հայ ժողովրդի հեթանոսական ժամանակների ըմբռնումների, արևապաշտության, գրական որոշ ավանդույթների հետ, որոնք գաղափարական առումով դրանք տիրապետող չեն: Դեռ 1910-ական թվականների սկզբին Ռ. Զարդարյանը, առաջիններից մեկը գնահատելով Բսահակյանի ստեղծագործությունը, կարևորում է պոեմում դրսևորվող արևի խորհրդանիշը²⁵⁹: Մ. Շահինյանը Բսահակյա-

²⁵⁸ Տե՛ս **Լ. Հախվերդյան**, Բսահակյանի կյանքը և գործը, Ե., 1974, էջ 81:

²⁵⁹ Տե՛ս **Ռ. Զարդարյան**, Ցայգալույս, Ե., 1959, էջ 523:

նին նվիրված «Բանաստեղծի դեմքը» հոդվածում Արևի դիցաբանական պատկերի մեջ, որ գունավորված է ընդհանուր արևելյան պատկերացումների ու բնանկարի երանգներով, ընդգծում է հեղինակի ձգտումը դեպի Բարին, Ազատությունը, Ճշմարտությունը:

Իսահակյանը հերոսի մեջ խտացնում է աշխարհի և մարդկության ցավերն ու հոգսերը՝ հիշեցնելով քաղաքական ու բարոյական անլուր աղետներից դառնացած միջնադարյան բանաստեղծի՝ Ֆրիկի խոհերը.

Այս կյանքը զուր է խավար,
Եվ ի ձեռինդ լապտեր չունիս:

Կենսահայեցողության շատ կողմերով Իսահակյանը հոգեկից է նաև Թումանյանին, և պոեմը կարելի է զուգահեռել քառյակների հետ. («Զուր եմ փախչում...»): «Աբու-Լալա Մահարիում» զգացվում է նաև Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմից ստացված ներշնչումներ: Իսահակյանը մեր պոեզիայի պատմության մեջ միակն է, որ օգտագործել է Նարեկացու հայտնագործած քսանվանկանի ոտանավորի չափը, որով պոեմի բովանդակությանը համապատասխան՝ ռիթմի ու երաժշտականության հիանալի արդյունքների է հասել, ու ընթերցելու ժամանակ ստեղծվում է քայլող քարավանի համաչափ ու հանդիսավոր ընթացքի պատրանք:

«Աբու-Լալա Մահարի» պոեմի վրա ակներև են նաև օտար ազդեցությունները: Իսահակյանը մերժում է իր պոեմը կոնկրետ որևէ ստեղծագործության հետ կապելու, նրա տոհմագրությունը մեկ առանձին երկով սահմանափակելու փորձերը. «Կան բանաստեղծներ, որոնց ես շատ եմ սիրել և սիրում եմ. – Բայրոն, Հայնե, Միցկևիչ, Լերմոնտով, Բարաթաշվիլի: «Աբու-Լալա Մահարի» Բայրոնի «Չայլդ Հարոլդի», Միցկևիչի «Ֆարիսի» և Բարաթաշվիլիի «Մերանիի» ոգուն շատ մտերիմ է, ինչպես և նրանք շատ հարազատ են իմ տրամադրություններին»:

Հասարակությունից դուրս ազատության հասնելու նման պատկերացման մեջ անտիկ մտածողության սաղմեր կան, թերևս Սոկրատեսի փիլիսոփայության հիմքը, որը քարոզում էր գնալ դեպի բնությունը և երջանկություն փնտրել հասարակությունից դուրս՝ ոգու ազատության հասնելու միջոցով:

Գրականագիտության մեջ հաճախ է խոսվել Իսահակյանի պոեմում Նիցշեի գաղափարների և ռճի ազդեցության մասին, մշտապես կատարվել են զուգահեռներ ու անդրադարձներ: Չի կարելի ասել, թե պոեմի գաղափարախոսությունը ամբողջովին պիտի կապել նիցշեականության հետ, նաև չի կարելի ժխտել այն ակնառու ընդհանրությունը, որ կա նրանց միջև: Գրելով ժամանակակից աշխարհի մասին իր մտորումներն ամփոփող այդ ստեղծագործությունը՝ Իսահակյանը, անտարակույս, ներշնչվել է Նիցշեի «Ջրադաշտի» քննադատական ոգուց, հասարակության արատների մերկացման պաթոսից և արտահայտման որոշ ձևերից: Սակայն Իսահակյանի ստեղծագործությանը բնորոշ հումանիստական ոգու, անարդարությունների հետ չհաշտվող և այդ պատճառով հասարակությունից հեռացող նրա հերոսի համար, ըստ էության, խորթ էին նիցշեական գերմարդու մարդասոյաց քարոզները, ուժի և իշխանության, բռնության և պատերազմների փառաբանումը: Իսահակյանն ինքն է բացահայտել Նիցշեի ստեղծագործության նկատմամբ իր վերաբերմունքի ինքնատիպությունը. «Ինձ ոգևորում էր Նիցշեի ընդվզող ոգին, տիրող հասարակության կաշկանդումներից մարդուն ձերբազատելու ձգտումը, լակոնիկ կոտ ռճը: Հերոսների պաշտամունք ես էլ ունեմ, բայց

Նիցշեի գերմարդու դաժանությունը չեմ ընդունում: Չէ՛ որ հայ ժողովուրդը դաժանության զոհն է»:

«Աբու-Լալա Մահարու»՝ դեպի մարդը, մարդկությունը և հայրենիքն ունեցած թանձր դառնությունն ունի հազարամյակների հնություն և չափազանց նոր շեշտեր: Եգիպտական հնագույն պոեմը՝ «Հիասթափվածի վեճը իր հոգու հետ», կարծես խոսում է 20-րդ դարի բարոյական կեղծ կապերի ու արատների մասին, ներկայացնում մարդկային հատկանիշների արժեզրկումը՝ մահը համարելով ազատում «տանջանքի շղթաներից»:

Իսահակյանի պոեմի հոգեբանական ու գեղագիտական բովանդակության, նրա կառուցվածքի մեջ յուրովի է արտահայտվել դասական ռոմանտիզմի ամենաբնորոշ արտահայտությունը. միայնակ ու հպարտ հերոսը չի հաշտվում աշխարհում տիրող կարգի և օրենքների հետ, խզում է իր կապերն ու հեռանում հասարակությունից: Հերոսն իդեալականացվում է, իսկ նրա շրջապատում ամեն ինչ դատապարտվում է ու մերժվում՝ իբրև անլիարժեք, հասարակական ու գեղագիտական բարձր ըմբռնումներին չհամապատասխանող: Այս գաղափարական դրսևորումները կան նաև Բայրոնի «Չայլդ Հարոլդում», Պուշկինի, Միցկևիչի, Լերմոնտովի ռոմանտիկական պոեմներում:

Համաշխարհային գրականության պատմության մեջ Բայրոնն առաջինն էր, որ ստեղծեց հասարակությունից հիասթափված և նրանից անդարձ հեռացող միայնակ անհատի՝ Հարոլդի կերպարը («Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը»), որը, հասարակության հետ անհաշտելի հակասության մեջ մտնելով, ամեն ինչից ձանձրանալով, պայքարելով ճշմարտության և արդարության համար, սկիզբ է դնում համանման գրական հերոսների մի ամբողջ շարքի, որոնց երկվորյակն ու գաղափարների շարունակողն է Աբու-Լալան: Դառնացած աշխարհից, հայրենի եզերքից՝ Բայրոնը գրում է ծանրաթափած տողեր՝ հետևում թողած Անգլիայի ու հայրենի եզերքի մասին.

Մնաս բարով, կապույտ հեռվում կորչող եզերք հայրենի...

Իսահակյանի հերոսի փախուստը գերծ է ձանձրույթի վերացական-հոգեբանական մոտիվից և ավելի կոնկետ հասարակական գունավորում ունի: Այդ երկու հերոսների հոգեբանական ազգակցությունն անմիջելի է: Աբու-Լալայի բազմիցս տված երդումները՝

Ես ետ չեմ դառնա ժանտ քաղաքները, ուր բազմաժխտ կրքերն են եռում,

Ես ետ չեմ դառնա մարդու մոտ երբեք, դուրը չեմ բախի մարդու նենգավոր...
իրենց հեռավոր նախատիպն ունեն Հարոլդի «Հրաժեշտի երգի» մեջ.

Դե՛հ, իմ նավակ, եկ սլանանք, ծովի վերա փրփրադեզ,

Ուր որ կուգես, հոգ չէ, գնանք, միայն հայրենիք չտանես:

Տարբեր է Բայրոնի և Իսահակյանի հերոսների ճակատագրերը, սակայն համանման է կերպարակերտման ելակետը: Չայլդ Հարոլդը գնում է շրջելու Եվրոպայի տարբեր երկրներում, դիտելու և գնահատելու այնտեղ ծավալվող քաղաքական անցուդարձերը, իսկ Աբու-Լալայի ուղին ավելի պայմանական-իդեալական, սիմվոլիկ-փիլիսոփայական է:

Ադամ Միցկևիչի «Ֆարիս» և Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմներն իրար մերձեցնող գծերից է արևելյան-արաբական բնությունն ու կոլորիտը, նժույգի վրա հեռուն սլացող ձիավորի կերպարը (Ֆարիս նշանակում է ձիավոր): Այդ կերպարը, իբրև ազատության և բարձր իդեալի ձգտող կամքի խորհրդանիշ,

Первая модель характеризуется (рисунок. 4) доступностью всех услуг и подразделений торгового центра, что достигается благодаря единому коммуникационному ядру – атриуму, совмещенному с торговыми улицами. Основным преимуществом данной схемы является быстрая доступность к предприятиям торговли, а также функциональное разграничение торгового и развлекательного пространства. Но при этом, следует обратить внимание на компактность и легкую навигацию, благодаря чему передвижение потребителей по торговому центру не будет осложнено никакими факторами.

Следующая модель включает в себя единое коммуникационное ядро, в качестве которого выступают торговые улицы. В большей степени, модель №2 (рисунок 5) характерна для малых торговых центров, которые обладают сложной конфигурацией плана и градостроительной ситуацией. Доступность ко всем функциональным зонам и подразделениям осуществляется посредством торговых улиц и вертикальных коммуникаций.

Модель №3 (рисунок 6) обладает достаточно сложным коммуникационным ядром. Связи с функциональными зонами осуществляются за счет атриума и торговых улиц, имеющие общие либособственные группы вертикальных коммуникаций. В данном случае каждое ядро может обеспечивать доступность, как к определенным группам функциональных зон, так и иметь свои автономные. Данная модель характерна для средних и больших ТРЦ, имеющих сложную конфигурацию плана, сложную конфигурацию функциональных зон и др.



Рисунок 4. Универсальная логическая модель №1




Рисунок 5. Универсальная логическая модель №2




Рисунок 6. Универсальная логическая модель №3

И последняя модель (см. рисунок 7) характеризуется сложным коммуникационным ядром, связи в котором осуществляются за счет автономных входных групп при каждой торговой площади. В данном случае каждое предприятие в торгово-развлекательном центре имеет собственное ядро. Такая модель преимущественно подходит для больших торговых центров, которые имеют открытую пространственную площадь, включающую несколько входов, и обрамляющую торговый центр парковку.

Следует отметить, что данное функционально-планировочное решение наиболее эффективно, поскольку потребитель имеет возможность обращаться к интересующим его зонам торгового центра оперативно и беспрепятственно, а, как известно, некоторые группы потребителей не посещают торговые центры для совершения мелких покупок.

И, несмотря на строгое разграничение всех зон, отмечается упрощенная и доступная навигация в общем пространстве торгового центра.




Рисунок 7. Универсальная логическая модель №4

Приведенные модели часто применяются на практике планирования функционального пространства современных торговых центров, и их использование позволяет сформировать оптимальную структуру функциональных решений и пространственных особенностей, которые в определенной степени влияют на восприятие потребителем торгового центра. Независимо от выбора универсальной логической модели, руководствующими факторами при проектировании функционально-планировочных особенностей торгового центра должны являться:

- удобство в расположении основных и дополнительных функциональных зон;
- относительно простая навигация и доступность различных функциональных зон с ключевых планировочных точек (входной группы, распределительной зоны).

ЛИТЕРАТУРА

1. Desvaux G., Guangyu Li, Penhirin J., *Shanghai Shopping*. mckinsey Quarterly. 2002. № 2. С. 17-20.
2. Рыженко Г.Н., Бухвалов С.С., *Торговые центры в системе социально-экономических отношений информационного общества*. Известия Уральского государственного экономического университета. 2006. Т. 16. № 4. С. 55-61.
3. Старцева Н.А., Лебедь Е.В. Особенности проектирования многофункциональных торговых центров // Научный журнал. Инженерные системы и сооружения. - 2012. - № 2.- С. 56-67.
4. Сукиасян Д.А. Стратегия деvelopeмента торговых центров в России. – TerraEconomicus.- 2006. - № 2. - С. 236 -239.
5. Яськова Н.Ю. Бакрунов Ю.О. Отечественный деvelopeммент – уникальный бизнес-симбиоз/ / Экономика строительства – 2008 - № 3 – с. 44-53

Անտոնինա Րիժիխ– Ժամանակակից առևտրի կենտրոնի տարածքի սոցիալ-տեխնոլոգիական նախագծում. սոցիալ-հաղորդակցային փոխազդեցության միջավայրի օպտիմալացում: – Հոդվածը նվիրված է ժամանակակից առևտրի սրահի սոցիալ-տեխնոլոգիական նախագծմանը:

Ժամանակակից առևտրի սրահի նախագծումը ներկայացված է իբրև կառավարման սուբյեկտների համար նախատեսված սոցիալական մի միջավայր: Նախագծման հիմքում ընկած են նախագծման գործառույթները, որոնք ներկայացված են որպես ժամանակակից առևտրի սրահի տարածքի նախագիծ:

Antonina Rizhikh – Social-technological project of the areas of modern trade center: optimisation of environment of social-communicative interaction. – Article is devoted to design of base social technological spaces of shopping center.

The functional and planning space of modern trade centre is presented as an environment of social complexed spaces of subjects of management. On the basis of the principles of functional planning are presented standard logical models of modern trade centre design.

**ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԵՎ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ
ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԱԿՍԵԼ ՊՈՏՈՍՅԱՆ, ՇՈՂԻԿ ՔՈԼՅԱՆ

Ժամանակակից պայմաններում գյուղական տարաբնակեցման հետագա զարգացումը, վերափոխումն ու կատարելագործումը տեղի է ունենում բնական, արտադրատնտեսական, ֆինանսական, սոցիալ-ժողովրդագրական, վարչատարածքային ու ուրբանիզացիոն և այլ գործոնների ազդեցության տակ: Գյուղական տարաբնակեցման համակարգի զարգացման վրա այդ գործոնների ազդեցության ուսումնասիրումը հնարավորություն է տալիս բացահայտել ինչպես առանձին գյուղական բնակավայրերի, այնպես էլ գյուղական տարաբնակեցման համակարգի զարգացման միտումները և վերափոխման ու կատարելագործման ուղիները:

Ցանկացած տարածքում բնական համալիրի տարրերից գյուղական տարաբնակեցման և առանձին գյուղական բնակավայրի զարգացման վրա իրենց ազդեցությունն են թողնում ռելիեֆային և կլիմայական պայմանները, հողաբուսական ծածկը, ջրագրական ցանցը և տեղային այլ գործոններ, որոնք ենթակա են փոփոխության տեղից-տեղ՝ կախված աշխարհագրական լայնությունից և ծովի մակարդակից ունեցած բարձրությունից:

ՀՀ համեմատաբար փոքր և լեռնային մակերևույթ ունեցող տարածքում բնական համալիրի տարրերից առանձին գյուղական բնակավայրերի և տարաբնակեցման համակարգի զարգացման ու վերափոխման վրա ազդող ինտեգրալ ցուցանիշ կարելի է համարել տեղանքի ծովի մակարդակից ունեցած բարձրությունը, քանի որ վերջինիս փոփոխմամբ, որպես օրենք, փոփոխվում են նաև բնական համալիրի մյուս տարրերը: Ընդ որում, գյուղական բնակավայրերի ծովի մակարդակից ունեցած բարձրության աճմանը զուգընթաց ընդհանուր առմամբ վատանում են բնակչության կենսագործունեության պայմանները և նվազում են գյուղական բնակավայրերի զարգացման հնարավորությունները:

Ժամանակակից պայմաններում գյուղական տարաբնակեցման վերափոխումն ու կատարելագործումը և առանձին գյուղերի զարգացումը մեծապես կախված է ֆինանսական և արտադրատնտեսական գործոններից: Դրանց թվում առավել մեծ դեր ունեն գյուղական համայնքի վարչական բյուջեի փաստացի եկամուտները, համայնքի բնակչության բյուջեի սեփական եկամուտները, գյուղական բնակավայրի գյուղատնտեսական հողատարածքներով և մասնավորապես՝ մշակելի հողատարածքներով ապահովվածությունը:

Վարչատարածքային ու ուրբանիզացիոն գործոններից գյուղական բնակավայրերի և տարաբնակեցման համակարգի զարգացման և վերափոխման վրա առավել մեծ ազդեցություն են թողնում տարածաշրջանային, մարզային և հանրապետական նշանակության կենտրոններից գյուղական բնակավայրերի ունեցած

հեռավորությունը: Որպես այդպիսիք հանդես են գալիս նախկին վարչական շրջանների կենտրոնները, մայրաքաղաք Երևանը և տարաբնակեցման համակարգի տեղային այլ կենտրոններ:

Բացի նշվածներից գյուղական բնակավայրերի զարգացումը և տարաբնակեցման համակարգի վերափոխումն ու կատարելագործումը մեծապես կախված են սոցիալ-ժողովրդագրական և այլ գործոններից: Դրանցից առավել մեծ դեր ունեն գյուղական բնակավայրերի ապահովվածությունը սոցիալ-մշակութային ծառայություններով և առկա ժողովրդագրական իրավիճակը՝ բնակչության սեռատարիքային կառուցվածքը, վերաբնակչության և միգրացիոն գործընթացները, սոցիալ-հոգեբանական այլ գործոններ:

ՀՀ տարբեր մարզերում, տարածաշրջաններում և նույնիսկ առանձին գյուղական համայնքներում ու գյուղերում վերը նշված գործոնների խմբի և առանձին գործոնների ազդեցությունը գյուղական բնակավայրերի զարգացման և տարաբնակեցման համակարգի վերափոխման ու կատարելագործման վրա դրսևորվում են տարբեր կերպ: Այսպես՝ հանրապետության բարձրադիր-լեռնային շրջաններում (բնակավայրերում) գյուղական բնակավայրերի զարգացման վրա դեռևս էական դեր ունեն բնական համալիրի տարրերը, սահմանամերձ շրջաններում՝ առկա տարածաշրջանային իրավիճակը, քաղաքաաշխարհագրական և տնտեսաաշխարհագրական դիրքը, մայրաքաղաքային ռեգիոնում՝ տրանսպորտային ցանցի խտությունը, մայրաքաղաքից ունեցած հեռավորությունը և տրանսպորտային կապով ապահովվածության աստիճանը: Դրա հետ միաժամանակ, ինչպես առանձին գյուղական համայնքների ու գյուղերի, այնպես էլ տարաբնակեցման համակարգի հետագա զարգացումը, վերափոխումն և կատարելագործումը կախված են վերը նշված գործոնների խմբի համալիր ազդեցությամբ:

Հաշվի առնելով ՀՀ գյուղական տարաբնակեցման զարգացման ժամանակակից առանձնահատկությունները, ինչպես նաև նկատի ունենալով մեր հանրապետությունում առկա սոցիալ-տնտեսական և տարածաշրջանային իրավիճակը, ելնելով համապատասխան վիճակագրական տվյալների ձեռքբերման հնարավորությունից ու առկայությունից, առանձնացրել ենք այն հիմնական գործոնները, որոնք ունեն առավել մեծ դեր ինչպես առանձին գյուղական բնակավայրերի, այնպես էլ տարածաշրջանների և ողջ հանրապետության գյուղական տարաբնակեցման զարգացման, վերափոխման և կատարելագործման համար: Այդպիսի գործոններ են համարվում գյուղական համայնքի (բնակավայրի) ծովի մակարդակից ունեցած բարձրությունը, վարչական բյուջեի փաստացի եկամուտները, մշակելի հողատարածքների և գյուղատնտեսական ընդհանուր հողատարածքների մեծությունը, նախկին շրջկենտրոններից և մարզկենտրոններից ունեցած հեռավորությունն ու ուրբանիզացիայի մակարդակը, ինչպես նաև գյուղական բնակավայրի հեռավորությունը գյուղատնտեսական և առևտրային մեծ շուկաներից, մայրաքաղաք Երևանից:

Նշված գործոնների ազդեցությունը տարածաշրջանի գյուղական տարաբնակեցման վրա դրսևորվում է տարաբնակեցումը բնութագրող այնպիսի ցուցանիշներով, ինչպիսիք են գյուղական բնակավայրի միջին մարդաքանակը, տարածաշրջանի գյուղական բնակչության և բնակավայրերի խտությունը:

Գյուղական տարաբնակեցման հիմնական բնութագրերի վրա նշված գործոնների ազդեցությունը պարզելու համար կոռելյացիոն վերլուծության մեթոդով

կատարել ենք հետազոտություն և բացահայտել ենք յուրաքանչյուր գործոնի ազդեցությունը գյուղական տարաբնակեցումը բնութագրող ցուցանիշների՝ մասնավորապես գյուղական բնակավայրերի մարդաքանակի վրա: Վերջինս՝ գյուղական բնակավայրի մարդաքանակն, ըստ էության, ինտեգրալ այն ցուցանիշն է, որն ընդհանրական ձևով արտահայտում է գյուղական տարաբնակեցման ընդհանուր պատկերը և գյուղական բնակավայրի զարգացման ու վերափոխման արդյունքը:

ՀՀ գյուղական տարաբնակեցման տարածաշրջանային ընդհանրական ցուցանիշների՝ **գյուղական բնակավայրերի միջին մարդաքանակի, գյուղական բնակչության և գյուղական բնակավայրերի խտության վրա** առանձին գործոնների ազդեցության վերլուծությունը կատարել ենք ՀՀ նախկին վարչական շրջանների կամ ներկայիս տարածաշրջանների կտրվածքով, իսկ մնացած դեպքերում հետազոտության առարկա են համարվել նույն այդ տարածաշրջանների մեջ մտնող գյուղական համայնքներն ու բնակավայրերը՝ տարաբնակեցման համակարգի սկզբնական միավորները:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ տարածաշրջանների գյուղական բնակչության խտությունը սերտ կապ ունի այդ շրջանների ընդհանուր տարածքում գյուղատնտեսական հողատարածքների մասնաբաժնի հետ: Դրանց միջև աստիճանային կոռելյացիայի գործակիցը կազմում է 0,57: Դա նշանակում է, որ ՀՀ-ում, և մասնավորապես առանձին տարածաշրջաններում, գյուղական բնակչության թվաքանակի մեծությունը և դրանով պայմանավորված գյուղական բնակչության խտությունն անմիջական, սերտ կապ ունի բնակավայրերի զարգացման հիմնական արտադրական բազայի՝ գյուղատնտեսական հողատարածքների մեծության հետ: Միաժամանակ պետք է նշել, որ առանձին տարածաշրջանների գյուղատնտեսական հողատարածքների հարաբերական մեծությունների և գյուղատնտեսական հողատարածքների հաշվով գյուղական բնակչության խտության ցուցանիշների միջև կապը համեմատաբար թույլ է (կոռելյացիայի գործակիցը հավասար է 0,24-ի): Դա բացատրվում է այն հանգամանքով, որ ՀՀ տարբեր տարածաշրջաններ ունեն ոչ միայն ընդհանուր տարածքում գյուղատնտեսական հողատարածքների տարբեր տեսակարար կշիռներ, այլ նաև գյուղատնտեսական հողատարածքների կառուցվածքում մշակելի հողատարածքների և արոտավայրերի ու խոտհարքերի տարբեր չափաբաժիններ, որոնք տարբեր տարածաշրջաններում գտնվում են ծովի մակարդակից զգալիորեն մեծ տարբերություններ ունեցող բարձրությունների վրա և ունեն հողակլիմայական պայմանների նկատելի տարբերություններ: Թույլ կապ կա նաև նախկին վարչական շրջանների գյուղատնտեսական հողատեսքերի մասնաբաժինների և այդ շրջանների գյուղական բնակչության թվաքանակի միջև՝ 0,314: Սրա պատճառը ևս ՀՀ տարբեր տարածաշրջանների բնաաշխարհագրական և ագրոկլիմայական զգալիորեն մեծ տարբերություններ ունեցող պայմաններն են, որի պատճառով այդ տարածքներում կարող են ձևավորվել և զարգանալ տարբեր մեծության և քանակի գյուղական բնակավայրեր: Այսպես, օրինակ, Արմավիրի և Ամասիայի տարածաշրջաններում գյուղատնտեսական հողատարածքների մասնաբաժինը կազմում է 67-ական տոկոս, սակայն Արմավիրն ունի 37 գյուղական բնակավայր 2119 մարդ միջին մարդաքանակով, իսկ Ամասիան՝ 26 գյուղական բնակավայր, 277 մարդ միջին մարդաքանակով:

Ցանկացած տարածաշրջանի գյուղական տարաբնակեցման համակարգի զարգացման և վերափոխման գործընթացները մեծապես կախված են նաև գյուղական տարաբնակեցումը բնութագրող մեկ այլ ցուցանիշից՝ գյուղական բնակավայրերի խտությունից, որն արտահայտվում է 100 կմ² տարածքին կամ էլ 100 կմ² գյուղատնտեսական հողատարածքին բաժին ընկնող գյուղերի քանակով (երբեմն գյուղական բնակավայրերի խտությունն արտահայտում են գյուղական բնակավայրերի միջև միջին հեռավորությամբ):

ՀՀ-ում վարչական տարածաշրջանների գյուղատնտեսական հողատարածքների հարաբերական մեծությունների և գյուղատնտեսական հողատարածքների հաշվով գյուղական բնակավայրերի խտության միջև կոռելյացիոն կապ գրեթե չկա (0,02): Դրա պատճառը հանրապետության տարբեր տարածաշրջանների գյուղատնտեսական հողատարածքների հողակլիմայական պայմանների և ագրոկլիմայական ռեսուրսների զգալիորեն մեծ տարբերություններն են, որոնք այս կամ այն տարածաշրջանում ստեղծում են տարբեր քանակի և մեծության գյուղական բնակավայրերի ձևավորման և զարգացման համար միանգամայն տարբեր նախադրյալներ: Օրինակ, Արտաշատի և Սևանի տարածաշրջաններն ունեն գյուղատնտեսական հողատարածքների գրեթե հավասար հարաբերական մեծություններ, սակայն Արտաշատի տարածաշրջանում գյուղատնտեսական հողատարածքների հաշվով գյուղական բնակավայրերի խտությունը մոտ երեք անգամ գերազանցում է Սևանի տարածաշրջանի համապատասխան ցուցանիշին:

Հանրապետության գյուղական տարաբնակեցումը և տարաբնակեցման համակարգի զարգացման մակարդակը բնութագրող մյուս կարևորագույն ցուցանիշը գյուղական բնակավայրերի միջև հեռավորությունն է, որը բավական սերտ կապ ունի ՀՀ վարչական տարածաշրջանների գյուղատնտեսական հողատարածքների հարաբերական մեծությունների հետ: Դրանց միջև աստիճանային կոռելյացիայի գործակիցը հավասար է 0,605-ի: Սա այն իրողության ապացույցն է, որ ինչքան մեծ է գյուղատնտեսական հողատարածքների տեսակարար կշիռը, այնքան շատ են և խիտ են տեղաբաշխված գյուղական բնակավայրերը:

ՀՀ տարածաշրջանների գյուղական տարաբնակեցման մյուս կարևոր բնութագրիչը՝ գյուղերի միջին մարդաքանակը, որոշակի կախվածություն ունի այդ տարածաշրջանների գյուղատնտեսական հողատարածքների մեծությունների հետ: Դրանց միջև աստիճանային կոռելյացիայի գործակիցը կազմում է 0,36: Դրա պատճառը նույնպես այդ տարածաշրջանների գյուղատնտեսական հողատարածքների կառուցվածքի, հողակլիմայական պայմանների և ծովի մակարդակից ունեցած բարձրությունների զգալիորեն մեծ տարբերություններն են, որոնք ստեղծում են տարբեր մեծության գյուղական բնակավայրերի ձևավորման համար բնաաշխարհագրական և արտադրատնտեսական միանգամայն տարբեր պայմաններ:

Գիտագործնական առումով մեծ կարևորություն և նշանակություն ունի նաև գյուղական տարաբնակեցման զարգացման և վերափոխման վրա ազդող գործոնների վերլուծությունը գյուղական համայնքների կամ բնակավայրերի մակարդակով: Դա հնարավորություն կտա բացահայտել տարաբնակեցման համակարգի սկզբնական օղակի միավորների վրա ազդող հիմնական գործոնները:

ՀՀ գյուղական բնակավայրերի զարգացման և տարաբնակեցման վերափոխման ու կատարելագործման գործում մեծ դեր ունի գյուղական համայնքների

վարչական բյուջեի փաստացի եկամուտները: Հանրապետության 37 տարածաշրջաններից 22-ում վարչական բյուջեի մեծության և գյուղական համայնքի բնակչության թվաքանակի միջև կոռելյացիոն կապի գործակիցը անցնում է 0, 90-ից, Ամասիայի տարածաշրջանում այն կազմում է 0,11 իսկ մնացած տարածաշրջաններում տատանվում է 0,7-0,9-ի սահմաններում (մանրամասն տես աղ. 1-ը):

Մեր հանրապետության գյուղական համայնքների ու բնակավայրերի և տարաբնակեցման համակարգի զարգացման վրա մեծ ազդեցություն ունեն մշակելի հողատարածքները: Դրանց չափերից և արդյունավետ օգտագործումից է կախված գյուղական բնակավայրերի մարդաքանակը: Բացառությամբ Մեղրու, Անիի, Ամասիայի և Բաղրամյանի տարածաշրջանների մյուսներում գյուղական համայնքների մշակելի հողատարածքների չափերի և գյուղերի մարդաքանակի միջև կոռելյացիոն անմիջական կապ կա: Այդ կապն առավել սերտ է Նոյեմբերյանի, Գավառի, Էջմիածնի, Սևանի, Տաշիրի, Արագածի, Աշոցքի և Ստեփանավանի տարածաշրջաններում, իսկ համեմատաբար թույլ է Արթիկի, Թալինի, Կապանի, Սպիտակի, Նաիրիի, Վարդենիսի, Մասիսի, Արմավիրի և Եղեգնաձորի տարածաշրջաններում (աղ. 1): ՀՀ 15 տարածաշրջաններում գյուղական համայնքների ու բնակավայրերի մարդաքանակը մեծապես կախված է ընդհանուր գյուղատնտեսական հողատարածքների չափերից (աղ.1): Կոտայքի, Նաիրիի, Հրազդանի և Մարտունու տարածաշրջաններում այդ երևույթների միջև կապը գրեթե բացակայում է, Բաղրամյանի տարածաշրջանում այդպիսի կապը գրեթե հակադարձ է (-0,72), իսկ Արարատի, Եղեգնաձորի և Ամասիայի տարածաշրջաններում նշված մեծությունների միջև աստիճանային կոռելյացիայի գործակիցը տատանվում է -0,42-ի - (-0,22-ի) սահմաններում:

Չնայած որ լեռնային երկրներում ծովի մակարդակից ունեցած բարձրության ավելացմանը զուգընթաց նվազում է բնակչության թիվը և խտությունը, սակայն ՀՀ-ում գյուղական համայնքների ծովի մակարդակից ունեցած բարձրության և գյուղերի մարդաքանակի միջև կապը թույլ է: Այդպիսի կապն առավել սերտ է Ամասիայի (0,80), Եղեգնաձորի (0,75), Վարդենիսի (0,70), Կոտայքի (0,59), Նաիրիի (0,63), Բաղրամյանի (0,69), Արարատի (0,54) և Ախուրյանի (0,51) տարածաշրջաններում: Անիի տարածաշրջանում այդպիսի կապը մոտ է հակադարձին, իսկ մնացած տարածաշրջաններում կամ թույլ է կամ էլ գրեթե բացակայում է (աղ. 1):

Ցանկացած տարածքում տարաբնակեցման համակարգի զարգացման վրա մեծ ազդեցություն են թողնում տարածքի ուրբանիզացվածության մակարդակը, քաղաքային բնակավայրերի թիվը և տարածաշրջանային ու տեղական կենտրոնների զարգացման մակարդակը: Մեր հանրապետության ժամանակակից գյուղական տարաբնակեցման համակարգի զարգացման վրա բավական երկարատև ժամանակաշրջան իրենց ազդեցությունն են թողել տարածաշրջանային կամ վարչական շրջանների կենտրոնները, որոնք այդ շրջանների սահմաններում կատարել են վարչական, տնտեսական, առողջապահական և մշակութային ոլորտների կազմակերպիչ կորիզի դեր: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ նախկին վարչական շրջանների կենտրոններից ունեցած հեռավորության և գյուղական բնակավայրերի մարդաքանակի միջև կա որոշակի կապ: Հանրապետության քսանչորս տարածաշրջանում տարածաշրջանային կենտրոնից ունեցած հեռավորության և գյուղական բնակավայրերի մարդաքանակի միջև աս-

տիճանային կոռելյացիայի գործակցի ցուցանիշները փոքր չեն 0,3-ից: Այդ կապն առավել սերտ է Անիի, Աշոցքի, Աշտարակի, Գորիսի, Իջևանի, Գավառի, Մարտունու, Վարդենիսի, Արարատի, Արտաշատի և Եղեգնաձորի տարածաշրջաններում (աղ.1): Արթիկի, Մեղրու, Թումանյանի, Սպիտակի, Նաիրիի, Մասիսի և Վայքի տարածաշրջաններում այդ կապն համեմատաբար թույլ է (0,2-0,3 սահմաններում), իսկ Ապարանի, Արագածի, Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջաններում նախկին շրջկենտրոններից ունեցած հեռավորության և գյուղական բնակավայրերի մարդաքանակի միջև կապը գրեթե բացակայում է:

Ներկայումս ՀՀ-ի և առանձին տարածաշրջանների ու մարզերի գյուղական տարաբնակեցման վրա իրենց ազդեցությունն են թողնում նաև մարզկենտրոնները: Հետազոտության արդյունքները վկայում են այն մասին, որ ՀՀ 21 տարածաշրջանում մարզկենտրոնից ունեցած հեռավորության և տարածաշրջանի գյուղական բնակավայրերի մարդաքանակի միջև աստիճանային կոռելյացիայի մեծությունը տատանվում է 0,3--0,7-ի սահմաններում: Այդ ցուցանիշն առավել մեծ է Ախուրյանի, Ամասիայի, Աշտարակի, Ապարանի, Իջևանի, Գավառի, Վարդենիսի, Արտաշատի, Արարատի և Եղեգնաձորի տարածաշրջաններում: Աշոցքի, Արթիկի, Արագածի, Թումանյանի, Սպիտակի, Տաշիրի, Մարտունու, Սևանի, Մասիսի և Վայքի տարածաշրջաններում այդպիսի կապը գրեթե բացակայում է, իսկ Գորիսի, Մեղրու, Տավուշի և Նաիրիի տարածաշրջաններում այն ավելի շատ հակադարձ է, էջմիածնի տարածաշրջանում՝ շատ թույլ է:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ մարզկենտրոններում և նախկին շրջկենտրոններում վարչական գործառնությունը գուցա հեռ տնտեսական, սոցիալական, մշակութային, առողջապահական և այլ ծառայությունների բազմազան ձևերի, ինչպես նաև ուրբանիզացիոն գործընթացների համաչափ զարգացումն էական դեր կունենա գյուղական բնակավայրերի զարգացման ու առաջընթացի և տարաբնակեցման համակարգի կայունացման և կատարելագործման համար:

ՀՀ-ի նման փոքր տարածք ունեցող երկրներում գյուղական բնակավայրերի և տարաբնակեցման համակարգի զարգացման վրա իր նշանակալից ազդեցությունն է թողնում նաև երկիր մայրաքաղաքը: Այդ ազդեցությունն ավելի մեծ է լինում մայրաքաղաքային ռեգիոնում և աստիճանաբար թուլանում է մայրաքաղաքից ունեցած հեռավորության ավելացմանը համեմատ:

Ժամանակակից պայմաններում, երբ ՀՀ-ում աստիճանաբար զարգանում և խորանում են շուկայական տնտեսական հարաբերությունները, գյուղական տարաբնակեցման և առանձին գյուղական բնակավայրերի զարգացման վրա զգալի ազդեցություն են թողնում մոտակա մեծ առևտրային և գյուղատնտեսական շուկաները: Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանրապետության բոլոր մարզերում գյուղական բնակավայրերի համար մոտակա մեծ առևտրային և գյուղատնտեսական շուկայի դեր են կատարում մարզկենտրոնները և տարածաշրջանային կենտրոնները, մայրաքաղաքին սահմանակից մարզերի առանձին գյուղերի համար այդպիսի գործառնություն է իրականացնում նաև Երևանը, իսկ որոշ դեպքերում նման դեր են կատարում տարածաշրջանային նշանակության քաղաքային բնակավայրերը և տեղական կենտրոնները: Ստացվում է, որ մարզկենտրոնները և տարածաշրջանային կենտրոնները ժամանակակից պայմաններում բացի վարչակազմակերպչական գործառնությունից, գյուղական բնակավայրերի համար ունեն նաև արտադրատնտեսական և առևտ-

բային կենտրոնի նշանակություն և մարզկենտրոններից ու տարածաշրջանային կենտրոններից գյուղական բնակավայրերի ունեցած հեռավորությունն էական նշանակություն ունի ինչպես առանձին գյուղական բնակավայրերի, այնպես էլ տարաբնակեցման ողջ համակարգի զարգացման և վերափոխման համար:

Աղյուսակ 1.

ՀՀ գյուղական համայնքների (բնակավայրերի) մարդաքանակի և բնական, արտադրա-տնտեսական, ֆինանսական և վարչատարածքային ու ուրբանիզացիոն գործոնների միջև աստիճանային կոռելյացիայի գործակիցն ըստ տարածաշրջանների²⁶⁵

Տարածաշրջան-ները	Կոռելյացիոն կապը մշակելի հողա-տարածքների և գյուղերի մարդա-բնակի միջև	Կոռելյացիոն կապը գյուղատնտե-սական հողատարածքների և գյու-ղերի մարդաբնակի միջև	Կոռելյացիոն կապը գյուղական համայնքների վարչական բյուջեի և գյուղերի մարդաբնակի միջև	Կոռելյացիոն կապը գյուղերի բա-ցարձակ բարձրությունների և դրանց մարդաբնակի միջև	Կոռելյացիոն կապը գյուղերի մար-դաբնակի և նախկին շրջկենտ-րոններից ունեցած հեռավորության միջև	Կոռելյացիոն կապը գյուղերի մար-դաբնակի և մարզկենտրոններից ունեցած հեռավորության միջև	
Ախուրյանի	0,75	0,34	0,97	0,51	0,41	0,59	
Ամասիայի	0,09	-0,42	0,11	0,80	0,28	0,70	
Աշոցքի	0,78	0,30	0,77	0,06	0,45	-0,03	
Արթիկի	0,45	0,65	0,97	-0,38	0,20	-0,10	
Անի	0,09	0,664	0,88	-0,78	0,76	0,32	
Աշտարակի	0,61	0,28	0,97	0,42	0,44	0,44	
Ապարանի	0,54	0,45	0,95	0,16	-0,05	0,46	
Արագածի	0,77	0,53	0,97	-0,28	0,04	-0,17	
Թալինի	0,43	0,50	0,96	0,05	0,26	0,34	
Գորիսի	0,61	0,68	0,98	0,19	0,52	-0,40	
Կապանի	0,38	0,49	0,85	0,10	0,29	0,29	
Մեղրու	-0,03	0,22	0,70	0,57	0,19	-0,32	
Միսիանի	0,79	0,48	0,89	0,34	0,32	0,35	
Իջևանի	0,54	0,46	0,99	0,26	0,43	0,43	
Նոյեմբերյանի	0,92	0,77	0,97	-0,12	0,34	0,07	
Տավուշի	0,57	0,57	0,98	0,02	-0,20	-0,45	
Գուգարքի	0,72	0,56	0,92	-0,08	0,32	0,26	
Թումանյանի	0,59	0,41	0,75	0,40	0,19	0,07	
Մայիսակի	0,41	0,68	0,99	-0,11	0,16	0,05	
Ստեփանավանի	0,76	0,19	0,93	0,15	0,06	0,35	
Տաշիրի	0,80	0,25	0,92	-0,10	0,00	0,04	
Կոտայքի	0,21	-0,06	0,83	0,59	0,41	0,31	

²⁶⁵ Աղյուսակը կազմած է ՀՀ գյուղական համայնքների 2012 թ. բնակչության թվաքանակի, գյուղատն-տեսական և մշակելի հողատարածքների, վարչական բյուջեի եկամուտների, նախկին շրջկենտրոննե-րից և մարզկենտրոններից ունեցած հեռավորության տվյալների հիման վրա:

Նաիրիի	0,43	-0,06	0,96	0,63	0,63	-0,36	
Հրազդանի	0,75	0,05	0,89	0,32	0,39	0,39	
Գավառի	0,90	0,94	0,95	0,02	0,51	0,51	
Կրասնոսելսկի	0,69	0,69	0,91	-0,28	0,42	0,35	
Մարտունու	0,35	0,08	0,84	0,23	0,55	-0,10	
Սևանի	0,87	0,67	0,82	0,21	0,37	0,02	
Վարդենիսի	0,49	0,24	0,90	0,70	0,43	0,56	
Արտաշատի	0,72	0,68	0,95	0,25	0,43	0,43	
Արարատի	0,59	-0,22	0,96	0,54	0,56	0,68	0,71
Մասիսի	0,44	0,40	0,80	-0,30	0,22	0,00	0,16
Էջմիածնի	0,81	0,72	0,98	-0,28	-0,28	0,19	
Արմավիրի	0,49	0,6	0,97	0,21	0,30	0,30	
Բաղրամյանի	0,02	-0,72	0,89	0,69	0,28	0,34	
Եղեգնաձորի	0,49	-0,29	0,96	0,75	0,61	0,61	
Վայքի	0,78	0,41	0,80	0,03	0,25	0,02	

Այսպիսով, կատարված հետազոտության և վերլուծության շնորհիվ ստացված արդյունքները հնարավորություն են տալիս մեզ կատարել որոշակի եզրահանգումներ.

1. Ժամանակակից պայմաններում ՀՀ գյուղական տարաբնակեցման զարգացումը, վերափոխումը և կատարելագործումը տեղի է ունենում բնական, արտադրատնտեսական, ֆինանսական, սոցիալ-ժողովրդագրական, աշխարհաքաղաքական (տարածաշրջանային) և վարչատարածքային ու ուրբանիզացիոն գործոնների ազդեցության տակ, որոնք ՀՀ տարբեր մարզերում, տարածաշրջաններում և գյուղական համայնքներում ու բնակավայրերում դրսևորվում են տարբեր կերպ՝ կախված դրանց աշխարհագրական դիրքից, բնատնտեսական առանձնահատկություններից, սոցիալ-ժողովրդագրական ու տարածաշրջանային իրավիճակից:

2. ՀՀ տարածաշրջանների գյուղական տարաբնակեցման ընդհանրական ցուցանիշներից գյուղական բնակչության խտությունը և գյուղական բնակավայրերի միջև հեռավորությունը սերտ կապ ունեն տվյալ տարածաշրջանի գյուղատնտեսական հողատարածքների բացարձակ և հարաբերական մեծությունների հետ, հետևաբար ինչպես առանձին գյուղական բնակավայրերի, այնպես էլ առանձին տարածաշրջանների ու ողջ գյուղական տարաբնակեցման համակարգի հետագա զարգացումը, վերափոխումն ու կատարելագործումը նախ և առաջ պայմանավորված է վերջինիս հիմնական արտադրատնտեսական բազայի՝ գյուղատնտեսական հողատարածքների արդյունավետ օգտագործումից, կամ որ նույնն է՝ գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացումից,

3. Հանրապետության տարածաշրջանների մեծ մասում գյուղական համայնքների ու բնակավայրերի մարդաքանակի և դրանց ծովի մակարդակից ունեցած բարձրության միջև կոռելյացիոն թույլ կապը վկայում է գյուղական տարաբնակեցման զարգացման, վերափոխման և կատարելագործման գործում բնական գործոնների դերի աստիճանական նվազման և այլ գործոնների դերի մեծացման մասին,

4. ՀՀ գյուղական համայնքների բնակչության թվաքանակի ավելացումը, սոցիալական ու տնտեսական շատ խնդիրների լուծումը մեծապես կախված է

գյուղական համայնքների վարչական բյուջեի եկամուտներից և դրանց նպատակային օգտագործումից: Հանրապետության հարյուրավոր գյուղական համայնքներում վարչական բյուջեի փաստացի եկամուտները պակաս են ընդունված բյուջեի մեծությունից: Այդ հարցի լուծումն իր անմիջական դերը կունենա գյուղական համայնքներում սոցիալ-տնտեսական մի շարք խնդիրների իրագործման գործում,

5. Եթե հանրապետության գյուղական տարաբնակեցման ընդհանրական ցուցանիշներից գյուղական բնակչության բացարձակ թիվը, խտությունը և գյուղական բնակավայրերի միջև հեռավորությունը սերտ կապ ունեն տարածաշրջանների ընդհանուր գյուղատնտեսական հողատարածքների մեծությունների հետ, ապա մյուս կարևորագույն ընդհանրական ցուցանիշը՝ գյուղական համայնքների (բնակավայրերի) մարդաքանակը մեծապես կախված է գյուղական համայնքների մշակելի հողատարածքների մեծությունից: Մշակելի հողատարածքների նպատակային օգտագործումն ու դրանց արդյունավետության բարձրացումն էական դեր կունենա գյուղական բնակավայրերի կայունացման ու ամրապնդման և սոցիալ-տնտեսական առաջընթացի համար,

6. ՀՀ բոլոր մարզերում և տարածաշրջաններում գյուղական տարաբնակեցման զարգացման վերափոխման և կատարելագործման վրա էական ազդեցություն կունենա մարզային և տարածաշրջանային կենտրոնների դերի բարձրացումը և համապատասխան տարաբնակեցման համակարգերում դրանց գործառույթների լիարժեք ու արդյունավետ իրականացումը: Դա կհանգեցնի մարզկենտրոն-գյուղական բնակավայր, տարածաշրջանային կենտրոն գյուղական բնակավայր կապերի ամրապնդմանն ու կայունացմանը և տարաբնակեցման տեղական համակարգի զարգացմանը,

7. Ժամանակակից շուկայական տնտեսական հարաբերությունների պայմաններում մարզկենտրոնները, տարածաշրջանային կենտրոնները, առանձին քաղաքային բնակավայրեր և տեղական նշանակության կենտրոններ ՀՀ գյուղական բնակավայրերի համար հանդիսանում են նաև մոտակա մեծ առևտրային և գյուղատնտեսական շուկաներ: Այդ կենտրոնների և գյուղական բնակավայրերի միջև կայուն տրանսպորտային հաղորդակցության ապահովումն ու զարգացումը կնպաստի գյուղական բնակավայրերի տնտեսական բազայի ամրապնդմանը և ի վերջո բոլոր գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական առաջընթացին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մանասյան Մ.Գ. *ՀՀ տարաբնակեցման համակարգը*, Ե. 2005 թ.
2. Պոտոսյան Ա.Հ. *ՀՀ գյուղական բնակչությունը և բնակավայրերը*, Ե. 2013 թ.
3. *Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2012 թ.*, Վիճակագրական ժողովածու, Ե.2012 թ.

Аксел Подосян, Шогик Кольян – Основные факторы развития и преобразования сельского расселения РА и их региональные различия. – В современных условиях развитие, преобразование и совершенствование сельского расселения РА происходит под влиянием природных, производственно-экономических, социально-демографических, административных, урбанизационных и иных факторов.

В статье методом корреляционного анализа выявлено воздействие отдельных факторов на показатели (в частности, на людность сельских поселений), характеризующие сельское расселение. По сути, людность сельских поселений в обобщенном виде отображает общую картину сельского расселения, а также результат развития и преобразования сельских поселений.

Aksel Potosyan, Shoghik Qolyan – *The main factors affecting into the development and transformation of the rural settlement RA and their regional differences.* – In modern conditions development and transformation of the rural settlement distribution of RA it's and improvement occurs under the influence of natural, productional, social-demographic, administrative urbanization and other factors.

In the article with the help of correlation analysis method was discovered was the impact of concrete factors into the indicators of the rural settlement, particularly number of people in the villages. The latest, in fact, in general form expresses the general picture of the rural settlement and the rural development and result of transformation.

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ
ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԴԵՎԻԱՆՏ ՎԱՐՔԱԳԾԻ
ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

ՎԱՀՐԱՄ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, ՆԱՐԻՆԵ ԿՈՌՅԱՆ

Մարդկային ռեսուրսների կառավարման տեսության և պրակտիկայի մեջ «անձնակազմի վարքագիծ» հասկա բազմազան է, այդ թվում՝ դեվիանտ վարքագծի դրսևորումների ախտորոշման և կառավարման հետ կապված:

Դեվիանտ (լատ. deviatio – շեղում) վարքագիծ կարելի է համարել արարքների ամբողջությունը, որոնք դուրս են այդ արարքների ժամանակ գործող ցանկացած նորմի սահմաններից, երբ այդ նորմերը դեվիանտ վարքագիծը կրողի համար հանդիսանում են կարգավորող՝ անկախ այդպիսի վարքագծի հետևանքներից դեվիանտի, այլ անհատների և սոցիալական խմբերի համար²⁶⁶:

Գրականության մեջ ներկայացված դեվիացիայի բոլոր հնարավոր դրսևորումները կազմակերպություններում առաջարկում ենք միավորել հետևյալ 3 խմբերում

I. Հստ կազմակերպությունում անձնակազմի կառավարման առանձնահատկությունների (օպորտունիստական),

II. Հստ կազմակերպության ղեկավարի անհատական հատկանիշների դրսևորման առանձնահատկությունների,

III. Հստ կազմակերպությունում խմբային, միջանձնային հարաբերությունների ոճի:

Նշվածներից առավել վտանգավոր և դժվար կառավարվող է հատկապես երկրորդը՝ կազմակերպության ղեկավարի դեվիանտ վարքագիծը, որը ոչ միայն վերահսկելի է վերադաս ղեկավար մարմինների կողմից, այլև հիմք է հանդիսանում ենթակա անձնակազմի մոտ նմանատիպ վարքագծերի ձևավորման համար: Նման իրավիճակների անկառավարելիությունը կոլեկտիվի ներսում կարող է նպաստել բախումների խորացմանը և ի վերջո տանել կազմակերպության լուծարման, ինչը անցանկալի է նաև ազգային-տնտեսական շահերի և կազմակերպության անձնակազմը գործազրկության վտանգի առջև կանգնեցնելու տեսանկյունից:

Ուսումնասիրենք վերոնշյալ դեվիացիայի արտահայտման և կառավարման հիմնահարցերը՝ ըստ գրականությունում արծարծված ձևերի:

1. <Ռիսկի գնացող> ղեկավար - <ռիսկային> կազմակերպություն²⁶⁷

Կազմակերպության այս տիպի գործունեության ուղղվածությունը դժվար է որոշել, քանի որ այն արագ է փոփոխվում, սահմանափակումներ չունի, հակված է ռիսկի և բախտախնդրության: Որոշումներ կայացնելիս ղեկավարը ենթարկ-

²⁶⁶ **Павленок П. Д.** Социальная работа с лицами и группами девиантного поведения / П. Д. Павленок М. Я. Руднева. - М. : ИНФРА-М, 2007, ст. 56

²⁶⁷ **Грошев И., Емельянов П.,** Каков руководитель–такова и организация, / Международный журнал "Проблемы теории и практики управления", N 5, 2003, ст. 43-48

վում է զգացմունքներին՝ արհամարհելով իրականությունը: Նրան հետաքրքրում են նոր հնարավորությունները և վտանգը: Հույսը դնում է իր ուժերի վրա, միայնակ է տիրապետում ամբողջ տեղեկատվությանը և կյանքի է կոչում սեփական և ոչ թե թիմի մտադրությունները: Չհիմնավորված, հաշվի չառնելով շուկայի պահանջարկը և գործընկերների և կազմակերպության անձնակազմի խորհուրդները՝ կարող է սկսել նոր ապրանքի կամ ծառայության գործարկում՝ այդպիսով ֆինանսական միջոցների մեծ մասը ներդնելով ռիսկային, անհուսալի գործարքի մեջ: Այդպիսի ղեկավարի նպատակն է լինել ուշադրության կենտրոնում, զգալ սեփական կարևորությունը: Սակայն ռիսկային կազմակերպությունների կառուցվածքը չափազանց պրիմիտիվ է լայնամասշտաբ միջոցառումների անցկացման համար: Ղեկավարը չափազանց մեծ իշխանություն ունի, ինչը նրան հնարավորություն է տալիս վերահսկել անգամ մանր, աննշան որոշումները՝ ենթականերին գրկելով սեփական կարծիք ունենալու և արտահայտելու ազատությունից: Արդյունքում իրենն են լինում մեծարանքներն ու բոլոր պարգևները: Կազմակերպությունում բացակայում է արդյունավետ տեղեկատվական համակարգը. ղեկավարը ժամանակ չունի ուսումնասիրելու շուկան, մրցակիցներին (ժամանակի մեծ մասը ծախսվում է ենթակաների և նրանց աշխատանքի վերահսկողության վրա), կարևորվում են ոչ թե իրական փաստերը, այլ կանխագագումը:

Նման դեվիանտ վարքագիծը ախտորոշելու և կառավարելու նպատակով խորհուրդ ենք տալիս յուրաքանչյուր նոր աշխատողի աշխատանքի ընդունման ժամանակ ծանոթացնել կազմակերպության կանոնակարգի հետ՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ղեկավարի ընդունած որոշումների անհատական պատասխանատվության վրա: Նման դեվիացիայից խուսափելու նպատակով նաև խորհուրդ է տրվում լուրջ որոշումները և գործարքները ապահովագրել:

2. <Պարանոիդալ> ղեկավար - <պարանոիդալ> կազմակերպություն

Այս կազմակերպությունում անվստահությունը և վախը հետապնդումների նկատմամբ ձևավորում են մի մթնոլորտ, որտեղ բոլորին անընդհատ հետևում և վերահսկում են: Կառավարման ոլորտում տեղեկատվության ընդարձակ համակարգը ծառայում է այն բանին, որպեսզի ժամանակին բացահայտվեն ներքին և արտաքին սպառնալիքները և նախապատրաստվեն դրանց դիմակայելուն:

Լիազորությունները կենտրոնանում է ամենավերևում, իսկ մյուս աշխատակիցները օգտագործվում են իրավիճակի և միմյանց մասին տեղեկատվություն հավաքելու նպատակով: Մարդիկ պահպանողականություն են դրսևորում՝ վախենալով չափազանց հնարամիտ, բախտախնդիր և մսխող երևալ: Յուրաքանչյուրն ինքնորոշվում է ոչ թե բնական ճանապարհով, այլ որպես «մութ» ուժերի պոտենցիալ գոհ, որոնց հետ միշտ պետք է աչալուրջ լինել:

Կառավարման այս ոճը կարելի է որակել որպես «մի կերպ տակից դուրս կգանք» սկզբունք, ինչը ինքնուրույն և հստակ խնդիրների առաջադրման համար բավարար չէ: Որպեսզի հնարավոր լինի էլ ավելի նվազեցնել առկա ռիսկը, այսպիսի կազմակերպություններում ընդունված է արտադրական գործընթացների սահմանազատումն անգամ այն ժամանակ, երբ դրա կարիքը չկա: Անձնակազմի ներսում բարոյախոգեբանական մթնոլորտը սառն է և ռացիոնալ: Ինքնաբուխ գործողություններն արգելված են: Պարանոիդալ ղեկավարի դեվիանտ վարքագիծը անձնակազմը վեր է ածում կենսաառօրոտների, ովքեր ի վերջո կարող է ընդվզել՝ դրսևորելով դեվիանտ վարքագծի ամենատարբեր տեսակներ: Իհարկե, պա-

քանոնիդավարքագծի պատճառ կարող է լինել նաև ղեկավարի հոգեկան անառողջ վիճակը, ինչպես նաև՝ նրա կրթվածության ոչ բավարար մակարդակը կառավարման բնագավառում: Պարզ չէ, թե ինչի վրա է հիմնված մի շարք ղեկավարների այն մտայնությունը, որ իբր նման վարքագիծը իրենց շուք է հաղորդում և «խոշորացնում»: Երկու դեպքում էլ անհրաժեշտ է վերահսկողություն արտաքինից: Այս վարքագիծը վտանգավոր է նույնչափ, որչափ վտանգավոր է կիսգրագետ բժիշկը կամ մանկավարժը: Հենց այդ պատճառով նշված ոլորտը ղեկավարելու համար նախատեսված է համապատասխան ուսուցում, սերտիֆիկացում և աշխատանքի թույլտվություն՝ լիցենզիա: Ցավոք, մասնավոր և բաժնետիրական ոչ բոլոր առևտրային կազմակերպությունների համար է նման մոտեցում նախատեսված, որի անհրաժեշտության մասին կխոսենք քիչ անց: Ուսուցման և սերտիֆիկացման ժամանակ կարող է բացահայտվել նաև ղեկավարի գուտ հոգեկան շեղումը, որը պետք է խոչընդոտի վերոնշյալ փաստաթղթի ստացմանը:

3. <Շիզոֆիդ> ղեկավար - <շիզոֆիդ> կազմակերպություն

<Շիզոֆիդ> ղեկավարների շրջապատի կողմից համարվում են սառը, <վերացած>, ինքնամիտի և նույնիսկ՝ սարսափ ներշնչող: Ղեկավարի այս տիպը գրեթե գուրկ է կապերից և հարաբերություններից, արտակարգ իրավիճակներում անօգնական է, սակայն թաքնվում է անխոցելիության դիմակի տակ: Սա է պատճառը, որ այստեղ, ինչպես և «ղեպրեսիվ» կազմակերպությունների ղեկավար օղակում առաջանում է վակուում: Կազմակերպության աշխատանքի վերաբերյալ չկան հստակ ցուցումներ:

Սակայն այստեղ առավել գործուն են միջին օղակի մենեջերները, որոնց խնդիրը ղեկավարի համակրանքը և ուշադրությունը գրավելն է դառնում: Բնականաբար, նրանք առաջին հերթին ուզում են իրականացնել սեփական նպատակները. ձևավորվում է սեփական շահերի պաշտպանության անթույլատրելի համակարգ, երբ կազմակերպության մեջ առկա է լինում <պետություն պետության մեջ>: Միջին մակարդակի ղեկավարության մեջ կյանքը եռում է, սակայն նրա նպատակը բոլորովին էլ կազմակերպության բարգավաճումը կամ արդյունավետ համագործակցությունը չէ: Տեղեկատվությունը վեր է ածվում իշխանության գործիքի, կարյերիստներն իրենց զգում են, ինչպես ձուկը ջրում, շարունակաբար խմբավորումներ են առաջանում և վերանում: Կազմակերպությունը ռազմավարության առումով դոփում է տեղում:

<Շիզոֆիդ> ղեկավարի մտածելակերպը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. մարդկային հարաբերությունները երկարատև չեն, իրականությունը չափազանց արագ է փոփոխվում և անհնար է հետամուտ լինել այդ փոփոխություններին, դրա համար էլ ամենաառնադիմացիկ էլքը հեռավորություն պահպանելը և ամբողջ պատասխանատվությունը ստորին մակարդակի ղեկավարների վրա դնելն է: Այդպիսով ակնհայտ են դառնում <շիզոֆիդ> ղեկավարի դեմիանո վարքագծի կործանարար հետևանքները կազմակերպության անձնակազմի աշխատանքի և ընդհանրապես կազմակերպության կենսագործունեության համար:

Արտաքին կառավարման տեսանկյունից նման դեմիացիայի կանխարգելման համար արդյունավետ է կիրառել դեմիացիայի պարանոնիդալ ձևում նկարագրված մոտեցումը:

4. <Պասիվ> ղեկավար - <պասիվ> կազմակերպություն

Այս կազմակերպությանը բնորոշ են անգործությունը, պասիվությունը, վստահության պակասը, պահպանողականությունը և փակվածությունը: Չի

խրախուսվում նախաձեռնությունը և ռիսկը, գերիշխում է դատարկության և անտարբերության մթնոլորտը:

Այսպիսի կազմակերպությունները հաջողակ են թույլ և համեմատաբար կայուն մրցակցություն ունեցող շուկաներում, դրանք հեշտ է ղեկավարել: Իշխանությունը կենտրոնացված է, յուրաքանչյուրը գիտի իր տեղն ու պարտականությունները: Կարևոր են ոչ թե ղեկավարի ընդունակությունները, նախաձեռնողականությունը, ստեղծագործական մոտեցումը, գործունեությունն ու իրավասությունը, այլ զբաղեցրած դիրքը: Վերահսկողության համակարգը ձևական բնույթ ունի: Կազմակերպությունը դիմադրում է ցանկացած փոփոխության, նոր ծրագրերին և գործունեության նոր ուղղություններին:

Ղեկավարներն ու ենթակաները ի վիճակի չեն որևէ նոր, անսովոր բան նախաձեռնելու: Անտարբեր ղեկավարը ցանկություն և ուժ չունի կազմակերպության հստակ նպատակներ, գործունեության ուղղություններ և ռազմավարություն մշակելու և սահմանելու համար: Ղեկավարի պասիվությունը ձևավորում է <քնած> անձնակազմ, որի <քունը> խանգարող ամենափոքր հանգամանք անգամ ընդունակ է աշխատակիցներին մղելու դեվիանտ վարքագծի ամենատարբեր դրսևորումների: Առաջին հայացքից թվում է, թե նման կազմակերպություններում ապահովված է կայունությունը, սակայն յուրաքանչյուր տնտեսագետի համար պարզ է, որ նորամուծական ռազմավարություն չունեցող կազմակերպությունը մրցակցային պայմանների անգամ չնչին սրացման դեպքում կարող է չդիմանալ այդ մրցակցությանը և սննկանալ: Կազմակերպության այս ձևը չի նպաստում նաև անձնակազմի մասնագիտական աճին, ինչը նույնպես ճակատագրական է նոր ռազմավարությունների անհրաժեշտության պայմաններում:

Տվյալ կազմակերպության ղեկիացիայի կառավարման համար խորհուրդ ենք տալիս նախատեսել ղեկավարի պարտադիր ուսուցման գործընթաց: Միևնույն ժամանակ կարելի է օգտագործել նաև ներքին գործոնը՝ միջին օղակի համախմբումն ու ակտիվացումը՝ կազմակերպությունը <քնած> վիճակից դուրս բերելու նպատակով: Կառավարման տեսանկյունից, երբ ղեկավարն զգում է, որ իրավիճակը դուրս է եկել վերահսկողությունից և այն չի կառավարվում, ղեկավարին խորհուրդ է տրվում նոր «առաջնորդ» ներգրավել կազմակերպության անձնակազմի մեջ, օրինակ՝ ղեկավարի տեղակալի պաշտոնում:

5. <Պարտադրող> ղեկավար - <պարտադրող> կազմակերպություն

Այսպիսի կազմակերպությանը բնորոշ է կատարելագործվելու մշտական ձգտումը և սերը մանրուքների նկատմամբ: Ամեն գնով խուսափում են սխալներից, անճշտություններից, անորոշությունից և անվստահությունից: Սրբորեն պահպանվում են տարիներով կուտակված հրամանների, հրահանգների և ղեկավար ցուցումների թրթրապանակները, որոնց համար կարող են անգամ առանձին սենյակ հատկացնել: Որոշիչ է աստիճանակարգությունը, և որպես հետևանք՝ ստորակարգության հարաբերություններն ու ծառայողական դիրքը:

Ի տարբերություն <պարանոիդալ> կազմակերպությունների, <պարտադրող>-ներն ունեն հստակ ուղղվածություն, շուկայի հավաճները մանրակրկիտ ընտրված են, խառը կոնցեռններ չկան:

Սակայն որոշակի շուկաների, աշխատանքի մեթոդների և մտածողության սխեմաներից ուժեղ կապվածությունը <պարտադրող> կազմակերպությունների վրա բացասաբար է անդրադառնում. կազմակերպությունը պատրաստ չի լինում

փոփոխություններին: Որոշումներն ընդունվում են բավականին երկար ժամանակ և համապատասխան բոլոր օղակներում քննարկումներից հետո: Գործողությունների արդեն ընդունված պլանից որևէ շեղում անհնարին է: <Պարտադրող>-ի գործողությունները ըմբռնելու համար պետք է հաշվի առնել, որ ղեկավարի այս տիպը ձգտում է վեր լինել հանգամանքներից և որևէ մեկի <խղճահարությունից>: <Պարտադրող> կազմակերպությունները նման են անխորտակելի հսկաների: Նրանք կարող են երկար տարիներ <ջրի վրա մնալ>՝ վաղուց կորցնելով հիմնական նպատակն ու առաքելությունը:

Ինչպես նախորդ և ինչպես կոտեսնենք՝ հաջորդ, այնպես էլ այս դեմիացիայի արտահայտման հիմնական պատճառներից մեկը ղեկավարի գիտելիքների և արհեստավարժության պակասն է, ինչը կարելի է լուծել արտաքին կառավարման միջոցով: Սակայն կարելի է կիրառել նաև ներքին լծակներ: Այսպես, եթե ղեկավարը հակված է մանրախնդրության, խորհուրդ է տրվում նման հարցերի լուծման համար պահել նույն հատկանիշներն ունեցող մեկ այլ աշխատակցի՝ նախատեսելով համապատասխան հաստիք և դրանով ազատել կազմակերպության ղեկավարին անխմստ թղթաբանության հետ կապված հարցերի լուծումից:

6. <Կասկածամիտ> ղեկավար - <կասկածամիտ> կազմակերպություն

Այսպիսի ղեկավարը կասկամիտ է, ոչ մեկին չվստահող: Նա ստեղծում է տեղեկատվության հավաքման և վերահսկողության այնպիսի բարդ համակարգ, որպեսզի մեկուսացնի իր կազմակերպությունը և ժամանակին նկատի վտանգը, որը մշտապես առկա է կազմակերպության արտաքին միջավայրում՝ հասարակություն, կառավարություն, մրցակիցներ և սպառողներ: Կասկածամտության մթնոլորտն իշխում է ամբողջ կազմակերպությունում, նրանք չեն վստահում շրջապատին՝ ամեն բան վերցնելով իրենց վրա: Այդպես գործելն, իհարկե, անվտանգ է, սակայն այն ունի նաև իր բացասական կողմը. ավելորդ կասկածամտությունն ու մանրախնդրությունը բացասաբար են ազդում անձնակազմի տրամադրության և վստահության վրա: Աշխատակիցները, ամեն ինչ իր վրա վերցնող ղեկավարի կողքին, դրսևորում են անտարբերություն և անպատասխանատվություն՝ հակված լինելով դեմիանտ վարքագիծ դրսևորելու. խոչընդոտված է ստեղծագործական, նորամուծական նախաձեռնությունը:

<Կասկածամիտ> կազմակերպության գործունեությունը բավականին հետաքրքիր է: Օրինակ, եթե մրցակիցները իջեցնում են գները, <կասկածամիտը>, վերլուծելով իրավիճակը, ևս իջեցնում է իր արտադրանքի գինը կամ, եթե մրցակիցն սկսում է նոր արտադրատեսակի թողարկում, «կասկածամիտը» ևս նույն կերպ է վարվում: Խաբուսիկ տպավորություն է ստեղծվում, որ իբր կազմակերպությունը ձգտում է փոփոխվել, տեղում կանգնած չմնալ: Իրականում նրա ռազմավարությունը չափազանց պահպանողական է. անընդհատ վտանգի սպասելով՝ կազմակերպության անձնակազմը դիմադրում է նորամուծություններին, վախենում է ռիսկի դիմել: Եվ քանի որ <կասկածամիտ> կազմակերպությունը մեծ նշանակություն է տալիս արտաքին միջավայրին, ապա նոր օրենքները, ուժեղ մրցակիցները, ձևավորվող շուկայական պահանջարկն ու առաջարկը կարող են բացասաբար ազդել կազմակերպության և նրա ղեկավարի արդյունավետ գործունեության վրա. ղեկավարն սկսում է շփոթվել, չի կողմնորոշվում և դադարում է հավատալ իր ուժերին: Մենեջմենթի տեսանկյունից պարզ է, որ նորամուծություններն անտեսող ղեկավարը մրցակցային պայքարում կազմակերպությունն

անպայման կտանի լուծարման: Բիարկե, պահպանողական վարքագիծը տվյալ ղեկավարի խառնվածքի արտացոլումն է, սակայն դա նաև գիտելիքների պակասի արդյունք է, ուստի խնդրի լուծումը մեր կողմից նախկին ղեկիացիաներում առաջարկված ուսուցումը և սերտիֆիկացումն է: Բիարկե, ցանկալի կլիներ, որ մեր կողմից առաջարկված վերապատրաստման ծրագրերում ղեկավարի սերտիֆիկատ ստանալու հայտ ներկայացրած ունկնդիրների համար նախատեսվի նախնական թեստավորում, ղեկիացիայի բացահայտում, իսկ այնուհետև՝ անհատական գործնական աշխատանքների իրականացում՝ զուտ տվյալ ղեկիացիան վերացնելու ուղղությամբ:

7. <Դրամատիկ ղեկավար> - <դրամատիկ> կազմակերպություն

Աշխատանքային գործունեությունն այսպիսի կազմակերպությունում վեր է ածվում դրամատիկ ներկայացման: Դրամատորգիան կարևորվում է արդյունքից: Բոլոր աշխատակիցները, ներառյալ ղեկավարը, հիպերակտիվ են, բռնկուն, նախաձեռնող են և անկաշկանդ: Որոշում կայացնելու համար փաստեր հարկավոր չեն: Քաջությունը, ռիսկը և ինքնուրույնությունը գովասանքի է արժանանում: Ռազմավարական որոշումները մի նպատակ ունեն՝ ընդգծել կազմակերպության գլուխ կանգնած ղեկավարի փոխարին հեղինակությունը:

Կազմակերպությունը ղեկավարի համար բեմ է, որի վրա կարելի է տարբեր ներկայացումներ խաղալ: Նույն կերպ են վարվում նաև ենթակաները: Բնականաբար, նորմալ կառավարման համար ժամանակ չի մնում. կառավարման գործընթացը համարվում է ձանձրալի և ոչ ստեղծագործական զբաղմունք: Պատեհապաշտ գործունեությունը երկարաժամկետ ռազմավարություն մշակելու հնարավորություն չի տալիս: Միստեմատիկ բնույթ կրող որոշումների կոլեկտիվ ընդունումը փոխարինվում է ղեկավարի անսպասելի գաղափարներով: Այսպիսի կազմակերպությունների զարգացումը դանդաղում է, քանի որ բացակայում են կառավարման համակարգավածության և վերահսկողության մեխանիզմները: Աշխատանքային պրոցեսը վեր է ածվում անկանխատեսելի մրցարշավի: Միջանձնային հարաբերությունները ևս կայուն չեն. կամ աշխատակիցներն իդեալականացնում են միմյանց, կամ ձգտում են նսեմացնել ուրիշների ձեռքբերումները:

<Դրամատիկ> ղեկավարի փիլիսոփայությունը պարզ է. <Սա իմ կազմակերպությունն է, ինչ ուզում եմ, այն էլ անում եմ>: Եթե այս տիպի կազմակերպությունում հնարավոր չի լինում ազատվել քառսից և կազմակերպել կարգունկնդնի և հետևողականության վրա հիմնված նորմալ աշխատանք, ապա վաղ, թե ուշ այն դատապարտված է սննկացման:

Ինչպես նախորդ ղեկիացիայում, <դրամատիկ> ղեկավարը պետք է պարտադիր անցնի ուսուցում, սերտիֆիկացում, լիցենզավորում, սակայն այստեղ հնարավոր են նաև որոշ աշխատանքներ կազմակերպության ներսում՝ անհրաժեշտ է հստակեցնել ներքին կանոնակարգը, կորպորատիվ մշակույթի նորմերը և յուրաքանչյուր աշխատողի հաստիքային լիազորությունները, պարտականությունները և պատասխանատվությունը: Վերադաս մարմիններին ստուգելու ուղղություններից մեկն էլ պետք է լինի բոլոր կազմակերպություններում, առավել ևս ղեկիացիան կանխարգելելու նպատակով, վերահսկողության սահմանում ոչ միայն հաստիքացուցակը ճիշտ ձևակերպելու, այլև այն կիրառելու վրա:

8. <Պեդանտ> ղեկավար - <պեդանտ> կազմակերպություն

Կազմակերպությունը ձգտում է պահպանել ավանդույթները: Ցանկացած գործունեություն նախապես պլանավորված է և համապատասխանում է պլանի

կետերին: մեծ տեղ է տրվում հետևողականությանը, գործողությունների մանրամասն համաձայնեցմանն ու վերջնականությանը: Այստեղ, ինչպես և <կասկածամիտ> կազմակերպությունում ստեղծվում են տեղեկատվության և վերահսկողության ֆորմալ համակարգեր: Տարբերությունը կայանում է նրանում, որ <պեղանտ> կազմակերպությունում այդ համակարգերն օգտագործվում են կազմակերպության ներսում (ռազմավարության, արդյունավետության, գնագոյացման, պլանների մշակման և կատարման համար), իսկ <կասկածամիտ> կազմակերպությունում՝ արտաքին հանգամանքների վերահսկողության նպատակով: Բացի այդ, այս կազմակերպությունում սահմանվում է, թե ինչպես պետք է հազմվի աշխատակիցը, ինչպես պետք է մտածի, ինչպիսի արժեքային ուղեցույցներով պիտի առաջնորդվի աշխատանքում, ում հետ և ինչպես պետք է շփվի աշխատավայրում:

Նման խիստ աստիճանակարգության պահպանման իմաստը նրանում է, որ անձնակազմի յուրաքանչյուր անդամ հստակ իմանա իր տեղը, իրավունքները և պարտականությունները: Ղեկավարը փորձում է միշտ կանխատեսել աշխատակիցների հաջորդ քայլը, որպեսզի խուսափի տհաճություններից: Նա նախօրոք կազմում է գործունեության մանրամասն պլանները, նախատեսում է, թե ինչպես կարելի է բաշխել բյուջեն, օգտագործել ունեցած կապիտալը, ով է իրականացնելու աշխատանքները և ինչպիսին են լինելու վերահսկողության մեխանիզմները: Դեվիանտության աստիճանի հասնող պեղանտիզմը բացառում է ամեն նախաձեռնություն մյուս աշխատակիցների կողմից, նրանք դառնում են աշխատանքային պրոցեսի անշունչ կցորդ: Ամեն բան վերցնելով իր վրա, <պեղանտ> ղեկավարը չի կարող արագ արձագանքել արտաքին միջավայրում տեղի ունեցող փոփոխություններին՝ դրանով նվազեցնելով կազմակերպության գործունեության արդյունավետությունը շուկայում:

Նկարագրված <պեղանտ> ղեկավարի դեվիացիաների կանխարգելման ուղիները համապատասխանում են <կասկածամիտ> ղեկավարների դեվիացիայի կառավարման մեխանիզմներին:

9. <Դեպրեսիվ> ղեկավար - <դեպրեսիվ> կազմակերպություն

<Դեպրեսիվ> կազմակերպությունները կարողանում են գոյատևել կայուն միջավայրում, կարգավորվող և սատարվող շուկաների պայմաններում, որտեղ բացակայում է մրցակցությունը: Նրանց բնորոշ է պասիվությունը, ապագայի նկատմամբ հավատի բացակայությունը, պահպանողականությունը և ամենակարևորը՝ <մի կերպ յուրա գնալը>:

Նախաձեռնությամբ հանդես գալը համարվում է անիմաստ և անտեղի ցուցանողություն: Ձևավորված հզոր բյուրոկրատական համակարգում տարիներով պահպանվող կարգուկանոնի պայմաններում կազմակերպությունն աշխատում է որպես պարզագույն մեխանիզմ:

Կառավարման վերին մակարդակում առաջանում է վակուում: Իրական ղեկավարը կարծես բացակայում է: Կարևոր, լուրջ որոշումներ, որպես կանոն, չեն ընդունվում: Անձնակազմի վարքագծում նկատվում է անկարողության և անիմաստության մտայնություն: Աշխատակիցների չբարձրաձայնվող հիմնական միտքը հետևյալն է. <Իմաստ չունի փոխել իրադարձությունների ընթացքը, միևնույն է, դա անհնարին է>:

Գործունեության մեջ գերակշռում է ներքին ուղղվածությունը: Եթե գոյություն ունեն կազմակերպություններ, որտեղ բացակայում է գիտակցաբար իրական-

նացվող ռազմավարություն, ապա դրանք <դեպրեսիվ>-ներն են: Ղեկավարի այսպիսի դիրքորոշումը կազմակերպության անձնակազմին հանգեցնում է ապատիայի, անտարբերության և ամենաթողության դեվիանտ դրսևորումների:

Դեպրեսիվ ղեկավարի դեվիացիայի կառավարման ամենակարևոր ուղղությունը ուսուցումն է, որի ծրագրի սահմաններում պետք է բացահայտվի այս դեվիացիան, և այդպիսի ղեկավարի ամբողջ ուսուցման տեսական և գործնական ուղղվածությունը պետք է միտված լինի այդ դեվիացիայի վերացմանը: Արդյունքի բացակայության դեպքում անձը չի կարող սերտիֆիկացվել որպես ղեկավար:

10. <Ինքնամիտ> ղեկավար - <ինքնամիտ> կազմակերպություն

Այսպիսի կազմակերպություններում, ինչպես և <պասիվ>-ներում, կարծես իրական ղեկավար չկա: Վերին մակարդակում իշխանությունը նարկայացնում է ինքնամիտ մի անձնավորություն, ով դժկամությամբ է շփվում ենթակաների հետ, քանի որ իր <ոչ հարուստ> փորձի հիման վրա գտնում է, որ հարաբերությունները ուրիշների հետ լավ վերջաբան չեն կարող ունենալ: Այդպիսի ղեկավարների մոտ երազանքները փոխարինում են իրականությանը: Որպես կանոն, նրանք նստած են իրենց առանձնասենյակում և զայրանում են, երբ ինչ-որ մեկը նրան անհանգստացնում է: Այս կազմակերպություններում ավելի ազդեցիկ են դառնում կառավարման ավելի ցածր մակարդակի ղեկավարները: Գործարար հատկանիշներով, մարդկանց հետ շփվելու կարողությամբ և ցանկությամբ՝ այս ղեկավարները կարող են փոխհատուցել վերին մակարդակի ղեկավարի ինքնամիտ վարքագիծը: Սակայն ստորին մակարդակի ղեկավարների մոտ հաճախակի է դառնում բացահայտ պայքարը ոչ միայն իրական իշխանության, այլև վերին մակարդակի ղեկավարի բարեհաճությունը շահելու համար:

Կառավարման ոլորտի խոցելիությունը սովորաբար հանգեցնում է գործունեության ռազմավարության բացակայության: Կազմակերպությունը լողում է հոսանքով, անընդհատ տեղի են ունենում նորանոր փոփոխություններ՝ կախված այն բանից, թե այս անգամ որ խումբն է <տիրել իշխանությանը> կազմակերպությունում կամ էլ ձեռք բերել վերին մակարդակի ղեկավարի բարեհաճությունը: Տեղեկատվությունն օգտագործվում է որպես ազդեցության աղբյուր, և ոչ թե միջոց, որը հնարավորություն կտա կազմակերպությանը հարմարվել միջավայրի պայմաններին: Խմբավորումները խոչընդոտում են կազմակերպության ներսում տեղեկատվության ազատ հոսքին, ինչը ապատեղեկատվության պատճառ է դառնում արտաքին աշխարհի, շուկաների, մրցակիցների և սպառողական պահանջարկի իրական պատկերն ընկալելու համար: Աշխատակիցները ուշադրությունը կենտրոնացնում են անձնական խնդիրների վրա՝ մտածելով, թե ինչպես հաճությանն ղեկավարությանը: Նրանց հարմար է անտեսել իրական իրադարձությունները, քանի որ դրանք կարող են անցանկալի կերպով ազդել իրենց գործունեության վրա և փչացնել հարաբերությունները <ինքնամիտ> ղեկավարի հետ:

Ինքնամիտ ղեկավարը իրենից ներկայացնում է դեպրեսիվ ղեկավարի տարատեսակը և պահանջում է դեվիացիայի կառավարման նմանատիպ մոտեցում:

11. <Տերմինատոր> ղեկավար - <տերմինատոր> կազմակերպություն

Ժամանակակից կազմակերպություններում դեվիանտ վարքագծի՝ ղեկավար անձնակազմին բնորոշ մեկ այլ վարքային շեղման օրինակ է, որը հայտնի է նաև <քայքայիչ կառավարում> անվանումով: Այս դեպքում կիրառվող կառավար-

ման մեթոդները կազմալուծիչ են, ապակոորդինացնող և հակամտտիվացիոն: Աշխատակազմի ներուժն օգտագործվում է ցածր մակարդակով, սահմանափակվում են կադրերի զարգացման հնարավորությունները, գրանցվում է կադրերի բարձր հոսունություն, ինչն էլ իր ազդեցությունն է թողնում կազմակերպության կայունության և մրցունակության վրա²⁶⁸:

Հաշվի առնելով այս դեվիացիայի վտանգավոր բնույթը, այն ուսուցման ընթացքում նախ պետք է ախտորոշվի և արժանանա լուրջ մոտեցման: Համարվում է, որ, <տերմինատոր> ղեկավարների համար ավելի ճիշտ կլինի ղեկավար աշխատանքով չբաղվելը: Նրանք կարող են լինել շատ լավ փոխդեկավարներ (տեղակալներ) ավելի նրբագգաց ղեկավարների մոտ: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է համոզել, որ նրանց պատճառած վնասները կարելի է բացառել իրենց ղեկավար չլինելու պայմաններում:

12. <Նարցիսիստ> ղեկավար - <նարցիսիստ> կազմակերպություն

Տերմինատոր ղեկավարից ոչ պակաս վտանգավոր է նաև <նարցիսիստ> ղեկավարը: Նրա ինքնասիրահարվածությունն այն աստիճանի կարող է հասնել, որ գիտակցաբար կարող է խրախուսել նաև աշխատակիցների սուտն ու բանբասանքը: Դրանով նարցիսիստ ղեկավարը, կազմակերպությունում կազմակերպության անձնակազմը, կարողանում է իր ձեռքում պահել իր ենթականերին՝ շանտաժի միջոցով նրանց մղելով ամենատարբեր մեքենայություններին²⁶⁹:

Որպես կանոն, նարցիսիստական վարքագիծը արդյունք է եսակենտրոնության և հաղորդակցական իրազեկության բացակայության և որը ուղեկցվելով ղեկավարի սեփական բացասական վարքագծի արգասիքները ըմբռնելու անկարողությամբ՝ հանգեցնում է կազմակերպության համար կործանարար հետևանքների:

13. <Պրինցիպալ-գործակալ> դեվիացիա

Կազմակերպություններում ղեկավար անձնակազմի վարքային դեվիացիաների ևս մեկ արտահայտություն կարելի է համարել <պրինցիպալ-գործակալ> փոխհարաբերությունները:

Պրինցիպալը կազմակերպության սեփականատերն է, այսինքն՝ կազմակերպության բաժնետերը (բաժնետերերը): Բնականաբար նա ուղղակիորեն շահագրգռված է կազմակերպության աշխատանքի արդյունքներով՝ դրանից է կախված նրա ընթացիկ եկամուտը, շահաբաժնի մեծությունը: Գործակալը կազմակերպության ղեկավարն է, կառավարիչը: Մի կողմից նա ևս շահագրգռված է իրեն վարձած կազմակերպության գործունեության արդյունքներով, մյուս կողմից նրա նվաճումները կարող են հակասել բաժնետերերի շահերին:

Օրինակ, վերին մակարդակի ղեկավարը կարող է օգտագործել իր հնարավորությունները և օգտվելով ներքին (ինսայդերական) տեղեկատվությունից՝ շուկայում այնպիսի գործարքներ իրականացնել (օրինակ՝ բաժնետոմսերի վաճառք), որոնք հակասելով սեփականատերերի շահերին՝ կմեծացնեն ղեկավարի

²⁶⁸ Մարդարյան, Է. Նասիյան, Կառավարման որակը պայմանավորող գործոնների շուրջ, Հայաստանի Հանրապետության ասոցիալ-տնտեսական հիմնախնդիրները /Գիտական հոդվածների ժողովածու-8, Եր., ԱԱԱԱ, 2006, էջ 368-373

²⁶⁹ Шамшикова Е.О. Нарциссические лидеры: две стороны одной медали-невероятные “зло” и неизбежное “против”, Развитие человека в современном мире: материалы II Всероссийской научно-практической конференции с международным участием: под ред. Н.Я. Большуновой, О. А. Шамшиковой.- Новосибирск: Изд. НГПУ, 2011, ст. 233-235

եկամուտները: Այդպիսով վերին մակարդակի ղեկավարի դեվիանտ վարքագիծը դրսևորվում է տնտեսական տեղեկատվությունն ասիմետրիկ, ի օգուտ իրեն օգտագործման ձևով:

Ընդ որում <պրինցիպալ-գործակալ> հակասությունների արդյունքում կազմակերպության ղեկավարների վարքային դեվիացիաները տեխնիկապես միշտ չէ, որ վերահսկելի են կազմակերպության սեփականատերերի կողմից: Իհարկե նման վարքագիծը վնասում է ոչ միայն սեփականատերերին, այլև կազմակերպության ողջ անձնակազմի գործունեությանը, երբ սովորական աշխատակիցների համար ևս հաճախ հասկանալի չեն լինում ղեկավարների անսպասելի եկամուտների աղբյուրները կազմակերպության ներսում²⁷⁰:

Այդ դեպքի համար խիստ կարևոր է ներքին լուծումը, որը պետք է ամրագրված լինի կազմակերպության կանոնադրության մեջ՝ ընդգծելով սեփականատերերի իրավունքները և պարտավորությունները՝ մանավանդ, երբ այս խնդիրները լուծված են պետական օրենքների սահմաններում: Եվ ինչպես նշված բոլոր նախորդ դեվիացիաների համար, այստեղ ևս չէր խանգարի լրացուցիչ ուսուցումն ու սերտիֆիկացումը:

Ղեկավար անձնակազմին բնորոշ դեվիացիայի բոլոր ձևերը և դրանց կառավարման ուղիները ակնառու դարձնելու նպատակով՝ այդ բոլորը ներկայացնենք աղյուսակի ձևով (Տես աղյուսակ 1-ը):

Ամփոփելով կատարած վերլուծությունները ներկայացնում ենք հետևյալ եզրակացություններն ու առաջարկները.

1. Կազմակերպություններում անձնակազմի կառավարման համակարգում դեվիացիայի ախտորոշման և կանխարգելման գործում առավել վտանգավոր է ղեկավար անձնակազմի դեվիանտ վարքագիծը, ինչը պահանջում է ոչ միայն կազմակերպության լուրջ ուշադրությունը, այլև պետության միջամտությունը, քանի որ դեվիացիան լինելով տնտեսական գործունեությունը քայքայող գործոն պետք է դիտարկվի որպես տնտեսական անվտանգության սպառնալիք:

2. Առաջարկում ենք, որ յուրաքանչյուր կազմակերպության ղեկավար Պետոեզիստրում կազմակերպությունը գրանցելուց առաջ պահանջվող հիմնադիր փաստաթղթերի հետ միասին ներկայացնի նաև ղեկավար լինելու իրավունք (սերտիֆիկատ):

Առաջարկում ենք ղեկավար անձանց համար պետական վերահսկողության ներքո կազմակերպել ուսուցում (օրինակ՝ Կառավարման պետական ակադեմիայում), մշակել ուսումնառության ծրագրեր, որոնք կնախատեսեն դեվիացիայի ախտորոշում, տեսական նյութի դասավանդում, իսկ գործնական աշխատանքներում՝ բացահայտված դեվիացիայի ուղղությամբ՝ կանխարգելիչ միջոցառումներ: Առաջարկում ենք լայնորեն օգտագործել հոգեբանների, սոցիոլոգների և մենեջմենթի մասնագետների կողմից մշակված անձի գնահատման ամենատարբեր հարցաթերթեր և թեստեր:

Խորհուրդ չենք տալիս սերտիֆիկատին համարժեք համարել կառավարման ֆակուլտետների բարձրագույն կրթության դիպլոմը, քանի որ դեվիացիայի այս կամ այն դրսևորումն ունեցող ղեկավարների գրեթե մեծ մասն ունեն այդ

²⁷⁰ **Фокин Н. И.**, Проблема принипипала-агента, /Экономика: “В начале было Слово”, 2012/<http://dictio.naryeconomics.ru/word/>- Интернет ресурс

դիպլոմը: Այդ կրթությունը պատրաստում է զուտ մենեջերներ և ոչ թե կազմակերպության նպատակային ղեկավարներ:

Ցանկալի է, որ սերտիֆիկատն ունենա ժամկետայնություն և ուսուցման գործընթացները, ըստ ուսումնառության մակարդակների, պարբերական բնույթ կրեն:

3. Լուրջ ուշադրություն է պետք դարձնել կազմակերպության ներսում պարտադիր հաստիքացուցակում յուրաքանչյուր պաշտոնի համար նախատեսված պարտավորություններին, պատասխանատվությանը և լիազորություններին: Ընդ որում, թափուր տեղի պաշտոնը ստանձնած անձի աշխատանքային պայմանագրում պետք է նշված լինեն հաստիքային պայմանները, իսկ դրանց խախտումը՝ համարվի աշխատանքային օրենսդրության խախտում: Նման գործունեությունը պետք է վերահսկվի վերադաս մարմինների կողմից: Կարևոր է նաև կորպորատիվ մշակույթի ձևավորումը կազմակերպությունում:

Կարծում ենք, որ նշված առաջարկների իրականացումը կվերացնի արդի ժամանակների ղեկավարներից շատերի հետևյալ մտայնությունը. <Ես եմ ղեկավարը, ինչ ուզում, այն էլ անում եմ> և կհիշեցնի նրանց, որ գոյություն ունի կառավարման սոցիալական պատասխանատվության համակարգ կազմակերպության աշխատողների ոչ միայն տնտեսական, այլ նաև բարոյական շահերի պաշտպանության հետ կապված:

Ղեկավար անձնակազմին բնորոշ դեվիացիաները և դրանց կառավարման ուղիները

Դեվիացիայի ձևը	Կառավարման ձևը	
	Կազմակերպության ներսում	Արտաքին կառավարում
1. Ռիսկի գնացող ղեկավար	Կազմակերպության կանոնադրությունում պետք է ընդգծված լինի ընդունված յուրաքանչյուր որոշման ղեկավարի պատասխանատվությունը	Ուսուցում, սերտիֆիկացում, ղեկավարի գործունեության լիցենզավորում
2. Պարանոիդալ ղեկավար	—	Ախտորոշում, ուսուցում, սերտիֆիկացում, ղեկավարի գործունեության լիցենզավորում
3. Շիզոիդ ղեկավար	Միջին օղակի մենեջերների գործունեության ակտիվացում, պատասխանատվության բարձրացում և սեփական շահերի գերակայությանն ուղղված համակարգի բացառում	Ախտորոշում, ուսուցում, սերտիֆիկացում, ղեկավարի գործունեության լիցենզավորում
4. Պասիվ ղեկավար	Միջին օղակի ակտիվացում և համախմբում: Նոր առաջնորդի ներգրավում անձնակազմի մեջ:	Ուսուցում, սերտիֆիկացում, ղեկավարի գործունեության լիցենզավորում
5. Պարտադրող ղեկավար	Իրականացնել աշխատանքի բաժանում՝ նախատեսելով ղեկավարի <բեռնաթափում> ավելորդ թղթաբանությունից:	Ուսուցում, սերտիֆիկացում, ղեկավարի գործունեության լիցենզավորում
6. Կասկածամիտ ղեկավար	—	Ախտորոշում, ուսուցում, սերտիֆիկացում, ղեկավարի գործունեության լիցենզավորում
7. Դրամատիկ ղեկավար	Անհրաժեշտ է հստակեցնել ներքին կանոնակարգը, կորպորատիվ մշակույթի նորմերը և յուրաքանչյուր աշխատողի հաստիքային լիազորությունները, պարտականությունները և պատասխանատվությունը: Մահմանել վերահսկողություն հաստիքացուցակի կիրառման վրա:	Ուսուցում, սերտիֆիկացում, ղեկավարի գործունեության լիցենզավորում

8. Պեղանտ ղեկավար	—	Ախտորոշում, ուսուցում, սերտիֆիկացում, ղեկավարի գործունեության լիցենզավորում
9. Դեպրեսիվ ղեկավար	—	Ախտորոշում, ուսուցում, սերտիֆիկացում, ղեկավարի գործունեության լիցենզավորում
10. Ինքնամիովի ղեկավար	—	Ախտորոշում, ուսուցում, սերտիֆիկացում, ղեկավարի գործունեության լիցենզավորում
11. Տերմինատոր ղեկավար	—	Ախտորոշում, ուսուցում, սերտիֆիկացում, ղեկավարի գործունեության լիցենզավորում
12. Նարցիսիստ ղեկավար	—	Ախտորոշում, ուսուցում, սերտիֆիկացում, ղեկավարի գործունեության լիցենզավորում
13. Պրինցիպալ-գործակալ	Կազմակերպության կանոնադրության մեջ ընդգծել և հստակ տարանջատել սեփականատերերի և գործակալ-ղեկավարների լիազորությունները, իրավունքները և պարտավորությունները:	Սերտիֆիկացում, ղեկավարի գործունեության լիցենզավորում

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Павленок П. Д., *Социальная работа с лицами и группами девиантного поведения* / П. Д. Павленок М. Я. Руднева. - М. : ИНФРА-М, 2007, ст. 56
2. Грошев И., Емельянов П., *Каков руководитель—такова и организация* / Международный журнал "Проблемы теории и практики управления", N 5, 2003, ст. 43-48
3. Լ. Սարգսյան, Է. Նախիյան, *Կառավարման որակը պայմանավորող գործոնների շուրջ*, Հայաստանի Հանրապետության ասոցիալ-տնտեսական հիմնախնդիրները /Գիտական հոդվածների ժողովածու, Եր., ԱԱԱԱ, 2006, էջ 368-373
4. Шамшикова Е.О., *Нарциссические лидеры: две стороны одной медали-невероятные “зло” и неизбежное “против”*, Развитие человека в современном мире: материалы II Всероссийской научно-практической конференции с международным участием: под ред. Н.Я Большуновой, О. А. Шамшиковой.- Новосибирск: Изд. НГПУ, 2011. ст.233-235
5. Фокин Н. И., *Проблема принципала-агента*, /Экономика: “В начале было Слово”, 2012/ <http://dictionaryeconomics.ru/word/>-Интернет ресурс

Нарине Кроян, Ваграм Багдасарян – *Формирование девиантного поведения на основе индивидуальных особенностей руководителя организации и управление им.* – В статье рассмотрена типология девиантного поведения руководителей организаций, а также предложена модель управления этим поведением с помощью внутриорганизационных и внешних инструментов управления.

Narine Kroyan, Vahram Baghdasaryan – *The formulation and management of the deviant behavior which is based on the companie's leader's individual qualities.* – The articie discribes the typology of deviant behavior of the heads of organizations as well as a model of managing this behavior whit the help of intra-organizational and external implements.

ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԵՎ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏՈՒՄ

ԻՆԳԱ ՆԱՍԻԼՅԱՆ, ԷՄՄԱ ՆԱՍԻԼՅԱՆ

Հայտնի է, որ յուրաքանչյուր երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացը բնութագրվում է ծառայությունների ոլորտի զարգացման աստիճանով: Առավել վառ ցուցանիշ է մշակույթի զարգացման մակարդակը: Այդ նպատակով որոշ համաշխարհային կազմակերպություններ (օրինակ՝ Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ)) մշակել են չափորոշիչներ: Այսպես, արդի ժամանակներում երկիրը չի կարող համարվել զարգացած, եթե նրա ծառայությունների ոլորտը համախառն ազգային արդյունքի 65%-ից ցածր է: ԱՄՆ-ում այս ցուցանիշը կազմում է 78%: Համաձայն ԱՄՀ տվյալների, XXI դարի սկզբում աշխարհի ծառայությունների բոլոր ձևերը կազմում էին 1500մլրդ դոլար (ամբողջ համաշխարհային արտադրության արժեքի մոտ 70%-ը)²⁷¹:

Շուկայական հարաբերությունների պայմաններում մշակութային գործունեության պետական ֆինանսավորման միջոցները կրճատվել են, և մշակույթի կազմակերպությունները անցել են նաև շուկայական տնտեսվորման, որի արդյունավետությունը ուղղակիորեն կախված է մարքեթինգային հետազոտություններից:

Մարքեթինգը կազմակերպության գործունեության կառավարման համակարգ է, որն ուղղված է շուկայի հետազոտման հիմքի վրա ապրանքների մշակմանը, արտադրմանը և սպառմանը՝ շահույթ ստանալու նպատակով²⁷²: Ընդ որում, շահույթի ծավալը անմիջապես կախված է սպառողների պահանջունքներից և նրանց վճարունակությունից:

Այն դեպքում, երբ մշակույթի շուկան կողմնորոշված է դեպի անվճարունակ սպառողը, մարքեթինգը կրում է սոցիալապես կողմնորոշված բնույթ, որի ռազմավարական առաքելությունը բնակչության հասարակական շահերի բավարարումն է: Եթե շուկայում առկա են վճարունակ, հարուստ սպառողներ, ապա մշակույթի մարքեթինգը կրում է առևտրային բնույթ:

Սոցիալ-մշակութային կազմակերպությունները բաց չեն թողնում հնարավորությունները սեփական ուժերով գումար վաստակելու համար և բնակչությանը առաջարկում են մի շարք վճարովի ծառայություններ: Դրանք են.

- Թեմատիկ միջոցառումներ, ծրագրեր, հոբբիյանական երեկոներ, դիսկոտեկներ, համերգներ և բեմադրություններ, մրցույթներ, աճուրդներ, խորհրդատվություններ, էքսկուրսիաներ, ցուցահանդես-վաճառքներ, առողջարար և սպորտային միջոցառումներ և այլն:

- Ուսումնական և ստեղծագործական պարապմունքներ:
- Նյութերի բազմացում, տպագրում, թարգմանում և այլն:

²⁷¹ *Бурменко Т.Д., Давиленко Н.Н., Туренко Т.А.* Сфера услуг. Экономика-М.Кнорус, 2008 ст.33-34

²⁷² *Хлебович Д.И.* Сфера услуг Маркетинг-М: КНОРУС.2009 ст.7

- Վիդեոֆիլմերի վարձույթ և փոխանակում, կինոցուցադրում, խաղային միջոցառումներ:

- Երաժշտական գործիքների, բեմական ռեկվիզիտի վարձույթ, դիզայն-րական աշխատանքներ, տոներ, զբոսաշրջության կազմակերպում և այլն:

Մշակույթի ոլորտի մարքեթինգը հիմնականում իրենից ներկայացնում է ոչ առևտրային ոլորտ, որին բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները²⁷³.

1. Նպատակներ: Որպես նպատակ կարող է հանդես գալ ոչ թե շահույթը, այլ սոցիալական գաղափարի իրականացումը:

2. Ապրանքներ: Սովորաբար դրանք ծառայություններ են, գաղափարներ և ծրագրեր, որոնք ունեն սոցիալական նշանակություն:

3. Գներ: Ոչ առևտրային կազմակերպության սոցիալական ծառայությունները կամ անվճար են, կամ էլ ցածր գներով:

4. Շուկայի երկակիություն: Բարեգործները, դոնորները, մեկենասները իրենցից ներկայացնում են ոչ առևտրային կազմակերպությունների յուրատեսակ սպառողական շուկա:

5. Իրացում: Որպես շուկայական հատված օգտագործվում է նաև անվճար կամավոր օգնությունը կամ պետական միջամտությունը: Այստեղ առնչվում են նաև քաղաքական, կրոնական, գաղափարական և այլ մարքեթինգներ

6. Ապրանքաշարժ: Ոչ առևտրային կազմակերպությունը զգալի կախվածություն ունի պետական քաղաքականությունից, հասարակական կարծիքից, PR-ից և այլն:

7. Աշխատանքի արդյունքների հստակ ցուցանիշների բացակայություն, ինչը դժվարացնում է վերահսկողությունը և արդյունավետության վերլուծությունը:

Հաշվի առնելով, որ մշակույթը իր մեջ պարունակում է և առևտրային, և ոչ առևտրային գործունեության ձևերը, ապա յուրաքանչյուր ղեկավարի հիմնական նպատակն է այդ երկու ուղղությունները համատեղել և ապահովել ինչպես սոցիալական, այնպես էլ տնտեսական եկամուտ: Այս ամենը ապահովելու համար անհրաժեշտ է.

1. Ֆինանսական միջոցները ծախսել խնայողաբար, ստեղծելով և իրացնելով միայն անհրաժեշտ, արդյունավետ և հասարակայնորեն օգտավետ մշակույթային նախագծեր:

2. Ֆինանսների աճը իրականացնել վճարովի գործունեության հաշվին, կրճատել մասնագիտական ցածր մակարդակ ունեցող աշխատողներին և ազատված միջոցների հաշվին բարձրացնել մնացած աշխատողների աշխատավարձը, խնայողաբար օգտագործել էլեկտրաէներգիան, ջեռուցումը, տրանսպորտային միջոցները, ուսումնասիրել սոցիալ-մշակութային միջավայրը, մրցակիցներին և այլն:

3. Մշակույթի կազմակերպությունը մոտեցնել սպառողին, բարելավել անհատական աշխատանքի ձևերը, հանդիսատեսների համար ստեղծել ավելի հարմարավետ պայմաններ:

Ի տարբերություն ապրանքային շուկաների՝ սոցիալ-մշակութային շուկայում անհրաժեշտ է սկզբնական շրջանում առավել մանրակրկիտ ուսումնասիրել սպառողների պահանջմունքները և առաջարկել դրանց համապատասխան ծառայություններ:

²⁷³ Теория и практика социокультурного менеджмента. Курс лекции. <<Сибирский федеральный университет>>-Красноярск 2007 ст.10-11

Բնակչության մշակութային մակարդակի բարձրացումը համապատասխանում է հասարակության զարգացման պահանջներին, և դրան համապատասխան սոցիալ-մշակութային ծառայությունը դառնում է հասարակայնորեն կարելի գործ: Մինևսյն ժամանակ մշակույթի շուկայական մրցունակությունը որոշվում է ոչ թե առք ու վաճառքի գործարարական օրենքներով, այլ մշակույթի կազմակերպության հասարակական կարգավիճակով, աշխատողների ստեղծագործական ներուժով, ընդունակություններով: Մակայն որոշ ուսումնական ձեռնարկներում, ցավոք, սոցիալ-մշակութային գործունեության մարքեթինգը ներկայացվում է միայն որպես առևտրային գործունեություն: Ուստի սոցիալ-մշակութային գործունեության մարքեթինգի առավել ճիշտ սահմանումը, որն առաջարկել է Գ. Տուլչինսկին, հետևյալն է. «Դա կազմակերպության կազմակերպչական, գործարար և ստեղծագործական բոլոր կողմերի կառուցման գործընթաց է, որն անցնում է բնակչության մշակութային պահանջմունքների ուսումնասիրման, գաղափարների մշակման, վճարովի և անվճար ծառայությունների ստեղծման և մատուցման փուլերը»²⁷⁴:

Կարևոր է նաև մշակույթի ֆինանսավորումը, որը թույլ է տալիս.

- Մեղմացնել մշակութային արտադրանքի սպառման կախվածությունը բնակչության վճարունակության մակարդակից:

- Մշակութային ծառայություններն իրականացնել բնակչության բոլոր շերտերի համար՝ կիրառելով տոնական, հոբելյանական, քաղաքական, մշակութային միջոցառումներ:

- Ապահովել մշակութային արժեքների պահպանումը (հուշարձաններ, ավանդույթներ և այլն):

- Հասարակայնորեն կարևոր մշակութային առաքելություն իրականացնելով՝ գիտակցել սեփական սոցիալական և տնտեսական պաշտպանվածությունը:

Իսկ շուկայական սկզբունքների կիրառումը մշակույթում թույլ է տալիս՝

- Տարածել մշակույթի և արվեստի բարձր նմուշներ, նպաստել գեղագիտական ճաշակների ձևավորմանը:

- Կարգավորել օպտիմալ հարաբերակցությունը վճարովի և անվճար ծառայությունների միջև:

Սոցիալ-մշակութային գործունեությունում կիրառվում են հիմնականում մարքեթինգի հետևյալ ձևերը.

Դազմավարական մարքեթինգ - գործունեություն է, երբ արդյունքը (արտադրանքը) և սպառողը ստեղծվում են միևնույն ժամանակ:

Բնտեգրված մարքեթինգ - սոցիալ-մշակութային կազմակերպությունների կոլեկտիվները բազմաքանակ չեն (5-10 մարդ): Ուստի որպես կանոն առանձին մարքեթինգի ծառայություն չունեն և այս գործառնությունը կատարում են ամբողջ կոլեկտիվով՝ ստեղծելով տարբեր ուղղությամբ թիմեր (կազմակերպչական, ստեղծագործական, մարքեթինգային և այլն): Այս թիմերը համալրվում են նաև հասարակական ակտիվիստներով:

Դիմում են նաև մարքեթինգի գծով խորհրդատվական ծառայություններին: Փորձը ցույց է տվել, որ նման թիմերը ավելի արդյունավետ են, քանի որ անդամ-

²⁷⁴ *Тульчинский Г.Л.* Маркетинг в сфере культуры.-СПб: СПбАК, 1995 ст. 10-12

ները կարող են դիմել կառավարման ստեղծագործական տարբերակներին, նորամուծություններին:

Այսպիսով, սոցիալ-մշակութային գործունեության մարքեթինգը ունի ընդգծված սոցիալական և մշակութային ուղղվածություն և նրա արդյունավետությունը ապահովվում է երբ՝

- այն համապատասխանում է որոշակի պահանջմունքներին, կիրառման բնագավառին,
- բավարարում է սպառողների ակնկալիքները,
- համապատասխանում է ստանդարտներին և տեխնիկական պայմաններին,
- համապատասխանում է հասարկության պահանջներին,
- հաշվի է առնում շրջակա միջավայրի պահպանման պահանջները,
- առաջարկում է սպառողներին մրցունակ գներով ծառայություններ,
- տնտեսապես արդյունավետ է:

Ծառայությունների այդ թվում և մշակույթի ոլորտի մարքեթինգային նպատակների իրականացմանը նպաստում է նաև *որակը*: Նախկինում որակը չափվում էր թերությունների քանակով, այնուհետև այն սկսեց գնահատվել որպես ուրոշ նորմերին համապատասխանող ցուցանիշ: Մեկ այլ սահմանմամբ, որակը հաճախորդի պահանջները բավարարելու կամ ակնկալիքները գերազանցելու հատկությունը և ստանդարտներին համապատասխանելու ունակությունն է²⁷⁵: Որակը դինամիկ կատեգորիա է՝ շուկայի, մրցակցության, պահանջարկի զարգացման հետ աճում են պահանջները որակի ստանդարտների հանդեպ:

Մշակույթին բնորոշ է նաև *սոցիալական որակը*: Դա նշանակում է, որ ծառայություններին ներկայացվում են նաև բարոյական, հոգեբանական, կրթական, առողջապահական պահանջները: Որակը կարող է դիտարկվել ինչպես ակնկալվող, այնպես էլ ընկալված ձևով:

Ծառայությունների որակը կախված է՝

- ձեռնարկության սպասարկման անձնակազմի և հաճախորդի փոխհարաբերության բնույթից,
- սպասարկման գործընթացում ներգրավված այլ անձերից,
- ծառայություն կատարելու և հաճախորդի պահանջին արձագանքելու արագությունից:

Ինչպես բոլոր ծառայությունների, այնպես էլ մշակույթի որակը որոշվում է հինգ գործոնների միջոցով, որոնք դրված են *SERVQUAL մեթոդիկայի* հիմքում: Դրանք են՝

1. *Վստահություն* - ծառայությունը հստակ և ժամանակին կատարելու ունակություն:
2. *Բարեսրտություն, զրաւրտություն* - սպառողին օգնելու ցանկություն և արագ սպասարկում:
3. *Համոզություն* - սպասարկող անձնակազմի իրազեկություն, պատասխանատվություն, համոզվածություն, քաղաքավարություն:
4. *Կարեկցություն* - հոգատարություն, անհատական մոտեցում:
5. *Նյութականություն կամ շոշափելիություն* - ծառայություն մատուցելու համար նախատեսված սարքավորումը, անձնակազմը տեսնելու հնարավորություն, տեղեկատվական նյութերի առկայություն:

²⁷⁵ **Яременко Н.Н.** Социально-культурная деятельность в контексте формирования новых качеств социального взаимодействия. Учебные записки. Вып.23. М.МГУКИ,2001 ст.39-47

Լայն տարածում է ստացել նաև որակի սպասարկման հինգաստիճանային մեթոդը, որը հիմնված է հաճախորդների ակնկալիքների բավարարման սկզբունքի վրա: Մոդելի առավելությունը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր աստիճան ունի աճի հնարավորություններ²⁷⁶:

Աստիճան N1. Սպառողի ակնկալիք և տեղեկատվության արձագանք:

Ակնկալիքները կարող են բացահատվել տարբեր հարցումների, դիտումների, հետազոտումների միջոցով:

Աստիճան N2. Ղեկավարության ընկալումը և սպասարկման որակի յուրահատկությունները (մենեջերները գիտեն, թե ինչ են իրենցից ակնկալում հաճախորդները, սակայն հակված չեն զարգացնել պահանջումների բավարարման համակարգերը):

Աստիճան N3. Սպասարկման և ծառայությունների մատուցման որակի սպեցիֆիկացիա: Բացահայտելով հաճախորդների պահանջումները՝ մշակում են դրանց համապատասխանող սպասարկման որակի սպեցիֆիկացիաներ: Սակայն, ծառայողները ի վիճակի չեն դրանք իրականացնել:

Աստիճան N4. Սպասարկման մատուցում և արտաքին կապեր:

Անհրաժեշտ է հավաստիանալ, որ ձեռնարկությունը առաջարկում է այն, ինչը կարող է մատուցել:

Աստիճան N5. Ակնկալվող սպասարկում և մատուցված սպասարկման ընկալում: Գերազույն նպատակն է՝ լիովին բավարարել սպառողների պահանջումները, որին հասնելու համար անհրաժեշտ է մշակել սպասարկման որակի ծրագիր: Ծառայությունների որակի գնահատման համար օգտագործում են երեք հիմնական մոտեցումներ.

1. ծառայություն մատուցողի ինքնագնահատում,
2. այլ կազմակերպության կողմից ծառայության որակի գնահատում,
3. ստացված ծառայությունների սպառողական գնահատում:

Լայն տարածում է ստացել <Սպառողների բավարարվածության ինդեքսի հաշվարկման> մեթոդիկան (CSI), որը հաշվարկվում է անհատական հարցումների մեթոդի հիման վրա, որպես չափորոշիչ օգտագործելով նաև ձեռնարկության շահութաբերության և շուկայական արժեքների տվյալները:

Ռուսական հետազոտողների կողմից առաջարկված է ծառայության որակի գնահատման մեթոդ, որը հիմնված է որակի մասնագետների հարցման (անկետավորման) վրա: Որպես հիմք են վերցված որակի չորս ցուցանիշների խմբերը, որոնք կարող են ազդել սպառողի վրա: Դրանք են՝ տարածքային, տեղեկատվական, մասնագիտական և վնասապահանջային ցուցանիշները²⁷⁷: Որակյալ սպասարկման նպատակով անհրաժեշտ է վերլուծել բոլոր բողոքները, դիտողությունները և առաջարկները, որի համար պետք է անընդհատ անցկացնել հարցումներ, իսկ խնդիրների լուծման համար ունենալ արդյունավետ բիզնես-տեխնոլոգիաներ:

Կարծիքների և բողոքների վերաբերյալ տեղեկատվության հավաքման և մշակման համակարգը պետք է ներառի՝

1. հաճախորդների արձագանքի մասին տեղեկատվության հավաքման տարբեր ձևեր,

²⁷⁶ *Хлебович Д.И.* Сфера услуг Маркетинг-М: КНОРУС.2009 стр.79-83

²⁷⁷ *Пономарева Т.А., Супрягина М.С.* Качество услуг: качественные параметры оценки. Маркетинг в России и за рубежом N1, 2005 стр.54

2. տարբեր իրավիճակներում այդ արձագանքի գնահատման գործընթացներ,

3. միջոցների ընդունման համակարգ (ինչպես խրախուսող, այնպես էլ նախատող),

4. վաճառման կետերի գնահատում,

5. մատչելի տեղեկատվության առկայության ստուգում,

6. անձնակազմի մասնագիտական մակարդակի գնահատում:

Առաջարկված են որակյալ սպասարկման ապահովման տասը սկզբունքներ՝

1. Առաջնորդություն: Կազմակերպությունը պետք է լավ պատկերացնի իր հեռանկարները:

2. Կազմակերպության բոլոր բաժիններում պետք է ներդրվեն մարքեթինգային մոտեցումներ:

3. Անհրաժեշտ է գիտակցել սպառողների պահանջմունքները:

4. Բիզնեսի իմացություն:

5. Աշխատանքում հիմնական կազմակերպչական սկզբունքների կիրառում:

6. Ազատության գործոն: Ծառայությունների մատուցման համակարգը պետք է լինի ձկուն: Աշխատողները պահպանելով սպասարկման ստանդարտները, պետք է ունենան նաև որոշակի ազատության իրավունք:

7. Համապատասխան տեխնոլոգիաների օգտագործում:

8. Անձնակազմի արդյունավետ կառավարում:

9. Ստանդարտների հաստատում, կատարած աշխատանքների գնահատում, խթանման համակարգի կիրառում:

10. Հետադարձ կապ:

Սպասարկման ոլորտի որակի գրավականն են հատուկ մշակված ստանդարտները, որոնք պետք է ապահովեն սպառողների իրավունքները ծառայության անվտանգության վերաբերյալ: Սպասարկման ստանդարտը հաճախորդների սպասարկման համար պարտադիր կանոնների համալիր է, որը պետք է երաշխավորի բոլոր գործողությունների որակի հաստատված մակարդակը: Այն հաստատում է ձևական չափորոշիչները, որոնցով պետք է գնահատվեն հաճախորդի սպասարկման մակարդակը և յուրաքանչյուր աշխատակցի գործունեությունը:

Մշակութային արտադրանքի որակի կառավարումը իրենից ներկայացնում է այդ ոլորտի կազմակերպությունների ղեկավարների գործունեությունը ուղղված է դեպի այնպիսի ապրանքների և ծառայությունների մատուցումը, որոնք կհամապատասխանեն մշակութային բարիքների պահանջներին՝ ըստ սպառողների մշակութային նախապատվությունների, կառուցվածքի և բավարարվածության:

20-րդ դարի 80-ականների վերջից որակի կառավարման սկզբունքները, միջոցները և մեթոդները սկսեցին տարածվել մարդու գործունեության բոլոր ոլորտների վրա: Ուստի <որակի կառավարում> հասկացությունը ստանդարտացվեց: Մշակույթի որակի կառավարման համար կիրառելի դարձան նաև համաշխարհային տարածում ստացած հայտնի մոդելները.

- Գնահատման մեթոդի վրա հիմնված կառավարման մոդել (SWOT-վերլուծություն)

- Որակի համընդհանուր կառավարում (TQM-մոդել)
- Որակի միջազգային ստանդարտ (ISO)

Որակը որոշվում է նաև բազմաթիվ պատահական, տեղական և սուբյեկտիվ գործոնների ազդեցությամբ: Այս գործոնների բացասական ազդեցության կանխարգելման նպատակով անհրաժեշտ է որակի կառավարման միասնական համակարգ: Սոցիալ-մշակութային ոլորտի որակի կառավարումն ունի իր առանձնահատկությունները: Մշակութային արտադրանքի որակի ստանդարտացման համակարգի բացակայությունը թույլ է տալիս սոցիալ-մշակութային գործունեության մենեջերներին մշակել որակի կառավարման սկզբունքների, գործողությունների և առաջարկությունների հատուկ համակարգ: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ մշակույթի որակի կառավարմանը բնորոշ են մենեջմենթի բոլոր հիմնական գործառնությունները՝ պլանավորում, կազմակերպում, դեկլարում (շահադրդում) և վերահսկողություն:

Սոցիալ-մշակութային գործունեության որակի պլանավորման ժամանակ և դրա համար նպատակների մշակման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել.

- Կազմակերպության և նրա սպառողների փաստացի և հեռանկարային պահանջմունքները:

- Կազմակերպության վերլուծության հիման վրա արված եզրակացությունները:

- Սոցիալ-մշակութային արտադրանքի որակի և պահանջարկի փաստացի ցուցանիշները:

- Շահագրգռված կողմերի բավարարվածության մակարդակը:

- Ինքնագնահատման արդյունքները:

- Համեմատությունը լավագույն նվաճումների հետ, մրցակիցների աշխատանքի վերլուծության արդյունքները, դրանց բարելավման հնարավորությունները:

- Նպատակներին հասնելու անհրաժեշտ ռեսուրսները:

Նպատակները պետք է այնպես հասցնել աշխատողներին, որ նրանք ակտիվ ներգրավվեն դրանց իրականացման գործին: Արդյունքները անհրաժեշտ է անընդհատ վերլուծել և ժամանակին մտցնել անհրաժեշտ շտկումներ: Որակի կառավարման համակարգի պլանավորման արդյունքների հիման վրա որոշվում են սոցիալ-մշակութային արտադրանքի կենսացիկլի գործընթացները և դրանց աջակցումը, որոնք իրենց հերթին ներառում են.

- Կազմակերպության գործունեության համար անձնակազմի անհրաժեշտ գիտելիքները և հմտությունները:

- Գործունեության բարելավման պլանների իրականացման համար պատասխանատվության և լիազորությունների առկայությունը:

- Անհրաժեշտ ռեսուրսները (ֆինանսական, նյութական և այլն):

- Մատրիցա՝ կազմակերպության գործունեության բարելավման գնահատման համար:

- Կազմակերպության գործունեության բարելավման համար անհրաժեշտ միջոցները և մեթոդները:

Ըստ որոշ մասնագետների՝ որակի կառավարումը սոցիալ-մշակութային ոլորտում անհրաժեշտ է իրականացնել ընդհանուր սկզբունքների հիման վրա: Մակայն գուտ մշակույթի համար Լ. Ռուդիչը առաջարկել է «12 հիմնական սկզբունք-հիմնադրություններ»²⁷⁸: Դրանք են.

²⁷⁸ **Рудич Л.И.** Менеджмент социально-культурной сферы. Основы технологии- Кемерово, Кузбассвузиздат, 2008 ст.127

1. Մտցնել կազմակերպության կանոնակարգում՝ առաքելության մասին, բաժնում ձգտումը դեպի բարձր որակի մշակութային ապրանքը և ծառայությունը:

2. Պարտադրել կառավարչական ղեկավար անձնակազմին զբաղվել որակով:

3. Յուրաքանչյուր մենեջերի խնդիրների մեջ մտցնել մշակութային ապրանքի կամ ծառայության բարձր որակի ապահովումը:

4. Կենտրոնանալ սպառողների կարիքների վրա:

5. Կանխել թերությունները:

6. Օգտագործել <Թերությունների զրոյական մակարդակի> արտադրական ստանդարտներ:

7. Ընտրել բարձր որակի կատարողներ և նրանց համապատասխան ձևով պատրաստել:

8. Կիրառել որակի մասին հստակ և արագ արձագանքող տեղեկատվության համակարգ:

9. Վերահսկել արտադրության գործընթացը:

10. Փոխկապակցել «Դեպի լավ որակ» կոչը ուսուցման գործընթացի հետ:

11. Բացառել արտադրման ազատ («օդից վերցված») նորմերը:

12. Մշակել որակի կառավարման վիճակագրական մեթոդների ուսումնական ծրագրեր, քանի որ դրանք են որակի վերահսկման հիմքերը:

Որակի կառավարման այս սկզբունքների ներդրման համար անհրաժեշտ է համապատասխան կառավարման մեխանիզմ: Դիտարկելով որակի կառավարումը որպես համակարգային՝ այդ մեխանիզմը կարելի է ներկայացնել որպես կազմակերպչական և տնտեսական բաղադրամասերի և շղթաների ամբողջություն, որոնք կառավարման նպատակներին հասնելու համար ապահովում են որակի կառավարման բոլոր օղակների համաձայնեցված, փոխկապակցված գործունեությունը: Հաշվի առնելով արդի պայմաններում սոցիալ-մշակութային ապրանքներին ներկայացվող բարձր պահանջները՝ որակի կառավարման կարևոր չափանիշ է դառնում որակի մակարդակը: Ինչպես արդեն նշեցինք, մշակույթի ոլորտում բացակայում են ստանդարտները, և գնահատումը կրում է զուտ համեմատական բնույթ, այսինքն, որակի մակարդակը իրենից ներկայացնում է հարաբերական բնութագիր, տվյալ նոր սոցիալ-մշակութային արտադրանքի որակական ցուցանիշների ամբողջության համեմատություն՝ ընդունված մշակութային արժեքների բազային ցուցանիշների հետ: Հաշվի է առնվում նաև, թե որքանով է տվյալ սոցիալ-մշակութային արտադրանքը բավարարում սոցիալ-մշակութային շուկայում նպատակային հատվածի պահանջմունքները: Այսպիսով, արդի պայմանները արտացոլող և առավել ճշգրիտ գնահատող է համարվում որակի մակարդակի այն տարբերակը, որը ներկայացնում է դիտարկվող օբյեկտի որակի որոշակի ցուցանիշների ամբողջության օգտավետությունը՝ համեմատելով դրանց նույն պայմաններում գործող մրցակցի, նմուշային, նմանատիպ օբիեկտների հետ:

Հայաստանի Հանրապետության մշակույթի զարգացումը Խորհրդային Միության ժամանակաշրջանում կրում էր պետական կառավարման բնույթ, ֆինանսավորվում էր բյուջեից: Այս հանգամանքը թույլ էր տալիս պետությանը օգտագործել մշակույթը ոչ միայն հոգևոր և բարոյական դաստիարակման, այլ նաև

քաղաքական քարոզչության համար: Մշակույթի որակը որոշվում էր այդ տեսանկյունից: Այսօր շուկայական տնտեսության պայմաններում, երբ բյուջետային հնարավորությունները սեղմ են և մշակութային կազմակերպությունն ունի նաև ֆինանսական միջոցներ հայթայթելու խնդիր, ապա նա պարտավոր է ուսումնասիրել շուկան, ապահովել արտադրանքի սոցիալապես անհրաժեշտ որակ: Հաշվի առնելով այս ոլորտի սոցիալական կողմնորոշվածությունը՝ մշակույթի կառավարման բոլոր ուղղությունները, այդ թվում և որակը, պետք է գտնվեն պետության և հասարակության հսկողության տակ: Եվ անկախ այն բանից, թե մշակութային կազմակերպության ֆինանսավորումը ինչ չափով է բյուջետային կամ շուկայական եկամուտների հաշվին, յուրաքանչյուրը պետք է ձեռք բերի նման գործունեություն ծավալելու իրավունք (լիցենզիա) և անընդհատ հասարակությանը հաշվետու լինի կատարած աշխատանքի մասին: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակութային կազմակերպության անձնակազմից անհրաժեշտ է ձևավորել մարքեթինգային հետազոտությունների խմբեր, ծավալել շուկայի հետազոտման գործունեություն՝ առավել լուրջ ուշադրություն դարձնելով որակի կառավարմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бурменко Т.Д., Даниленко Н.Н., Туренко Т.А., *Сфера услуг. Экономика* - М. Кнорус, 2008
2. Хлебович Д.И., *Сфера услуг. Маркетинг*-М: КНОРУС, 2009
3. *Теория и практика социокультурного менеджмента*. Курс лекции. <<Сибирский федеральный университет>>-Красноярск, 2007
4. Тульчинский Г.Л., *Маркетинг в сфере культуры*-Спб: СПбАК, 1995
5. Яременко Н.Н., *Социально-культурная деятельность в контексте формирования новых качеств социального взаимодействия*. Учебные записки. Вып.23. М. МГУКИ, 2001
6. Пономарева Т.А., Супрягина М.С., *Качество услуг: качественные параметры оценки*. Маркетинг в России и за рубежом N1, 2005
7. Рудич Л.И., *Менеджмент социально-культурной сферы. Основы технологии*- Кемерово, Кузбассвуиздат, 2008

Инга Насилян, Эмма Насилян – Управление качеством и маркетингом в сфере культуры. – В статье рассмотрены особенности социально-культурной деятельности в рыночных условиях. В частности, предложена система управления маркетингом в сфере культуры, а в рамках маркетинговых исследований изучены также вопросы управления качеством социально-культурных услуг.

Inga Nasilyan, Emma Nasilyan – Management of marketing and quality in the sphere of culture. – The article describes the features of social and cultural activities in the market conditions. In particular, one proposed a system of marketing management in the cultural sector as well as the quality management of social and cultural services within market research.

ԱՌԱՎԵԼ ՎՏԱՆԳԻ ԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ

ԱՆԻ ԶՈՀՐԱԲՅԱՆ

Մեր օրերում հասարակության և գիտության մեջ, տեխնոլոգիական զարգացման բուռն գործընթացներով պայմանավորված, գնալով ավելանում է շրջապատում առավել վտանգի աղբյուր ստեղծող գործունեությամբ անձին և նրա գույքին վնասի պատճառումը: Հետևաբար մեծանում են տվյալ օբյեկտներով վնաս պատճառելուց բխող պարտավորությունները:

Իրավաբանական գիտության մեջ չկա առավել վտանգի աղբյուրի հասկացության միասնական մոտեցում: Առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար պատասխանատվությունը նախատեսված է եղել նաև Հայաստանի 1923թ. և 1964թ. քաղաքացիական օրենսգրքերով, սակայն առավել ճիշտ կարգավորում է ստացել 1998թ. քաղ.օր.-ում: Իրավաբանական գրականության մեջ գոյություն ունեն իրարամերժ տեսակետներ կապված թե՛ առավել վտանգի աղբյուրի հասկացության, թե՛ սուբյեկտների շրջանակի, թե՛ պատասխանատվության ծագման և այլ հարցերի շուրջ:

Առավել վտանգի աղբյուրի հասկացության հետ կապված տեսակետները տարբեր են. Առավել վտանգի աղբյուր ասելով պետք է ընկալել նյութական աշխարհի որոշ օբյեկտներ /սարքավորումներ, մեխանիզմ, տրասպորտ/, որոնք իրենց բնականոն գործունեության ընթացքում օգտագործվելով /շահագործվելով/ լիովին դուրս են գալիս մարդու հսկողության շրջանակներից, որի արդյունքում էլ վտանգ են ներկայացնում շրջապատի համար²⁷⁹:

Որպես առավել վտանգի աղբյուր ճանաչվում է ցանկացած գործունեություն՝ կապված օգտագործվող որոշակի իրերի հետ, որոնք դուրս են գալիս մարդու համընդհանուր հսկողությունից, որի արդյունքում էլ առաջ է գալիս վնասի առաջացման բարձր հավանականությունը²⁸⁰:

Առավել վտանգի աղբյուրը, որոշ իրերի հատկություններ կամ բնության ուժեր են, որոնք տեխնոլոգիական զարգացման մակարդակում դուրս են գալիս մարդու վերահսկողությունից և լիովին չվերահսկվելով ստեղծում են մարդու կյանքին կամ առողջությանը պատճառվող վնաս²⁸¹:

Առավել վտանգի աղբյուր համարվելու համար առաջարկվում է ուսումնասիրել նյութական աշխարհի այն իրերը, որոնք օժտված են հատուկ քանակական և որակական հատկություններով, և որոնց տիրապետումը /տնօրինում, օգտագործում/ շրջապատի համար կարող է առաջացնել վտանգավոր հետևանքներ: Միննույն ժամանակ նշվում է, որ ոչ բոլոր առարկաներն են հանդիսանում այդպիսի աղբյուր, այլ միայն նրանք, որոնք օժտված են յուրահատուկ՝ քիմիական, ֆիզիկական, կենսաբանական և այլ որակներով²⁸²:

²⁷⁹ Տե՛ս **Ա.Մ. Белякова** Советское гражданское право. М., 1980. էջ 359:

²⁸⁰ Տե՛ս **В.Г. Вердников** Советское гражданское право. М., 1987. էջ 396:

²⁸¹ Տե՛ս **Е. А. Флейшиц** Обязательства из причинения вреда и обязательства из неосновательного обогащения. М., 1951. էջ 132:

²⁸² Տե՛ս **О.А. Красавчиков** Возмещение вреда, причиненного источником повышенной опасности. М., 1966. էջ 347:

Անձի կյանքի և առողջության համար առավել վտանգի աղբյուրի թվին են դասվում առանձնահատուկ որակներով առանձնացող առարկաները, մեխանիզմները, որոնց օգտագործման ընթացքում առաջանում է էներգիա կամ դրսևորվում այնպիսի հատկություններ, որոնք չեն ենթարկվում մարդու բացարձակ հսկողությանը և վնասի առաջացման հիմք են ստեղծում²⁸³:

Այսպիսով առկա տեսակետներից կարող ենք անել հետևյալ եզրակացությունը, որ առավել վտանգի աղբյուրի կամ այդպիսի աղբյուրի իրեր են հանդիսանում նյութական աշխարհի այն իրերը, որոնք ստեղծված լինելով և օգտագործվելով մարդու կողմից չեն ենթարկվում վերջինիս լիարժեք կառավարման և դրանց շահագործման ընթացքում բարձրացնում շրջապատողներին հասցվելիք վնասի հնարավորությունը: Միննույն առարկան կամ իրը տարբեր իրավիճակներում կարող է դիտվել և՛ որպես առավել վտանգի աղբյուր, և՛ ոչ:

ՀՀ քաղ. օր.-ի 1072-րդ հոդվածով սահմանվում է, իրավաբանական անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ /տրանսպորտային միջոցների, մեխանիզմների, բարձր լարվածության էներգիայի, ատոմային էներգիայի, պայթուցիկ նյութերի, ուժեղ ներգործող թույների և այլնի օգտագործում, շինարարական և դրա հետ կապված այլ գործունեության իրականացում/, պարտավոր են հատուցել առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը, եթե չեն ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով:

Չնայած այն բանին, որ օրենսդիրը տվել է օրենքում առավել վտանգի աղբյուրների տեսակների դասակարգումը, միննույն ժամանակ հնարավորություն է տվել դատարաններին անհրաժեշտության դեպքում ընդլայնել այդ ցանկը:

Այսպիսով, շրջապատի համար առավել վտանգի աղբյուր ստեղծող գործունեությամբ կարող են օգտագործվել տրանսպորտային միջոցները, մեխանիզմները, բարձր լարվածության էներգիայի, ատոմային էներգիայի, պայթուցիկ նյութերի, ուժեղ ներգործող թույների /ուժեղ բացասական ազդեցություն է ունենում մարդու օրգանիզմի վրա/ և այլնի օգտագործումը, ինչպես նաև շինարարական և դրա հետ կապված այլ գործունեության իրականացումը: Օրենքը չի սահմանափակվում նշված աղբյուրներով և նախատեսում է նոր աղբյուրների և գործունեության առաջացման հնարավորություն:

Որպեսզի իրավաբանական անձանց և քաղաքացիների գործունեության ընթացքում օգտագործվող օբյեկտները դասվեն առավել վտանգի աղբյուրների շարքին, նրանք պետք է ունենան հետևյալ հատկանիշները.

- նրանց վնասակար հատկանիշները
- մարդու կողմից նրա նկատմամբ լրիվ վերահսկողության անհնարինությունը:

Այդ իրերը, սարքավորումները պետք է գտնվեն շահագործման մեջ և այդ շահագործման ընթացքում առաջացնեն առավել վտանգավորություն շրջապատի համար²⁸⁴: Բոլոր իրերը չեն, որ առավել վտանգավորություն են դրսևորում շահագործման ընթացքում /օրինակ՝ քիմիական նյութերը/ և հակառակը, կան իրեր, առարկաներ, որոնք կարող են առավել վտանգի աղբյուր դառնալ միայն դրանց օգ-

²⁸³ Տե՛ս *Шиминова М.*, Возмещение вреда причиненного здоровью. М., 1972. էջ 22:

²⁸⁴ Տե՛ս *Майдавик Л.А.*, Сергеева Н.Ю. Материальная ответственность за повреждение здоровья. М., 1968. էջ 48:

տագործման ընթացքում /օրինակ՝ բախում կայանած մոտոցիկլետը/: Առարկան պետք է ունենա վնասաբեր հատկություն, որպեսզի դիտվի որպես առավել վտանգի աղբյուր: Այս հատկանիշների հաշվառմամբ, որպես առավել վտանգի աղբյուր չեն համարվում որսորդական, գազային հրազենները²⁸⁵: Քաղ. օր.-ի 1072-րդ հոդվածի կանոնները կիրառվում են այն դեպքում, երբ վնասը պատճառվում է տրանսպորտային միջոցների օգտագործման ժամանակ: Դրանց թվին են դասվում ավտոմեքենաները, մոտոցիկլետները, տրամվայները, էլեկտրաքարշերը և այլն: Զագորուկոն հետաքրքիր օրինակ է բերում կանգնած գնացքի վերաբերյալ, օրինակ՝ երբ ուղևորը ոտքը վնասում է կանգնած գնացքից իջնելիս, այս դեպքում բացառում է առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար պատասխանատվությունը, քանի որ վնասը չի առաջացել առավել վտանգի աղբյուրի օգտագործման ընթացքում, չնայած դրա շահագործման փաստը առկա է²⁸⁶: Օբյեկտն առավել վտանգավոր ճանաչելու հարցը կարող է որոշվել դատարանի կողմից՝ համապատասխան փորձաքննության եզրակացության հիման վրա:

Առավել վտանգի աղբյուրով վնասը հատուցելու պարտականությունը դրվում է սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքով /օրինակ՝ վարձակալության իրավունք, լիազորագրով տրասպորտային միջոցները վարելու իրավունք և այլն/ տիրապետող իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա:

Առավել վտանգի աղբյուրի տերը բնութագրվում է երկու հատկանիշներով՝ իրավաբանական և նյութական՝

1. Իրավաբանական հատկանիշը իրենից ներկայացնում է իրավիճակը, երբ առավել վտանգի աղբյուրի տիրապետող ճանաչվում է այն անձը, ով համապատասխան իրավասություններ ունի այդ աղբյուրի նկատմամբ:

2. Նյութական հատկանիշի դեպքում աղբյուրի նկատմամբ փաստացի տիրապետում իրականացնում է առավել վտանգի աղբյուրի տիրապետողը: Այս երկու հատկանիշների առկայությունը պարտադիր է²⁸⁷:

Այն դեպքում, երբ առավել վտանգի աղբյուրը սեփականատիրոջ տիրապետումից դուրս է եկել այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով, սակայն առկա է նաև սեփականատիրոջ մեղքը /օրինակ՝ երբ սեփականատերը առավել վտանգի աղբյուրի նկատմամբ պատշաճ հսկողություն չի իրականացրել/ դատարանի կողմից պատասխանատվությունը կարող է դրվել ինչպես առավել վտանգի աղբյուրի սեփականատիրոջ, այնպես էլ ապօրինի ձեռքբերողի վրա: Առավել վտանգի աղբյուրի տիրապետողը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները, այլապես աղբյուրը նրա տիրապետման տակից դուրս գալը չի կարող դիտվել որպես պատասխանատվությունից ազատման հանգամանք:

Ավտոտրասպորտային և այլ կազմակերպությունները իրենց պատկանող մեքենաները վարձակալության պայմանագրով փոխանցում են աշխատակիցներին, այսինքն՝ այն անձանց, որոնց հետ գտնվում են աշխատանքային հարաբերություններում: Եթե այդ աշխատակիցը /օրինակ՝ վարորդը/ գործում է կազմակերպության շահերից ելնելով և տրանսպորտային միջոցը փաստացիորեն դուրս

²⁸⁵ St'u п. 4 комментария к ст. 1079 <<Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации, части второй /постатейный/ >> Под ред. О.Н. Садикова-М., Юридическая фирма КОНТРАКТ, издательская группа ИНФРА-М-НОРМА, 1996, էջ 678:

²⁸⁶ St'u. **Загорылько А. И** Обязательства по возмещению вреда, Харьков, 1996, էջ 64:

²⁸⁷ St'u **Эмиль Абашиш**, Возмещение вреда, М., Белые Альфы, 2000, էջ 32:

չի գալիս կազմակերպության տիրապետումից, ապա պատճառված վնասի համար պատասխանատվություն է կրում տվյալ կազմակերպությունը՝ որպես առավել վտանգի աղբյուրի սեփականատեր: Քաղ. օր.-ի 1072 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առավել վտանգի աղբյուրի սեփականատերը պատասխանատվություն չի կրում այդ աղբյուրի պատճառված վնասի համար, եթե ապացուցում է, որ աղբյուրը դուրս է եկել իր տիրապետումից այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով: Նման դեպքերում առավել վտանգի աղբյուրի պատճառված վնասի համար պատասխանատվությունը կրում են աղբյուրն ապօրինի տիրապետած անձինք: Ընդհանրացնելով ասվածը՝ կարող ենք նշել, որ շրջապատի համար առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի դեպքում պատասխանատվության առաջացման համար անհրաժեշտ է՝

1. վնասի առաջացումը
2. վնաս պատճառողի գործողությունների հակաիրավականությունը
3. հակաիրավական գործողությունների և առաջացած վնասի միջև պատճառական կապը²⁸⁸:

Անձը, ով իրականացնում է շրջապատի համար վնասակար գործունեություն, պատասխանատվություն է կրում նաև մեղքի բացակայության դեպքում, այդ թվում նաև պատահական վնասի պատճառման դեպքում: Այդպիսի անձի պատասխանատվությունը տարածվում է մինչև անհաղթահարելի ուժի սահմանները: Այդ պատճառով առավել վտանգի աղբյուրով վնասի համար պատասխանատվությունը անվանվում է բարձր վտանգավորություն ունեցող:

Քաղ. օր.-ում ամրագրված չէ այն անձի պատասխանատվության հարցը, ով ստեղծում է վթարային իրավիճակ: Ինչպես նշում են Ի. Մայրանիկը, Մ. Շինինովը և Ն. Մալենինը, մեղավոր հետիոտնը պետք է պատասխանատվություն կրի այն անձի հանդեպ, ով տուժել է վթարի արդյունքում²⁸⁹: Կարծում ենք, որ անհրաժեշտ է քաղ. օր.-ում կատարել համապատասխան լրացում, նախատեսելով՝ հետիոտնի պատասխանատվության հարցը:

Առավել վտանգի աղբյուրների թվին են դասվում նաև կենդանիները: Կենդանին դա սեփականատիրոջ սեփականությունն է և ինչպես յուրաքանչյուր սեփականություն պաշտպանվում է օրենքով: Որպես պատասխանատվության սուբյեկտ հանդես են գալիս կենդանիների սեփականատերերը: Մակայն վերջիններս կարող են ազատվել պատասխանատվությունից, եթե կենդանու հսկողությունը դրվել է այլ անձանց վրա, ինչպես նաև այն դեպքում, երբ կենդանու սեփականատերը ապացուցի, որ կենդանին իր տիրապետության տակից դուրս է եկել ուրիշների ապօրինի գործողությունների հետևանքով:

Գործող քաղաքացիական օրենսդրությունը կենդանիների կողմից պատճառված վնասի հատուցմանը նվիրել է մեկ հոդված: Քաղ. օր. 1071-րդ հոդվածի համաձայն՝ կենդանու պատճառած վնասի հատուցման պարտականությունը կրում է այդ կենդանու սեփականատերը՝ բացառությամբ այլ անձի տիրապետմանը կամ օգտագործմանը կամ խնամքին հանձնված կենդանու կողմից պատճառված վնասի, որի դեպքում վնասի հատուցման պարտականությունը կրում է կեն-

²⁸⁸ Տե՛ս **Տ. Կ. Բաբսեղյան, Գ. Հ. Ղաթախանյան, Ա.Մ. Հայկյանց** ՀՀ Քաղաքացիական իրավունք, Երկրորդ մաս, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2001թ., էջ 14:

²⁸⁹ Տե՛ս **Ա.Մ. Белякова** Имущественная ответственность за причинение вреда.-М.: юрид.лист., 1979. էջ 16:

դանու տիրապետողը կամ օգտագործողը կամ խնամողը, եթե այլ բան նախատեսված չէ կենդանու սեփականատիրոջ և կենդանու օգտագործման, տիրապետման իրավունք ունեցող կամ խնամք իրականացնող անձի միջև կնքված պայմանագրով: Հոդվածի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ կենդանու սեփականատերը անկախ մեղքից պատասխանատվություն է կրում:

Ֆրանսիայի Քաղ. օր. 1385-րդ հոդվածը իր հերթին կարգավորում է կենդանիների կողմից պատճառված վնասի հատուցման հիմնահարցերը: Կենդանու սեփականատերը կամ այն անձը, ով հսկողություն է իրականացնում կենդանու նկատմամբ, պատասխանատվություն է կրում կենդանու կողմից պատճառված վնասի համար, ինչպես այն դեպքում, երբ կենդանին գտնվել է նրա հսկողության տակ, այնպես էլ այն դեպքերում, երբ կենդանին կորել կամ փախել է: Պատասխանատվությունը հիմնվում է կենդանու նկատմամբ վատ հսկողության կանխավարկածի վրա:

Ֆրանսիայի Քաղ. օր.-ի 1385-րդ հոդվածով են պահպանվում բոլոր այն անձանց շահերը, որոնց վնաս է պատճառվել կենդանու գործողությունների հետևանքով:

Ֆրանսիայի դատական պրակտիկան ընդունում է նաև այն անձանց պատասխանատվությունը, ովքեր վերցրել են իրենց վրա կենդանուն հսկելու պարտականությունը /օրինակ՝ անասնաբույժը/²⁹⁰:

ՀՀ քաղ. օր.-ի 1071²-րդ հոդվածում նշվում է կենդանու կողմից պատճառված վնասի համար պատասխանատվությունից ազատող հանգամանք միայն կենդանու՝ այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գալը: Կարծում ենք, պետք օրենքով նախատեսել նաև կենդանու կողմից պատճառված վնասի դեպքում պատասխանատվությունից ազատման հիմքերի շարքում անհաղթահարելի ուժը և տուժողի դիտավորությունը ևս: Կենդանիների կողմից պատճառված վնասը առաջին հայացքից նույնանում է փոքրահասակի կողմից պատճառված վնասի հետ: Երկու դեպքում էլ բացակայում է սեփական գործողությունները գիտակցելու հնարավորությունը, և պատասխանատվությունը պարտավորվում են կրել ծնողները և կենդանիների տերերը՝ որպես վատ հսկողություն իրականացնողների: Սակայն փոքրահասակի կողմից պատճառված վնասի դեպքում ծնողները կամ օրենքով նախատեսված անձինք կարող են ազատվել պատասխանատվությունից, եթե ապացուցեն, որ վնասը առաջացել է ոչ փոքրահասակի մեղքով: Իսկ կենդանու սեփականատերը, այս դեպքում ևս չի կարող ազատել պատասխանատվությունից, եթե անգամ ապացուցի, որ վնասը առաջացել է ոչ իր մեղքով:

ՀՀ քաղ.օր.-ի 1071¹-րդ հոդվածով սահմանվում է, որ անշարժ գույքի օգտագործման, տիրապետման, տնօրինման, շահագործման կամ կառուցապատման ընթացքում այլ անձանց կամ նրանց գույքին պատճառված վնասի հատուցման պատասխանատվությունը կրում է անշարժ գույքի սեփականատերը, եթե չի ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով:

Առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար պատասխանատվությունից ազատող հիմքերը հետևյալ խմբերի են բաժանվում.

²⁹⁰ Տե՛ս **Գ. Քեքմեզյան** Արտապայմագրային պարտավորություններ, 2009թ., էջ 146-147:

1. իրավաբանական փաստեր, որոնք ամբողջովին ազատում են առավել վտանգի աղբյուրի տիրոջը պատասխանատվությունից /անհաղթահարելի ուժ, տուժողի դիտավորություն/

2. իրավաբանական փաստեր, որոնք առավել վտանգի աղբյուրի տիրոջը մասնակիորեն են ազատում պատճառված վնասի հատուցումից /տուժողի կոպիտ անզգուշություն/

Անհաղթահարելի ուժ ասելով հասկանում ենք արտակարգ կամ անկանխատեսելի իրավիճակներ: Անհաղթահարելի ուժը իր բնույթով առանձնահատուկ այն իրադարձությունն է, որը կապված է առավել վտանգի աղբյուրի հետ արտաքինից, անկանխելի՝ այդ պահին հասարակության տեխնիկական և տնտեսական զարգացման տեսանկյունից²⁹¹: Բնական է, որ եթե միևնույն երևույթն այսօրվա պայմաններում անկանխելի է, ապա վաղը գիտության զարգացման հետևանքով հնարավոր կլինի կանխել, ուստի այդ հարցը քննելիս պետք է հաշվի առնել տվյալ ժամանակահատվածի գիտության և մարդկանց կողմից այդ ուժը կանխելու հնարավորությունները: Քաղաքացիական շրջանառության մասնակիցների համար անհաղթահարելի ուժ տերմինը դիտարկվում է որպես որոշակի իրավիճակների անհաղթահարելիություն: Այսինքն, անհաղթահարելի ուժը արտակարգ և անհաղթահարելի իրադարձություն է, որը չի ենթարկվում մարդու ազդեցությանը:

Ֆրանսիական իրավունքն իր հերթին տալիս է անհաղթահարելի ուժի հետևյալ առանձնահատկությունները.

1) այն եղել է վնաս պատճառողի հսկողությունից դուրս, այսինքն՝ վնաս պատճառողը չէր կարող կառավարել այդ ուժը

2) այն անկանխատեսելի է եղել վնաս պատճառողի համար

3) այն եղել է անխուսափելի այն իմաստով, որ վնաս պատճառողը ոչինչ չէր կարող անել խուսափելու համար այդ ուժից²⁹²:

Տուժողի դիտավորություն ասելով հասկանում ենք այն բոլոր գործողությունները, որոնք կատարել է տուժողը, և որոնց նպատակն է եղել վնաս ստանալը /օրինակ՝ երբ տուժողը դիտավորությամբ նետվում է ավտոմեքենայի տակ, որի հետևանքով մահանում կամ վնասվածքներ է ստանում/: Նման դեպքում կարծում ենք, որ առավել վտանգի աղբյուրի տերը պետք է ազատվի տուժողի առջև պատասխանատվություն կրելուց:

Անձը ազատվում է պատասխանատվությունից նաև տուժողի կամ երրորդ անձանց մեղավոր գործողությունների առկայության դեպքում, եթե ապացուցում է, որ այդ գործողությունները իր համար անխուսափելի և անկանխելի էին և ունեին պատահարի կամ անհաղթահարելի ուժի բնույթ: Տուժողի կամ երրորդ անձի գործողություններում մեղավորության հատկանիշները կարևոր են, քանի որ դրանք կանխորոշիչ պայման են և դրանց առկայության դեպքում է հնարավոր, որ առավել վտանգի աղբյուրի տերը ազատվի պատասխանատվությունից:

Պատճառված վնասի համար պատասխանատվությունից ազատող հանգամանք է համարվում նաև տուժողի կոպիտ անզգուշությունը: Քաղ. օր.-ի 1076-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե տուժողի կոպիտ անզգուշությունը

²⁹¹ Տե՛ս *Л.А Майданик, Н.Ю Сепреева*, նշված աշխատությունը, էջ 56:

²⁹² Տե՛ս *Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche* “Tort Law”, Oxford and Portland, Oregon, Hart Publishing, 2000, էջ 331:

նպաստել է վնասի առաջացմանը կամ մեծացմանը, հատուցման չափը պետք է նվազեցվի՝ կախված տուժողի և վնաս պատճառողի մեղքի աստիճանից: Տուժողի կոպիտ անզգուշությունը, վերջինիս անփութ վերաբերմունքն է մոտալուստ վտանգի կամ վտանգի ծագման նկատմամբ: Տուժողի կոպիտ անզգուշությունը կարող է ազատել վնաս պատճառողին հասցված վնասի համար պատասխանատվությունից կամ նվազեցնել հատուցման չափը նույնիսկ առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի դեպքում: Կոպիտ անզգուշության դեպքում տուժողը գիտակցում է իր գործողությունների հնարավոր հետևանքները, բայց և այնպես դիտավորյալ անտեսում է դրանք, չնայած չի ձգտում վնասի առաջացմանը: Այս դեպքում կարծում ենք, պետք է լիովին ազատել վնաս պատճառողին պատասխանատվությունից, բացառությամբ քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման:

Առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի հատուցման չափը կարող նվազեցվել կամ վնասի հատուցումը կարող է մերժվել դատարանի՝ գործի բոլոր հանգամանքները բազմակողմանի ուսումնասիրելու դեպքում: Ա.Մ. Բելյակովան նշում է, որ տուժողի գործողությունները պետք է լինեն հակաօրինական և մեղավոր. միայն այս դեպքում կարող են ազդել պատճառված վնասի չափի վրա²⁹³:

Այս ամենն ընդհանրացնելով նկատում ենք, որ քաղ.օր.-ում կատարված փոփոխությունները նախադրյալներ են ստեղծում կանխարգելելու իրավախախտի կողմից վնասի պատճառումը: Սակայն կարծում ենք, որ այդ փոփոխություններով հանդերձ այն դեռևս կատարելագործման կարիք ունի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք
2. Տ. Կ. Բարսեղյան, Գ. Հ. Ղարախանյան, Ա.Մ. Հայկյան, *ՀՀ Քաղաքացիական իրավունք*, Երկրորդ մաս, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2001թ.,
3. Գ. Բեքմեզյան, *Արտապայմանագրային պարտավորություններ*, 2009թ.,
4. А.М. Белякова, *Имущественная ответственность за причинение вреда*. - М.: юрид.лист., 1979.
5. А.М. Белякова, *Возмещение вреда, причиненного источником повышенной опасности*. М., 1967.
6. А.М. Белякова, *Советское гражданское право*. М., 1980.
7. В.Г. Вердников, *Советское гражданское право*. М., 1987.
8. А. И. Загорылько, *Обязательства по возмещению вреда*, Харьков, 1996.
9. О.А. Красавчиков, *Возмещение вреда, причиненного источником повышенной опасности*. М., 1966.
10. Л.А. Майданик, Сергеева Н.Ю., *Материальная ответственность за повреждение здоровья*. М., 1968.
11. Шиминова М., *Возмещение вреда причиненного здоровью*. М., 1972.

²⁹³ Տե՛ս **А.М. Белякова** Возмещение вреда, причиненного источником повышенной опасности. М., 1967. Էջ 50:

12. п. 4 комментария к ст. 1079 <<Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации, части второй/постатейный/>> Под ред. О.Н. Садикова-М., Юридическая фирма КОНТРАКТ, издательская группа ИНФРА-М-НОРМА, 1996.
13. Е.А.Флейшиц, *Обязательства из причинения вреда и обязательства из неосновательного обогащения*. М., 1951.
14. Эмиль Абашин, *Возмещение вреда*, М., Белые Альвы, 2000.
15. Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche "Tort Law", Oxford and Portland, Oregon, Hart Publishing, 2000.

Ани Зограбян – Понятие о источнике наибольшего риска и компенсация за полученный при этом ущерб. – В данной работе показаны необходимые условия для привлечения ответственности за ущерб, причиненный источником наибольшего риска, а также показаны основы, освобождающие ответственность, классификация источников наибольшего риска и порядок компенсирования за полученный при этом ущерб.

Ani Zohrabyan – The Concept of the Source of the More Danger and the Compensation of the Damage caused by it. – This work represents the necessary conditions for responsibility of damage caused by the source of the mor danger, bases dismissing from the responsibility, the classification of the sources of more danger and the order of damage compensation caused by them. In the scope of this topic foreign experience has been studied.

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆՁԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ՀԻՄՆԱՅԻՆ ԱՐԺԵՔ

ՄԵՐԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ

XX դարի վերջին քառորդը ընդունված է դիտարկել որպես գլոբալ ժողովրդավարացման սկիզբ, որն ընկալվում է որպես ազատական ժողովրդավարական արժեքների համաշխարհային հաղթարշավ: Ավելին, Ս.Հանթինգթոնը արդեն XX դարի 90-ականների վերջին նկատի ունենալով գծային փոփոխությունների ծավալանություն խոստովանեց որ նորանկախացած երկրներում ժողովրդավարական ինստիտուտների գործառույթը ենթադրում է նախ՝ ավանդական և արդիական արժեքների փոխհարաբերություն, ապա մասնակցային ժողովրդավարության առկայություն, ինչպես նաև անձի քաղաքական ազատության գիտակցում²⁹⁴: Պայմանավորված քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման և ժողովրդավարության որակի բարձրացման հիմնականներով մեծացավ հետաքրքրությունը «անձի քաղաքական ազատություն» հասկացության տեսական և կիրառական կողմերի նկատմամբ: Ուստի համակարգելով XX դարի 80-90ական թթ.-ին հետկոմունիստական տարածությունում ընթացող քաղաքական գործընթացները, «երրորդ ալիքի» տեսաբանները ստիպված էին խոստովանել, որ անհրաժեշտ է արմատապես վերանայել «ժողովրդավարության պայմանների» նախկին հայեցակարգերը և քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման նպատակով իրատես գնահատել անձի քաղաքական ազատության ապահովումը: Ժողովրդավարության «երրորդ ալիք»-ի շրջանակներում ինչպես գրում է Ս. Հանթինգթոնը. «...ժողովրդավարության հավակնությունները հիմնվում են ոչ միայն նրա արժանիքների վրա: Բազմաթիվ առանձնահատկություններ կան՝ **նախ**՝ մարդու կյանքում քաղաքական մասնակցության և ազատությունների ներքին կարևորությունը, **երկրորդ**՝ պատասխանատու և համաձայնեցված կառավարում իրականացնելիս քաղաքական շարժառիթների գործիքային նշանակությունը, **երրորդ**՝ ժողովրդավարության կառուցողական դերը արժեքների ձևավորման և կարիքների, իրավունքների ու պարտականությունների գիտակցման հարցում և **վերջապես**՝ քաղաքական ինստիտուտները և քաղաքական կարգը»²⁹⁵: Փաստորեն «երրորդ ալիք» հայեցակարգի շրջանակներում երկակի խնդիր է ծագում. մի կողմից, եվրոպական ազատականության պաշտպանություն և արդիականացում, մյուս կողմից, ժողովրդավարական կառուցվածքի այլ ձևերի նկատմամբ հանդուրժողականության ձևավորում: Ուստի օրինաչափ

²⁹⁴ St' u **Хантингтон С.** Третья волна. Демократизация в конце XX века/Пер. с англ.- М.: Российская политическая энциклопедия (РОССПЭН), 2003;

²⁹⁵ **Хантингтон С.** Политический порядок в меняющихся обществах, М.: Прогресс-Традиция, 2004, с. 29:

հարց է առաջանում՝ արդյո՞ք արևմտյան քաղաքակրթության սահմաններից դուրս ժողովրդավարության տարածության ընդլայնումը անխուսափելիորեն պետք է հարստացնի դրա բովանդակությունը՝ այլ քաղաքակրթությունների հաշվին: Ուշագրավ է այն որ իրեն որպես «Ժողովրդավարության և ազատության անկեղծ ձայնը ամբողջ աշխարհում» ներկայացնող Freedom House-ը ամեն տարի զեկույց է հրատարակում «Freedom in the World» վերտառմամբ՝ գնահատելով երկրում քաղաքական և քաղաքացիական ազատության մակարդակը: Վերջինիս իրավիճակը որոշելու համար օգտագործվում է դեռևս 1973թ.-ից Ռայմոնդ Գաստիլի մշակած էմպիրիկ հետազոտությունների երկակի մեթոդը: Ի սկզբանե տարբերակված ուսումնասիրվեց ազատությունը և ժողովրդավարությունը՝ նախ տարբերություն անցկացվեց ժողովրդավարացման մակարդակի և ազատության ցուցանշի միջև, ապա ազատության ցուցանիշը բացատրվեց ժողովրդավարացման մակարդակի իրական ցուցանիշով²⁹⁶: Ազատության մակարդակի չափման գնահատականը իրականացվում է երկու ցուցիչների միջոցով. **քաղաքական իրավունքներ և քաղաքացիական ազատություններ**: Այդ առումով Freedom House-ն իր 2012թ.-ի «Անցումային երկրներ» զեկույցում որպես աշխատանքի օբյեկտ ընտրեց 29 անցումային պետություններ Կենտրոնական Եվրոպայից մինչև Կենտրոնական Ասիա, ինչպես նաև 10 տարվա կտրվածքով ներկայացվեց ՀՀ-ում ազատականացման մակարդակի ցուցանիշը²⁹⁷: Այս զեկույցում ամփոփելով անցումայի երկրներում 1995-2011թթ.-ին կատարված հարցումների տվյալները Freedom House-ը լայնածավալ ծրագիր իրականացրեց յոթ կատեգորիաների միջոցով՝ **ընտրական գործընթաց, քաղաքացիական հասարակություն, ազատ մամուլ, պետական ժողովրդավարական կառավարում, տեղական ժողովրդավարական կառավարում, դատական համակարգ և ազատություն, կոռուպցիա**²⁹⁸: Վերոնշյալ բոլոր յոթ մակարդակներում էլ ներկայացվեցին այն միջոցները, որոնց օգնությամբ անձի քաղաքական ազատությունը դիտարկվեց ժողովրդավարական համախմբման հիմնային արժեք:

Հետազոտության արդյունքներից ակնհայտ է որ XX դարի վերջին երկու տասնամյակներում սկսած ժողովրդավարացման գործընթացը չի ավարտվել ազատության համար պայքարի պատմության լոկոմոտիվը առաջ է ընթանում: Մարդու ազատասիրական բնույթը թելադրում է նրանց միավորվել, որպեսզի ի գործու լինեն միասնաբար պատասխանելու մարդկության առաջ ծառացած մարտահրավերներին: Այս նախադրյալների հաշվառմամբ Ս.Հանթինգթոնը բազմամակարդակ վերլուծեց XX դարի 70-90-ական թթ.-ի անցումից համախմբում հիմնախնդիրը քաղաքական ազատության հաստատման պատմական և սոցիալական ենթատեքստում²⁹⁹: Հիմնախնդրի բազմակողմանի վերլուծության նպատակով նա առանձնացրեց ժողովրդավարացման «երրորդ ալիքի» ընդհանուր գործընթացին բնորոշ հինգ պայմաններ.

²⁹⁶ *Сморгунов Л. В.*, Современная сравнительная политология, М. 2002, с. 256-257

²⁹⁷ <http://www.freedomhouse.org/report-types/nations-transit>:

²⁹⁸ <http://www.freedomhouse.org/report/freedom-world/freedom-world-2012>;

²⁹⁹ Տե՛ս *Хантингтон С.* Третья волна. Демократизация в конце XX века/Пер. с англ.- М.:Российская политическая энциклопедия (РОССПЭН), 2003; Хантингтон С. Политический порядок в меняющихся обществах. – М.: Прогресс-Традиция, 2004:

1. Մենիշխան վարչակարգերի ապալեգիտիմացումը, այդ վարչակարգերի կախվածությունը հաջող քաղաքականությունից և դրանց անընդունակությունը՝ «գործողության լեգիտիմության» հասնելու տնտեսական (երբեմն նաև ռազմական) անհաջողությունների պատճառով:

2. Աննախադեպ համաշխարհային տնտեսական աճը 60-ական թ.-ին, երբ աճեցին կենսական չափանիշները, կրթությունը և շատ երկրներում զգալի աճեց քաղաքային միջին դասը:

3. Կաթոլիկ եկեղեցու ուսմունքի և գործունեության խորը բեկում, որը արտահայտվեց Վատիկանի երկրորդ ժողովում 1963-1965թթ.-ին, և ազգային կաթոլիկ եկեղեցիների անցումը ստատուս-քվոյի պաշտպանությունից մենիշխանությանը հակազդելուն:

4. Փոփոխությունների արմատականությունը միջազգային թատերաբեմում գործող ուժերի քաղաքականության մեջ:

5. «Ձնագունդը» կամ երրորդ ալիքի առաջին երկրների անցման ցուցադրական ներազդեցությունը ժողովրդավարացման համապատասխան միտումների համար մոդելների խթանման ու ապահովման վրա³⁰⁰:

Բնականաբար, սրանք ժողովրդավարացման ամենաընդհանուր պատճառներն են, որոնց շուրջ հաճախ առանձին երկրներում վեճեր են առաջանում քննարկվող գործոնների համապատասխանության, այս կամ այն պայմանների նշանակալիության, ներքին և արտաքին պատճառների հարաբերակցության վերաբերյալ: Այսօր համեմատական քաղաքագիտությունը նոր հետազոտական մոտեցումներ է որոնում, որոնք էլ զտվում են ժողովրդավարացման երրորդ ալիքի մասին բանավեճերում: Այս կապակցությամբ կարելի է առանձնացնել երրորդ ալիքում ժողովրդավարացման գործոնների հետազոտման հետևյալ հանգուցային հիմնախնդիրները՝ ա) անցումային հասարակությունների ժողովրդավարացման գործընթացը կարող է շարժվել տարբեր հետագծերով, բ) ժողովրդավարական անցման գծային զարգացման գործընթացում գտնվող հասարակություններում ստեղծվել է քաղաքական վարչակարգերի, իշխանության բաշխման և վերարտադրման կառույցների չափազանց լայն տարրապատկեր, ձևավորվել են տարբեր քաղաքական համակարգեր: Այս նկատառումներով ռուս քաղաքագետ Ա. Մելիլը նշում է, «որ տարբերություններն այնքան մեծ ու աննախադեպ են, որ ժամանակակից քաղաքագիտական մտքի առջև ծառանում է քաղաքական փոփոխությունների և քաղաքական զարգացման մասին ձևավորված պատկերացումների հայեցակարգային նորացման խնդիրը՝ հետկոմունիստական կերպափոխումների տարամետ բնույթի հաշվառմամբ»³⁰¹: Ելակետ ընդունելով նշված կարծիքը՝ կփորձենք ուսումնասիրել ժողովրդավարական անցման գործընթացի առանձնահատկությունները, որոնք հանգեցրել են **պատվիրակված, ոչ ազատական, արատավոր, ընտրական, մենիշխան**³⁰² ժողովրդավարություններին: Ավե-

³⁰⁰ St' u *Хантингтон С.* Третья волна. Демократизация в конце XX века/Пер. с англ.- М.:Российская политическая энциклопедия (РОССПЭН), 2003;. 12-13:

³⁰¹ *Мельвил А.Ю.* О траекториях посткоммунистических трансформаций. – Полис, 2004, № 2, с.64.

³⁰² *Саква Р.* Режимная система и гражданское общество в России, Полис, 1997, №1: *О'Доннелл Г.* Делегативная демократия. – *Век XX и мир*, 1994, №2, 3; *Stepan A.* (ed.). Democratizing Brazil. Problems of Transition and Consolidation. N.Y., Oxford, 1989; *O'Donnell G.* Illusions about Consolidation. – *Journal of Democracy*, 1996, vol.7, № 2 *Меркель В., Круассан А.* Формальные и неформальные институты в дефектных демократиях.–*Полис*,2002, № 1, Даймонд Л. Прошла ли «третья волна» демократизации? – *Полис*, 1999, №1:

լին, ընդդիմանալով ավտորիտարիզմի և ժողովրդավարության «սև-սպիտակ» հակադրմանը, Օ'Դոննելը խոսում է աշխարհի քաղաքական քարտեզի վրա «ոչ լրիվ ժողովրդավարությունների» կողմից ձևավորվող «մոխրագույն գոտու» առկայության մասին³⁰³։ Դրա մեջ մտնող երկրները, ըստ Հանթինգթոնի, «ժողովրդավարություն – ոչ ժողովրդավարություն» սանդղակի վրա տեղ են զբաղեցնում «Դանիայի և Չինաստանի միջև ընկած միջակայքում»³⁰⁴։ Ընդունելով «աճականակերտ ժողովրդավարության» փաստը, անցումագետներն այն կարծիքին են, որ հետխորհրդային տարածքի ժողովրդավարական անցման **գծային, վեկտորային** պատկերացումը վերանայման կարիք ունի։

Ժողովրդավարացման «երրորդ ալիքը» մեկնարկվել է 1974-ին կեսերին, որի արդյունքում տապալվեցին ռազմական բռնապետությունները Պորտուգալիայում, Բալանիայում և Հունաստանում։ Դրանց օրինակով էլ այն տարածվեց դեպի Լատինական Ամերիկա, հասավ Հարավարևելյան Ասիայի որոշ երկրներ և, վերջապես, ԽՍՀՄ-ում վերակառուցման փորձերի ազդեցության տակ, ընդգրկեց Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրները և ողջ հետխորհրդային տարածքը։ Տեսաբաններն ակնկալում էին, որ, ի տարբերություն առաջին երկու «ալիքների» (1828-1926թթ. և 1943-1964թթ.), որոնք ավարտվում էին դիկտատուրաների և ավտոկրատիաների քաղաքական տարածության մասնակի վերականգնմամբ, «երրորդ ալիքը» կարող է խուսափել «հետընթացից»³⁰⁵։ Նույնիսկ ի հայտ եկան կանխատեսումներ մոտեցող «չորրորդ ալիքի» վերաբերյալ, որն ընդգրկելով Չինաստանում, իսլամական աշխարհում, արաբական և սև Աֆրիկայում պահպանված ավտոկրատական անկլավները³⁰⁶, կապահովի ազատական ժողովրդավարության արժեքների բացարձակ հաղթարշավն աշխարհում։ Որպես վեկտորային գործընթաց այն մեկնաբանվում էր **ժողովրդավարացման փուլերի** հարացույցի ներքո, որի համաձայն՝ բոլոր երկրների անցումից համախմբումն ունի մոդելային զարգացման հետևյալ փուլերը. **ավտորիտարիզմի քայքայում և փլուզում, վարչակարգային ազատականացում, ինստիտուցիոնալ ժողովրդավարացում, ոչ համախմբված ժողովրդավարության փուլ և, վերջապես, ժողովրդավարական համախմբում**։

Համաձայն Խ.Լինցի և Ա.Ստեփանի հայեցակարգի՝ ժողովրդավարական համախմբումը ենթադրում է հիմնարար վերափոխումների անցկացում առնչված երեք մակարդակներում՝ **վարքաբանական, արժեքային և սահմանադրական**։ Նրանց կարծիքով՝ դրան հասնելու մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ՝ 1) հասարակությունում չեն գործում որևէ ազդեցիկ քաղաքական խմբեր, որոնք ձգտում են խարխլել ժողովրդավարական վարչակարգը կամ հետնահանջ իրականացնել։ 2) ժողովրդավարական ընթացակարգերն ու ինստիտուտները հասարակության կողմից ընդունվում են որպես սոցիալական կյանքի կարգավորման առավել ընդունելի մեխանիզմներ և 3) քաղաքական դերակատարներն օրնտելանում են օրվոր հասարակական բախումների՝ նոր ժողովրդավարական գործընթացի վավերացրած օրենքներին, ընթացակարգերին ու ինստիտուտներին համապատասխան կարգավորմանը³⁰⁷։ Զարգացնելով փաս-

³⁰³ O'Donell G., Delegative Democracy Journal of Democracy, Volume 5, N. 1, January 1994, pp. 55-69

³⁰⁴ Huntington S.P. Democracy for a Long Haul. – Journal of Democracy, 1996, vol.7, №2, p. 10:

³⁰⁵ Даймонд Л. Прошла ли третья волна демократизации? – Полис, 1999, №1:

³⁰⁶ St' u Diamond L. Developing Democracy Toward Consolidation. Baltimore, L., 1999:

³⁰⁷ St' u Linz J., Stepan A. Toward Consolidated Democracies // Journal of Democracy. 1996. Vol. 7. № 2.

տարկման այս գիծը՝ Վ.Մերկելը նկարագրած մոդելին ավելացնում է ևս մի մակարդակ՝ **քաղաքական ներկայացուցչություն**, այսինքն՝ ինտեգրված կուսակցական համակարգի և փոխգործակցող շահային խմբերի առկայություն և ընդգծում է արտաքին գործոնների՝ միջազգային միջավայրի, միջազգային տնտեսական հարաբերությունների, տարածաշրջանային ինտեգրման դերը³⁰⁸։ Կարծում ենք որ նման հարցադրմամբ անցումագետները փորձում են պարզեցված ձևով մեկնաբանել «անցման հարացույցն»։ Համաձայն Տ.Կարոզերսի, դրա հիմքում ընկած են հետևյալ դրույթները. 1) դիկտատորական կառավարումը թոթափած երկիրը դեպի ժողովրդավարություն է շարժվում. 2) ժողովրդավարացումը ենթադրում է նոր վարչակարգի համախմբմանը տանող հաջորդական փուլերի ամբողջություն. 3) ժողովրդավարական անցման առանցքային տարրն ընտրություններն են. 4) «կառուցվածքային» բնորոշիչները (տնտեսական զարգացման մակարդակ, քաղաքական պատմություն, ժառանգված ինստիտուտներ, էթնիկ կազմ, սոցիալ-մշակութային ավանդույթներ և այլն) ավելի քիչ են ազդում անցման ելքին, քան «ընթացակարգայինները», այսինքն՝ քաղաքական դերակատարների գործողությունները. 5) ժողովրդավարացումն իրականացվում է գործունակ պետությունների շրջանակներում³⁰⁹։ Ընդունելով, որ «անցումային երկրների» մեծ մասը ո՛չ բացահայտ դիկտատորական են, ո՛չ էլ անվերապահորեն շարժվում են դեպի ժողովրդավարություն (նրանք մտել են «քաղաքական մոխրագույն գոտի»), Տ. Կարոզերսը նշում է, որ դրանք «ունեն քաղաքական կյանքի ժողովրդավարացմանը բնորոշ հատկանիշներ, ներառյալ առնվազն ընդդիմադիր քաղաքական կուսակցությունների և անկախ քաղաքացիական հասարակության համար սահմանափակ քաղաքական տարածության առկայությունը, ինչպես նաև կանոնավոր ընտրություններն ու ժողովրդավարական սահմանադրությունները։ Բայց դրա հետ մեկտեղ նրանց համար բնորոշ են քաղաքացիների շահերի թույլ ներկայացուցչությունը, քվեարկության սահմաններից չանցնող քաղաքական մասնակցության ցածր մակարդակը, պետության պաշտոնատար անձանց կողմից օրենքների հաճախ խախտումները, ընտրությունների կասկածելի լեգիտիմությունը, պետական ինստիտուտների նկատմամբ հասարակության վստահության գրեթե լիովին բացակայությունը և պետության կայուն ցածր ինստիտուցիոնալ արդյունավետությունը»³¹⁰։ Հաջող ժողովրդավարացումը ենթադրում է ոչ թե հակամարտող քաղաքական ուժերից մեկի հաղթանակ, այլ յուրօրինակ **պակտ** (Մոնկլոյի պակտի տիպի՝ Իսպանիայում³¹¹) կամ պակտերի շարքի ձևակերպում, որոնք սահմանում են ժողովրդավարացման հետագա փուլերի «խաղի կանոնները» և որոշակի երաշխիքներ տրամադրում համախմբման կողմնակիցներին։ Պակտի լեգիտիմացումը և դրա հետագա զարգացումը հնարավոր անհրաժեշտ հիմքեր են մշակում անձի քաղաքական ազատության ժողովրդավարական ընթացակարգերի ինստիտուցիոնալացման և քաղաքական իշխանության լեգալ ու լեգիտիմ **ժողովրդավարական համախմբման** համար։ Ժողովրդավարական համախմբման հաջողության դեպքում նոր քաղաքական իրողությունն ամրագրվում է նախորդ քաղաքական և այլ ավանդույթների հետ՝ ամեն երկրի համար յուրահատուկ համաձուլվածքում։

³⁰⁸ Տե՛ս **Меркель В. Круассан А.** Формальные и неформальные институты в дефектных демократиях. *Полис*, 2002, № 1, с. 6-7:

³⁰⁹ Տե՛ս **Карозерс Т.** Конец парадигмы транзита, *Политическая наука*, 2003, №2, с. 44:

³¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 48-49:

³¹¹ www.waylion.ru/html/m/monkloa-pakt.html:

Բնականաբար, հարց է առաջանում՝ որքանո՞վ է արդյունավետ վերը նկարագրված մոդելի կիրառումը հետևումունիստական տարածքի կերպափոխությունների համար: Սակայն ինչպես ցույց է տալիս Մ.Մաքֆոլի կատարած վերլուծությունը, հետխորհրդային կերպափոխությունների դեպքում չեն գործում անցումագիտական պայմանական մոդելի առնվազն երկու հիմնական դրույթները՝ 1) պատկերացումն այն մասին, որ պահպանողական և բարեփոխական ուժերի մոտավոր հավասարակշռության հետևանքով առաջացող քաղաքական փակուղուց ելք է հաջող ժողովրդավարացման համար հիմքեր ստեղծող պակտը, և 2) ընտրանիների փոխզիջման արդյունքում «վերևից» ժողովրդավարության փաթեթման գաղափարը: Ինչպես նշում է Մաքֆոլը, «հետխորհրդային երկրների համար առավել բնորոշ է ոչ թե պակտի, այլ **հակասության ուժային լուծման** տարբերակը, ընդ որում առաջացող վարչակարգի տեսակը մեծապես որոշվում է նրանով, թե որտեղից է գալիս քաղաքական վերափոխումների ազդակը: Եթե քաղաքական հակամարտությունում գերակշռություն են ստանում «ներքևից» աջակցությանը հենվող և ավանդական վերնախավից «դուրս» գործող արմատական բարեփոխիչները, ապա հեռանկարներ են բացվում իրական ժողովրդավարացման համար: Եթե ուժը **հին վարչակարգի** «դիմակավորված» ներկայացուցիչների կողմն է, որոնք վերևից խաղի նոր կանոններ են փաթաթում, արդյունքում ավտորիտար վարչակարգի նոր տարբերակ է հաստատվում: Վերջապես, եթե հաղթողը որոշվում է միայն ուժերի հավասարակշռության բավականին երկար ժամանակաշրջանից հետո, առաջանում են «խառնածին» վարչակարգերի այս կամ այն տարատեսակներ («կիսաժողովրդավարություններ-կիսադիկտատուրաներ»)³¹²: Անցումային երկրների փորձը վկայում է վերջին երեք տասնամյակների քաղաքական կերպափոխությունների հետագծերի ամբողջությունը ինչ-որ մի համապարփակ «անցումագիտական հարացույցի» մեջ դասավորելու փորձերի անհամապատասխանությունը: Վերջին տարիների հաջող և անհաջող անցումների իրական բազմազանության մեջ առկա էին և՛ անցումներ ազատականացումից դեպի պակտ, և՛ առաջխաղացում դեպի ժողովրդավարական համախմբում, և՛ ընտրանու կողմից իրականացվող շարունակական բարեփոխումներ (հեղափոխություն վերևից), և՛ ժողովրդավարացման փաթեթման (ներմուծման) դեպքեր, և՛ դիկտատուրայի դեմ զանգվածային ընդվզումներ (հեղափոխություն ներքևից): Ակնհայտ է որ գործ ունենք իրենց էությամբ ոչ միայն տարաբնույթ գործընթացների, այլև քաղաքական ազատության արդյունքների լայն տարրապատկերի հետ՝ լիովին կայացած նոր ավտորիտարիզմից մինչև ժողովրդավարական համախմբում: Այս ամենը, կարևորվելով արդի անցումագիտության կողմից, հիմք է դարձել մի նոր գիտաճյուղի՝ համախմբագիտության (կոնսոլիդոլոգիայի) առաջացման համար³¹³: Այս նոր գիտաճյուղի շրջանակներում ձևավորվել է զարգացման նոր հարացույց, որը թույլ է տալիս արդի աշխարհում «ժողովրդավարացման» հովանի ներքո ընթացող քաղաքական կերպափոխություններից ստացած արդյունքը կառավարել՝ անձի քաղաքական ազատության և ազգային արժեքների քաղաքական էության պահպանման միջոցով: Ուստի անցումագիտության և համախմբագիտության իմացական և ճանաչողական ներուժը իրական քաղա-

³¹² McFall M. The Forth Wave of Democracy and Dictatorship. Noncooperative Transitions in the Postcommunist World. – *World Politics*, 2002, January.

³¹³ Ст'ю Шмиттер Ф. Процесс демократического транзита и консолидации демократии. Полис 1999. №3:

քական կերպափոխությունների բազմազանությունում ընդհանուրի և հատուկի հայտնաբերման միջոցով արդյունքի, կարիքի, ժամանակի, սթրեսի կառավարման մեջ է: Այս առումով տեղին է հիշատակել Լ.Դայմոնդի հետևյալ մոտեցումը՝ «ժողովրդավարությունը ենթադրում է ավելին, քան պարզապես ընտրություններ, նույնիսկ եթե դրանք կանոնավոր, ազատ և ազնիվ են: Այն ենթադրում է, որ չկան ընտրագանգվածի առջև պատասխանատվություն չկրող զինվորական կամ այլ սոցիալական ու քաղաքական ուժերի համար իշխանության «արգելոցային տարածություններ», որ պաշտոնատար անձանց «հորիզոնական» պատասխանատվություն գոյություն ունի միմյանց նկատմամբ, որը սահմանափակում է գործադիր կառույցների իշխանությունը և պաշտպանում սահմանադրականությունը, օրենքի գերակայությունն ու խորհրդակցական ընթացակարգերը: Վերջապես, այն ենթադրում է պայմանների առկայություն՝ քաղաքական և քաղաքացիական հոգնականության, ինչպես նաև անհատական ու խմբային ազատությունների ապահովման համար. որպեսզի մրցակցող շահերը և արժեքները կարողանան արտահայտում գտնել և մրցակցել ոչ միայն պարբերական ընտրությունների ժամանակ... Այս ամենը դուրս է բերում ավելի բարձր չափանիշների և ավելի բարձր երևույթի, որը կարող է սահմանվել որպես «քաղաքական ազատություն»՝ ոչ թե պետության և տնտեսության միջև փոխհարաբերությունների, այլ անձի քաղաքական և քաղաքացիական ազատության որակի առումով»³¹⁴: «Երրորդ ալիքի» ժողովրդավարական անցումների փորձը ցույց է տալիս, որ ժողովրդավարության ձևական հռչակումը, այսինքն ինստիտուտների և «ընտրական ժողովրդավարության» ընթացակարգերի հաստատումը չի կանխորոշում կերպափոխվող գործընթացների ընդհանուր ելքը: Պաշտոնական ընտրական ընթացակարգերը հաճախ ոչ թե «ընտրական ժողովրդավարության»՝ որպես ժողովրդավարական համախմբման ճանապարհի միջանկյալ փուլի հիմնական բաղադրիչ են, ինչի մասին այդքան սիրում են խոսել «գլոբալ գերժողովրդավարացման» ջատագովները»³¹⁵, այլ բոլորովին ուրիշ քաղաքական երևույթ՝ **անցում ոչ ժողովրդավարական վարչակարգի մի տարատեսակից մյուսին**:

Վերոշարադրյալը թույլ է եզրակացնել ժողովրդավարացման «երրորդ ալիքի» շրջանակներում գործ ունենք քաղաքական իրականության հետավտորիտար զարգացման հետագծերի բավականին լայն տարրապատկերի հետ է. ներառյալ անցումները ոչ ժողովրդավարական վարչակարգերի մի տեսակներից մյուսներին, ինչպես նաև «խառնածինների» և «մուտանտների» առաջացում, որոնք ոչ մի ընդհանրություն չունեն ժողովրդավարության որակի հետ: Հենց այդ պատճառով ինչպես նշում է Հ.Բալզերը դրանք օհայեցակարգային խառնաշփոթ են առաջացնում... քանզի ենթադրում են, որ համապատասխան վարչակարգերը բնաշրջվում են կամ ժողովրդավարության կամ ավտորիտարիզմի ուղղությամբ»³¹⁶: Այսպիսի մեկնաբանություններում ակնհայտ է այն, որ շատ հաճախ (հատկապես հետխորհրդային տարածքում) արտաքնապես ժողովրդավարական ինստիտուտները և ընթացակարգերն օգտագործվում են որպես քրոջ, որի հետևում թաքցված են իշխանության էլիտար-օլիգարխիկ բաշխման և վերարտադ-

³¹⁴ **Diamond L.** The End of the Third Wave and the Start of the Forth. – Plattner M., Espada J. (eds.) *The Democratic Invention*. Baltimore, L, 2000, p. 16-17:

³¹⁵ См. у **Хелд Д. и др.** Глобальные трансформации: Политика, экономика, культура / Пер. с англ. В.В. Сапова и др. – М.: Праксис, 2004, с. 11:

³¹⁶ **Balzer H.** Managed Pluralism: Vladimir Putin's Emerging Regime. *Post-Soviet Affairs*, 2003, vol.9. №3. p.190:

րության այս կամ այն ձևերը, ընդ որում՝ քաղաքական և տնտեսական իշխանության համակեցության գերակայությամբ:

□Ժամանակակից աշխարհին բնորոշ, ժողովրդավարական ձևի և բովանդակության միջև խզումը մեծապես ինստիտուցիոնալ է: Իհարկե, ոչ մի քաղաքական համակարգ իր պաշտոնական ինստիտուցիոնալ կանոնակարգին խիստ համապատասխան չի գործառնում, բայց Լատինական Ամերիկայում, Ասիայում, Աֆրիկայում և հետկոմունիստական երկրներում ժողովրդավարությունների մեծամասնության յուրահատկությունը կայանում է նրանում, որ քաղաքական ինստիտուտներն այնտեղ չափազանց թույլ են՝ տարբեր շահերի ներկայացուցչությունը, սահմանադրությունների գերակայությունը, օրենքի իշխանությունը և գործադիր իշխանության սահմանափակումն ապահովելու համար³¹⁷: Ինստիտուցիոնալ և սահմանադրական դիզայնի թերությունները, թույլ և կիսակառույց քաղաքական ինստիտուտները ներհատուկ են ոչ միայն հետխորհրդային երկրներին, այլև ընդհանրապես օնոր ժողովրդավարություններին: Մակայն հիմնախնդիրն, ըստ մեզ, ավելի խորն է և դուրս է գուտ ինստիտուցիոնալ ոլորտի շրջանակներից: Քաղաքական ինստիտուտները, նույնիսկ եթե դրանք կառուցված են լավագույն ժողովրդավարական սխեմայով, դեռ ժողովրդավարության հաջողությունը չեն երաշխավորում: Կայուն և համախմբված ժողովրդավարությունը ոչ միայն ինստիտուցիոնալ հիմք ունի. ընթացակարգերից բացի, այն պետք է հենվի որոշակի *կառուցվածքային հիմքի* վրա, իրեն ամրապնդող սոցիալ-տնտեսական համակարգի և հասարակությունում արմատավորված՝ ժողովրդավարական քաղաքացիականության նորմերի և արժեքների, այսինքն յուրատեսակ օսոցիալական կապիտալի[□] վրա: Ժողովրդավարության պատմական ձևերը առանձին տարրերից չեն կազմվում, այլ օրգանապես օաճում[□] են բազմադարյա պատմական զարգացման գործընթացում: Սոցիալ-տնտեսական և մշակութաարժեքային *անկատար, չամրապնդված* հիմքի վրա օնոր ժողովրդավարների[□] ահռելի ջանքերով կառուցվող ժողովրդավարական ինստիտուտները կարող են չարդարացնել սպասումները՝ չհանգեցնել լավ կառավարման:

Երկարաձգված ժողովրդավարական անցման վեկտորային տրամաբանությունը խոցելի է ևս մի առումով: Այդ տրամաբանության համաձայն, ժողովրդավարների հիմնական նպատակը այն է, որ չնայած բոլոր խոչընդոտներին, այս կամ այն եղանակներով, մինչև վերջ հասցնել ժողովրդավարական կերպափոխումները, ուժեղացնել ճնշումը օանցումային[□] վարչակարգի նկատմամբ և այլն: Մակայն եթե ընդունենք, որ ժողովրդավարացման գործընթացները վեկտորային չեն և դրանց զարգացման համար *օհնարավորությունների պատուհանները*[□] առաջանում են որոշակի պայմաններում, գոյություն ունեն ինչ-որ ժամանակի ընթացքում, այնուհետև, ողջ ծավալով պահանջված չլինելով, կրկին *փակվում են*, ընդ որում, անհայտ ժամկետով, ապա այդ կարգի ջանքերն ապարդյուն են: Փորձը ցույց է տալիս՝ ժողովրդավարական համախմբման հնարավորությունները պարտադիր չէ, որ հնարավորինս երկար պահպանվեն, և որոշակի պահից սկսած՝ ընտրանու դիմադրության փակուղային իրավիճակը կարող է վերածվել կայուն հավասարակշռության՝ միաժամանակ դադարելով լինել ժողովրդավարությանը աջակցող գործոն: Նման մոտեցումը կարող է հանգեցնել չհամախմբված ժողովրդավարությունների [□]դանդաղ մահի[□], ինչը կարագանա, եթե չավարտված ժողովրդավարական անցման ժամանակահատվածը, գերազանցելով

³¹⁷ *Даймонд Л.* Прошла ли «третья волна» демократизации? – *Полис*, 1999, №1, с. 34:

որոշակի ժամանակային սահմանը, չնպաստի իրական համախմբման հաստատմանը:

Բնականաբար, դա չի նշանակում, որ իրենց օանցման օ մեջ օուշացած օ վարչակարգերի ժողովրդավարացումը տեսականորեն բացառված է: Պարզապես զարգացման այդպիսի հետագծի իրականացման համար նրանցից կպահանջվի շատ ավելի մեծ ժամանակ ու ջանքեր գործադրել ոչ արդյունավետ կառավարման թերացումները հաղթահարելու համար: Տվյալ իրավիճակում հետագա ժողովրդավարացման հետանկարը սկսում է որոշվել **գոյություն ունեցող վարչակարգի շրջանակներից** դուրս եկող գործոններով և հանգամանքներով:

Այլ խոսքով, ժամանակակից քաղաքական կերպափոխությունները, որպես ավտորիտար վարչակարգից համախմբված ժողովրդավարություն մեկնաբանող օանցումագիտական պարադիգմայի օ, հիմնարար տեսամեթոդաբանական դրույթը լուրջ վերախմաստավորում է պահանջում՝ հոգուտ համախմբագիտության պարադիգմայի: Այն փաստը, որ օանցումը օ հաճախ նշանակում է ոչ թե օվեկտորային օ անցում դեպի ազատական ժողովրդավարություն, այլ ոչ ժողովրդավարական վարչակարգերի մի տեսակի կերպափոխություն մեկ ուրիշ տարատեսակի ոչ ժողովրդավարական վարչակարգերին, ոչ միայն խոցելի է դարձնում վեկտորային տրամաբանությունը, այլև հայ քաղաքագետների առջև բարդագույն խնդիր է դնում մշակել **վարչակարգային փոփոխությունների նոր հայեցակարգային շրջանակ և ժամանակակից քաղաքական վարչակարգերի նոր մանրամասնված ու տարանջատված տիպաբանություն:**

Վերադառնալով վարչակարգային օխառնածինների օ և օածականներով ժողովրդավարությունների օ հարցին, անհրաժեշտ է նշել, որ խնդիրն այստեղ ոչ թե **որոշիչ** բնութագրերում և հատկանիշներում է (օկառավարվող օ, օպատվիրակվող օ, օընտրական օ, օավտորիտար օ), այլ հենց օժողովրդավարություն օ հասկացությունում: Իսկապես, եթե դեպքերի մեծ մասում մենք գործ ունենք ոչ թե անցումային, այլ արդեն միանգամայն կայացած, համախմբված (թեև ոչ բավականաչափ ինստիտուցիոնալացված) **ոչ** ժողովրդավարական (գոնե դասական ընկալմամբ) վարչակարգերի հետ, ապա դրանք պետք է հայեցակարգային հիմքի վրա դնել, այլ **ոչ** ժողովրդավարական գաղափարական շրջանակներում: Այստեղից հետևում է, որ վերլուծության կիզակենտրոնում պետք է լինեն ոչ թե օժողովրդավարության օ այս կամ այն օածականները օ, այլ հենց ինքը՝ առարկան: Իսկ եթե այդպես է, ապա քաղաքական համեմատականության կարևորագույն խնդիրն է դառնում **ժամանակակից ոչ ժողովրդավարությունների տիպաբանացումը** և դրանց հետագա ժողովրդավարացման օրինաչափությունների ուսումնասիրությունը:

Որոշակի քայլեր այդ ուղղությամբ արդեն արվում են: Ժամանակակից քաղաքական վարչակարգերի հայտնի դասակարգումներից մեկը ներկայացրել է «Freedom House» կազմակերպությունը, որն ըստ քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների պաշտպանության չափանիշի զբաղվում է աշխարհի երկրների դասակարգմամբ: «Freedom House»-ի 2003թ. զեկույցից սկսած հետևյալ տարիներից երկրները բաժանվեցին երեք խմբի՝ **«համախմբված ժողովրդավարություններ»** (Լեհաստան, Սլովենիա, Լիտվա, Էստոնիա, Հունգարիա, Լատվիա, Սլովակիա, Չեխիա, Բուլղարիա, Խորվաթիա), **«անցումային վարչակարգեր»** (Ռումինիա, Հարավսլավիա, Ալբանիա, Մակեդոնիա, Մոլդովա, Վրաստան, Հայաստան, Բոսնիա, Ուկրաինա, Ռուսաստան, Դրոգոստան, Ադրբեջան, Տաջիկստան, Ղազախստան) և **«համախմբված ավտորիտարներ»** (Ուգ-

բեկստան, Բելոռուսիա, Թուրքմենստան)³¹⁸: Ու թեև «Freedom House» դասակարգումը յուրաքանչյուր վարչակարգային տիպում որոշակի քանակական տարանջատում է նախատեսում՝ յուրաքանչյուր երկրի գնահատումը տրվում է մեկից («առավելագույն ազատություն») յոթը («նվազագույն ազատություն»), **այնուամենայնիվ այն թույլ չի տալիս բացահայտել «անցումային վարչակարգերի» բազում տարատեսակների որակական բնութագրերը: Ավելին, նրանում հաղթահարված չէ «անցումայնություն» հասկացության լայն և չտարանջատված գործածման միտումը**, որն օգտագործվում է նաև միանգամայն համախմբված **ոչ** ժողովրդավարությունների նկատմամբ:

Բանավիճելով «Freedom House»-ի եռանդամ տիպաբանության հետ, Լ.Դայմոնը ավելի տարանջատված դասակարգում է առաջարկում. **«ազատական ժողովրդավարություններ»** (Չեխիա, Հունգարիա, Լեհաստան, Սլովակիա, Սլովենիա, Էստոնիա, Լիտվա, Լատվիա, Բուլղարիա, Խորվաթիա, Ռումինիա), **«ընտրական ժողովրդավարություններ»** (Մոլդովա, Հարավսլավիա, Ալբանիա), **«երկատված վարչակարգեր»** (Հայաստան, Վրաստան, Ուկրաինա, Մակեդոնիա), **«մրցակցային ավտորիտարիզմ»** (Բոսնիա-Հերցեգովինա, Ռուսաստան, Բելոռուսիա), **«գերիշխանական ընտրական ավտորիտարիզմ»** (Ադրբեջան, Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան, Ուզբեկստան), **«քաղաքականապես փակ ավտորիտարիզմ»** (Թուրքմենստան)³¹⁹:

Հանրագումարենք, անցումային հասարակություններում կերպափոխման գործընթացում հաստատված «ածականակերտ» ժողովրդավարությունների առկայությունը վկայում է, որ անձի քաղաքական ազատության գործառնման համար անցումագիտության տեսամեթոդաբանական զինանոցում մշակված չէ գործունեության հստակ **համակարգը**: Կարծում ենք, որ այդ համակարգը իր **բազմաչափ չափորոշիչներով** թույլ կտա արդյունավետ ուսումնասիրել անցումից համախմբում հարացույցների կերպափոխման գործընթացը: Այդ առումով հայեցակարգային նշանակություն ունենան հետևյալ չափումները՝

- արտաքին միջավայրի դերը ներքին կերպափոխություններին վրա ներազդելու գործում,
- քաղաքական կերպափոխությունների մեկնարկման գործընթացում հասարակության կենսաձևը, կենսամակարդակը և կյանքի որակը,
- իշխանության ոչ ժողովրդավարական կառույցների խարխլման և փլուզման գործընթացը,
- քաղաքական և տնտեսական ընտրանու հավաքագրման և ընտրասերման սկզբունքները,
- նոր ժողովրդավարական ինստիտուտների կառուցման, հաստատման, բնականոն արդիականացման ուղղությունները,
- քաղաքական դերակատարների ռազմավարությունն ու մարտավարությունը՝ անհատական-հոգեբանական, ընտրյալությանը հակված լինելու հատկանիշների, ազգային մտահայեցողության առանձնահատկությունների հաշվառմամբ:

Բնականաբար, նշված չափումները ամբողջական չեն և կարող են լրացվել հասարակությունների ժողովրդավարական գործընթացների **ուղղության, ըն-**

³¹⁸ Freedom House. Report Karatnycky A., Motyl A., Schnetzer a. (eds.), . Nations in Transit. Civil Society, Democracy and Markets in East Central Europe and the Newly Independent States, New Brunswick, 2003:

³¹⁹ St' u **Diamond L.** The End of the Third Wave and the Start of the Forth. – Plattner M., Espada J. (eds.) *The Democratic Invention*. Baltimore, L, 2000:

քացքի և արդյունքների վրա ազդելու ընդունակ այլ չափորոշիչներով: Այնուամենայնիվ, անձի քաղաքական ազատությունը որպես ժողովրդավարական համախմբման պայման ՀՀ-ում ուսումնասիրելիս այսօր բախվում ենք չափազանց բարդ տեսամեթոդաբանական խնդրի: Այժմ արդեն լիովին պարզ է, որ հետխորհրդային տարածքի ժողովրդավարական անցման գործընթացում գտնվող հասարակությունների համար գոյություն ունեն քաղաքական զարգացման բազմաթիվ չափումներ: Այդ հետազոծերից յուրաքանչյուրի հետևում կանգնած են յուրահատուկ քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութաքաղաքակրթական, աշխարհաքաղաքական արժեքներ, որոնցից յուրաքանչյուրն որոշիչ նշանակություն ունի անձի քաղաքական ազատության համար:

Мери Маргарян – Политическая свобода личности как основная ценность демократического сплочения. – Исследуя глобальные демократические преобразования, произошедшие в конце XX века, автор приходит к выводу, что векторное изменение неэффективно. В связи с этим обусловленные обеспечением эффективности демократического перехода необходимо обеспечить традиционное и современное взаимоотношение ценностей, утверждая причастную демократию. В этом смысле усилился интерес к теоретической и прикладной сторонам понятия "политическая свобода личности". Поэтому, систематизируя политические процессы происходящие на посткоммунистическом пространстве в 80-90-ие г. XX в., обозреватели "третьей волны" вынуждены были признать, что необходимо коренным образом пересмотреть прежние взгляды "условий демократии" и реально оценить обеспечение политической свободы личности с целью обеспечения преодоления кризиса политического развития.

Автор обосновывает следующий подход тем, что обеспечение политической свободы личности предполагает демократические сплочение на поведенческом, ценностном и конституционном уровнях.

Опорные слова: политическая свобода личности, либерализм, демократический переход, метаморфозы, политический режим.

Meri Margaryan – The political freedom of a person as a fundamental value of democratic unification. – The study of the global democratization processes, which took place at the end of the XX century, make the author think that vectorial change is not efficient. Consequently, in order to have efficiency of democratic transition it is necessary to provide with the interrelation of traditional and contemporary values, thus affirming participatory democracy.

In this sense, an interest has increased towards the theoretical and applied sides of the notion "political freedom of a person". Consequently, coordinating the political processes in the post-communist area in 1980-1990, the theoreticians of the "third wave" had to admit that it is necessary to radically review the former concepts and realistically regard the provision of a person's political freedom in order to overcome the crisis of political development.

The author justifies an approach that the provision of a person's political freedom supposes democratical unification in constitutional, behavioral and value levels.

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ «ԹՈՒՂԹ ԱՌ ՎՐԱՅԻՄ»
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՅԼԱՐԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՍ
ՊԱՅՔԱՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ ԵԼԱԿԵՏ

ԳՐԻԳՈՐ ԱԲԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մխիթար Գոշը (1130 – 1216) ավելի շատ մեր հանրության մեջ հայտնի է որպես օրենսգետ, օրենսգիր և առակագիր: Մակայն նա անուրանալի ավանդ ունի այլադավանության դեմ պայքարի անհրաժեշտության գաղափարական հինավորման տեսանկյունից ևս և նրա հիմնավորումները ցայսօր չեն կորցրել իրենց արդիականությունը՝ հանդիսանալով այլադավանությունը մերժող կարևորագույն կովան:

Դեռևս իր «Դատաստանագրքում»³²⁰ Մխիթար Գոշն ինքնատիպ տեսակետներ է զարգացնում պետական կառավարաման համակարգում եկեղեցու ունեցած դերակատարության մասին: **Հանդես գալով որպես միապետական կառավարման տիպի պետության կողմնակից, նա փաստորեն փորձում է այդ պետության ամրապնդման հիմքում տեսնել քրիստոնեական գաղափարախոսությունը, թերևս մարդկության պատմության մեջ առաջինը լինելով, հիմնավորելով թեոկրատական այնպիսի պետության ստեղծման անհրաժեշտությունը, որի տեսական հիմքերը պետք է կազմեին քրիստոնեական վարդապետության գաղափարական դրույթները:** Նման պետության ստեղծումը նորություն էր այն տեսանկյունից, որ հատուկ էր հեթանոսական ժամանակաշրջանին կամ իսլամիստական պետություններին, որոնք ցայսօր էլ գոյություն ունեն: Այսինքն, Գոշը կողմնակից էր միապետական պետականության մեջ եկեղեցու և նրա հոգևոր առաջնորդի դերակատարության բարձրացմանը, որն անհրաժեշտ էր այն առումով, որ դավանաբանական ուղղվածությունները ծառայեցվելու էին պետության ամրապնդմանը: Թագավորն իր գործունեությունը պետք է համաձայնեցներ կաթողիկոսի հետ: Այս դեպքում քրիստոնեական եկեղեցին դառնում էր քաղաքական մարմին, հավասարկշռում էր հոգևոր և քաղաքական իշխանությունները: Համամարդկային կրոնից այն դառնում էր ազգային՝ իր գաղափարներով նպաստելով պետության ամրապնդմանը՝ հոգևոր առաջնորդի միջոցով: **Այլ խոսքով սա նշանակում էր քրիստոնեական ֆունդամենտալիզմ, որը միանգամայնորեն նոր ուսմունք էր:**

Այլադավանության դասակարգման և դրա նկատմամբ բավականին ինքնօրինակ հայեցակարգեր է մատուցում Մ. Գոշն իր մեկ այլ գրության մեջ, որը ցայսօր խորությամբ վերլուծության չի ենթարկվել³²¹:

Պատմաբան Պարույր Մուրադյանը գտնում է, որ այն գրվել է 1206թ. – ին: Իսկ գրելու շարժառիթը հանդիսացել է վրացիների կողմից հայոց դավանանքի և եկեղեցու նկատմամբ բամաբասանքը, որը «յոյժ խոցեալ լինէր հոգի»: Համաձայն

³²⁰ Տե՛ս *Մխիթար Գոշ*, Գիրք Դատաստանի, աշխատասիրությամբ Խոսրով Թորոսյանի, Երևան, 1975:

³²¹ *Մխիթար Վարդապետ Գոշ*, Թուղթ Առ Վրացիսն՝ Յաղագս Ուղղափառութեան Հաճատոյ, տե՛ս Պարույր Մուրադյան, ԺԱ - ԺԳ. դարերի հայ – վրացական դավանական խնդիրները և Մխիթար Գոշի «Առ վրացիսն» թուղթը, աղբյուրագիտական քննություն և բնագրեր, Ս. Էջմիածին – 2011, էջ 195 – 274:

նրա վկայության Ի. Աբուլաձեն մի հոդվածով ապացուցել է, որ Գոշի այս թուղթը պատասխան է Արսեն Վաչեսձեի «Դոգմատիկոնի» հակամիաբնակ դրվագներին, որոնք ուրն են, և հատկապես դրանցից մեկին, որը կոչվում է «Երեսուն գլուխ հայոց հերձվածի»³²²:

Թուղթն ուղղված է վրաց կաթողիկոսին և հոգրևորականությանը, ընդ որում՝ ոչ թե նրանց պարսավելու, այլ՝ հանդուրժողականության կոչ անելու նպատակով: Սա նշանակում է, որ Մ. Գոշը դավանաբանական հանդուրժողականության կոչ է անում քրիստոնյա ազգերին, որը նորություն է դավանաբանական գրականության մեջ: Եվ, որը շատ կարևոր է, լինելով միաբնակության տեսության կողմնակից և հիմնավորող, նա քաղկեդոնականությունը չի համարում հերձված կամ աղանդ և հորդորում է վերացնել թշնամանքը դրա հետևորդների և հայոց միաբնակ եկեղեցու միջև:

Փորձենք վերլուծության ենթարկել նրա այս աշխատության հիմնական կամ կարևորագույն դրույթները: Այն նա սկսում է հետևյալով. «Զայս գծագրութիւն սակաւութիւն հարկաւոր կարծեաք եղաք յաղագս Վրաց որ ոչ սակաւ թշնամութեամբ վարին ընդ Հայս, աշակերտելով Յունաց»³²³:

Այսինքն, նա այս գրությունն ուղղում է վրացիներին, որոնք ոչ պակաս թշնամություն են տածում հայոց հանդեպ, աշակերտելով հույներին: Բնականաբար, այստեղ խոսքը վերաբերվում է հայոց դավանանքի նկատմամբ թշնամությանը, որն այնուհետև Գոշը հիմնագուրկ է դարձնում: Մինչև այդ նա հետևյալ կոչն է անում. «Եւ դուք բաւական էք զսաստկացեալ պատերազմդ հայիոյութեան շիջուցանել իմաստութեամբ եւ հաւանելի բանիւ, թէպէտ եւ անհնար ցուցաք զծողովն լինել եւ զմիաբանութիւն»³²⁴:

Ապա նա միանգամայնորեն անտեղի է համարում թշնամանքը քրիստոնյա ազգերի մեջ, քանի որ անկախ Քրիստոսի նկատմամբ դավանանքի և եկեղեցական ծիսակատարությունների տարբերություններից, նրանք այլադավաններ չեն և յուրաքանչյուրը կարող է մյուսից վերցնել լավը՝ վերջ տալով անհանդուրժողականությանը: Այլ խոսքով՝ նա հանդուրժողականության և միաբանության կոչ է անում: Ահա դրա վառ ապացույցը. «Քանզի ընդ միտ ածի զոր սատանայ սերմանեաց ի մէջ հաւատացելոց զնախանձ եւ զատելութիւն եւ վասն այն համարձակեցաք եւ զսակաւդ գրեցաք զթուղթդ ոչ հակառակելով եւ կամ զոք պարսաւելով յազգաց այլ զարժանն եւ զիրզվն իբր դատաստանաւ ցուցաք եւ զդժուարաւ գալն ի միաբանութիւն եւ զհնարաւորն ըստ ժամանակիս յայստ արարաք, **եւ զճշմարիտ խոստովանութիւնն ցուցաք զմերոց ազգաց, եւ զխոտելի իրսն ոչ թաքուցաք զմերոյ ազգի, եւ զհարաքանչյուր ազգի զգուելին եւ զպարսաւելին գրեցաք, եւ ի գլուխ բանին ընտրեցաք զբարին եւ զլաւն**»³²⁵ (Ընդգծումը մերն է - Գրիգոր աբեղա Խաչատրյան):

Ինչպես պարզ է հատկապես մեր ընդգծած տողերից, Մխիթար Գոշը հորդորում է հայ, վրաց, հույն և այլ քրիստոնյա ազգերին՝ վեր հանել իրենց կրոնական ըմբռնումներից լավը կամ գովելին, ինչպես նաև պարսավելին, որը մերժելով՝ լավն ընդօրինակել: Սա մի առաջարկ է, որը խորն է և հանդուրժողական, մարդասիրական է և բխում է քրիստոնյա ազգերի շահերից: **Եվ եթե այն ընդունե-**

³²² Նույն տեղում, էջ 173:

³²³ Նույն տեղում, էջ 196:

³²⁴ Նույն տեղում, էջ 197:

³²⁵ Նույն տեղում, էջ 198:

լի չի դարձել, ապա, այն պատճառով, որ քրիստոնեական դավանանքի այլընտրանքների հանդեպ մերժողականությունը պայամանվորել է քաղաքական նպատակադրումներով: Իսկ Գոշը միանգամայն գերծ է նման նպատակադրումներից և կոչ է անում իրար հանդուրժելու, քանզի այստեղ հակասությունը չէր վերաբերվում այլադավանությանը կամ այն կրոնական այլխոհությանը, որը Հիսուսին չմերժելու քողի տակ՝ միտված էր նրա հանդեպ հավատի քայքայմանը:

Քրիստոնեական հավատի ամրապնդման տեսանկյունից բավական խելացի տեսական ընդհանրացում է կատարում Մ. Գոշն այնուհետև. «Ձի այն էր հաճոյ Աստուծոյ, զի ամենայն ազգ միակրաւն լինէր, բայց տեսաք, որ սաստանայ եւ ամբարտաւանութիւնն մեր գայդ չտայ առնել լաւ համարեցաք, որ գմիմեանս յըջնամանեմք եւ զիսաչ եւ զեկեղեցի միմեանց չանարգեմք, զի այն Քրիստոսի է եւ Աստուծոյ անարգանք»³²⁶:

Այսպիսով, նա այն տեսակետն է արտահայտում, որ Աստծուն հաճելի է, որ բոլոր ազգերն ունենան մեկ կրոն, բայց քանի որ այդպես չի, ուրեմն պետք չէ, որ քրիստոնյա, տվյալ դեպքում հայ և վրաց ազգերը, իրար խաչն ու եկեղեցին անարգեն, որը համահունչ է Քրիստոսի և Աստծու անարգանքին:

Ապա Մ. Գոշն անցնում է հայոց հավատի նկատմամբ վրաց անարգանքի խոսքերին՝ ապացուցելով դրանց սխալականությունը: Նա գրում է, որ խղճում է վրացիներին, որովհետև անգիտությամբ զայրացնում են Քրիստոսին, գտնելով տաճիկին և ցիուղին ավելի լավ, քան հային, որը լսել են «Ի Հոռումէն»³²⁷: Եվ նա կոչ է անում չլսել թշնամիներին, քանի որ հայոց դավանանքը հերձված չի և միմյանց նկատմամբ կրկին մկրտություն կիրառելը անարգանք է Քրիստոսին: Այսինքն՝ վրացին է հային մկրտել, թե հայը վրացուն, տարբերություն չկա, մկրտվածն արդեն քրիստոնյա է. «Ձի մի է քրիստոս եւ ոչ երկու, զի մի հաւատ եւ մի մկրտութիւն քարոզի ի Գրոց»³²⁸:

Մրանով Գոշն սկսում է գնալ դեպի այն տեսակետի ճշտության աստիճանական հիմնավորմանը, որ դավանական հանդուրժողականության հիմքը ոչ թե Հիսուսի նկատմամբ հավատի արտահայտության ծիսական ձևերի տարբերություններն են, այլ՝ նրան որպես Աստված ընդունելու հարցում տարաձայնությունների բացակայությունը, որը տվյալ իրավիճակում և առհասարակ առկա էր հայոց և վրաց մեջ:

Այնուհետև Մ. Գոշը մատուցում է իր աստվածաբանական հայացքները, որոնց հիմքում ընկած են Հին և Նոր կտակարանների տեսությունները: Նա Քրիստոսին համարում է բարու և խոնարհության սերմանողը և առհասարակ այն տեսակետն է հիմնավորում, որ Աստված բոլոր մարդկանց մեջ սերմանում է բարին և աղանդները ստեղծվում են սատանային որպես մայր ունեցողները, որոնք նախանձից դրդված քարոզում են չարը: Եվ նա դատապարտում է բոլոր այն եկեղեցական պաշտոնյաներին, «որոնք ուտելոյ եւ ըմպելոյ միայն պարապեալք եւ ըմբռնեալք ի զանազան ախտս: Եւ որ կարի զարմանալին է, խաբեալք ի չարբէն, չշատանան իւրեանց վնասին, այլ փութան զայնոսիկ, որ յողիղն զնան ձանապարհ, եւ զնոսա մոլորեցուցանեն, թողեալ; զերից սուրբ ժողովոց զհավատս ուղիղս»³²⁹:

³²⁶ Նույն տեղում, էջ 198:

³²⁷ Նույն տեղում:

³²⁸ Նույն տեղում, էջ 199:

³²⁹ Նույն տեղում, էջ 202:

Գոշն աղանդավորության կամ այլադավանության դեմ պայքարի անհրաժեշտությունից ելնելով և նաև նրանից, որ ապացուցի հայ և վրաց եկեղեցիների՝ մեկը մյուսի հավատը հերձված համարելու սխալականությունը, տալիս է աղանդների առաջացման պատմությունն՝ սկսած Արիոսից, այսինքն՝ Նիկիայի տիեզերածոցովից: Այդ ժողովին մասնակցում է նաև Արիստակեսը՝ Հայաստանից: Այն դատապարտում է Արիոսին՝ որպես աղանդավորի: Երկրորդ ժողովը, որը տեղի է ունեցել Կ.Պոլսում, որին մասնակցում է Ներսես հայրապետը ընդունում է «զՅօզին Սուրբ՝ Հայր եւ որդւոց հաւասար եւ փառակից, եւ նգովեցին ի մեռեալս ընդ ամենայն հերձուածոդս զՄակեդոն»³³⁰:

Երրորդը Եփեսոսի ժողովն էր, որը դատապարտեց Նեստորի ուսմունքը և «Նգովեալ զՆեստոր հալածական զնա ի կողմանց Մծբնայ, եւ անդի վարեցաւ ի Խուժաստան»³³¹:

Առավել հանգամանորեն է Մ. Գոշն անդրադառնում Նեստորի ուսմունքին, որը փաստորեն ընդունվում է Քաղկեդոնի ժողովի կողմից: Հետաքրքիր է նրա հետևյալ ընդահանրացումը. նրանք, ովքեր Եփեսոսի ժողովում էին, «Գրով սահմանեալ ասացին. Որ ոք ասասցե զՔրիստոս երկու բնութիւնս՝ նգովեալ լիցի եւ լուծան ի պատուոյ Նեստոր եւ նմանիք նորա: Իսկ ի Քաղկեդոն կործանեալք ի յերկեղէն եւ որք ձեռնարկաւ ուրացեալք Քրիստոս ասացին. Որ ոչ ասէ զՔրիստոս երկու բնութիւն՝ նգովեալ լիցի, եւ ընկալան ի պատիւ զհաւանեալսն Նեստորի եւ զաշակերտեալսն յուր»³³²:

Այսպիսով, նրանք, ովքեր Եփեսոսի ժողովում մերժել և հալածել էին Նեստորին, որպես հերձվածողի, Քաղկեդոնում նրա ուսմունքը համարում են ճիշտ և ընդունելի:

Այնուհետև Մ. Գոշը ներկայացնում է հռոմեական կայսրերի տարաբնույթ վարվելակերպը՝ կապված քաղկեդոնականության ընդունման հետ, քանզի պատմական բավական ժամանակաշրջան պետք է անցներ՝ դրա վերջնական ընդունման անհրաժեշտության հիմնավորման համար: Դրանց անդրադառնալը մեր խնդրից դուրս համարելով, սույն ավելացնենք, որ Գոշը շեշտում է այն հանգամանքը, որ հայերը չեն մասնակցում այդ ժողովին, որով նա նպատակ է հետապնդում ցույց տալու հայոց եկեղեցու և հավատի ընդհանրական կողմերը վրաց եկեղեցու հետ, հանդուրժողականության հասնելու միտվածությամբ, որը կատարում է այլադավանությունը ծիսական արարողությունների որոշ տարբերություններով բնորոշելու սխալականությունն ապացուցելու ջանքերով:

Նա այդ կատարում է՝ անդրադառնալով Հայոց եկեղեցու գումարած ժողովների անդրադարձով: Դրանից հետո նա հետևյալ ընդհանրացումն է կատարում. «Եւ ոչ միայն ոչ ընկալան Հայք, այլ եւ բազում ազգք եւ գաւառք զժողովն Քաղկեդոնի ոչ ընկալան, որպէս եւ այժմ կարգեմք զանուանսն. նախ Հռոմ թագաւորանիստ տեղին, որ նգովեն զժողովն եւ զՄարկիանոս, որ սատակեցաւ ի հրեշտակէ Աստուծոյ, եւ բոլոր ամենայն իտալիա եւ դաղմատիա եւ Սարդոնիկէ մեծ կղզի, եւ Սիկիլիա, եւ Սպանիա ի մուտս արեւու եւ մեծն Եւրոպիա, եւ Գերմանիա, եւ Ատտիկէ, եւ Ելլադա եւ այլք բազումք, որ ի մտից Մակեդոնիոյ: Իսկ ի կողմանս հարաւոյ, յայսկոյս Յունական ծովուն՝ Եգիպտոս, յորում են գաւառք ԽԱ, եւ Ադեք-

³³⁰ Նույն տեղում:

³³¹ Նույն տեղում, էջ 203:

³³² Նույն տեղում, էջ 208:

սանդրիա ընկալեալք յերից սուրբ ժողովոց գուղիդ դաւանութիւն հաւատոյ, ընդ մեզ ի նոյն կանառնի կան հաստատուն, չընկալեալք զժողովն Քաղկեդոնի: Եւ Ափրիկէ, որ ունի գաւառս ԽԱ, յորում է մայրաքաղաքն Կարկեդոն եւ ի Մարիտանիա մինչեւ ի մուտս արեւու հանդերձ բազում գաւառակք, որ ունի զմայրաքաղաքն Տիգանիա: Եւ սոքա ի նոյն հաստատ հաւատս՝ ոչ միաբնին ընդ Յոյնս եւ ընդ Վիրս: Ու Վերինն Թեբայիթ զնոյն ունին հաւատ: Էթեոպիա Մեծ եւ Փոքր մինչեւ ի ծովն Հնդկաց, եւ Արաբիա ի մեջ երկճեղ Կարմիր ծովուն, եւ Ապառաժն Արաբիա՝ այս ամենայն ընդ մեզ զերից սուրբ ժողովոցն ունին գաւանդութիւն, որոշեալք ի Յունաց եւ ի Վրաց»³³³:

Այս ընդհարձակ մեջբերումից պարզ է, որ Գոշը ցանկացել է ապացուցել, որ հիշատակված երկրներում, ինչպես նաև հույների և վրացիների մոտ, մերժվել է քաղկեդոնական դավանանքը, նրանք ունեն հիմնականում մեկ դավանանք, անկախ ծիսական տարբերություններից, ուրեմն ինչի համար է կրոնական անհանդուրժողականությունն անհրաժեշտ հայերի և վրացիների միջև: Դրա համար ոչ մի գաղափարական հիմնավորում չի թողնում Մխիթար Գոշը:

Վրացիների հավատի տարանջատման ձգտումների սնանկությունը մեջբերված պատմական հիմնավորումով բացահայտելով, Մ. Գոշն այնուհետև հետևյալ տրամաբանական հարցադրումով քարը քարի վրա չի թողնում նրանց՝ ընդդեմ Հայոց եկեղեցու ունեցած ընդդիմադիր կեցվածքից: Ահա այդ հարցադրումը. «Եւ այլ վասն Վրաց բաժանելոյն զի՛նչ ասացից, զի ի Քրիստոսէ մինչ՝ ի չար ժողովն Քաղկեդոնի ՆՀԴ. ամբ են, եւ ընկալաւ ամենայն եկեղեցի՝ յառաքելոցն զմի դաւանութիւն հաւատոյ անբաժանելի, եւ յետ ՅԵ ամի ընկալան հայաստանայք զքարոզութիւն ի սրբոյն Գրիգորէ, եւ վրաց ազգն ընդ մեզ նգովեցին զժողովն Քաղկեդոնի զամս հարիւր, մինչեւ ի ժողովն Հայոց ի Դուին եւ ի Մանագկերտ, ուր որոշեցին գեղեալ հաւատն ի Քաղկեդոնի եւ հաստատեցին զերից սուրբ ժողովոցն...»³³⁴:

Այլևս չշարունակելով մեջբերումը, որն հազեցած է այլ փաստերով ևս, որոնք ապացուցում են, որ վրաց եկեղեցին որդեգրել էր հայոց եկեղեցու դավանանքը, ավելացնենք, որ Մ. Գոշը հարցադրումն ավարտում է նրանով, թե այսքանից հետո որքանով է ճիշտ վրացիների այն մեղադրանքը, թե մենակ հայերը չեն ընդունել Քաղկեդոնի ժողովը, երբ ինքը ներկայացնում է այն ազգերի ցուցակը, որոնք կատարել են նույնը:

Մեծ մտածողն այն իմաստասիրական ընդհանրացումն է կատարում, որ յուրաքանչյուր ազգ ցանկանում է ինքն իրեն բարձրացնել, իրեն համարելով ճիշտ: Բայց մարդը սխալական է և Աստվածն է ճշմարիտ, ուրեմն անհրաժեշտ է «Թէ այնպիսի ունեաք կամք, որ զբարին յամենայն ազգաց ժողովեաք եր Զխտանն ի բաց ընկենուաք, Աստուած գորշակից լիներ եւ ի բարին ուղղեր կարգ եկեղեցւոյ, **զի չիք ազգ, որ բարի կարգ ոչ ունի եւ խոտան**»³³⁵: (Ընդգծումը մերն է - Գրիգոր արքեպիսկոպոսիան):

Այսպիսով, **Գոշը մատուցում է հետևյալ հայեցակարգը՝ յուրաքանչյուր քրիստոնեական եկեղեցի էլ ունի և լավը և ոչ ընդունելին. լավը պետք է վերցնել անկախ ազգությունից, իսկ վատը մերժել:**

³³³ Նույն տեղում, էջ 212 – 213:

³³⁴ Նույն տեղում, էջ 213:

³³⁵ Նույն տեղում, էջ 215:

Ապա նա անդրադառնում է հոռմեացիների, հույների, վրացիների եկեղեցական արարողակարգերի տարբերություններին, սովորույթներին, սակայն այն մոտեցմամբ, որ դրանք ամենեկին հիմք չպետք է հանդիսանան նրանց տարանջատման, այլ, անկախ դրանցից պետք է միասնական լինեն, քանզի անկախ դրանցից նրանց հավատն ուղղված է առ Քրիստոս:

Այսպես, նա հետևյալն է գրում. «Առաջինն զայս առնեաք, որ վկայութեամբ Գրոց եւ կանոնաց հաստատեաք զխոստովանութիւնն՝ Ամենասուրբ Երրորդութիւնն եւ ի տնաւորութիւնն Քրիստոսի եւ ապա զկարգս տանից եւ զսովորական աւանդութիւնս, զի ամենայն ազգ խմորու վարին եւ ջրու, որք ընկալան գծողովն Քաղկեդոնի, ի հաց պատարագին եւ ի բաժակին: Բայց Հայք եւ Հռոմայեցիք եւ այլ ազգ, որք ոչ ընկալան գծողովն Քաղկեդոնի բաղարջի: Յոյնք եւ Վիրք ազիւ վարին, եւ Ասորիք ձէթ եւս յաւելուն: Նմանապէս յայլ կարգս եւ ի տանս ու ի պահս բաժանաին. ասորիք հրէաբար մինչեւ ցերեկոյ պահէն եւ լուծանեն զչորեքշաբաթ եւ զուրբաթ: Վիրք զբովանդակ ամն զչորեքշաբաթ եւ զուրբաթ լուծանեն եւ զոր Տէր հրաման ետ զկնի յարութեանն ուտել զայն պահեն: Յոյնք զկրճատեալն եւ զմալեալն քահանայ նոքա եւ այլք չհանեն ի պատարագէն, այլ Հայք ոչ ընդունին եւ ոչ ի սակաւ սխալանս զգիտելին: Հռոմայեցիք բազմաւրեայ ժամանակաւ նշխարին պատարագէն, զոր որ ընդունին կանոնք: Յոյնք պատարագք եւ կիսապատարագք անուանեն: Հռոմայեցիք անկին քահանայիւք վարին եւ անխտիր շնութեամբ: Վիրք յամենայն տեղիս անզգուշաբար պատարագ մատուցանեն, ի պահս բազում զանազանութիւն առնեն, զձուկն եւ զձէթ եւ զգինի՝ պահոց քարոզեն, եւ Հայք ոչ եւս: Զիսաչ եւ զեկեղեցի Յոյնք եւ Վիրք ոչ արհնեն եւ արհնեալ խաչի եւ եկեղեցոյ հայոց երկիր ոչ պագանեն: Ի ձէթ մեռոնին այլ եւ այլ յաւելուածս խնկոց խառնեն, որ ոչ է կանոնաց եւզիւղն աւծութեան զպարգաբար զարինեալն հայոց ոչ ընդունին: յոյնք եւ Վիրք կենդանոցն պատարագ մատուցանեն եւ հայք ոչ: Հռոմայեցիք բազում կանայս առնեն՝ որքան եւ մեռանին, իսկ այլ ազգ ոչ եւս: Հռոմայեցիք եւ այլ ազգ կերակուրս ոչ խտրեն զպղծեալս, իսկ Հայք ոչ ճաշակեն: հայոց կրօնաւորք բամբասին ոչ առնել ծնունդ եւ ուտել միս եւ ոչ անտեացտաւնել եւ ոչ սարկաւագաւք եւ դպրաւք, եւ հանդերձիւ եւ բացաւ զլիտվ առնել պատարագ, անզգուշաբար հաղորդին եւ աշխարհականաւք փոխանակ քահանայից»³³⁶:

Այս համեմատություններն անելով, Մ. Գոշն աստիճանաբար ապացուցման հիմքեր է ստեղծում իր այն հայեցակարգի համար, որ տարբեր ազգերի ծիսական արարողակարգերի տարբերությունները չպետք է ենթադրեն այդ նույն քրիստոնյա ազգերի դավանական անհանդուրժողականություն: Դավանանքն այլ հասկացողություն է, ծիսակարգն ուրիշ: **Այլընտրանքային ծիսակարգերը չեն ենթադրում այլադավանություն ամկայություն:**

Կարևոր ենք համարում շեշտել, որ Մ. Գոշը դավանաբանական վեճերի լուծման բանալին փորձում է գտնել բոլոր ազգերի սովորույթների նկատմամբ հարգանքի դրսևորման մեջ, քանզի Հիսուսի նկատմամբ պաշտամունքի արտահայտությունների ձևերի տարբերությունը գալիս է հենց այդ սովորույթներից: Բավական է նշել, որ հայերը Հիսուսի մեջ աստիճանաբար սկսեցին տեսնել հեթանոսական շրջանի իրենց պաշտած նշանավոր աստվածներից Միհրի շատ հատկանիշներ և վերջինիս հանդեպ հայոց պաշտամունքի շատ ձևեր հայկական եկեղեցական ժողովների կողմից ներմուծվեցին քրիստոնեական ծիսակատարությունների մեջ, ձևը նույնը թողնելով, բայց փոխելով բովանդակությունը:

³³⁶ Նույն տեղում, էջ 215 – 217:

Մ. Գոշը ծիսակարգային սովորությունների տարբերության բնականոնությունը հիմնավորում է մահմեդական և այլ կրոն ունեցող ազգերի հետ մի զուգահեռ տանելով:

«Հստ որում եւ, - գրում է նա, - առ մահմեդականսն է տեսանել բաժանեալք այսպիսիք, որպէս Մուշաբահին եւ Ալարին եւ Ռաֆաթին եւ այլք: Նոյն է եւ առ Հրեայսն, որպէս Փարիսեցիք եւ Սադուկեցիք, Սամարացիք եւ այլք Մելիքսեդեկեանք, որ ասին Միւղոյ: Նաեւ ի հեթանոսս բազմաստուածութեանն նոյն բան է»³³⁷:

Այսինքն՝ նույն կրոնական գաղափարախոսության որդեգիր շատ ազգեր կան, որոնք եթե ունեն որոշակի գաղափարական տարակարծություններ, ապա դա չպետք է հիմք հանդիսանա նրանց մասնատման: Այս տեսակետն է փաստորեն մատուցում Մ. Գոշը: Այնուհետև նա փորձում է գտնել այն հարցի պատասխանը, թե քրիստոնյա ազգերին ինչը կարող է միավորել: Բնականաբար այն կանոնները, որոնք ընդունել են տիեզերական ժողովները նրանց համար: Իսկ այդ կանոնների գլխավոր աղբյուրն Աստվածաշունչն է, Հին ու Նոր Կտակարանները, որոնք մատնանշում են ճշմարիտ Աստծուն, որը մեկն է՝ անսկիզբ և անվախճան և բարի բնությամբ, որն ընդունում են բոլոր քրիստոնյա ազգերը: Ուրեմն, ինչո՞ւ համար պետք է արարողակարգային տարբերությունները ստիպեն նրանց մեկը մեկու հանդեպ վերաբերվել թշնամանքով: Ահա այս ընդհանրացման է բերում Մ. Գոշը:

Նա հիմնավորում է Հայր Աստծու, Որդի Աստծու և Սուրբ հոգու, այսինքն Սուրբ Երրորդության պաշտամունքի անհրաժեշտությունը և ճշտությունը, ինչպես նաև Հիսուսի միաբնակության տեսությունը, որը հիմնավորում է առատ փաստերով համեմված իմաստասիրական ընդհանրացումներով:

Գոշը նախ հիմնավորում է Հայր Աստծու պաշտամունքը կամ հավատի անհրաժեշտությունը նրա նկատմամբ «որպէս սահմանեցին սուրբքն ի Նիկիա եւ յայլ սուրբ ժողովսն որպէս եւ ուսեալ ենք ի Եւ ի Նոր կտակարանաց անգլիզքն եւ անվախճան է Աստուածութիւնն եւ բարի բնութեամբ, եւ նա է պատճառ ծնելութեան որդւոյ անժամանակաբար»³³⁸:

Մ. Գոշը հղում անելով Նիկիայի և այլ տիեզերաժողովներին, ինչպե՞ց նաև Հին ու Նոր կտակարաններին, այսպիսով Հայր Աստծուն համարում է անսկիզբ և անվախճան և բարի իր բնությամբ, որը նաև պատճառն է Որդու ծնելության: Ապա նա Հոգին և Որդին նույնականացնում է, քանզի դրանք գալիս են Հոր արարչությունից: Ապացուցելով միաբնակության ճշմարտացիությունը, Մ. Գոշը, ի տարբերություն այլ աստվածաբանների և իմաստասերների, երկաբնակությունը չի համարում հերձված կամ աղանդ, այլ՝ փաստորեն Հիսուսի նկատմամբ այլընտրանքային պաշտամունքի գաղափարախոսություն: **Եվ իսկապէս, ինչպէս ս կարելի է աղանդ կամ այլադավանություն համարել երկաբնակության ուսմունքը, որը Հիսուսի մեջ տեսնում է նաև Աստծուն, այսինքն չի ժխտում նրա աստվածային էությունը:** Ահա դրա վկայությունը. «Այլ արդ տեսանենք, զի Հայք եւ Յոյնք եւ Վիրք, Ասորիք եւ Հռոմք ճշմարիտ սուրբ զԵրրորդութիւնն խոստովանին եւ զՔրիստոս Աստուած ճշմարիտ Որդի Աստուծոյ, թէպէտ եւ ի տնաւրէնութիւնն այլայլին, եւ զՄարիամ Աստուածածին, թէ չիցէ ի կարծեաց Նեստորի, եւ զԽաչն Աստուծոյ խաչ, առ Հայս այդ առաւել ճմարիտ է: Այլ ինչ սակաւ բաժանումն տաւնի կամ պահոց, կամ կերակրոց չէ հաւատոյ բաժանումն»³³⁹:

³³⁷ Նույն տեղում, էջ 218 – 219:

³³⁸ Նույն տեղում, էջ 219:

³³⁹ Նույն տեղում, էջ 261 – 262:

Այլ խոսքով՝ հավատի առարկային նվիրված արարարողակազային տարբերությունները բնավ չպետք է հիմք հանդիսանան հավատի տարբերությունների որոնման համար: Այստեղից նա փաստորեն մեկ այլ հայեցակարգ է բխեցնում՝ եթե նույն հավատն ունեցող ազգերը չեն կարող միաբանվել, ապա՝ թշնամի էլ չպետք է լինեն:

Մխիթար Գոշն առաջ է քաշում քրիստոնյա ազգերի եղբայրության մասին տեսությունը, որն ունի արդիական հնչեղություն: Այդ են վկայում վրացիներին ուղղված նրա գրության վերջին տողերը՝ «Աստուած ե՞րբ առնէ թողութիւն այն քրիստոնէին, որ զՏաճիկն եւ զՋիուտն լաւ ասէ քան զՀայն. այնպիսի ասացողքն չունին թողութիւն ոչ աստ եւ ոչ ի հանդերձելումն թէ ոչ ապախարհին թէ Հայ Վրացոց ասէ եւ կամ Վրացի Հայոց եւ կամ այլ քրիստոնեայ ազգ քրիստոնէի, զի քրիստոնեայք եղբայրք են, եւ Քրիստոս հրամայեաց՝ Որ ասէ ցեղբայր իւր մորոս՝ պարտաւոր լիցի գեհենի հրոյն»³⁴⁰:

Մխիթար Գոշի «Թուղթ առ վրացիսն» աստվածաբանական գործն ավարտվում է հորդորով հայ և վրաց մեծերին, որով նա կարծես թե ընդհանրացնում է ամբողջ շարադրվածը: Ցանկանում ենք մեջբերել դրա վերջին մասը՝ կարևոր եզրակացություններ կատարելու համար: Ահա այն. «Ջի դուք իշխանք էք Հայոց եւ Վրաց կամաւքն Աստուծոյ եւ թէ կամիք՝ ծանուցանէք աստուածասէր թագաւորացոյ, որ արքայական իշխանութեամբ սաստ ղնեն, որ զեկեղեցի Հայոց չքակեն եւ զխաչ չայրեն ժամանակեայ իշխանութեամբս զյաւիտենական թագաւորութիւնն առնուն ընդ բարեպաշտ թագաւորացն՝ ընդ նախնի թագաւորացն ինքեանց աստուածասիրացն Բագրատունեաց եւ պսակիցին ի Քրիստոսէ՝ ի ճշմարիտ թագաւորաց թագաւորէն, եւ հաստատուն ունիցին զթագաւորութիւնն ինքեանց բարի շառաւեղեաւն խաղաղական կեանաւք եւ յաղթութեամբ պատերազմաց եւ բարեպաշտութեամբ կեալ յաշխարհի հանդերձ քրիստոսասէր իշխանաւք եւ իրավամբք դատաստանի եւ առողջութեամբ հոգոյ եւ մարմնոյ, բարի անուամբ Քրիստոսի հաճոյանալ եւ ժառանգել զարքայութիւնն Աստուծոյ. զի եւ մեք վայելեցուք ի կեանս դոցա եւ անթառամ եւ նորատունկ գաւազանի ի կեանս նորա ուրախացեալք եւ պայծառացեալք Քրիստոսի երկրպագութեամբ, որ է աւրինեալ եւ փառաւորեալ ընդ Հաւր եւ ընդ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յավիտենից, ամէն»³⁴¹:

Այս կոչի կամ հորդորի իմաստն ու տրամաբանությունը կայանում է հետևյալներում.

Առաջին. Հայոց և վրաց իշխանները և թագավորները պետք է նախկին բարեպաշտ թագավորների օրինակով պատժեն եկեղեցու դեմ գործողներին, այսինքն՝ ապահովեն նրա անվտանգությունը, որը նաև հավատի անվտանգությունն է:

Երկրորդ. Իրենց այդ դիրքորոշմամբ և այն ճշմարտության ընկալումով, որ Քրիստոսն է թագավորների թագավորը՝ ավելի հաստատուն, խաղաղ և հաղթական կտեսնեն իրենց թագավորությունը, քանզի դրանով կարժանանան Աստծու արքայությանը:

³⁴⁰ Նույն տեղում, էջ 264:

³⁴¹ Նույն տեղում, էջ 265 – 266:

Երրորդ. Գոշը փաստորեն հայոց և վրաց մեծերին միմյանց հավատն հանդուրժելու հորդորն է կարդում, քանզի մեկն է այդ հավատի ակունքը:

Իսկ ամբողջ գրությունից որպես զլխավոր եզրակացությունները կարելի է բխեցնել հետևյալները.

Առաջին. Իր «Թուղթ առ վրացիսն» գրության մեջ Մխիթար Գոշը մշակում է այլադավանության մասին բոլորովին նոր տեսություն, որի համաձայն Քրիստոնեական դավանանքին հետևող բոլոր ժողովուրդների հավատի արտահայտության ձևերի տարբերությունները կամ Հիսուսի էության տարաբնույթ ընկալումները չպետք է հիմք հանդիսանան նրանց այլադավան կամ հերձվածող համարելու:

Երկրորդ. Սա նշանակում է, որ նրա այս ըմբռնումից կարելի է բխեցնել այն հայեցակետը, որ այլադավանները Հիսուսի նկատմամբ հավատը սասանողներն են և ժխտողները կամ նրա աստվածային էության մերժողները: Սրանով նա մատնանշում է այլադավանության էության բացհայտման ճշմարիտ ելակետ:

Երրորդ. Քրիստոնյա ազգերին և մասնավորապես հայերին ու վրացիներին կոչ է անում դավանական հանդուրժողականության, քանզի Հիսուսը երկուսի համար էլ Աստված է, որը նշանակում է, որ նրանցից ոչ մեկը հիմքեր չունի մյուսի դավանանքն աղոդ կամ հերձված համարելու:

Չորրորդ. Դավանական հանդուրժողականության անհրաժեշտությունը հիմնավորելով, Մխիթար Գոշը հիմքեր է ստեղծում ազգերի համերաշխության համար, քանի որ նրանց անհամերաշխությունը քաղաքական ուժերը խրախուսում էին դավանական անհանդուրժողականություն քարոզելով:

Մխիթար Գոշի «Թուղթ առ վրացիսն» գրությունը միանգամայն նոր խոսք է դավանաբանական գրականության մեջ, որի աստվածաբանական – իմաստասիրական ընդհանրացումները ունեն համաշխարհային նշանակություն և երբեք չեն կորցնի իրենց գաղափարական թարմությունը:

Григор Абегха Хачатрян – Запись Мхитара Гоша “Письмо грузинам” как отправная точка идеологического обоснования борьбы с иновением. – В статье подвергается анализу одна запись Мхитара Гоша “Письмо грузинам”, которая носит теологический характер и обращена к грузинам. Этой записью великий юрист раскрывает свою своеобразную богословскую точку зрения, связанную с теологическими спорами народов с христианским вероисповедованием. Будучи первым, он выдвигает идею теологической терпеливости. Согласно этой идее христианские народы, независимо от некоторых различий в обрядах и различных восприятий сущности Христа, должны принимать друг друга и покончить с враждой.

Grigor Abegha Khachatryan – Mkhitar Gosh's note “Letter to the Georgians” as a struggle of ideological basing principle against other religion. – In the article Mkhitar Gosh's note (Letter to the Georgians) is analysed which has religious nature addressed the Georgians. In that letter the great lawyer reveals his theological view connected with the religious argument of the people having Christian belief. Being the first he raised the idea of religious endurance. According to it the Christians should support one another and put on end to hostile position regardless of some ritual differences or different perception of Christ essence.

ՍԵՐՈՒՆԴՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

Մարդկության ամբողջ պատմությունը կարելի է դիտարկել որպես սերունդների հերթափոխություն: Սերունդների փոխհարաբերությունների վերաբերյալ Կ.Մարքսն ու Ֆ.Էնգելսը «Գերմանական գաղափարախոսություն» աշխատության մեջ նշում էին, որ «Պատմությունը ոչ այլ ինչ է, քան սերունդների հետևողական հերթափոխում, որոնցից յուրաքանչյուրը օգտագործում է նախորդ սերունդներից իրեն փոխանցված նյութեր, միջոցներ, արտադրողական ուժեր, դրանից ելնելով տվյալ սերունդը մի դեպքում շարունակում է ժառանգած գործունեությունը փոխված պայմաններում, մյուս դեպքում փոխում է հին պայմանները՝ ամբողջովին փոխված գործունեության միջոցով»³⁴²: Սերունդների հերթափոխությունը հասարակության զարգացման բնական, հավերժ բնութագրիչներից մեկն է: Սերունդները, նրանց միջև ձևավորված փոխհարաբերությունները հասարակության զարգացման կարևոր՝ գործող, ինֆորմացիոն ուժ են:

Տարբեր ժամանակաշրջաններում տրվել է «սերունդ» հասկացության ամենատարբեր ձևակերպումները: Գիտական գրականության մեջ սերունդը սահմանվում է որպես մարդկանց՝ օբյեկտիվորեն պայմանավորված, սոցիալ-դեմոգրաֆիական և մշակութա-պատմական հանրույթ, մարդիկ, որոնք միավորված են ըստ տարիքի, կոնկրետ պատմական ժամանակաշրջանում ձևավորման ընդհանուր պայմաններով և ֆունկցիաներով, և ունեն որոշակի արժեքային համակարգեր:

Տարբեր հեղինակներ «սերունդ» հասկացության մեկնաբանության ժամանակ առաջնորդվել են տարբեր չափանիշներով:

«Սերունդ» հասկացության ստուգաբանական վերլուծությունը կատարել է Ֆ.Էնգելսը՝ «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» աշխատության մեջ: Էնգելսը գտնում էր, որ «սերունդ» հասկացությունը ծագում է արիական «gan» արմատից, որը նշանակում է սերունդ տալ:

«Սերունդ» հասկացությունը փորձ է արվել վերլուծել նաև տարիքային ասպեկտից ելնելով. մասնավորապես, սոցիոլոգիայում սերունդների վերլուծությունը ենթադրում է սոցիալական իրավիճակում կենսաբանական երեք չափումների ուսումնասիրություն՝ երիտասարդների սերունդ, հասուն տարիքի մարդկանց սերունդ և ծերերի սերունդ: Տվյալ դեպքում «սերունդ» հասկացությունը դիտարկվում է որպես ժամանակային կատեգորիա, իսկ սերնդափոխությունը որպես մի հոսք, գործընթաց, որն ապահովում է սոցիալական ինֆորմացիայի, մշակութային, բարոյական արժեքների, կուտակված փորձի փոխանցումն ավագ սերնդից կրտսեր սերնդին, որն ուղեկցվում է զարգացման գործընթացով: Եվ թե որքանով է այն հաջողությամբ կատարվում, կախված է կոնկրետ հասարակական պայմաններից: Սերունդների և նրա պրոբլեմների վերլուծության նկատմամբ հետա-

³⁴² *Маркс К., Энгельс Ф.* Соч Т.3 М.1955 с 44-45

քրքրությունը առավելապես դրսևորվեց 19-րդ դարի 2-րդ կեսին՝ արևմտաեվրոպական սոցիալական փիլիսոփայության մեջ: Այդ ժամանակաշրջանում գիտական աշխատություններում «սերունդ» հասկացության կենսաբանա-գենետիկական ասպեկտներից բացի տրվեցին ևս երեք տիպի սահմանումներ.

1. պոզիտիվ-նատուրալիստական՝ որպես տարածա-ժամանակագրական հանրույթ,

2. ռոմանտիկ-հումանիտար՝ որպես գաղափարա-հոգևոր ընդհանրություն ունեցող հանրույթ,

3. պատմա-քաղաքական՝ որպես ժամանակավոր տիրապետող հանրույթ:

Այս սահմանումներում մի դեպքում ընդգծվում է սերունդների ընդհատվածությունը /Շ.Դրոմել/, մյուս դեպքում՝ սերունդների հաջորդականությունը և համագոյակցությունը /Ա.Կուրնո/:

«Սերունդ» հասկացության յուրովի մեկնաբանություն է տվել Ի.Կոնը: Նա ընդհանուր առմամբ ուշադրություն է դարձրել «տարիք» և «սերունդ» հասկացությունների փոխհարաբերությունների վրա: «Տարիք» հասկացությունը մեկնաբանում էր որպես սերունդներից մեկին պատկանելու նշան, բայց մի սերնդին պատկանելությունը չի նշանակում տարիքի հավասարեցում: Իսկ ինչ վերաբերում է «սերունդ» հասկացությանը, ապա Կոնը առանձնացնում էր դրա հետևյալ նշանակությունները.

1. նախ կարևորում էր մեկ ընդհանուր նախահայր ունենալու հանգամանքը,

2. դիտարկում էր որպես հասակակիցների հանրույթ, որոնք մոտավորապես նույն ժամանակաշրջանում են ծնվել,

3. ժամանակակիցներ, այսինքն նույն ժամանակաշրջանում ապրող տարբեր տարիքի մարդկանց հանրույթ,

4. ծնողների ծննդից մինչև նրանց երեխաների ծնունդն ընկած ժամանակահատվածը:

Այսպիսով, սերունդ հասկացության մեջ ներառվում է հասարակության պատմական զարգացման ազգակցական և տարիքային կառուցվածքի տարբեր ասպեկտները: Ընդ որում, միջսերնդային հարաբերությունների սոցիոլոգիային միջավայրը կամ կրճատում է սերունդների միջև տարածությունը կամ էլ տալիս է դեպի ճգնաժամի հանգեցնող տարանջատման: Այս ծայրահեղություններից խուսափելու փորձերը փիլիսոփաներին հանգեցրեցին «դիսկուրսի բարոյագիտության» ձևակերպմանը՝ մի տեսություն, որը վերաբերում էր հաղորդակցման և դիսկուրսի պրոբլեմներին: Այս տեսությունը տարբեր սերունդների ներկայացուցիչներին կողմնորոշում էր ոչ թե դեպի երկպառակության և հարաբերությունների աստիճանական անկման, այլ դեպի համաձայնության, արդյունավետ հաղորդակցման, ինչն էլ, բնականաբար, կհանգեցնեք սերունդների միասնության կայացմանը: Այստեղ խոսքը վերաբերում է սերունդների համագործակցությանը, ինչն ավելին է, քան պարզապես մեծահասակներին օգնություն ցույց տալը կամ էլ կրտսերներին սովորեցնելը:

20-րդ դարի սկզբին սերունդների մեկնաբանության նոր փորձ արվեց. մասնավորապես, գերմանացի սոցիոլոգ Կ.Մանհեյմը իր «Սերունդների պրոբլեմը» /1928թ./ հոդվածում փորձեց միավորել «սերունդ» հասկացության պոզիտիվ-կեն-

սաբանական և ռոմանտիկ-պատմական ընկալումները: Ըստ Մանհեյմի սերունդները բնութագրվում են հասարակության մեջ ունեցած իրենց որոշակի դիրքով, սպեցիֆիկ փոխկապվածությամբ և միասնությամբ: Նրա կարծիքով սերունդների հերթափոխությունն ունիվերսալ գործընթաց է, որը հիմնված է մարդկային կյանքի ռիթմի վրա: Դրա արդյունքում մշակութային գործընթացում հայտնվում են նոր մասնակիցներ և, միաժամանակ, դրան զուգահեռ կատարվում է հին մասնակիցների աստիճանաբար հեռացում: Այս գործընթացը վկայումն է այն բանի, որ յուրաքանչյուր սերունդ ունի իր ժամանակային և պատմամշակութային տարածությունը: Տվյալ սերնդի ներկայացուցիչները կարող են մասնակցություն ունենալ պատմական պրոցեսի միայն ժամանակագրականորեն սահմանափակ հատվածում, ինչն էլ անհրաժեշտաբար ենթադրում է, կուտակված մշակութային ժառանգության փոխանցումը հաջորդ սերնդին: Կ.Մանհեյմի կարծիքով սերունդների գործունեությունը կարևորվում է այնքանով, որքանով որ դրանք պատկանում են «հասարակության ձևավորող ուժերին»:

20-րդ դարի 2-րդ կեսին «սերունդ» հասկացությունը բովանդակապես հարստացավ իսպանացի փիլիսոփա Խ.Օրտեգա-ի-Գասետի «սերունդների հոգեվոր-պատմական տեսության» մեջ: Վերջինս, մասնավորապես, գրում էր. «...մենք դեռ հիշում ենք այն հանճարեղ և հասարակ ճշմարտությունը, որ մարդը նախ և առաջ ժառանգորդ է: Եվ հենց դա, այլ ոչ թե մեկ ուրիշ բան է արմատապես նրան տարբերում կենդանուց»³⁴³: Խ.Օրտեգա-ի-Գասետը նշում էր, որ «մեկ սերնդի գործունեությունը շարունակվում է մոտ 30 տարի և բաժանվում է երկու շրջանի. առաջին շրջանում նոր սերունդը տարածում է իր գաղափարները, ձևավորում՝ հակումներ, ճաշակներ, որոնք հաստատվում և տիրապետող են դառնում երկրորդ շրջանում»³⁴⁴:

Նույն ժամանակաշրջանում՝ ամերիկյան սոցիոլոգիայում, մասնավորապես Թ.Պարսոնսի կողմից սերունդը մեկնաբանվում էր որպես սոցիալականացման օբյեկտ, իսկ Գ.Մարկուզեի կարծիքով այն սոցիալ-քաղաքական կոնֆլիկտի սուբյեկտ է:

Սերունդը, ինչպես և ցանկացած սոցիալական, համեմատաբար ինքնուրույն, որակական գոյացություն, իրականացնում է իրեն բնորոշ ֆունկցիաներ: Սերունդների հարաբերություններում գլխավորը հանդիսանում է մշակութային արժեքների փոխանցումը և հաճախ այդ գործընթացն ուղեկցվում է կոնֆլիկտներով: «Հայրերի» և «որդիների» միջև կոնֆլիկտները կարելի է դիտարկել որպես մի սերնդից մյուսին մշակութային արժեքների փոխանցման գործընթացի առանձնահատկություն: Կոնֆլիկտները, որպես տարբեր սերունդների տարաձայնության արտահայտման ձև, գրեթե միշտ գոյություն ունեն, սակայն պրոբլեմների բովանդակությունն ունի հատուկ, կոնկրետ պատմական բնույթ:

Սերունդների հարաբերություններում հակամարտությունը խորանում է հատկապես անցումային ժամանակաշրջաններում՝ փոխակերպվող հասարակությունների մեջ: Կոնֆլիկտների տևողությունը կախված է կատարվող պատմական փոփոխությունների կարևորությունից կամ բարեփոխումների արագությունից: Հասարակության մեջ կատարվող կտրուկ փոփոխություններն առաջաց-

³⁴³ *Օրտեգա-ի-Գասետ Խ.* Востание масс//Эстетика.Философия культуры. М.1991г. с.482.

³⁴⁴ *Օրտեգա-ի-Գասետ Խ.* Востание масс//Эстетика.Философия культуры. М.1991г. с.482

նում են տրավմատիկ էֆեկտ, ինչն էլ ավելի է խորացնում հակասությունները միջսերնդային հարաբերություններում:

Սերունդների միջև գոյություն ունեցող ներդաշնակությունը կամ հակամարտությունը կախված է նաև արժեքային կողմնորոշումների համատեղելիությունից, «հայրերի» և «որդիների» կենսագործունեության հիմնական նորմերից, երիտասարդ սերնդի համարժեք սոցիալականացումից, ավագ սերնդի հետ ունեցած բարենպաստ փոխհարաբերությունների պայմաններից, տարիքային սոցիալական ստատուսի պահանջներին անձի համապատասխանությունից, սոցիալական դերերի սոցիալականացման աստիճանից:

Սերունդների փոխհարաբերությունների սոցիոլոգիական բնութագիրը յուրովի ներկայացրել է ամերիկյան սոցիոլոգ Մ.Միդը: Մարդկության պատմության մեջ նա տարբերակում էր միջսերնդային հարաբերությունների մշակույթի երեք տիպ. պոստֆիգուրատիվ, կոֆիգուրատիվ և պրեֆիգուրատիվ: Հստ Միդի պոստֆիգուրատիվ հարաբերություններին բնորոշ է կողմնորոշումը դեպի ավանդույթներ, դեպի նախնիների ունեցած փորձը: Նորարարությունը այս դեպքում դժվարությամբ է ճանապարհ հարթում, զարգացման գործընթացը դանդաղ է ընթանում և տարիքային խմբերի միջև հարաբերությունները խիստ կանոնակարգված են:

Կոֆիգուրատիվ հարաբերությունները ձևավորվում են ինդուստրիալ հասարակության մեջ տեխնիկական և սոցիալական առաջընթացի արագ տեմպերի արդյունքում, երբ երիտասարդները և մեծահասակները կողմնորոշված են դեպի շարժվող, զարգացող այժմեականություն: Նմանատիպ հարաբերություններում դաստիարակության գործընթացում մեծանում է հասակակիցների ազդեցությունը:

Պրեֆիգուրատիվ հարաբերությունների պայմաններում գերակշռող է դառնում կողմնորոշումն ապագայի հանդեպ: Անցած փորձն արդեն ոչ միայն բավարար չէ, այլ նույնիսկ կարող է վնասակար լինել: Այս դեպքում մեծահասակները նույնպես սովորում են, բայց արդեն երիտասարդներից: Դրա արդյունքում մեծահասակների մոտ ամրագրված կարծրատիպերի խարխլումը կարող է հիվանդագին լինել, ինչն էլ հաճախ դառնում է միջսերնդային կոնֆլիկտների պատճառ: Մշակույթի խորքային շերտերը, ավանդույթները ձևավորվում են հազարամյակների ընթացքում և դրանք հնանում, կորցնում են արդիականությունը շատ ավելի դանդաղ, քան նորարարարությունները գիտության, տեխնիկայի և ինֆորմատիկայի բնագավառում:

Այսպիսով, միջսերնդային հարաբերությունների բովանդակությունը չի կարելի հանգեցնել «ոչ բացարձակ բարեփոխումների» և «ոչ էլ բացարձակ խզման», քանի որ նման մոտեցումները կհանգեցնեն սոցիալական աղետի: Խընդիրը վերաբերում է սերունդների փոխհարաբերությունների ներդաշնակության ձևավորմանը՝ ընդհատության և անընդհատության գործընթացի միասնության մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Маркс К., Энгельс Ф., *Соч Т.3*, М. 1955г с. 44-45
2. Ортега-и-Гассет Х., *Восстание масс* // Эстетика. Философия культуры. М. 1991г., с. 482

3. Ананьев Б.Г., *Человек как предмет познания*. М. 1968г.
4. Блюмкин В.А., *Мир моральных ценностей*. М.1981г.
5. Бушелева Б.В., *Моральная ориентация и ее место в структуре социальной активности*. М. 1988г.
6. Воловик В.И., *Премственность поколений*. М.1973г.
7. Дюркгейм Э.О., *Разделение общественного труда*. Метод социологии. М. 1991г.
8. Елютина М.Э., *Геронтологическое направление в структуре человеческого бытия*. Саратов. 1999г.
9. Еремин Ю.В., *Миф о конфликте поколений*. М.1973г.
10. Кон И.С., *Социология личности*. М. 1967г.
11. Кон И.С., *Студенческие волнения и теория <<конфликта поколений>>* // США. Экономика. Политика. Идеология. N3 1971г.
12. Трофимова Т.А., *Проблема взаимоотношения поколений*. Тезисы докладов. Тюмень. 2000г.
13. Чупров В.И., *Молодое поколение 90-х: угроза или надежда?* //Российский обозреватель. N4 М.1996г.
14. Шопенгауэр А., *Свобода воли и нравственность*. М.1992г.

Асмик Хачатурян – Поколения как субъекты общественной жизни. – В статье понятие «поколение» проанализируется, как субъект общественной жизни. Различные подходы этого понятия представлены с этиологических, социологических и философских точек зрения восприятия. Роль поколения важна тем, что они являются важными информационными силами развития общества. Через поколения передаются культурные, нравственные ценности, что является основой социализации подрастающего поколения.

Hasmik Khachaturyan – Generations as subjects of our social life. – In the article the conception of «generation» as a subject of public life is analysed. From the etymological, sociological and philosophical point of view, different approaches of the perception of that conception is represented. The role of generation is so important that they are information important forces of public development. Through the generation, the transmission of cultural, moral values are realized which are the basis of the social activity of the young generation.

1960-80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ԴԻԶԱՅՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

ԼԻԼԻԹ ՄԵԼԻՔՅԱՆ

20-րդ դարի երկրորդ կեսին, Խորհրդային հասարակարգի պայմաններում, սպառողական արժեքը ձևավորվում էր որպես լրացուցիչ ապրանքային արժեք, իսկ դիզայնը՝ լինելով առարկայական միջավայրի տեսողական և ֆունկցիոնալ հատկությունների ձևավորման միջոց, դարձել էր մարդուն շրջապատող միջավայրի, արդյունաբերական արտադրանքի և առարկայական աշխարհի նախագծման նոր և հիմնական բաղադրիչ:

Արդեն 1960-ական թվականներին Հայաստանում ևս դիզայնը, մասնավորապես գեղարվեստական նախագծումը, սկսեց կապվել ինչպես տնտեսության, այնպես էլ այդ համակարգին մարդու կյանքի և գործունեության համար արտադրության միջոցներով ստեղծվող ներդաշնակ առարկայական միջավայրի ձևավորման սոցիալ-մշակութային, տեխնիկական և գեղագիտական գործընթացների հետ:

1959թ. տեղի էր ունեցել «Արդյունաբերական դիզայնի կազմակերպությունների միջազգային խորհրդի» (ICSID) առաջին գլխավոր համաժողովը, որտեղ հիմնական միջազգային եզրույթ էր ընդունվել դիզայնը (design): ICSID խորհրդի անդամ էր դարձել նաև ԽՍՀՄ-ը, որտեղ 1960-ական թվականների սկզբից սկսեց ձևավորվել գեղարվեստական նախագծման կազմակերպման պետական համակարգ: Դիզայնի և գեղարվեստական գործունեություն սկսեցին իրականացնել հատուկ գեղարվեստ-կոնստրուկտորական բյուրոներ ունեցող կազմակերպությունները:

Հայաստանը, լինելով ԽՍՀՄ հանրապետությունների շարքում արվեստի, մշակույթի, արդյունաբերության, գեղարվեստական նախագծման առաջավոր դիրքերում, չէր կարող անմասն մնալ այս գործընթացներից: ԽՍՀՄ-ում ստեղծվել էր Տեխնիկական գեղագիտության համամիութենական գիտահետազոտական ինստիտուտը, որը համակարգում էր ողջ երկրում այդ բնագավառի աշխատանքները և պատահական էլ չէր, որ առաջիններից մեկը՝ 1963թ. այդ ինստիտուտի մասնաճյուղ բացվեց Երևանում: Այն անմիջապես սկսեց ուսումնասիրել և համակարգել Հայաստանում դիզայնի, տեխնիկական գեղագիտության ձևավորման օրինաչափությունները, սկզբունքներն ու եղանակները, գեղանկարիչ նախագծողի (դիզայների) մասնագիտական ստեղծագործության և վարպետության զարգացման հիմնական գործընթացները:

Փաստորեն, 20-րդ դարի երկրորդ կեսին դիզայնը սկսեց ուրույն տեղ գրավել Հայաստանի մշակութային համակարգում: Մենք գործնականում ուսումնասիրել ենք 1960-80-ական թվականների հայկական դիզայնի ձևավորման ու զարգացման գործընթացները, տվել նրա հասարակական գործառնության վերլուծությունը խորհրդային համակարգում: Այսօր կարևոր է ներկայացնել դիզայնի՝ որպես գեղարվեստանախագծային գործունեության իրականացման առանձնահա-

տուկ ձևի, կազմակերպական կառուցվածքը 1960-80-ական թվականներին, որոշարկել դիզայնի գործունեության ոլորտի հանրագումարային արդյունքը՝ զանգվածային սպառման արտադրանքի սպառողական արժեքը: Ակնհայտ էր, որ սպառողական արժեքի դրսևորման բազմազանությունը Խորհրդային Հայաստանի մշակույթի տվյալ համակարգում նպաստում էր դիզայնի գործառնության զանգվածային գիտակցության համընդհանրացմանը, որպես բարձրագույն արժեք, այդ առանձնահատուկ մշակույթի շրջանակներում, կենսունակորեն ձևավորում սպառողական կատարելակերպը: Հայաստանում ձևավորվեցին դիզայնի հեղինակային տեսությունները, որոնք որոշակի դեր խաղացին դիզայներական արհեստավարժ գաղափարաբանության կայացման, այդ գաղափարաբանության ըստ դիզայնի իրական շերտավորման տարանջատման գործում: Այս երևույթներին գնահատական է տրվել, հաշվի առնելով դիզայնի արդյունքի գեղագիտական նշանակության կարևորումը՝ նրա կիրառական նշանակությունների համատեքստում՝ ստեղծագործությունների գնահատման տիրույթում հակադրելով արևմտյան դիզայնը մշակութային հասարակական մեխանիզմների տարրերի հարաբերակցությանը, գեղարվեստական արհեստավարժ ձևատեսությունների ու միջոցների փոխառությունը:

1960-80-ական թվականների հայկական դիզայնի հակիրճ բնութագիրը տալու նպատակով, հարկ է ներկայացնել, թե այդ աշխատանքի արդյունքն ինչպես է ներգործել Հայաստանում գեղարվեստանախագծային համանման գործունեության զարգացման հարցի առաջադրման վրա:

«Գեղարվեստական նախագծման» և «տեխնիկական գեղագիտության» զարգացման նախնական փուլում մեր երկրում բավականաչափ հստակությամբ յուրացված էր միայն «դիզայնի» հասարակական պատվերի ձևավորումը: Առաջնային էր մնում հստակ չափանիշների մշակումը, որի արդյունքում հայրենական կենցաղային (արհեստագործական) արտադրության որակը (նաև գեղագիտական) կհամապատասխանեցվեր միջազգային չափորոշիչներին: Այս պայմաններում միանգամայն բնական էր արևմտյան դիզայնի փորձին անդրադարձը, առավել ևս, որ արտադրանքի՝ տվյալ փուլում արդիական նշանակություն ունեցող չափորոշիչները ստեղծվել էին արևմտյան արտադրության, արևմտյան դիզայնի ազդեցության տակ: Սկզբնական շրջանում, դիզայնի տեսանկյունից, հայրենական և արտասահմանյան նմուշօրինակների առանձին բնութագրիչների համեմատությունն ու հակադրումը, իսկ հայրենական արտադրանքի հետ հարաբերակցության մեջ այդ հակադրության բացասական արդյունքն էական խթանիչ հանդիսացան հոգուտ գեղարվեստական նախագծման եղանակներն արդյունաբերական արտադրության մեջ ներդնելուն:

Համեմատության այդ բացասական բնութագիրը, անկասկած, առաջին խթանի իր դերը խաղաց դիզայնի մասին անորոշ պատկերացումները գեղարվեստական անհրաժեշտ նախագծման որոշակի տեսության վերածելու գործում:

Վերլուծելով Հայաստանում դիզայնի կայացման և զարգացման ընթացքը 20-րդ դարի երկրորդ կեսին, կարելի է առավելագույնս հակիրճ բնութագրել հայկական դիզայնի մասին հանրագումարային պատկերացումները, որոնք այսօր էլ ներառված են գեղարվեստանախագծային արդի գործունեության մեջ: Ելնելով վերոշարադրյալից կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

1. Հայկական դիզայնը 1960-80-ական թվականներին կենսունակ զարգացում է ապրել և ստեղծել արդյունաբերական արտադրության որակի դասական

նմուշօրինակներ: Հետևապես, հայկական դիզայնի կողմից մշակված արհեստավարժ մեթոդների ու միջոցների յուրացումը հայրենի գեղարվեստական նախագծման համար առաջնահերթ խնդիր էր:

2. Հայկական դիզայնը կայացել է խիստ կանոնակարգված տնտեսական հարաբերությունների զարգացման տվյալ փուլին հատուկ պայմաններում: Հայրենական և արտասահմանյան արտադրության նպատակները բավականաչափ տարբեր էին, հետևապես նաև Հայաստանում գեղարվեստական նախագծման սկզբունքները պետք է, որ տարբերվեին արևմտյան դիզայնի սկզբունքներից:

3. Ակնհայտորեն նշված դրույթների միջև հակասությունը փոփոխական էր, սակայն դրա համար հարկ էր, որ զարգանալով դիզայնի հայրենական գործունեությունը և դիզայնը, իսկ դա հնարավոր էր միայն դիզայնի որոշակի հանրագումարային արտադրանքի առկայության դեպքում: Քանի դեռ այդ խնդիրը լուծված չէր, երկու համոզմունքների միջև հակասությունը լուծվում էր յուրատեսակ կերպով, որից ելնելով՝ հարկ եղավ արևմտյան դիզայնի մեջ տարրորոշել առաջընթացային «ճշմարիտ» և հակազդումային դիզայնը՝ սթայլինգը (stayling):

4. Կամընտրական այդ տեսության ներմուծումն առանց դիզայնի որոշարկման, ամբողջության մեջ հակասությունը լուծում էր միայն արտաքնապես, իսկ իրականում, խորացնում էր այն թույլ տալով ձևականորեն իրականացնել արևմտյան դիզայնի նվաճումների «քննադատական յուրացումը»: Անկասկած, նման ձևական միջոցի անբավարարությունը պետք է, որ էականորեն խանգարեր գործընթացին, իսկ առաջընթացային և ռճային դիզայնի միջև սահմանն այն աստիճան չէր համապատասխանում դիզայնի ծառայության ներքին իրական տարանջատումների դրույթներին, որ «վատ» և «լավ» դիզայնի տարանջատման ոլորտում հնարավոր էր դրսևորել ամենաազատական անհատական մոտեցում³⁴⁵:

5. Այսօր, երբ արդեն պարզ է գեղարվեստանախագծային գործունեության և դիզայնի՝ որպես տվյալ տնտեսական հարաբերության մեխանիզմի, տարրերի միջև տարբերությունը, ակնհայտ է դառնում, որ արևմտյան դիզայնի կազմակերպչական ցանկացած ձևի ուղղակի տեղափոխումը (ներդրումը) խորհրդային պայմաններում, առանց ամբողջական դիզայնի հետ նրա փոխադարձ կապի բոլոր ձևերի ամբողջական վերլուծության, անհնար էր: Դիզայնի հայրենական կրթության ոլորտն արևմտյան դիզայնի բնագավառում տարաբնույթ կապերի ամբողջության մեջ ամրակալվում էր դիզայնի ընդհանրական համակարգում: Ակնհայտ էր, որ «ակադեմիական» դիզայնի ու դիզայնի իրական ծառայության միջև գոյություն ունեցող խզումը (բեկումը), գործունեության մասին պատկերացումների և գործունեության ձևերի անհամապատասխանությունները չէին կարող նմուշօրինակ հանդիսանալ մեր երկրում գեղարվեստանախագծային կրթության կազմակերպման համար, չնայած արևմտյան դիզայնի և գեղարվեստական նախագծման զարգացման մասին գիտելիքների խորացման ուսումնասիրությունը Հայաստանում ցույց է տալիս գեղարվեստական նախագծման անհրաժեշտ համակարգի մասին պատկերացումների անընդհատ հարստացման (համալրման) միտումը:

Նման համակարգի առաջին ընդհանրական տեսաբանական ուրվագիծը տրվել է Կ. Մ. Կանստրի «Գեղեցկություն և օգտակարություն» գրքում³⁴⁶: Պարզ է,

³⁴⁵ Сту Дизайн в системе культуры. Тезисы конференций, совещаний. Москва, ВНИИТЭ, 1982, с. 29:

³⁴⁶ Сту **К.М. Кавтор**. Красота и польза. Социологические вопросы материально-художественной культуры. Москва, "Искусство", 1967:

որ այդ ուրվագծային նախագիծը կգարգանար, ինչպես նաև միաժամանակ կձևավորվեին և կձևակերպվեին այլ պատկերացումներ, այլ նախագծեր: Ակընհայտ է նաև, որ գեղարվեստա-նախագծային գործունեության և նրա ձևերի զարգացման համար խոչընդոտ կհանդիսանար հնարավոր նախագծերից մեկի միակ ճշմարտացիության հանիրավի արագացված ճանաչումն ի վնաս խնդրի առաջադրման այլ հնարավորությունների: Անկասկած, ոչ միայն այն, որ անհրաժեշտ էր գործունեության համակարգի բազմաթիվ նախագծերի միաժամանակյա և զուգահեռական զարգացում, այլ նաև այն, որ անհրաժեշտություն էր դրանց զուգահեռաբար իրականացումը գոյակցման փորձառարական տարբեր ձևերի և գեղարվեստական նախագծման ինքնաիմաստավորման մեջ:

Խոսելով Հայաստանում 1960-80-ական թվականներին գեղարվեստական նախագծման համակարգի յուրահատուկ բնույթի մասին արևմտյան դիզայնի հետ հարաբերակցության մեջ, հարկ է միաժամանակ հաշվի առնել այն հանգամանքը, որ դիզայնական գործունեության սպասարկման որոշակի բնութագրերը, որոշակի ժամանակահատվածում, անկասկած պետք է իրենց համանմանությունն ունենային խորհրդային պայմաններում: Չենք կարող հաշվի չառնել նաև այն, որ սպառումը ոչ միայն հասարակության վերարտադրության անհրաժեշտ տարր էր հանդիսանում, այլև իմաստավորվում էր որպես սպառում, դրանով իսկ ձեռք բերելով առանձնահատուկ նշանակություն: Հասարակական հարաբերությունների ողջ հանրագումարը որոշարկող պահանջունքների նորմի և սպառման արդիական նորմի միջև ճեղքվածքի առկայության գիտակցումը ոչ միայն արագացրեց արտադրության զարգացումն անհատական սպառման միջոցով, այլև կենտրոնացված ուշադրություն առաջացրեց առհասարակ սպառման խնդիրների նկատմամբ: Տվյալ հասարակության անդամի նյութական և մշակութային խնդիրների (իրենց աճող բարդությամբ և տարբերակվածությամբ) բավարարման գիտակցումը թույլ էր տալիս ենթադրել, որ գեղարվեստական նախագծման համակարգի ընդհանրացված արտադրանքը հայկական դիզայնի ընդհանրական արտադրանքի որոշարկմանը համապատասխան, կարող էր լինել նոր սպառողական արժեքի ստեղծումը: Այդ դեպքում, բնականաբար, գեղարվեստական նախագծման համակարգի արտադրանքի որոշարկումը պահանջում էր նրա որակական փոփոխություն: Խոսքը վերաբերում է տվյալ ժամանակահատվածի հիմնախնդրային հարցին, երբ պետք էր հաշվի նստել ոչ միայն սպառողական արժեքի դերի, այլև նրա լրացուցիչ ապրանքային արժեքի ձևի հետ՝ կախված երկրի տնտեսության ապրանքային բնույթից: Սակայն, կանգ առնելով դիզայնի ընդհանրական արտադրանքի որոշարկման վրա, որոշակի սահմանների մեջ պետք է ներկայացնել նշված ժամանակահատվածում սպառողական արժեքի բնույթն իր նշանակությունների, դրսևորումների, հստակության մեջ: Երկրում գոյություն ունեցող հարաբերությունների առկա համակարգը, որում բացակայում էր տնտեսական կարգավիճակի մակարդակների կտրուկ տարբերակվածությունը, թույլ չէր տալիս ձևավորել սպառողական ընտրախավ՝ որպես յուրահատուկ շերտ, էականորեն իրար էին մոտենում նյութական ապահովվածության մակարդակները, բացակայում էին արհեստական հասարակական կարգավիճակային հարաբերությունները, որի հետևանքով սպառողական արժեքը չէր կարող ձեռք բերել յուրահատուկ խորհրդանշական նշանակություն:

Միևնույն ժամանակ, հարկ է հաշվի առնել, որ արտահանման աճող պահանջները, որոնք մշակվել էին արևմտյան մշակույթի կողմից հասարակական ո-

րոշակի համատեքստի շրջանակներում, լրացուցիչ ապրանքային արժեքների մրցակցության պայմաններում նկարիչ-նախագծողներին ստիպում էին արևմտյան դիզայնի, նրա անընդհատելի իմաստավորման իմացություն և «հակառճի» ու «ոճի» տրամաբանությամբ աշխատելու ունակություն:

Հայ առաջատար նկարիչ-դիզայներները, իրենց ողջ առերևույթ ազատությամբ, որը երաշխավորված էր ազատ դիզայների կարգավիճակով, իրենց գործունեության մեջ խստորեն սահմանափակված էին անկախ դիզայնի ծառայության գոյության պայմաններով, որոնք ստեղծագործական գործունեության մեջ կաշկանդված էին գրեթե անխզելի ինքնասահմանափակմամբ: Նրանք կաշկանդված էին զանգվածային սպառման արտադրանքի առաջատար, կարգավիճակային նշանակությունների արդեն իսկ արհեստական շեշտադրմամբ, որոնք ներգրավված էին «գերհարմարավետության քաղաքակրթության» բնութագրական հատկանիշների մեջ:

Лилит Меликян – *Художественно-технический характер армянского дизайна на 1960-80-х годов.* – В статье представлены процессы формирования и развития дизайна в Армении в 60-80 гг. XX века, а также его особое место в системе культуры Армении. В качестве средства формирования визуальных и функциональных свойств предметной среды дан анализ процесса становления дизайна в Армении в этот период и его влияния на окружающую среду человека, а также ход его превращения в новый и основной элемент проектирования предметного мира и промышленной продукции.

Обосновано, что в Армении во второй половине XX века дизайн, в частности художественное проектирование, начали связывать с социально-культурными, техническими и эстетическими процессами формирования экономики, а также гармоничной этой системе предметной среды, создаваемой средствами производства для обеспечения жизнедеятельности человека. Коротко охарактеризованы обобщенные представления об армянском дизайне, которые и сегодня включены в современную художественно-проектировочную деятельность.

Lilit Melikyan – *Artistic technical essence of the Armenian design of 1960-1980s.* – Article presents the processes of formation and development of design in Armenia in 1960-1980s and its unique place in the cultural system of Armenia. As a means of formation of the visual and functional attributes of the subjective environment, the analysis of the process of establishment of design in Armenia and its influence on the person's surrounding, as well as analysis of process of establishment of the new and main elements of projecting the industrial product and consumption articles are provided.

It is substantiated that in Armenia the design of the second half of XX century, in particular, the artistic design was linked to the economy as well as to the social-cultural, technical, and esthetic processes of formation of the harmonic consumption environment by the industrial means for the life and activity of an individual. The total notions, concerning the Armenian design, which nowadays is included in the contemporary artistic projecting activity, are briefly featured.

ԳԵՈՐԳԻ ՅԱՐԱԼՅԱՆ. ԳՐԶԻ ԵՎ ՎՐԶՆԻ ՎԱՐՊԵՏԸ

ՍԱԹԵՆԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ

Գեորգի Յարայանի ստեղծագործությունն ակնառու տեղ է զբաղեցնում ոչ միայն հայաստանաբնակ և սփյուռքահայ ծաղրանկարչության մեջ, որը տվել է այնպիսի դեմքեր, ինչպիսիք են Մերգեյ Արուստյանը, Լևոն Գենչը, Վարդան Աճեմյանը, Ալեքսանդր Սարովանը, Էդմոն Քիրազը, Զիկ Տամատյանը, այլև դարի համաշխարհային արվեստի տեսադարանի ժանրի լավագույն նմուշների կողքին, որոնց հեղինակներն են հանրահայտ վարպետներ Հերլուֆ Բիդստրոմը, Ժան Էֆֆելը, Բորիս Եֆիմովը, Դմիտրի Մոռըր, Կուկրինիկսները³⁴⁷:

Նրանց օրինակով իր արևմտաեվրոպական և ռուս ուսուցիչներից ժառանգություն ստացած լավագույնին ավելանում էր այն արժեքավորը, ինչ երիտասարդ նկարչին տալիս էր հայկական մամուլում աշխատելու փորձը՝ նպաստելով վառ ու ինքնատիպ շնորհքի զարգացմանն ու կատարելագործմանը:

Յարայանի լրագրային նկարները պատմություններ են մարդկային թուլությունների մասին, առտնին կյանքի դեպքեր և մտացածին սյուժեներ: Գծանք-կարների շարքերը և՛ կատակային են, և՛ հեզնալի-խոցող: Դրանք լուսաբանում են ոչ միայն հայ միջավայրում կատարվող իրադարձությունները, այլև անդրադառնում համամարդկային, հավերժական թեմաների: Քաղաքական թեմաների արծարծումը նկարիչը իրագործում է ծաղրանկարչական ժանրում ընդունված բազմապիսի ու բազմազան խորհրդանշանների, այլաբանական իմաստներ կրող առարկաների միջոցով (մուրձ և մանգաղ, շախմատի քարեր, սվաստիկա, գլոբուս և այլն): Այս ճանապարհով հեղինակը ջանում է հասնել իր առջև դրված հիմնական նպատակին՝ գեղարվեստորեն պատկերել իր մտահղացումը՝ կատակերգական էֆեկտ առաջացնող միջոցների (գեղարվեստական հնարքների) օգնությամբ: Այստեղ տիպաժներ չեն մշակվում, այլ յուրաքանչյուր իրադրության համար ծնվում են “անցողիկ” ֆիգուր-սիլուետներ: Հայկական մամուլում Յարայանի ձեռք բերած ունակությունները հիմք են ծառայում ընդլայնելու ժանրային ընդգրկման սահմանները: Իր ստեղծագործական գործունեության հենց սկզբից Յարայանն աշխատում էր՝ կատարելագործելով տեխնիկան, հարստացնելով սեփական արտահայտչամիջոցները:

³⁴⁷ XX դարի առաջին տասնամյակներում հումորիստական գրաֆիկան Խորհրդային Հայաստանում նոր գաղափարախոսության քաղաքական ագիտացիայի միջոցներից մեկն էր: Այն ձևավորվել ու զարգացել էր Սովետական Ռուսաստանի գրաֆիկական արվեստի փորձի հիման վրա: Սկզբնական շրջանում հայ նկարիչներն ուղենիշ էին ընտրել “Ռոստա”-ի (“Окна РОСТА”) հեռագրական գործակալության հրատարակած օրինակները, որտեղ ծաղրանկարը ագիտացիոն պլակատի բաղկացուցիչ մասն էր: “Ռոստա”-ի օրինակով 1921թ. Երևանում կազմակերպվում է “Պատուհան” (Արմենտա), որտեղ աշխատում են Հ.Կոչոյանը, Ս.Առաքելյանը, Հ. Գրիգորյանը և ուրիշներ: 1924թ. Վ.Թոթովենցի և Վ.Խոճիկի նախաձեռնությամբ Երևանում լույս են տեսնում “Շեշտ” և “Կարմիր մոծակ” երգիծական պարբերականները: 1954թ. սկսում է հրատարակվել “Ոգնի” (խմբ. Հր.Քոչար) երգիծական հանդեսը: Հայաստանի խորհրդայնացումից հետո ծաղրանկարներ են ստեղծել նկարիչներ Մ.Արուստյանը, Լ.Գենչը, Մ.Բաղդասարյանը, Ս.Արուստյանը, Վ.Աճեմյանը, Վ.Պողոպոսովը, Գ.Յարայանը և ուրիշներ:

Տաղանդաշատ վարպետի գեղարվեստական բազմակողմանի ժառանգության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում գրքի գրաֆիկան: Մեծ են խոսքի արվեստը վերակերպավորելու հնարավորությունները: Ձևավորողը բացահայտում է վերարտադրվող նյութի արտաքին ու ներքին էական գծերը, սեփական անհատականության տեսակետից տեսողականորեն վերամարմնավորում-մեկնաբանում այն ու ստեղծում մի նոր, ինքնուրույն աշխարհ:

Գեորգի Յարայանի ստեղծագործություններում հումորիստական նկարների ժանրին է պատկանում ուսուցողական հանելուկների պատկերավորումներից կազմված “Կարո՞ղ ես գտնել” (1973թ.) փոքրածավալ ժողովածուն³⁴⁸: Բրոշյուրը նախատեսված է տարրական դասարանների աշակերտների համար: Նկարիչը դիմում է փոքրիկ ընթերցողի երևակայությանը, նկարվածքի միջոցով հանելուկը մասնատում առանձին բառերի և դրանք փոխադրում պատկերային հարթություն: Այստեղ ոչ թե միտքն է նկար ստեղծում, այլ նկարն է միտք արթնացնում: Այս ճանապարհով հեղինակը ջանում է խթանել երեխայի հետաքրքրությունը, ազատում հանելուկը ավելորդ իմաստային բեռից ու դարձնում նկարը ավելի մատչելի փոքրիկ ընթերցողի համար: Նյութը վերակերպավորելիս հեղինակը պահպանել է հումորիստական գրաֆիկայի յուրատիպ ժանրային բնութագծերը: Նրկարների մեծ մասը կատարման եղանակով, ռճաճաբանական հատկանիշներով միասնական է: Նկարների պատկերման միջոցը տարբեր սեղմումով քաշված, հյուրեղ, երբ անհրաժեշտ է՝ չոր, հոծ գիծն է: Գործող անձանց շարժումներ, հագուստը պատկերված են ճշմարտացիորեն՝ մի քանի շեշտավորումներով: Զանց են առնված մանրամասները, վերցված են միայն այն գծերը, որոնք հնարավորություն են տվել ստեղծելու կերպարանք-դիմակներ (կազմվածքի, դեմքերի ուրվագծեր): Պարզ միջոցներով՝ սոսկ գծանկարով նկարիչը կարողացել է արտահայտիչ դարձնել իր մտահղացումը. հանելուկը տեղափոխել տեսողական դաշտ և ընթերցող-դիտողի մոտ առաջացնել որոշակի հետաքրքրություն:

Արվեստագետի ուրույն ձեռագրի բավականին համոզիչ դրսևորումն է 1985թ. հրատարակված ուշագրավ, այժմեական և դաստիարակչական “Համերգը սկսվեց” ժողովածուն³⁴⁹: Այն կազմված է 90 գծապատկերներից, որոնք ներկայացնում են ընտանիքում, սպասարկման ոլորտում, ժամանցի վայրերում, կին-տղամարդ հարաբերություններից բխող ծիծաղաշարժ տեսարաններ: Նկարիչը նյութը պատկերավորել է բազմապիսի կոմպոզիցիոն լուծումների, կերպարների շարժումների և նրանց էության բնորոշ հատկությունների (դիմագծերի, կազմվածքի, հագուկապի) սրման և չափազանցման ճանապարհով:

Կազմը լուծված է գրքի լավագույն ծաղրանկարով, որտեղ պատկերված է, թե ինչպես են բղավող երեխային ծնողները ստիպողաբար մոտեցնում դաշնամուրին՝ պարապելու: Գաղափարի պատկերավոր լուծումը լրացվում է “Համերգը սկսվեց” սրամիտ արտահայտությամբ: Խուսափելով կիսատոներից՝ Յարայանը նկարել է համարձակ, հյուրեղ, կոնտուրային գծերով և կոմպոզիցիան իրացրել բաց ու մուգ կոնտրաստաձևերով:

Գրքի ծաղրանկարները հիմնականում բազմաֆիգուր չեն: Դրանց բաղադրիչ մասերը ներդաշնակորեն համաձայնեցված են միմյանց հետ՝ անկախ այն

³⁴⁸ **Յարայան Գ.**, Կարո՞ղ ես գտնել. Հանելուկներ, Երևան, “Հայաստան”, 1973, 19 էջ:

³⁴⁹ **Յարայան Գ.**, Համերգը սկսվեց, Երգիծական նկարներ, Երևան, “Լույս”, 1985, 69 էջ:

բանից, թե պատկերված են կոմպոզիցիայի կենտրոնական դեմքը, գլխավոր գործող անձինք, թե աննշան մանրամասներ: Նման ձևով է լուծված հասարակական խնդիրներ լուսաբանող դպրոցի առօրյան ներկայացնող գծանկարը: Կտրուկ դարձումներով քաշված գծերի օգնությամբ պատկերված է դպրոցի բակում կատարվող իրարանցումի զվարճալի տեսարանը (աշակերտների ծեծկռտուք) և անտարբեր անցորդը, որը դեմքը փակել է թղթապանակով, ասես ոչինչ չի նկատում: Այստեղ կատակերգական էֆեկտ ստեղծելու խնդիրը լուծվում է ոչ թե կերպարների, այլ իրավիճակների շեշտադրումով: Այստեղ առկա է և՛ իրավիճակի, և՛ գործողության կոմիզմը: Նկարն ուղեկցող բառերը (“Դասերից հետո”) ներդաշնակորեն միահյուսվում է պատկերի հետ և ավելի ընկալելի դարձնում այն³⁵⁰:

Կատակերգականն անհնար է միանշանակ բնորոշել: Կատակերգականի ոլորտը լայն է և բազմազան, այն ներառում է բազում նրբերանգներ և անցումներ մեղմ հումորից և զվարճալի ընկերական շարժերից մինչև մերկացնող սատիրայի խոցող հեգնանք: Ժանրի լավագույն վարպետները տիրապետում են կատակերգականի զանազան հնարքների և նրբերանգների ամբողջ ներկայանակին:

Անդրադառնանք կատակերգական էֆեկտ ստեղծելու համար կիրառվող Գեորգի Յարայանի և Կուկրինիկսների բազմապիսի մոտեցումներին: Հայ վարպետի օրինակում ներկայացված է, թե ինչպես հասուն տարիքի անբան - “անգր-լուխ” որդին նստած է հոր ուսերին³⁵¹: Կուկրինիկսների ընտրված տարբերակում պատկերված է խորհրդային նկարիչների շքերթի ծիծաղաշարժ տեսարանը³⁵²:

Ծաղրանկարի ընկալման կարևոր գործոններից է սյուժետային իրավիճակը, որը և՛ Յարայանի, և՛ Կուկրինիկսների օրինակներում իր մեջ պարունակում է կատակերգական էֆեկտ հարուցելու որոշակի միտում: Յարայանի օրինակում գրավոր խոսքը (“Անգլուխ ձիավորը”) ծառայում է նկարվածքի իմաստը բացահայտելուն և առաջնային դեր է խաղում պատկերն ընկալելու հարցում: Մինչդեռ Կուկրինիկսների ծաղրանկարն ակնհայտորեն բացահայտում է հիմնական ասելիքը, ուստի և բացառում է պարզաբանող տեքստի առկայությունը:

XX դարի 20-ական թվականներին երևան եկավ “գրաֆիկական հումոր” (առանց խոսքի նկարներ) կոչվող ուղղությունը: Այստեղ զավեշտը բուն պատկերման, նրա պլաստիկ հատկությունների մեջ է: Դրա շնորհիվ նկարը դառնում է ավելի թեթև, արտահայտիչ, որոշ չափով ազատվում նկարագրական ֆունկցիայից, բազմախոս բացատրություններից: Նկատվում է գրաֆիկական առավելագույն պարզություն, ծայրահեղ պայմանականության ձգտում: Ձևախեղումները դառնում են առավել կտրուկ ու նպաստում դիպուկ երգիծադիմանկարների ստեղծմանը: Վերը նշված օրինակում Կուկրինիկսները հետևում են նոր՝ “գրաֆիկական հումոր” ուղղությանը:

Ծաղրանկարների հիմքում դրված է կոմիկականի գեղագիտական կատեգորիան: Ոչ միայն զվարճացնել, ուրախացնել և երգիծական արվեստի նպատակը, այլև բացահայտել հասարակական – քաղաքական երևույթների բուն էությունը: Կյանքի ճշմարտությունը ներկայացնել չափազանցության կամ գրոտեսկի պրիզմայի միջով:

³⁵⁰ Նույն տեղում, էջ 12:

³⁵¹ Նույն տեղում, էջ 24:

³⁵² Кукрыникисы об искусстве: шаржи, карикатуры, Альбом, М., “Изобразительное искусство”, 1981, стр. 86.

“Հարկավոր է այնպես օգտվել հիպերբոլի հնարքից, այնպես ծաղրել ծաղրի արժանին, որպեսզի նրա բուն էությունը դեֆորմացիայի չենթարկվի”, - գրել է ծաղրանկարիչ-արվեստաբան Դմիտրի Մոռըր³⁵³:

Բազմամարդ կոմպոզիցիաներում թեման բացահայտելու խնդիրը լիովին տեղափոխվում է տիպականացված հերոսների, նրանց փոխհարաբերությունների վրա: Համեմատենք իրար հետ թեմատիկ առնչություն ունեցող Գեորգի Յարայանի “Խանութում” և Հերլուֆ Բիդստրոմայի “Տոնավաճառ” բազմամարդ կոմպոզիցիաները: Հայ վարպետի օրինակում պատկերված է, թե ինչպես նվերների խանութի վաճառողուհու աչքի առաջ կատարվող համադասարանցիների ծեծկոտուքը տարեց տղամարդը մեկնաբանում է հետևյալ կերպ. “Նրանք վիճում են, քանի որ չեն կարողանում որոշել, թե ինչ նվեր գնեն իրենց ուսուցչուհուն մարտի ութի առթիվ”³⁵⁴: Եվրոպացի վարպետի նկարում ներկայացված են մարդկային եսասիրության, ինքնահավանության, բթամտության ծայրահեղ դրսևորումները³⁵⁵: Ժանրին համապատասխան երկու գործում էլ առկա է գերադրականը՝ սրտատուչ զգացմունքները, տուրուղմիոցը և բուռն խրախճանքը:

Յարայանը լուծում է հերոսների, նրանց տիպաժային-հոգեբանական հատկանիշների տեսողական արտացոլման հարցը: Համաձայն իր սկզբունքի, սրման և չափազանցման ճանապարհով տարբեր չափի ձևախեղումների է ենթարկել դրանց դիմաձևերը, կազմվածքը, վարքագիծը, հագուկապը: Այդ ամենը նա կատարել է ըստ իր հախուռն բնավորության, ըստ իր ինքնարտահայտման էքսպրեսիվ ու պոթոկուն բնույթի: Թեև բացասական հերոսների նկատմամբ իր վերաբերմունքը նկարիչն արտահայտել է վճռական ու կտրուկ, սակայն դրանց բնորոշ գծերի սրացումը չի հասցրել ֆանտաստիկ չափազանցման՝ գրոտեսկի:

Բիդստրոմայի արվեստում մարդկային արատները խարազանվում են բարեկիրթ եվրոպացու տեսանկյունից: Սրընթաց և զգացմունքային գծով ստեղծված կոմպոզիցիան բացահայտում է ոչ միայն հեղինակի ձևաբանական, ոճական հատկանիշների յուրահատկությունը, տիպականացված հերոսներ ստեղծելու կարողությունը, այլև մարդկային հոգեբանության խորը իմացությունը՝ շաղախված կենսուրախ ու սուր ազգային հումորով:

Չնայած Յարայանը դանիացի վարպետի նման կերպարները, առարկաներն ու երևույթները դիտել է կենցաղային, կատակերգական տեսակետից, նա նյութը մեկնաբանել ու պատկերավորել է ոչ միայն ծիծաղի, այլև զայրույթի և թախծի միահյուսման ճանապարհով:

Յարայանի հումորիստական նկարը ոճով ու խնդիրներով ընդհանուր առմամբ միասնական “բարքերի ծաղրանկար” է: Ընտրված մոտիվների նկատմամբ հեղինակը չունի ծաղրական վերաբերմունք, սակայն ակնառու է դրանց նկատմամբ նկարչի անհանդուրժող, բացասական վերաբերմունքը:

Նկարիչ ու արվեստաբան Վլադիմիր Ֆավորսկին այս կապակցությամբ գրել է. “Երգիծանկարիչը պատկերում է ոչ թե իրականությունը, այլ իր վերաբերմունքը դրա նկատմամբ, ընդ որում, ժանրի առանձնահատկության շնորհիվ՝ վերաբերմունքը կտրուկ բացասական է”³⁵⁶:

³⁵³ *Ефимов Б.*, Рассказы о художниках-сатириках, М., Советский художник, 1963, стр.32

³⁵⁴ *Յարայան Գ.*, Համերգը սկսվեց, Երգիծական նկարներ, էջ 9:

³⁵⁵ *Бидструп Х.*, Избранное. Политическая карикатура. Юмористические рисунки. Путевые зарисовки, М., “Искусство”, 1976, стр. 245.

³⁵⁶ *Фаворский В.*, Об искусстве, о книге, о гравюре, М., “Книга”, 1986, стр. 198.

Համեմատենք Գեորգի Յարայանի և XX դարի առաջին կեսի ծաղրանկարի սապարեզում ստեղծագործող արևմտաեվրոպական և ռուս վարպետներ Ժան Էֆֆելի, Լուի Միտելբերգի, Դմիտրի Մոորի, Բորիս Եֆիմովի և Նիկոլայ Ռադլովի բազմապիսի ոճաձևաբանական հատկանիշները և տարաբնույթ տեսողական կերպերը:

Ժան Էֆֆելը մշակել է ուրվագծային նկարի տեսակ, միանգամայն հարթ, սահուն գծի ու թղթի սպիտակ հարթության անթերի ներդաշնակությամբ: Նրան գրավում է ոչ այնքան բնավորության, որքան իրավիճակի կոմիզմը: Մուլտիպլիկացիոն կինոյի նման զվարճալի ու արտահայտիչ ֆիգուրները շարժվում են, միահյուսվում, նոր կոմպոզիցիաներ կազմում: Նույն տարրերի նոր, անսպասելի զուգակցությունը՝ ահա Էֆֆելի սկզբունքներից մեկը³⁵⁷:

XX դարի երկրորդ կեսի հումորիստական նկարն աչքի է ընկնում տարասեռությամբ, ոչ միայն ոճի, այլև կոմիկականի ըմբռնման միասնության բացակայությամբ: Այստեղ իրար հետ կողք-կողքի են ամենահակասական, ասես միմյանց բացառող միտումներ. կոպիտ ֆարսայինը և չափազանցված նրբագեղությունը, թեթև հեգնանքն ու մռայլ քմծիծաղը, բարությունն ու թունոտությունը: Նկարիչների հերոսն է դառնում ազգային, սեռական նշաններ չունեցող ինչ-որ մարդուկ, որը գալիս է փոխարինելու տիպաժներն ու երգիծական դիմակները: Միտում է նկատվում դրանք բոլորը բերել մարդուկի ընդհանուր հայտարարի, որն ինքն է խաղում մարդկային կատակերգության բոլոր դերերը: Այդ շրջանում գրեթե յուրաքանչյուր ծաղրանկարիչ ստեղծում է մարդուկի սեփական տարբերակը: Սեփական մարդուկի օրինակ է մշակել նաև Լուի Միտելբերգը³⁵⁸: Նրա մոտ առարկա-ձևեր կառուցողը վերից վար գծված կարճ գրչախազերն են, որոնց խտացումն ու նոսրացումը ծավալ է հաղորդում ֆիգուրներին: Հեղինակը ստեղծում է նույն մարդու նոր կերպար՝ կախված այդ պահին նրա հանդեպ իր վերաբերմունքից: Միննույն հերոսը ներկայանում է մերթ խորամանկ, մերթ խղճուկ, մերթ չար, մերթ կեղծ ժպտացող և այլն: Սա բնավորություն է, և ոչ թե դիմակ:

Դմիտրի Մոորը միանգամայն այլ գեղագիտական կողմնորոշումների նկարիչ է: Նրա արվեստին բնորոշ են գծերի ճշտված հարաբերակցությունը (սակայն ոչ գծագրման չորություն), սև ու սպիտակ բծերի խիստ զուգորդումը³⁵⁹:

Բորիս Եֆիմովի ծաղրանկարներին բնորոշ է մտքի անսովոր հստակությունը, որն արտահայտվում է բավական զուսպ, իր պարզությամբ համոզիչ գրաֆիկական լեզվով: Դրանք գուրկ են երկրորդական, քիչ էական մանրամասներից, դրանցում, որպես կանոն, բացակայում է ինտերիերը, բնանկարը, ընդհանրապես բարդ ֆոնը: Ժլատ արտահայտչամիջոցների ճշգրիտ ընտրությամբ ու վարպետ օգտագործմամբ Եֆիմովը հասնում է նկարի մեծ համոզչության: Ընթերցողի ամբողջ ուշադրությունը նկարիչը սևեռում է նշանառության տակ վերցրած ֆիգուրի կամ ֆիգուրների վրա: Այս առումով Յարայանի և Եֆիմովի մոտեցումները համընկնում են³⁶⁰:

Նիկոլայ Ռադլովը նուրբ գունատոնային անցումներով ու տեղ-տեղ չներկված սպիտակ “անցքերով” մակերեսի վրա գրչածայրերով պատկերում է ֆիգուր-

³⁵⁷ *Эффель Ж.*, Избранное, М., “Искусство”, 1983, 176 стр.

³⁵⁸ *Mittelberg L.*, Das Vierte Reich von Mittelberg, Berlin, Eulenspiegel verlag, 1971, 33 p., ill.

³⁵⁹ *Ефимов Б.*, Рассказы о художниках-сатириках, М., Советский художник, 1963, стр. 86.

³⁶⁰ *Кукрыниксы.*, Статьи о творчестве художников и репродукции с их произведений, М., “Советский художник”, 1955, 35 стр.

ներ և առարկաներ: Ճերմակ թղթի փոքր հատվածները ստեղծում են լուսավորության պատրանք և հարստացնում կոմպոզիցիայի ռիթմը: Գույնի և ֆիգուրների սահմանները միշտ չէ, որ համընկնում են: Սա մի հնարք է, որի միջոցով հեղինակը մի կողմից՝ շեշտադրում է մակերեսի հարթությունը, մյուս կողմից՝ դրան հաղորդում դինամիկա: Գունային հարթ հատվածների ազատ բաշխումը հանդիպում է Յարայանի շարժերում ու հաղորդում դրանց առավել արտահայտչականություն³⁶¹:

Գեորգի Յարայանի հասարակական – քաղաքական կոմպոզիցիաներում յուրաքանչյուր տիպաժ ոչ թե ընդհանրացված դիմակ է կամ մարդուկ, այլ նկարչի հիշողության մեջ ամրագրված ինչ-որ մեկի շարժ-պորտրեն՝ իրեն բնորոշող հատկություններով (կազմվածք, դեմքի արտահայտություն, շարժում, հագուկապ, մասնագիտությունն ու զբաղմունքը բացահայտող ատրիբուտներ և այլն): Այս տիպերին հեղինակը փնտրում է մասսայական դիտողին քաջաձանոթ հասարակական – քաղաքական կյանքի ոլորտում, նրանց օժտում խիստ բնորոշ, ճանաչելի գծերով: Մարդու ֆիգուրը, ձեռքազատվելով մանրամասներից, չի պարզեցվում և դառնում խորհրդանիշ՝ տառ կամ նշան, այն վերածվում է ընդհանրացված կերպար-տիպի, նկարիչը մարդակերպ սիլուետներին տեղադրում է որոշակի միջավայրում: Նա ուսումնասիրում ու վերլուծում է մարդկանց վարքուբարքը՝ զանց առնելով պատահականն ու անցողիկը, քննախույզ հայացքով նկատում միակ տիպականը և այդ ամբողջը մարմնավորում հավաքական կերպարների մեջ:

Դրանցից հնարավոր է առանձնացնել մոտ տասը (աշակերտ, երիտասարդ գույգ, գործակատար, ուսուցիչ, տարեց գույգ, հարբեցող և այլք), որոնք գրեթե նույնն են և՛ հասարակական-կենցաղային, և՛ հումորիստական թեմաներով նկարներում: Սակայն դիմախաղը, աչքերի արտահայտությունն ու ժեստերը, հագուստի և ձևավորված միջավայրի որոշ փոփոխությունը ծանոթ տիպաժներին հաղորդում են նոր երանգ: Հեղինակն իր ստեղծած բազմաթիվ տիպաժները յուրաքանչյուր դեպքում փորձում է որոշ չափով փոփոխել և համապատասխանեցնել իր ստեղծագործությունը բնորոշող “ոչ թե դիմակ, այլ բնավորություն” նշանաբանին:

Պատկերավորման այս հնարքի հաճախակի կիրառումը հիմք չի տալիս խոսելու հեղինակի ստեղծագործական երևակայության սահմանափակության կամ նրա կերպարային աղքատիկության մասին: Յարայանն ամեն անգամ գիտակցաբար և միտումնավոր վերադառնում է արդեն ծանոթ գրաֆիկական կերպարին, երբ կամենում է անցկացնել անհրաժեշտ զուգորդումներ, ընդգծել այն ընդհանուրն ու էականը, ինչը կրկնվում է տարբեր ժամանակներում և տարբեր իրավիճակներում:

Սակայն բնօրինակից անմիջականորեն աշխատելու պակասը և հրաշալի կատարելագործված նույն գրաֆիկական հնարքի իներցիան բացասաբար են անդրադառնում արվեստագետի որոշ նկարների վրա: Դա հատկապես վերաբերում է հասարակական-կենցաղային թեմաներով ծաղրանկարների դրական կերպարներին, որոնք Յարայանի մոտ հաճախ նման են միմյանց, անհատականացված չեն: Ի դեպ, ելնելով ժանրի յուրահատկությունից՝ բացասական կերպարներ-

³⁶¹ *Самойлов Л.*, Карикатура, карикатурист, читатель, М., “Знание”, 1981, стр. 44.

րը, ապա դրանց խտացումը ներկայացնող հավաքական տիպաժները շատ ավելի համոզիչ են, քան դրականները:

Այդ առիթով Օգյուստ Ռոդենը գրել է. “Արատավոր ֆիզիոնոմիայի ծամածռության, ամեն տեսակի այլանդակության, անարգանքի յուրաքանչյուր խարանի մեջ ներքին ճշմարտացիությունն ավելի կտրուկ է երևում, քան կանոնավոր ու առողջ դիմագծերում”³⁶²:

Ոճական ընդհանուր միասնականության մեջ հումորիստական գրաֆիկայի յուրաքանչյուր ժանրում (քաղաքական, հասարակական-կենցաղային ծաղրանկար, հումորիստական նկար, շարժ) Յարայանը ցուցաբերել է յուրովի մոտեցում իր գծային, ձևային, կոմպոզիցիոն ու կատարողական առանձնահատկություններով: Իր թեմատիկ ու ժանրային բազմազանությամբ հանդերձ (թեմատիկ ժողովածուներ, շարժեր, մամուլ) հասարակական-կենցաղային ծաղրանկարներում ու հումորիստական նկարներում Յարայանը նախընտրում է կիրառել կերպավորման միևնույն ձևային հնարքները:

Յարայանի արվեստի բնորոշ կողմերը ձևավորվել են քսաներորդ դարի “մոդեռն” ոճի, “գրաֆիկական հումոր” և “էքսպրեսիոնիզմ” ուղղությունների տարբեր մտածելակերպերի ու կատարման կոնկրետ եղանակների զուգորդման շնորհիվ ու հետագայում հանդես եկել բազմասպեկտ տեսողականությամբ՝ իմաստաբովանդակային, գունագծագրական, պլաստիկական ու կոմպոզիցիոն հատկանիշներով:

Յարայանական ինքնատիպ արվեստը տոգորված է մարդասիրական հայրենասիրական տրամադրությամբ, առաջադիմական գաղափարներով և այդ բարձր առաքիլությունները գեղարվեստականորեն արտահայտելու վարպետությամբ: Մնվելով ծաղրանկարչության ժանրի վարպետների արվեստից (Եֆիմով, Կուկրինիկսներ, Մոոր, Աճեմյան) տաղանդաշատ վարպետը կարողացել է ստեղծել իր լեզուն, մնալ ինքնատիպ: Տաղանդի ուժը և վառ գեղարվեստական անհատականությունը, որով աչքի է ընկնում Յարայանի արվեստը, զգալի ազդեցություն են ունեցել երիտասարդ նկարիչների ստեղծագործությունների վրա:

Сатеник Меликян – Георгий Ярялян - мастер пера и кисти. – Необычайно сильное влияние на современников и последующие поколения художников оказало творчество выдающегося карикатуриста Георгия Яряляна - талантливого художника, сатирика, блестящего шаржиста и мастера юмористического рисунка. Лейтмотив яряляновской сатиры – гневный, злой, непримиримый сарказм. Динамичный ритм в карикатурах автора является отражением его темперамента. Прибегая к самому разному гротеску, он в любой ситуации сохраняет неопровержимую убедительность, конкретность. Иллюстрации к сборникам карикатур “Концерт начался”, “Попробуй отгадай” яркое тому подтверждение. Несмотря на стилевую общность карикатур в каждом из жанров юмористической графики Ярялян проявляет особый подход. Однако невзирая на тематическое и жанровое разнообразие работ именно в общественно-социальных карикатурах и в юмористических рисунках автор предпочитает пользоваться одинаковыми изысками. Искусство Георгия Яряляна вобрало в себя совокупность стиливых особенностей “Модерна”, “Экспрессио-

³⁶² *Эсколье Р.*, Оноре Домье, М., “Искусство”, 1978, стр. 98.

низма”, “Графического юмора” и сложилось в разноплановое видение линейных, композиционных и пластических построений.

Satenik Melikyan – *Georgi Yaralyan – master of pen and brush.* – The outstanding creative painter Georgi Yaralyan – a talented artist, satirist, a brilliant caricaturist and master of humorous drawing had the unusual strong influence on contemporaries and later generations of artists. The dynamic rhythm in author drawings is a reflection of his temperament. Resorting to the most grotesque ways, he remains undeniable credibility, specificity in every situation. Illustrations for the caricature collection “Concert began”, “Try to guess” are vivid confirmation. Despite the stylistic unity of caricatures Yaralyan has a special approach in each of the genres of humorous graphics. However, despite the thematic and genre diversity work in the public and social caricatures and humorous illustrations author prefers to use the same delights. Georgi Yaralyan art has incorporated a set of stylistic features “Modernity”, “Ekspresionizm”, “Graphic humor” and formed a multi – pronged vision of linear, composite and plastic constructions.

ՌՈՒԴՈՒՖ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԻՆՔՆԱՆԿԱՐՆԵՐԸ

ՀՈՒՓՄԻՄԵ ՎԱՐԴԱՆՑԱՆ

Ճշմարտություն է, որ նկարիչը ինչ էլ նկարելու լինի, արտահայտում է նաև իրեն: Առավել ևս, եթե նկարում է ինքն իրեն ժամանակի ու տարածության մեջ՝ տվյալ պահի կամ առավել տևական իր ապրումներով, տրամադրությամբ, մտքերով ու հույզերով, շրջապատով, սեփական արտաքինով: Առհասարակ իր կյանքի, ճակատագրի, հայացքների հարափոփոխ ընթացքի դիտարկմամբ:

Համաշխարհային կերպարվեստի խոշոր ներկայացուցիչների ինքնանրկարներին ծանոթանալիս յուրովի մի ինքնակենսագրություն է ուրվագծվում: Վերլուծելով Ռեմբրանտի ինքնանկարները՝ Ֆրից Էրպելը նկատում է. «Դրանք բոլորն էլ յուրովի արտահայտում են ժամանակի և կյանքի հանդեպ իրական վերաբերմունքը, դրանց հակադրումներն ու հակասություններն արտացոլում են արդեն ավելի վաղ ճանաչված մարդկային գոյության հակասությունները և միայն ավելի ուշ դրանց մեջ մշտապես աճող ուժով հայտնվում է ըմբռնված հակամարտությունը սոցիալական կացության և միայնակ արվեստագետի անհատական ձգտումների միջև»³⁶³: Եթե Ռեմբրանտի ինքնանկարները պատկերացում են տալիս շրջապատի հանդեպ նրա վերաբերմունքի մասին (1656, 1659, 1661-ին արված «Ինքնանկարներում» և այլն), ապա Վան Գոգի տարբեր շրջանների ինքնանկարներն ուսումնասիրելով՝ կարելի է կարդալ դրանցից յուրաքանչյուրի պարունակած պատմությունը՝ հոգեբանական և ֆիզիկական առումով: Ինքնանկարներում նա «հավերժացրել է» իր կյանքի բարդությունները, հոգեկան խնդիրները, ֆիզիկական վիճակը: Առհասարակ, հոգեկան խնդիրներ ունեցող նկարիչների ինքնանկարները կարող են դիտվել որպես յուրատեսակ հոգեբանական շարադրանք:

Այդպես էլ Ռուդոլֆ Խաչատրյանը, որն իր ստեղծած դիմանկարների և, մանավանդ, ինքնանկարների միջոցով արտահայտել է թե՛ բնորոշների և թե՛ սեփական բնավորության, կենսագրության, նաև ապրած ժամանակաշրջանի նկարագիրը՝ որքան կոնկրետ-անհատական, այնպես էլ հավաքական-ընդհանրական արտացոլանքով: Ինքնանկարները դիտելիս հեշտ է նկատել, որ դրանցից յուրաքանչյուրում վավերացվել են տարիների ընթացքում նկարչի ոչ միայն արտաքինի փոփոխությունները, այլև նույնիսկ բնավորության նոր գծերի հայտնվելը: Եթե իր առաջին ինքնանկարներում մեր առջև է մեծ կյանքի շեմին կանգնած ոչ այնքան վստահ երիտասարդը, ապա տարիների ընթացքում նրա կերպարը դիտողին է ներկայանում այլևս որպես կենսափորձ ձեռք բերած, խորը մտորումներով ապրող անհատ:

Վաղ շրջանի «Ինքնանկարն» (1951) այն եզակիներից է, ուր նկարիչը նախում է դիտողին ոչ թե կիսաշրջված կամ երեք քառորդով, այլև երես առ երես: Տասնչորսամյա պատանին առաջին և միակ անգամն է այսպես պատկերել իրեն: Երիտասարդ տարիներին արված մյուս ինքնանկարներում նա արդեն դիտողին է

³⁶³ *Эрпель Ф.*, Рембрандт, Берлин, Хеншель, 1985 (без пагинации).

նետում թեք կամ կիսով չափ թեք հայացք: Եթե փորձենք 1951-ի “Ինքնանկարը” վերլուծել հոգեբանական տեսանկյունից, ապա այն կարելի է բնորոշել իբրև պատանեկան “համարձակություն”: Իսկ հետագա դիմանկարներում արդեն ակնհայտ է հեղինակի առավել սթափ ինքնաարտահայտումը՝ կապված իր ուղու դժվարությունների գիտակցման հետ: Աչքերի լարված արտահայտությունը հուշում է, որ դուրս է եկել պայքարի, ընդ որում ոչ թե մեկ այլ անձի, այլ հենց ինքն իր դեմ՝ հասկանալու, պարզելու համար, թե ի վերջո ո՞րն է իր առաքելությունն այս կյանքում: Չենք կարող վստահաբար ասել, թե ինքնանկարն ստեղծվել է վերոնշյալ խնդրի հստակ առաջադրմամբ: Ո՛չ: Պարզապես նա անաչառ խմբավորել է իրականությունը, իրեն տվյալ պահին պարուրած հոգեվիճակը, ինչպես Սոկրատեսը կասեր՝ դիմանկարի հիմնական խնդիրը նրա համար գիտակցված, թե ենթագիտակցորեն եղել է բնորդի (տվյալ դեպքում իր) հոգևոր առանձնահատկությունների արտահայտումը³⁶⁴: Այս ինքնանկարում ակնհայտ է հեղինակի պատանեկան անփորձությունը, փոքր-ինչ շփոթված նրա հայացքը դրոշմվել է ստեղծագործության մեջ: Աչքերի նույն այս արտահայտությանը մենք այլևս չենք հանդիպի նրա հետագա դիմանկարներից և ոչ մեկում՝ պատասխանի սպասող հայացք, անհանգստություն, գուցե նույնիսկ տագնապ: Այսինքն՝ զգացողություններ, որոնք ներկա են կյանք մուտք գործած պատանու մեջ, արվեստագետի, որն անցնելիք երկար ճանապարհի մեկնակետում է: Նմանատիպ հոգեվիճակ է նկարագրել արվեստաբան Յ. Նեսելշտրաունը՝ դիտելով Ալբրեխտ Դյուրերի պատանեկան ինքնանկարը՝ անչափահասի չկազմավորված, նիհարիկ մարմնում նկատելի է ինչ-որ անփորձություն. վստահաբար կարելի է ասել, որ նա դժվարություն է զգացել ձեռքի պատկերման հարցում: Փոխարենը կարողացել է ընդհանրացված հաղորդել գլխի կորագիծը, զգալ մարմինը զգեստների տակից, որսալ դեմքի հուզված արտահայտությունը³⁶⁵:

Հետաքրքիր է, թե տարբեր տարիների ինքնանկարներում նկարիչն ինչ գնահատական է տալիս իր անձին: Չէ՛ որ բացի հայելու արտացոլանքի ճշգրիտ պատկերումից, նկարիչը նաև ապրում է ինքնաճանաչողության պրոցես, երբեմն ասես պատկերելով ոչ թե իրեն, այլ մեկ այլ, երկրորդ անձի: Երկար, անդադար մի պրոցես, քանի որ անհատը մշտապես փոփոխվում է:

Մեկ տարի անց ստեղծված “Ինքնանկարում” արդեն դիտողին ներկայանում է որոշակիորեն ավելի ձևավորված անհատ: Լուսաստվերի խաղով շեղվել են դիմագծերը՝ խոշոր քիթ, փքուն, կամակոր շուրթեր: Տպավորիչ է հայացքը. թվացյալ հանգիստ, բայց, ներքին լարում, մտադրությունների պարզություն և վստահություն:

Յուրաքանչյուր հաջորդող ստեղծագործությունում նկատում են, որ արվեստագետն ավելի ու ավելի հաստատուն է իր պայքարում, գիտի, թե որն է իր ուղին արվեստում: Նա ասես կոպիում է և՛ իր բնավորությունը, և՛ նկարելաժող: Ակնհայտ է այն համարձակությունը, որն իրեն ուղեկցել է ողջ կյանքում:

Ռ. Խաչատրյանի 1954-1958 թթ. բոլոր ինքնանկարներին բնորոշ է պրպտողի հայացքը: Ճիշտ և ճիշտ այն դիմանկարների պես, որոնց բնորոշներն ապրել են նույն հոգեվիճակն անորոշ որոնումների ճանապարհին: Պարզից էլ պարզ է, որ հերոսների վերը նշված հոգեվիճակն ամենայն մանրամասնությամբ հաղորդելու

³⁶⁴ Տե՛ս. *Алпатов М.*, Очерки по истории портрета, Москва, Искусство, 1937, с. 12:

³⁶⁵ Տե՛ս. *Нессельштраус Ц.*, Рисунки Дюрера, Москва, Искусство, 1966, с. 8:

կարողությունը գալիս է նկարչի անձամբ անցած ճանապարհից, ուր նրան ևս հետապնդել են կյանքի դժվարությունները, արգելքները: Խաչատրյանի ինքնանրկարներն առավել “դիմագիտական” են³⁶⁶:

1954-ին արված երկու՝ համեմատաբար մուգ և բաց երանգներով ինքնանրկարներում Խաչատրյանը ներկայացված է նույն դիրքով՝ երեք-քառորդով շրջված դեպի դիտողը: Նմանատիպ հայացք, աչքերի արտահայտություն: Երկունս էլ ասես նույն կեցվածքի փոքր-ինչ տարբեր արտահայտությունը լինեն: Միայն թե առաջինում դեմքն ավելի լուսավորված է, ի տարբերություն երկրորդի, ուր աչքերը ստվերի քողով են պատված: Խաչատրյանն ասես փորձում է գտնել իրեն համապատասխանող դիրքը՝ դրանով “ստեղծելով” իր կերպարը: Ակնհայտ է, որ բոլոր, հատկապես վաղ շրջանի ինքնանկարներում, նկարչի մոտեցումը Խաչատրյան-բնորդին տարբեր է, տպավորություն է ստեղծվում, թե փորձարկվող այս ու այն միջոցներով նա ջանում է բացահայտել սեփական էությունը: Այսինքն՝ նկարիչը, ճիշտ է, իր արտաքինին ծանոթ է իբրև օբյեկտի, սակայն, միևնույն է, փորձելու է հասկանալ իրեն կյանքի ողջ ընթացքում ստեղծվելիք ինքնանկարների միջոցով: Երիտասարդ տարիների ինքնանկարներում Խաչատրյանը նման է այն պատանուն, որը փորձում է գտնել իր ոճը, դեմքի բնորոշ, խոսուն արտահայտությունը, դիմախաղի առանձնահատկությունները: Հատկանշական է, որ բոլոր նման գործերում նկարիչն իրեն պատկերել է արտիստիկ կեցվածքով: Ասես նա բնորոշ է հանդիսանում, իր և, իհարկե, նաև դիտողի համար, փորձելով բացահայտել սեփական անձն առավել ներկայանալի ու տպավորիչ:

Խաչատրյանը սիրում էր ինքնանկարներ անել հատկապես ստեղծագործական որևէ նոր փուլի մեկնարկին: Ինչո՞վ էր դա պայմանավորված: Հավանաբար այդ կերպ նա իր համար գոնե մոտավոր ուրվագծում էր եկող փուլի անելիքը: Պարզաբանենք. 1957-ի նրա “Ինքնադիմանկարում” մեր առջև է բոլորովին այլ մի Ռուդոլֆ Խաչատրյան: Դեպի ձախ թեքված նրա հայացքը սևեռուն է, նպատակամետ, նաև վստահ, սակայն այդ վստահությանը, համոզվածությանը միախառնվում է ինչ-որ թեթևակի երկմտանք:

Այդ թվականի մեկ այլ “Ինքնանկարում” կրկին նույն դիրքն է: Խռիվ մազերը պահված են գրակի տակ, հեղինակը տաք վերարկուով է: Ողջ դեմքը մթամած մշուշի մեջ է, անորոշ է աչքերի արտահայտությունը: Այստեղ չկան նախորդ աշխատանքների լույսը, միջավայրի պայծառությունը, հեղինակի վստահությունը: Մակայն ստեղծագործությունն այնքա՛ն խոսուն է, խորքային, որ բացահայտում է հեղինակի ոչ ուրախ հոգեվիճակի ակունքները: Առաջին պլան են մղվում արվեստագետի ներաշխարհի խորհրդավորությունը, առեղծվածությունը, հետաքրքրությունը մարդկային անկրկնելի անհատականության հանդեպ³⁶⁷:

³⁶⁶ Տե՛ս. **Васильева-Шляпина Г. Л.**, Автопортретный жанр в мировом изобразительном искусстве: // Вестник КрасГУ, серия «Гуманитарные науки», № 6, 2005, с. 90: http://library.krasu.ru/ft/ft/_articles/0089704.pdf Հեղինակը նշում է, որ ինքնանկարը մինչ հիմնական տեսակների բաժանվելը եղել է երկու տիպի, որոնցից առաջինը կարելի է անվանել <<պրոֆեսիոնալ>>, երբ կերպարն ունի բացահայտ սոցիալական ուղղվածություն, քանի որ հանդիսանում է նկարչի գործունեությունը հիշեցնող ինքնաներկայացում, իսկ երկրորդն առավել անձնական է, <<դիմագիտական>>, երբ նկարիչը ներկայացված է ոչ այնքան ստեղծագործության պահին, որքան իբրև անհատ, որը գնում է ինքն իրեն ասես հայելիում, և այդժամ կերպարը ձգտում է դեպի առավել հոգեբանականության:

³⁶⁷ Այս մասին առավել մանրամասն տե՛ս. **Коя И.**, В поисках себя, Москва, Издательство политической литературы, 1984, с. 38: Իր աշխատությունում Ի. Կոնը նշում է, որ կերպարվեստում դիմանկարի առաջացումը կապված է նախ և առաջ մարդկային անհատականության, նրա բնավորության, մարդանհատի հանդեպ հետաքրքրության առաջացմամբ:

Մեր թվարկած բոլոր ինքնանկարներում Ռ. Խաչատրյանը ներկայանում է խոշոր պլանով՝ մինչև կուրծքը: Հետագա ստեղծագործություններն առավել ընդլայնել են իրենց սահմանները թե՛ ստեղծագործական ազատության և թե՛ զուտ ֆիզիկական չափերի առումով: Նմանատիպ “գարգացումները” հազվադեպ չեն համաշխարհային կերպարվեստում: Օրինակ՝ Գ. Վասիլյևա-Շլյապինան նշում է, որ <<Վան Դելի ամենավաղ խոշորապլան ինքնանկարում պատկերված է տասնը-հինգամյա դեռահասը, որին հետագայում փոխարինում են չափերով աճած պատկերումները, որոնք արտահայտում են դասականի հիմնավոր ինքնավստահությունն ու դիմանկարչի հասունացած վարպետությունը>>³⁶⁸:

1958 թ. և հաջորդ շրջանի բոլոր ինքնանկարներում Խաչատրյանը ներկայանում է ձախ կիսադեմով, մինչև ծնկները, հայացքն ավելի սևեռում է, զենքի պես ձեռքում է վրձինը: Ընտրած ուղիով հաստատ քայլելու, առաջ ընթանալու համոզվածությունն է տիրում այդտեղ: Ի դեպ, 1957 և 1958 թթ. ինքնանկարները զարմանալի նմանություն են ունեն Հայաստանի Ազգային պատկերասրահի ֆոնդերում պահվող “Նկարչի հոր դիմանկարին” (1956): Ածխով և սանգինայով արված այս աշխատանքը հիշեցնում է որդու ինքնանկարները թե՛ կատարման եղանակով և թե՛ ակնհայտ արտաքին նմանությամբ (աչքեր, քիթ, բերան, այտուկներ)...

Եվ այսպես, 1958-ի “Ինքնանկարում” կա որոշակի հանգուցալուծում, որոշակի խնդիր, որը նկարիչն առաջադրել է ինքն իրեն: Այստեղ ևս նա վերարկուով է, հաստ շարֆով: Ինչո՞ւ ենք հատկապես շեշտում հագուստի պարագաները. տպավորությունն այնպիսին է, կարծես դրանք կրում են արտաքին աշխարհից հոգեբանորեն պատասպարվելու բնույթ: Ի դեպ, նույնպիսի զգեստավորմամբ ինքնանկարներ արել է և Վան Գոգը, երբ գտնվում էր ընկճված, հոգեկան անհավասարակշիռ վիճակում: Նկարչի վրձինն ասես տաք վերարկուով փորձում է պաշտպանել իր հերոսին: Ռուդոլֆ Խաչատրյանի ինքնանկարներում ևս կա այդ զգացողությունը: Հետագա տարիներին, երբ նկարիչն ավելի է վարպետանում, հմտություն ձեռք բերում, ինքնանկարներից աստիճանաբար սկսում է վանվել տաք հանդերձանքը. նա այլևս կարիք չունի պաշտպանվելու, արդեն ինքն է իր տաղանդով, արվեստով ի գործու պաշտպանել թե՛ իրեն և թե՛ ուրիշներին:

1972-ի մատիտանկարում նկարչի հայացքն անհամեմատ հանգիստ է, ինքնավստահ: Ավելին, նա կարծես զննում է, ուսումնասիրում, ասես հենց իր դիմանկարից նայում-փնտրում իր ապագա մոդելին: Նկարիչը հատուկ ընդգծել է ձեռքում բռնած մատիտը՝ ասել է, թե հեղինակը ոչ թե որոնման, տատանումների, ինքնահաստատման ինչ-որ դեռ անհայտ ուղու մեկնակետում է, այլ թիկունքում է թողել բազում դժվարություններ և վերջնականապես կայացած ստեղծագործող է: Կայացել է գեղարվեստա-ստեղծագործական ինքնաճանաչում, որն իրականացվել է ինքնանկարի տեսքով: Պրոցեսը տեղի է ունեցել ճանաչողա-փոխադասական, պատմա-մշակութային, գեղարվեստա-պատկերային կոնտեքստներում³⁶⁹:

³⁶⁸ *Васильева-Шляпина Г.*, Автопортретный жанр в мировом изобразительном искусстве, с. 9.

³⁶⁹ Առավել մանրամասն տե՛ս. *Крузе С.*, Автопортрет как форма самопознания личности художника, автореферат на соискание ученой степени кандидата философских наук, Ростов-на-Дону, 2004. <http://www.dissercat.com/content/avtoportret-kak-forma-samopoznaniya-lichnosti-khudozhnika> Հեղինակն իր աշխատությունում անդրադառնում է կերպարվեստում ինքնանկարի հոգեփոխադասական տեսակին, որն արտահայտվում է գեղարվեստա-կերպարային միջոցներով, փոխանցում է նկարչի ռացիոնալ, զգացմունքային վերաբերմունքը աշխարհին, ինքն իրեն, արտահայտվում է հեղինակային գնահատականը, ինքնագնահատականը:

Վերոնշյալ բոլոր աշխատանքները նախորդել են Խաչատրյանի՝ լեկասի վրա կատարած աշխատանքներին: Այդտեղ նկարիչն արդեն ներկայանում է տղամարդու իր նախընտրած կերպարով՝ երկարաձամ և մորուքավոր: 1979-ի “Ինքնանկարում” մորթե ժիլետը, հանդերձանքի ամեն մի դետալ մշակված են նկարչական զմայլելի վարպետությամբ: Սակայն, ինչպես միշտ, ուշադրության կենտրոնում են աչքերը: Տարբեր տարիների նարված համանուն երկու ստեղծագործություններում՝ “Ինքնանկար մոլբերտի մոտ” (1981 և 1988), հեղինակն ուղիղ շրջված է դեպի դիտողը: Նմանությունն ակնհայտ է: Սակայն ակնհայտ է նաև երկու գործերն իրարից բաժանող տարիների հեռավորությունը: Ոչ միայն տարբեր է սանրվածքը, այլև 1988-ի ինքնանկարում նկարիչն ալեհեր է, ակնոց է կրում, դեմքին հայտնվել են կնճիռներ և, որ ամենապերճախոսն է, հայացքում, աչքերում “կուտակվել է” տարիքը: Երկու պատկերում էլ հերոսի կեցվածքը գրեթե նույնն է, սակայն վերջինում զգույն էս ներքին ուժգին լարում, հոգեկան անհանգստություն: Նկարիչը պատկերել է իրեն ստեղծագործման պահին, մտորումների մեջ: Այստեղ նրա հայացքը սևեռուն ուղղված է դիտողին որպես փոխհաղորդակցման կոչ, հրավեր...

“Օխամորձով ինքնանկարում” (1983), սեպիայով նրբորեն ընդգծված է ծխամորձից ելնող ծուխը, որն անչափ ներդաշնակ է հեղինակի դեմքի խաղաղ արտահայտությանը, նրա խոռուն հայացքին, որը մտազբաղ չէ, կայտառ է: Կրկին հիացնում է նկարչի վիրտուոզ արվեստը՝ դեմքին ընկած ակնոցի ստվեր, պարանոցի խաղացկուն բաց ու մուգ երանգներ, շապիկի ծալքերի մանրակրկիտ մշակում: 1989-ի “Ինքնանկարը” օժտված է զարմանալի ձգողականությամբ: Շիկացած լարմամբ մեկտեղված են նկարչի խոհերը, զգացողությունները, տարիների կենսափորձը, մտահոգություն ու միաժամանակ անհանգստություն, պոռթկուն բնավորություն և անդորր: Նկարը կարելի է համարել բացառիկ անկեղծ ինքնախոստովանություն ու յուրակերպ հաշվետվություն: Դեմքի կոնտրաստային, բաց ու մուգ սրընթաց անցումներն ստեղծագործությանը հաղորդում են կտրուկ ռիթմ՝ մեկտեղելով մի հարուստ կենսագրության բոլոր ծայրահեղությունները: Սեպիայի, ածխի ուրվագծերով արտահայտիչ պատկերված են առաջացած տարիների հետքերը՝ ձերմակող վարսեր, ձյունաձերմակ մորուք, դեմքի խորշումներ, խորաթափանց, իմաստուն հայացք: Այդ ինքնանկարում առկա է ժամանակաշրջանի դրոշմը՝ հաստատուն անհատ, որը հայտնվել է ինչ-որ անորոշության առջև, սակայն անդրդվելի է, պատրաստ շարունակելու իր առաքելությունը: Ժամանակի, պատմական բարդ ապրումների նման պատկերման կարելի է հանդիպել Կ. Պետրով-Վոդկինի “Ինքնանկարում” (1918): Ինչպես նշում է Լեոնիդ Զինգերը, Կ. Պետրով-Վոդկինի վերոնշյալ ստեղծագործությունն ինքնավերլուծության հրաշալի օրինակ է՝ ոգեշնչված, ասկետիկ, խիստ դեմք, զննող հայացք, որոնք ներկայացնում են առնական, կամային անհատականություն՝ պատրաստ համարձակ գնալու կյանքի մաքրիչ փոթորկին ընդառաջ³⁷⁰:

Ռուդոլֆ Խաչատրյանի ինքնանկարները ոչ թե զուտ արտաքինը հավաստի պատկերելու միջոց են, այլ՝ տվյալ պահի կամ տևական ապրումների արտահայտություն: Հավանաբար դրանք ստեղծագործողի համար եղել են իր ներաշխարհը սթափ զննելու և գնահատելու միջոց: “Ես չեմ նկարում ինքս ինձ, - ասում է Ռեմբ-

³⁷⁰ St 'u. Образ современника. Советский живописный портрет: 1917-1976 (автор вступительной статьи Зингер Л.), Москва, Советский художник, 1978, с. 5.

րանդորը իր “Փորձերում”, - ես փոխանցում եմ իմ վիճակները (passages)³⁷¹: Ինքնանկարը, ինչպես յուրաքանչյուր նկարչի, այնպես էլ Խաչատրյանի համար նաև միջավայրի հետ իր գեղարվեստա-զգացմունքային կապի քննությունն է, դրա բացահայտումը: Նրա ինքնանկարներից կարելի է եզրակացնել, որ հեղինակը հավանաբար դրանք ստեղծել է կամ լարված, կամ ընկճված, կամ էլ մեկ այլ ալիքվող հոգեվիճակում: Ինչո՞ւ են նկարիչները դիմում ինքնաբացահայտման այս եղանակին, ինչո՞ւ են հայելու մեջ իրենց արտացոլանքը պատկերում իբրև ասելիք: Հավանաբար պարզելու համար իրենց զբաղեցնող հարցերը, գտնելու դրանց պատասխանները: Խաչատրյանն իր ինքնանկարներում կերպավորել է նաև իր շրջապատը: Այսինքն՝ այն, ինչ կա Խաչատրյանի ինքնանկարներում, դա էլ հենց իր շրջապատն է. չէ՞ որ յուրաքանչյուրն իր շրջապատը տեսնում է այնպես, ինչպիսին պատկերանում է իրեն, ինչպիսին ընկալում է ինքը: Խաչատրյանի ինքնադիմանկարներից յուրաքանչյուրը հստակ ներկայացնում է նկարչի թե՛ անհատականությունը, թե՛ տվյալ պահին արտաքին աշխարհի տեսանելի առարկայացումը և թե՛ վերջապես, ժամանակաշրջանի շնչառությունը:

Ռուդոլֆ Խաչատրյանը շարունակ ապացուցել է, որ իր արվեստն արմատներով դասական է, անկախ ժամանակի նորամուծություններից, նոր ուղղություններից, որ հետևողականորեն ինքնուրույն է, յուրովի ներգործող, քանի որ առկա է ամենակարևորը՝ խորքայինը: Նրա յուրաքանչյուր աշխատանք “ապրված” է իր՝ ստեղծագործողի, կողմից: Նա իր զգայարանների միջով է անցկացրել ստեղծվելիք յուրաքանչյուր տեսարան, յուրաքանչյուր բնորդի ճակատագիր: Մի առիթով նա իրավացիորեն հավաստել է. “Ինձ դժվար է ընդօրինակել, նույնիսկ անհրճանար է, քանի որ ես թե՛ կամրջով քայլողն եմ և թե՛ կամուրջը”³⁷²:

Рипсима Варданыан – Автопортреты Рудольфа Хачатряна. – Искусство Рудольфа Хачатряна – это своеобразное отражение, взаимосвязь самой личности талантливого армянского художника с его образом, воплощенным в искусстве. Данная статья является попыткой навести своеобразный мост, проанализировать связь между автопортретами, созданными на разных этапах творчества талантливого графика – от юношества до профессионального художника. В статье рассматривается проблема попыток самопознания и самовыражения собственной личности посредством автопортретов. Интересно, что именно автопортрет дает полное представление не только о внешности художника в различные годы, но и, что главное – позволяет судить о его внутреннем, духовном мире, о его развитии и становлении характера.

Hripsime Vardanyan – The selfportraits of Rudolf Khachatryan. – The art of Rudolf Khachatryan is unique reflection of spiritual world of a painter, and his earthly appearance. This article is the bridge between the past and present, incarnated in selfportraits of different years of talented graphic. Article discusses the problem of self-identity and self-expression through self-portraits. Wondering that self-portrait gives a complete picture of the artist, not only externaly, but the main thing about his inner spiritual world and nature.

³⁷¹ Տե՛ս. **Алпатов М.**, Очерки по истории портрета, с. 34:

³⁷² Տե՛ս. **Մանուկյան Է.**, Նույն ինքը՝ կամրջով քայլողն ու հենց... կամուրջը:

**ԻԶԵՎԱՆԻ ՍԻՄՊՈԶԻՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ
ԿԵՐՏՎԱԾ ՔԱՐԱՐՁԱՆՆԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՄԱՐԳԱՐ ՀՄԱՅԱԿՑԱՆ

“Պլեներային” (“Բացօթյա”) քանդակագործական սիմպոզիումները լայն տարածում ունեն աշխարհում: Այս ավանդույթի սկզբնավորման տարեթիվն է համարվում 1959 թ., երբ ավստրիացի քանդակագործ Կառլոս ֆոն Պրանտլի նախաձեռնությամբ Ավստրիայի Սանտ Մարգարետեն տոնավաճառային բնակավայրում կազմակերպեց առաջին սիմպոզիումը: Այս սիմպոզիումի աշխատանքներին մասնակցում էին տարբեր երկրներից ժամանած քանդակագործներ: Նախաձեռնության նպատակն էր նպաստել տարբեր քաղաքացիություն ունեցող և տարբեր ոճերով աշխատող արվեստագետների զուտ մարդկային շփմանը և փորձի փոխանակմանը: Նպատակներից մեկն էլ “սառը պատերազմի” ընթացքում ստեղծված “սառը միջավայրի” ջերմացումն էր՝ վառ անհատականությունների ուրույն տեսակետների ու աշխարհայացքների “պրոպագանդան” միջոցով: Հաջողությունն ակնհայտ էր, քանի որ շուտով նման սիմպոզիումներ կազմակերպվեցին այլ երկրներում. (ԱՄՆ, Ավստրալիա, Արևմտյան Եվրոպայի տարբեր երկրներ, ՍՍՀՄ, Ռուսաստան):

Հայաստանում առաջին սիմպոզիում կազմակերպվելու փորձն իրականացվել է 1978 թ. Երևանում՝ Նոր Զեյթունի <<Հոկտեմբեր>> զբոսայգում, որը համամիութենական նշանակություն ուներ: Երիտասարդ քանդակագործների այս գիտաժողովը պարտադիր գեղարվեստական ուղղվածություն չուներ. արվեստագետներն ազատ էին թեմայի և ոճի ընտրության մեջ³⁷³: Հաջորդող գիտաժողովներն ունեին հստակ պահանջներ կամ կապված էին որոշակի միջոցառումների հետ: 1989 թ. Էջմիածնի սիմպոզիումը, որին մասնակցում էին վեց հայ քանդակագործներ, առնչվում էր Կոմիտասի ծննդյան 120 ամյակին³⁷⁴, իսկ Երևանի 2001 թ. քանդակագործական գիտաժողովը կազմակերպված էր ի կատարումն Հայաստանում Քրիստոնեությունը որպես պետական կրոնի ընդունման 1700-ամյակին նվիրված մշակութային համագային ծրագրային դրույթների: Այն ուներ նաև կարգախոս՝ “Հեքիաթների և հրաշքների աշխարհ”, իսկ ղեկավարն էր Գագիկ Ղազարյանը³⁷⁵: Սիմպոզիումը կայացավ Մալաթիա - Մեբաստիա համայնքի “Վահան Զատիկյանի” անվան զբոսայգում³⁷⁶:

Քաղաքի գեղագիտական նկարագիրն ամբողջացնելու նպատակն ուներ 2007 թ. Ալավերդիում կազմակերպված սիմպոզիումը, որին մասնակցում էին 11 քանդակագործներ: Նման սիմպոզիումներ են կազմակերպվել նաև Ջերմուկում և Արցախում:

³⁷³ **Ս. Գալչյան**, Քարի բնավորությունը, “Սովետական Հայաստան”, 1978, 12:

³⁷⁴ “Ավանգարդ”, 01.09.1989. թ.:

³⁷⁵ <<Քանդակագործական գիտաժողովը երկրորդ փուլում >>, << Ժամանակ >>, 30.06.2001:

³⁷⁶ **Շ. Ռշտունի**, Հին քարերի երգը, << Հայկական ժամանակ >>, 19.09.2000

Ըստ մեր դիտարկումների Հայաստանում կազմակերպված քանդակագործական սիմպոզիումներից ամենահաջողվածը և մասշտաբայինը Իջևանի համամիութենական և միջազգային սիմպոզիումներն էին (1985 -1991)³⁷⁷ թե իրենց պարբերականությամբ, թե՛ քանդակագործների ու նրանց ստեղծած կերտվածքների քանակով, և թե՛ գեղարվեստական արժեքով ու նշանակությամբ:

Իջևանյան սիմպոզիումի նախաձեռնողն էր արվեստաբան Սարո Սարուխանյանը: Նրա ներկայացրած ծրագիրը հավանության արժանացավ այն ժամանակվա Իջևանի կենտրոնի առաջին քարտուղար Ջենմա Անանյանի կոմից: Սիմպոզիումներին իրականացմանը օժանդակեցին Հայաստանի և ԽՍՀՄ նկարիչների միությունները:

Առաջին իջևանյան սիմպոզիումները (1985-1986 թթ.) համամիութենական բնույթի էին, կերտվեցին բարձրարվեստ գործեր, որոնք լուսաբանվեցին տեղական և համամիութենական մամուլում: Այդ հաջողությամբ պայմանավորված, 1987 թ. սկսած, իջևանյան սիմպոզիումները միջազգային կարգավիճակ ստացան: 1987-1991 թթ. Իջևանում աշխատեցին ԽՍՀՄ հանրապետություններից ու աշխարհի տարբեր երկրներից ժամանած արվեստագետներ: Իջևանում նրանց ընկերակցում էին երևանցի ու իջևանցի քանդակագործները³⁷⁷: Այս յոթ տարիների ընթացքում կերտվեցին հարյուր քսանից ավելի ստեղծագործություններ: Հետահայաց դիտարկելով Իջևանյան սիմպոզիումները՝ ականոռ է դառնում կերտված քարարձանների ոճական և թեմատիկ բազմազանությունը: Հանգամանք, որն այս գիտաժողովների կարևորագույն առանձնահատկություններից էր:

Սիմպոզիումի ընթացքում կազմակերպվում էին փոքրիկ ճամփորդություններ այժմյան Տավուշի մարզի տարածքով. հյուրերը ծանոթանում էին Ադստնի հովտի հիասքանչ բնության ու պատմամշակութային հուշարձանների հետ, շփվում էին այդ հուշարձանները կերտող մարդկանց ժառանգների հետ, ինչը կարևոր եղավ նրանց ստեղծագործական թեմաների որոշակիացման համար: Սրան նպաստեց նաև նախապատրաստական աշխատանքի մի այլ փուլ, այն է՝ քարի ընտրությունը: Յուրաքանչյուր քանդակագործ ընտրում էր իր մտահղացմանը համապատասխան քարատեսակ, բայց եղավ և հակառակը, երբ նյութն էր թելադրում քանդակագործին այն, թե ինչպես կերտի ստեղծագործությունը: Այստեղ տեղին է մեջբերել հետևյալ խոսքերը. “Իր ապագա կերտվածքը ստեղծելիս քանդակագործը պատկերացնում է այն որոշակի քարատեսակում: Նյութը իր հատկանշներով այս կամ այն կերպ տալիս է որոշակի երանգներ կերպարի բնույթին, քանի որ, ինչպես օրինակ, գունանյութի և մարմարի ֆիզիկական հատկանիշը չի կարող առանձին լինել գեղանկարչությունից կամ քանդակագործությունից դուրս³⁷⁸”:

Ավելին, կերտվեցին արձաններ, որոնք մարմարի կամ ֆելզիտի ժայռաբեկորներ էին, որոնք քանդակագործները գրեթե չէին ձևափոխել: Քարերը բերվում

³⁷⁷ Իջևանյան սիմպոզիումների վերաբերյալ, լույս են տեսել շուրջ 30 հաղորդումներ տե՛ս, օրինակ, “Քանդակի սիմպոզիում Իջևանում”, “Սովետական արվեստ”, 1988, 3, էջ 10-13, “Քանդակի միջազգային սիմպոզիում” խորագրով բուկլետ, “Իջևանած քանդակներ” պատկերագիրքը (Երևան, 2007) և մեկ հոդված (Մարգար Ննայակյան, Քանդակագործների Իջևանյան սիմպոզիումները, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի “Տարեգիրք”, Երևան, 2012, էջ 128-135): Այս խնդրին անդրադարձել է նաև Ջենմա Անանյանը իր “Հայոց Օջախը” պատանդ” գրքում, (Երևան, 2007) :

³⁷⁸ *К. Маркс*, Ф. Энгельс об искусстве, Изд-во “Искусство”, 1938, стр. 210.

էին հիմնականում Արմավիր և Նոյեմբերյան քաղաքներից: Քարի ընտրության գործում օգնում էր կողմնորոշվել քարատեսակների գիտակ Գրիգոր Մելքումյանը: Նշենք նաև, որ սիմպոզիումների մասնակից քանդակագործ Բաղդասար Սարգսյանը շրջանի հեռավոր քարահանքներիցս իր միջոցներով մարմարի և ֆելզիտի մեծ չափաբաժին տեղափոխեց քաղաքային այգու տարածք, որից հետագայում օգտվեցին շատ քանդակագործներ: Իջևանյան քարարձանների մեծամասնությունը կերտված են վերոհիշյալ քարատեսակներից, բայց կային նաև ավազաքարից, տուֆից ու գրանիտից կերտված ստեղծագործություններ:

Իջևանցիները մեծ հետաքրքրությամբ հետևում էին քանդակագործների աշխատանքի ընթացքին, բազմաբնույթ հարցեր տալիս նրանց: Ավելին, գրվում էին բանաստեղծություններ, ինչպես օրինակ, Թելման Մալիյանի գողտրիկ տողերը՝ ձոնված այժմ հայտնի քանդակագործ Հերիքնազ Գալստյանին³⁷⁹:

Երկար դարեր հայկական արվեստի համար “կորսված” էր քարե մոնումենտալ բոլորաքանդակագործությունը, չնայած, որ հայկական կերպարվեստի ակունքներում՝ սկսած բրոնզի դարից, ընկած էր հենց այս քանդակագործական ուղղությունը. խոսքն առաջին հերթին վիշապաքարերի, մենհիրների, ֆալոսաձև կոթողների և մարդակերպ, ուղղահայաց դրված շիրիմաքարերի մասին է, որոնք Հայաստանում հայտնի են այժմ հարյուրներով³⁸⁰: Եվ, ահա, իջևանյան սիմպոզիումների ընթացքում խորունկ անդրադարձ եղավ այս ակունքներին՝ թե ոճական ու թե բովանդակային առումներով: Ստեղծվեցին բազմաթիվ վերիմաստավորված գործեր, որոնք “կրկնօրինակներն” էին մեզալիթյան հորինվածքների, ինչպիսին են Հերիքնազ Գալստյանի “Արևի ժամացույցը” (նկ.1), Չառլի Խաչատրյանի “Մենհիր” աշխատանքը, Սահակ Պողոսյանի “Ցանկության քարը” (նկ.2) և “Հմայիլը”: Այս մեզալիթյան ոճը իր որոշակի վերիմաստավորումը գտավ Բենիկ Պետրոսյանի “Տիեզերքից ընկած մի կաթիլ” (նկ.3) հսկայածավալ ստեղծագործությունում, որը, ս կարծես, պտղաբերության արարիչ աստծուն ձոնված հուշարձան լինի:



³⁷⁹ Թելման Մալիյան, “Մերը լույս է հավաքում”, “Իջևան”, 08.09.1990

³⁸⁰ Մ. Հմայակյան, Հ. Հակոբյան, Մ. Մելքոնյան, Աշոցքի, Հարթաշենի և Նավուրի մենհիրները, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի “Գիտական հոգվածների ժողովածու”, Երևան, 2010, է 25-33



2. «Ցանկության քար»
Սահակ Պողոսյան



3. Բենիկ Պետրոսյան
«Երկնքից իջած
մի կաթիլ»

Մեծ հետաքրքրություն են առաջացնում բնական ժայռաբեկորների վրա բարձրաքանդակի կամ փորագրության կիրառումով հնագույն ժայռապատկերների, միջնադարյան մանրանկարչության կամ պատկերաքանդակի թեմաներով ստեղծագործությունները, որոնք ունեն պատմաազգագրական (Գագիկ Ղազարյան, «*Բջևանյան մոտիվներ*», նկ.4), մշակութային (Աշոտ Պողոսյան, «*Հայկական տատեր*») և կամ վերացական (Մարիամ Հակոբյան, «*Աստղային ժամ*») բովանդակություն: Եթե այս դեպքերում անդրադարձն ակունքներին ոճական բնույթի էր, ապա մյուս խումբը հայկական իրականության հետ առնչվող իմաստային, առասպելաբանաստեղծական բնույթի գործերն են: Դրանք միտված էին վերլուծելու երկու թեմաներ՝ «Սասնա Շռեր» և Վահագն Վիշապաքաղ (նկ.5): Ուշագրավ է, որ այս երկու թեմաները հակադրված են իրար. եթե Սամվել Ղազարյանի «*Շռվինարի*» (նկ.6) ու Յուրի Սամվելյանի «*Սասունցի Դավթի*» (նկ.7) կերպարներում շեշտադրված է մարդու հոգածությունը բնության ու կենդանական աշխարհի հանդեպ, ապա Վահագնի կերպարը (նկ.8, 9) ըմբոստ է, պայքարող ու հաղթական:



4. Գագիկ Ղազարյան «Բջևանյան մոտիվներ»



5. Բաղդասար Նարգսյան
«Վահագն վիշապաբաղը»



6. Սամվել Դավթարյանի «Ծովինարը»



7. Յուրի Սամվելյան
Պատանի Դավիթ



8. «Վահագն վիշապաբաղը»
Արմեն Դավթյան

Ուշագրավ է, որ Վահագնի մասին առասպելը տարբեր հեղինակների վերլուծել են տարբեր տեսանկյուններից՝ ծնունդից մինչև վիշապամարտություն: Հին հայկական թեման շարունակված է Ալեքսանդր Զանջուղազյանի *“Պտղաբերության դիցուհին”* (նկ.10) ստեղծագործությունում, որտեղ տեսնում ենք Նեմրոսյան մոտիվներ, նույնը տեսնում ենք *“Բարենպաստ հռչոտում”* գործում (նկ.11): Վերջինի դեպքում, թվում է, թե միաձուլված են ուրարտական, սկյութական ու միջնադարյան ոճական և իմաստաբանական առանձնահատկությունները:



9.

Լենին վարդանյան «Լենինի որդին»



10.

Ալեքսանդր Զանգուղյան
«Պտղաբերություն»



11. Բարեպատեն հողատուն

Սակայն, այսքանով չի սահմանափակվում դիցաբանական թեման: Կերտվեցին շատ տպավորիչ գործեր, որոնք առնչվում են հիմնականում հունական դիցաբանության հետ: Սրանց թվում առանձնանում է շղթայված հերոսի թեման, որը նույնպես, ինչպես Վահագնի դեպքում էր, վերլուծված է տարբեր տեսանկյուն-

ներից: Շղթայված հերոսը ըմբոստ է, պայքարող կամ ֆիզիկապես ըկնճված, բայց վստահ իր հաղթանակին, և, ի վերջո, պատրաստ կտրելու իր կապանքները: Մի բան հաստատ գիտենք, որ այդ շղթաները կտրվելու են՝ թե Պրոմեթևսյան առասպելից, թե պատմական իրողությունից, քանի որ Արցախին ազատ է և ուրեմն ազատ է “Շղթայված արծիվը” (հեղինակ՝ Ռաֆիկ Սարգսյան):

Շղթայված հերոսի թեման ուղղակիորեն առնչվում էր Արցախի ազատագրական թեմայի հետ և հետաքրքիր է, որ այս երևույթի հետ միաձուլվեց մեկ այլ թեմա՝ մայրությունը (Բաղդասար Սարգսյան, “Ֆիդայի”, նկ.12):



Արցախյան շարժմանը նվիրված ամենատպալմորիչ գործերից է կուբիզմի գեղարվեստական ոճով կերտված Լևոն Վարդանյանի “Երկրապահ” ստեղծագործությունը (նկ.13), որի դիմաց քանդակագործը կերտեց դասական մի խաչքար, որի պարտպանն է հերոսը. արդյունքում ստեղծվեց գեղագիտական առումով գուցե աններդաշնակ, բայց խորհրդանշանային ու հետաքրքիր մի ստեղծագործություն:

Արցախյան շարժման և կրկին անգամ հին հայկական շինարվեստի հետ է կապված այլաբանական բնույթի Ռաֆիկ Սարգսյանի “Պայքար” գործը, որը կիկլոպյան մի հզոր աշտարակ է հիշեցնում: Նույն բնույթն ունի Բաշո Վասիլևիչի հեղինակած “Կարմիր պատ” աշխատանքը, որն ասես մի հուշարձան լինի ձոնված հայոց շինարվեստին:

Ստեղծագործությունների այս խմբում կարելի է ընդգրկել Սուրբաբայանի իրարդարձություններին նվիրված Վահրամ Հովակիմյանի “Հրեշտակներն ու բորենիները” (նկ.14), և Նախիջևանյան իրարդարձություններն պարսավող, այլաբանական “Անարգանք” ստեղծագործությունը (հեղինակ՝ Արմեն Գևորգյան):

Առանձին մի խումբ են կազմում Սպիտակի երկրաշարժին ձոնված ստեղծագործությունները: Ուշագրավ է, որ այս գործերում էլ օգտագործված են մոդեռնիզմի գեղարվեստական ուղղություններին առնչվող արտահայտչաձևեր (նկ. 15,16):




14. Վահրամ Յովակիմյան,
Հրեշտակներն ու բորենիները



15. Վարդ Աճեմյան «Յոթ վերք»



16. Օլեգ Օգոժին, «Ողբերգություն»



17. Յուրի Մամվեյան «Մոմիկ»

Հաջորդ թեման, որին հանազամանորեն անդրադարձել են քանդակագործները միջնադարյան հայկական մշակույթն է՝ արվեստագետներն ու հիմնական խորհրդանիշերը: Կերտվածքների այդ խմբին ենք դասում Վլադիմիր Տարակնովի «Հայոց շինարար», Յուրի Սամվելյանի «Մոմիկ ճարտարապետ» (նկ.17), Ռաֆիկ Թորոսյանի «Տրդատ ճարտարապետ» ստեղծագործությունները:

Առանձին թեմատիկ խումբ են կազմում հայ ազգագրությանը նվիրված կերտվածքները, որոնցում իր արտացոլումը գտավ հայկական առօրյան՝ իր մեջ ընդգրկելով երբեմն նաև պատմական իրողություններ. (Գագիկ Ղազարյան, «Իջե-

վանյան մոտիվներ», Արմեն Սամվելյան, «Խնջույք», Գետիկ Բաղդասարյան, «Յուլն» ու «Զիթանի քարը» նկ.18): Բացի վերոհիշյալներից, սիմպոզիումներում ստեղծվեցին գործեր և այլ թեմաներով՝ աստվածաշնչյան, անիմալիստական, հովվերգական և այլն: Կային նաև ժանրային առումով քանդակագործության բնագավառում հազվադեպ հանդիպող լուծումներ, ինչպիսին է պլակատային բնույթի «Բողոքի երգ» աշխատանքը (հեղ. Գենադի Բուռլակին) և կամ կոլլաժ հիշեցնող Սահակ Պողոսյանի «Խեցգետնի համաստեղություն» հորիվածքը:



18. Գետիկ Բաղդասարյան,
Յուլն ու Զիթանի քարը

Կուզենայինք առանձնացնել անիմալիստական ժանրը, որը սերտորեն առնչվում է մի շարք թեմաների հետ՝ մայրություն, ընդզվզում, դիցաբանություն: Այս առումով ուշագրավ է, որ կային և այլ ստեղծագործություններ, որոնք նույնպես թեմատիկ առումով բազմիմաստ էին:

Ինչ վերաբերում է քարարձանների ոճական առանձնահատկություններին, ապա դրանք կարելի է բաժանել երկու խմբի՝ 1. դասականության, ռեալիզմի, ռոմանտիզմի ոճերով կերտված ստեղծագործություններ. 2. մոդեռնիզմի գեղարվեստական ուղղությունների հետ առնչվող կերտվածքներ³⁸¹:

Ուշագրավ է, որ մինչև 1988 թ. ստեղծագործությունների մեծամասնությունը կերտված էին առաջին խմբում նշված ոճերին համապատասխան. այդպիսիք էին դիցաբանական հերոսուհիներ «Լեդայի» (հեղ. Անատոլի Բլոնսկի) և «Ֆլորայի» (հեղ. Յուլիա Արմենյան) կերպարները բացահայտող գործերը: Մեծ թիվ էին կազմում նաև զուտ ռեալիստական ստեղծագործությունները, ինչպիսիք էին Ալեքսանդր Ապոլլոնովի «Երեկոն» և Յուրի Սամվելյանի «Մոմիկ Ճարտարապետը»: Լինելով նույն միջավայրում՝ դրանք «հակադրվում են» մոդեռնիստական ոճերով կերտված ստեղծագործություններին, որոնց հեղինակներից շատերը միտում ունեին ստեղծագործել ժամանակակից արվեստի կանոններին համընթաց: Դրանցում ակնառու են կուբիզմի, սյուրռեալիզմի, աբստրակցիոնիզմի ազդեցություն-

³⁸¹ Մարգար Հմայակյան, Քանդակագործների իջևանյան սիմպոզիումները, ԵԳՊԱ «Տարեգիրք», Երեվան, 2012, էջ 128-135:

ները: Դիտարկելով ստեղծագործությունները՝ կարող ենք տեսնել ակունքեր Հանս Արպի, Կոստանտին Բրանկուսիի, Հենրի Մուրի, Ջորջ Վանտոնգերլուի կամ նույնիսկ Մալվադոր Դալիի արվեստից³⁸², սակայն իջևանյան կերտվածքներում առկա է նաև հայկականություն. այն է՝ հայ հին և միջնադարյան արվեստի տարբեր մանրամասնությունների համադրությունը, որպիսիք են Մարիամ Հակոբյանի կերտած «Աստղային Ժամ» (նկ.19), Պետեր Լևանդովսկու «Հիշողություն» (նկ. 20), Վարուժան Մարտիրոսյանի «Եղնիկներ», Անդրեյ Բալաշովի «Եվա» ստեղծագործությունները:




³⁸² Fred Licht, Sculpture of 19th & 20th centuries, London, 1967, pages 42-43, 45.

Առանձնահատուկ հետաքրքրություն են առաջացնում “Կենաց Ծառ” (հեղ. Հերիքնազ Գալստյան, նկ.21) և “Անարգանք” (հեղ. Արմեն Գևորգյան, նկ.22) ստեղծագործությունները: Դրանք իրենց բնույթով հիշեցնում են ժամանակակից ինստալիացիաները և ինքնատիպ են, քանի որ ուղղակիորեն առնչվում են ազգային մշակույթի հետ:

21. Հերիքնազ Գալստյան,

«Կենաց Ծառ»



22. Արմեն Գևորգյան, Անարգանք

Կերտված հարյուր քսան քարարձանների միջոցով Իջևանում ստեղծվեց մի յուրատեսակ թանգարան՝ բաց երկնքի տակ ու գեղարվեստորեն ձևավորվեցին քաղաքի պուրակները՝ «Քաղաքային» և «Մանկական զբոսայգին», Զոհված ազատամարտիկների հրապարակը, քաղաքի «դարպասները»: Որոշ ստեղծագործություններ տեղադրվեցին Գետահովիտ գյուղում և Սպիտակ լճի մերձակայքում:

Маргар Амаякян – *Художественные особенности каменных скульптур Иджевана*. – В 1985-1991 гг. в городе Иджеване были проведены всесоюзные и международные симпозиумы по скульптуре. Они были самыми успешными и масштабными мероприятиями такого рода до сих пор организованными в Армении. Их инициатором был искусствовед Саро Саруханян. В Иджеване для участия в симпозиуме прибывали скульптуры из разных стран. В Иджеване было создано около 120 каменных скульптур, большинство из которых находятся в Иджеване и селе Гетаовит.

Тематика изваяний многообразна, в основном работы имеют отношение к истории Армении, армянской этнографии, героическому эпосу «Сасна Црер» («Удальцы Сасуна»), армянской и общей мифологии и тд.

Каменные скульптуры можно разделить на две группы: 1. изваяния в стиле классицизма, реализма и романтизма. 2. работы, относящиеся к направлениям модернизма (кубизм, сюрреализм, абстракционизм, инсталляции и итд.). Иногда работы, указанные в данных группах взаимосливаются в одном произведении.

С помощью этих скульптур в Иджеване был создан своеобразный музей под открытым небом и они художественно оформили скверы города, площадь, «городские ворота».

Margar Hmayakyan – *The Artistic Peculiarities of Stone Sculptors of Ijevan*. – In 1985-1991 all-soviet and international sculpture symposiums have been held in town of Ijevan. The Ijevan symposiums have been the most successful and wide-scale sculpture festivals so far held in Armenia. Art critic Saro Sarukhanyan was the initiator and curator of these symposiums. Sculptures from different countries have participated in these symposiums. Around 120 stone sculptures have been created and most of which remain in Ijevan and Getahovit village.

The sculptures motives vary greatly: they mainly relate to the Armenian history, ethnology, Sasna Tsrer («Daredevils of Sasun») epic poem, Armenian and general mythology, etc.

The sculptures can be divided into two groups: 1. classicism, realism and romanticism style works; 2. modernism-related artistic directions (cubism, surrealism, abstractionism, installations etc.) works. In some cases the works mentioned in these two groups intermix in styles.

These stone sculptures turned into a unique open-air museum and decorated the town's square, parks and «gates».

ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԱԶԳԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԿԶԲԱՂԲՅՈՒՐ

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Ժայռապատկերները ժայռերի, ժայռաբեկորների մակերեսին, խոր կիրճերում, լեռնահովիտներում, քարանձավների պատերին նախապատմական ժամանակաշրջանում կարծր քարով փորված, ներկով արված հնագույն պատկերներ են, տեսարաններ, առանձնապես որսը պատկերող հորինվածքներ, որոնք խոսում են ստեղծողի տնտեսական, մտավոր բարձր զարգացման ու նուրբ ճաշակի մասին: Դրանք Հայկական լեռնաշխարհի IX-I հազ. պատմական իրականության բացահայտման կարևորագույն մշակութաբանական սկզբնաղբյուր են, որոնք յուրովի, այն է՝ պատկերագրորեն արտացոլում են անցյալը: Այսօր ժայռապատկերների նշանակությունը հիմնականում գիտաճանաչողական է:

Ժայռապատկերները, որպես նախանդարյան մշակույթի կրող, դրա տեսակ, փուլ և ձև՝ հուսալի կամուրջ է վաղնջական ժամանակների ու ներկայի միջև, և համակողմանի հետազոտման դեպքում կօգնի վերականգնելու կորցրածը, հասկանալու և ճշտելու մեր ակունքները, դրա ազդեցությունը մշակույթի տարբեր ճյուղերի վրա:

Նախնադարյան արվեստի ստեղծագործությունները՝ ժայռապատկերները, հավաստել են Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչների առօրյա կենցաղը, զբաղմունքները, գաղափարական պատկերացումները, հմայական ըմբռնումները: Դրանք անցյալի կենդանի վկայություններ են:

Նախնադարյան մարդկանց կենցաղի և մշակույթի՝ մեզ հասած նյութերի ուսումնասիրությունն ունի պատկառելի անցյալ: Նախնադարյան վարպետների ձեռքով պատրաստված հազարավոր առարկաների հումքը՝ կավը, քարը, փայտը, մետաղը լեզու առան հրաշալի պատկերների ու զարդանախշերի մեջ: Անձավային արվեստի մասին գիտությունն իր ավելի քան մեկուկեսդարյա պատմության ընթացքում արձանագրել է բազմաթիվ նվաճումներ հին քարե դարի կենցաղամշակութային ստեղծագործությունների հայտնաբերման և դրանց մասին նյութերի հրատարակման ասպարեզում³⁸³: Ժայռապատկերները հայտնի են երկրա-

³⁸³ Նշանավոր գյուտերից են Հյուսիսային Իսպանիայի Սանտանդեր նահանգի Ալտամիրա քարայրում 1879 թ. հայտնաբերված կենդանիների գունավոր պատկերները: XIX դ. վերջին և XX դ. սկզբներին իրար են հաջորդում հին քարեդարյան անձավային արվեստի նոր հուշարձանների հայտնագործությունները Ֆրանսիայում և Իսպանիայում: 1940 թ. նախնադարյան մշակույթի բացառիկ արժեք ունեցող հնագույն ստեղծագործություններ են հայտնաբերվում Լասկո, իսկ 1956-ին՝ Ռուֆինյակ քարանձավներում: Երկրաչափական բնույթի գծանկարներ են գտնվել Վրաստանում, կենդանիների պատկերներ, որսի տեսարաններ՝ ալգեկստանում, հարավային ալբանիայում, Եվրոպայի հարավ-արևմուտքում, Ասիայում: Անհամեմատ շատ են աշխարհի տարբեր կողմերում գտնված մեզոլիթի, նեոլիթի, էնեոլիթի, բրոնզի և երկաթի դարաշրջանների ժայռարվեստի հուշարձանները: Բազմազան ներկերով ժայռերին նկարված վիթխարի քանակությամբ պատկերներ են հայտնի Սահարայում, Սկանդինավիա-

գնդի բոլոր մասերում, հնագույնները (Ալտամիրա և այլն) ստեղծվել են ավելի քան 20000 տարի առաջ: Հայաստանի տարածքում հայտնաբերվել և ուսումնասիրվել են նախնադարյան արվեստի հսկայական թիվ կազմող ժայռապատկերներ: Դրանք տարածված են Արագածի, Գեղամա, Վարդենիսի, Ջերմուկի, Սյունյաց լեռներում և լանջերին, Կոտայքում, Մարտունիում, Եղեգնաձորում, Սիսիանում, ինչպես նաև Տավրոսի լեռներում, ծովի մակերևույթից 2000-3500 մ բարձրության վրա:

Աշխարհի տարբեր երկրներում հայտնաբերված ժայռարվեստի հուշարձանների շարքում կարևոր տեղ են գրավում Հայաստանի հնագույն շրջանի կենցաղի և մշակույթի յուրօրինակ սկզբնաղբյուրները՝ ժայռապատկերները: Հայկական լեռնաշխարհը ևս, որպես հին աշխարհի անքակտելի մաս, իբրև մարդկային մշակույթի բնօրրաններից մեկը, հարուստ է նախնադարյան արվեստի հրաշալիքներով՝ ինքնատիպ բազմաբովանդակ ու բազմազան ժայռապատկերներով, որոնք արժանացել են ուսումնասիրողների ուշադրությանը:

Ընդհանուր առմամբ Հայաստանի տարածքի ժայռապատկերների ուսումնասիրությունը կարելի է բաժանել հետևյալ փուլերի.

Առաջին փուլ: Արվեստի այս հնագույն ստեղծագործությունների մասին առաջին հաղորդագրությունները գետեղված են պարբերական մամուլում: 1910 թ. Մեսրոպ Տեր-Մովսիսյանը և Կոմիտասը բարձրանալով Արագած լեռը՝ առաջին անգամ հանդիպեցին ժայռապատկերների. դա Հայաստանի տարածքում ժայռապատկերները գրի առնելու առաջին դեպքն էր, որն արտացոլվել է 1913 թ. «Արարատ» ամսագրում³⁸⁴: Հայ իրականության մեջ ժայռապատկերների գիտական հետազոտությունը սկսվում է միայն 1920-ական թվականներից:

Առաջին գիտնականը, որ փորձեց զբաղվել ժայռապատկերների հետազոտությամբ, Աշխարհբեկ Քալանթարն էր: Նա XX դարի 20-ական թվականներին դասակարգեց ու մեկնաբանեց հայ իրականությունից հայտնի ժայռապատկերները:

Առաջին հնագետը, որ լրջորեն զբաղվեց ժայռարվեստի հուշարձանների գիտական հիմունքներով հավաքման գործերով, Աշխարհբեկ Քալանթարն էր³⁸⁵: Գեղամա լեռների ժայռապատկերների նկարագրման և համեմատական վերլուծության փորձերը տեսնում ենք Լ. Լիսիցյանի³⁸⁶ գերմաներեն հաղորդումներում, որը թարգմանվել է Գ.Ա. Տիրացյանի կողմից:

յում, Ռուսաստանի Դաշնությունում՝ Կարելիայում, Ուրալում, Սիբիրում, Հյուսիսային Կովկասում, Միջին Ասիայում, Անդրկովկասում և այլուր (այս մասին տե՛ս **Գ. Հ. Կարախանյան, Պ. Գ. Սաֆյան**, Սյունիքի ժայռապատկերները, Հայաստանի հնագիտական հուշարձանները, թիվ 4, Ժայռապատկերներ, պրակ. 1, Երևան, 1970, էջ 5-6, նաև նույն հեղինակների՝ Հայաստանի հնագույն պատմության նորահայտ հուշարձաններ, «Սովետական արվեստ», 1967, թիվ 1, էջ 31-38, ՊԲՀ, 1969, թիվ 1, էջ 275-283 և այլն:

³⁸⁴ Տե՛ս **Ս. Տեր-Մովսիսյան**, Արարատի և Արագածի զագաթներին. - «Արարատ», № 1 1913, էջմիածին, էջ 53-68:

³⁸⁵ Տե՛ս **Ա. Քալանթար**, Արագածը պատմության մեջ. Ակնարկ նրա պատմական նշանակության և նյութական կուլտուրայի հուշարձանների մասին, Երևան, 1935: Ա.Քալանթարի Հայաստանի պատմության պետական թանգարանի արխիվային ֆոնդերում պահվող հավաքածուի որոշ նյութեր հրատարակեց Լ. Բարսեղյանը (տե՛ս «Նոր նյութեր Հայաստանի հնագույն շրջանի արվեստի վերաբերյալ», - ՊԲՀ, 1966, թիվ 3, էջ 147-160):

³⁸⁶ Տե՛ս **Լևոն Լիսիցյան**, «Գեղամա լեռների ժայռապատկերներից», «Լրաբեր», № 1, 1972, էջ 51-57:

Այնուհետև խնդրո առարկային անդրադարձան Գ. Ղափանցյանը³⁸⁷, Ս. Սարգսյանը³⁸⁸։ Գ. Ղափանցյանը հրապարակում է ուշագրավ հաղորդագրություն ժայռապատկերների տեղի, հայտնաբերման հանգամանքների մասին։ Ս. Սարգսյանը Արագած լեռան լանջերին հայտնաբերել և ուսումնասիրել է մեծ քանակությամբ ժայռապատկերներ։ Նրա գրքում տրվում է նյութի գնվելու վայրը (Արագած, Գեղամա-դան, Ջերմուկ, Ջաղա), կամայական ընտրված խմբերի նկարագրությունը և որոշ համեմատությունների հիման վրա դրանք թվագրվում են մեզոլիթով։

1960-1970-ական թվականները դարձան ժայռապատկերների հայտնաբերման ու հետազոտման կարևոր փուլ³⁸⁹։ 1967-1968 թթ. ժայռապատկերների հայտնաբերման հետազոտական ծավալուն աշխատանքներ են կատարել ՀՀ ԳԱ հնագիտական արշավախմբերը։ Հայտնաբերվեցին հազարավոր ժայռապատկերներ, որոնք սփռված են Արագածի փեշերին, Սևանա լճի ավազանը եզերող Գեղամա, Վարդենիսի, Վայոց ձորի և Սյունյաց լեռնաշղթաների ստորոտներին։ Սրանց մեջ աչքի են ընկնում Գեղամա լեռների պատկերախմբերը։ Գ. Կարախանյանը և Պ. Սաֆյանը Սյունիքում հայտնաբերեցին հազարավոր ժայռապատկերներ՝ բնակավայրերից հեռու բարձրադիր լեռնային գոտիներում։ Միայն Միսիանի Ուխտասար կոչվող վայրում հայտնաբերվեցին մի քանի հազար ժայռապատկերներ, որոնց միայն աննշան մասը ներկայացվել է Գ. Կարախանյանի և Պ. Սաֆյանի գրքում³⁹⁰։

Ժայռապատկերների մեջ աչքի են ընկնում Գեղամա լեռների պատկերախմբերը։

Հայ իրականության մեջ սրանց դասակարգման գործում առանձնանում է Հ. Մարտիրոսյանը իր «Գիտությունն սկսվում է նախնադարում» գրքով. հեղինակը փորձել է վերլուծել ժայռապատկերների պոլեմոտային բովանդակությունը՝ ժամանակակից գիտության բազմաթիվ սաղմեր որոնելով ժայռապատկերներում։ Այսպես, օրինակ, Հայաստանում հայտնաբերված հազարավոր ժայռապատկերների թվում հարյուրավոր փորագիր պատկերանշանները ժայռագիր գաղափարագրեր նկատի ունենալով, նա գրում է. «Ամեն մի նախասկզբնական գիր և գրչություն ծայր է առնում իրերի, առարկաների, կենդանիների, մարդկանց, լուսատուների պատկերներից, որոնցով կազմվում էին ժայռանկարների երբեմն շատ շքեղ ու խոսուն կոմպոզիցիաները»³⁹¹։ Նա ժայռապատկերները դիտում է որպես տիեզերական պատկերացումներ ներկայացնող պատկերներ, որպես լուսնա-արեգակնային տոմարի մեկնաբանություն, որպես կրոնազաղափարական պատկերացումներ, ժայռապատկերներից անցում ժայռագրության և նշանագրության։

Միջնադարյան շրջանի վիմագրագետ Գր. Գրիգորյանը կարծում է, որ «հնագույն վիմագրական տեքստեր կարելի է համարել ժայռապատկերները, ո-

³⁸⁷ Տե՛ս Գր. Ղափանցյան, Հնության մի քանի հիշատակարաններ. - «Արարատ», 1914, թիվ 1, էջ 91-96։

³⁸⁸ Տե՛ս Ս. Սարգսյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, էջ 113-122, նկ. 24-29։

³⁸⁹ Տե՛ս Հ. Մարտիրոսյան, Ժայռապատկերների դասակարգման մի քանի տվյալներ, - ԼՀԳ, 1970, թիվ 9, էջ 54-70, նույնի՝ Հայաստանի նախնադարյան մշակույթի նոր հուշարձաններ, - ՊԲՀ, 1969, թիվ 3, էջ 191-208, նույնի՝ Քարի դարից աւարտու, Երևան, 1971, նույնի՝ Նախնադարյան Հայաստանի նշանագրերը, Երևան, 1973։

³⁹⁰ Տե՛ս Գ. Կարախանյան, Պ. Սաֆյան, նշվ. աշխ.։

³⁹¹ Հ. Մարտիրոսյան, Գիտությունն սկսվում է նախնադարում, Երևան, 1978, էջ 79։

րոնք կերտված են ... մ.թ.ա. է-Ա հազ. ընթացքում»³⁹², որ ընդունելի է որոշ վերապահումով: 1971 թ. հրատարակվեցին Հ. Ա. Մարտիրոսյանի և Հ. Ռ. Իսրայելյանի «Գեղամա լեռների ժայռապատկերները»³⁹³ և Հ. Ա. Մարտիրոսյանի նույն վերտառությամբ մեկ այլ ուսումնասիրություն³⁹⁴, որոնք խոշոր առաջընթաց էին այս բանագավառի զարգացման խնդրում: Մեծ քանակությամբ ժայռապատկերներ են հաստատագրված Քարվաճառում³⁹⁵: Ժայռարվեստը Հայաստանում հարատևել է մեզոլիթ-նեոլիթյան ժամանակներից մինչև վաղ հայկական պետականության ստեղծման շրջանը: Ժայռապատկերների նկատմամբ հետաքրքրությունը չի նվազել նաև մեր օրերում, երբ առանձին ուսումնասիրողների կողմից Հայաստանի լեռնային տարբեր վայրերում հայտնաբերվում են ժայռապատկերների նորանոր խմբեր³⁹⁶: Չնայած ժայռապատկերային նյութի ահռելի քանակությանը՝ մեզանում դրանք առ այսօր բավարար չափով ուսումնասիրված չեն: Անբավարար է կատարված տեղանքի քարտեզագրումը, թերի է նյութի փաստագրումը, լուսանկարված չեն մեծ մասը, ժայռապատկերների նկարագիրը շատ մակերեսային է, թվագրումները վերջնականապես ճշգրտված չեն և այլն: Ուսումնասիրությունների ստորև ներկայացվող շարքում հիմնական շեշտը դրված է մեկնաբանության և վերծանման վրա՝ օգտվելով փաստագրված և հրատարակված նյութերից: Մեկնաբանողների մեծ մասը հասկնում են ժայռապատկերները դիտարկել որպես գիր: Նրանց մի մասը պատմական ակնարկներում, տեղեկատվական հոդվածներում ժայռապատկերները պարզապես անվանում են գիր՝ զաղափարագիր, նշան (Խ. Սամուելյան, Ս. Բարխուդարյան, Լ. Խաչիկյան, Ս. Մելիք-Բախշյան, Ա.Գ. Արքահամյան),³⁹⁷ մյուսները որոշ փաստարկներ են բերում՝ փորձելով ապացուցել ժայռապատկերների մաշտոցյան գրի նախատիպ լինելը (Հ» Մարտիրոսյան, Ռ. Իշխանյան, Կ. Թոխաթյան):

Ժայռապատկերները մեկնաբանվել են նաև որպես աստղագիտական պատկերացումներ՝ համաստեղություններ, լուսնա-արեգակնային համակարգ,

³⁹² Տե՛ս **Գր. Գրիգորյան**, Հայկական վիմագրություն, Երևան, 2000, էջ 9: Հարցի առնչությամբ կարևորում ենք նաև **Ռ. Իշխանյանի** «Ժայռապատկերները պատմում են» (Գիտություն և տեխնիկա», 1987, թիվ 5), **Ա. Մովսիսյանի** «Հայաստանի գծային գիրը (Ք.ա. Գ-Ա)» («Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ ու ժողովուրդներ, XVIII, Երևան, 1999») հոդվածները:

³⁹³ Տե՛ս **Հ. Ա. Մարտիրոսյան, Հ. Ռ. Իսրայելյան**, Գեղամա լեռների ժայռապատկերները.- Հայաստանի հնագիտական հուշարձաններ, 6, Ժայռապատկերներ, պր. 2, Երևան, 1971:

³⁹⁴ Տե՛ս **Հ. Ա. Մարտիրոսյան**, Գեղամա լեռների ժայռապատկերները.- Հայաստանի հնագիտական հուշարձաններ, 11, Ժայռապատկերներ, պր. 3, Երևան, 1981:

³⁹⁵ Տե՛ս **Հ. Մինուկյան**, Քարվաճառի (Ջերմաշուր) շրջանի հուշարձանների քարտեզ, Երևան, 1991:

³⁹⁶ Տե՛ս **Բ. Գասպարյան, Գ. Մարգարյան**, Ժայռանկարների նորահայտ խումբ Գեղամավանի «Կարմիր քարանձավում».- «Հայաստանի հնագույն մշակույթը», Տ. Խաչատրյանի 70-ամյակին վերված գիտա-ժողովի նյութեր, 2003, էջ 5-12, Ա. Խեչոյան, Բ. Գասպարյան, Գեմավան-1 քարայրի ժայռանկարների գեղարվեստական վերլուծության փորձ.- «Հին Հայաստանի մշակույթը», XIII, Երևան, 2005, էջ 28-33, Ա. Խեչոյան, Բ. Գասպարյան, Վ. Ֆերուզլի, Ժայռապատկերների նորահայտ համալիր Արագածի հարավային լանջերին (Աղավնատուն-Լեռնամերձ-սկեհատ).- «Հին Հայաստանի մշակույթը», XIV: 2008, էջ 295-301:

³⁹⁷ Տե՛ս **Խ. Սամուելյան**, Հին Հայաստանի կուլտուրան, հ. 2, Երևան, 1941, էջ 160-166: **Ս. Բարխուդարյան**, Հնությունների նշանակությունն ու պահպանությունը, Երևան, 1935, էջ 9-13, 42-46: **Լ. Խաչիկյան**, Նախամեսոքարյան գրի հարցը և հմայագրերը, ՊԲՀ, № 4, 1963, էջ 145-158: **Ս. Մելիք-Բախշյան**, Հայկական հնագրություն, Երևան, 1987, էջ 3-9, 95-103: **Ա.Գ. Արքահամյան**, Նախամաշտոցյան հայ գիր և գրչություն, Երևան, 1982, էջ 26-48:

օրացույց, տոմար³⁹⁸... (Բ. Թումանյան, Ս. Պետրոսյան, Հ. Տոնականյան, Կ. Թոխաթյան, Հ. Մարտիրոսյան):

Ժայռապատկերների իմաստաբանական, խորհրդանշական և դիցաբանական հարցերին անդրադարձել են Ա. Դեմիրխանյանը, Լ. Աբրահամյանը, Կ. Թոխաթյանը, Հ. Մարտիրոսյանը³⁹⁹: Ժայռապատկերների սյուժետային վերլուծությունը հայոց հնագույն կենցաղի ու մշակույթի կարևոր ու անփոխարինելի սկզբնաղբյուր է:

Ինչ է տալիս ժայռապատկերների ուսումնասիրությունը: Դրանց բազմակողմանի և լիարժեք ուսումնասիրության դեպքում ըստ Կ. Թոխաթյանի՝ ժայռապատկերները. ա) **հզոր միջոց են դառնում հայոց պատմության և մշակույթի անհայտ էջերի վերհանման, հայոց ծագումնաբանության, բնիկության ու ժողովրդագրական խնդիրների բացահայտման համար:**

Ուսումնասիրություններից պարզ է դառնում ժայռապատկերման մշակույթի հարանմանությունը, հանգամանք, որ վկայում է միատեսակ աշխարհընկալման ու լեզվամտածողության, հավատալիքների ու դիցաբանի, ինչպես և կենտրոնացված կառավարման՝ պետականության տարրերի գոյությունը: բ) **Ժայռապատկերներ արարողները բազում հազարամյակներ նստակյաց են եղել:** Մարդը նպատակայնորեն կերտել է իր հաջորդների համար: գ) **Հայկական լեռնաշխարհը ժայռափորագրման օջախ և օրրան էր:**

Դրա վկայությունն է այն, որ լեռնաշխարհից դուրս, նրա մերձավոր շրջակայքում հնագույն ժայռապատկերներ գրեթե բացակայում են: Լեռնաշխարհի ներսում առկա է ժայռապատկերների գերկենտրոնացում: Հնդեվրոպական ժողովուրդների նախահայրենիք Հայկական լեռնաշխարհի միակ տեղաբնակը՝ հայը, ձևավորվելով ու հարատևելով մինևսյան տեղում, բնականաբար, կրողն ու տերն է այդ մշակույթի: դ) **Սերտ են թեմատիկ աղերսները ժայռապատկերման և հայոց մշակույթի այլ ոլորտների միջև՝** կերպարվեստ ու կիրառական արվեստ (զենք, տարազ, խեցեղեն, մանրանկար, գորգ), փոխադրամիջոց, պար և թատրոն, մարտաձևեր ու մարզաձևեր, քարտեզ, տոմար, գիր, բանահյուսություն և դիցաբանություն⁴⁰⁰: ե) **Աշխարհի գրեթե բոլոր ծագերում կան ժայռապատկերներ, սակայն Հայաստանի տարածքում հայտնաբերվածները շատ են բազմազան:** զ) **Հայոց մեջ ժայռափորագրման ավանդույթները հարատևել են ու երկար պահպանվել:** Ակնհայտ է այս ոլորտի տևականությունն ու շարունակությունը, անընդհատությունն ու անցումայնությունը: Ժայռաքանդակի, արձանագործության, վիմագրության, ճարտարապետական հորինվածքների տեխնիկա-արվեստաբանական ընդ-

³⁹⁸ Տե՛ս Բ. Թումանյան, Աստղագիտական բնույթի ժայռապատկերներ, «Գիտություն և տեխնիկա», № 3, 1969: Ս. Պետրոսյան, Առեղծվածային ժայռապատկերներ, «Գիտություն և տեխնիկա», № 2, 1970: Հ. Տոնականյան, Հայաստանի ժայռապատկերների տիեզերական թեմատիկան, «Արվեստ», № 3, 1990, էջ 58-64:

³⁹⁹ Տե՛ս Լ. Ա. Абрамян, А.А. Демарханян, Мифологема близнецов и мировое дерево (К выяснению значения одного класса наскальных изображений древней Армении), ՊԲՀ, 1985, № 5, էջ 66-84:

⁴⁰⁰ Տե՛ս Լ. Ավանեսյան, Հայկական գորգերի զարդապատկերների և Հայաստանի ժայռապատկերների համեմատական վերլուծության մի փորձ, – «Վասն հայության», № 5 (68), 13.02.2003, Կ. Աթոյան, Ֆիզիկական կոլտուրայի և սպորտի հնագույն ակունքները Հայաստանում, մաս 1, Եր., 1985, էջ 149-153, Կ. Թոխաթյան, Մաշտոցեան տառաձևերի և դրանց ժայռապատկերներ նմանակների աղերսների շուրջ, – Բազմավեյ, 2003, № 1-4, էջ 60-99, Գ. Վարդումյան, Կ. Թոխաթյան, Լուսնի և Արևի պաշտամունքի դրսևորումները «Մասնա Ծոեր» էպոսում, – «Մասնա Ծոեր» էպոսը և համաշխարհային էպիկական ավանդույթները, Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2004, էջ 88-101:

հանրությունները դրա առհավատյան են:

Եվ, վերջապես՝ ժայռապատկերների ուսումնասիրությամբ աներկբա է մի հանգամանք՝ հայոց երկրի ժայռապատկերները երկնել է բազմահազարամյա, բնիկ, նստակյաց, մեկ միասնական էթնոս՝ հայերը⁴⁰¹:

Ժայռապատկերների սյուժետային բովանդակությունը

Հեռավոր ժամանակներում մարդը ժայռապատկերներում ներկայացրել է իր առօրյա կենցաղը, շրջապատը, բուսական ու կենդանական աշխարհը, աշխարհընկալումը, հավատալիքները, գրադուները: Ժայռապատկերները հանդիսանում են նախնադարի կարևորագույն սկզբնաղբյուր: Նախնադարում գոյության հիմնական միջոցը որսորդությունն էր: Բնականաբար, պատկերների ահռելի մասը ներկայացնում է որսորդությունը: Պատկերների մեջ աչքի են զարնում կենդանիների ամենատարբեր տեսակների մեծ քանակն ու բազմազանությունը (զուբրը, վայրի ցուլը կամ կովը, եղջերուն, իշալծյամը, որմդեղեր, վայրի էշը, առյուծը, վարազը, լուսանը, ընձառյուծը և այլ կենդանատեսակները, վայրի և ընտելացված ձիերը, թռչունները և այլն (աղյուսակ 1-2): Այս կենդանիների մի մասն այժմ իսպառ վերացել է Հայաստանից, և գերեզմանոցներում հայտնաբերվում են նրանց պեղածո մնացորդները⁴⁰²: Հիշյալ կենդանիների մի զգալի մասը ներկայացված է որսորդական տեսարանների մեջ: Որսորդների պատկերներն այստեղ ներկայացված են ինչպես մերկանդամ, շարժուն ու բնորոշ ձևերով, այնպես էլ զգեստավորված տարբեր տիպի գլխանոցներով, կենդանական ու թռչնային դիմակներով: Երանք զինված են փոքր, մեծ կամ աղեղներով, մահակներով, նիզակներով: Ժայռապատկերներում չափազանց շատ են նեոտ ու աղեղով, տեգով, նիզակով, վահանով, լայնալիճ աղեղներով զինված որսորդների պատկերները, որսորդական պարանների-լաստների, օղապարանների, թակարդի, որսորդական և այլ հարմարանքների, սայլերի, ծածկասայլերի, սահնակներ հիշեցնող սայլերի, արորների, ինչպես նաև տիեզերական պատկերացումների հետ առնչվող նկարները (աղյուսակ 3): Հարուստ ու բազմազան են ժայռապատկերների թեմատիկան ու բովանդակությունը: Նրանցում արտացոլվում են որսի, որսորդական, ինչպես նաև հմայական արարողությունների, պաշտամունքի հետ աղերսվող տեսարաններ: Պատկերված են որսի և որսորդության բազմաթիվ տեսակներ՝ թակարդով, լաստոյով, փոսորակով, աղեղներով, նիզակներով, մահակներով, փոկերով, հետապնդումով, ընդգծվում են նաև որսի անհատական և խմբային՝ մեզոլիթին բնորոշ տեսակները, օրինակ՝ հալածական եղանակով որսը՝ որպես նախնադարյան մարդու գոյության հիմնական միջոց: Ժայռապատկերներում հստակորեն ընդգծվում է որսորդը՝ տարբեր զենքի տեսակներով: Որսվող կենդանին այնպիսի ճշգրտությամբ է պատկերված, որ զարմանալ կարելի է, թե նախնադարյան մարդը որքան լավ էր տիրապետում կենդանու և մարդու կազմախոսությանը: Ուշագրավ են որսի մի շարք տեսակներ, հատկապես արջի, առյուծի որսը, որտեղ աչքի է զարնում մարդու պայքարը այդ գազանների դեմ: Դեռևս նախնադարում մարդ արարածը մշակել էր որսի մի ձև, երբ ձեռքին քեղա էր փաթաթում, գազա-

⁴⁰¹ Տե՛ս Գ. Թոխաթյան, Ժայռապատկերները Հայկական լեռնաշխարհում հայոց հարակայության վկաներ, Հարք, Հայագիտական հանդես, 2006, 1, Երևան, էջ 53-59:

⁴⁰² Տե՛ս Հ. Ա. Մարտիրոսյան, Հ. Ռ. Բարսեղյան, Գեղամա լեռների ժայռապատկերները, էջ 8:

նի երախը մտցնում, մյուս ձեռքով խփում: Այս որսաձևը կիրառվում էր Սասունում և Դերսիմում՝ ընդհուպ մինչև XX դարի սկզբները⁴⁰³: Հաճախ միայնակ որսորդը վայրի ցլերի կամ կենդանիների մեծ հոտերի դեմ ելնում էր միայն պարանով կամ նետ ու աղեղով զինված: Հանդիպում են նաև որսորդների ու շների բազմությամբ կենդանիների հնարամիտ շրջափակման պատկերներ: Որսի տեսարաններում ամենուրեք առկա են նաև արևի, լուսնի, երկնային այլ մարմինների երկրաչափական խորհրդանիշներ:

Գեղամա լեռների ժայռապատկերներից շատերն էլ ուղղակիորեն կապված են աստղային երկնքի, արևի, լուսնի ու լուսատուների, տարերքի այլ աստվածների, նախնիների պաշտամունքից բխող առասպելների հետ: Չափազանց շատ են հանդիպում երկրաչափական փորագրություններ, որոնք պատկերում են արևը, լուսինը, կայծակը, աստղերը՝ իրար մեջ ագուցված գծային կամ գոգավոր փոքրիկ շրջանակների, կազմված օղակների, ճառագայթավոր գնդերի, անվի, կիսալուսին մահիկների, խաչերի, սվաստիկաների և այլ ձևով, ինչպես նաև այդ նշանների ամբողջական համալիրներ (աղյուսակ 4): Մեր նախնիները կենդանիների կերպարներով պատկերում էին ոչ միայն արևը, լուսինն ու կայծակը, այլև ողջ աստղազարդ երկինքը:



Կային **տղամարդկանց ու կանանց** պատկերներ, որոնք իրենց դիրքով, առանձնապես կանանց չափազանցված կրծքերով շեշտում են պտղաբերության գաղափարը: Որոշ դեպքերում արգասավորման հմայական գործողությունը ներկայացվում է պարզապես սեռական անդամների պատկերումով՝ պտղաբերության աստվածների հովանավորության ներքո: Այդ մարդակերպ հսկաներն իրենք էլ ներկայացված են երկիրը պտղաբերելու այլաբանական գործողության մեջ: Նմանողական հմայանքի միջոցով նախնադարյան որսորդը փորձել է օգնության կանչել նախնիներին, բնության գորավոր ուժերին՝ հովանավորող ոգիներին ու աստվածներին: Հայաստանի ամենաբարձրադիր շրջաններում ամենուրեք հանդիպող կրոնա-պաշտամունքային հմայական բնույթով որսորդական պատկերները ընդգծում են որսորդության զգալի դերը նախնադարյան տնտեսության զարգացման հազարամյակների ընթացքում: Բազմաթիվ են նաև պատկերները, որոնցում երևում է մարդու վտանգավոր ու դժվարին պայքարը կենդանիներին ընտելացնելու, բուծելու և անասնապահություն ստեղծելու հարցերում, երբ նախնադարյան որսորդ-անասնապահը դիմում է ոչ միայն իր հմտությանը, հնարամտությանը և պարզունակ տեխնիկային, այլև նախնիներին, ոգիներին, աստվածներին, կախարդանքի միջոցներին և այլն:

Ժայռապատկերներն իրենց բնույթով լույս են սփռում Հայկական լեռնաշխարհի նեոլիթ-էնեոլիթյան պարբերաշրջանի տեղաբնիկների տնտեսության, արվեստի, մշակույթի անհայտ կողմերի վրա: Ք. ա. VII-V հազարամյակների նեոլիթ-էնեոլիթյան տնտեսության ձևավորման հիմքում ամենուրեք նկատում ենք զարգացած հավաքչության և որսորդության հետքեր՝ վաղ բնակավայրերում պահպանված հացաբույսերի ու վայրի կենդանիների մնացորդների և ժայռապատկերներում փորագրված որսի տեսարանների ձևով, որոնք առկա են վերոհիշյալ բոլոր երկրներում⁴⁰⁴:

⁴⁰³ Տե՛ս Վ. Պետոյան, Սասնա ազգագրությունը, Երևան, 1965, էջ 137-138, Գ. Հալաջյան, Դերսիմի հայերի ազգագրությունը, մասն Ա, ՀԱԲ, հ. 5, Երևան, 1973, էջ 159:

⁴⁰⁴ Տե՛ս Հ. Ա. Մարտիրոսյան, Հ. Ռ. Բարայեղյան, Գեղամա լեռների ժայռապատկերները, էջ 8:

Նկ. 1ա. Տարբեր կենդանիների խմբապատկեր
չորս եղջերու և այծեր (մ. թ. ա. II հազ.)



Նկ. 1բ. Երկու այծ եզրերին,
երկու գեղեցիկ իշուկ կենտրոնում,
ամասնապահության տիպիկ պատկեր
(մ. թ. ա. II հազ.)



Նկ. 2. Արևի աստվածությունը խորհրդանշող
«ճառագայթավոր» հորինվածք,
էգ և արու զույրերով, հսկա եղջերուներով և
այլ կենդանիների նշանագրերով




Նկ. 3ա. Սայլ՝ կլորավուն քաշանով
(Գեղամա լեռներ)



Նկ. 3բ. Սայլ, այծի և հեծյալի պատկերներով
(Գեղամա լեռներ)




Նկ. 3գ. Սայլ՝ լծված եզմերով
(Գեղամա լեռներ)




Նկ. 4ա. Արև, Լուսին, կայծակ
և երկրաչափական այլ
փորագրություններով պատկերներ



Նկ. 4բ. Սկաստիկա գեղամա լեռներից



Նկ. 4գ. Արևը խորհրդանշող պատկերներ
(գեղամա լեռներ)



Ուշագրավ են երկրագործությանը վերաբերող տեսարանները: Հնագույն երկրագործության ուսումնասիրության տեսակետից չափազանց կարևոր են այն քարե վավերագրերը, որոնց վրա փորված են երկրագործական, դաշտամշակության գործիքներ: Մյունիքի ժայռանկարներում առկա է տեսարան, որն, ըստ երևույթին, նման է արորի՝ լծված եզներով, որ վերաբերում է վաղ բրոնզե դարաշրջանին: Ժայռապատկերներում երևում են քառանիվ սայլեր, որոնք օգտագործվել են երկրագործության մեջ, դրանց լծված են եղել եզներ: Ուշագրավ է, որ նման սայլեր գտնվել են Սևանի ավազանում Հ. Մնացականյանի պեղումների ժամանակ: Հետաքրքրական է նաև այդ քարե կոթողների մեջ սահնակ հիշեցնող փոխադրամիջոցը: Զարմանալին այն է, որ այդ սահնակները պահպանվել են արևմտահայերի մեջ ընդհուպ XX դարի սկզբները և հայտնի են **դախուկ** անվամբ: Հայկական լեռնաշխարհի ամբողջ կենդանական աշխարհը «կարելի է կարդալ» ժայռապատկերներում:

Ուշագրավ են հավատալիքային նյութերը, որոնք կոչված էին անուղղակիորեն ապահովելու որսի հաջողությունը: Ժայռանկարներում շատ են տիեզերական, մանավանդ արևի պաշտամունքի հետ աղերսվող պատկերները: Պատկերված են արևն ու լուսինը, աստղերը, երկնային համակարգը:

Արևը պատկերող նշանները հաճախ ճառագայթավոր անիվի ձև ունեն: Այսպես արևի և անիվի նմանությունից բնականորեն կարող էր ծագել նաև արևի ու սայլի, կառքի, մարտակառքի իմաստաբանական կապը: Այսպիսի առասպելական ու գրաֆիկ պատկերներն առանձնապես տարածված են արևելյան առասպելներում, բրոնզեդարյան գոտիների պատկերագրող սյուժեներում և արվեստի հուշարձաններում, ինչպես նաև հայոց ավանդազրույցներում, հեքիաթներում: Ուսումնասիրություններից պարզվում է, որ բրոնզեդարյան Հայաստանի բնիկները արևին վերագրել են արարչական գործություն, պաշտել են նրան որպես զարթոնքի, պտղաբերության և ամենայն բարիքներ ստեղծող գերբնական ուժ: Այդ պատճառով էլ նրանք բազմաթիվ առարկաների վրա պատկերել են արևը՝ երկրաչափական մարմինների, ինչպես և զանազան կենդանիների տեսքով: Արևը պատկերվել է մեկ թռչունների, օձի, մեծ ցուլերի, մեծ ձիերի և ձիակառքերի հետ: Ձին արևի տարվա բոլոր եղանակների մշտեջանական, անփոփոխ ուղեկիցն էր: Դրանք ցույց են տալիս արևապաշտության անսահմանությունը և հարատևությունը: Գեղամա լեռներում պատկերված են շատ հետաքրքիր հորինվածքներ, որտեղ արեգակնային աստվածը պատկերված է առյուծի վրա կանգնած, հազվադեպ նաև ցլի, ձիու, այծի, թռչունի հետ: Դա ուրարտական Խալդի աստծո և իր առյուծի հնագույն նախատիպն է: Մեր նախնիները կենդանիների կերպարներով պատկերում էին ոչ միայն արևը, լուսինն ու կայծակը, այլև ողջ աստղագրող երկինքը⁴⁰⁵ (Աղյուսակ 15-19):

Հայաստանի ժայռապատկերներում շատ են տիեզերական պատկերացումներին առնչվող գերբնական արարածները: Հնագետ Հ. Հակոբյանը ցույց է տվել, որ նախնիների պաշտամունքը՝ երկվորյակ «Թուխ մանուկների կերպարանքով, սկզբնավորվելով բրոնզեդարյան Հայաստանում, արտացոլվել է նաև ժայռապատկերներում»⁴⁰⁶:

⁴⁰⁵ Տե՛ս **Հ. Ռ. Իսրայելյան**, Պաշտամունքն ու հավատալիքները ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Երևան, 1973, էջ 44, 50:

⁴⁰⁶ Տե՛ս **Հայկ Հակոբյան**, «Թուխ մանուկներ»-ի պատկերագրությունը Հին Հայաստանում: - Թուխ մանուկ, Երևան, 20001, էջ 52-67:

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհի հարուստ ժայռապատկերային հուշարձանները բազմազան, բազմաբովանդակ և միանգամայն ինքնատիպ ժայռապատկերների կուտակումներ են, որ տարածված են Արագածի փեշերից մինչև Հայկական Տավրոսի լանջերը, մինչև Ասորիք-Պաղեստինի և Իրաքի սահմանները:

Рафик Нагапетян – *Наскальные рисунки как первоисточник генеалогического исследования древних жителей Армянского нагорья.* – Целью публикации данной темы курса “Армянская этнография” является ознакомление студентов-историков с важностью исследования вопроса и научно-познавательного значения.

Сотни тысяч разнообразных, совершенно своеобразных наскальных рисунков, являющихся произведениями первобытного искусства, свидетельствуют о повседневных занятиях, быте и идеологических представлениях древнейших жителей Армянского нагорья.

Согласно исследователям наскальные рисунки являются мощным средством для восстановления неизвестных страниц армянской истории и культуры, для раскрытия армянской генеалогии и этнографических проблем.

По мнению многих исследователей они были признаны также идеографическими и пиктограммными прототипами армянского письма.

Rafik Nahapetyan – *Petroglyphs as a Source of Ethnological Study of Ancient Inhabitants in the Armenian Highland.* – The aim of the publication of this theme from the course “Armenian Ethnography” is to give student-historians the importance of its study as well as its scientific-cognitive significance.

Being creations of primitive art, hundreds of thousands of various and quite unique petroglyphs convey the ancient inhabitants' everyday life, businesses, ideas and magic concepts.

According to the researchers, the petroglyphs are a powerful means of revealing the unknown pages of Armenian history and culture, Armenian geneology, aboriginity and demographic issues.

In a number of researchers' opinion they are also recognized as the prototype of the alphabet created by Mashtots.

МЕТОДИКА ПРЕПОДАВАНИЯ В КУРСЕ «СТИЛИСТИКА АНГЛИЙСКОГО ЯЗЫКА»

НЕЛЛИ АРУТЮНЯН

Курс «Стилистика английского языка» должен базироваться на достаточно прочных умениях студентов в области практического владения английским языком, поскольку данная учебная дисциплина читается не на родном, а на иностранном языке.

Целью курса «Стилистика английского языка» является ознакомление студентов с основными теоретическими положениями в области стилистики английского языка, функционально-стилистическим варьированием английского языка, разнообразными способами передачи и понимания дополнительной текстовой информации на основе углубленного и всестороннего изучения конкретных фактов. Кроме того, курс «Стилистика английского языка» предполагает дальнейшее формирование у студентов основных коммуникативных компетенций (лингвистической, языковой, исследовательской, лингвометодической, компенсаторной и социокультурной) для адекватного использования полученных знаний, необходимых в практике преподавания английского языка в средней и высшей школе.

В настоящее время во всем мире ведутся поиски оптимальных систем обучения, использование новых образовательных технологий, применение активных методов и форм обучения, актуализируется проблема качественной профессиональной подготовки будущих специалистов в системе высшего образования. Вопросы повышения эффективности профессиональной компетентности в системе высшего образования являются сегодня важной составной частью планов модернизации образования и создания новых технологий обучения. В настоящее время существенно меняются приоритеты в образовательной системе. Перестает быть единственной целью усвоение знаний, умений и навыков, приобретает важность наличие определенных профессионально-личностных качеств у будущих выпускников.

Одним из условий высококачественной профессиональной подготовки будущих специалистов в системе высшего образования является вовлечение в активную познавательную деятельность каждого студента, применения ими на практике полученных знаний и четкого осознания того, где, каким образом и для каких целей эти знания могут быть применены. Пути совершенствования учебной и творческой деятельности студентов надо искать через вовлечение их в активную деятельность, требующую знаний, инициативы, опыта при проведении всех видов учебных практик.

В условиях рыночных отношений диплом не дает гарантии занятости, если он не дополнен способностью творческого мышления и общения. Современная система образования требует гибкости, интенсивности использования контактов между дисциплинами. Развитие мышления, наличие собственной точки зрения, способность управлять принятием решения в коллективе, стремление владеть но-

выми технологиями также необходимы в нынешних условиях. Высшее образование становится при этом центром проблемы, поскольку оно связано с развитием личности и социума, и это подразумевает направление усилий на раскрытие творческого потенциала студента. В настоящее время преподавателю необходимо делать ставку на развитие мышления и личности каждого студента, на творческое осмысление им учебного материала. Необходимо научить студента устанавливать связи изучаемого материала с жизнью, практикой, так как при этом получаемые студентами знания как бы материализуются, повышается к ним интерес, возрастает существенно их значение. На современном этапе развития общества значительно изменилась роль преподавателя, который из информатора превращается в организатора учебно-воспитательного процесса.

Одним из путей оптимизации системы обучения является интерактивная методика обучения. Термин «интерактивность» означает «непосредственное взаимодействие с пользователем во время работы»; «непосредственное взаимодействие между участниками коммуникации» (1). В педагогике термин связан с педагогической технологией и понимается как форма обучения, где знания добываются путем общения, через диалог, обучаемых между собой и педагогом (2). Такая методика является эффективной и при освоении студентами курсов теоретического лингвистического цикла, так как помогает научить практически мыслить, находить ответы на проблемные вопросы, обосновывать свою точку зрения и делать это в соответствии с этикой ведения спора. При использовании интерактивной методики возрастает значимость диалога-обсуждения как основы общеобразовательного процесса.

В рамках курса «Стилистика английского языка» задачи курса формулируются следующим образом:

- получение системных знаний об общей характеристике стилистических возможностей английского языка и стилистического анализа текста;
- знакомство с принципами и различными теориями стилистики;
- анализ выразительных средств английского языка на всех уровнях и их стилистического применения;
- анализ основных тропов (метафора, метонимия, ирония и т.д.), фигур речи (параллельные конструкции, анафора, эпифора и т.д.), инструментовки речи (рифма, ритм, ономотопея и т.д.);
- анализ принципов выделения функциональных стилей и составление их характеристики (3, 5).

Лекционный курс должен познакомить студентов с современными исследованиями по основным проблемам лингвистической стилистики современного английского языка, с различными методами стилистических исследований, раскрыть закономерности стилистической нормы на всех уровнях. Посредством лекций студенты должны усвоить ведущие понятия стилистики языка и речи, основной инвентарь стилистических приемов и экспрессивных средств, различные методы обнаружения и идентификации стилистических приемов. Преподаватель должен научить студентов выявлять особенности использования языковых единиц в различных стилях и жанрах речи. Методика преподавания должна быть построена так, чтобы в лекциях рассматривались наиболее трудные и важные темы.

Семинарские занятия должны углубить знания лекционного курса. До семинара необходимо разработать вопросы, предлагаемые для самостоятельного изучения. Вопросы необходимо разрабатывать не только для всей группы, предлагается составлять и индивидуальные задания. Важно тщательно проработать список литературы, рекомендуемой студентам для подготовки ответов.

Для того, чтобы работа на семинарах была полноценной, важно, чтобы студенты заранее ознакомились с литературными текстами, поэтому ключевым моментом при подготовке к семинарам должна быть самостоятельная исследовательская работа студентов. С этой целью необходимо разработать систематизированный комплекс заданий исследовательского и творческого характера. Количество заданий по темам может варьироваться от 7 до 27, что зависит от значимости темы. Задания должны выполняться с подключением информационно-коммуникационных технологий PowerPoint, Internet Explorer и др. При любой форме презентации работа комментируется, дополняется, а ее автор отвечает на вопросы аудитории. Таким образом, студенты учатся защищать выдвигаемые положения и выводы, отстаивать свое мнение, развивая навыки оппонирования и ведения дискуссии.

Значимость и ценность учебной дисциплины «Стилистика английского языка» определяется тем фактом, что в процессе ее преподавания осуществляется синтез и систематизация приобретенных студентами на предыдущих этапах обучения знаний об изучаемом иностранном языке и практических навыках владения им. Подчеркнем, что определенную часть знаний, которые нужно освоить в процессе обучения данного курса, студент должен научиться добывать самостоятельно, он должен осознать свою роль в учебном процессе как субъекта учебной деятельности, для чего необходимо сместить акценты с преподавательской деятельности на деятельность студента.

Изучение основных понятий стилистики должно осуществляться на связанных текстах разных стилей и жанров. Эти тексты отбираются с учетом их содержательной направленности и языкового оформления. Содержанием занятий должно стать обсуждение концептуальной информации через анализ стилистики текста. В качестве примера можно привести стилистический анализ небольшого отрывка из романа Айрис Мердок «Способный ученик» (*Iris Murdoch. The Good Apprentice*). Основное содержание текста письма, с которого начинается отрывок, заключается в ненависти матери молодого человека к его невольному убийце. Она надеется на то, что его убийца будет наказан, и это будет мстью за смерть ее сына. Задача, которую должны решить студенты заключается в том, чтобы определить, какими выразительными и стилистическими приемами пользуется автор для выражения отношения матери к убийце сына. Прежде всего это использование синонимического повтора: *You are a murderer. You killed him out of envy. You killed my beloved son.. You took his whole life away. I curse you. I condemn you*; использование модальных глаголов, которые в контексте данного письма становятся грамматическим стилистическим средством: *I shall not let you forget. You ought to die of shame. You ought to be punished. People like you should be put away. May you pay for this* и другие; использование формы Future Indefinite, повтор которой придает словам автора письма уверенность в неотвратимости наказания: *People will turn from you in*

horror. You *will never be happy* again. You *will never recover* from the drugs. You *will live the life* of an idiot. При переходе к анализу основной части отрывка, следующей за текстом письма необходимо прежде всего выявить моральное состояние героя, осознавшего последствия своего страшного поступка – раскаяние, опустошенность, отрешенность от жизни. У автора это выражается с помощью метафор, которые подчеркивают глубину и необратимость изменений, происшедших с ним, например, *Edvard passed into his private hell*. Таким образом, через стилистический анализ можно раскрыть замысел автора, чувства матери к убийце сына и глубину переживаний невольного убийцы (4, 297). Студенты должны уметь найти, разграничить и прокомментировать все стилистические приемы, которые использовал автор для решения той задачи, которую он перед собой поставил.

Некоторые разделы курса, требующие подробного изучения, из-за ограниченного объема времени могут быть даны студентам для самостоятельного изучения или заслушаны на семинарских занятиях в виде рефератов и докладов, подготовленных студентами.

Общей направленностью всех занятий в курсе «Стилистика английского языка» должно стать максимальное приближение к практике использования изучаемых средств и явлений: и лекции и семинарские занятия должны показать студентам, как преломляются теоретические положения курса в практике.

ЛИТЕРАТУРА

1. *Толковый словарь русского языка начала XXI века. Актуальная лексика* Под редю Г.Н.Скляровской, Эксмо, М., 2006.
2. *Педагогический энциклопедический словарь*. Под ред. Б.М.Бим-Бад. Большая Российск. энцикл., М., 2002.
3. *Учебно-методический комплекс дисциплины. Стилистика английского языка*. Институт иностранных языков, факультет английской филологии, М., 2011.
4. Сорокина И.Г., *Лингвокультурный потенциал учебной дисциплины «Лингвостилистический анализ художественного текста»*. В тез. докладов.: «III Международная научная конференция ‘Язык и культура’», М., 2005.

Ներքին Հարությունյան – Անգլերեն լեզվի ոճաբանության կուրսի դասավանդման մեթոդները: – Հոդվածը նվիրված է “Անգլերենի ոճագիտություն” դասընթացի դասավանդման մեթոդաբանությանը: Տվյալ դասընթացի դասավանդման օպտիմալացման, ինչպես նաև ուսանողի ուսումնական և ստեղծագործական գործունեության կատարելագործման անհրաժեշտության նպատակով առաջարկվում է ներառել իրենց ակտիվ գործունեության մեջ, այն է՝ դասախոսությունների մեջ ընդգրկել առավել խրթին և կարևոր թեմաներ, իսկ սեմինար պարապմունքների ընթացքում կիրառել ինտերակտիվ մեթոդաբանություն: Սեմինարի համար առաջարկվում է մշակել առաջադրանքներ ոչ միայն ամբողջ խմբի համար, այլ նաև կազմել անհատական աշխատանքի համար նախատեսված առաջադրանքներ, ինչպես նաև ինֆորմացիոն-կոմունիկացիոն տեխնոլոգիաներ:

Դրա հետ մեկտեղ ուսանողները պետք է կարողանան նաև ապացուցել առաջադրված դրույթները՝ զարգացնելով ընդդիմախոսական և բանավեճ վարելու հմտությունները:

Nelli Harutyunyan – *Teaching method of the course “Stylistic of English”*. – The article is devoted to the methods of teaching in the course of “Stylistics of the English language”. With the aim of optimization of the given subject teaching and taking into account the necessity of student’s learning and creative activity it is advisable to involve them to the active process of learning and also to consider most difficult and important themes in lectures, and to use the interactive method during seminars. It is suggested to work out assignments not only for the whole group but also to make up some individual assignments, to use informational-communicative technologies. Students are liable to learn how to prove the given statements, conclusions and also to develop the ability of opposing and discussion leading.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ВАЛЕРИ ТУНЯН

Издательская деятельность “Армянского патриота” Х. Лазарева 30-гг. XIX в. 3

ԿԱՐԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ազգերի լիզայի կանոնադրության քննարկումը և մերժումը
Միացյալ Նահանգների կոնգրեսում (1919 թ. փետրվար - 1920 թ. մարտ)..... 23

ՌՈՒԶԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Կովկասի հայոց բարեգործական ընկերության հիմնադրումը 31

ՀԱՅԿՈՒՀԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ղուկաս Ինճիճյանի «Ազգասեր» աշխատությունը 43

ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆ-ՏԵՐՅԱՆ

Վահան Տերյանի քաղաքական գործնեության
չուսումնասիրված էջերից 55

ՍԱԹԵՆԻԿ ԱՎՈՅԱՆ

Ռուսական ինքնակալության և Մայր Աթոռ Էջմիածնի
փոխադարձությունները 1900-1914 թթ. 65

ГАГИК ЖАМГАРЯН

Партийная этика в вопросах морали и семейных отношений
в Советской Армении в 1920-30-ых годах..... 81

ՖՐՈՒՆԶԵ ՄԱՅԻԼՅԱՆ

1795թ. Շուշիի պաշտպանության 33 օրը..... 89

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՆԱՐԻՆԵ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Նախադասության վերլուծությունը՝ որպես լեզվական
գիտելիքների ամրապնդման կարևոր միջոց..... 92

СВЕТЛАНА ЕГИАЗАРЯН, РУЗАН ЗАРГАРЯН

Развитие и совершенствование монологической речи на
практических занятиях по русскому языку в неязыковых группах..... 96

СВЕТЛАНА ЕГИАЗАРЯН

Роль монологической речи в процессе обучения
русскому языку в неязыковых группах 99

SEDA EVINYAN

English throughout the world..... 103

AIDA MARDANYAN, MANE AGHBALYAN

Les problèmes de classification des parties du discours en Français 107

ՏԻԳԸՆՆԵ ԽԱՌԱՏՅԱՆ

Գերիշխող բարոյա-էթիկական հասկացությունների
պատկերը ժամանակակից անգլերենի
բառագիտական-դարձվածաբանական համակարգում..... 114

ԶԱՐՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Երիտասարդության խոսակցական լեզուն Ֆրանսիայում..... 124

ՆԱԴԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հաճոյախոսությունը որպես անկեղծ դրական կամ կեղծ
դրական գնահատման դրսևորում..... 128

ՀԱՍՄԻԿ ՎԱՆՅԱՆ

Ավետիք Իսահակյանի լեզենդների պատկերավորման միջոցները..... 138

ԱԼԻՍԱ ՀԱՍԱՆՅԱՆ

Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմի
կենսական ակունքներն ու ստեղծագործական առնչությունները..... 144

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

АРМЕН СААКЯН, АРЕГ САФАРЯН

Современные проблемы социального управления
трудовым поведением..... 153

ОЙДИН КАДИРОВА

Стратегия развития рынка автокомпонентов Узбекистана 157

АНТОНИНА РЫЖИХ

Социально-технологическое проектирование пространств
современного торгового центра: оптимизация среды
социально-коммуникативного взаимодействия 172

ԱԿՍԵԼ ՊՈՏՈՍՅԱՆ, ՇՈՂԻԿ ՔՈԼՅԱՆ

ՀՀ գյուղական տարաբնակեցման զարգացման և
վերափոխման վրա ազդող հիմնական գործոնները
և դրանց տարածաշրջանային տարբերությունները..... 179

ՎԱՀԸՄԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, ՆԱԴԻՆԵ ԿՈՈՅԱՆ

Կազմակերպության ղեկավարի անհատական
հատկանիշների հիման վրա դեվիանտ վարքագծի
ձևավորումը և դրա կառավարումը 189

ԻՆԳԱ ՆԱՍԻԼՅԱՆ, ԷՄՄԱ ՆԱՍԻԼՅԱՆ

Մարքեթինգի և որակի կառավարումը մշակույթի ոլորտում..... 203

ԱՆԻ ԶՈՀՐԱԲՅԱՆ

Առավել վտանգի աղբյուրի հասկացությունը
և դրանով պատճառված վնասի հատուցումը 212

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵՐԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Անձի քաղաքական ազատությունը որպես
ժողովրդավարական համախմբման հիմնային արժեք 220

ԳՐԻԳՈՐ ԱԲԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մխիթար Գռչի «Թուղթ առ վրացիսն» գրությունը որպես
այլադավանության դեմ պայքարի գաղափարական
հիմնավորման ելակետ 231

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

Մերունդները որպես հասարակական կյանքի սուբյեկտներ 240

ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼԻԼԻԹ ՄԵԼԻՔՅԱՆ

1960-80-ական թվականների հայկական դիզայնի
գեղարվեստատեխնիկական բնույթը 245

ՍԱԹԵՆԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ

Գեորգի Յարայան. գրչի և վրձնի վարպետը 250

ՀՌԻՓՄԻՄԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ռուդոլֆ Խաչատրյանի ինքնանկարները 258

ՄԱՐԳԱՐ ՀՄԱՅԱԿՅԱՆ

Իջևանի սիմպոզիումների ընթացքում կերտված քարարձանների
գեղարվեստական առանձնահատկությունները 264

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Ժայռապատկերները՝ Հայկական լեռնաշխարհի հնագույն
բնակիչների ազգաբանական ուսումնասիրության սկզբնաղբյուր 276

НЕЛЛИ АРУТЮНЯН

Методика преподавания в курсе «Стилистика английского языка» 289

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ԱԿՈՒՆՔ»-Ի ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Ակունքում» տպագրության ներկայացվող հոդվածների տեխնիկական պահանջները.

- Տպագրության ներկայացվող հոդվածները պետք է գրված լինեն Word տեքստային խմբագրի օգնությամբ:
- Հոդվածները ներկայացնել հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն լեզուներով:
- Հոդվածի շարվածքը լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝ նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A4:
- Հոդվածի սկզբում գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ մեծատառերով:
- Հղումները դնել տողատակում՝ համարների աճման կարգով, նշել աղբյուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը) և էջը (էջերը):
- Հոդվածի վերջում գրել հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը՝ 50-60 բառի սահմաններում, և բանալի - բառերը:
- Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև հեղինակի (հեղինակների) տվյալները՝ կոչումը, պաշտոնը, աշխատանքի վայրը, հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցե (e-mail):
- Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային տարբերակով
 - Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ, Բնական գիտությունների ֆակուլտետի մասնաշենք՝ Նարինե Դավթյանին, կամ
 - ուղարկել akunq.ysub@gmail.com և banber_ib@ysu.am էլեկտրոնային հասցեներով:

Ա Կ Ո Ւ Ն Ք

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 3(9)

Համարի պատասխանատու՝ Ա.Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Համակարգչային ձևավորումը՝ Ն.Ն. ԴԱՎԹՅԱՆԻ

Ստորագրված է տպագրության 26.12.2013 թ.:

Չափսը՝ 70x100¹/₁₆ :

Տպաքանակ՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025 Ալ. Մանուկյան 1